7750

281.6
9-22

281-6
Ղ-99

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԿԱԶՄԵՑ

ԱՐՔ. ՂԱՄՐԻՆ.

Ա. ՄԱՄ.

Երրորդ տպագրութիւն

БИБЛІОТЕЧНЫЙ КОЛЛЕКТОРЪ
БАКУ
КНИЖНЫЙ МАГАЗИНЪ М. Б. МИРЗАБЕКЯНЦЪ СЪ БР-МИ
Баку Параллель

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպարան Սերովբէ Յ. Աւագեանի.

НАХИЧЕВАНЬ Н-Д.
Паровая типографія С. Я. Аванова.

1914

12.04.2013

6778
41

Վ. Ա. Ղ. Ա. Թ. Ա. Ր. Ա. Մ

ՅԻԿԻՆ ՀՐԻՓՍԻՄԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՄԱՀՏԵՍԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գրուածքիս Ա. մասը հրատարակիում է երկրորդ տպագրութեամբ եւ այդ առթիւ փոփոխութիւններ են կատարուել թէ՛ նիւթի եւ թէ՛ լեզուի կողմից: Գրուածքիս տպագրութեան բոլոր ծախսը սիրայօժար յանձն առաւ պ. Լուսեդէն Մահտեսեանը, որին եւ հեղինակը հրապարակով իւր մեծ շնորհակալութիւնն է յայտնում:

Փետր. 1914 Նոր Նախիջեան.

Ա. Չ.

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Աբրաքանչիւր քրիստոնեայ ժողովրդի կրօնական կեանքի արտայայտութիւն ու ձեւակերպումը որոշ սկզբունքների ու արտաքին նշանների մէջ՝ նոյն ազգի եկեղեցին է կազմում: Եկեղեցին՝ իբրև ժողովրդի կրօնային կեանքի ամփոփումն, անփոփոխական տարրեր ունենալով հանդերձ՝ զարգացման այլ և այլ շրջաններ, պէսպէս անցումներ է ներկայացնում: Պատկերացնել կրօնային կեանքի ձեւակերպման նախնական շրջանները, գոյց տալ այդ կեանքի զարգացման արտաքին այլ և այլ աստիճանները, նրա ներքին ազդեցութիւնը և այլն, այս է ընդհանրապէս քրիստոնէական եկեղեցու պատմութեան նպատակը, և նոյնը մանաւանդ հայոց եկեղեցու պատմութեանը:

Հայոց եկեղեցու հազար վեցհարիւրամեայ պատմութիւնը, թէ և ըստ երևութին միանման, իւր որոշ բաժանմունքներն ունի, որոնք իրենց բովանդակութեամբ նախընթացներից զանազանվում են: Այս կողմից կարող ենք ընորոշել 1. Հայոց եկեղեցու սկզբնաւորութեան շրջան. 2. Հայ եկեղեցու հայացման շրջան. 3. Մարտիրոսութեան շրջան, և 4. Ազգայնացման շրջան:

Բայց մեր եկեղեցու կեանքի արտաքին հանգամանքներն ի նպատ առնելով՝ պատմութիւնը կարող ենք հետևեալ շրջաններին բաժանել. 1. Նախալուսաւորչեան շրջան (34—301). 2. Երկրորդ լուսաւորութեան շրջան (301—387). 3. Հայ եկեղեցու կազմակերպութեան շրջան (387—551). 4. Հալածանքի շրջան (551—1065 թ). 5. Ռուբինեանց շրջան—եկեղեցիների միութեան փորձեր (1065—1441) թ. և 6. Էջմիածնական շրջան—Ա. Հին ժամանակներ (1441—1892 թ.) և Բ. Նոր ժամանակներ (1892—):

ՆԱԽԱԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ԾՐԶԱՆ.

34—301

ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ԴԱՐՁԸ.

1. Ազգային աւանդութիւնը, հայ պատմիչները, ինչպէս նաև օտարների ակնարկութիւնը միաբերան հաստատում են, թէ քրիստոնէութիւնը շատ հին, նոյն իսկ Փրկչի երկրաւոր կեանքի ժամանակներից առաքեալների ձեռքով քարոզուեցաւ Հայաստանում։ Պատմական տուեալ՝ աղբիւրների բացակայութեան պատճառով՝ այս քարոզութեան ինչպէս և հայոց եկեղեցու սկզբնաւորութեան պատմութիւնը կարելի չէ ճշգութեամբ ներկայացնել։ Աւանդական պատմութեան համեմատ հետևեալ կերպով է նկարագրվում հայոց առաջին դարձը։

Փրկչի ժամանակ հայոց թագաւոր էր Աբգարը, որ Միջագետքի Եդեսիա քաղաքում էր նստում։ Քաղաքական նպատակներով նա Պարսկաստան է գնում և այնտեղից գառնալիս՝ հիւանդանում է։ Հռովմայեցոց առաջ, որոնց իշխանութեան տակ էր գտնվում, իւր վրայ բարդուած քաղաքական ամբաստանութիւններից արդարանալու համար՝ նա դեսպաններ է ուղարկում Ասորիքի Մառինոս (Սարինոս) կուսակալի մօտ, որոնք իրանց տիրոջ յանձնարարութիւնը յաջողութեամբ կատարելուց յետոյ՝ մնում են նաև Երուսաղէմ և այստեղ ան՝ լսում են այն բոլոր սքանչելի բժշկութիւնների մասին, որ մարդկութեան Փրկիչը կատարում էր։ Վերադառնալով Եդեսիա՝ նրանք պատմում են իրանց տիրոջ Աբգարին, ինչ որ տեսել էին ու լսել Փրկչի կատարած գործերի մասին։ Աբգարը, որ տակաւին հիւանդութեամբ տառապում էր, լսելով Յիսուսի գործած սքանչելի դէպքերը՝ այն համոզմունքն է կազմում, թէ այդպիսի հրաշքներ գործողը կամ Աստուած պիտի լինի և կամ Աստուծոյ որդի երկնքից իջած։ Անմիջապէս նոյն դեսպանների ձեռքով նամակ է գրում Յիսուսին, խնդրելով որ գայ իր մօտ բնակի և

իրեն էլ բժշկէ։ Այս նամակին Յիսուս պատասխանում է, թէ կարող չէ անձամբ գալ. բայց իւր համբառնալուց յետոյ իւր աշակերտներից մէկը կը դայ, որ նրան կը բժշկէ նրան և իւր վարդապետութիւնը կտուտցանէ։

34 թուին Եգեսիա է գալիս Քրիստոսի 12 առաքեալներից մէկը՝ Ղեբէոս—Թադէոսը (Մատթ. ժ. 3. Ղուկ. Զ. 16) և իջևանում է Տուբիա հրեայի մօտ։ Նրա գալստեան ու կատարած բժշկութիւնների համբաւը շուտով ամբողջ քաղաքի մէջ տարածվում է, և Աբգար թագաւորը նրան իւր մօտ է հրաւիրում, հաւատացած լինելով՝ թէ այդ անձը հենց Յիսուսի ուղարկածն է։ Թադէոսը Աբգարին բժշկում է ու քարոզում նոր կրօնի վարդապետութիւնը։ Աբգարը, ինչպէս և Եգեսացիք, տեսնելով Թադէոսի կատարած հրաշալի գործերը և լսելով նրա քարոզութիւնը՝ հաւատում են և մկրտվում։ Անմիջապէս մեհեանները փակվում են և քրիստոնէութիւնը իրրև պաշտօնական կրօն է ճանաչվում։ Աբգարը հետամուտ է լինում քրիստոնէական կրօնը տարածելու և իւր ծանօթ թագաւորներին նամակներ ևս գրում է՝ յորդորելով քրիստոնէութիւն ընդունելու։

> Այսօրուայ պատմական քննադատութիւնը իրրև ճշմարիտ չի ընդունում այս բոլոր անցքերը, յայտնելով միանգամայն թէ այս պատմութեան մէջ նկարագրուած է Աստուծոյ և ոչ թէ Հայոց գործը, թէ Ուռհայի (Եդեսիայի) թագաւորութիւնը հայկական չէր, թէ Փրկչին ժամանակակից Աբգար Ե. Ուքաման (Սեաւը) քրիստոնէութիւն չէ ընդունել և ոչ իսկ յղութակցութիւն ունեցել Յիսուսի հետ. թէ միմիայն Աբգար Թ-ը Քրիստոսի 207 թուին քրիստոնեայ է դարձել։ Ընդունելով հանդերձ պատմական քննադատութեան այս յայտնութիւնները, պէտք չէ սակայն մերժենք, թէ քրիստոնէութիւնը շատ հին ժամանակներում քարոզուեցաւ ինչպէս Ասորւոց այնպէս և Հայոց, որոնց երկիրը աշխարհագրական դրութեամբ աւելի մօտ էր քրիստոնէութեան կեդրոն Պաղեստինին, քան թէ Փոքր Ասիոյ հեռաւոր գաւառները, ուր Պօղոս առաքեալը գործեց։ Գործք Առաքելոցը (գլ. Բ. 9) թուելով քրիստոնէութիւն քարոզուած երկիրների անունները՝ ի միջի այլոց յիշատակում է և Հրէաստան անունը։ կարծվում է, և այն՝ Տիբերիուղիանոսի (160—240) վկայութեան վրայ հաստատուած, թէ Գործք Առաքելոցի Հրէաստանը Հայաստան պէտք է ուղղել, մանաւանդ որ անունների դասաւորութեան կարգն էլ այդ է պահանջում—Միջագետք, Հայաստան և ապա Գամիրք։ Այսպիսի մեկնութեամբ հաստատվում է քրիստոնէութեան հնագոյն քարոզութիւնը մեր երկրում։ Ջմռռնանք և այն, որ մեր երկրում բազմաթիւ հրեաներ կային, որոնք սերտ յարաբերութեան մէջ էին իրենց Մայր երկրի հետ և ըստ կանաբար նոր կրօնի գաղափարների տարածիչներ կլսող էին լինել։

2. Եդեսիայի մէջ քրիստոնէութիւնը հաստատուելուց յետոյ՝ Թադէոսը իրեն փոխանակ Ագդէ (Ադդէ) մեռաքսագործին եպիսկոպոս է ձեռնադրում և ինքը Աբգարի հրովարտակով գալիս է բուն հայոց երկիրը Սանատրուկի մօտ, որ Աբգարի քեռորդին էր և նրանից հայ աշխարհի ու զօրքի վրայ իշխան կարգուած։ Թադէոսը քարոզութեամբ շրջում է Այրարատ, Միւնիք, Վասպուրական նահանգները և շատերին դարձի է բերում, որոնց մէջ մանաւանդ նշանաւոր էին Սանատրուկի դուստր Սանդուխտը, Սամուէլ ու Զեմինդ իշխանները, Զարմանդուխտ տիկինը, և Ոսկեհանք։ Նոյն իսկ Սանատրուկն էլ քրիստոնեայ է դառնում, բայց ապա նախարարների երկիւղից հաւատքն ուրանալով՝ հալածանք է հանում քրիստոնէութեան դէմ։ Այս հալածանքի ժամանակ Աբգար դաւառում նահատակվում են Թադէոս առաքեալը, Սանդուխտ կոյսը և ուրիշները։ Թադէոսի և ս. Սանդուխտի նշխարներն ամփոփուած են Մակու քաղաքի մօտ գտնուած ս. Թադէոս առաքեալի վանքում։

3. Հայ և օտարազգի վկայաբանութիւնները Հայոց երկրորդ քարոզիչ համարում են Բարթուղիմէոս առաքեալին, որ Աւետարանի մէջ յիշատակուած Նաթանայէլի հետ նոյն անձն է համարվում։ Բարթուղիմէոսը նախնաբար Պարսից երկրի հարաւային կողմերն է քարոզում և ապա Հնդկաստան է անցնում։ Տիրամօր վերափոխումից յետոյ, որի ննջման ներկայ չէր, Թովմաս առաքեալի յորդորանքով նա Հայաստան եկաւ Սանատրուկի թագաւորութեան 29 տարին՝ Թադէոս առաքեալի գործը շարունակելու, բերելով հետը նաև Տիրամօր պատկերը։ Նրա քարոզութեան կեդրոն է լինում Վասպուրական նահանգի Անձեւացեաց գաւառը, որ յայտնի էր իրրև հեթանոսական պաշտօնատեղի, յատկապէս Դարբնաց քար կոչուած տեղը Անահտական մեհեանով։ Առաքեալը իւր քարոզութեամբ աշխատում է ջնջել հեթանոսութիւնը, շահում է հեռւորներ, շինում է մի փոքրիկ եկեղեցի ս. Աստուածածնի անունով, որի մէջ դնում է իւր հետ բերած Տիրամօր պատկերը և եկեղեցու պահպանութիւնը ս. կանանց է յանձնում, որոնց մէջ յատկապէս յիշվում է Մարիամ՝ Յուսիկ իշխանի քոյրը, Աննա՝ Որմզդաստի քոյրը և Աննա՝ Մաքովարի քոյրը։ Այս եկեղեցին յետոյ յայտնի եղաւ Հոգեաց վանք անունով։

Ընտրելով Անձևացեաց գաւառը իրրև կեդրոն՝ Բարթուղիմէոս առաքեալը շրջում է նաև Հայաստանի այլ և այլ կողմերը. այսպէս աւանդվում է, թէ նա քարոզել է Դուլին գաւառում և տեղացի իշխանին ու նրա կնոջը, Խոսրով որդուն ու վահան թոռանը քրիստոնեայ դարձրած։ Նա քարոզել է նոյնպէս Աղբակ գաւառում և այստեղ քրիս-

առնեայ է դարձլիլ աղնուագղի Ոգուհի կամ Աւագուհի տիկնոջը, և այստեղ էլ Սանատրուկի հրամանով Աժդահակ իշխանի ձեռքով նահատակուել է Արբելոս քաղաքում։ Այսպիսի գործերի համար Սանատրուկը հին ժամանակներից «առաքելասպան» կոչումն է ստացել (Փաւստ 1)։

4. Մեր Յայսմաւուրքը ուրիշ երկու քարոզիչներ ևս նշանակում է Միջագետքի ու Հայոց համար, այն է՝ Թադէոսին որ 72 աշակերտներից մէկն էր և Շմաւոն (Սիմոն) Կանանացուն՝ նախանձայոյզ կոչուածին։ Առաջնի համար աւանդվում է, թէ նախ քարոզել է Ասորիքում ու Միջագետքում և ապա Հայաստանում։ Սիմոն Կանանացու համար ևս պատմվում է, թէ նոյնպէս քարոզել է Հայոց ու Պարսից կողմերում և նահատակուել է Ռուսդաւա կոչուած տեղը՝ Ուրմիոյ մօտ։

Այսպէս ուրեմն՝ Հայաստանում չորս առաքեալներ են գործել, որոնցից երկուսը՝ Թադէոս և Բարթուղիմէոս առաքեալները «նախկին լուսաւորիչներ» են կոչուած, որովհետև քարոզել են Հայաստանի խորքերում և աւելի արդիւնաշատ են եղած։ Բոլոր քարոզիչներն էլ գալիս են Ասորիքի կողմերից՝ բնական ճանապարհով, և այս պարագան առիթ է տուել կարծելու, թէ Ասորիներն են Հայաստանում քրիստոնէութիւն քարոզել և թէ քարոզութեան սկզբնական կեդրոններ հիմել են Եդեսիան ու Մծբինը։ Բայց ապաքէն այն առաքեալները, որոնք Ասորիքի մէջ քրիստոնէութիւն հաստատեցին, կարող էին աւելի ևս դէպի հիւսիս յառաջել և քարոզել, ինչպէս որ իրօք և գործել են։ Այլ խնդիր է, որ քրիստոնէութիւնը յիշեալ քաղաքներում աւելի հաստատուն դարձաւ ու ծաղկեցաւ, քան թէ Հայաստանում, ուստի քաղաքներից նոր վարդապետութեան լոյսը շարունակուեց անընդհատ տարածուիլ շրջակայ ազգերի վրայ։

5. Թադէոսի ու Բարթուղիմէոսի, ինչպէս և միւս առաքեալների քարոզութիւնը նրանց նահատակութեամբը չվախճանուեցաւ, այլ հետզհետէ ճոխացաւ հաւատացեալների՝ բազմութեամբ չնայելով որ մեր երկրի քաղաքական կեանքը նպաստաւոր չէր։

Թադէոս առաքեալը Արտազ գաւառից քարոզութեամբ հնուանալիս՝ իրեն փոխանորդ հաստատեց Շաւարշան քաղաքում իւր աշակերտ Զաքարիային, որ յետոյ Երուանդ Թագաւորի բռնակալութեան ժամանակ 76 թուին նահատակուեցաւ։ Սրան յաջորդեց Զեմմինա հայ իշխանը, որ նոյնպէս Երուազ քրմապետի ձեռքով 81 թուին նահատակուեցաւ։ Մի հին յիշատակարան Թադէոս ու Բարթուղիմէոս առաքեալների յաջորդութիւնը հետևեալ կերպով է առաջ բերում. ժամանակագրութիւնը հաւանօրէն է։

Առտազի արոտ.

1. Թադէոս	. .	35— 43
2. Զաքարիա	. .	44— 76
3. Զեմմինա	. .	76— 81
4. Աբդնեբսհ	. .	82— 95
5. Մուշեղ	. .	96—126
6. Շահէն	. .	127—154
7. Շաւարշ	. .	155—175
8. Դևոնդ	. .	176—193

Բարթուղիմէոսի յաջորդներ.

1. Բարթուղիմէոս.	.	44— 67
2. Կումսի	. .	68— 90
3. Բարիւաս	. .	90—120
4. —	. .	120—150
5. Մխիթար	. .	150—170
6. Զոթիկոս	. .	170—190

Եւսեբիոս Կեսարացին իւր Եկեղեցական պատմութեան մէջ յիշատակում է մի հայ եպիսկոպոս Մեհրուժան անունով. «Դիոնեսիոս Ալեքսանդրացի (248—265) առ Հայս գրեաց թուղթ վասն ապաշխարութեան, որոց եպիսկոպոս էր Մեհրուժան» (Զ, խզ)։ Այս թուղթը գրուեցաւ 253 թուին։ Ո՞րտեղ էր նստում Մեհրուժանը, դժուար է ճշդել։ Կան կարծողներ, թէ դա Փոքր Հայոց եպիսկոպոս էր. բայց անունից դատելով՝ այդ անձը Արծրունեաց տոհմից և Վասպուրականի եպիսկոպոս է համարվում (Գելցեր), և կամ աւելի ճիշտը՝ Ծոփաց եպիսկոպոս (Ադոնց Армения 347)։

Արդ՝ վերոյիշեալ եպիսկոպոսական յաջորդութիւնը ցոյց է տալիս, թէ առաքեալներից յետոյ քրիստոնէութիւնը Հայաստանում չընդատեց։ Նոյնը հաստատում են և այն բազմաթիւ վկայութիւնները, որոնք Բ. և Գ. դարերում տեղի ունեցան մեր երկրում։

6. Բ. դարի առաջին քառորդում նահատակուեցան Ոսկեանք և Սուքիասեանք, որոնց յիշատակը մեր եկեղեցին մինչև այսօր էլ տօնում է։ Ոսկեանց մասին աւանդվում է, թէ հռովմայեցի դեսպաններ էին՝ հինգ հոգի, և եկել էին Հայաստան Սանատրուկի մօտ։ Լսելով Թադէոսի կամ նրա աշակերտների քարոզութիւնը՝ քրիստոնեայ դարձան, և իրանց գլխաւորի անունով, որ Ոսիւսի (=ոսկի) էր կոչվում, Ոսկեանք կոչուեցան։ Սրանք քարոզութեամբ Արտաշէս Բ-ի արքունիքն

իսկ մտան և չկարողանալով որսալ ոչ Արտաշէսին և ոչ էլ Սաթինէին՝ քրիստոնեայ դարձրին սրա ազգականներից 19 հոգի, որոնք իրանց գլխաւորի անունով, որ առաջ Բահաթրատ էր կոչվում և մկրտուելուց յետոյ Սուքիաս, կոչուեցան Սուքիասեանք։ Արտաշէս Բ-ի որդիքը Ոսկեանց հալածեցին, և նրանք քաշուեցան Բագրեւանդ գաւառի սահմաններըը՝ Արածանիի աղբիւրակների մօտ և այստեղ ճգնեցան համարեա 43 տարի։ Սուքիասեանք ևս արքայորդիներից նեղուելով նոյնպէս արքունիքից հեռացան և Ոսկեանց մօտ եկան և Եփրատի ակունքներում մկրտուեցան։ Շատ չանցած՝ Սուքիասեանք ևս առանձնացան Սուկաւէտ կամ Ջրաշէն լեռները։ Բայց արքայորդիներն այս առանձնութիւնն վայրերում ևս նրանց հանգստութիւն չտուին։ Նրանք նահատակեցին Ոսկեանց և սկսան բռնադատել, որ Սուքիասեանք ևս դարձի գան. բայց սրանք անդրդուելի մնացին։ Երկու կամ երեք տարի վերջը Ալանաց երկրից Բաւլանա անունով մի իշխան եկաւ, որ հարցուփորձ անելով՝ գտաւ Սուքիասեանց և իրենց ճգնութիւնն վայրում նրանց նահատակեց (127—130 թուերին)։ Սուքիասեանք խոտաճարակ էին, և իրենց թաւամազ լինելուն կամ եղիա մարգարէի նըմանն այծենի հագած լինելնուն համար Բօշ ևս կոչուեցան։

Անշուշտ Ոսկեանց և Սուքիասեանց պատմութիւնն մէջ շատ անստոյգ և ժողովրդական տարրերքեր կան, ինչպէս որ քննադատութիւնն ևս ցոյց է տուել. բայց այդ ղրուցական ու աւանդական մասերի պատճառով կարելի չէ ուրանալ, թէ յիրաւի Հայաստանում եղել են քրիստոնեանների խմբեր, որոնք իրենց հաւատի համար նահատակուել իսկ յանձն են առած։ Ոսկեանք կոչումը, ինչպէս տեսանք, հայ վկայաբանութիւնը կապում է Մոիսէի յաւետարէն բառի հետ, որ ոսկի է նշանակում։ Բայց յայտնի է, որ Բ. դարում կային ճգնաւորներ, որոնք Ոսկո, այսինքն՝ խոտաճարակ էին կոչվում. հաւանօրէն Ոսկեանք կոչումն էլ սուրբ այս, քան թէ Մոիսէի բառի հետ կապ ունի։ Կարելի է ենթադրել նոյնպէս, թէ այդ Ոսկեանք հայ կամ ասորի ևս լինին, և ոչ թէ հռոմայեցի դեսպաններ, և այս պատճառը յօրինուել է թերևս մխիթարեան այդ ճգնաւորների դիրքը ժողովրդի աչքում աւելի ևս բարձրացնելու համար։ Սուքիասեանց մասին ևս կան կարծողներ, թէ յոյներ էին և իրենց գլխաւորի Հիւսիքոսի կամ Սիւքիոսի (=խաղաղ, հանգարտ) անունով Սուքիասեանք կոչուած, և ոչ թէ Ալանաց երկրից եկած։ Վերջապէս այս երկու խմբերի նահատակութեան թուականների նկատմամբ շատ հիմնաւոր տարակոյսներ են յայտնուած։ Բայց, ինչպէս ասացինք, պատմական փաստը՝ մերկ վիշապիր յաւելուածներից ու պարզերից, պէտք է միշտ ընդունելի մնայ։

Նոյն Բ. դարում լսուին Յայսմաւուրքները յիշատակում են Արտաշատեան քիւր վկաների վկայաբանութիւնը՝ (118 թ.) կատարուած Արարատ լերան վրայ։ Աղբիանոս կայսրը Արևելքում մի ապստամբութիւն ընկճելու համար 9 հազար զօրք է ուղարկում, որոնք թշնամուն յաղթելուց յետոյ՝ իբրև քրիստոնեայ հրաժարվում են կայսեր մօտ դառնալ, այլ գալիս են Հայաստան, երևի իրենց հայրենիքը, և ապաստանում են Արարատ լերան լանջերում։ Կայսրը նոր զօրք է ուղարկում, որոնցից հազար հոգի առաջիններին հետ են միանում և ամենքն էլ նահատակվում են։

Գ. դարում յիշատակվում է և Սալահունեաց տոհմից Սուրէն իշխանի որդին, որ իւր հօր ձեռքով քրիստոնէական հաւատի համար նահատակվում է։

Որ Հայաստանում Լուսաւորչից առաջ քրիստոնեաներ կային, այդ հաստատվում է և մեր քաղաքական պատմութեամբ։ Վաղարշ և Խոսրով թագաւորների համար պատմվում է, թէ քրիստոնէութեան դէմ հալածանքներ հանեցին. այսպիսի քայլեր անիմաստ կը լինէին, եթէ Հայաստանում՝ յայտնի կամ ծածուկ, քրիստոնեաներ չլինէին։ Այսպէս՝ վասակը սուիզում են մեզ խոստովանելու, որ քրիստոնէութիւնը առաքեալների ժամանակներից անընդհատ շարունակուեցաւ մեր երկրում մինչև Դ. դար՝ լինելով լոկ ժողովրդական կրօնք. այդ դարում հայոց քաղաքական իշխանութիւնն ևս վերջնականապէս նրան հնազանդեցաւ և նա դարձաւ ընդհանուր հայ ազգի կրօնք։

ԵՐԿՐՈՐԴ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ ԾՐԱՆ.

(301—387 Թ.)

Ա. ԳԼՈՒԽ

ՀԱՅՈՑ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԴԱՐՁԸ.

Ս. ԳՐԻԳՈՐ ՊԱՐԹԵՒ

1. Որքան էլ Հայոց եկեղեցու Նախալուսաւորչական շրջանի պատմութիւնը մութ ու տարակուսական կէտեր ունենայ, այս միայն ոտյդ և պրական է, որ քրիստոնէութիւնը շատ վաղ ժամանակներից քարոզուեցաւ և բազմաթիւ հետեւողներ ունեցաւ։ Քրիստոնէութեան մուտքը առաքեալներից յետոյ Հայաստանում երկու ճանապարհով է կատարվում նախ Հարաւից՝ Ասորիքի կողմից, ետպա Արեմտքից՝ Կապադովկիայի կողմից։

Արդէն տեսանք, որ քրիստոնէութիւնը Ա. դարում Անտիոքից մուտք է գտնում Եդեսիա, որ ամբողջ Միջագետքի լարհշէն ու վաճառաշահ քաղաքն էր իւր զեղեցիկ աշխարհագրական դիրքով։ Պատմական փաստերը, ինչպէս տեսանք, հաստատումեն, որ այս քաղաքում քրիստոնեայ համայնք կար 150 թուերին. ճիշդ այդ ժամանակներում ապրում էր Տատիանոսը, որ առաջին անգամ գրել է Աւետարանների Համաբարբառը, և փոքր ինչ յետոյ Բարդեծանը (+ 222), որ կեանքի վերջին մասում հերետիկոսութեան մէջ ևս ընկաւ։ Նոյն Բ. դարի ժամանակից համարվում է նաև Ասուածաշունչի Պեշիտոյ Թարգմանութիւնը։ Այս և այլ սրա նման փաստերը ճշմարտապէս հաստատում են, թէ քրիստոնէութիւնն Եդեսիայում հաստատուած էր։ Բայց առաքելութիւնը քրիստոնէութեան յատկանշանական երևոյթներից մէկն է։ Նա կարող չէր պարփակուած մնալ Եդեսիա քաղաքում առանց շրջակայ երկիրները տարածուելու, մանաւանդ որ Պարթեւների տիրապետութիւնը խափանարար չէր նոր կրօնի տարածման։ Եդեսիային մերձակայ երկիրը Հայաստանն էր և առևտրական հայերն անդուլա ի վաղուց յարաբերութիւն ունէին այս վաճառաշահ քաղաքի հետ, որ գտնվում էր դէպի Հայաստան տանող ճանապարհի վրայ։

Ասորիքից քրիստոնէութիւնը հաւանօրէն նախ Ծոփաց երկիրը

մտաւ, ուր 250 թուերին եպիսկոպոս էր Մեհրուժանը, և ապա Ծոփաց երկրից մերձաւոր Տարօն գաւառը, ուր արդէն քրիստոնէութեան տիրապետութեան դարերում ասորական տարրը զօրեղ ու ազդեցիկ էր։ Այս ազդեցիկութեան հետևանքն էր և այն պարագան, որ Հարաւային Հայաստանի եկեղեցական լեզուն ասորերէնն էր, որի դէմ այնպէս բողոքում էր Ղազար Փարպեցին Ե. դարում։

Բայց հարաւից՝ Ասորիքից եկած քրիստոնէութիւնը Հայոց լոկ մի մասի մէջ յաջողութիւն ունեցաւ, միմիայն որոշ շրջանակում, այն ինչ Արևմտքից եկած քրիստոնէութիւնն աւելի ընդարձակ շրջանակ ունեցաւ, և որ դլխաւորն է՝ հայ երկրի իշխանութեան վրայ տարածեց իւր ազդեցութիւնը. այդ պատճառով էլ հայ ազգի ամբողջական դարձի պատճառ դարձաւ։

2. Ինչպէս փոքր ինչ յետոյ կըտեսնենք, Գրիգոր Պարթևը կեսարիայում մեծացաւ և այն կողմերից եկաւ Հայաստան քրիստոնէութիւն քարոզելու։

Մեծ Հայքի արևմտեան կողմը գտնվումէր Փոքր Հայքը և Կապադովկիան, ուր Դ. դարից շատ առաջ քրիստոնէութիւնը ծաղկած էր և ունէր բազմաթիւ հետևողներ. և որովհետև այդ երկիրների ազգաբնակութեան մէջ հայութիւնը շատ մեծ թիւ էր կազմում, պէտք է հարկադրաբար ընդունինք, թէ քրիստոնեայ հայերի թիւն էլ մեծ էր։ Քրիստոնէութեան նշանաւոր կեդրոններ էին՝ Կեսարիա, Սեբաստիա, Նեոկեսարիա, Մելիտինէ և այլ քաղաքներ. այստեղ գործեցին Ագեքսանդր եպիսկոպոսը (+ 200), Գրիգոր Սքանչելագործը, որ 210 թուերին եպիսկոպոս էր, Փիլոմիլեանոսը (233—269) և ուրիշները։ Հռովմէական հալածանքների ժամանակ այս երկրները տուին նաև բազմաթիւ նահատակներ։ Ահա մի այսպիսի ջերմ կրօնական միջավայրում մեծացաւ ու դաստիարակուեցաւ Հայոց ամբողջական դարձի պատճառ ս. Գրիգոր Լուսաւորիչը, որի մասին կարծողներ կան, թէ յոյն քարոզիչ էր, իսկ ոմանք էլ՝ Փոքր Հայքի հայ քրիստոնեաներից մէկը համարում, որ ջանասում է Մեծ Հայքի հայրենակիցներին քրիստոնեայ դարձնել։ Այս կարծիքներին հակառակ՝ ազգային պատմութիւնը մեզ ուսուցանում է, թէ Գրիգորը Պարթև Անակի որդին է՝ ծնուած մօտաւորապէս 239 թուին վաղարշապատ քաղաքում։ Երբ դաւաճան Անակը հայոց Խոսրով թագաւորին Սանտևան Արտաշիրի թիւլդրութեամբ մահամերձ վիրաւորից ու փախաւ, զայրացած հայ նախարարները, ոչ միայն նրան սպանեցին, այլ և նրա ամբողջ ընտանիքը կոտորեցին, որից ազատուեցաւ մի մանուկ, որ Եւթազ անունով մի անձի ձեռքով կեսարիա տարուեցաւ։ Այս ազատուած մանուկն էր, որ յետոյ Գրիգոր կոչուեցաւ և իւր կատարած գործին համար՝ Հայոց Լուսաւորիչ։

Զափհաս դառնալով՝ Գրիգորը ամուսնացաւ Մարիամ անունով աղջկայ հետ, որի Աթանագինէս եղբայրը Սեբաստիայի քորեպիսկոպոս էր և 300 թուերին նահատակուեցաւ: Այս ամուսնութիւնից Գրիգորն ունեցաւ երկու որդի՝ Վրթանէս ու Արիստակէս, որոնք ապագային իրենց հօր գործակից ու յաջորդ դարձան:

Բայց Գրիգորն երկար ժամանակ չվայելեց ընտանեկան կեանքը: Քրոջուհեան եռանդից մղուած, կամ ինչպէս Խորենացին է ասում, իւր հօր գործած յանցանքը քաւելու համար՝ նա Հայաստան եկաւ, ուր այդ ժամանակ Պարթև Տրդատ Գ-ն էր իշխում (262—276) և սրա մօտ ծառայութեան մտաւ՝ կամենալով գործի յաջողութեան համար քարոզութիւնը հայ ազգութիւնից սկսել: Քաղաքական շփոթութիւնների պատճառով Տրդատն այդ ժամանակները սահմռկեցաւ հռոմէական կայսերութեան երկիրներին ապաւինել. նրա հետ Գրիգորն էլ վախճանական գնաց և երկուսն էլ օտարութեան մէջ մնացին մինչև 287 թուերը, երբ վերջապէս անձնական քաջութեամբ հռչակուած Տրդատը հռոմէական զօրքերի գործակցութեամբ յետ ստացաւ իւր հայրենի գահը: Վերադարձի ժամանակ՝ երբ դեռ Եկեղեաց գաւառի Երիզա աւանումն էին, որ հռչակուած էր իւր Անահիտ տիկնոջ մեհեանով, Տրդատը իրրև երախտադիտութեան ցոյց զոհեր կատարեց և ապա պատուիրեց Գրիգորին, որ սա էլ պատկ ու թաւ ոտեր նուիրէ հռչակաւոր դիցուհուն: Գրիգորը՝ որ երկար տարիներ ամենայն հաւատարմութեամբ ու սիրով ծառայել էր Տրդատին, այժմ առաջին անգամ անլսող գտնուեցաւ իւր տիրոջ հրամանին, այն էլ՝ յանուն իւր պաշտած կրօնին: Այս վերջին պարագան մեծապէս զայրացրեց Տրդատին. նա կամեցաւ բաղցր ու ողջոյնով նրան դարձի բերել. իսկ երբ նպատակին չհասաւ, այն ժամանակ ծանր ու սոսկալի պատիժներով կամեցաւ Գրիգորի համոզմունքը խախտել. բայց ի զուր: Այսպիսի փորձերից յետոյ մինչդեռ Տրդատը խորհում էր այլ միջոցների դիմել, ահա հրապարակ եկաւ Աշոցեան Տաճատ իշխանը, և Տրդատին յայտնեց, թէ Գրիգորը Խոսրով թագաւորին սպանող Անակի որդին է: Այս ծանր յանցանքին համար Տրդատը հրամայեց՝ Գրիգորին Արտաշատի սաստիկ բանտը ձգել (287 թ.), որ մահապարտների համար էր սահմանուած:

Ամբողջ 13 տարի Գրիգորը Արտաշատի բանտի մէջ մնաց՝ վայելելով բանդապետի կնոջ խնամքը, կամ թերևս և Խոսրովպուհի պաշտպանութիւնը, որին երևի շատ վաղուց նա քրիստոնէութեան կողմն էր ձգել: Այս դէպքից յետոյ Հռոմէական կայսրների նման՝ Տրդատն անմիջապէս մի հրովարտակ հանեց, որով պատուիրում էր հայ ժողովրդին՝ չերմեռանդ լինել դէպի հայրենի աստուածները, նրանց չքարկացնել, չանպատուել՝ սպառնալով հակառակ կերպով վարուողնե-

րին կեանքից ու գոյքից զրկել: Բայց այս ժամանակներում (300 թուերին) կատարուեցաւ մի ուրիշ նշանաւոր դէպք, որ մեծապէս Տրդատի կեանքի և քրիստոնէութեան հաստատութեան համար վճռական նշանակութիւն ունեցաւ. այդ Հռիփսիմեանց կոյսերի նահատակութիւնն էր:

3. Աւանդական պատմութիւնն ասում է, թէ Հռիփսիմեան կոյսերը հռոմայեցի էին, և Հռիփսիմէն՝ թագաւորական տոհմից: Նրանք ընակվում էին Հռոմում ս. Պօղոսի հանգստարանի մօտ ճգնական կեանքով: Փախչելով Դիոկղետիանոս կայսեր խնդրակների՝ ձեռքից (293 թուերին), որովհետև կայսրը ուզում էր չքնաղ Հռիփսիմէին հարկադրել, կոյսերը՝ թուով 70 հոգի, Եսայի և Դանիէլ քահանաների ընկերակցութեամբ և իրենց հոգևոր մօր Գայիանէի առաջնորդութեամբ գալիս են Արևելք. փրկէի անօրինական տեղերին երկրագութիւն անելուց յետոյ՝ անցնում են Եգիսիա և ապա հարաւային կողմերից Հայաստան մտնում: Աւանդական պատմութիւնը մանր նկարագրում է նրանց այս ճանապարհորդութիւնը և թէ ինչպես ցրուեցան մեր երկրի այլ և այլ կողմերը և բնակեցան հայոց մայրաքաղաքի վաղարշապատի մօտ «ի հնձանայարկս այգեստանեայն»: Կոյսերի փախուստն արդէն վաղուց էր յայտնել Դիոկղետիանոսը ամէնքին, ինչպէս և հայոց Տրդատ թագաւորին, խնդրելով կամ իրեն ուղարկել Հռիփսիմէին, և կամ իր մօտ պահել: Տրդատը կոյսեր հրամանագրովով առնելով՝ ամէն կողմ խնդրակներ է ուղարկում, որոնք մի անձի ցուցմամբ վերջապէս գտնում են կոյսերին հնձաններից մէջ: Պատմվում է Տրդատին Հռիփսիմէի աննման գեղեցկութեան մասին և անմիջապէս հրամայվում է մեծ վարձով նրան արքունիք բերել և բնութիւն բակ գոյ գնել, եթէ կոյսն անլսող գտնուի: Կոյսը բերվում է Հայոց թագաւորի արքունիքը, բայց իսպառ մերժում է թագաւորին հարսնանալ. բերվում է արքունիք և Գայիանէն, որ Հռիփսիմէին համոզէ թագաւորին կամքը կատարելու. բայց ընդհակառակն աւելի ևս յորդորում է նրան հաստատուն մնալ իւր սրբութեան ու հաւատքի վրայ: Տեսնելով կոյսերի յամառութիւնը և փախուստը՝ Տրդատը հրամայում է նրանց սպանել և Հռիփսիմէն իւր 32 ընկերներով նահատակվում է հայոց մայրաքաղաքի հիւսիս-արևելեան կողմը, ս. Գայիանէն երկու ընկերներով հարաւային կողմը, իսկ մինն էլ հնձանի մէջ: Այս դէպքը մօտաւորապէս կատարվում է 300 թուի նոյեմբերի 6-ին:

Կոյսերի և մանաւանդ Հռիփսիմէի նահատակութիւնը խորապէս ազդում է Տրդատի վրայ. նա ջղային ծանր հիւանդութիւն է ստանում, որ հայ ժողովրդական զրոյցը խղպակերպութիւն է կոչում և այդպէս էլ պատկերացնում թագաւորին: Հարուածից ապատ է մնում ամուսին

6748
41

վաղուխաը, որին և հնդկաց տեսլեքով յայտնվում է, թէ հալուածուած թագաւորին բժշկել կարող է միայն Աբտաշատի գուբը ձգուած Գրիգորը։ Թէև անհաւատալի է թուում, որ Գրիգորն այնքան տարիներ կենդանի մնացած լինի, բայց և այնպէս Օտա Ամատունին Աբտաշատ է ուղարկվում՝ տեսիլը ստուգելու և Գրիգորին բերելու, եթէ միայն կենդանի է։ Կենդանի նահատակ Գրիգորը իւր բազմամեայ ալրկեանքից (301 թուի սկիզբները) դուրս է գալիս և հանդիսաւորապէս վաղարշապատ է մտնում։ Ընդ առաջ են գալիս հալուածուած թագաւորն ու մեծամեծները՝ խնդրելով Թորոսիին ու բժշկութիւն իրանց ծանր ցաւերից և Գրիգորը կատարում է նրանց խնդիրն ապաշխարութեան համար սահմանելով հնգօրեայ պահք, որ մինչև այսօր պահվում է և Առաջաւորաց պահք է կոչվում։

4. Վիրապից դուրս եկած Գրիգորի առաջին գործերից մէկն է լինում նաև ս. կոյսերի մարմիններն ամփոփել և ապա 66 օր շարունակ հնձանի մէջ հայ ժողովրդին ճշմարիտ աստուածպաշտութեան վարդապետութիւնն է ուսուցանում և հիւանդ թագաւորին ու այլ մեծամեծներին բժշկում։ Այս ժամանակ տեսնում է նաև այն տեսիլը, որ պատկերացնում է քրիստոնէութեան յաղթանակն ու հաստատութիւնը մեր երկրում և հայ եկեղեցու ապագայ վիճակը։

Այս տեսիլքին համեմատ՝ Լուսաւորիչը ձեռնարկում է 3 վկայարանների շինութեան, մէկը՝ ս. Հոիփսիմէի, միւսը Գայիանէի վկայած տեղը, իսկ երրորդը՝ հնձանում։ Իսկ տեսլեան դլխաւոր սիւնի տեղ խաչ է կանգնում, ուր ապա շինուեցաւ նրա ձեռքով հայութեան միացուցիչ կապ ս. Էջմիածինը, որ հին ժամանակներում լսկ Կաթուղիկէ էր կոչվում։

Այսպէս ահա հայոց արքունիքն ու մեծամեծները խոնարհում են Գրիգորոսի խաչի առաջ և նրա աշակերտ դառնում։ Վերջնական յաղթանակի համար այսքանը բաւական չէր. պէտք էր կոլծանել այն հաստատութիւնները, որոնք հեթանոսական կեանքն ու գաղափարներն էին պահպանում ու արծաթծում։ Եւ թագաւորը Գրիգորի հետ միացած սկսաւ քանդել այն սրբութիւնները, որ այնքան չերմ սրտով երբեմն նա պաշտում էր։ Առաջինը քանդվում է Տիւր աստուծոյ մեհեանը, որի քրմերը՝ զրահաւոր պատրաստութեամբ գիմում են Աբտաշատի Անահտական մեհեանը։ Այստեղ հին կրօնի պաշտպանները զօրեղ ընդդիմութիւն են ցոյց տալիս նորահաւատ հայ զօրքին՝ թանձրատարափ նետ ու քար տեղալով՝ այնպէս որ զօրքն իսկ զարհուրում է։ Բայց Լուսաւորիչը քաջալերում է զօրքին և ամբողջ մեհեանը քանդվում, այրվում է. քրմերն ու նրանց օգնականները լեռներն են ապաւինում։ Ապա արևմուտք են գնում Գրիգորն ու Տրդատը միևնոյն

նպատակով և Դարանաղեաց գաւառի Թորդան գիւղում Բարշիմիա գից մեհեանն են կործանում՝ չնայելով հեթանոս հայերի ցոյց տուած ընդդիմութեան։ Կործանում են նոյնպէս Անի ամրոցում, հայոց թագաւորների հանգստանոցում, աստուածների հայր Արամազդի մեհեանը, և ապա մտնում են Եկեղեաց գաւառի Երէզ աւանը և քանդում Անահտի մեհեանը։ Այստեղ ևս քրմերը հզօրապէս կռւում են արքունի զօրքի հետ, բայց չկարողանալով դիմանալ՝ փախչում, լեռներն են ապաւինում։ Այսպէս հետզհետէ քանդում են Նանէական մեհեանը Թիլ աւանում և Միհրական մեհեանը Բագայարիճ գիւղում։ Կործանուած մեհեանների հարստութիւնը՝ ոսկին ու արծաթը նրանք զօրքին ու տգրատներին են բաժանում, իսկ ագարակները, դիւղերն ու հողերը ապագայ եկեղեցու սպասաւորների համար պահում։ Այսպէս հայ հեթանոսութեան գլխաւոր կայանների Հայաստանի արևելեան և արևմտեան մասում ոչնչանում են և նրանց աւերակների վրայ խաչի նշանը բարձրանում, մինչև իսկ մեծ ճանապարհակիցների ու հրապարակների վերայ։ Լուսաւորչի քարոզութեան նպատակ՝ ամէն տեղ թագաւորի մեծաւոր հրամանն ու զօրքն են հանդիսանում (Խոր. Բ. դլ)։

Բ. ԳԼՈՒԽ.

ՀԱՅՈՑ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ. ԱՐԻՍՏԱԿԷՍ.

1. Գլխաւոր տեղերում մեհեանները կործանելուց և Հայաստանի արևելեան ու արևմտեան մասերում ժողովրդին քարոզելուց յետոյ՝ Տրդատն ու Գրիգորը վաղարշապատ են դառնում, և նորադարձ հայ թագաւորը Աշխէն տիկնոջ ու Խոսրովադխտի հետ անմիջապէս հրաման է հանում, որ բոլոր զօրքն ու մեծամեծ իշխաններն իւր մօտ խորհրդակցութեան հաւաքուին։ Թագաւորի հրամանը կատարւում է։ Ժողովի մէջ Տրդատը ասում է. «Եկէք շտապինք Աստուծուց տրուած մեր կեանքի առաջնորդ Գրիգորին հովիւ կարգելու, որպէս զի միաբանութեամբ մեզ լուսաւորէ և աստուածային օրէնքներով մեզ վերանորոգէ»։ Գրիգորը սկզբում հրաժարվում է մի այսպիսի պատուից, բայց ապա ժողովրդի կամքի առաջ խոնարհում է։ Անմիջապէս 16 մեծամեծ նախարարների ուղեկցութեամբ արքունական կառքով, թանկագին ընծաներով ու Տրդատի թղթով ուղարկում է Կեսարիա Ս-

պիսկոպոսական ձեռնադրութիւն առնելու (301 թ.)։

Այս ժամանակներում Կեսարիայի եպիսկոպոսական էր Ղևոնդիոս, որ բազմաթիւ եպիսկոպոսների գործակցութեամբ ձեռնադրում է Գրիգորին հայոց աշխարհի հովուապետ և մեծ պատուով ու յարգանքով Մկրտչի ու առաքեալների մասունքներով ճանապարհ է դնում։ Լուսաւորիչը վերադառնալիս՝ նախ գնում է Սեբաստիա, և առնելով հետը գործակից կրօնաւորներ ու քահանաներ նորապարգև հայ ժողովրդի պէտքերին հասար, ինչպէս նաև Աթանագինէ եպիսկոպոսի նըշխարները, վերջապէս գալիս հասնում է Հայոց աշխարհը (302 թ.)։

Բայց առաւելին կանգուն էր Տարօն գաւառում Հայաստանի մեծանշանաւոր մեհեաններից մէկը՝ Վահեվահանը «մի մեծադոյն, ոսկով ու արծաթով լի մեհեան, հայոց թագաւորների գոհելու տեղը». և Գրիգորը իւր ուղեկից նախարարներով նախ Տարօն է մտնում այս մեհեանն ևս կործանելու և տեղը խաչի նշանը կանգնելու համար։ Այստեղ ևս մի զօրաւոր մաքառումն է լինում հին ու նոր կրօնների միջև. քրմերը կատարում են, մեհեանը, Վահագնի, Անահտի ու Աստղիկի բագիններն անհետ ոչնչանում են և Ինձակեան գոչուած տեղում առաջին անգամ հիմնարկվում են Ս. Կարապետի ու Առաքելոց եկեղեցիները, ուր ամփոփում են Յովհաննէս Մկրտչի և երկիչ Աթանագինէսի (Աթենոգինէս) նշխարների մի մասը, իսկ Աշտիշատի մէջ— ս. Երրորդութեան եկեղեցին է շինվում։

Եկեղեցիներ շինելուց յետոյ Լուսաւորիչը սկսում է մկրտել և նախ մկրտում է իրեն հետ եղող 16 նախարարներին և ապա գաւառի բնակիչներին. քանի օրուան մէջ՝ մօտ 200,000 հոգի։ Թողնելով Սեբաստիայից բերած քահանաների մի մասը Տարօնում՝ Լուսաւորիչը Բագրեւանդի վրայով ուղեւորվում է դէպի Այրարատ։ Նրա հետ է Տրդատը նրա զօրաւոր և իր զօրքի, Աշխէն սիկնոջ ու Խոսրովադխտի հետ նրան ընդ առաջ է գնում և Բագաւանում սպասում։ Գալիս է վերջապէս և Լուսաւորիչը բազմաթիւ հետաքրքիր ամբոխի ուղեկցութեամբ և տալիս է նորահաւատ թագաւորին կեսարիայի Ղևոնդ մեհրապալեան թաղիքը։ Այդ թղթի մէջ նշանաւոր է այն առաջարկութիւնը, որ հայոց քահանայապետներն այնուհետև իրենց ձեռնադրութիւնը միշտ կեսարիայից առնեն։

Բագաւանում սկսում է Գրիգորը կրկին քարոզել և ժողովրդի մէջ կրաւթեան պատրաստութիւն տեսնել. պատուիրում է պաս պահել և աղօթել։ Իսկ ինքը այնտեղ եկեղեցի է շինում և ամփոփում գտնում Յովհաննէս Մկրտչի և երկիչ Աթանագինէսի նշխարների մի մասը։ Շրջում է ամբողջ գաւառը, եկեղեցիներ է հիմնարկում և քահանաներ է կարգում։

Երբ ամսօրեայ պահեցողութեան ժամանակը լրանում է՝ առաւօտեան կանուխ աւանից դուրս Եփրատ գետում մկրտում է Գրիգորը բոլոնդակ արքունական բանակն ու հայ արքունիքը և ապա աւանի եկեղեցում պատարագ մատուցանելով՝ ամէնքին հաղորդում։ Եօթն օրուայ մէջ նա մկրտում է 4,000,000 աւելի ժողովուրդ։ Եւ այնտեղ՝ ուր երբեմն նաւատարդ ամառում հեթանոսական Վահագնը աստուծոյ ոճն էր ցնծութեամբ կատարւում, Լուսաւորիչը պատուիրում է նոյնպիսի ցնծութեամբ Յովհաննէս Մկրտչի ու Աթանագինէսի ոճը կատարել ամէն տարի։

Բագաւանից մկրտուածների բազմութեամբ դառնում է Գրիգորը Վաղարշապատ և այստեղ հիմնարկում է հայոց կաթուղիկէ եկեղեցին (302 թուականին) և վիկայարանների մէջ սեղան հաստատում, որոնց տեղ նա խաչ էր կանգնած։

Այնուհետև Տրդատն ու Գրիգորը աշխատում են նոր կրօնն աւելի ապահովել ու հաստատել. Լուսաւորիչը շարունակում է քարոզել, վարդապետել, եկեղեցիներ շինել ու քահանաներ կարգել, իսկ Տրդատը՝ եկեղեցական դատն ապահովել յատկացնելով նրանց անդի համար ագարակներում չորս տան հող, իսկ աւաններում հօթը տան հող։

Քրիստոնէութիւնն առաւել զօրացնելու համար՝ Լուսաւորիչը զբօսանքներ ևս հաստատում է և անխտիր ընդունում ամէն դասակարգի մանուկներ, մանաւանդ քրմերի որդոց, որոնցից ոմանք շուտով Լուսաւորչի ձեռքով եպիսկոպոս ևս դարձան։ Այդ դպրոցներում ուսուցանում էին ասորերէն ու յունարէն, որովհետև սրանք էին հայոց եկեղեցական լեզուն, մէկը հարաւային նահանգներում, իսկ միւսը— մէջին և արեւելեան նահանգներում։

Այսպէս ահա քրիստոնէութիւնը վերջնականապէս հաստատուում է մեր երկրում։

2. Մինչդեռ Հայաստանի մէջ քրիստոնէութիւնն օր աւուր զօրանում և մեծ նուաճումներ էր կատարում սկսած արեւմտեան վոլքրիկ Սատաղ քաղաքից մինչև Կասպից երկիրը՝ այնտեղ Հռովմէական կայսերութեան մէջ քրիստոնէութիւնը չարաչար հալածանքի էր ենթարկուում (303 թ.) Դիոկղետիանոսի և նրա իշխանակիցների ձեռքով։ Այս հալածանքի ժամանակ մարտիրոսների մեծագոյն թիւը տալիս է Փոքր Հայքը, որի բնակիչները՝ մեծ մասամբ հայեր էին այլ և յոյն։ Հալածիչ կայսրները, որոնք քրիստոնէութեան խորտակման մէջ էին տեսնում իրանց պետութեան հաստատութիւնը, կարող չէին անտարբեր աչքով դիտել, որ Հայոց Տրդատ թագաւորն ազգովին քրիստոնեայ է դառնում, և դրանով կարծես Փոքր ասիական քրիստոն-

հանելին թե ու թիկունք։ Այս վատ պատը, ըստ իրենց հայհոյութեան, դէպքի առաջն առնելու համար՝ սատակացնում են հալածանքը կապադովկիայի մէջ և կայսրներից մէկը Մաքսիմինոսը վերջապէս դէնք է բարձրացնում նաև Հայոց դէմ այն պատճառով, որ ոտքա քրիստոնեայ են դարձել։ Նորահաւատ Տրդատն ու հայ ազգը, որոնք «քրիստոնեայ էին և Աստուծոյ եկեղեցութիւնը ջերմեռանդութեամբ կատարում էին» (Եւս. Եկ. պատմ. Թ-ը) նրան չարաչար չարչարում են (311 թ.) և այս պատերազմը առաջինն է, որ մղվում է քրիստոնէութեան չաղթանակի համար։ Բայց Հռովմէական կայսերութեան մէջ ևս շատ շուտով մեծ փոփոխութիւն է առաջ գալիս։ Բազաքագէտ Կոստանդիանոսը՝ նախկին կայսրներին հակառակ 313 թուի յունիսին Միլանի հռչակաւոր հրովարտակն է հանում, որով քրիստոնեաներին կատարեալ ազատութիւն է շնորհում և այս կերպով նրանց իւր կողմը գրաւում։ Այս ուրախալուր դէպքի համբաւը մեր երկիրն ևս հասնում է և այնուհետև երկու քրիստոնեայ թագաւորներ՝ Կոստանդիանոս ու Տրդատ գաշն են կապում՝ հաւանօրէն 316 թուին։

3. Լուսաւորիչը քրիստոնէութեան հաստատութեան համար՝ ինչպէս ասացինք, կարգաւորից եկեղեցական նուիրապետութիւնը, բազմացրից ամեն տեղ քահանաներ և գաւառական եպիսկոպոսներ, որոնց թիւը Ագաթանգեղոսը չափազանցութեամբ 400 է հաշուում։ Հայ ժողովրդին քրիստոնէական կատարեալ կեանքի կենդանի օրինակ տալու համար՝ նա բազմացրից նաև կրօնաւորների թիւը, որոնք իրանց ճգնութեան եղանակին նայելով անձաւամուտ, սորամուտ, սիւնակեաց, խոտաճարակ և այլ այսպիսի անուններով էին կոչվում։ Ինքն էլ Լուսաւորիչը ժամանակ ժամանակ՝ իրեն փոխանակ արքունական Դրան ու բանակին վերակացու թողնելով Աղբիանոս եպիսկոպոսին՝ սիրում էր առանձնանալ լեռնային ու անապատ տեղեր և խոտաճարակութեամբ ու պահեցողութեամբ իւր օրերը հանել։ Լուսաւորչի այս միայնակեցութիւնը շատ հաճոյական չէր սէգ Տրդատին, որ ցանկանում էր նրան իւր մօտ պահել և իրեն հետ շրջեցնել, եկեղեցու գործերը կառավարելու համար. բայց Լուսաւորիչը շարունակում էր իւր ճգնաւորական կեանքը։ Մինչդեռ Տրդատ եկեղեցու կառավարութեան հոգսերի մէջ էր, անդ դիտակ անձերից լսում է, թէ Գրիգորը երկու որդի ունի՝ Վրթանէս և Արիստակէս անուններով։ Սրանք բնակվում էին Կապպադովկիայում. առաջինը ամուսնացած էր, իսկ երկրորդը՝ նուիրուել էր ճգնական կեանքի և անապատի մէջ էր բնակւում, (այսպիսի կեանք այս ժամանակներում շատ զարգացած էր Կապպադովկիայում)։ Անմիջապէս Տրդատը հրաւիրակներ է ուղարկում նրանց մօտից, որոնք հազիւ ուրնին համոզում են Արիստակէսին, թէ «լաւ է

գործ մշակութեան Աստուծոյ, քան զմենաւորութիւն բնակութեան յանապատս»։ Հրաւիրակները բերում են իրենց հետ Վրթանէսին ու Արիստակէսին, իսկ Տրդատը գտնելով Լուսաւորչին Մանեայ այրը անապատում՝ խնդրում է, որ Արիստակէսին իրեն փոխանակ հայոց եպիսկոպոս նշանակէ, քանի որ ինքը անապատներում է ապրում։ Լուսաւորիչը կատարում է այս խնդիրը և նա եպիսկոպոս ձեռնադրուելով իր հօրն օգնական է դառնում։ Այս դէպքից յետոյ՝ Տրդատն ևս հետզհետէ անձնատուր է լինում կրօնաւորական կեանքի՝ տեսնելով իւր առաջը Լուսաւորչի ու Արիստակէսի օրինակը։

4. Ս. Գրիգորի կեանքի վերջին տարիներում դումարուեցաւ առաջին սիներական ժողովը Բիւթանիոյ Նիկիա քաղաքում (325 թ.) քննելու համար Արիոսի մոլորութիւնը, թէ Յիսուս Աստուծոյ որդի չէ և ոչ էլ ճշմարիտ Աստուած, այլ գերագոյն և անբռնիկ արարած։ Ժողովին մասնակցելու հրաւէր առանում են նաև Տրդատն ու Գրիգորը, բայց հրաժարվում են և իրենց փոխանակ Արիստակէսին են ուղարկում, գուցէ ընկերակցութեամբ Տիբիկէս եպիսկոպոսին։ 325 թուի վերջերը վերադառնում է Արիստակէսը՝ բերելով իր հետ Նիկիական հաւատքն (հանգանակը) ու կանոնները և նկարագրում է իր հօրն ու թագաւորին։ Այդ կանոնների վերայ մի քանի յաւելուածներ է անում Լուսաւորիչը, ինչպէս և հանգանակի վերայ «խոկ մեք փառաւորեսցուք», որ մեր եկեղեցիներում տարած է մինչև յայժմ։

Այս դէպքից յետոյ պատմութիւնը խափա լռում է Գրիգորի գործունէութեան մասին, միայն ընդհանուր խօսքերով նկարագրում է նրա միայնակեցական կեանքը «թաղեալ ի սէրն Քրիստոսի»։ Լուսաւորիչը Հայաստանի այլևայլ գաւառներում ունէր ճգնութեան վայրեր, բայց կեանքի վերջին օրերում նրա միայնութեան սիրելի վայրը Մեծ լեռան Մանեայ այրն էր, ուր և հաւանօրէն վախճանում է 326 կամ 327 թուին։ Հովիւներն նրան թաղում են առանց խմանալու թէ ով է։ Մի քանի տարուց մարմինը բերվում է և թաղվում Դարանաղեաց գաւառի Թորդան աւանում։

326 թուից սկսած Արիստակէսը մինակ է սկսում հայ եկեղեցին կառավարել՝ հետևելով հօր ընթացքին ու գործունէութեան. բայց իրեն ճգնաւոր աւելի ևս խստապահանջ էր հաւատացեալների հանդէպ, որ Ագաթանգեղոսն էլ շեշտում է։ Նա յանդիմանում էր հեթանոսասէր նախարարներին, որոնք չհայհոյելով Տրդատի սատանին ու Լուսաւորչի բարեպաշտութեանն, անկարող էին միանգամից կերպարանափոխուել և իրենց միաբը, զգայմունքն ու կամքը նոր կրօնի պահանջների համեմատ ձևակերպել։ Արիստակէսի համարձակ ու խստապահանջ գործունէութիւնը թշնամութիւն է առաջ բերում. հայ հեթա-

նոսաբարոյ իշխաններից մեկը՝ Ծոփաց Արքելայոս իշխանը, չկարողանալով տանել նրա կշտամբանքներին՝ առաջին անգամ ձեռք է բարձրացնում նոր կրօնի քարոզչի դէմ և սպանում նրան (329 թուականին)։ Նահատակ հայրապետի մարմինը թաղվում է Եկեղեաց գաւառի Թիլատեանում, որ Լուսաւորչի սեպհական կալուածն էր։ Այսպիսի վախճան է ունենում նաև մեր լուսաւորութեան միւս գործիչը—մեծազօր Տըրդատ։ Ասացինք արդէն՝ որ նա էլ իւր կեանքի վերջերում առաւել հետամուտ է լինում կրօնաւորական կեանքի, և այս հակումն անշուշտ նրա մէջ առաւել զօրանում է, երբ տեսնում է իւր ժամանակի հայ մեծամեծների ոչ-քրիստոնէական կեանքը։ Թողնում է նա իւր թագն ու արքունիքը և ձգտում է «կրօնաւորական վարուք յառաջադէմ լինել» առանձնանալով Դարանաղեաց գաւառում Լուսաւորչի ճգնարանում։ Նոր կրօնի քշնամի իշխանները նրան հանգստութիւն չեն տալիս. ապրէլն միանգամ սրսի ժամանակ վիրաւորել էին նրան, այժմ էլ սեպհականի ձեռքով թունաւորում են (329 թ.)։

Գ. ԳԼՈՒԽ

ՎՐԹԱՆԷՍ ԵՒ ԻՒՐ ԺԱՄԱՆԱԿԸ

1. Տրդատի որդի Խոսրով Կոտակի թագաւորութեան առաջին տարին (329—339) Արիստակէսին յաջորդից իւր հօեց կղերայր Վրթանէսը, որը նախնարար ամուսնացած էր և երկու զաւակի տէր, իսկ կնոջ մահուանից յետոյ՝ երէց էր դարձած։

Հայ հեթանոսութիւնն ու քրմութիւնը թէև ընկճուած էր ըստ երևութին Լուսաւորչի ու Տրդատի ջանքերով, բայց ոչ բոլորովին. հին կրօնին սերտ կապուած ժողովուրդ ու քրմութիւն կար տակաւին, որոնք և Տրդատի մահուանից յետոյ փորձում են՝ այն էլ Խոսրովի կրնոջ ակնարկութեամբ, սպանել հայոց քահանայապետ Վրթանէսին, Աշտիշատի սրբութիւններն աւերել և հին կրօնը վերականգնել։ «Աշխարհակեր» ու «աշխարհաւեր» քրմերի գաւազրութիւնը Վրթանէսի կեանքի դէմ անաջող է անցնում. սպանելու ևկած հեթանոս ամբոխը ինքն էլ Վրթանէսի քարոզութեամբ նոր կրօնին է աշակերտում, և քրիստոնէական հոգեցին ամբանում։ Թէ որչափ բիրտ էին այս ժամանակուայ բարքերը, այդ ցոյց է տալիս այն հղերյրասպան կռիւը,

որ տեղի ունեցաւ Մանաւազեանց և Որդունեաց տոհմերի մէջ և որը պատճառ դարձաւ այս երկու տոհմերի իսպառ ոչնչացման։ Իրար անցան Վրթանէս հայրապետի ու Խոսրով թագաւորի ջանքերն այդ տոհմերը հաշտեցնելու. նրանք անարգեցին Աղբիանոս եպիսկոպոսին, որ բարձր իշխանութեան կողմից եկել էր սէր ու խաղաղութիւն քարոզելու. անարգեցին նոյն իսկ թագաւորին ու հայրապետին, և այս վերջին պարագան պատճառ դարձաւ, որ Խոսրովի կողմից ուղարկուած վաչէ (Վարդան) սպարապետը երկու տոհմն էլ բնաջինջ վերցրեց։ Այս տոհմերի կալուածներն եկեղեցական դարձան. Մանաւազեանցը արքունեաց Աղբիանոս եպիսկոպոսին, իսկ Որդունեանցը—Բասէնի եպիսկոպոսին։

Այս նեղքին խռովութիւնների դադարումից յետոյ մեր երկիրը բաւական ժամանակ խաղաղութիւն վայելեց. և ինչպէս Խոսրով թագաւորը հետամուտ եղաւ երկիրը բարեզարդելու, այնպէս նաև Վրթանէս հայրապետը՝ եկեղեցին բարեկարգելու և լուսաւորելու. Ասանդվում է, թէ և ոչ ճշդութեամբ, թէ նա թղթակցել է Երուսաղեմի Մակարիոս եպիսկոպոսի հետ (314—334) և նրանից եկեղեցու խորհուրդների ու կարգութեան համար ութ կանոն առացել, թէ Մակարը դրուշացրել է նրան նաև Բագրեւանդի ու Բասէնի Տուրքի եպիսկոպոսից, որ Արիանոսից կողմն է եղել անցած, և իրան արքեպիսկոպոսի համապատիւ է համարել։ *)

Հաւանօրէն այս խաղաղութեան ժամանակ կատարուեցաւ նաև Լուսաւորչի նշխարների փոխադրութիւնը Սիսուն լեռնից Թորդան, ուր և թաղուեցաւ (330 թուին)։ Վերջապէս այս ժամանակներում Վրթանէսը իւր Դրիդորիս որդուն Վրաց ու Աղուանից վրայ եպիսկոպոս կարգեց։ Բայց շուտով արտաքին խռովութիւններ յուզուեցան, որոնք մեր երկրի խաղաղ զարգացումը խանգարեցին։ 337 թուին լրացաւ Պարսից և Յունաց դաշնագրութեան քառասնամեակը (297 337) և Հայաստանը կրկին Պարսից տէրութեան ահեղանքի առարկայ դարձաւ։ Շապուհ Բ-ը շատ խէթ աչքով էր նայում, որ դրացի Հայերը քրիստոնէութեան պատճառով Յունաց են յարած, և արդէն 337 թուականից շատ առաջ իւր հրեայ կնոջ դրդմամբ նա հալածանք էր յարուցել իւր տէրութեան քրիստոնեաների դէմ, որոնցից շատերը չարչար կերպով նահատակուեցան (Շմաւոն և ուրիշները)։ Այդ հալածանքը արձագանգ գտաւ նաև Հայաստանում. ինչպէս տեսանք, Տրդատը թուլատրուեցաւ. Վրթանէսի կեանքի դէմ դաւադրութիւն եղաւ, Գրիգորիսը նահատակուեցաւ, և ուրիշ շատերը, որոնց մասին յիշատակութիւն

*) Այս թղթակցութիւնը, որ իւր մէջ ամփոփում է վերոյիշեալ տեղեկութիւնները, վաւերական չի ընդունվում։

է լինում պատմութեան մէջ։ Վերջապէս Պարսիկները Կոստանդիանոսի մահուանից յետոյ (337 թուին) պատրաստութիւն են տեսնում նաև յունաց տէրութեան վերայ յարձակուելու, միւս կողմից էլ զբաղում են Մազքութներին արշաւելու Հայոց երկիրը, որոնց ձեռքի տակ մի ամբողջ տարի մեր երկիրն աւերուեցաւ, մինչև որ Վաչէ զօրավարի քաջութեամբ հալածուեցան բոլորովին։ Պարսիկների դէմ Խոսրովից ապստամբումն նաև Բզնունեաց ու Աղձնեաց հայ իշխանները, բայց Վաչէ զօրավարի սուրը նրանց էլ կոտորում է։ Վերջապէս իրենք պարսիկներն ահագին բանակով արշաւում են Հայոց վրայ։ Վաչէն սկզբում յաջողութեամբ է կռւում նրանց հետ, բայց 338 թուերին պատերազմում նա ընկնում է, որ և մեծ վիշտ է պատճառում բովանդակ հայութեան։ Ծերունի Վրթանէս հայրապետը մխիթարում է ժողովրդին, մխիթարում է թագաւորին ու հայ զօրքին, որոնք խորապէս վշտացած էին հայրենասէր Վաչէի մահուան վրայ և յորդորում է ամէնքին նրանց նմանել. և Վաչէի ու ընկերների յիշատակը միշտ անմոռաց պահելու համար՝ պատուիրում է նրանց անունը յիշատակել պատարագի ժամանակ և ծնունդ։ Այս շրջութիւններից յետոյ վախճանում է Խոսրովը (339 թ. սկիզբը) և 340 թուերին էլ՝ Վրթանէս հայրապետը՝ յունաց օգնութեամբ Տիրանին թագաւորեցնելուց յետոյ։ Եկեղեցական դասն ու հայ ժողովուրդը մեծ հանդէսով ու պատմութեամբ թաղում են իրենց սիրելի հայրապետին Թորգան գիւղում ս. Գրիգորի մօտ։

2. Վրթանէսը երկու որդի ունէր, որոնք իրրև բարձրաստիճան մարդու զաւակներ, և միանգամայն հայոց արքունի տան մօտ ազգական՝ թագաւորի արքունիքում մեծացան և կրօնական լաւ դաստիարակութիւն ստացան։ Սրանցից մէկը, որ իւր պապի անունով Գրիգորիս էր կոչւում, մանուկ հասակից կրօնասիրութեան նուիրուեցաւ։ Գրիգորիսը ինչպէս Հայոց, այնպէս նաև միաժամանակ քարոզուեցաւ Աղուանից ու Վրաց Լուսաւորչի ձեռքով։ Աղուանից Ուռնայր թագաւորը քրիստոնեայ դարձաւ և Լուսաւորիչը Աղուանից ու Վրաց եպիսկոպոս նշանակեց մի յոյն եկեղեցական։ Այս առաջին եպիսկոպոսի մահուանից յետոյ՝ Աղուանից և Վրաց եպիսկոպոս կարգուեցաւ Վրթանէսի որդին Գրիգորիսը, որ թէև 15 տարեկան էր կամ փոքր ինչ աւելի, բայց լիովին հմուտ էր եկեղեցական գիտութեան։ Նա իւր հառանդուն գործունէութեամբ, խստական վարքով ու պահեցողութեամբ մեծ ազդեցութիւն ունեցաւ նորադարձ Աղուան ժողովրդի վրայ. շինեց ու նուիրեց եկեղեցիներ՝ յորդորելով ամէնքին զօրանալ իրենց նոր հաւատի մէջ։ Բարոզութեան հետևանքից մղուած՝ նա գնաց Աղուանից սահմանակից Մազքութներին ևս քարոզելու։ Բայց այս բարբարոսները համարելով՝ թէ Գրիգորիսն իրենց մօտ է եկել հայոց թա-

գաւորի կողմից՝ համոզելու որ Հայոց եկեղեցը չարշաւեն, որոշեցին նրան սպանել և իրենց սովորութեան համեմատ Հայոց եկեղեցն ապստամբել։ Նրան ձիու պոչից կապեցին և վանեան դաշտում քաշքշարշ սպանեցին (337 թ.)։ Նրա մարմինը թաղուած է Ամարասի վանքում։

3. Վրթանէս հայրապետի երկրորդ որդին էր Յուսիկը, որ նոյնպէս կրթուեցաւ Հայոց արքունիքում և որի նկատմամբ առաւել քննամբ տարաւ արքայորդի Տիրանը և ապա բռնադատութեամբ իրեն փեսայացրեց։ Բայց Յուսիկի ընտանեկան կեանքը լի էր տհաճութիւններով, և այս առթիւ Տիրանը մեծապէս մեղադրում էր Յուսիկին։ Երբ մանկամարդ կինը վախճանեցաւ, այնուհետև Յուսիկը առաւել ևս հոգևոր ու ներքնձնական կեանքի նուիրուեցաւ, որին ի բնէ արդէն հակամէտ էր։

Վրթանէսի մահուանից յետոյ Տիրան թագաւորը հայ նախարարների հաճութեամբ իւր փեսայ Յուսիկին կաթուղիկոս ընտրից (340 թ.) երբ Լուսաւորչի տան շառաւիղ և նշանաւոր նախարարների ուղեկցութեամբ նրան Կեսարիա ուղարկից եպիսկոպոսական ձեռնադրութիւն առանալու։ Երբ Յուսիկը Կեսարիայից վերադարձաւ, ընդ առաջ ելաւ Տիրան թագաւորը և մեծ հանդէսով դարձան կաթուղիկէ եկեղեցին։ Երիտասարդ կաթուղիկոսը օժտուած էր մարմնական ու բարոյական բարեմասնութիւններով. նա առոյգ էր, զեղեցկադէմ, բարձրահասակ, ինչպէս Պարթև Լուսաւորչի բոլոր սերունդը, և միանգամայն «հոգւով սուրբ ու լուսաւոր, աշխարհային կեանքով ընաւ չզբաղուած։ Նա չդիտէր ամենևին երեսպաշտութիւն անել և պատրաստ էր ճշմարտութեան համար մինչև ի մահ մարտնչել. թագաւորի սէրն ու պատուալիքը նրա համար ոչինչ էր (Փաւստ)»։ Այսպիսի ոգու տէր անձն կարող չէր ամենևին Տիրանի ու հայ մեծամեծների հետ համերաշխութեան մէջ լինել, որոնք հեթանոս գաղափարներով ու կեանքով էին ապրում՝ անուշադիր քնաւ քրիստոնէական բարոյական սկզբունքներին։ Ցափշտակութիւն, արիւնահեղութիւն, պոռնկութիւն, պղծութիւն և այլն սովորական երևոյթներ էին հայ կեանքի մէջ, և մաքրակենցաղ Յուսիկը ամենքին ատ հասարակ յանդիմանում, դատապարտում ու բանադրում էր. և այդ բնականաբար չէր կարող հաճելի լինել։ Երբ 345 թուերին մի տօնական օր Տիրանն իւր մեծամեծների հետ Բնարիկ գիւղի եկեղեցին էր կամենում մտնել, նրա մուտքը արգելից Յուսիկը գոչելով «արժանի չես, ինչու ես ներս մըտնում»։ Մի այսպիսի անպատուութիւն չկարողացաւ տանել հայոց թագաւորը և անմիջապէս հրամայից չարաչար ծեծել Յուսիկին։ Եկեղեցու պաշտօնեաները նրան մերձ իսկ Թորգան տարին, ուր և վախ-

ձանկացաւ ու թագաւեցաւ (345 թ.)։

4. Յաւելեալ մանուանկից յիշոյ Տիրան թագաւորն ու մեծամեծ-նելը խորհուրդ են անում նոր կաթուղիկոսի ընտրութեան համար։ Բայց, ասում է Փաւստոսը, «նրանք հոգ տարին տվիւր ընտրելու ոչ թէ ճշմարտութեան, այլ իրենց գործին ընկեր գտնելու համար. նրանք մի այնպիսի մարդ էին կամենում, որ իրենց կամքի համեմատ ընթանայ»։ Յաւելեալ բառած դէրքը դրդում է հայ թագաւորին ու մեծամեծներին ընտրել մի այնպիսի անձն, որ համերաշխ լինէր հայոց թագաւորական իշխանութեան հետ և աւելի հնազանդող քան իշխող. բայց միևնոյնժամայն բարձր բարոյական արժանիքներով, ինչպէս որ վայել էր մի հայրապետի։ Այս իսկ նպատակով ժողովը ցանկանում է Լուսաւորչի տնից ընտրել նոր առաջնորդ. բայց այդ տոհմի ներկայացուցիչներն իրրև անարժան անձնաւորութիւններ մերժուեցան։ Յաւելեալ երկու որդիքը՝ Պապն ու Աթանագինէսը՝ մեծանալով Հայոց աբքունիքում գէթ ու շուայտ կեանք էին անցընում և ընտրել էին գինուորական կեանք. նորա ամուսնացել էին Տիրան թագաւորի երկու քոյրերի հետ, և թէև բռնաբար սարկաւագ դարձան, բայց չարունակեցին իրանց նախկին կեանքը։ Միշտ հարբած, միշտ անառակ ու լկտի՝ նրանք ի վերջոյ կաթուղիկոսութեան յարմար գտան ասրի Դանիէլ եպիսկոպոսին, որ Գրիգոր Լուսաւորչի ձեռնասունն էր և իւր կրօնաւորական կեանքով հռչակուած։ Սա աշակերտել էր Լուսաւորչին ու նրանից եպիսկոպոս ձեռնադրուել (301 թուերին)։ Իրրև բրիստոնէութեան առաքեալ՝ նա գործել էր յաջողութեամբ Պարսկաստանում Շապուհի օրով և ապա Լուսաւորչից կարգուել էր ոչ միայն գաւառի, այլ և կաթուղիկոսական իշխանութեան անմիջապէս ենթակայ բոլոր գաւառների եպիսկոպոսների տեսուչ։ Վարում էր նա խիստ ճգնաւորական կեանք Հացեաց Դրախտ կոչուած տեղում, բայց և երբեմն երբեմն այցելում էր իրեն խնամքին յանձնուած եպիսկոպոսներին։ Ահա մի այսպիսի ճգնաւոր անձն կաթուղիկոս ընտրուեցաւ և նշանաւոր նախարարներ իրրև հրաւիրակներ ուղարկուեցան։ Դանիէլը յանձն առաւ կաթուղիկոսութիւնը՝ բայց միայն կշտամբելու, յանդիմանելու համար։ Նա Տիրանին ներկայացաւ թէ չէ, իսկոյն կծու խօսքերով սկսաւ յանդիմանել ու նզովել։ Ծիրուկու խօսքերը միծապէս զայրացրին Տիրանին. նա թագաւորի հրամանով խեղդամահ եղաւ։

5. Կրկին յուզուեցաւ կաթուղիկոսի ընտրութեան խնդիրը։ Ամէնքի ցանկութիւնն էր Լուսաւորչի տոհմից ընտրել կաթողիկոս, բայց այդ տնից կար Աթանագինէսի միակ որդին Ներսէսը, որ դեռ մանուկ էր և կեսաբիայումն էր գտնւում։ Ժողովն ընտրից Փաւէն երէցին Տա-

րօն գաւառից կամ այն պատճառով, որ սա յայտնի էր իւր արքունեութեամբ և կամ թերևս Լուսաւորչի տոհմի հետ ազգակցութիւն ունէր։ Ըստ ասվորութեան՝ անուանի նախարարների ուղեկցութեամբ նա կեսարիա ուղարկուեցաւ եպիսկոպոսական ձեռնադրութիւն առանալու։ Փաւէնն արդարև արքունից մարդ էր, բայց իւր նախորդների պէս չէր համարձակում մէկին խրատել կամ յանդիմանել. և ոչ այնչափ մին՝ այլ և թագաւորի կամքին լիով հնազանդում էր։ Փաւէնի տպաւորութիւնը նոյն իսկ իւր ընտանիքի մէջ երևեցաւ. պատմութիւնը ներկայացնում է մեզ նրա որդու Յովհան եպիսկոպոսի տգեղ գործերը, որից գաղափար կարող ենք կազմել նաև առհասարակ այս ժամանակի կեանքի մասին։

Փաւէնը կարճատև կաթուղիկոսութիւն արաւ (345—346). Նրան յաջորդից ազգի ընտրութեամբ Մանազկերտի Աղբիանոս եպիսկոպոսի տոհմից Շահակը (346—351), որ իւր ձեռնադրութիւնը նոյնպէս կեսարիայում ստացաւ։ Սա ևս իւր իշխանութիւնը վարում էր Փաւէնի նման։

Շահակի կաթուղիկոսութիւնն ընկնում է Տիրանի «խօլ և անմիտ» թագաւորութեան վերջին տարիներին, երբ ներքին ու արտաքին խռովութիւնների պատճառով մեր երկիրը տակնուվրայ եղաւ, և քաղաքական իշխանութիւնն էլ վտանգուեցաւ։ Հայոց կենդրոնական իշխանութիւնը զօրացնելու համար կամ մի այլ պատճառով՝ Տիրանի հրամանով երկու նշանաւոր նախարարական տոհմեր՝ Աւծրունիք և Ռշտունիք, կոտորուեցան։ Այս անխնայ կոտորածը միծապէս զայրացրից կլօնասէր Մամիկոնեաններին, որոնք թողնելով արքայորդու դաստիարակութեան պաշտօնը և սպարապետութիւնը՝ Տայոց երկիրը քաշուեցան ու գործերից հեռացան։ Միւս կողմից էլ պարսիկները՝ օգուտ քաղելով այն հանգամանքից, որ Կոստանդ կայսրն արևմտեան գործերով է զբաղուած՝ աշխատեցան ձեռք ձգել հայոց թագաւորին ու հայ երկրին տերել, ինչպէս որ իրաւէս էլ կատարեցին։ Տիրանն ու ամբողջ հայ արքայական ընտանիքը գերի տարուեցաւ Պարսկաստան ու երկրին աւերուեցաւ (350 թ.)։ Այս անակնկալ դէպքը գգաստացրից հայ իշխաններին, որոնք երկրի ապահովութեան միակ միջոց համարեցին յունաց օգնութեան գիմել և Կոստանդ կայսեր մօտ պատգամաւոր ուղարկեցին Արշաւիր Կամսարականին և Անդովկ Սիւնի իշխանին։ Պատգամաւորութիւնը յաջող ելք ունեցաւ։ Յունաց միջամտութեամբ՝ կուրացած Տիրանը գերութիւնից ազատուեցաւ և նրա երկրորդ որդին Արշակը թագաւոր գարձաւ (350—1 թ.)։

Գ. ԳԼՈՒԽ.

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ԵՒ ԻՒՐ ԳՈՐԾԵՐԸ.

1. Յունաց և Պարսից հաճութեամբ Արշակը 350 թուին թագաւոր գրծաւ և մեր երկրի մէջ խաղաղութիւնը վերահաստատուեցաւ։ Արհաւիրքներից փախած հայերը վերադարձան. Մամիկոնեանք կրկին հաշտուեցան արքունիքի հետ և գրծի գլուխ անցան. Գնունեաց յանձնուեցաւ երկրի հազարապետութիւնը և միւս նախարարներին՝ այլ և այլ գործակալութիւն։ Հայրենիք էր վերադարձած նոյն այս ժամանակ և Աթանագինէի որդին Ներսէս իշխանը, որին իբրև իւր մօտ ազգականին յանձնեց Արշակը սենեկապետութիւնն ու քարտուղարութիւնը (=հաւատարիմ) իբրև կրթուած անձնաւորութեան։

Փաւստոս պատմիչի ասելով «նորոգեցաւ, զուարթացաւ սէրութիւն թագաւորութեան Հայոցն երկրին որպէս զառաջինն»։

Յունաց և Հայոց մանրմունիւն ուսելի ամրապնդելու համար հարկ տեսնուեցաւ, որ Արշակը ամուսնանայ յոյն ազնուական աղջկայ հետ. և արդէն Կոստանդ կայսրը Արշակի համար պատրաստել էր իւր հանդուցեալ եղբօր նշանուածին՝ Ողոմպիադա օրիորդին։ Արդ՝ այս իշխանաղն հարանացուին պատուով Հայոստան բերելու համար 350 կամ 351 թուին Բիւզանդիոն ուղարկուեցաւ սենեկապետ Ներսէսը, որ և իւր վրայ դրուած պարտականութիւնը կատարեց և յունական Ողոմպիադան Հայոց Արշակ թագաւորի կին դրծաւ։ Կոստանդը ի նշան իւր համակրութեան Ողոմպիադայի հետ Հայոստան ուղարկեց նաև Արշակի եղբօրորդուց՝ Տիրիթին ու Գնէլին, որոնք Տիրանի թագաւորութեան օրերից իբրև պատանդ մնում էին Բիւզանդիոնի մէջ։

Քաղաքական այս վերանորոգութեան զուգընթաց կատարուեցաւ և հայ եկեղեցու վերանորոգութիւնը։ Շահակի մահուանից յետոյ (351 թ.) բոլոր մնծամեծները խորհրդի հաւաքուեցան Արշակի մօտ նոր կաթողիկոս ընտրելու համար։ Ժողովի մէջ ներքին քաղաքական շահերի տեսակէտով եղան թերևս Աղբիանոսեան տոհմի թեկնածութիւնը պաշտպանողներ, բայց Մամիկոնեանց ազդեցութեամբ այն կարծիքը յաղթեց, թէ Լուսաւորչէ տոհմից պէտք է ընտրել առաջնորդ, որը միայն կարող է բարոյական վերանորոգութիւն մտցնել հայ ժողովրդի մէջ և եկեղեցին բարեկարգել։

Լուսաւորչի տոհմից այդ ժամանակ յայտնի էր Աթանագինէի որդին Ներսէս իշխանը, որ փեսայացել էր Մամիկոնեանց և Արշակի սենեկապետ էր կարգուած։ Փաւստոս պատմիչը յատկանշութեամբ

նկարագրում է նրա բնական ու բարոյական առաւելութիւնները, ինչպէս և ընտրութեան մանրամասնութիւնները։ Ընտրութեան ժամանակ Ներսէսը իբրև սենեկապետ՝ ոսկեպատեան ու մարգարտազարդ կամարով արքունի սուրը ձեռքին կանգնած էր թագաւորի հետևը։ Երբ ժողովականները միաբերան աղաղակեցին, թէ Ներսէսը պէտք է լինի իրենց հայրապետ, նա բացէ ի բաց հրաժարուեցաւ՝ իբր անձը անարժան համարելով։ Բայց զօրքը շարունակում էր պնդել։ Արշակը տեսնելով ժողովրդի ցանկութիւնը և Ներսէսի յամառելը՝ քաշից առաւ նրա ձեռից արքունի սուրը, հրամայից զինուորական տարազը վրայից հանել և կղերիկոսական զգեստ հագցնել. կոչել տուեց Փաւստոս եպիսկոպոսին և պատուիրից Ներսէսին սարկաւագ ձեռնադրել. և այսպէս Ներսէսը ակամայ եկեղեցական կոչումն առացաւ։ Հայ եպիսկոպոսների ժողովն ևս նրան արժանաւոր գտաւ հայոց հայրապետութեան, և այնուհետև նշանաւոր նախարարների ուղեկցութեամբ նա կեսարիա գնաց եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանալու։ Այս անցքերը տեղի ունեցան 352 թուին։

Իբրև Լուսաւորչի շառաւիղ՝ Ներսէսը բնականաբար պէտք է հետևէր իւր տոհմի ուղղութեան։ Մինչդեռ Աղբիանոսեան տոհմի կաթուղիկոսները խոյս էին տալիս յանդիմանելուց՝ երկինչելով իրենց դէմ հակառակութիւն պրպռել, Ներսէսը միշտ խրատում, միշտ կշտամբում էր վատթար գործեր. «չափազանց յամառներին՝ անուսարսափով էր նա համարձակում, իսկ ունկնդիրներին քարոզութեամբ էր սրտում»։

Նորընտիր հայրապետն իւր իշխանութեան երկրորդ տարին՝ 354 թ. Աշտիշատում ժողով գումարեց, նախ՝ բարեգործութեան համար կանոններ որոշելու, և երկրորդ՝ հաւատոյ հանգանակ սահմանելու։*) Ժողովն ընդհանուր բարեկարգութեան համար նախ առաջնորդ ընդունայ առաքելական կչուած կանոնները և տեղական պէտքերի համար սահմանեց.

1. Յարմարաւոր տեղերում ալքատանոցներ ու որբանոցներ շինել։

2. Գիւղերում ու աւաններում օտարանոցներ ու հիւրանոցներ՝ որ պանդուխտներն ու օտարականները բոլորովին չմնան, այլ խնամուին։

---

*) Այսպէս պէտք է հասկանալ Փաւստոսի հետևեալ տողերը. «Կատարել անդ զպշխարհական կարգս եկեղեցւոյ և զժողովն հաւատոյն (=հանգանակ) հաւատալութեան»։ Մամբրէ վերծանողի ի յարութիւնն Դաւթաբձակ ճառի մէջ հետևալն ինք կարդում. «Զայս գաւանութիւն ընկալան Հայք ի մեծէն Գրիգորէ և ի սրբոյն Ռոտակեաց և յերանելւոյն Ներսիսէ»։ Այս խօսքերով Մամբրէն էլ երևի ակնարկում է Աշտիշատի ժողովը, ուր Ներսէս նիկիական հանգանակը հաստատեց։

3. Հաստատել հիւանդանոցներ և ուրկանոցներ։ Ուրուկները սաստիկ հալածվում էին գիւղերից ու քաղաքներից, որ իրանց հիւանդութիւնն ուրիշներին չվոխանցեն. այդ թշուառներն անխնամ մեռնում էին. ահա սրանց վիճակը թեթևացնելու հոգսը տարաւ մեծն Ներսէս։ Այս բարեգործական հաստատութիւնները պահպանելու համար՝ ժողովը տուրքեր սահմանեց անգաստանի բերքերից, կթանոցներից և այլն. այդ հիմնարկութիւնների խնամակալութիւնը յանձնուեցաւ Մաղ սարկաւագապետին։

4. Արգելել հեթանոսական սովորութեամբ մեռելներ թաղել և անյուսութեամբ սրտով, հրես տալ, հանդերձ պատառել. այլ հաւատալ հանգերձեալ կեանքին, յարութեան։

5. Ամուսնական կեանքի մէջ հաւատարիմ լինել ու միմեանց չդաւաճանել. փախչել ազգակցական ամուսնութիւնից, մանաւանդ նուի հետ ամուսնանալուց։—Հայաստանում՝ ինչպէս և Պարսկաստանում, շատ տարածած էր մերձաւոր ամուսնութիւնը՝ մինչև իսկ քրոջ և դստեր մէջ (Թուղթ Միհրներսհին). անկրը կամ տապրը կարող էր իւր այրեցած նուի (հարս) հետ ամուսնանալ, ինչպէս էր հնումը մէջ։ Սրանից այս աստիճանի ամուսնութիւնները արգիլից Աշտիշատի ժողովը։

6. Հեռու մնալ ընդհանրապէս արբեցութիւնից, պոռնկութիւնից, սպանութիւնից և այլ այսպիսի չար գործերից, որոնք շատ տարածուած էին։

7. Գթասրտութեամբ վարուել ծառաների (ստրուկների) հետ և տիրացից ծանր հարկերով ժողովրդին չհեղձել։—Այս կանոնը հարկաւ վերաբերում էր Թագաւորին ու հայ նախարարներին, որոնք հրկրի ու ծառաների տէր էին։

8. Հաստատել վանքեր ու պարապատում կրօնականներ։

9. Հաստատել վանքերում դպրոցներ յունարէն ու ասորերէն ուսուցանելու համար, որովհետև հրկեղեցական պաշտամունքը այդ լեզուներով էր կատարուում։

10. Կարգաւորել հայոց հրկեղեցին ընդհանուր քրիստոնէական հրկեղեցու կարգերով. ժամառաջութեան թիւն ութ լցնել, ածները հանդիսապէս կատարել. բազմացնել հրկեղեցականների թիւը ու հոգևոր պաշտօնների պատիւը բարձրացնել։ Այսպիսի կանոններով Աշտիշատի ժողովն աշխատեց հայ ժողովրդին բարոյապէս բարձրացնել և քրիստոնէական գաղափարները նրա մէջ մարմնացնել։

Ժողովի զբաղման մեծ նիւթը՝ հանգանակի խնդիրն էր։ Նիկիոյ ա. սրեզերական ժողովը թէ և հաւատոյ հանգանակ կազմեց, որ նիկիական է կոչւում և որը մեր հրկեղեցին էլ ընդունեց Արիստակէսի ձեռքով, բայց այդ հանգանակը Կոստանդնուպոլսի և մանաւանդ նրա

յաջորդ արիոսական Կոստանդ կայսեր ժամանակ շատ մեծ հակառակութիւններ կրեց։ Խնդիրը հանգանակի Օմոուսիոս (համագոյակից, միասնական, և միասին էական, նոյն բնութիւն) բառի վրայ էր, որի փոխարէն Արիոսի կուսակիցները աշխատում էին Օմիուսիոս, այսինքն՝ նման-էական բառը դնել, այն մտքով՝ թէ Աստուծոյ որդին հօրը նման է և ոչ էակից։ Այս երկու բառերի կամ դաղափարների համար, որ պատմաբանական մեծ նշանակութիւն ունին, երկար ժամանակ (341—361 թուականը) յունական հրկեղեցու մէջ սաստիկ վէճեր ու խռովութիւններ տեղի ունեցան։ Հայ հրկեղեցին ևս՝ որ ունէր բաւական թուով յոյն հրկեղեցականներ, ինչպէս երևում է, նոյնպէս յուզուել է այդ դաւանական վէճերով. նրա մէջ էլ հդել են արիոսամիտ, հականիկէական հրկեղեցականներ. արդէն յիշեցինք Բասէնի Տուրքի և սիսկոսցոսին։ Փոքր Հայքի հայ հրկեղեցականների մէջ էլ կային արիոսականներ, որոնք կարող էին Մեծ Հայքի իրանց ազդակից հոգևորականների վրայ ազդեցութիւն ունենալ։ Այդ՝ Աշտիշատի 354 թուի ժողովը զբաղուել է այս դաւանական խնդրով և իրրև ընդհանուր դաւանութիւն նիկիական հանգանակն է ընդունել։

Աշտիշատի ժողովի վերոյիշեալ որոշմունքները մեծն Ներսէս ամենայն հաւանդով աշխատեց իրականացնել հայ երկրի մէջ, իւր խոհ անձը զոհելով քրիստոնէական առաքինութիւնների մարմնացում։ Մեր երկիրն էլ այդ ժամանակ քաղաքական բարեյաջող պայմանների մէջ էր։ Յիշեցինք արդէն Յունաց Կոստանդ կայսեր մահը մեծ Արշակ. Պարսից Թագաւորն ևս Յունաց սիրալիր յարաբերութեան հանդէպ ինքն էլ աշխատեց Արշակի սիրտը գրաւել և Պարսկաստան կանչելով մեծամեծ պատիւներ տուեց։ Մեր երկրի ներքին ու արտաքին խաղաղութիւնը տևեց մինչև 359 թուականը, երբ ներքին խռովութիւններ ծագեցան և պատճառ դարձան հոգևոր ու աշխարհական իշխանութեան զժտուելուն։

2. Ինչպէս ասացինք, 350 թուականին Հայաստան վերադարձան Արշակի եղբօրորդիքը՝ Տրդատն ու Գնէլը։ Այս վերջինը իւր բարեմասնութիւններով ամենքին սիրելի դարձաւ և փեսայացաւ նաև Սիւնեաց Անդովկ իշխանին՝ կին առնելով նրա գեղանի Փառանձէմ աղջկան։ Գնէլի փառքին նախանձողներից մէկն եղաւ Տրդատը, որ կարողացաւ քսութեամբ Արշակի մէջ կասկածներ առաջ բերել, որպէս թէ Գնէլ ուզում է Հայոց թագաւոր դառնալ. այդ կասկածների հետևանքն այն եղաւ, որ Արշակի հրամանով 359 թուին Գնէլը սպանուեցաւ։ Բայց բանաբկու Տրդատն ևս Արշակի բարկութիւնից ազատ չմնաց. նա էլ սպանուեցաւ։ Արշակը հրապուրուած Գնէլի կնոջ Փառանձէմի գեղեցկութիւնից՝ նրան արքունիք առաւ և աշխատեց պէս-

պէս հնարներով սիրտը գրաւել։ Հայ արքունիքի մէջ էլ մի նոր եղեռնագործութիւն կատարուեցաւ. Մրջունիկ երէցի ձեռքով Ողոմպիադան թունաւորուեցաւ։ Այս բոլոր չարագործութիւնների հանդէպ մեծը Ներսէս բնականաբար պէտք է լողոքէր և գժտուէր Արշակի հետ, ինչպէս իւրօք էլ եղաւ։ Նա հեռացաւ արքունական բանակից՝ գործերը թողնելով Աթոռ եպիսկոպոսին։

3. Այս ժամանակներում նա Հայաստանից ևս հեռացաւ։ Կոստանդ կայսրը արիոսական էր և իւր թագաւորութեան բոլոր ժամանակը (338—361) անցրեց՝ աշխատելով ուղղափառ եպիսկոպոսներին հալածել ու արիոսականութիւնը հաստատել։ Այս գործի մէջ նրա գլխաւոր խորհրդակիցն ու գործակիցն էին Ուռղակիոս և Վաղէս արիոսական եպիսկոպոսները, որոնք շատերին չարաչար հալածեցին ու աքսորեցին։ Կրօնական վէճերի պատճառով արևելքում նշանաւոր եկեղեցական ժողովներ գումարուեցան, որոնցից յատկապէս պէտք է յիշել Անկիւրիոյ ժողովը՝ 358 թուին և Սելևկիոյ ժողովը՝ 359 թուին։ Հաւատնօրէն այս ժողովներին մասնակցելու համար՝ մեծն Ներսէսը տեղապահ թողնելով Աթոռ եպիսկոպոսին՝ իւր սարկաւագների հետ գնաց Սելևկիա և այս վերջին քաղաքից էլ՝ կայսեր հրամանին համաձայն, միւս պատգամաւորների հետ Պօլիս եկաւ, ուր մասնաւոր ժողով գումարուեցաւ։ Արիոսականների ջանքով, որոնց մէջ խիստ վայրագ էր Վաղէս եպիսկոպոսը, բոլոր ուղղափառ եպիսկոպոսներն աքսորուեցան, ինչպէս և մեծն Ներսէսը։ Աքսորի մէջ նա մնաց երկու տարի, մինչև Յուլիանոսի թագաւորութեան սկիզբը (3 նոյեմբ. 361 թ.), որի հրամանով բոլոր աքսորուած եկեղեցականները իրենց թեմերը դարձան, որ ներքին կռիւներով քրիստոնէական եկեղեցու անկումն առաջ բերին, ինչոր Յուլիանոսը փափագում էր հեթանոսութիւնը վերականգնելու տենչանքով բռնուած։

4. Քանի որ Ներսէսը Հայաստանումն էր, իւր բարոյական հեղինակութեամբ ազդեցութիւն ունէր Արշակի վրայ և սա կամայ թէ ակամայ հնազանդում էր նրան, թէ և Հայր մարդպետի նման գրգռիչներ կային։ Բայց երբ Ներսէսը հեռացաւ և եկեղեցու կառավարութիւնը Աթոռ եպիսկոպոսի ձեռքն անցաւ, որ թէ իւր ծագումով և թէ այլ յատկութիւններով ազդեցութիւն կարող չէր ունենալ թագաւորի ու իշխանի վրայ, Արշակն աւելի ևս սկսաւ «Աստուծոյ պատուէրների համեմատ չապրել»։ Արշակի այս ժամանակուայ գործերից

*) Փաւստոսը երևի այս վաղէս եպիսկոպոսին վաղէս կայսեր հետ է շփոթում և Ներսէսի աքսորը վերջինիս վերագրում։ Այսպէս նաև Ներսէսի Պօլսի ժողովին մասնակցելն ամէն տուած է կարծելու, թէ 381 թուի երկրորդ ալեկեղեցական ժողովին է մասնակցել։

պէտք է յիշատակել Արշակաւանի հիմնարկութիւնը (360 թ.), որ մեծ զժգոհութիւնների պատճառ դարձաւ։ Թագաւորական հրամանով Արշակաւան ապաստանող ամէն մի գող, մարդասպան, կնաթող, այրթող, պանձահատ և այլն և այլն՝ ազատ էր օրէնքից ու պատասխանատուութիւնից։ Այս իսկ պատճառով Արշակաւանը շուտով մեծցաւ ու ընդարձակուեցաւ։ Արշակը իրեն համար այնտեղ ապարանք ևս շինեց, այլ և եկեղեցի և նա ստիպում էր Աթոռին, որ երթայ եկեղեցին օծէ. բայց նա հրաժարվում էր ասելով, թէ ինքը տեղապահ է և կարող չէ առանց իր հոգևոր հօր Ներսէսի հրամանին մի բան անել։ Այս քաղաքի շինութեան համար Աթոռը փորձից յանդիմանել Արշակին, բայց զրուեցաւ արքունական բանակից։ Արշակն երևի իւր այդ ձեռնարկութեան մէջ որոշ քաղաքականութեան էր հետևում։

361 թուի վերջերը Ներսէսը վերադարձաւ հայրենիք երկամեայ բացակայութիւնից յետոյ. բոլոր հայ ժողովուրդը խնդութեամբ նրան ընդունեց և թագաւորն իսկ նրան ընդառաջ գնաց։ Ներսէսի գալովը կրկին յուզուեցաւ Արշակաւանի խնդիրը և հայրապետը ժողովրդի արտունջը ի նկատի առնելով՝ շատ աշխատեց համոզել Արշակին, որ քաղաքը ցրուէ և իւր տուած հրամանը յետ առնէ. բայց ի զուր. թագաւորը ծիծաղում էր Ներսէսի խօսքերի վերայ. ծաղրում էր նրան։ Ներսէսը զայրացած՝ անիծեց թագաւորին, բանակից հեռացաւ և գնաց գաւառները շրջելու, ուր շատ տաճկներ չէր եղած։

Արշակի հրամանով կաթուղիկոս նշանակուեցաւ (362 թ.) Յուսակ (Ջունակ) անունով մէկը «արքայի տորուկներից տորուկը» և հրաման ուղարկուեցաւ բոլոր հայ եպիսկոպոսներին, որ գան Յուսակին*) կաթուղիկոս ձեռնադրին։ Միայն Աղձնեաց ու Կորդուաց եպիսկոպոսները համակերպեցան այդ հրամանին և Յուսիկին կաթուղիկոս ձեռնադրեցին, որը թէև ղզօն մարդ էր, բայց թագաւորի կատարած բոլոր գործերին իւր հաւանութիւնն էր տալիս։ Սա մասնակցեց 363 թուի աշնանը Անտիոքում գումարուած ժողովին, ուր Ակակեան (կէս արիոսական) եպիսկոպոսները Յովիանոս կայսեր ներկայութեամբ նիկիական հանգանակն ու համագոյակից (Օմոուսիոս) բառն ընդունեցին (Ծոկր. Գ, գլ. 25) և ժողովի արձանագրութիւնն էլ ստորագրեցին։ Ներսէսի հոգևոր բարձրութիւնից ազատ մնալով՝ Արշակը առաւել ևս անձնատուր եղաւ իշխանութիւնը զօրացնելու. սկսեց նա անվնաս կատրել նշանաւոր նախարարական տոհմեր և նրանց կալուածները յարքունիս գրաւել։

*) Կարծում ենք որ Յուսիկ անունը տառերի շփոթմամբ Ջունակ է գրձել։

Ե. ԳԼՈՒԽ.

ՊԱՊՆ ՈՒ ՆԵՐՍԷՍ.

1. Մինչդեռ մեր երկրի մէջ այսպիսի նեղբին դժուարթիւններ էին կատարվում, արտաքին քաղաքական մթնոլորտը հետզհետէ պըղտորվում էր և վտանգ էր սպառնում մեր աշխարհի անկախութեան. 358 թուականից պարսիկները բանագնացութեան մէջ էին յունաց հետ և առանց պատերազմի պահանջում էին իրենց յանձնել Հայաստանը և Միջագետքը իբրև իրենց երկրի երբեմնի մասեր: Յոյնները կարող չէին մի այսպիսի պայման ընդունել, և ահա Պարսիկները 359 թուերին յարձակուեցան յունաց տէրութեան վրայ: Արշակը երևի թէ ղգալով պարսից այժը և միւս կողմից էլ յունաց տկարութիւնը՝ Հայոց տէրութեան ապագան ապահովելու համար պարսից օգնութեան դնաց և մինչև իսկ յունաց զօրքի վրայ մի յաղթանակ էլ տարաւ: Բայց ապա կասկածելով պարսից բարեկամութեան վերայ և միւս կողմից էլ տեսնելով յունաց մեծ պատրաստութիւնը՝ Արշակը չմնաց պատերազմի դաշտում և իւր երկիրը դարձաւ: 360 թուերին Կոստանդ կայսրը անձամբ պատերազմի եկաւ և նրան կեսարիայում Արշակը ներկայացաւ՝ խօսք տալով միշտ հաւատարիմ մնալ: Պատերազմը պարսից և յունաց մէջ չդարձնակուեցաւ և երկու տարուց աւելի մեր երկիրը խաղաղութեան մէջ մնաց: Այդ ժամանակ Կոստանդը մեռաւ և կայսր դարձաւ Յուլիանոսը (3 նոյեմբ. 361—27 յունիս 363), որին աղջունելու համար Արշակ դեսպաններ ևս ուղարկեց: Յուլիանոսը 363 թուի մարտին ձեռնարկեց պարսկական ձախող արշաւանքին, որ ազատեր եղաւ ինչպէս իրեն, այսպէս և հայ երկրին համար: Տիզբոնի մօտ նա սպանուեցաւ և յունիսի 28-ին 363 թուին կայսր հռչակուեցաւ պատերազմի դաշտում Յովիանոսը, որը և պարսից հետ կնքեց մի ամօթալի դաշինք, որով ոչ միայն Անդր-Տիգրիսեան գաւառներից էր հրաժարվում, այլ և «ի Մէջաշխարհէն հայոց ձեռնթափ եմ ասում էր, թէ կարասցես յաղթել նոցա և արկանել ի ծառայութիւն՝ ես ի թիկունս ոչ եկից»: Պարսից և յունաց այս դաշնագրութիւնը ծանր տպաւորութիւն թողուց հայոց վրայ. Արշակը զգալով գալիք թշուառութիւնները հետամուտ եղաւ կրկին յունաց բարեկամութիւնը շահելու, նրանց օգնութիւնը ստանալ: Պէտք էր պատգամաւորութիւն ուղարկել և այդ գործին ամենայարմար անձը գտնել մեծն Ներսէսն էր: Արշակը սրտանց գտաւ նրան Տարօնի Աշխիշատում և աղաչանքներով

հրաւիրից նրան կրկին գործի գլուխ կանգնել և իբրև պատգամաւոր Բիւզանդիոն երթալ. Ջունակ կամ Յուսակ կաթուղիկոսը այս ժամանակ (364 թուերին) կամ արդէն ինքը հրաժարուած էր, և կամ Արշակի ձեռքով մերժուած, ինչպէս որ նրա միջոցով էլ հրաւիրուած էր: Ներսէս անսալով Արշակի աղաչանքին և ի նկատի առնելով հայ երկրի ծանր կացութիւնը՝ յանձն առաւ կրկին ազգի համար աշխատել: 364 թուի փետրուարին Յովհաննես կայսրը վախճանեցաւ, նա որ պարսից հետ այն ամօթալի դաշինքն էր կապել. նրանից յետոյ կայսր դարձաւ Վալէսը: Այս հանգամանքէն ահա օգտուելով՝ Ներսէս կաթուղիկոսը և 6 հայ նախարարներ Բիւզանդիոն գնացին խնդրելու յունաց պաշտպանութիւնը պարսից սպառնալիքների դէմ. բայց Վալէսն էլ իւր նախորդի քաղաքականութեան հետևից և լոկ խոստումներով, առանց իրական օգնութեան Հայաստան զրկեց հայ պատգամաւորներին: Ահա այս ժամանակներից (365 թ.) սկսուեցաւ անընդհատ պատերազմ պարսից ու հայոց մէջ, որ 4 տարի տևեց և պատճառ եղաւ մեր երկրի քայքայման: Քանի հայ նախարարները միացած էին իրանց թագաւորի հետ, պարսիկները չէին կարողանում մեզ ստանալ. բայց ահա քայքայման սկիզբն է դնում Մհերուժան Արծրունին և այս ապիրատի օրինակն ու ստացած պարգևները ուրիշներին ևս հրապուրում են: Վահան Մամիկոնեանն էլ Մհերուժանին արժանի ընկեր է գտնում և հետզհետէ հայոց տէրութեան մարզական իշխանները հեռանում են հայոց թագաւորից և անցնում Շապուհի կողմը: Աւելի ծանր եղաւ մեր երկրի դրութիւնը, երբ միջին նահանգների իշխաններն ևս հրաժարուեցան թշնամու հետ կռուելուց՝ բարւոք համարելով պատիւներ ստանալ իրենց ընկերների նման, քան թէ իրենց կեանքը կռուի մէջ մաշել: Ապարդիւն անցան և մեծն Ներսէսի յորդորները: Արշակի միակ հաւատարիմ անձեր մնացին Անդովկ Սիւնին և Վասակ Մամիկոնեան սպարապետը:

Լքուած իւր նախարարներից՝ Արշակը ակամայ յանձն առաւ իւր Վասակ սպարապետի հետ Պարսկաստան երթալ (366 թ.), ուր և նրանք ազգերական վախճան ունեցան: Փաւստոսը այնուհետև պատկերացնում է այն սոսկալի աղէտը, որ հաւատուրացներն ու պարսիկները հասցրին մեր երկրին: Կենդանութեան նշոյլը գարձեալ Մամիկոնեան տոհմից ծագեց: Վասակի որդին Մուշեղը 368 թ. կրկին վազէս կայսեր (364—379) օգնութեան դիմից՝ խնդրելով թագաւորեցնել Հայոց վրայ Արշակի որդուն Պապին, որ արհաւիրքների ժամանակ Բիւզանդիոն էր փախել. և նա այս անգամ կատարեց հայոց խնդիրը: Պապը յունական ու հայ զօրքով հայրենիք գարձաւ և երկատաւ ու յաջող պատերազմներից յետոյ բոլոր արտաքին ու ներ-

քին թշնամիներն ընկճից (370 թ.)։ Այսպէս փոքր ինչ շունչ առաւ մեր չարաւանջ հայրենիքը, որի բարեկարգութեան համար սկսան աշխատիլ թէ քաղաքական և թէ հոգևոր իշխանութիւնները։ Ներսէսը՝ որ պատերազմներին մասնակից էր և հայ զօրքին քաջալերիչ, կրկին նուիրվում է հայ եկեղեցու և հրկրի բարեշինութեան. նա վերանորոգում է այն բոլոր կարգերը, որ Աշտիշատի ժողովը էր սահմանել և որոնք պատերազմների ժամանակ խափանուել ու խանգարուել էին. նա արքունիքի համար ևս որոշում է առանձին բարեպաշտական կարգեր։ Սակայն թագաւորական ու հոգևոր իշխանութիւնների այս մերտերմական յարաբերութիւնը կարճօրեայ եղաւ։ Ներսէսն ու Պապը տարբեր բնաւորութեան, գաղափարների ու ձգտումների տէր մարդիկ էին. Ներսէսը ձգտում էր Պապին իր բարոյական հեղինակութեան ենթարկել, և իբր պատնած սկզբունքների համեմատ պետական գործերի մէջ մտնել, մինչդեռ հրիտասարդ թագաւորը ձգտում էր անկախ ու ինքնիշխան լինել, մի այնպիսի յարաբերութիւն ունենալ եկեղեցականութեան հետ, ինչ որ յունաց կայսրները ունէին, որոնք իրենց տեսակէտով եպիսկոպոսներ հալածում ու բարձրացնում էին։ Ներսէսը իբրև խստակրօն մարդ հակառակ էր աշխարհային կեանքի բոլոր հակումներին, այն ինչ հրիտասարդ թագաւորը կենցաղասէր էր, մանուկ հասակից ճոխ ու շռայլ կեանքի ընտելացած և եկեղեցականների նկատմամբ անփոյթ։ Մէկի համար որ և սպանութիւն ծանր յանցանք էր և պատապարտելի ոճիր, իսկ միւսի համար —քաղաքական շահերի տեսակէտով—ներելի գործողութիւն։ Ծանր էր հրիտասարդ թագաւորին՝ հայրապետի սպառնալիքներն ու յանդիմանութիւնները լսել, մինչև իսկ եկեղեցի մտնելու արգելք սահանել. բայց ի նկատի առնելով հայ ժողովրդի անչափ սէրը դէպի Ներսէս՝ նա տանում էր և զգուշանում նրան հակառակ յայտնապէս գործելուց։ Այս երկու անձնաւորութիւնների տարբեր հայեացքներն աւելի պարզ երևցան Ներսէսի մահուանից յետոյ։ 373 թուին Ներսէս հայրապետը յանկարծական վախճանեցաւ։ Խոր աւանում, ուր ճաշի էր հրաւիրուած Պապ թագաւորի մօտ։ Նրա անակնկալ մահը այնպէս կարծել տուից, թէ Պապը թունաւորել է. սակայն Փաւստոսի նկարագրութիւնը ցոյց է տալիս, թէ Ներսէս աւելի հաւանօրէն կաթուածից կամ մի այլ հիւանդութիւնից վախճանեցաւ, և այդ բնական հետևանք էր ժամանակի յուզիչ դէպքերին և այն թոյլ ջղերին, որ նա իւր հարբերցող հօրից էր ստացել։ Նա թաղուեցաւ Թիլ աւանում Արխատակէս հայրապետի մօտ։ Իւր արգիւնաշատ գործունէութեան համար իրաւամբ ստացաւ Մեծ կոչումը։

2. Ներսէսի մահուամբ Պապը խնամակալութիւնից ազատուեցաւ

և սկսաւ ինքնագլուխ գործել։ Փաւստոս պատմիչը մասյլ գոյներով է պատկերացնում Պապի գործերն առանց ըմբռնելու նրանց ոգին, համարելով այդ բոլորը իբրև թշնամանք ու հակառակութիւն մեծն Ներսէսին։ Սակայն անկողմնակալ քննութիւնը ցոյց է տալիս, որ երիտասարդ թագաւորը չար ու աւերիչ ոգի չէր, այլ իւր հայրենիքի բարօրութեան նուիրուած մի անձնաւորութիւն, միայն թէ ուրիշ ուղղութեամբ։ Ներսէսի մահուանից յետոյ նա կաթուղիկոսութեան հրաւիրեց Յուսիկին (373 թ.), որ Աղբիանոսեան տոհմից էր.—իսկ այս տոհմը յայտնի իւր հնու հպատակութեամբ թագաւորի կամքին և որը արդէն Աբշակի ժամանակ առժամանակ վարել էր իշխանութիւն՝ ստանալով իւր ձեռնադրութիւնը հայ եպիսկոպոսներից։ Պապի այս կարգադրութիւնը կեսարիայի եկեղեցու մէջ մեծ յուզմունք առաջ բերից. մեծն Բարսեղը (366—379) Պապի կարգադրութիւնն ապօրինի համարելով՝ անմիջապէս ժողով գումարեց և երկու թուղթ գրեց, մէկը՝ հայոց հոգևորականութեան, իսկ միւսը՝ հայոց թագաւորին, որոնց մէջ նա իր բողոքն էր յայտնում կատարուած իրողութեան դէմ, ոչընչացնում էր Յուսիկի եպիսկոպոսնիր ձեռնադրելու իշխանութիւնը և ճանաչում նրան միմիայն արքունի գրան եպիսկոպոս։ Բարսեղի այս բողոքն ապագայի համար նշանակութիւն ունեցաւ։ Հայ թագաւորութեան երկու մասի բաժանուելուց յետոյ (384 թ.)՝ յունաց բաժնի հայ եկեղեցականներն չէին ճանաչում հայոց կաթուղիկոսների իրաւասութիւնն իրենց վրայ և եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանալու համար կեսարիա էին գնում. բայց և այնպէս՝ Պապի կարգադրութիւնն անխախտ մնաց և այն օրուանից Պարսից բաժնի հայ եկեղեցու կաթուղիկոսներից և ոչ մէկը այնուհետև կեսարիա գնաց, ինչպէս որ նախընթաց ժամանակներում գնացել էին։

Ինչպէս ասացինք, Յուսիկը ոչ մի բանի մէջ Պապին չէր հակառակում և նա ազատ համարձակ փոփոխութիւններ մտցրեց մեր եկեղեցի մէջ։ Հողային մեծ կալուածատիրութեան շնորհիւ մեր երկրում հարստութիւնը նախարարների ձեռքն էր կենդրոնացած և դիւղական պատակարգը, որ Հայաստանի բնակչութեան մեծագոյն մասն էր կազմում, զի քաղաքներում շատ հրեայ էր, ընդհանրապէս ազքատ էր։ Այդ ազքատութեան ազէտը զարմանելու տեսար՝ եկեղեցին բացի բարոյական յորդորներից, որ իշխաններին ժողովրդին տարապայման հարկերով չնեղեն, իբրև գործնական միջոց ողորմութիւն քարոզեց, որ պէտք է նպաստէր նաև հոգու փրկութեան. այլ և առանձին աւերք սահմանելով՝ նա ազքատանոցներ հիմնեց։ Այս միջոցը՝ որչափ և բարեգործական, անշուշտ առաւել կը նպաստէր՝ առանց այն էլ ծոյլ, հայ ժողովրդի գործարկապարտութեան քան թէ բարեկեցութեան։ Անշուշտ

այս տեսակէտով և ոչ անպիտութեամբ, ինչպէս Փաւստոսն է յիշատակում, Պապը վանել տուեց աղքատանոցները և նրանց պահպանութեան համար սահմանուած հասոյթները կարեց՝ պատուիրելով միմիայն շըջիկ մուրացկաններին ողորմել և ոչ աղքատանոցներում ապրողներին: Բայց թէ ինքը երիտասարդ թագաւորը ինչ արաւ ժողովրդի ընտտեսական դրութիւնը բարւոքելու համար՝ պատմութիւնը այս կէտի մասին ոչ մի ակնարկ չի անում:—Անընդհատ պատերազմների ու պիտութիւնների պատճառով հայ ժողովրդի թիւն օր ըստ օրէ պակասում էր, և այս կէտը սրտի ցաւով շեշտում է նաև Փաւստոսը: Այս չարիքի առաջն առնելու համար՝ Պապը թուլացնում է ամուսնութեան համար եկեղեցու սահմանած ասպիճանները. հեշտացնում է ամուսնալուծութիւնը, մինչև իսկ՝ բազմակնութեան իրաւունք է տալիս: Փակում է կուսանոցները՝ պատուիրելով կոյսերին ամուսնանալ, որոնց պահպանութեան համար աշխարհն ու իրենց ընտանիքը միջոցներ էին տալիս: Ճիշտ այսպիսի քաղաքականութեան էին ապաքէն հետևում և հին յոյներն ու հռովմայեցիները, ինչպէս և Սասանեանք: Շատ ժամանակ վերջը հայ ազգի վերաբերմամբ այսպիսի հոգածութիւն ցոյց տուեց նաև Յազկերտ Բ. իւր նամակի մէջ ասելով. «Դուստերք հարանց լինիցին և քորք եղբարց, զի աճեցեալ բազմասցին ազգ հայոց» (Եղշ.): Պապը յաջողութեան կենցաղավարութեան ու կրօնի աղաւաղութիւն. այս պատճառով նորոգուեցան հեթանոսական թագման կարգերը՝ փողն ու պարը, լալկան կանայք, և շատ տեղեր հեթանոսական պաշտամունքներ անգամ. և այս իսկ պատճառով էլ եկեղեցական մեծահանդէս ժողովները անշքացան:—Արքունիք գրաւից եկեղեցական 7 հողերից հինգը և հոգի համեմատ իւրաքանչիւր գիւղում թողից մի բահանայ և մի սարկաւագ, իսկ սրանց որդոցն ու եղբայրներին, որոնք անաշխատ եկեղեցու հասոյթով էին ապրում, արքունի ծառայութեան մէջ ընդունեց:

Բայց երիտասարդ թագաւորը չկարողացաւ երկար ապրել ու գործել. Վաղէսի հրամանով նա իւր ընկէր երկրում դաւաճանութեամբ սպանուեցաւ 374 թուին, և նրա փոխանակ թագաւոր կարգուեցաւ նրա եղբօրորդին Վարազդատը՝ մի թեթևաբարոյ ու թեթևամիտ անձն, երկին սկսուեցան նեղքին խռովութիւններ. Վարազդատը հալածուեցաւ. Մանուէլ Մամիկոնեանը 7 տարի խնամակալեց, ապա թագաւորեցին Արշակն ու Վաղարշակը, և վերջապէս 384 թուին Հայաստանը բաժանուեցաւ պարսից ու յունաց միջև և հետզհետէ իւր կառավարակ անկման մօտեցաւ:

Երկրի քաղաքական անկածութիւնը բնականաբար պէտք է աղդէր նրա հոգևոր ու բարոյական կեանքի վրայ: Յուսիկ Բ-ին՝ որ երկու

տարի միայն կաթուղիկոսութիւն վարեց, նոյն Ազբիանոսեան տոհմից յաջորդեց Զաւէնը (375—378), որի կարգադրութեամբ եկեղեցականներն իրանց պարեգօտն ու պճղնաւորը թողուցին և զինուորականի պարզարուն տարազ սկսան հագնել ու պէս-պէս ժոլթիներ գործածել: Ծնխասէր ու աշխարհասէր Զաւէնը մօտ երեք տարի կառավարեց հայոց եկեղեցին: Նրան յաջորդեցին Շահակ Կորճայն (378—380) և Ասպուրակէսը՝ Ազբիանոսեան տոհմից (380—387), որոնք թէև բարեպաշտ անձինք էին, բայց չկարողացին ամենևին Զաւէնի հաստատած կարգերը:

Հայոց եկեղեցու ազգայնացումն ու բարեկարգութիւնը պահուած էր մնձն Ներսէսի որդուն Սահակ Պարթևին, որ 387 թ. կաթուղիկոս դարձաւ:

ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ

Ա. յօդուած

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՆՊԱՍՏԻՑ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ։

1. Հայոց քրիստոնէութիւն ընդունելուն պատմութիւնը ցոյց է տալիս, որ այդ վարդապետութիւնը համեմատաբար շատ հեշտ տարածուեցաւ Հայաստանի մէջ Դ. դարում. բայց և այնպէս նրան մարտուիներ հին ու նոր գաղափարների մէջ և վերջերն էլ բաւական ընդհարումներ տեղի ունեցան։

Պէտք չէ մոռանանք, որ Դ. դարի հայի համար քրիստոնէութիւնը մի նորօրինակ վարդապետութիւն չէր. Ա. դարից սկսած այդ վարդապետութիւնը, ինչպէս պատմութեան վկաները ցոյց տուին, գոյութիւն ունէր հայոց երկրում, որի համար շատ անձինք իսկ իրանց կեանքը զոհեցին, որի համար շատ հովիւներ աշխատեցան։ Արդարև՝ այդ վարդապետութեան տիրապետումը մասնական էր, և հայ ժողովրդի մեծամասնութիւնը տակաւին թարթափում էր թանձր հեթանոսութեան մէջ, բայց բնականաբար քրիստոնէութեան կրօնական հայեացքներն անզգալաբար մուտք կը գտնէին և հեթանոս մտքերի մէջ ու նրանց աստիճանաբար նոր գաղափարներին կընտելացնէին։

Ի՞նչ կրօնական հայեացքներ արդեօք փոխանակեց քրիստոնէութիւնը Դ. դարում, ինչ յարաբերութիւն կար արդեօք հին ու նոր կրօնական-բարոյական գաղափարների մէջ. այս հետաքրքրական հարցերին պատասխանելու համար ժէբախտաբար շատ քիչ նիւթ ունինք։ Մեր այսօրուայ ունեցած տեղեկութիւնը հայոց հին հեթանոսական կրօնի ու կազմութեան մասին շատ աղօտ է. քրիստոնեայ մատենագիրները հարևանցի միայն ծանօթութիւն են տալիս։ Այս հարևանցի տեղեկութիւններն ամփոփելով՝ տեսնում ենք, որ հայոց հին կրօնը բնիկ և օտարամուտ կրօնական հայեացքների խառնուրդ է ներկայացնում, ինչպէս և ամէն մի հեթանոսական կրօն։ Այս խառնուրդը՝ լինի հետևանք Հայաստանի աշխարհագրական ինքնուրոյն բաժանմունքների

կամ օտար ազդեցութեան՝ մի ճշմարիտ իրողութիւն է, և բնիկ հայկական աստուածութիւնների հետ (Վահագն, Վանատուր և այլն) տեսնում ենք ասորական, ղրադաշտական ու յունական աստուածութիւններ։ Այսպէս թէ այնպէս՝ Դ. դարում աւելի մազդէականութիւնն է դերակշռում. Արամազդի, Անահտի, Միհրի ու Վահագնի պաշտամունքը շատ զօրացած էր այդ դարում և ընդհանուր յարգանքի առարկայ։ Այս գլխաւոր աստուածութիւնները, ինչպէս և միւս մանր հոգիների տութիւնները, որ հեթանոս հայերն ընդունում էին, ներկայացնում էին այնպիսի բարոյական գաղափարներ,—քաջութիւն, զգաստութիւն, լուսի յաղթանակը խաւարի վրայ և այլն—որոնք օտար չէին նաև քրիստոնէութեան, հետևաբար այս կողմից մեծ հակառակութիւն կարող չէր լինել այս երկու կրօնների մէջ։ Լուսաւորիչն իակ իւր քարոզութեան ժամանակ այսպիսի գաղափարներ չի հերքում, այլ այն է միայն քարոզում, թէ Անահիտն ու այլ աստուածներ ճշմարիտ չեն, այլ աստուածացեալ մարդիկ, և թէ միմիակ ճշմարիտ աստուած կայ՝ երկինքի ու երկրի արարիչը։ Լուսաւորիչը հին սհեանները կործանելով հանդերձ՝ ժողովրդին իսպառ չի մոռացնում իւր նախկին սրբավայրերը, այլ նոյնները դարձնում է քրիստոնէական սրբավայրեր և նոյն տեղերում կառուցուող հեթանոսական մեծահանդէս տօների փոխարէն՝ հաստատում է քրիստոնէական տօներ, ինչպէս Վանատուր ղից տօնի փոխանակ, որ հունձքի և նոր տարուայ տօն էր, նոյն Բագաւանում կատարել պատուիրեց ամէն տարի Յովհաննէս Մկրտչի տօնը։ Եթէ Լուսաւորչի բռնած այս ուղղութիւնն իւր առաւելութիւններն ունէր, այն տեսակէտով՝ որ նորադարձ ժողովրդին չէր խրտնեցնում, բայց ունէր, անշուշտ և այն պակասաւոր կողմը, որ ժողովրդին յարատևել կը տար իւր հեթանոսական սովորութիւնների ու գաղափարների մէջ, ինչպէս որ իրօք և եղաւ. և հեթանոսական ու քրիստոնէական ըմբռնումներ խառն ու միացած՝ մնացին ու մնում են հայ ժողովրդի մէջ մինչև այսօր, և կազմում են հայի ինքնուրոյն աշխարհահայեացքը։

2. Քրիստոնէութեան տարածման գլխաւոր հակառակող այժ միշտ եղել է քրմական դասակարգը, որի շահերը կապուած են եղել հին կրօնի հետ։ Այդպիսի ընդդիմութիւն ցոյց տուին քրմերը և մեր երկրում։ Ագաթանգեղոսը քրմերի այս հակառակութիւնը պատկերացնում է այսպիսի խօսքերով. «Վահանուր զօրքերի նման ժողովուած դեւերը մարտնչում էին և մեծագոչ բարբառով լեռները թնդացնում»։ Լուսաւորիչը բաւական չհամարեց նրանց զէնքի ուժով խոնարհեցնելը. լաւ հասկանալով որ տնտեսական զգալի կորուստը նրանց միշտ պէտք է դրդէ նոր կրօնին հակառակութիւն ցոյց տալ, նա յորդորում է նրանց նոր կրօնի ուսուցիչներ դառնալ՝ համոզելով թէ նրանք դար-

ձևալ նիւթական ապահով վիճակի մէջ կը լինին։ Բնորոշ են այն խօսքերը, որ Սահակ Պարթևը իւր Աւանդութեան գրքի մէջ Լուսաւորչին է վերագրում։ «Լուսաւորիչն հայոց մեծն Գրիգոր, մանաւանդ թագաւորն Տրդատ՝ շատ նպաստներ էին տալիս մինեանների պաշտօնեաներին ու քրմերի որդւոցը սահմով՝ թէ ս. եկեղեցուց հարիւրապատիկ լինիք, տառապածք ու երկայնմիք կտանիք»։ Եւ արդարև՝ աշխատական շահերից զրկուած հայ քրմերնու նրանց որդիքը քրիստոնէութեան ուսուցիչ են դառնում, մի հանգամանք՝ որ քրիստոնէութեան բարոյակրթիչ նշանակութիւնը կարող չէր ապահովել։

3. Եթէ անտեսական հարցը քրմութեան դարձի մէջ դեր խաղայ, ապաքէն նոյնը առաւել մեծ նշանակութիւն պէտք է ունենար հասարակ ժողովրդի համար։ Բովանդակ Հայաստանի մէջ հողը արքունական (տուն արքունի), քրմական և կամ նախարարական էր. գիւղական ժողովուրդը, շինական, որով լի էր Հայաստանը, սեպհական հող կամ չունէր և կամ եթէ ունէր իսկ, նա պէտք է մշակէր արքունական կամ նախարարական հողը և հարկատու՝ թէև բնական բերքերով, թէ իւր անմիջական տիրոջ եթէ հայոց արքունիքին, և միանգամայն կարևոր դէպքերում ձրիաբար աշխատէր։ Հարկերի տեսակներն էին՝ հաս, սակ, բաժ և այլն, որոնց չափը ճշդութեամբ անծանօթ է. դառնալով շրջակայ երկիրների հարկահանութեան հղանակից՝ պարզ է որ ժողովուրդը աւելի կեղեքվում էր քան թէ կանոնաւոր հարկ տալիս։ Միայսպիսի դրութեան հետևանք բնականաբար ազքատութիւն էր, և քրիստոնէութիւնն իւր առաջին քարոզութեան նպատակ, ինչպէս և ամէն տեղ, այս աղքատ դասակարգի մէջ գտաւ։ Նա արդարև տնտեսական յեղափոխութիւն առաջ չբերեց, բայց ժամանակաւորապէս թեթևացրեց աղքատների վիճակը՝ կործանուած մինեանների հարստութեան մի մասը նրանց բաժանելով և միանգամայն գիտութիւն ու ողորմածութիւն քարոզելով դէպի կարօտեալները։ Քրիստոնէութիւնը մոլորեց յարդանք դէպի անհատը. հաւասարութեան ու եղբայրութեան գաղափար մի այնպիսի հասարակութեան մէջ, ուր մի կողմից կար բարձր ազնուականութիւն, իսկ միւս կողմից՝ անարգուած շինական կամ գիւղուկ, որ տարապայման հարկերով նեղվում էր, բայց որին միանգամայն քարոզվում էր «ամենայն ճշդութեամբ հնազանդել իրանց տէրերին, որպէս զի Աստուած նրանց վարձատրէ»։ Եթէ շահերի տեսակէտով քրիստոնեայ դարձած քրմութեան համար նշանակութիւն չունէր քրիստոնէութեան բարոյական կողմը, ևս առաւել մի ամբոխի համար՝ որ ողորմութիւն առնելու կամ քաղցը յագեցնելու համար նոր կրօնի կողմն էր անցնում, առանց գիտակցութեան ու բանական մտածութեան. և այս ամբոխի քրիստոնէութիւնը շատ մեայլ գոյներով պատկերացնում է մեզ Փաւստոսը, ինչպէս յետոյ կը տեսնենք։

4. Բայց քրիստոնէութեան դարձի պատմութիւնը ցոյց է տալիս, որ ազնուական դասակարգն ևս յարեցաւ այս նոր վարդապետութեան և ոչ թէ լոկ ազքատ ամբոխը։ Առաջինը հէնց ինքը մեծազօր Տրդատը քրիստոնեայ դարձաւ և այնուհետև հայ նախարարների մեծագոյն մասը։ Պատմութիւնը բացատրում է արդէն Տրդատի քրիստոնեայ դառնալը, և նոյն իսկ շեշտում է, որ այդ դարձի մէջ մեծ դեր են խաղում Աստղովազուխտը և մանաւանդ Հռիփսիմեանք, որոնց նահատակութիւնը մեծ յուզմունք առաջ բերեց նրա կեանքի մէջ. և նա, որ արդէն՝ Ագաթանգեղոսի ասելով, հմուտ էր յունական դիտութեան և իմաստականութեամբ գարգացած՝ բոլոր սրտով ըմբռնեց քրիստոնէութեան վարդապետութիւնը և իւր անձի մէջ մարմնացրեց նրա բարոյական գաղափարները։ Տրդատը դարձաւ միանգամայն երկրորդ առաքեալ. նրա անձնական օրինակը և միանգամայն «մեծատաստ հրամանը» խոնարհեցնում էր ամէնքին քրիստոնէութեան առաջ։ Ազաթէն հայ արշակունի թագաւորներն իրանց բոլոր հպատակներն—շինականներն ու նախարարներն—կեանքի ու մահուան տէր էին. մեծամեծ իշխաններն հայ թագաւորի նկատմամբ այնպէս «ծառայ» էին, ինչպէս շինականը՝ տանուտիրոջ առաջ. հայ թագաւորին պարտական էին նախարարներն իրանց կալուածները, որին և պարտաւոր էին հնազանդել՝ իբրև «Արևի բնիկ տիրոջ»։ Այսպիսի հնազանդութիւն շատ բնական էր դէպի Տրդատի անձնաւորութիւնը, որը ոչ միայն հսկայ էր և ահեղազօր, այլ և յունաց կայսեր սէրն էր վայելում. և հայ նախարարութիւնը կամայ թէ ակամայ իւր թագաւորի օրինակին է հետևում ու քրիստոնեայ դառնում։

Ահա հանգամանքներ, որոնք դիւրացրին քրիստոնէութեան մուտքը, նպատակին Լուսաւորչի քարոզութեան։ Բայց ինչպէս պատմութեան փաստերը հաստատում են, հետևանութիւնը բաւական երկար ժամանակ մնաց Հայաստանի լեռնային ու մարզ մասերում, և ապագային իբրև քարոզիչներ հրապարակ եկան Վրթանէս հայրապետը, Մեծբունի Յակովբ եպիսկոպոսը, Շաղիտա ու Եպիփան ճգնաւորները ու վերջապէս Մաշտոց վարդապետը։

5. Քրիստոնէութիւնը հաստատուն հողի վրայ դնելու համար՝ Լուսաւորիչը դպրոցներ բաց արաւ, որոնց մէջ ընդունեց յատկապէս քրմերի ու նախարարների որդոցը, դի սոքա կազմում էին ժողովրդի ազդեցիկ դասակարգը. և արդարև քրմերի զաւակներից շատերը եպիսկոպոսութեան հասան։ Բայց որովհետև քրիստոնէութեան քարոզիչներն ընդհանրապէս օտարազգի էին՝ յոյն կամ ասորի, թէև հայերէնագէտ, և մայրենի լեզուով դրականութիւն տակաւին չկար, այդ

իսկ պատճառով քրիստոնէութիւնը հայ ժողովրդի մէջ բարոյական յեղափոխութիւն առաջ չբերից Դ. դարում ինչ որ կատարուեցաւ Ե. դարում։

Բ. յօդուած

ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ, ՎԻՃԱԿՆ ՈՒ ԴԻՐՔԸ.

1. Ընդհանուր եկեղեցու պատմութիւնը ցոյց է տալիս, որ քրիստոնէական նուիրապետութիւնն ստորիճանաբար զարգացաւ։ Մինչև Դ դարի սկիզբները միմիայն երեք աստիճան ենք տեսնում—եպիսկոպոսութիւն, երիցութիւն և սարկաւագութիւն. իսկ Դ դարում արդէն ուշադրի յիշատակվում են նուիրապետութեան միւս խոնարհագոյն աստիճանները ևս, այն է՝ կիսասարկաւագութիւն, ջահընկալութիւն, երգմնեցուցիչ, ընթերցող և դռնապան՝ իւրաքանչիւրն իւր որոշ պաշտօնավարութեամբ։ Որչափ բազմացաւ եկեղեցական ստորին պաշտօնէութիւնը, այնչափ էլ եկեղեցու գլխաւոր պաշտօնեաների, մանաւանդ եպիսկոպոսների իշխանութիւնը հետզհետէ կենդրոնացաւ մի անձնաւորութեան ձեռին, որ իւր բոնած դիրքին համեմատ կոչուեցաւ արքեպիսկոպոս, մետրապոլիտ, պատրիարք։

Եկեղեցական վարչութեան այս կազմակերպութիւնը հաստատուեցաւ նաև մեր երկրում, երբ Դ. դարում քրիստոնէական եկեղեցին ընդհանուր ազգային կրօն դարձաւ։ Այդ յօրինուածութիւնն արդէն իսկ հաստատուած էր առաջին և երկրորդ տասերկեան կանոններով (6. 34.) և Նիկիոյ տիեզերական ժողովով (Կ. 6.)։ Հայոց նուիրապետութեան գլուխը նախնաբար աւելի կոչվում էր հայրապետ, բահանայապետ, եպիսկոպոսապետ. բայց վերջերն ընդհանրացաւ կաթուղիկոս կոչումը։

Ընդհանուր եկեղեցու մէջ տիրող սովորութեան համեմատ (Բ. տասք. 34 Սնժ. ը. 4. Սակր. Ա. 9 և ուրիշ հայրեր) Հայոց եկեղեցու գլուխը, ինչպէս և բոլոր պաշտօնեաներն, ընտրվում էին բոլոր ազգի հաճութեամբ, թէ աշխարհականների և թէ եկեղեցականների մասնակցութեամբ։ Եթէ ընտրուածն արդէն իսկ եպիսկոպոսական ձեռնադրութիւն ուներ, նա անմիջապէս վարում էր իւր պաշտօնը, իսկ եթէ աշխարհական վիճակից էր կամ երէց, սովորաբար կհասարիա էր գնում՝ եպիսկոպոսական ձեռնադրութիւն առնելու համար և այս՝ մինչև Դ դարի

առաջին կէսը. այնուհետև հայոց եկեղեցու գլուխը հայ եպիսկոպոսներից էր առնում ձեռնադրութիւն։

Ամբողջ Դ դարում և մինչև Ե դարի կէսերը հայրապետական իշխանութիւնը գտնվում էր երկու նշանաւոր տոհմի ձեռք՝ Լուսաւորչի և Աղբիանոսի։—Սակայն այս հանգամանքը չպէտք է կարծել տալ, թէ յաջորդութիւնը ժառանգաբար էր լինում. ուր որ ընտրութիւն կար, կարող չէր ժառանգականութեան մասին խօսք լինել. երկու տոհմերից էլ այս կամ այն անձն էր ընտրվում կամ իւր արժանաւորութեան համար, և կամ մի այլ քաղաքական պատճառով։ Աղբիանոսը հին հայ նշանաւոր քրմական տոհմի շառաւիղ էր. նա նախնաբար հայոց արքունի դրան եպիսկոպոս էր և ապա ստացաւ Մանաւազեանց երջանիկ տիտղոսը, որ և ժառանգից տոհմով։—Պատմութեան ընթացքը ցոյց է տալիս, որ այս երկու տոհմերը տարբեր ուղղութեան քաղաքականութեան էին հետևում. մինչդեռ Լուսաւորչի տոհմն աշխատում էր քաղաքական իշխանութիւնն իւր բարոյական հոգենականութեան ենթարկել և քաղաքական բոլոր խնդիրների մէջ մանել, աշխատելով հայոց բախտը յոյն պետութեան հետ կապել, Աղբիանոսեան տոհմը իրան հեռու էր պահում քաղաքական խնդիրներից. նա ամէն գործի մէջ հայ թագաւորներին կամակատար էր հանդիսանում. աշխատում էր թագաւորներին կամակատար էր հանդիսանում. աշխատում էր թուլացնել եկեղեցու խիստ պահանջները՝ տալով հոգևորականներին ըղձական ու կենցաղավարութեան ազատութիւն։—Հայրապետը եկեղեցին կառավարում էր առանձին խորհրդականներով, որոնք ապրում էին հայրապետանոցում և թուով 12 հոգի էին, երևի առաքելոց թուի համեմատ, և ամէն մէկը առանձին թեմակալութիւն, գործակալութիւն ունէր։ Այս 12 եպիսկոպոսների մասին առաջին անգամ յիշատակութիւն է լինում Մեծն Ներսէսի օրով. թէ արդեօք առաջ էլ կայլին, այդ մասին դրական բան կարելի չէ ասել։ (Ա.-առ. 19. Բ. 23. Փաւստ. Ջ. ե.)։ Հայրապետանոցի կամ դրան 12 թեմակալ եպիսկոպոսների պաշտօնների մասին առանձին-առանձին տեղեկութիւն չունինք. յատկապէս յիշվում են մի քանիսը. 1. Աղբատանոցների տեսչութիւն. քրիստոնէական եկեղեցին ժողովրդի թշուառութիւնը թեթևացնելու համար առանձնապէս քարոզից գթութիւն և ողորմածութիւն դէպի աղքատները և սրանց խնամելու համար հատուածից առանձին ապրուստ նոցին ու անկելանոցներ։ Արդ՝ եկեղեցու գլուխը անձամբ կարող չէր կատարել այդ հատուածութիւնները, ուստի և այդ պաշտօնը յանձնվում էր մի կամ երկու անձնաւորութեան։ 2. Փակակալութիւն. հաստատուած է այժմեան լուսարարապետութեան։ Փակակալի խնամքին էր յանձնուած մայր եկեղեցու բարեզարդութիւնը. նա էր միանգամայն եկեղեցական հանդէսների կարգադրիչը։ 3. Սեռեկապետու-

թիւնը հայրապետանոցի նշանաւոր պաշտօններից մէկն էր, ինչպէս և արքունի սինեկապետութիւնը. այդ անձին յանձնուած էր հայրապետանոցի բարեկարգութիւնը, թիւրեա նա էր և գաւազանակիրը: 4. Դաստաւորութիւնը նշանաւոր պաշտօն էր: Դաստաւորութիւնը միայն հայրապետանոցի մէջը չէր, այլ և ամեն մի վիճակում: Եկեղեցական դատարանին հնթարկվում էին ոչ միայն կղերի վերաբերեալ գործեր, այլ և աշխարհիկ գատեր և այն՝ առաքեալների ժամանակներից սկսած: Եկեղեցական դատարանի գլուխը եպիսկոպոս էր, իսկ երէցներն՝ օգնական: Եկեղեցական պատիժները—յանդիմանութիւն, ապաշխարանք և այլն—հարկաւ եկեղեցականների ձեռքով էին գործադրվում. իսկ մարմնական պատիժները՝ տեղական իշխանների ձեռքով:

2. Այս 12 եպիսկոպոսները հայրապետին խորհրդակից ու գործակից էին ընթացիկ գործերի կառավարութեան մէջ. իսկ նշանաւոր դէպքերի առիթով ազգային ժողով էր գումարվում, որին ներկայ էին լինում բոլոր վիճակաւոր եպիսկոպոսները, մնծամեծ իշխաններն ու այլ աշխարհական անձինք: Ազգային ժողովներ գումարվում էին կամ նոր կաթուղիկոս ընտրելու, կամ դատաստանական մի խնդիր ընդունելու-միրժելու և կամ նեղքին բարեկարգութեան օրէնքներ սահմանելու համար: Դ. դարում՝ մինչև Սահակ Պարթև՝ Հայաստանը 13 վիճակ ունէր, բացի այն 12 եպիսկոպոսներից, որոնք հայրապետանոցումն էին. գոնէ այդչափ թիւ ենք գտնում Ագաթանգեղոսի ու Փաւստոսի մէջ, որոնք մեր եկեղեցու հնագոյն պատմութեան գլխաւոր աղբիւրներն են, թէև Փաւստոսի մէջ մի քանի ուրիշ վիճակաւորի անուն է յիշատակվում: Վիճակների բաժանումը համապատասխան չէ եղել նահանգների բաժանման, այլ համեմատ աւելոր քրիստոնէութեան և իշխանի բարձրութեան: Յաջորդ դարերում վիճակների թիւն աւելի է բազմանում—Յատկապէս կաթուղիկոսական թեմ էին 15 գաւառներ (Փաւստ. Դ-ժդ), որոնց հսկողութիւնը յանձնուած էր քորեպիսկոպոսների: Վիճակաւոր եպիսկոպոսները կոչվում էին բարձրեբէց կամ աթոռընկալ և ժողովի ժամանակ բազմում էին հայրապետի աջ ու ձախ կողմը. աջ կողմը առաջին տեղը բռնում էր Հարքի կամ Մանազկերտի եպ-ը Աղբիանոսեան առնմից, իսկ ձախ կողմը—Բասենի եպ-ը, ինչպէս երևում է դարձեալ հին քրիստեական առնմից: Վիճակաւոր եպիսկոպոսների դասակարգութիւնը ժամանակի ընթացքում փոփոխութիւն կրեց, ինչպէս և նրանց թիւը բազմացաւ: Քաղաքական հանգամանքների պատճառով նախարարական դասակարգութիւնն ևս փոփոխութիւններ կրեց և այս պարագային համեմատ երևի և թեմերի դասաւորութիւնը:

Վիճակաւոր եպիսկոպոսների իշխանութեան տակ գտնվում էին

քորեպիսկոպոսները—քահանայական կամ եպիսկոպոսական ձեռնադրութեամբ,—որոնք նստում էին գիւղերում և հսկում եկեղեցիների բարեզարդութեան, նաև ունէին իրաւունք նուիրապետութեան խոնարհական աստիճանները տալու: Քորեպիսկոպոսութիւնը թէ և շատ եկեղեցիներում վերջացաւ, ինչպէս տրամադրում է նաև Լաւոդիկէի ժողովը (կ. 50), բայց մեր եկեղեցում մնաց և յաջորդ դարերում: Քորեպիսկոպոսութիւնը համապատասխանում է այժմեան գործակալութեան, բարեկարգչի, յաջորդութեան՝ պաշտօնին:

Թէև հայոց հայրապետներն իրրև պատասական եպիսկոպոս միշտ արքունիքի հետ էին լինում և նրա հետ այս ու այն կողմը տեղափոխվում, բայց իրենք էլ շրջում էին այս ու այն գաւառը, մանաւանդ այն գաւառները, որոնք իրենց անմիջական իշխանութեան տակ էին գտնվում: Շրջելիս՝ նրանք հեծնում էին կամ սպիտակ ջորի և կամ սպիտակ ջորիներ լծած կառքի մէջ նստում:

3. Եկեղեցու կառավարութեան համար կային կանոններ, որոնք մշակուել էլ էին թէ հայոց և արտաքին ժողովներում: Վերջին ժողովներից Դ դարում հայոց եկեղեցին ընդունածը Նիկիոյ ժողովը (325 թ.) իւր հանգանակով ու մշակած 20 կանոններով: Բայց այդ դարում գումարուել են Հայաստանից դուրս և այլ տեղական ժողովներ՝ ինչպէս Անտիոքի (340թ.), Անկիւրիոյ (313—315թ.), Նէոկեսարիոյ (315թ.), Գանգրայի (340—370թ.), որ ունի նաև առանձին թուով գրած ու եպիսկոպոսաց հայոց, Լաւոդիկէի ժողովը (360 թուերին) և այլն, որոնց կանոնները հայերէն թարգմանուած են հաւանօրէն ե դարում, թէև նրանց լեզուն բաւական աղճատուածներ է ներկայացնում: Միշ յայտնի չէ, թէ հայ եկեղեցու կողմից եղել են արդեօք այս ժողովներին մասնակցողներ, որով իրաւացի համարէինք այդ կանոնների ընդունելութեան խնդիրը: Բայց ի նկատի առնելով, որ մինչև Քաղկեդոնի ժողովը բոլոր քրիստոնէական եկեղեցիները մի էին, իրաւունք կարծելու, որ բարեկարգութեան համար սահմանուած յիշեալ ժողովների կանոնները գործութիւն ունէին նաև մեր եկեղեցու համար: Ժ-ի դարից ունինք վկայութիւն այդ ժողովների ընդունելութեան մասին (Դիւիդոր Տզայի թուղթը): Ընդհանուր քրիստոնէական եկեղեցու մէջ Դ դարում յայտնի էին և Սահմանադրութիւն առաքելոց և Առաքելական կանոնք կոչուածները (85 կ.): Առաջին գործը հայերէն թարգմանութեամբ չունինք, իսկ երկրորդը կայ, և մեծն Ներսէսի գումարած Աշտիշատի ժողովը (354 թ.) ընդունում է այդ կանոնները: Հայ գրականութեան մէջ կայ և մի ուրիշ առաքելական կանոն՝ թուով 34. խնդիր է թէ ո՞րն էր Աշտիշատի ժողովի ընդունածը: Հաւանօրէն այս 34 կանոնը, որ մեզ է հասել նաև յունարէն և ասորերէն թարգմանութեամբ: Այս կանոնները, որոնք մշակուել են Ա դարի վերջերում, ընդունուել են Ասորեստանի եկեղեցու կողմից Ա դարի վերջերում, Հայոց եկեղեցին ընդունել է նրանց Դ դարում, Աշտիշատի ժողովում: Այս կանոնները ընդունուել են նաև Եգիպտոսի եկեղեցու կողմից, որ ունի նաև առանձին թուով գրած ու եպիսկոպոսաց հայոց, Լաւոդիկէի ժողովը (360 թուերին) և այլն, որոնց կանոնները հայերէն թարգմանուած են հաւանօրէն ե դարում, թէև նրանց լեզուն բաւական աղճատուածներ է ներկայացնում: Միշ յայտնի չէ, թէ հայ եկեղեցու կողմից եղել են արդեօք այս ժողովներին մասնակցողներ, որով իրաւացի համարէինք այդ կանոնների ընդունելութեան խնդիրը: Բայց ի նկատի առնելով, որ մինչև Քաղկեդոնի ժողովը բոլոր քրիստոնէական եկեղեցիները մի էին, իրաւունք կարծելու, որ բարեկարգութեան համար սահմանուած յիշեալ ժողովների կանոնները գործութիւն ունէին նաև մեր եկեղեցու համար: Ժ-ի դարից ունինք վկայութիւն այդ ժողովների ընդունելութեան մասին (Դիւիդոր Տզայի թուղթը): Ընդհանուր քրիստոնէական եկեղեցու մէջ Դ դարում յայտնի էին և Սահմանադրութիւն առաքելոց և Առաքելական կանոնք կոչուածները (85 կ.): Առաջին գործը հայերէն թարգմանութեամբ չունինք, իսկ երկրորդը կայ, և մեծն Ներսէսի գումարած Աշտիշատի ժողովը (354 թ.) ընդունում է այդ կանոնները: Հայ գրականութեան մէջ կայ և մի ուրիշ առաքելական կանոն՝ թուով 34. խնդիր է թէ ո՞րն էր Աշտիշատի ժողովի ընդունածը: Հաւանօրէն այս 34 կանոնը, որ մեզ է հասել նաև յունարէն և ասորերէն թարգմանութեամբ: Այս կանոնները, որոնք մշակուել են Ա դարի վերջերում, ընդունուել են Ասորեստանի եկեղեցու կողմից Ա դարի վերջերում, Հայոց եկեղեցին ընդունել է նրանց Դ դարում, Աշտիշատի ժողովում: Այս կանոնները ընդունուել են նաև Եգիպտոսի եկեղեցու կողմից

առաքելական և միւս քրիստոնէական եկեղեցիներին անծանօթ է, և որը նախատէս թարգմանուել է ե դարում ասորիներէնից. միւսը՝ երկրորդ առաքելական կոչուածը՝ որ 85 է թուով, 380 թուականներից վերջն է հրապարակ դուրս եկել, թէև նոյնպէս թարգմանուել է ե դարում— վերջապէս պէտք է չմոռանանք Բարսեղի կանոնները, որոնք նոյնպէս ճոխութիւն են ունեցել հայոց եկեղեցու մէջ, և ինքնին կեսարիոյ արքեպիսկոպոսն էլ առանձնակի յարգանք էր վայելում բոլոր արևելքի եկեղեցիների մէջ։

Բայի այս օտարազգի կանոնական գործերից՝ Դ դարում ունեցել ենք և ազգային օրէնսդրութիւն։ Պատմութիւնն ասում է, որ երբ Արիստակէսը Նիկիոյ ժողովի կանոնները բերեց, Լուսաւորիչն ևս ամենայն մի քանի կանոններ, և 447 թ. գումարուած Շահապիվանի ժողովն էլ այս կանոնները շեշտում է։ Ի՞նչ կանոններ են դրանք, չըգիտենք։ Այժմ ունինք Լուսաւորչի անունով 30 կանոն։ Այս կանոնները թէև իրենց բովանդակութեամբ Դ դարի շրջանակից դուրս չեն գալիս, բայց և ոչ ամբողջովին Լուսաւորչի ժամանակին կարող են վերագրուել, որովհետև յիշեցնում են Անտիոքի ժողովի և Բարսեղի կանոնները։ Աւելի յետնագոյն ժամանակի գոյծ կարելի է նկատել «Թադէոս առաքելոյ» կանոնքը։ Վերջապէս պատմութեան ընթացքում յիշատակեցինք Աշիշատի ժողովի կանոնները, որ մեծն Ներսէս մըշակեց 354 թ.*)։ Ահա այսպիսի կանոնագրքով էր առաջնորդվում հայ եկեղեցին թէ հոգևորականների և թէ աշխարհականների, յատկապէս ամուսնական գործերը քննելիս։ Բայց որովհետև ընդհանրապէս ամէն տեսակ յանցանք նկատվում էր աստուածային պատուիրանների զանցառութիւն, ուստի եկեղեցին դատում էր և այլ յանցանքների համար և իրրև պատիժ սահմանում էր ապաշխարանք՝ հաղորդութիւնից զըրկումն, տուգանք և ե դարում նաև ծեծ՝ յատկապէս գիղջուկների համար։ Մեր երկրում կար աշխարհական տուգան, որի սահմանած պատիժներն աւելի խիստ էին՝ շղթայել, քերել, պրկել և այլն. և անշուշտ շատերն աշխարհային տուգանի այս խստութիւնից խուսափելով եկեղեցու դատարանին էին դիմում և դարում Յաղկերտը և միջի այլոց եկեղեցու ձեռքից առաւ նոյնպէս դատաւորութեան իրաւունքը, «որ եկեղեցու նշանակութիւնը նսեմացնէ»։

4. Հայոց հայրապետական իշխանութեան իսկական կենդրոն վա-

*) Այս ժողովից առաջ արդարև այլ ժողովների մասին յիշատակութիւն չունինք հին պատմիչներից, բայց Փաւստոսի այն խօսքը Աշիշատի մասին, թէ «եղեր լեալ նախնեացն ժողովոց—սինհոդոսից» ցոյց է տալիս՝ որ արդարև առաջ էլ ժողովներ եղել են Նիկիոյ ժողովի կանոնների կամ այլ հանգամանքների առթիւ, ինչպէս յետին յիշատակարանները վկայում են։

դարշապատն էր՝ ուր էր և հայոց քաղաքական իշխանութիւնը։ Բայց որովհետև հայոց հայրապետները միանգամայն արքունի դրան եպիսկոպոս էին, ուստի յաճախ լինում էին այնտեղ, ուր արքունի բանակն էր լինում. և ինչպէս որ թագաւորների տեղից տեղ շրջելը չէր խափանում վաղարշապատի մայրաքաղաքութեան իրաւունքը, այսպէս և հայրապետների շրջագայութիւնը չէր ժխտում կաթուղիկէ եկեղեցու իրաւասութիւնը։ Ճշմարիտ է՝ Փաւստոսի մէջ յաճախ յիշատակվում է Աշիշատի եկեղեցին իրրև մայր եկեղեցի, իրրև նախեկեղեցի. այնտեղ են լինում ի հնուց ժողովներ և այլն. բայց այս բաները չեն ժխտում վաղարշապատի գլխաւորութիւնը։ Արդարև՝ Աշիշատի եկեղեցին հիմնարկութեան թուականով կանխում է կաթուղիկէից, դի Լուսաւորիչը իրրև քահանայ առաջին անգամ Տարօն ուր կոխեց և ապա եկաւ վաղարշապատ՝ ուր արդէն գործել էր իրրև աշխարհական քարոզիչ և մարիրը պատրաստել, բայց հիմնարկութեան առաջնութիւնը պատճառ չէ նաև իրաւասութեան առաջնութեան։

Պէտք է դիտել, որ Լուսաւորիչն առանձնապէս ուշադրութիւն էր դարձնում Հայաստանի այն գաւառների վերայ, ուր հեթանոսութիւնն աւելի զարգացած էր։ Հայոց մայրաքաղաք վաղարշապատը հեթանոսական պաշտամունքների կողմից նշանակութիւն չունէր, բայց Աշիշատը իր մեհեաններով հռչակուած էր բովանդակ Հայաստանում. այս կողմից նրան մրցակից կարող էին լինել Դարանաղին ու Եկեղեաց գաւառները. այս իսկ պատճառով Լուսաւորիչը ոչ միայն յաճախ այցելութեան էր գնում այդ գաւառները, այլ և նրանց իրրև անմիջական թեմ իր իշխանութեան տակ է առնում և իր թեմի եպերոն Աշիշատն է հաստատում, որ իրրև սեպհականութիւն տացել էր Տրդատից, ինչպէս և Թիլն ու Թորդանը (Փաւստ. Դ. ժգ)։ Այս կերպով կարելի է բացատրել Փաւստոսի խօսքը՝ թէ Աշիշատը եղել է նախնեաց ժողովների տեղ, թէև յետնագոյն վկայութիւններից դիտենք նաև, որ այդ ժամանակներում վաղարշապատի մէջ ևս եղել են ժողովներ (Սակս ժողովոյ ի Հայս)։—Փաւստոսը Յուսիկ կաթուղիկոսի ընդունելութիւնը պատմելիս, ասում է Տիրանի և Յուսիկի մասին, թէ «Արտաշատ մեծ քաղաքը մանելով՝ գառնում էին եկեղեցին և մանուկ Յուսիկին հայրապետական աթոռը նստեցնում» (Դ. ժբ.)։ Պարզ է, որ այստեղ Աշիշատի մասին խօսք չկայ, բայց «յեկեղեցին գառնային» խօսքը Արտաշատին ևս չի վերաբերում, դի դառնալ բայը և յ օդը ուրիշ նշակէտ են ենթադրում և մի ծանօթ առարկայ. ապա այդ խօսքերով պէտք է հասկանանք միմիայն վաղարշապատն ու կաթուղիկէ եկեղեցին։ Արդէն Փաւստոսի ԺԴ գլխի ուշադիր ընթերցումն էլ համոզում է մեզ, թէ այդ պատմիչն էլ վաղարշապատի

կաթուղիկէն ընդունում է իբրև նախնիկղեցի, դլխաւոր սեղան։

5. Մեր եկեղեցու պատմութեան հնագոյն շրջանում ևս եղել են կուսակրօն և ամուսնաւոր հոգևորականներ, զի աշխարհ մանել կամ չամուսնանալ թողուած էր իւրաքանչիւր անհատի ազատ կամքին։ Նախնաբար այսպէս էր նաև բովանդակ քրիստոնէական եկեղեցու մէջ. ամուսնաւոր լինում էին ոչ միայն քահանաներ, այլ և եպիսկոպոսներ։ Բայց այս խնդրի նկատմամբ հետզհետէ եղան նոր կարգադրութիւններ և յատկապէս բարձր հոգևորականի արգելուեցաւ ձեռնադրուելուց յետոյ ամուսնանալ, թէպ սակաւապ դառնալիս յայտնած չէր, որ ուղում է կարգուիլ (Անկ. ժող. 314. կ. 10)։ Ջնայելով այս արգելքին՝ ամուսնաւոր եպիսկոպոսներ զբաղեալ գոյութիւն ունէին. Նիկիոյ ժողովի մէջ (325 թ.) խօսք եղաւ ստիպողական զբաղնել անամուսին կեանքը. բայց ժողովը ընդունելով հանդերձ քրիստոնէական ամուսնութիւնն իբրև եկեղեցու խորհուրդ և միւս կողմից էլ Պօղոս առաքեալի խօսքը թէ «պատուական է ամուսնութիւն և սուրբ են անկողինք», իւրաքանչիւր անձի կամքին թողեց աշխարհական վիճակից հոգևորականն դառնալիս ընտանիքից հրաժարուիլ կամ ոչ (Մակր. Ա. ժա.)։

Բայց եկեղեցականների ամուսնաւոր կեանքի դէմ եղած հակառակութիւնը չդադարեց. դլխաւոր հակառակորդներից մէկն էր Սեբաստիոյ Եւստաթիոս եպիսկոպոսը, որ բազմաթիւ հետևողներ ունեցաւ և մեծ շփոթութիւն առաջ բերեց։ Եւստաթիոսի ծայրայեղ կարծիքների առիթով գումարուեցաւ Գանգրայի ժողովը (360—370 թ.), որ պաշտպանեց ամուսնական կեանքի օրինաւորութիւնը և խիստ պատիժներ սահմանեց կնաթողների համար։ Գանգրայի ժողովի որոշման արձագանգ է և երկրորդ առաքելական կոչնաւածի հինգերորդ կանոնը, որ պատիժ է սպառնում երկիւղածութեան պատրուակով իրենց կնոջ արձակող հոգևորականներին։ Դալով մեր եկեղեցու պատմութեան, տեսնում ենք՝ որ Գրիգոր Լուսաւորիչն իւր կնոջից բաժանուած էր, երբ եպիսկոպոս դարձաւ։ Արիստակէսը չամուսնացաւ, իսկ Վրթանէսը, Յուսիկն ու Ներսէսը կաթուղիկոսացան իրենց կողակիցների մահուանից յետոյ։ Աղբիանոսեան տոհմի ներկայացուցիչներն ևս հաւանօրէն չէին ամուսնանում, և Մանազկերտի աթոռը լոկ իբրև տոհմական սեպհականութիւն ժառանգաբար անցնում էր։ Բայց եղել են և ամուսնաւոր եպիսկոպոսներ՝ինչպէս Փառէն կաթուղիկոսը, Մաշ եպիսկոպոսը, որոնք ունեցել են և զաւակներ, թէև դարձեալ կարելի չէ ճշտել նրանց ընտանեկան կեանքի ժամանակը։ Ինչ և իցէ՝ ե դարից սկսած սովորութիւն ու կանոն դարձաւ, որ բարձրաստիճան եկեղեցականներն անամուսին լինին։

6. Առաքելական դարում եկեղեցին պահպանվում էր հաւատացեալների կամաւոր նուէրներով, որոնցով հոգացւում էր թէ առաքեալների և թէ աղքատ հաւատացեալների պիտոյքը։ Նուիրատուութիւններ հաւաքվում էին սովորաբար ամէն կիրակի հաղորդութիւնից յետոյ և հաւաքուածը յանձնվում էր երէցին կամ եպիսկոպոսին ի տնօրէնութիւն։ Առաքելական դարի այս սովորութիւնը շարունակուեց Բ, Գ. և Դ. դարերում. նուէրներ լինում էին ոչ միայն բնական բերքով (կաթ, մեղր, խունկ, ձէթ, բուրդ, հաց, գինի եև.) այլ և դրամով։ Դ դարում երբ եկեղեցիների թիւը բազմացաւ, եկեղեցու բազմաթան պէաքերը հոգալու համար արևելքի եկեղեցիներում սահմանուեցան պտղի կամ երեխայրիք և տասանորդ կոչուած տուրքերը։ Բոլոր արդիւնքը, ինչպէս ասացինք, յանձնվում էր եպիսկոպոսին և սա իւր սարկաւագների ձեռքով մասն էր հանում կարօտեալներին և եկեղեցու իւրաքանչիւր սպասաւորին (Անկ. 15. Ան. 24. 25. Բ-առաք. 3. 4. և այլն)։ Ընդհանուր եկեղեցու մէջ գործադրուող խնամարկութեան այս ձևերը մեր եկեղեցու մէջ ևս մասն Լուսաւորչի ձեռքով ինչպէս Փաւստոսը պարզ յիշում է (Փաւստ. Ե. լա.)։ Եկեղեցականների կեանքի աւելի մեծ ապահովութիւն այն հողերն էին, որոնք երբեմն հայ մեհեաններին էին պատկանում և ապա եկեղեցուն նուիրուեցան «յաւտեսս»։ Մեհենական հողեր չեզած տեղերում ևս Տրդատի հրամանով՝ ասաններում իւրաքանչիւր եկեղեցականի յատկացուեցաւ եօթ տան բաժին հող, իսկ գիւղերում չորս տան բաժին հող, որ յետոյ Պապ թագաւորը կրճատեց։ Իբրև հայ եկեղեցու գլուխ՝ ս.Գրիգորն ու իւր տոհմը ստացան հարուստ կալուածներ 15 գաւառների մէջ ինչպէս՝— Այրարատ,Դարանաղի, Եկեղեաց, Տարօն (Աշխշատ), Բզնունիք, Ծոփք և այլն։ Աղբիանոսեան տոհմն էլ ստացաւ Մանազկերտից գաւառը, իսկ Որդուներացը—Բասենի եպիսկոպոսը։ Ժամանակի ընթացքում եկեղեցու հողային կալուածները հետզհետէ ընդարձակուեցան նորանոր նուիրատուութիւններով. այսպէս Մանուէլ Մամիկոնեանի մասին պատմութիւնն ասում է, թէ «իւր ունեցածից շատ բան տալիս էր եկեղեցիներին ու վանքերին, շատ գանձեր տալիս էր եպիսկոպոսներին»։ Իննակնեան վանքի համար ասվում է, թէ նա 12 հարուստ ումեծ գիւղ ունէր (Ջենոբ)։ Եկեղեցու այս ապահովութիւնն էր պատճառ, որ շատերն եկեղեցական դառնալ էին ձգտում, թող որ եկեղեցական դարձողն ազատվում էր «ի հարկատուութենէ իշխանաց»։ Ե դարում պարսիկներն աշխատեցին եկեղեցականներին էլ հարկատու դարձնել։

7. Եկեղեցականների զգեստն երկայն պճղնաւոր (պարեգօտ) էր՝ այսօրուայ վերարկուն՝ միայն աւելի սեղմ. (Փաւստ. Զ. ը.), բայց Զաւէն կաթուղիկոսի օրով գործածական զբաղաւ գինուորական խոպարսիկների աշխատեցին եկեղեցականներին էլ հարկատու դարձնել։

հանդերձ կամաւոր նուէրներով, որոնցով հոգացւում էր թէ առաքեալների և թէ աղքատ հաւատացեալների պիտոյքը։ Նուիրատուութիւններ հաւաքվում էին սովորաբար ամէն կիրակի հաղորդութիւնից յետոյ և հաւաքուածը յանձնվում էր երէցին կամ եպիսկոպոսին ի տնօրէնութիւն։ Առաքելական դարի այս սովորութիւնը շարունակուեց Բ, Գ. և Դ. դարերում. նուէրներ լինում էին ոչ միայն բնական բերքով (կաթ, մեղր, խունկ, ձէթ, բուրդ, հաց, գինի եև.) այլ և դրամով։ Դ դարում երբ եկեղեցիների թիւը բազմացաւ, եկեղեցու բազմապան պէաքերը հոգալու համար արևելքի եկեղեցիներում սահմանուեցան պտղի կամ երեխայրիք և տասանորդ կոչուած տուրքերը։ Բոլոր արդիւնքը, ինչպէս ասացինք, յանձնվում էր եպիսկոպոսին և սա իւր սարկաւագների ձեռքով մասն էր հանում կարօտեալներին և եկեղեցու իւրաքանչիւր սպասաւորին (Անկ. 15. Ան. 24. 25. Բ-առաք. 3. 4. և այլն)։ Ընդհանուր եկեղեցու մէջ գործադրուող խնամարկութեան այս ձևերը մեր եկեղեցու մէջ ևս մասն Լուսաւորչի ձեռքով ինչպէս Փաւստոսը պարզ յիշում է (Փաւստ. Ե. լա.)։ Եկեղեցականների կեանքի աւելի մեծ ապահովութիւն այն հողերն էին, որոնք երբեմն հայ մեհեաններին էին պատկանում և ապա եկեղեցուն նուիրուեցան «յաւտեսս»։ Մեհենական հողեր չեզած տեղերում ևս Տրդատի հրամանով՝ ասաններում իւրաքանչիւր եկեղեցականի յատկացուեցաւ եօթ տան բաժին հող, իսկ գիւղերում չորս տան բաժին հող, որ յետոյ Պապ թագաւորը կրճատեց։ Իբրև հայ եկեղեցու գլուխ՝ ս.Գրիգորն ու իւր տոհմը ստացան հարուստ կալուածներ 15 գաւառների մէջ ինչպէս՝— Այրարատ,Դարանաղի, Եկեղեաց, Տարօն (Աշխշատ), Բզնունիք, Ծոփք և այլն։ Աղբիանոսեան տոհմն էլ ստացաւ Մանազկերտից գաւառը, իսկ Որդուներացը—Բասենի եպիսկոպոսը։ Ժամանակի ընթացքում եկեղեցու հողային կալուածները հետզհետէ ընդարձակուեցան նորանոր նուիրատուութիւններով. այսպէս Մանուէլ Մամիկոնեանի մասին պատմութիւնն ասում է, թէ «իւր ունեցածից շատ բան տալիս էր եկեղեցիներին ու վանքերին, շատ գանձեր տալիս էր եպիսկոպոսներին»։ Իննակնեան վանքի համար ասվում է, թէ նա 12 հարուստ ումեծ գիւղ ունէր (Ջենոբ)։ Եկեղեցու այս ապահովութիւնն էր պատճառ, որ շատերն եկեղեցական դառնալ էին ձգտում, թող որ եկեղեցական դարձողն ազատվում էր «ի հարկատուութենէ իշխանաց»։ Ե դարում պարսիկներն աշխատեցին եկեղեցականներին էլ հարկատու դարձնել։

7. Եկեղեցականների զգեստն երկայն պճղնաւոր (պարեգօտ) էր՝ այսօրուայ վերարկուն՝ միայն աւելի սեղմ. (Փաւստ. Զ. ը.), բայց Զաւէն կաթուղիկոսի օրով գործածական զբաղաւ գինուորական խոպարսիկների աշխատեցին եկեղեցականներին էլ հարկատու դարձնել։

ըուած էր։ Իշխանների սովորութեան համեմատ ընդհանուր գործածութիւն ստացան եկեղեցականների մէջ ևս թանկագին մորթիներ, որ իբրև մեռելոտի կենդանու միացորդ ընդունելի չէր։ Ջինուորական տարազի գործածութիւնը Դ դարում ոչ միայն հայոց, այլ և յունաց և ասորոց եկեղեցականների մէջ ևս եղել է և Ա. Առաք. Ջ. կանոնն արգելում է, մանաւանդ որ զինուորական դասակարգը միշտ անարգ է համարուել եկեղեցու աչքում։ Մեր մէջ զինուորական ձևի գործածութիւնը միմիայն Աղբիանոսեան տան կաթուղիկոսներին էր յատուկ, մինչդեռ Լուսաւորչի տոհմը հին պարեգօտն էր գործածում, որը և տիրող դարձաւ յաջորդ դարերում։

8. Քրիստոնէութեան հաստատուելովը Հայաստանում քաղաքական իշխանութեան կողքին կազմակերպուեցաւ մի ուրիշ հոգևոր իշխանութիւն, ճոխ ու ազդեցիկ։ Հայոց պատմութեան Դ դարը պատկերացնում է մեզ այս երկու իշխանութիւնների մաքառումները, որոնց շարժառիթը գիտնալ բնականաբար շատ կարևոր է։ Տրդատի և իւր որդու Խոսրովի պատմութիւնը եկեղեցական ու աշխարհական իշխանութեան համերաշխ գործունէութիւնն է պատկերացնում. բայց Տիրանից սկսած հակառակութիւն է զարթնում դէպի բարձրագոյն հոգևորականութիւնը՝ յատկապէս դէպի Լուսաւորչի տոհմը։ Այդ հակառակութիւնն աւելի որոշ գոյն է ստանում Արշակի ու Պապի օրով։ Ներքին գժտութեան գլխաւոր պատճառներից մէկն այն հոգային հարստութիւնն էր, որ հոգևորականութիւնն ունէր, և որը աշխատից Պապ թագաւորը չեր խլել։ Այս տեսակէտով չթշնամութիւն բացատրում արտայայտից Գրիգ հայր մարդպետը՝ երբ Տարօնի Աշտիշատում էր գտնւում և յափշտակուած տեղի գեղեցկութիւնից բացականչից. «Զիմիրդ զայսպիսի տեղիս կանանցահանդերձ մարդկան տուեալ է և ոչ արանց» (Փաւստ. Դ. գժ.)։ Երկրորդ պատճառ այն յանդիմանական ուղղութիւնն էր, որ Լուսաւորչի տան շառաւիղները բարոյական հեղինակութեամբ գործադրում էին թագաւորների ու իշխանների վերաբերմամբ։ Այս յանդիմանութիւնները բնականաբար պէտք է վիրաւորուած սրտեր գրգռէին Լուսաւորչի տան դէմ և թշնամութիւն առաջ բերէին. այսպիսի ընթացքից Աղբիանոսեան կաթուղիկոսները միշտ խուսափում էին։ Թշնամութեան երրորդ պատճառ այն միջամտութիւնն էր, որ հայ կաթուղիկոսները յաճախ գործում էին թագաւորների ներքին կարգադրութիւնների մէջ, որից Աղբիանոսեան կաթուղիկոսները նոյնպէս խուսափում էին։ Թէ Արշակը և թէ Պապը միշտ աշխատեցան կենդրոնական իշխանութիւնը զօրացնել. այս նպատակին հասնելու համար նրանք գործ դրին խիստ միջոցներ—սպանութիւն, յափշտակութիւն և այլն։ Արդ՝ Լուսաւորչի տան կաթուղիկոսները՝ թէ

և միշտ պաշտպան հայոց թագաւորական իշխանութեան, հաշտ աչքով կարող չէին նայել՝ բարոյական տեսակէտից՝ այդպիսի եղեռնագործութիւնների վերայ և սկսան հակառակութիւն ցոյց տալ թագաւորներին, որով մի կողմից նրանց բարկութիւնը շարժել, միւս կողմից էլ՝ նպաստել նախարարական իշխանութեան զօրացման։ Վերջապէս Լուսաւորչի սերունդը միշտ ձգտում էր կապ պահպանել յունաց եկեղեցու հետ, որից ընդհանրապէս խուսափում էին հայ թագաւորները։ Բայց հայոց պատմութիւնը շեշտում է նաև այն ջանքերը, որ գործ դրին մեր հայրապետները թագաւորական իշխանութիւնն իւր գլուխումից ազատելու համար։ Զանազան ներքին ու արտաքին հզօր պատճառների շնորհիւ հայոց քաղաքական իշխանութիւնը ե դարում ընկաւ և այնուհետև հայ ազգին իրրև միակ յենակէտ հոգևոր իշխանութիւնը մնաց և ինչ որ քաղաքականը չկարողացաւ գլուխ բերել—համազգայնական միութիւն—նոյնը եկեղեցին կատարեց իւր կենդրոնական իշխանութեամբ, իւր պաշտամունքի, դաւանութեան, լեզուի ու գրականութեան միութեան միջոցով։

Գ. յօդուած.

ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ, ՏՕՆԵՐ ԵՒ ԱՅԼՆ.

1. Երբ Դ դարի սկզբում քրիստոնէութիւնը Հայաստանում քաղաքական կրօնք դարձաւ, բնականաբար եկեղեցիներ ևս շինուեցան հաւատացեալների հոգևոր պէտքերի և ազօթելու համար։ Պատմութիւնը հաստատապէս եկեղեցիների շինութիւնը ս. Լուսաւորչին է վերագրում, ինչպէս օր. ս. Կաթուղիկէի (Էջմիածնի) և միւս վկայարանների շինութիւնը, բայց նոյն պատմութիւնը միանգամայն աւելացնում է, թէ Լուսաւորիչը շատ տեղերում նախնական մնհեանները յանուն աստուածութեան սրբից և գարձրից «ատեն ազօթից և տեղի ուխտից (Փաւստ. Գ. ը.)։ Կատարուած ուսումնասիրութիւնները (Թ. Թորոմ.) հաստատում են, որ ինչպէս հայոց հին մեհեաններն, այսպէս նաև Դ և ե—դարի եկեղեցիներն երկայն քառակուսի բազիլիքի նման շինութիւններ են եղել՝ ունենալով արևելեան կողմից դուրս ցցուած ուղղանկիւն խորշ, որ ապա ե դարում բոլորակ է դարձել (abside) խաչական բազիլիքների օրինակով։ Նախնաբար նոքա գմբէթ ևս չեն ունեցած, բայց ե դարի սկիզբները կաթուղիկէն ունեցել է վայ-

տաշէն գմբէթ հաւանօրէն արդի ձեւով։ Եկեղեցու ներքին բաժանմունքը այն ժամանակներում ևս այնպէս էր, ինչպէս այժմ. ժողովրդական կանգնելու տեղից մի աստիճանով ու վանդակով բաժանուած էր քահանայական դասը, ուր իրաւունք ունէին մտնելու միմիայն քահանաները, ևս և հաւատացեալ թագաւորները (Ա. առաք. 29) և ուր գտնւում էին թէ եպիսկոպոսի և թէ քահանաների աթոռները։ Քահանայական դասումն էր սեղանը, նոյնպէս մի աստիճան բարձր, որ նախնադար վայտեղէն էր լինում և այժմուայնման ունէր երկու վարագոյր (վերլուծ. Մայրգ)։ Եկեղեցում ժողովրդի մէջ կարգ ու կանոն պահպանողը, ապաշխարողներին ու երեխաներին պատարագից դուրս գալու ժամանակն որոշողը սարկաւագն էր լինում։

Դ և Ե դարի նախնական հայ եկեղեցիները ունէին նաև շուրջանակի սիւնազարդ ծածկոյթներ՝ հրէից տաճարի հեթանոսաց գաւթի նման և այդ ծածկոյթները (portique) սահմանուած էին ապաշխարողների ու երեխաների համար, որոնք հաւատացելոց պատարագի ժամանակ սարկաւագի ձեռով եկեղեցուց դուրս կը հանուէին. (առ դրունս ելէք և աղօթեցէք). բայց որովհետև ցրտի պատճառով դժուար էր ապաշխարողներին այդպիսի սիւնազարդ ծածկոյթների մէջ մնալ՝ այդ պատճառով էլ վերջերն աւելորդ տեսնուեցան այդպիսի ծածկոյթներ շինել՝ է դարից սկսած. վերջերը միայն տեղ տեղ գաւիթներ են շինուել։ Դ դարից արդէն սովորութիւն է եղել եկեղեցիները զարդարել մարտիրոսների և հին կաթոլիկոսների պատկերներով։ Այս կէտի մասին բացորոշ ակնարկութիւն ունինք է դարից, երբ մեր երկրում հակապատկերական շարժումներ առաջացան, և առարկողներ եղան, թէ պատկերները մեր եկեղեցիներում Պապ թագաւորի օրով, անշուշտ մեծն Ներսէսի ձեռքով են մտել, որ մեր եկեղեցին ընդհանուր քրիստոնէական եկեղեցու կարգերով կազմակերպէց։ Եկեղեցու որմների վրայ՝ յունաց սովորութեան համեմատ հայրապետների պատկերները նկարելու սովորութիւնն ևս կար և այս կէտի նկատմամբ բացարձակ վկայութիւն ունինք Յովհաննէս պատմաբանի մօտ (Ժ դար)։

Երևի արդէն այս Դ և Ե դարում կար ժամատար հաւատացեալներին աղօթքի հրաւիրելու համար։ Ժամատարի բացարձակ յիշատակութիւն է դարում կայ, որից կարելի է մակաբերել, թէ նախընթաց դարերում ևս եղել է։

Եկեղեցու մօտ գտնւում էին գնակարաններ, ուր քահանաները էին մնում. կար և առանձին մկրտատուն։

Ջ. Եկեղեցական տօներն ու պաշտամունքները Դ դարում մեծ շքեղութեամբ էին կատարվում, ինչպէս որ Փաւստոսը մի քանի անգամ շեշտելով ասում է։ Տօներից մանաւանդ շքեղութեամբ տօնվում էր

Բագրեւանդ գաւառում Յովհաննու Մկրտչի տօնը—հայոց մկրտութեան տարեդարձը, որին ներկայ էին լինում թագաւորն ու նախարարները, ինչպէս երբեմն հեթանոսութեան ժամանակ Ամանոր ատուծոյ տօնին։

Իբրև սրբազան օր արդէն Դ. դարում վերջնականապէս հաստատուած էր կիւրակէն, և եկեղեցին այդ գարում հրէաբար շաբաթ օրը սուրբ պահողներին դատապարտում էր։

Եկեղեցական տօներից ամենահնագոյնը Զատիկն է, որ առաքեալների ժամանակներից արդէն կատարվում էր։ Բ և Գ դարում այս տօնի ժամանակի նկատմամբ երկար վէճեր եղան արևելքի ու արևմուտքի միջև։ Փոքրասիացիք Նիսան ամսի 14-ին, հրէից Զատկին, (ելից ԺԳ. 4) զատկական գառն էին ուտում և ապա երրորդ օրը, ինչ օր էլ հանդիպէր, Յարութիւնն էին տօնում. իսկ Արևմուտքը Զատկի տօնը միշտ կիրակի էր տօնում։ Այս խնդիրն արծարծուեցաւ Նիկիոյ ս. տիեզերական ժողովի մէջ և որոշուեցաւ՝ Զատիկը չտօնել հրէից հետ, այլ այն կիւրակէն, որ գալիս է գարնան լուսնի լրումից յետոյ։ Այս կանոնն ընդունեցին Արևելքի եկեղեցիները, և այդպէս էլ խնդիրը փակուեցաւ։ Զատկի նախընթաց շաբաթը (աւագ շաբաթ) առանձին հանդիսաւորութեամբ էր անցվում. աւագ հինգշաբթի օրը երեկոյեան պատարագ էր մատուցվում, իսկ «մեծ շաբաթ» գիշերը հաւատացեալները կանթեղներով (ճրագալոյց) եկեղեցի էին գնում՝ ամբողջ գիշերը հրսկմամբ անցընելու համար (Փարպ. ԺԷ. 89)։

Զատկից յետոյ օր յետոյ, նախնական ժամանակներից կատարվում էր Պենտեկոստէն՝ ս. Հոգու գալստեան յիշատակը (Ա. առաք. Ժ.)։ Համբարձման ու Պայծառակերպութեան տօները Դ. դարից վերջը մտան։

Այս երկու տօների համեմատութեամբ աւելի նախաժամանակ է, և Դ. դարում վերջնականապէս հաստատուած, Քրիստոսի Ծննդեան ու Մկրտութեան տօնը՝ Աստուածայայտնութիւն անունով։ Մկրտութեան տօնը նախ արևելեան եկեղեցիներում սկսաւ կատարուել և այն յունուարի 6-ին, իսկ յետոյ նոյնն արևմուտք անցաւ. Ծննդեան տօնն ընդ հակառակը՝ նախ արևմուտքում սկիզբն առաւ, ապա արևելք անցաւ և մկրտութեան տօնին հետ միանալով Աւետարանի վկայութեան համեմատ (Ղուկ. Գ. 23) միևնոյն օրը յունուարի 6-ին տօնուեցաւ. 375 թուերից Հռոմի եկեղեցու սովորութեան համեմատ յունական եկեղեցին ևս այս տօները բաժնեց՝ որոշելով Ծնունդը դեկ. 25-ին, իսկ Աստուածայայտնութիւնը յունուարի 6-ին կատարել։ Հայոց եկեղեցին արևելքի հին սովորութիւնը՝ որ շեշտուած է նաև Առաք. կանոնների մէջ (Կ. 7.) անփոփոխ պահից մինչև այսօր։

Դ դարում կատարվում էին և ուրիշ սրբոց—Յովհաննէս Կարապե-

ան, Աթանագինէի, Գրիգոր Լուսաւորչի, Տրդատի, Գրիգորիսի, Գայիանէի, Հռիփսիմէի, Թադէոսի, առաքեալների, Ստեփանոսի և ուրիշ մարտիրոսների—ծոներ։ Վրթանէս հայրապետը յատկապէս սահմանից ծօնել այն անձանց յիշատակը, որոնք իրանց զոհում էին հայ եկեղեցու և ազգի համար. և նա առաջինը սահմանեց Վաչէի և նորա ընկերների ծօնը՝ պատուիրելով միանդամայն այդպիսիների անունը պատարագի ժամանակ յիշատակել։ Ընդհանրապէս մարտիրոսաց ծօներ Դ դարում բազմացան, և նրանց յիշատակը մեծ շքեղութեամբ էր կատարվում։ Նրանց ծօնի օրը պատարագ էր մատուցվում և հանդիսական ճառով փառաբանվում էին։ Սրբոց մասունքներ թէև տեղափոխվում էին, բայց այդ մասունքները սովորաբար ամփոփվում էին մի տեղ և նրանց վրայ վկայարան կամ մատուռ էր շինվում։ Ծօների նախընթաց իրիկունը հանդիսի էր կատարվում։

3. Բացի կիւրակէից քրիստոնէական եկեղեցու մէջ սուրբ էին համարվում չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ օրերը. առաջին երկուսն իբրև չարչարանաց օրեր, իսկ շաբաթը իբրև նախամուտ կիրակի օրուան։ Այդ օրերում պատարագ էր մատուցվում. (Ա. առաք. Գ. Դ. Լաւդ. Գանգր)։ Չորեքշաբթի և ուրբաթ օրերը նաև պաս էր, ինչպէս և այժմ։ Մինչև Դ դար Զատկից առաջ ևս պաս էր պահվում, մէյն թէ ոչ միայար. ոմանք մի օր էին պահում, ուրիշներն աւելի. Դ դարում այդ պահքը 36 կամ 40 օր դարձաւ (Ա. առաք. Ը) և ապա աւելի ևս երկարացաւ։ Ինսա պահեցողութիւնը լինում էր աղ ու հացով, (ժէ 88 Փարպ.)։

4. Աստուածային պաշտամունքն ամէն առաւօտ և երեկոյ կատարվում էր, իսկ վանքերում՝ ութն անգամ։ Պաշտամունքի ժամանակ Դաւթի սաղմոսներն էին երգվում փոխ առ փոխ. կարդացվում էին նրա մանաւանդ ս. Գրքից հատուածներ և քարոզ խօսվում։ Մեր երկրում այս բոլորը կատարվում էր ասորերէն կամ յունարէն, քանի որ հայերէն գրեր չկային ու ս. Գիրքը հայերէն թարգմանուած չէր։ Բայց կային թարգմանիչներ (մեկնիչներ), որոնք ժողովրդին հայերէն բացատրում էին ընթերցուածներն ու սաղմոսները։ Աղօթքները սովորաբար կանգուն էին կատարում. իսկ ապաշխարողները—գետնատարած. Նիկիոյ ժողովի 20-րդ կանոնն արգելում է կիրակի և յինանց օրերը ծունր դնել աղօթքի ժամանակ։—Աստուածպաշտութեան էական մասը կազմում էր պատարագը, որ Դ դարում մատուցվում էր Դշ. Ուրբ. Շաբ. և կիրակի օրերը։ Այդ դարում Բարսեղ Կեսարացին կազմեց իւր պատարագամատոյցը, որ իւր էական մասերով յիշեցնում է նախընթաց դարերի պատարագը, ինչ որ ծրագրուած է Յուստինոսի, կիւրեղի և Առաքելական Սահմանադրութեան մէջ։ Պատարագը բա-

ժանվում էր երկու մասի՝ նախապատրաստական և հաւատացեալոց. առաջինի էական մասը կազմում էին սաղմոսներ, ընթերցմունքներ և քարոզ, որից յետոյ երեխաները (չմկրտուածները) եկեղեցուց դուրս էին գալիս։ Պատարագի խորհուրդը կատարվում էր բաղարջ հացով ու անապակ գինով (Ա. առաք. լը. Փաւստ. Ե. իը), ինչպէս մինչև այժմ մեր եկեղեցին կատարում է։ Ամէն պատարագի (շաբաթը 4 անգամ) հաւատացեալները հաղորդվում էին, բայց ապա թողուեցաւ իւրաքանչիւր անհատի խղճին ու պատրաստութեան։ Հաղորդութիւնը կատարվում էր երկու տեսակով՝ առանձին-առանձին։ Պատարագն առաքելական դարում կատարվում էր ամէն օր և երեկոյեան, իսկ Բ դարից սկսած սովորութիւն դարձաւ առաւօտները կատարել. մինչև այժմ էլ մեր եկեղեցում ըստ հին սովորութեան Ծննդեան և Զատկի ճրագալոյցին երեկոյեան է պատարագվում։ Պատարագից յետոյ՝ բոլոր հաւատացեալները միասին սեղան էին նստում և ընթրում, որ Սիրոյ ընթրիք, ագապէ էր կոչվում։ Այդ ընթրիքի համար իւրաքանչիւր հաւատացեալ բերում էր, ինչ որ կարող էր։ Նախնաբար այդ ճաշն եկեղեցում էր կատարվում, բայց ապա արգելուեցաւ (Գանգ. 11. Լաւ. 28)։ Այդ նախնական ագապն է, որ այժմ էլ մեր եկեղեցում մնացել է մատաղ անունով, թէև փոքր ինչ փոխուած ձևով։

5. Եկեղեցու ևօթը խորհուրդներն էապէս նոյն էին և այս շրջանում։ Մկրտութիւնից առաջ կատարվում էր հրաժարեցման կարգը և ապա բուն խորհուրդը երեք անգամ ընկղմամբ և այն՝ ծննդից 8 օր յետոյ (Ա. առաք. ժդ.)։ Այս ժամանակներից արդէն կար կնքահայրութիւն, որի պարտքն էր հոգացողութիւն ունենալ սանի հոգևոր դաստիարակութեան վրայ։ Մկրտութեան ժամանակ գործ էին ածում մոմեր և աղ։ Բացի միւռոնով դրոշմելուց՝ գործ էին դնում նաև մկրտութեան ձէթ կոչուածը, որը մինչև ԺԱ. դար գոնում ևնք մեր մէջ։

Մեր երկրում ևս կային մեծահասակ չմկրտուողներ, որոնք երեխայ էին կոչվում. այսպիսիները մկրտվում էին գետերի մէջ և սպիտակազգեստ՝ վառուած լապտերներով եկեղեցի էին մտնում հաղորդուելու և ապա ճաշակում էին կաթ, մեղր և անուշ գինի, ի նշան Աւետեաց երկիրը մտնելնուն։ Շատերը չէին մկրտվում՝ ցանկանալով կամ Յորդանի մէջ մկրտուել, և կամ իրանց կեանքի վերջում, որ այս աշխարհից սրբուած հեռանան։ Երեխաներ մեր երկրում ոչ միայն Դ դարում, այլ և Ե դարում կային (Փաւստոս, Եղիշէ, պատրգմ.)։ Մկրտութիւնից անմիջապէս յետոյ կատարվում էր, ինչպէս և այժմ, դրոշմի խորհուրդը (Ագթ. 620)։

Պահքի խորհուրդի կատարման ձևը ճշդիւ յայտնի չէ, բայց իբրև եկեղեցական խորհուրդ կատարվում էր եկեղեցական օրինութեամբ, և

հարան անշուշտ քօղ էր ունենում (Փաւստ. Ե. լա)։ Որովհետև պատկն անուշծանելի էր, ուստի եկեղեցին պատժում էր այրաթողներին ու կնաթողներին։ Երկրորդ ամուսնութիւն ընդունուած էր։ Աշխիշատի ժողովի կարգադրութեան մէջ տեսանք, թէ ինչ տեսակ ամուսնական զեղծումներ կային և թէ այդ առթիւ ինչ օրէնքներ սահմանուեցան։ Ամուսնութեան դէմ գործուած յանցանքների համար եկեղեցին պաշխարանք էր նշանակում։ Ընդհանրապէս յանցանքների համար— պատակերութիւն, սպանութիւն, յափշտակութիւն, պոռնկութիւն և այլն—եկեղեցու սահմանուած պատիժներն էին՝ նզովք, պահեցողութիւն, պաշխարանք և եկեղեցուց ու հաղորդութիւնից զրկում։ Պաշխարողները մի քանի կարգի էին բաժանվում՝ դրսի ու ներսի պաշխարողներ, կամ լացողներ և ունկնդիրներ, որոնց պաշխարութեան ժամանակն երկարելը կամ կարճելը թողուած էր ընդհանրապէս եպիսկոպոսի կամքին։

Դ. յօդուած.

ԱՆԱՊԱՏԱԿԱՆ ՈՒ ՎԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ.

Բարոյական կատարելութեան հասնելու ձգտումը մարդկութեան մէջ ամէն ժամանակ եղել է և կայ, և այդ պէս-պէս ուղղութիւններ է ստացել։ Այդ ուղղութիւններից մէկն է եղել ճգնաւորական ու անապատական կեանքը՝ յատուկ ոչ թէ միայն քրիստոնէութեան, այլ և աւելի հին արևելեան կրօններին (բուդդայականութեան) ու հրէութեան. Քրիստոնէութեան առաջին դարում կատարելութեան ձգտող անհատները չէին բաժանվում մարդկային հասարակութիւնից, այլ մխիթարչական աղքատիկ կեանքի, սրբութեան, պահեցողութեան ու աղօթքի էին նուիրվում և այսպիսի անհատներ ճգնաւոր (аскетъ) էին կոչվում։ Երրորդ դարում այսպիսի անհատներ հալածանքների պատճառով և կամ յօժարակամ հեռանում են մարդկային ընակութիւններից, քաշվում են անապատներ և այնուհետև կոչվում են անապատական կամ միայնակեաց։ Անապատական կեանքն էլ 340 թուերին կերպարանափոխվում է եգիպտոսում, և Պաքոմիոսի ձեռքով (293—346 թ.) ակիզբն է դրվում վանական կեանքի, որ ապա ընդհանրանում է ամենուրեք։

Անապատական կեանքը մեր երկրի մէջ Դ դարում բաւական զարգացած էր, ինչպէս Փաւստոսն է նկարագրում։ Բայց Դ դարից էլ շատ

վաղ նոյնը կար Հայաստանի հարաւային մասերում, ուր լեռներում ապրում էին Ոսկիք (խոտաճարակ) կոչուած ճգնաւորները, որոնց հետևող ու աշակերտ դարձան Սուքիասեանք։ Երբ ս. Գրիգորը հայոց եկեղեցու կազմակերպութիւնը պլուխ բերից, իւր կեանքի վերջերում նոյնպէս ճգնութեան նուիրուեցաւ Եփրատի մօտ Ոսկիք կոչուած տեղում կամ Սեպուհ լերան այրում, ուր և վախճանեցաւ։ Նրա օրինակին հետևեց Դանիէլ ասորին, որի ճգնութեան մասին մեծ յափշտակութեամբ է խօսում Փաւստոս Բիւզանդը։ Դանիէլն ունեցաւ բազմաթիւ աշակերտներ—Շաղիտա, Եպիփան և Գինդ. այս վերջինս էլ, որին բովանդակ Հայաստանը վարդապետ էր կոչում, ունեցաւ նոյնպէս շատ հայ հետևողներ։ Սոցա կեանքը հետևեալ խօսքերով է պատկերացնում Փաւստոսը. «Աստուծու սիրուն համար աշխարհից հեռացած էին, միահանդերձ, բոկագնաց, խոտաճարակ. այծի մորթ հագած՝ լեռներում էին շրջում. չարչարուելով ցրտից, տօթից, քաղցից ու ծարաւից»։ Իսկ նրանց արդիւնքը հայ ժողովրդի համար՝ այսպէս է որոշում. «Շատ մարդիկ ճշմարիտ կեանքի գիտութեան էին բերում ու ճշմարտութեան ճանապարհը հանում»։ Այս կողմից մանաւանդ նշանաւոր հանդիսացաւ Տարօնեցի Գինդը։ Անապատական կեանքը մեր երկրի մէջ յաջորդ դարերում ևս շարունակուեցաւ, և շատերը, հրապարակական գործունէութիւնից առաջ, իրանց անձը ճգնական խստութիւններով էին ճնշում։

Ինչպէս ասացինք, միայնաւորական կեանքը Դ դարում փոփոխութիւն կրեց Պաքոմիոսի ձեռքով, որ հրեշտակից հրաման ստացաւ առանձնարնակ կրօնաւորներին միասին խմբել և իւրաքանչիւրին իւր կարողութեան ու շնորհքին համեմատ գործ տալ։ Այսպէս սկիզբն առաւ վանական կեանքը Եգիպտոսում, որտեղից անցաւ Ասորիք և ապա Փոքր Ասիա՝ 350 թուերին Եւստաթիոս Սեբաստացու ձեռքով։ Այս ժամանակներում ևս վանական հաստատութիւնները մուտք են գտնում նաև մեր երկիրը մեծն Ներսէսի ձեռքով։ Ազգային աւանդութիւնը հայ վանքերի հաստատման թուականը աւելի հնացնում է՝ դնելով քրիստոնէութեան ա. դարում շինուած Հոգեաց Վանքը, իսկ Լուսաւորչին էլ վերագրելով վանական կանոններ (Յաճախապատում. ճառ։ իգ), Սակայն այս լոկ աւանդութիւն է. Լուսաւորչի անունով ճեացած վանական կանոններն ուրիշ բան չեն, եթէ ոչ Բարսեղ Կեսարացու վանական կանոններից քաղուածք, իսկ Բարսեղը 370—375 թուից յետոյ Եւստաթիոսի հաստատած վանքերին աւելի որոշ կազմակերպութիւն տուեց։ Թէ ինչ վանքեր շինեց մեծն Ներսէս և որքան, յայտնի չէ. աւանդութիւնն ասում է թէ շինեց 2000 վանք, իսկ Փաւստոսը—թէ յարմարաւոր տեղերում վանքեր շինեց և նրանց մօտ ասորի և յոյն լեզուների դպրոցներ։ Վանականների կեանքը շատ խիստ էր. նը-

բանք ապրում էին լոկ հացով ու ջրով (Փաւստ. Ե. իբ)։ Արաբական վանքերից զատ հիմնից մեծն Ներսէսը և պարսպապատ կուսանոցներ։ Անտարակոյս հայ վանքերն ընդունեցին մեծն Բասեղի կանոնները, որոնք ամփոփուած են «Հարցողաց» գրքի մէջ, և որոնք պարտաւորում են վանականներին գրական գործերով զբաղուել, աղքատներ ու որբեր խնամել (Յոր. Գ. ի)։ Ինչպէս ասացինք, այս կանոնների համառօտութիւնն ու նմանութիւնն է ներկայացնում և Յովհաննէս Մանդակունի 23-րդ ճառը։ Վանքերն այսպիսի կազմակերպութեամբ նշանաւոր դեր խաղացին մեր զարգացման պատմութեան մէջ. նրանք էին մեր լուսաւորութեան կեդրոնները, հայ դպրոցները։

Ը. յօդուած

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Ընդհանուր հայեացք ձգելով Դ դարի քրիստոնեայ Հայաստանի վրայ՝ տեսնում ենք, որ չնայելով եկեղեցականութեան գործ դրած եռանդին՝ հեթանոս հային քրիստոնէաբար կրթել, չնայելով Աշիշատի ժողովի դրած օրէնքներին, որով «հայոց աշխարհի բոլոր բնակիչներին վանական միաբաններ դարձնի՝ բացի միայն ամուսնութեան կողմից» (Փաւստ. 62), բայց և այնպէս այդ չանքերն ընդհանրութեան համար ապարդիւն անցան։ Այս երևոյթի պատճառը Փաւստոս պատմիչը հետևեալ խօսքերով է բացատրում. «Որովհետև հին ժամանակներից ի վեր, երբ հայերը քրիստոնեայ կոչուեցան, նրանք այդ կրօնն ընդունեցին իբրև մարդկային կրօն և ոչ թէ ջերմեռանդ հաւատքով. նրանք այդ կրօնը իբրև մարդկային մի մոլորութիւն ընդունեցին հարկից ստիպուած, բռնադատուած, և ոչ թէ ինչպէս պէտքն է գիտակցութեամբ. այսպէս ընդունեցին նրանք միայն, որոնք քիչ-շատ յունարէն կամ ասորերէն գիտէին. իսկ որոնք որ այս գիտութիւնը չունէին—սարուկների խառնիճաղանճ բազմութիւնը, ժողովուրդը, նախարարները կամ շինականները—շատ խեղճ էին. և եթէ վարդապետները գիշեր-ցերեկ յորդահեղեղ անձրևի նման իրանց քարոզութիւնը թափէին նրանց գլխին, նրանցից ոչ ոք և ոչ մէկ խօսք, և ոչ կէս խօսք և ոչ մի փոքր բան կարող էր հասկանալ, որովհետև նրանց միտքն անպիտան, անօգուտ բաներով միայն զբաղուած էր. նրանք իրենց կեանքը մաշում էին չնչին բաներ սովորելու, իրենց հին հեթանոսական սովորութիւն-

ները կատարելու, իրենց վիպասանական առասպելական երգերը սիրելու» և այլն։ Այս ընդհանուր նկարագիրը լուսաբանող փաստեր ևս բերում է Փաւստոսը և այն՝ թէ աշխարհականների և թէ հոգևորականների կեանքից։ Յուսիկ հայրապետի երկու որդիքն անառակ կեանքի կատարեալ մարմնացումն են, որոնք անպատկառ կերպով ծաղրում էին ամէն սրբութիւն։ Մրջիւնիկ երէցը պարզևի ակնկալութեամբ հաղորդութեան բաժակի մէջ թոյն է խառնում և թունաւորում Ողիմպիադա թագուհուն. Փառէն հայրապետի որդին՝ Յովհաննէս եպիսկոպոսը՝ արծաթասիրութեամբ խեղկատակութիւններ է կատարում թագաւորի արքունիքում, կամ բռնաբար տպէտներին քահանայ ձեռնադրում. Մուշեղ Մամիկոնեանի ազգականները տակաւին հաւատում են Աւէտիսների գոյութեան և նրա գլխակը բարձր աշտարակի վրայ դնում են, որ կենդանանայ և այլն և այլն։ Այս երևոյթը հարկաւ կարելի է բացատրել անով, որ դարերով հեթանոս ժողովուրդը կարող չէր միանգամից կերպարանափոխուել, որչափ և ջանք գործ դրուէր, բայց կային և այլ պատճառներ՝ ինչպէս ասելի ենք. գլխաւոր պատճառներից մէկը հոգևորականների մեծ մասի այլազգի լինելն էր, թէև հայերէնագէտ, և այն նաև որ ժողովրդի լեզուով եկեղեցական գրականութիւն չկար, որ եկեղեցու ժամասացութիւնը կատարվում էր ասորի կամ յոյն լեզուներով, որից ոչինչ չէր օգտվում հայ ժողովուրդը, ինչպէս նկատում է Փարպեցին, թէև ս. Գրքի ընթերցմունքները մայրենի լեզուով թարգմանուղներ ևս կային եկեղեցիներում։ Բարոյական կերպարանափոխութիւն հայ ժողովրդի մէջ մաու այն օրուանից, երբ սրբանափոխութիւն հայ ժողովրդի մէջ մաու այն օրուանից, երբ հանճարաշատ Մաշտոցի շնորհիւ հայերէն լեզուի տառերը յօրինուեցան, հայ դպրոցներ բացուեցան և հայ գրականութիւնը սկսուեցաւ այդ ժամանակից և քրիստոնէական եկեղեցին հայացաւ։

Գ. ՀԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԾՐԱՆ.

(387—551)

Ա. ԳԼՈՒԽ.

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ.

1. Երկու դրացի հզօր տէրութիւնների քաղաքական շահերի պատճառով երկփեղկուած Հայաստանը՝ վերջապէս նորէն միացաւ Խոսրով Գ-ի իշխանութեան տակ (385—389)։ Երկրի մէջ խաղաղութիւն հաստատելուց յետոյ՝ երբ Աստւածաբաշէս կաթուղիկոսը վախճանեցաւ, հոգևոր բարձրագոյն իշխանութիւնը Խոսրովը յանձնեց մեծն Ներսէսի որդուն Սահակին (387 թ.), որ 40—45 տարեկան էր և արդէն իսկ իւր կնոջից զրկուած։ Սահակ Պարթևը Բիւզանդիոնում ստացել էր կրթութիւն, քաջ հելլենագէտ էր և քաջ ճառախօս։ Հայրենիք դառնալուց յետոյ նա ամուսնացել ու եկեղեցական էլ դարձել. կնոջ մահուանից յետոյ՝ խստակրօն վանական՝ ունենալով 60 աշակերտ՝ ամէնքն էլ խարազնագլուխ ու երկաթապատ, որոնց հետ ոչ միայն մշտամռունչ Աստուածային պաշտամունք էր կատարում, այլ և շրջում էր գաւառից գաւառ և հայ ժողովրդի պէտքերը հոգում։ Ահա այս վիճակից կոչուեցաւ նա իբրև Լուսաւորչի շառաւիղ՝ հայոց հայրապետութեան աթոռը բաղմելու։ Բայց հայրենասէր Խոսրով Թագաւորի ձգտումներն հայ ազգի միութեան ու բարձրացման համար հաճելի չանցան մի քանի պարսկամոլ նախարարների, որոնք չյապաղեցին ամբաստանել Շապուհի առաջ, թէ Խոսրով «գաղտնի գաշինք ունի յունաց Թագաւորի հետ և նրա հետ միշտ թղթերով ու պատգամաւորներով յարաբերութեան մէջ է» և իբրև փաստ նրա յունասիրական ձգտումներին այն ևս բերում են, որ յունական կրթութիւն ստացած Սահակին կաթուղիկոս է կարգել։ Այս ամբաստանութիւնը Շապուհի յաջորդ Վռամի առաջ արժէք ունեցաւ. Խոսրով Թագաւորը Պարսկաստան կանչուելով Անյուշ բանդը ձգուեցաւ, իսկ Սահակ Պարթևը իր իշխանութիւնից 389 թ. զրկուեցաւ։ Բայց Խոսրովի անմիջական յաջորդ Վռամշապուհի ժամանակ (389—414) Սահակ Պարթև կրկին իւր իշխանութիւնը ստացաւ, երբ Պարսկաստան գնաց (390 թ.) և անձամբ տեսնուելով Վռամի հետ, ինչպէս իշխանութիւնը ստացաւ, այսպէս նաև իւր բոլոր խնդիրների

կատարումը։ Ահա այս ժամանակից (392 թ.) Սահակ կաթուղիկոսն ամբողջանալէս նուիրուեցաւ հայ ժողովրդի շահերին ծառայելու՝ հանճարեղ Մաշտոց—Մեսրովբ վարդապետի գործակցութեամբ։ Այս ամենահմուտ հայը Տարօն գաւառի Հացեկաց գիւղից էր, իշխանական տոհմից, մեծն Ներսէսի աշակերտ, և իբրև քաջ պարսկագէտ, յունագէտ ու ասորագէտ՝ Արշակ Գ-ի և Խոսրով Գ-ի ժամանակ հայոց սրբազնութեան առնազագոյն կարգուհասաւ։ Ի բնէ հակամէտ կրօնաւորական կեանքի և զղուած ևս նոյն ժամանակներում կատարուող դէպքերից՝ նա իւր 30-ամեայ հասակում թողնում աշքունիքը՝ մտաւ հայոց վանքերից մէկը ու կրօնաւոր դարձաւ։ Գոհ չմնալով վանական կեանքից՝ նա անապատական կեանքը սիրեց և իւր մարմինը ձնդեց ձգնական խստութիւններով՝ քաղցով, ծարաւով, բանձրաձաշակութեամբ, անքուն դիշերներով ու ոտանաւոր աքնութեամբ։ Իւր այսպիսի խստամբեր կեանքով նա շուտով հռչակուեցաւ և հետևողներ ևս ունեցաւ։ Անապատի ու անլոյս քարանձաւների մէջ իւր անձը հոգևոր կրթութեամբ մարզելուց յետոյ՝ Մաշտոց վարդապետը հրապարակ դուրս եկաւ քարոզելու Հայաստանի անդարման գաւառներում իւր աշակերտների հետ. նա քարոզից Գողթն գաւառում, ջնջից հեթանոսութեան մնացորդը և ժողովրդին լուսաւորից քրիստոնէութեամբ։ Բայց նրա սիրտը վշտացում էր, երբ տեսնում էր բովանդակ Հայաստանի ապիտութիւնը, տեսնում էր թէ ինչպէս հայ մանուկներն իրանց կեանքը մաշում են օտարութեան մէջ սորվելէն սովորելու համար, թէ ինչպէս հայ ժողովուրդը առանց օգուտ տեսնելու դուրս էր գալիս եկեղեցուց, ուր ս. Գրքի ընթերցմանը օտար լեզուով էր լինում. և այս չարիքը դարմանելու միակ միջոց համարելով տառերի գիւտը և ս. Գրքի թարգմանութիւնը՝ նա եկաւ Սահակ Պարթևի մօտ այս մասին խօսելու և օգնութիւն գտնելու։ Սահակ կաթուղիկոսի ու Վռամշապուհ Թագաւորի մասնակցութեամբ վերջապէս 404—12 թ. գտնուեցան հայոց տառերը՝ որոնք դարերով կազմելին հայ ազգի պատմութեան մէջ։ Այս փոքր նշաններն մեր ազգի գոյութեան հաստատուն սիւներն դարձան, որոնք տուին հայ ժողովրդին և՛ լեզու, և՛ ազգային եկեղեցի, և գրականութիւն. ազգը ինքնագիտակցութեան հասաւ և նրա բաժան-բաժան մասերը՝ եկեղեցու և գրականութեան միջոցով միացան։ Այսպիսի մեծ ու կարևոր գիւտ հայ ժողովրդի մէջ ընդհանրացնելու և օգտակար դարձընելու համար՝ պէտք էր դպրոցներ հաստատել և ս. Գիրքը թարգմանել։ Եւ Սահակ Պարթևը նուիրից իւր անձը ս. Գրքի թարգմանութեան և այն՝ յաջողութեամբ գլուխ բերից։ Բացուեցան դպրոցներ թէ Վաղարշապատում և թէ գաւառներում, որտեղ գլխաւորապէս Մաշտոց վարդապետն էր գործում։ Այս բոլոր գործերը մեծ ոգևորութեամբ պատ-

կերացնում են մեղ Կորիւնն ու Փարպեցին։ Դժբախտաբար հայ ժողովրդի գուղուռական պատգացումը Վռամշապուհի մահուամբ (414 թ.) արգելքների է հանդիպում։ Շապուհի ութսպետութեան ժամանակ (416 թուից յետոյ) Սահակ Պարթև հեռանում է Յունաց բաժնի Հայաստանը՝ այստեղ էլ հայ դպրոցներ բանալու և ուսուցանելու համար։ Բայց Յոյներն արգելք են յալուցանում այս գործունէութեան դէմ՝ պատճառաբանելով թէ Յունաց բաժնի Հայերը կեսարիոյ մետրապոլիտի իրաւասութեան տակ են։ Այս արգելքը վերցնելու համար Սահակ Պարթևը Բիւզանդիոն է ուղարկում Մաշտոց վարդապետին և իր թոռ Վարդան Մամիկոնեանին, որոնք և բերում են կայսերական հրաման՝ առանց որ և է արգելքի դպրոցներ բանալու, որոնց վրայ Մաշտոց վարդապետը տեսուչ (իկումենիկ) է կարգվում, և մինչև իսկ հրամայվում է այդ դպրոցների ծախսը արքունիքից տանալ։ Վայելելով գործելու ազատութիւն՝ Սահակ Պարթևն ու Մաշտոցը եռանդով սկսում են իրենց գործն առաջ տանել։

2. Բայց Պարսից բաժնի քաղաքական շփոթութիւնները սպիտում են Սահակ Պարթևին վերադառնալ (321 թ.). նրան յաջողվում է հայ նախարարներին Վռամի հետ հաշտեցնել և վերջապէս Արշակունեաց գահը բարձրացնել պարսից հաճութեամբ Վռամշապուհի որդուն Արտաշէսին (422—428)։ Բայց երիտասարդ թագաւորին վիճակուած չէր բախտաւոր լինել. հայ նախարարները փոխանակ այժ ու զօրութիւն լինելու հայ թագաւորութեան՝ վերջնական հարուած են տալիս նրան։ Տրտունջի ու հակառակութեան ոգին կազմում էր երիտասարդ թագաւորի գեղս ու իգամոլ կեանքը, որին որպէս թէ կարող չէին համբերել հայ իշխանները. և նոքա հաւաքւում են Սահակ Պարթևի մօտ յայտնելու իրենց որոշմունքը՝ վերցնել մէջտեղից մի այդպիսի պղծադործ թագաւոր. և որովհետև Արշակունեաց տոհմից ուրիշ մարդ չկար և իրենք էլ կարող չէին համաձայնութեան գալ, որ նախարարական այս կամ այն տոհմը գահ բարձրանայ, ուստի և այսուհետև պարսիկ իշխանները կառավարուել։

Իմաստուն հայրապետը իրաւացի համարելով հանդերձ նախարարների մեղադրանքները Արտաշէսի վերաբերմամբ՝ զարհուրեցաւ նրանց վերջնական որոշմունքից. յայտնեց թէ կարող չէ երբէք նրանց հետ մխաբանել։ Երկար և մի առ մի ցոյց տուեց նրանց որոշման վնասաբեր հետևանքները. յորդորեց յետ կենալ իրանց խորհրդից. չփոխել հիւանդ ոչխարն առողջ գազանի հետ, որի առողջութիւնն իսկ պատուհաս է. բայց նրանք անլսող դառնացան և սպառնացան Սահակին ևս կաթուղիկոսութիւնից զրկել։ Դառնացաւ մի եկեղեցական Սուրմակ անունով, Աղբիանոսեան տոհմից, որ միաբանեցաւ նախարարներին և Պարսից

առաջ Սահակ Պարթևին ամբաստանեց։ Պարսկաստան են կանչվում Արտաշէսն ու Սահակը և զրկվում իրենց աթոռներից (428 թ.)։ Վերջանում է վեցհարիւրամեայ հայ Արշակունի թագաւորութիւնը և Հայաստան է գալիս մի պարսիկ մարզպան, և Սուրմակ երէցն՝ իբրև կաթուղիկոս։

Բռնութեամբ ու ամբաստանութեամբ ստացած կաթուղիկոսութիւնը չկարողացաւ մի տարուց աւելի վայելել Սուրմակը և մի քանի նախարարների ձեռքով մերժուեցաւ իր իշխանութիւնից։

Վռամի հաճութեամբ կաթուղիկոս է դառնում Բրքիշոյ Ասորին, (427—432) և Հայաստան է գալիս բազմաթիւ միրճաւորներով։ Սրանք իրենց զեղչ կեանքով, իրենց տանտիկիններով զզուելի են դառնում հայ մեծամեծներին ու ժողովրդին, մանաւանդ եկեղեցական դասին, որոնք պարզ տեսնում էին նախկին և արդի կարգերի անհուն տարբերութիւնը, ուստի և դիմում են Վռամին խնդրելով մի այնպիսի կաթուղիկոս նշանակել, որ իր կարգերով ու սովորութեամբ համեմատ լինի հայ ժողովրդի աւանդութիւններին. իսկ Հայ եկեղեցական դասը առանձին պատգամաւորութեամբ խնդրում է Վռամից յատկապէս Սահակ Պարթևին վերադարձնել իբրև կաթուղիկոս, որ տակաւին Պարսկաստանում արգելուած էր։ Պարսից Դուռը երկու կողմերի սիրոը շահելու դիտաւորութեամբ զրկում է Բրքիշոյին կաթուղիկոսութիւնից և այդ իշխանութիւնը յանձնում է Շմուէլ Ասորի եպիսկոպոսին. միւս կողմից էլ՝ Սահակին է արձակում (432 թ.) իբրև կաթուղիկոս, բայց միմիայն զուտ կրօնական գործեր կատարելու և Շմուէլի հաճութեամբ ձեռնադրութիւններ անելու համար։ Շմուէլը իր նիստ ու կացով ու սովորութեամբ ամենևին չէր տարբերվում Բրքիշոյի կենցաղից և աւելի ևս վատթար էր։ Սա ոչ թէ միայն Բրքիշոյի պէս վախճանուած եպիսկոպոսների վիճակներն էր յափշտակում, այլ և կենդանիներ էր ուղարկում Վռամին՝ յանցաւոր ճանաչելով նրանց որպէս թէ արքունի հարկի վիճակները՝ յանցաւոր ճանաչելով նրանց որպէս թէ արքունի հարկերը խափանում են։ Առանց Շմուէլի թոյլտուութեան կարող չէր Սահակը խափանում են։ Առանց Շմուէլի թոյլտուութեան կարող չէր Սահակ Պարթևը ոչ մի ձեռնադրութիւն անել։ Նա ընդարձակեց Սուրմակի վիճակը Պարսից արքունիքի հաճութեամբ և դժբախտաբար այս մեծարանքը շլացրեց հայ եպիսկոպոսներից ոմանց, որոնք աշխատեցան Պարսից հաճոյանալով ընդարձակ վիճակներ առանալ։ Զեղմ ու անպարկիշտ Շմուէլը 5 տարի կաթուղիկոսութիւն անելուց յետոյ վանեցաւ (437թ.)։Պարսկաստանից վերադառնալուց յետոյ Սահակ Պարթև Բագրեւանդի ս. Յովհաննէսի վանքն էր նստում. և երբ Շմուէլը թէև Բագրեւանդի վանքն էր նստում. և երբ Շմուէլը վախճանեցաւ, զզուած այսպիսի անձերից հայ մեծամեծներն ու բազմութիւնը դիմում են Սահակ Պարթևին, և խնդրում, որ յանձն առնէ միայնակ կաթուղիկոսութիւն անել՝ խոստանալով Պարսից Դրան ևս

հաստատել տալ. բայց նա մերժում է նախարարների ինդիրը, մանաւանդ որ խոր ծերութեան հասած էր, և այնուհետև նուիրվում է միմիայն աղօթքի ու վարդապետութեան: Նա մեռնում է 436 թ. սեպտ. 7-ին Բլուր գիւղում և թաղվում Աշտիշատում: Նրա գերեզմանի վերայ մինչև այսօր էլ կայ մի աւերակ մատուռ:

Սահակ Պարթևի Պարսկաստանից վերադառնալուց յետոյ կատարուեցան մի քանի եկեղեցական նշանաւոր գործեր. այսպէս՝ Եփեսոսի տիեզերական ժողովի գումարումը (431 թ.) և մեր 6 թարգմանիչների վերադարձը յունաց երկրից (432 թ.), որոնք Սահակին Աշտիշատում գտան և Եփեսոսի կանոնների հետ տուին նաև ս. Գրքի հօթանասնից թարգմանութեան ընտրելագոյն օրինակը, որի համեմատ նա իւր աշակերտների հետ սրբագրեց իւր նախկին թարգմանութիւնը: Նա ստացաւ նաև Ակակիոս, Պրոկղ և Կիւրիղ եպիսկոպոսների թղթերը՝ որոնք զգուշացնում էին նրան Նեստորական քարոզիչներից, որովհետև լսել էին, թէ նրանք Հայոց երկիրն են եկել: Այդ թղթերին Մաշտոցի գործակցութեամբ՝ Սահակ Պարթևը մի ընդարձակ պատասխան գրեց, որ յունաց եկեղեցու կողմից մեծ ընդունելութիւն գտաւ և մինչև իսկ 553 թուի Պոլսի ժողովում կարդացուեցաւ իբրև ուղղափառ դաւանութեան շտեմարանութիւն:

3. Սահակից յետոյ կաթուղիկոս է դառնում, թէ և ոչ ձեռնադրութեամբ, Մեսրոպ-Մաշտոցը, որ արդէն Սահակի Բագրեւանդ եղած ժամանակ նստում էր Վաղարշապատում և մշակում էր ձախող դէպքերից: Նա միայն 6 ամիս իշխանութիւն վարեց և մեռաւ 17 փետր. 437 թ. Վաղարշապատում և թաղուեցաւ Օշական գիւղում, ուր և գերեզմանը մինչև այժմ էլ կայ: Իւր վեցամսեայ իշխանութեան ժամանակ, թէև Սահակ Պարթևի մահուան պատճառով ծանր վշտով համակուած՝ Մաշտոցը հեռանալով աշխատից իւր հօտի համար. «բաշխում թուղթըս խրատագիրս և զպայուցչիս ընդ ամենայն գաւառս առաքէր»:

Սահակ Պարթևի ու Մաշտոցի գործունէութիւնը միշտ միասին ու զուգընթաց է եղել. նրանք միասին են հայ եկեղեցու բարեկարգութեան համար կանոններ սահմանել, չհաշուելով այն ջանքերը, որ նրանք գործադրել են ազգային գրականութեան զարգացման համար: Սահակ Պարթևի անունով պահուած կանոնները ինչպէս մի կողմից պատկերացնում են մեզ եկեղեցականների ու ժողովրդի տխուր վիճակը, այնպէս էլ այն բարձր հայեացքը, որ նա ունի եկեղեցականի կոչման վերայ: Նախ պատմելով թէ քրիստոնէական եկեղեցին մի նաւահանգիստ է, որին ապաւինում են թէ արդարները և թէ մեղաւորները՝ նա մի առ մի խօսում է նաւապետի (եպիսկոպոսի) կոչման ու պարտականութեան մասին: Մաքառում է եկեղեցականների շահասիրութեան դէմ,

որոնք եկեղեցու լուսքերն ու գանձերը՝ վոխանակ բարեգործութեան համար ծախսելու՝ սեպհականում կամ իրանց ազգականներին էին շնորհում. նոյնպիսի միտումներով տգէտներ ու զինուորներ քահանայ էին ձեռնադրում: Շեշտում է մի քանի անգամ, թէ որքան կարևոր է ուսումը ոչ միայն քահանայի, այլ և նրա որդոց համար և թէ ինչպէս ժողովուրդն իսկ գանգատւում է այդ տգիտութեան վերայ: Այս չարիքը դադարեցնելու համար արդէն Ս. Սահակը և Մաշտոցը հետամուտ եղան վանքերի թիւը բազմացնել՝ դարձնելով նրանց ոչ միայն հիւրանոց, այլ և դպրոց: Մի առ մի թուում է քահանաների ու այլ պաշտօնեաների պարտականութիւնները՝ որոնց կատարումը միայն բարձրացնում է նրանց պատիւը: Այս բոլոր պատուէրներն ու կանոնները մասամբ նոյն են ընդհանուր քրիստոնէական եկեղեցում ընդունուած կանոնների հետ, մասամբ էլ ճիշդ տեղական բնաւորութիւն ունին:

Սահակ Պարթևի ու Մաշտոցի յիշատակը Հայոց եկեղեցին տօնում է նոյն իսկ Ե. դարից սկսած:

Բ. ԳԼՈՒԽ.

ՇԱՀԱՊԻՒԱՆԻ ԺՈՂՈՎԸ. ԱՌԱՋԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ.

1. Մեսրովբ-Մաշտոցի մահուանից յետոյ նրա յանկութեամբ կաթուղիկոսութեան աթոռատեղ դարձաւ Յովսէփ երէցը՝ Ե. դարի նշանաւոր թարգմանիչներից մէկը, երբ միւս կողմից Շմուէլի մահուանից յետոյ Սուրմակը կրկին կաթուղիկոսութեան գլուխ էր անցած և Պարսից կողմից էլ այդպէս ճանաչուած: Այս հանգամանքի պատճառով Յովսէփը մինչև Սուրմակի մահը (444 թ.) իբրև երէց գործեց և այնուհետև միայն եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստացաւ:

Ե. դարի երկրորդ մասը շատ ծանր ու յուզումնալից ժամանակ էր մեր ազգային կեանքի համար: Յաղկերտի բռնած քաղաքականութիւնը մեր աշխարհի նկատմամբ՝ ձուլել Հայ ժողովուրդը կրօնքով Պարսից հետ՝ օրըստօրէ յաջողութիւն էր գտնում. հաւատուրացներ ու չարատրծներ բազմանում էին. ապականութիւն վարք ու բարքի մէջ ընդարձակ ծաւալ էր առացել, և ախտերով վարակուած էին ոչ միայն աշխարհականներ, այլ և հոգևորականութեան բարձր ներկայացուցիչներ. մծբնեցի աղանդը իւր բազմաթիւ հետևողներով քանդում էր աիրող եկեղեցու և՛ դաւանաբանութիւնը, և՛ բարոյական կարգը և մե-

ծապէս նպաստում Պարսից քաղաքականութեան. «Արժատացեալ էր սէգն և տարածանէր օր աւուր և լինէր յաճախումն մծղնէից, կնահանից, պոռնկաց և ամենայն չարագործաց... և յուխտէ քահանայիցն ոչ գնային ըստ սրբութեան ճանապարհին»: Եկեղեցու դիրքը բարձրացընելու, չարիքները կարճելու և հոգևորական դասակարգն ամրացնելու համար Սուրմակի մահուանից յետոյ 444 թուին Յովսէփ կաթուղիկոսը Շահապիվանի նշանաւոր ժողովն գումարեց «ի հրամանէ միաբանութեան», որին ներկայ եղան ոչ միայն քսան եպիսկոպոսներ, նշանաւոր երէցներ, քահանաներ ու սարկաւագներ, այլ և վաստակ մարզպանը, որ նոր իշխանութեան էր հասած, Վահան հազարապետը, Վարդան Մամիկոնեանը, Արշաւիր Կամսարականը և այլ բազմաթիւ նախարարներ, գաւառապետներ ու զօրավարներ:

Ժողովի աշխարհական տարրը պահանջում է ս. Գրիգորի, Ներսէսի, Սահակի ու Մաշտոցի գրած կարգերը կրկին հաստատել և ուժեղացնել այն, ինչ որ լաւ է. «Մեք, ասում են, հնազանդիմք, և եթէ ոք հաստատուն ոչ պահէ զկարգս օրինաց՝ եպիսկոպոս, կամ երէց, կամ ազատ, կամ շինական, պատուհասեսցի և տուգանս տացէ»: Այսպէս՝ եկեղեցականների ու աշխարհականների այս խառն ժողովը օրէնսդիրը է հանդիսանում ընդհանուր ազգի համար և յանցանքների համար այլ և այլ պատիժներ ու տուգանք սահմանում: Դրամական տուգանք և ապաշխարանք սահմանում է ազնուականների ու եկեղեցականների, իսկ ծեծ՝ շինականների համար: Շահապիվանի կանոնների մի մասը դրուած է ամուսնական դեղծմունքների առաջն առնելու և որոշ պատիճաններ սահմանելու համար. արգելում են անչափահաս ու մերձաւոր ամուսնութիւններ, ինչ որ առաջ ևս եղել է, և սահմանում են ազգակցական արենակցութեան համար չորրորդ ծնունդ (կան. 13): Ընդունում է ամլութեան պատճառով ամուսնալուծութիւն՝ պայմանով սակայն որ մարդը կնոջ դրամական հատուցում տայ և մի տարուց յետոյ միայն ամուսնանայ: Ժողովը խստիւ պատուիրում է աշխարհականներին ու հոգևորականներին չգնալ բնաւ վհուկների ու կախարդների մօտ. արգելվում է շահասիրական նպատակներով սրբոց մասունքներ տեղափոխել և միամիտ ժողովրդին խաբել: Ժողովը հաւատուրացների համար մահուան պատիժ իսկ նշանակում է, եթէ դարձի չգան: Այսպէս խիստ պատժով երևի ժողովը կամենում էր այդ վատ ախտի առաջն առնել՝ որ Պարսից քաղաքականութեան շնորհիւ հետզհետէ մեծ ծաւալ էր առնում: Վերջապէս ժողովը խիստ ծանր պատիժներ է սահմանում մծղնէից համար, որոնք, ինչպէս ասացինք, իրենց վարդապետութեամբ ու բարոյականութեամբ քանդում էին տիրող եկեղեցին: (Մծղնէից մասին յետոյ):

Բայց այսպիսի կանոններով կեանքը բարելաւել շատ դժուար էր, մանաւանդ որ Պարսից գործունէութիւնը կար, որ ոչ միայն հաւատարացութիւնն էր խրախուսում, այլ և ամուսնական ազատութիւն, որոնց դէմ իսկ պէտք եղաւ կռուել Շահապիվանի ժողովը: Այս ժողովից մի քանի տարի վերջը կատարուեց մեր այնպիսի խոշոր դէպքեր, որոնք մեր կեանքը հիմն ի վեր խանգարեցին. այդ դէպքերը մեր պատմութեան մէջ յայտնի են Ա. կրօնական կամ Վարդանանց պատերազմ անունով:

2. Պարսից Յազկերտ Բ. թագաւորը իւր լովանդակ թագաւորութեան ժամանակ այն քաղաքականութեան էր հետևում, թէ իւր տէրութեան ապահովութեան համար անհրաժեշտ է հպատակ ազգերին ձուլել Պարսից հետ, և այն՝ կրօնական հիմքերով: Այս ծրագիրն իրագործելու համար նախ յարձակվում է նա Յունաց տէրութեան վրայ, երբ սա զբաղուած էր արևմտքում պատերազմով, և համոզուելով որ Յոյները կարող չեն իր նպատակի իրագործման արգելք լինել՝ նա այնուհետև համարձակ աշխատում է պարսկացման ծրագիրը առաջ տանել. և սկսում է հէնց Հայոց աշխարհից, որ նրա պետութեան ամենանշանաւոր մասն էր կազմում: Արշակունեաց թագաւորութեան անկումից յետոյ թէև Հայաստանը Պարսից հպատակ էր և հարկատու, բայց ներքին ազատութիւն էր վայելում. երկիրը կառավարվում էր հայ մարզպանով, զինուորական ոյժը ամբողջապէս հայ նախարարների ձեռին էր, և քրիստոնէական եկեղեցին բարձր դիրք գրաւած. մի խօսքով Հայաստանը մի այնպիսի դրութեան մէջ էր, որ միացեալ ուժերով միշտ կարող էր ազատ լինել Պարսից տէրութիւնից՝ եթէ մանաւանդ Յունաց օգնութիւնն ևս առնար: Ահա այս վտանգաւոր դրութեան առաջն առնելու համար՝ Յազկերտը աշխատեց և՛ եկեղեցու զօրութիւնը ոչնչացնել, և՛ նախարարներին տկարացնել այլևայլ խարդախ միջոցներով, և ժողովրդին անտեսականապէս ճնշելով կրօնափոխ անել: Ապահովուած Յունաց և Հռոմանց կողմից՝ Յազկերտը 442—449 թուականը շարունակ մանակի հալածանքներ էր յարուցանում քրիստոնեաների դէմ, նրանց արհամարում ու բռնադատում էր և կամ «պատրէր զոմանս ոսկւով և արծաթով, և զբազումս այլովք ևս առատ պարգևօք, զոմանս ագարակօք և մեծամեծ գեղօք, զոմանս պատուովք և իշխանութեամբք մեծամեծօք»: Եւ Յազկերտը այսպէս էր վարվում ոչ միայն Պարսկաստանի, այլ և իւր լովանդակ տէրութեան քրիստոնեաների հետ: Ահա այս ուղղութեան հակառակ է աշխատում գործել Շահապիվանի 444 թուի ժողովը՝ մասնաւորապէս ժամուան պահանջով հաւատուրացներին: Վերջապէս ժողովրդի շահերը պաշտպանելու պատրուակով Յազկերտը Դինշապուհ իշխանին, իբր վաստակ մարզպանին գործակից՝ Հայաստան

է ուղարկում և աշխատում իւր նպատակն իրականացնել։ Նրա առաջին գործն է լինում եկեղեցականների վայելած արտօնութիւնները կարճել և ամէնքին հարկատու դարձնել. նախարարների միութիւնը ջլատել՝ խաւերից մէմիանց հետ. դատաւորութեան իրաւունքն եկեղեցականների ձեռքից առնել ու մոգպետի յանձնել, վերջապէս ժողովրդին աւելի ծանր հարկերով նեղել, որ «առ յոյժ արքատութեանն ակամայ դիմեսցին յօրէնս մոգուց»։ Բայց հայ ժողովուրդը համբերութեամբ տանում է այս բոլոր զրկանքներին և կիզնքիչ հարկահաններին դոհացնում, որովհետև արքայից արքան տակաւին նրա կրօնական համոզմունքին, նրա եկեղեցուն յայտնապէս ձեռք չէր տուել։ Մօտեցաւ և այս րոպէն։ 449 թ. վերջերը Միհրներսեհը Յազկերտի կողմից մի նամակ է ուղարկում նշանաւոր նախարարներին և բարձրաձակօրէն առաջարկում թողնել քրիստոնէութիւնը և պրադաշատական վարդապետութիւնն ընդունել։ Այս նամակին պատասխանելու համար 450 թուի սկիզբները հայոց իշխանների հրաւէրով ժողով է դումարվում Արտաշատի մէջ։ Ժողովին ներկայ են լինում 18 եպիսկոպոսներ, բազմաթիւ երէցներ ու վանականներ, իսկ հայ իշխաններից նրբանք, որոնք ներկայ էին և Շահապիվանի ժողովին, այսինքն՝ Վասակ Սիւնին, Վրիւ Խորխոռունին, Վարդան Մամիկոնեանը, Արշաւիր Կամսարականը, Վահան Ամատունին և այլք, ընդամէնը 18 հոգի։ Ժողովը ընդհանուրի հաճութեամբ ու սորագրութեամբ մերժողական պատասխան է ուղարկում Միհրներսեհին՝ յայտնելով պատրաստականութիւն իրենց հաւատքի համար մինչև իսկ նահատակուելու։ Հայոց համարձակ ու ժխտողական պատասխանը մեծապէս դայրացնում է արքայից արքային և նրա հրամանով անմիջապէս Պարսկաստան են կանչվում հայ նշանաւոր իշխանները։ Տարակուսի մէջ են ընկնում սրբա՝ երթալու կամ չերթալու մասին և հետև ուրեմն որոշում են երթալ՝ տալով Յովսէփ կաթուղիկոսին ճշմարիտ հրդումն՝ հաստատուն մնալու իրանց հաւատքի վրայ. նրանց հետ միանում են Աղուանք ու Վրացիք—450 թուի ապրիլին հայ իշխանները ներկայանում են արքայից արքային, որ կրկին բացարձակապէս պահանջում է՝ իբրև հաւատարիմ ու արդարամիտ ծառայութեան նշան Զրադաշտի կրօնն ընդունել։ Նախարարների լռութիւնը Վարդանն է խզում, որ իւր պապից՝ Սահակ Պարթեւից կրօնական ընտիր դաստիարակութիւն էր ստացել, և համարձակութեամբ պատասխանում է, թէ պատրաստ են մեռնել և ոչ երբեք իրենց հաւատքն ուրանալ։ Վարդանի համարձակ պատասխանից ու Յազկերտի ապառնալիքներից խռոված նախարարները խորհելու և վերջնական պատասխան տալու համար ժամանակ են խնդրում, և նախարարներն այս դժուար կացութիւնից ազատուելու ուրիշ ելք չեն գըտ-

նում, բայց եթէ առ երեսս թագաւորի կամքը կատարել. և ուր ուրեմն Վարդան Մամիկոնեանին ևս համոզում են այսպէս վարուել։ Մեծապէս ուրախանում է Յազկերտը, երբ նախարարների որոշմունքն է լսում և նրանց մեծամեծ ընծաներով պատուելուց յետոյ՝ շտապով Հայաստան է ուղարկում բազմաթիւ մոգերի հետ՝ պատուէր տալով մի տարուայ ընթացքում ամբողջ Հայաստանի դարձը գլուխ բերել։ Մոգական բանակը նախարարների հետ Հայաստան է հասնում 450 թ. յունիսի 1-ին, և հաստատվում է Անդղ գիւղաքաղաքում։

Բայց այս բանակի մինչև մեր երկիրը գալը՝ արդէն նախարարների ուրացութեան համբաւը վաղուց հասել էր և ընդհանուր շփոթութիւն առաջացրել. վիճակաւոր եպիսկոպոսներն իրանց վիճակները էին գնացել, քորեպիսկոպոսները գիւղերն ու աւանները, և դրդեւէին թէ գիւղացիներին և թէ ազատներին՝ պաշտպանել եկեղեցին իրանց հաւատուրաց իշխանների դէմ, կռուել և պատժել նրանց։ Մեծապէս շփոթվում են նախարարները՝ երբ տեսնում են հայ ժողովրդի և մերձաւորների այս ընդդիմադիր ոգին. բայց միւս կողմից էլ չեն համարձակում իսկոյն միանալ այս զայրացած ամբոխի հետ և Պարսից դէմ ապստամբութեան դրօշ բարձրացնել, այլ աշխատում են համոզելով ու բացատրելով իրենց կատարած գործը՝ ժողովրդին հանդարտացնել։ Սակայն մոգերի ներկայութիւնը և նրանց անհամբեր ցանկութիւնը՝ քրիստոնէական տաճարները փակել ու աւերուշաններ շինել՝ ժողովրդի ու եկեղեցականների զրգռմունքը աւելի ևս սաստկացնում են. և այդ զայրոյթն առաջին անգամ արտայայտվում է Անդղ գիւղում Ղևոնդ երէցի ձեռքով, երբ մոգպետը փորձ է անում ժողովրդի տրամադրութիւնն իմանալու։ Վասակ մարզպանը մի կերպ այս անցքը աշխատում է խաղաղել, բայց հայ նախարարներից ոմանք դէպքից օգտուելով սոխրում են Վարդանին յայտնապէս ապստամբութեան դրօշ բարձրացնել, կարծելով թէ այդ ապստամբութիւնը կորըստաբեր կըլինի իրենց անձնական թշնամի Վասակի համար։ Վարդանը իսկզբան տատանվում է ապստամբել, բայց ապա յօժարում է, և միաբան նախարարների ու եկեղեցականների հետ աշխատում է Վասակին ևս նոյն մտքի կողմը շահել։ Վասակը նոյնպէս տատանվում է, բայց հարկից ստիպուած միաբանում է եկեղեցասէր իշխանների հետ և երդվում «արիւն թափել քրիստոնէական հաւատքի և մեղքերի թողութեան համար»։ Հայ աշխարհի մեծամեծների այս միահամուռ ոգևորութիւնից պէս քաջալերում է հայ ժողովրդին և ընդհանուր ոգևորութիւնից դրդուած հայ զօրքի մի մասը իսկոյն ատրուշան է աւերում, մի յանդգնած հայ զօրքի մի մասը իսկոյն ատրուշան է աւերում, մի յանդգնած՝ որ մեծապէս պատժվում էր Պարսկաստանում, այլ և բաւական թուով մոգեր կոտորում։ Այսպէս ահա սկսուեցաւ [illegible] առաջին

БИБЛИОТЕЧНЫЙ ФОНД — БАКУ — КОЛЛЕКТОР

ապստամբութիւնը։ Այնուհետև Պարսից ձեռքից մի առ մի առնուեցան նշանաւոր բերդեր, և կրակատները կործանուեցան։ Բայց հասկանալով գործի ծանրութիւնը՝ Վարդանը անհրաժեշտ գտաւ Յունաց, ինչպէս և յունաբաժին Հայերի օգնութեան դիմել, մանաւանդ որ Պարսիկներն արդէն ահագին պատրաստութեամբ Աղուանից երկրից Հայոց երկիրը մտնելու էին պատրաստվում։ Ամբողջ հայ աշխարհի կողմից պատուական թուղթ գրուեցաւ Յունաց Թէոդոս կայսեր, որ օգնէ հայ աշխարհին։ Բայց կայսրը ձիշդ այդ ժամանակ վախճանեցաւ, և նրա յաջորդ Մարկիանոսը առանձին զհսպանութեամբ վստահացրեց Ցաղկերտին, թէ բնաւ օգնելու չէ հայոց։ Անլսող դանուեցան իրանց արհնակից ու հաւատակից հայ եղբայրների ձայնին և Յունաց բաժնի հայ իշխանները, և այսպէս Պարսից բաժնի հայերը միմիայն իրանց ուժին ու կարողութեան թողնուեցան։ Տակաւին հայ դեսպանները չէին վերադարձել, երբ Վարդանը իրեն հաւատարիմ իշխանների հետ Աղուանից երկիրը գնաց թէ իւր հայրենիքը և թէ միանգամայն Աղուանից երկիրը պաշտպանելու համար. և այստեղ մի ծանր հարուած առաց Պարսից։ Սակայն այս յաղթութեան խնդութիւնը նսեմացաւ, երբ լուր հասաւ, թէ ինչպէս վասակ ընդհանուր ուխտից հեռանալով և իրեն կողմը դրաւելով նաև նշանաւոր նախարարները՝ Պարսից հետ միացել է, եկեղեցիները կողոպտել, քահանաներ բանդարկել և հայոց բերդերը Պարսից յանձնել։ Վարդանը իւր զօրքով շտապեց Արարատեան աշխարհը (450 թ. վերջերը), իսկ Վասակը քաշուեցաւ Սիւնեաց երկիրը։ Իրերի դրութիւնը ճղճղութեամբ Ցաղկերտին իմացնելու և գործը խաղաղութեամբ վերջացնելու համար՝ Վարդանանք մի նշանաւոր պարսիկ ուղարկեցին Պարսկաստան՝ երկրի խառնութեան բովանդակ պատճառը Վասակին վրայ ձգելով։ Միւս կողմից Վասակն ևս պատգամաւոր ուղարկեց՝ բոլոր անյաջողութիւնների պատճառ եկեղեցական դասը համարելով։ Ցաղկերտը հասկանալով երկրի վիճակը՝ թողութեան հրովարտակ հանեց, կրօնի կատարեալ ազատութիւն շնորհեց և յափշտակուած կալուածների վերադարձուցանեց։ Աբջայից աբջայի այս հրովարտակը իրեն կուսակից քահանաների ձեռքով ատրածեց Վասակը բովանդակ Հայաստանի մէջ՝ յորդորելով հայ ազգուկին ու իշխաններին միմիայն հեռանալ Վարդանից ու նրա հետ չկռուելու։ Եւ արդարև՝ շատերը հեռացան։ Բայց շուտով պարզուեցաւ, որ թողութեան հրովարտակը մի պատրանք էր և 451 թ. Գառակին՝ Պարսիկներն ապահովուած որ յոյներն հայերին օգնելու չեն և ոչ մի կերպ, մեծ բանակով հայոց երկիրը մտան։ Վարդանի հրաւէրի ձայնը լսելով՝ հայրենիքի ու եկեղեցու պաշտպանութեան նուիրուած 66,000 կտրիճներ՝ իշխաններ ու հասարակ շինականներ, հաւաքուեցան Աւարայր գիւղի

մօտ. այնտեղ հաւաքուեցան Յովսէփ կաթուղիկոսը, Ղևոնդ երէցը և ուրիշ բազմաթիւ եկեղեցականներ։ Պատերազմի նախընթաց գիշերը հակմամբ ու խնդրուածքներով անցաւ, և կաթուղիկոսի թոյլտուութեամբ Ղևոնդ երէցը քաջալերեց հայ զօրքը, որ չվախենան լնաւ թշնամու ահաւոր բանակից։ Նոյնպիսի քաջալերական ճառ խօսեց նաև Վարդանը և այնուհետև ամէնքն էլ հաղորդուեցան։ Այս նշանաւոր ճակատամարտը տեղի ունեցաւ 451 թ. մայիսի 26-ին. այնտեղ ընկան հայ նշանաւոր իշխաններ, և զօրքի մի մասն էլ գերուեցան եղաւ։ Այս նահատակների յիշատակը հայոց եկեղեցին ոծնում է մինչև այսօր «Վարդանանց 1036 վկայից» անունով։

3. Երբ պատերազմի արդիւնքը Պարսկաստանն իմացաւ, անմիջապէս պարսից զօրքի հրամանատարը յետս կոչուեցաւ և Հայաստանի վրայ Արշական Ատրորմիզդը մարզպան կարգուեցաւ՝ երկիրը խաղաղութեամբ նուաճելու համար։ Սա ամէն կողմ թղթեր ուղարկեց՝ յորդորելով ամէնքին իրանց տեղերը դառնալ և ազատօրէն իրանց կրօնը պաշտել։ Բայց մյուս կողմից էլ գէնքով աշխատեց նուաճել նրանց, որոնք տակաւին հաւատարիմ Վարդանի ուղղութեան լեռներում ապաստնած աշխատում էին Պարսից զօրքին դիմադրել։ Ատրորմիզդը յաջողութիւն ունեցաւ. մասամբ բռնի ուժով, բայց աւելի խաղաղասիրական խօսքերով բոլոր նշանաւոր աշխարհական ու հոգևոր գործիչներին կալանաւորեց և նրանց Պարսկաստան ուղարկեց (452 թ.), ուր պէտք է քննուէր այս ապստամբութեան գործը, որ յանցաւորը պատժուէր։ Դատաստանն արդարև տեղի ունեցաւ. Վասակը իրրև յանցաւոր պատժուեցաւ, բայց հայ եկեղեցականներն ու իշխաններն էլ ազատ չարձակուեցան։ Եկեղեցականները բանդարկուեցան նախ Վրկանում և ապա Ապար աշխարհի Նիւշապուհ բերդի մէջ և յետոյ Ռևան գիւղի մօտ 454 թ. յուլիսի 25-ին նահատակուեցան։ Նրանք յայտնի են «Ղևոնդեան քահանայք» անունով և նրանց յիշատակը մինչև այժմ ոծնվում է հայոց եկեղեցու մէջ։

Միևնոյն Նիւշապուհ քաղաքի բանդի մէջ տակաւին երկար ժամանակ բանդուած մնացին հայ իշխանները (35 հոգի) և միայն Պերոզի թագաւորութեան ժամանակ բանդից ազատուեցան (461 թ.), և նրանք տարին իրաւունք ստացան Հայաստան վերադառնալու (462 թ. վերջերը)։

Գ. ԳԼՈՒԽ

ՅՈՎՍԷՓԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ. ԵՐԿՐՈՐԴ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ.

1. Առաջին ապստամբութիւնից յետոյ՝ տեսանք որ Յազկերտը Հայաստանի վերայ մարզպան կարգեց Ատրոմիզդին՝ պատուիրելով ամեն խաղաղասիրական միջոցներով հնազանդեցնել հայ ժողովրդին՝ տալով նրան քրիստոնէական կրօնի կատարեալ ազատութիւն։ Ատրոմիզդի խաղաղասիրական ընթացքը յաջողութիւն ունեցաւ. շատ փախստականներ իրանց տեղերը դարձան, աւերուած գիւղեր ու տներ շինուեցան, հարկերը թեթևացան, եպիսկոպոսներն իրանց իշխանութիւնը վարելու կատարեալ իրաւունք ստացան. մինչև իսկ Թոյլ արքունեցաւ բռնութեամբ մոգութիւն ընդունողներին իրանց նախկին կրօնին դառնալ։ Նոյն խաղաղասէր քաղաքականութեան շնորհիւ Յովսէփ կաթուղիկոսից յետոյ՝ երբ սա իբրև ապստամբ իւր ընկերներով Պարսկաստան տարուեցաւ, կաթուղիկոս կարգուեցաւ՝ պալոսից հաճութեամբ, Մելիտէ Մանազկերտցին (452—456) և ապա Մովսէս Մանազկերտցին (457—470)։ Սրանք երկուսն էլ Սուրմակի տոհմից էին, որ յայտնի էր իւր պարսկասէր ուղղութեամբ և ոչ ընդդիմադիր ոգւով, և իբրև այսպիսի ուղղութեան մարդիկ ճիշդ այդ ժամանակին կաթուղիկոսութեան յարմար դատուեցան։ Պարսկասիրական քաղաքականութիւնը այժմ արդէն բաղմաթիւ հետևողներ ունէր թէ հոգևոր և թէ նախարարական դասի մէջ. այսպիսինները զօրացած՝ սկսան հալածել եկեղեցականներին ինչպէս նաև յունասէր ուղղութեան պաշտպան հայ նախարարներին։ Որքան էլ երկրի խաղաղացման տեսակէտով արդարացի նկատուի պարսկասէր կուսակցութեան ընթացքը՝ այնուամենայնիւ նա իւր ծայրայեղութեամբ աւելի վնասում էր հայ ազգի շահերին. կրօնափոխութիւնը խրախուսւում էր. կրօնափոխները մեծամեծ պատիւների էին արժանանում իբրև ճշմարիտ հպատակներ։ Մելիտէ ու Մովսէս կաթուղիկոսներն էլ հետևելով տիրող ուղղութեան գէթ չէին աշխատում հաւատափոխութեան ծաւալման առաջն առնելու. ուստի և իրաւամբ ասում է Փարպեցին, թէ հայոց աշխարհից լաւութիւնը հեռացել էր, բաղութեան ոգին վերացած և քրիստոնէութիւնը ծակը մտած։ Հայ բարքերի կատարեալ անկումն է բնորոշում Պերոզ արքայի խօսքը, թէ «անպիտան մարդ և յետին գունդ, որ կայ իմ իշխանութեան մէջ, այդ՝ Ասորուցն է, բայց Ասորուց էլ աւելի հայն է այր յետին և անպիտան»։ Ծանր ու նախատական խօսք։ Հայ եկեղեցին իւր կրաւորական ուղղութիւնից դուրս եկաւ և գործունէութիւն ցոյց տուեց հաւատափոխութեան առաջն առնելու և բարքերն ազնուացնելու նկատմամբ, երբ Պարսկաստանից դարձող նախարարների և ուխտապահ իշխանների ընտրութեամբ 470 թուին կաթուղիկոս դարձաւ Սահակ—Մաշտոցի աշակերտ Գիւտ Մամիկոնեանց եպիսկոպոսը (470—480 թ.), որ Հայրապետական Աթոռը Դուինի մէջ հաստատեց։ Գիւտը կարող չէր անտարբեր աչքով դիտել, թէ ինչպէս մարդիկ փառքի ու պատուի հասնելու համար հաւատուրացութեան ու այլ տող միջոցների էին դիմում, թէ ինչպէս ընտիր և ուխտապահ մարդիկ հալածվում և եկեղեցու նշանակութիւնն օրէ օր տկարանում ժողովրդի աչքում։ Պարսկաստանից դարձող նախարարներից շատերն արդէն մեռել էին, մնացել էին մի քանի հոգի, որոնք դեռևս ամեն բանից մինչև իսկ օտար երկիր գաղթելու էին պատրաստվում. բայց Գիւտը չվհատեցաւ. քաջալերեց նրանց և խորհուրդ արաւ Յունաց օգնութեամբ ապստամբութեան դրօշը կրկին պարզելու։ Այս նպատակով երկու անգամ պատգամաւոր ուղարկուեցաւ Լևոն Թագաւորի մօտ (457—477 թ.), բայց պատգամաւորութիւնն ապարդիւն անցաւ և հայ իշխանները մեծապէս վհատեցան։

Սակայն Գիւտ կաթուղիկոսը չվհատեց. նա առաւել համարձակ սկսեց գործել ուրացեալների դէմ և պարզևներով ու համոզելով շատերին դարձի բերեց։ Նա արհամարհում էր մանաւանդ Գադիշոյ մահղին, որ այդ ժամանակ ուրացողների պարագլուխ ու քաջալերիչ էր։ Տեսնելով կաթուղիկոսի գործունէութիւնն ու ընթացքը՝ Գադիշոն ամբաստանեց նրան Պարսից Դրան առաջ, թէ կաշառքով ու խաբէական խօսքերով մոգութիւն ընդունողներին յետ է դարձնում, թէ Յունաց կայսեր ու նրա մեծամեծների հետ անզգաստ բանակցութեան մէջ է և ուզում է ապստամբութիւն առաջ բերել։ Գիւտը Պարսկաստան կանչուեցաւ (477 թուերին) և իբրև յանցաւոր կաթուղիկոսական իշխանութիւնից և Հայաստան վերադառնալու իրաւունքից զրկուեցաւ. նա ապրում էր այնտեղ տեղական քրիստոնեաների սէրը վայելելով։ Հաւանօրէն 478 թուերին նա հայրենիք վերադարձաւ. առանձնացաւ Վանանդ գաւառի Ոթմոսու գիւղը, ուր և 480 թուին վախճանեցաւ խոր ծերութեան մէջ։

2. Մովսէս Մանազկերտցու վերջին օրերում Գիւտի կաթուղիկոսութեան ժամանակ Հայաստանում նշանաւոր հանդիսացան Հայկոսութեան ժամանակ Հայաստանում նշանաւոր հանդիսացան Հայկոսութեան ժամանակ Մամիկոնեանի որդիքը, որոնք գեղեցիկ կրթութիւն էին ստացել իրենց Ջուիկ մօր խնամքով։ Մամիկոնեան եղբայրների մէջ մանաւանդ նշանաւոր էր վահանը՝ իբրև հնարագէտ, մտացի ու քաջակորով անձն։ Նա բարեպաշտ ու եկեղեցասէր էր, ինչպէս բոլոր Մամիկոնեանները. նորոգեց ս. կաթուղիկէն, որ հայրապետական Աթոռի տեղափոխութեան պատճառով անխնամ էր մնացած և իր մանկու-

թեան ընկերը Ղազար Փարպեցուն վանահայր կարգեց (470 թուերին)։ Նա ամենքի ուշադրութիւնը գրաւեց. նոյն իսկ Պերոզ թագաւորը նրան մեծամեծ պատուի արժանի էր համարում, բայց յիշելով նրա նախնեաց գործերը՝ դանդաղում էր նրան որ և է բարձր պաշտօն տալ։ Գագիշոյ Տոլխուռունու նման ուրացողներն աննախանձ աչքով կարող չէին տեսնել Վահանի յառաջադիմութիւնը և շարունակ կրկնում էին Պարսից մեծամեծներին առաջ, թէ Վահանը երբ և իցէ պէտք է ապըստամբի Պարսիկներից։ Նախանձորդներին պատասխանելու և միանգամայն իւր հաւատարիմ հպատակութիւնը ցոյց տալու համար՝ Վահանը Պարսկաստան գնաց և նոյն իսկ հաւատն ուրացաւ (475 թուերին), և հարկերը ժողովելու պաշտօնն առանձնած՝ Հայաստան վերադարձաւ։ Բայց հաւատուրացութիւնն ևս նախանձորդների բերանը չփակեց. նրանք ամբաստանեցին, թէ Վահանն իւր հսկայածախ ոսկիներով Յունաց կամ Հոնաց զօրքը պէտք է վարձէ և ապստամբութեան դրօշը պարզէ։ Արդարանալու համար Վահանը մեծ քանակութեամբ ոսկի հետն առած կրկին Պարսկաստան գնաց ու ապա փառքով վերադարձաւ (480 թ.)։

3. Բայց դէպքերն այնպէս բերին, որ Վահանը չիրաւի ապստամբեցաւ, և այս մի առիթ էր ուրացութեան անունը վրայից հանելու և միանգամայն հայ ժողովրդի վիճակը թեթեւացնելու։ 481 թուին վրաց Վախթանգ իշխանը ապանեց Վազգէն ուրացողին և ապստամբեցաւ Պարսից դէմ։ Հայ իշխանների մէջ ևս ապստամբելու միտք ծագեցաւ և ամենքի ուշադրութիւնը դարձաւ Վահանի վրայ, որ գործի նախաձեռնութիւնն ու կազմակերպութիւնն իւր վրայ առնէ։ Վահանը մերժից այդ մտադրութիւնը ի նկատի առնելով Հայոց տկարութիւնը, նամանաւանդ երկպառակ ոգին։ Բայց տեսնելով նախարարների թախանձանքը և հաստատուն վճիռը, թէ «լաւ է մի ժամում մեռնինք, քան թէ ամեն օր եկեղեցու և ժողովրդի անպատուութիւնը տեսնենք» վերջապէս յօժարեցաւ ապստամբելու։

Այս ապստամբութիւնը, որ յայտնի է երկրորդ կրօնական պատերազմ անունով, մի քանի տարի տեւեց. և չնայելով որ հայ ազգատոհմերի թիւը շատ տկար էր, այնուամենայնիւ Վահանը իւր հնարագիտութեամբ բոլոր կռիւների մէջ յաղթող հանդիսացաւ։ Կռուողների մէջ էր և Յովհան Մանդակունի կաթուղիկոսը, որ 480 թուին Գիւտին էր յաջորդել։ Պարսիկները թոնարհեցան հայ քաջամարտիկների առաջ, և արքայից արքան ընդունաց հաշտութեան այն պայմանները, որ Վահանը առաջարկեց, այն է. ա. շնորհել քրիստոնէական կրօնի կատարեալ ազատութիւն. ոչ մէկին բռնութեամբ մոգ չդարձնել. հաւատուրացներին զահ ու պատիւ չտալ. հայոց աշխարհից իսպառ վերցնել ատրուշանները։ բ. Տալբերութիւն դնել ընտիր ու վատ, պիտանի ու անպիտան մարդոց մէջ. վաստակաւոր ու պատուական մարդոց միայն պաշտօնի կոչել, իսկ անպիտաններին իսպառ հեռացընել։ գ. Արքայից արքան անձամբ պէտք է ամեն բան քննէ ու իմանայ և ոչ թէ ամբաստանողների խօսքով գործ կատարէ։

Վահանը Պարսկաստան կանչուեցաւ և Վաղարշից՝ հայոց զօրքի սպարապետութիւնը, Մամիկոնեանց տանուտէրութիւնը և այլ պատիւներ ստացած՝ վերադարձաւ (484 թ.)։ Յովհաննէս կաթուղիկոսը խաչով ու ս. Լուսաւորչի մասունքով նրան ընդ առաջ դուրս եկաւ և ամենքը միասին նախ Վաղարշապատի կաթուղիկէն ուխտի եկան և ապա դարձան հայոց բուն ոստանը՝ Դուինի։ Հայ ժողովրդի ուրախութիւնը կրկնապատիկ եղաւ, երբ 485 թուին Վահանը հայոց աշխարհի մարզպան կարգուեցաւ։ Այս դէպքի առթիւ Դուինի մէջ սինհագին բազմութեան առաջ գոհացողական մաղթանք կատարեց Յովհան Մանդակունին և գեղեցիկ ատենաբանութեամբ շնորհաւորեց ուխտապահների յաղթանակը՝ յորդորելով նաև ուխտանենգներին գալ միանալ եկեղեցու հետ։ Այնուհետև եկան խաղաղութեան երկար օրեր, և այդ ժամանակ Յովհան Մանդակունին զբաղուեցաւ հայ եկեղեցու կազմակերպութեամբ. յօրինեց հասարակաց աղօթքի կարգաւորութիւնը (ժամագիրքը), կարգաւորեց Ծիսարանը, յօրինեց դաւանաբանական ու խրատական ճառեր և 491 թուերին վախճանեցաւ։

4. Մանդակունուն յաջորդեց նրա աշակերտ Բաբգէնը, որի հայրապետութեան ժամանակ կաւատ Ա. արքան հալածանք հանեց քրիստոնէութեան դէմ և Վահանը սահմանեցաւ ընդդիմութիւն ցոյց տալ։ Հալածանքը գադարեց 499 թ։ Վահանը ապրեցաւ այլ ևս մի քանի տարի և 20-ամեայ իշխանութիւնից յետոյ 505 թուերին վախճանեցաւ։ Կաւատի հալածանքի ժամանակ նահատակուեցան Աւտոմ Գնունին, Ներսէհ Երեւանդունին և ուրիշները, որոնց յիշատակը ոտնում է հայոց եկեղեցին «ս. Աւտոմեանց վկայից» անունով։

Բաբգէն կաթուղիկոսի գործերից նշանաւոր է 506 թուին գումարած Դուինի ազգային ժողովը, որ մեր պատմութեան մէջ մեծ նշանակութիւն ունեցաւ։ Այդ ժողովը գծեց հայ ազգի և եկեղեցու ապագայ կեանքի ուղին։

Դ. ԳՂՈՒԽ.

ՀԱՅ ԵՒ ՅՈՑՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐԸ.

1. Հայ եկեղեցու պատմութեան ընթացքը ցոյց է տալիս, որ հայ ու յոյն եկեղեցիների յարաբերութիւնը մինչև Զ դար մաերմական էր. հայ եկեղեցին իր կազմակերպութեան սկզբնական շրջանում արդէն իսկ յունական եկեղեցու միջոցով ձևակերպուեցաւ Ճշմարիտ էն, վարչական խնդիրների նկատմամբ (373 թ. յետոյ) հայ ու յոյն եկեղեցիների մէջ գժտութիւն տեղի ունեցաւ, բայց այդ գժտութիւնը թշնամական չեղաւ, որովհետև մէջ տեղ դաւանաբանական խնդիրներ չկային և դարում երկու եկեղեցիների յարաբերութիւնն աւելի մաերմացաւ. մեր երկրի քաղաքական հանդամանքները, պարսից տէրութեան ձգտումը, յունական բարձր լուսաւորութիւնը՝ հայ եկեղեցականների ու նախարարութեան մի մասին ստիպեցին աւելի սերտ յարաբերութիւն ունենալ յունաց յետ՝ իրենց ազգի ու եկեղեցու գոյութիւնն աւելի անսասան պահպանելու յոյսով։ Այս ժամանակ յունական լեզուի ուսումն աւելի տարածուեցաւ. Թարգմանուեցան նշանաւոր հայրերի գրուածները և հայ եկեղեցականները մաերմական թղթակցութեան մէջ էին յոյն եկեղեցու հայրերի հետ։ Երբ Նեստորի պատճառով 431 թ. Եփեսոսի ժողովը գումարուեցաւ, այդ ժողովին՝ թէև անուղղակի, մասնակցեց նաև հայոց եկեղեցին. մեր թարգմանիչները՝ Եղնիկ, Ղևոնդ, Կորիւն, Յովսէփ, ինչպէս Նիկիոյ, այսպէս և Եփեսոսի ժողովի կանոնները, յունարէն Աստուածաշնչի ընտիր օրինակ հետները առած Հայաստան դարձան։ Նեստորականների առթիւ, որոնք մոլորամիտ գրուածներ էին տարածում հայ ժողովրդի մէջ, Սահակ Պարթևը թղթակցութիւն ունեցաւ Մելիտինէի Ակակիոս եպիսկոպոսի, Ռաբուլա եպիսկոպոսի (412—435) և Բիւզանդիոնի Պրոկղ պատրիարքի հետ (434—437), իսկ Ղևոնդ և Աբրահամ աշակերտների ձեռքով։ Առաջին կրօնական պատերազմի ժամանակ հայ եկեղեցին ու աւագանին պաղատական թղթով յունաց ապաւինեցաւ. նոյնն եղաւ նաև երկրորդ ապստամբութեան ըսկզբներում, և Գիւտ կաթուղիկոսը գահընկէց եղաւ իբր յունասիրութեան համար։ Արդ՝ այս դարաւոր մաերմութիւնը թշնամութեան փոխուեցաւ և երկու եկեղեցիներն իրարից բաժանուեցան, երբ Բարկէն կաթուղիկոսը 506 թուին Դուինի առաջին ժողովը գումարեց։

2. Ժողովի գումարման առիթ Քաղկեդոնի դաւանութիւնն էր, որի պատճառով յունաց ամբողջ տէրութիւնն արդէն վաղուց ալէկոծուած էր։—Եփեսոսի ժողովի մէջ, որ եղաւ 431 թուին, Նեստորի աղանդի դէմ սաստկապէս մաքառողներից մէկն էլ Եւտիքէս վանականն էր, որ բուռն պայքարից մղուած ծայրայեղութեան հասցնելով կիւրեղ Աղեքսանդրացու մի բնութեան վարդապետութիւնը՝ մի ուրիշ մոլորութեան մէջ ընկաւ, Նեստորին հակառակ ուսուցանելով՝ թէ Քրիստոս մարմնով մեզ մարդոցս համագոյակից չէր, որովհետև նրա մարմինը երկնային ծագումն ունէր. թէ մարդկութիւնն աստուածութեան մէջ ծորովին խառնուել էր, շփոթուել ու ոչնչացել էր, ապա Քրիստոսի մէջ պէտք է խոստովանել միմիայն աստուածային բնութիւն։ Եւտիքէսի այս վարդապետութիւնը մեծ խռովութիւն առաջ բերից։ Այս առիթով գումարուեցան նախ Պոլսի 448 թուի ժողովը, ուր Փլաբիանոս պատրիարքը Եւտիքէսին հակառակ երկու բնութեան վարդապետութիւնը հրապարակեց, և ապա 449 թուին Եփեսոսի ժողովը, ուր Դիոսկորոս Աղեքսանդրիայի պատրիարքը Եւտիքէսին արդարացրեց և Փլաբիանոսեան երկու բնութիւն վարդապետութիւնը դատապարտեց։ Դաւանական այս մեծ վէճի առիթ հրապարակ եկաւ Հռոմը և Լևոն Ա. պապը 450 թուին ժողով գումարեց, ուր դատապարտեց Եփեսոսի ժողովը, Եւտիքէսին և արգար ճանաչեց Փլաբիանոս պատրիարքին։ Բայց խռովութիւնն աւելի սաստկացաւ և Մարկիանոս կայսրը 451 թուին հոկտեմբերի 8-ին Քաղկեդոն քաղաքում հաւաքուեցաւ նոր ժողով գումարել, որ պատմութեան մէջ յայտնի է Տասներորդ տիեզերական ժողով անունով։

Ժողովական եպիսկոպոսների թուում (636 հոգի) մի քանի հայ եպիսկոպոսներ ևս յիշատակվում են. Մանասէ՝ եպիսկոպոս Կարինի, Պապ՝ Երիզայի եպիսկոպոս, Պրոկղ՝ Աբեղի եպիսկոպոս, Կիրակոս՝ Եկեղեաց եպիսկոպոս, Զաւէն՝ Ծոփաց եպիսկոպոս և ուրիշները, բայց ամենքն էլ Հայաստանի յունաց բաժնից, որոնք թէև հայ, բայց հայոց թագաւորութեան 384 թուի բաժանումից յետոյ չէին ենթարկվում հայոց կաթուղիկոսի իրաւասութեան, այլ կեսարիոյ յոյն մետրապոլիտի իշխանութեան. բուն Պարսից բաժնից, ուր հայոց կաթուղիկոսութիւնն էր և հայ եկեղեցու լրութիւնը՝ և ոչ մի եպիսկոպոս, որովհետև Պարսից բաժնի հայերն ճիշտ այդ ժամանակ իրանց գոյութիւնը պահպանելու մեծ խնդրով՝ վարդանանց պատերազմով էին զբաղուած։

Երկար ու ազմկալից վէճերից յետոյ Քաղկեդոնի ժողովը ճշմարիտների տակ Եւտիքէսի վարդապետութիւնը դատապարտեց և որոշեց Քրիստոսի մէջ երկու բնութիւն դաւանել (Христосъ Ѐ у̀вухъ ѐстествахъ) և ուղղափառական ճանաչեց Լևոն Ա. բնութիւնъ—въ двухъ естествахъ

պապի (440—461) այն դաւանական թուղթը, որ 449 թուին յունիսին գրել էր Պոլսի Փլաբիանոս պատրիարքին և որը մեր եկեղեցական գրականութեան մէջ յայտնի է «մարդադաւան, անիծեալ տումար Լևոնի» անունով։ Բայց ժողովի դաւանութիւնն ընդհանուր եկեղեցու մէջ ընդունելութիւն չգտաւ. կազմուեցաւ մի զօրեղ կուսակցութիւն, որ պատմութեան մէջ յայտնի է մոնոֆիզիտ՝ միաբնակ, մի բնութիւն դաւանող անունով։ 451 թուի նոյեմբերի 1-ից սկսուած մինչև 512 թուականը Յունական ամբողջ կայսերութիւնը քաղկեդոնական ու հակաքաղկեդոնական կուսակցութիւնների կրօնական վէճերով ալեկոծութեան մէջ էր։ Մարկիանոսի յաջորդ կայսրները՝ Լևոն, Զենոն, Անաստաս, աւելի միաբնակների կողմն էին յարած։ Կրօնական երկպառակութիւնները դադարեցնելու համար Զենոն կայսրը 482 թուին իւր միաբանութեան հրովարտակը (Հենոդիկոն) հրատարակեց՝ Ակակիոս պատրիարքի թելադրութեամբ, պատուիրելով ուղղափառ ճանաչել միմիայն Նիկիոյ, Պոլսի և Եփեսոսի ժողովները. Զենոնը մերժում էր Քրիստոսի մէջ բաժանումն դնողներին ուսուցանելով թէ «Աստուածոյ միածին որդին մէկ է, և նրան են վերաբերում թէ հրաշագործութիւնները և թէ չարչարանքները», ճիշտ հակառակ Լևոն պապի և Քաղկեդոնի վարդապետութեան։ Զենոնի այս հրովարտակը միաբնակները մեծ խնդութեամբ ընդունեցին. բայց նոյնը խռովութիւն հաստատելու փոխարէն նոր յուզումներ առաջ բերեց։ Զենոնի յաջորդ Անաստասը աւելի ևս յայտնապէս հակաքաղկեդոնականների կողմն անցաւ և սրանց պատրիարքական աթոռներ տուեց։ Բայց երբ «Սուրբ Աստուած»—փառաբանութեան մէջ «որ խաչեցար վասն մեր» բառերն ևս հրամայեց աւելացնել, Պոլսի մէջ 512 թուին մեծ խռովութիւն յարուցաւ։

3. Յունական կայսերութեան կրօնական այս խռովութիւնները բնականաբար մեր երկրում ևս արձագանգ գտան, քանի որ հայութեան մի ստուար մաս գտնվում էր յունաց իշխանութեան տակ և պարսկական բաժնի հայոց հետ շփումն ունէր. պէտք էր բնութեան խնդրի նկատմամբ մեր եկեղեցին ևս որոշ հայեացք յայտնէր և ժողովրդի տատանուող մտքերը շինէր։ Ահա այս նպատակով Բաշգէն կաթուղիկոսը 506 թուին Դուինի ժողովը գումարեց, որին ներկայ էին 20 հայ եպիսկոպոսներ, 14 հայ նշանաւոր իշխաններ, Վրաց Գաբրիէլ կաթուղիկոսը 23 եպիսկոպոսներով և Աղուանից Շուփհաղիշէ կաթուղիկոսը իր եպիսկոպոսներով։ Այդ՝ ժողովը քննելով Քաղկեդոնի ու Լևոն պապի դաւանութիւնը, և ի նկատի առնելով՝ 1. որ այդ դաւանութիւնը խոստովանելով, թէ Քրիստոս երկու բնութիւն ունի՝ նոյնանուագ Նեստորի վարդապետութեան հետ, 2. որ Քաղկեդոնի ժողովը չգտաւ

պատեց Նեստորի ուսուցիչներին—Թէոդորոս Մոպսուեստացուն և Դիոդորոս Տարսոնացուն, որոնց հայ եկեղեցին արդէն Սահակ Պարթևի ժամանակից դատապարտել էր,—ևս և Իբաս Եդեսացուն, որի դէմ ժողովում մեծամեծ բողոքներ հղան և 3. Յունաց Զենոն կայսեր Հենոտիկոն հրովարտակը, Անաստաս կայսեր թուղթը, ինչպէս և Կիւրեղ Աղեքսանդրացու «Երկոտասան գլուխքը» Նեստորի դէմ՝ նոյնպէս և գործ դրուած բռնութիւնները ու ճնշումները, Դուինի ժողովը մերժեց Քաղկեդոնի դաւանութիւնը իբրև նոր նեստորականութիւն, ինչպէս կանուխէն նոյնը մերժել էր և Յովհան Մանդակունին, և ընդունեց հետևեալ դաւանական բանաձևը, թէ «Քրիստոս է յերկուց կատարեալ բնութեանց մի բնութիւն անշփոթ միաւորեալ». մի դաւանութիւն՝ որ միապէս հերքում է և՛ երկու բնութիւն դաւանողների վարդապետութիւնը, և՛ Եւտիքէսի կամ իսկական միաբնակների մոլորութիւնը. և չարաչար սխալվում են նրանք, որոնք հայ եկեղեցու միաբնակութիւնը շփոթում են նոյն միաբնակութեան հետ։ Դուինի ժողովի որոշումները Բարկէն կաթուղիկոսը յայտնեց ընդհանուր հայ ժողովրդին և պատուիրեց այնուհետև մտերմական յարաբերութիւն չունենալ ամենևին քաղկեդոնականների հետ, այլ նրանց հետ լոկ առևտրական գործեր ունենալ, ինչպէս հրէաների հետ։ Ժողովի այս վճիռը այդ թուականից մեծ թշնամութիւն առաջ բերեց երկու ազգերի—Հայերի ու Յոյների—միջև. այդ ժամանակից սկսուեցաւ յունաց կողմից սաստիկ հալածանք հայ եկեղեցու դէմ, որ սակայն ամենևին չվհատեցաւ և ինքնուրոյն կեանքով հետզհետէ զարգացաւ՝ դարերի ընթացքում հայ ազգի գոյութեան հաստատուն պատուարներից մէկը դառնալով։

3. Մինչդեռ Հայոց, Վրաց և Աղուանից եկեղեցու հայրերը Դուինում խմբուած Քաղկեդոնի դէմ իրանց դաւանութիւնն էին հաստատում, այդ ժամանակ մի ուրիշ յարաբերութիւն ևս մշակուեցաւ. Պարսկաստանի Ասորիների կողմից պատգամաւորներ հկան Դուին՝ Հայոց պաշտպանութիւնը խնդրելու Նեստորականների դէմ։ Եվեսոսի ժողովը թէև Նեստորականութիւնը դատապարտել էր և Եդեսիայի Ռաբուլաս եպիսկոպոսն էլ (412—435) կռուել էր նրա դէմ, բայց և այնպէս նա համարձակ տարածվում էր և ունէր նշանաւոր գործիչներ, ինչպէս օր. Իբասը (†457), որ Ռաբուլասին էր յաջորդել և Քաղկեդոնի ժողովով կրկին իւր վիճակը ստացել։ Երբ Զենոն կայսեր հրամանով 489 թուին Եդեսիոյ Նեստորական դպրոցը փակուեցաւ, Նեստորականները Պարսկաստան քաշուեցան և Մծբին ու Սելևկիա քաղաքներն իրենց գործունէութեան կեդրոն ընտրեցին։ Նեստորական եպիսկոպոսներից նշանաւոր հանդիսացան Բարծուման ու Բաբէն, որ 499 թուին Սելևկիայի ժողովը գումարից և Նեստորականութիւնը պաշտօնապէս Պարս-

կաթան (նեստորական Ասորւոց) եկեղեցւոյ դաւանութիւն ընդունեց։ Այս ժողովից յետոյ ահա նեստորականները սաստկապէս հալածել սկսան ուղղափառ դաւանութեան՝ Եփեսոսի վարդապետութեան հետևող Ասորիներին, որոնք այդ հայհոյանքներից ազատուելու համար դիմեցին հայոց եկեղեցու պաշտպանութեան, «որպէս զի ս. հայրերի աւանդութիւններն ու պատուէրները հաստատուն ու անշարժ մնան»։ Դուինի ժողովը՝ ի նկատի առնելով ուղղափառ Ասորիների խնդրուածքը, գրեց նաև մի թուղթ Պարսկաստանի ուղղափառներին, քաջալերելով նրանց՝ հաստատուն մնալ իրենց դաւանութեան մէջ, որ նոյն է Հայոց, Վրաց, Աղուանից ու Յունաց եկեղեցիների դաւանութեան հետ։ Այս թուղթը գրուեցաւ յատկապէս նեստորականների դէմ, այս պատճառով էլ այստեղ յիշատակութիւն չի լինում Բաղկեդոնի մասին, և Հայերը բացարձակօրէն յայտնում են, թէ Յոյներն էլ Եփեսոսի դաւանութեան նկատմամբ իրենց համախոհ են։ Բայց երբ Ասորիների կողմից կրկին պատգամաւորութիւն եկաւ յայտնելով, թէ նեստորականները չեն դադարում՝ նախ՝ ուղղուց և թէ նրանք համարձակութիւն ունին Բաղկեդոնի ժողովից, այն ժամանակ Բաբգէն կաթուղիկոսը հայ եպիսկոպոսների ու իշխանների կողմից գրից իւր երկրորդ թուղթը (508 թուականին), ուր բացարձակօրէն մերժում է Բաղկեդոնի ժողովը՝ և ուրիշ հերետիկոսների հետ նաև Եւտիքէսին։ Այս երկրորդ թղթի գրութեան համար ժողով գումարելու խօսք չի լինում, որովհետև թղթի բովանդակութիւնը 506 թուի ժողովի որոշումներն էր։

ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ

Ա. յօդուած

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ.

1. Եկեղեցական և առհասարակ ազգային գրականութեան հիմքը դրուեցաւ այն օրուանից, երբ 404 թուին շատահանճար Մաշտոցը հայկական տառերը գտաւ և առաջին հայ գիրքը գրուեցաւ։ Այս նշանաւոր անցքը մեծ ոգևորութեամբ նկարագրում են մեր պատմիչները՝ ցոյց տալով այն մեծ բարիքները, որ հայ ժողովուրդը այդ փոքր նշանախեցիներից ստացաւ։ Տառերի գիւտից անմիջապէս յետոյ գրողներ բացուեցան, և սկսուեցաւ մի թարգմանչական գործունէութիւն, որով մի արևելեան ժողովուրդ հաղորդակից եղաւ եւրոպական մտածողութեան ու գաղափարներին։ Հայերէն լեզուի տառեր յօրինելու գաղափարը ծնունդ էր բարոզելու այն գործառութեան, որ կրում էին Մաշտոց վարդապետն ու նրա մեծահասակ թարգմանիչ աշակերտները. այս իսկ պատճառով բնականօրէն նորահաստատ հայ գրականութիւնը կրօնական-քարոզչական ուղղութիւն պէտք է ունենար, որ անհրաժեշտ էր դարեր առաջ քրիստոնէական բարոյական գաղափարներով վերածնելու և լուսաւորելու համար։

2. Եկեղեցական և ազգային գրականութեան առաջին կոթող հանդիսացաւ ս. Գրքի հոյակապ թարգմանութիւնը, որ գլուխ հկաւ և դարի առաջին կիսում Սահակ Պարթևի ձեռքով։ Ղազար Փարպեցին նկարագրում է այն պատճառները, որով հայ ժողովուրդը դիմեց ս. Սահակ Պարթևին ս. Գիրքը հայերէն թարգմանելու և հայ աշխարհի հոգևոր մշակութեան պատճառ դառնալու համար։ Մեծ հայրապետը կատարեց ազգի ցանկութիւնը և իսկոյն թարգմանութեան ձեռք զարկաւ։ Որչափ և մեծ էր ս. Սահակի աշխատանքն ու հմտութիւնը, բայց և այնպէս դժուար էր այն ժամանակներում միայնակ գլուխ բերել ս. Գրքի թարգմանութիւնը, մանաւանդ որ նա հայրապետական գործերով ևս զբաղուած էր. ուստի կարելի չէ բնաւ տարակուսել, թէ այդ գործի թարգմանութեան մէջ մասնակցութիւն ունեցաւ և ս. Մեսրովբ։ Նախնարար յունարէնից թարգմանուեցան ս. Գրքի այն մա-

սերը, որոնք եկեղեցական պաշտամունքի ժամանակ կարդացվում էին, թեև և միւս մասերը: Բայց անվստահ լինելով Հայաստանի մէջ գըտնուած յունարէն Աստուածաշնչի հարազատութեան վրայ՝ հետամուտ եղան Եօթանասնից յոյն թարգմանութեան «ճիշդ ու ստուգուած» օրինակ ձեռք բերել, որոնք Եւսեբիոս եպիսկոպոսի խնամքով կատարուած՝ պահվում էին Բիւզանդիոնում: 432 թուին մեր թարգմանիչները Բիւզանդիոնից վերադառնալիս՝ իրենց հետ բերին մի այդպիսի ճշդուած օրինակ, որի համեմատ նախկին թարգմանութիւնը սրբագրուեցաւ կամ կրկին թարգմանուեցաւ, և այդ՝ գործ է ածվում մեր եկեղեցում մինչև ցայսօր:

Աստուածաշնչի հայ թարգմանութիւնը թէև բնագրի համեմատութեամբ շատ մութ և անհասկանալի կտորներ ունի (մանաւանդ մարգարէութիւնների մէջ), բայց այդ հետևանք է իսկապէս Եօթանասնից կոչուած յոյն թարգմանութեան. ընդհանրապէս առնելով հայ թարգմանութիւնը հաւատարիմ, վեմ ու ճշգրիտ է, ըստ ամենայնի բնագրի ոգին ու վսեմութիւնը ցայտեցնող:

Տարակոյս չկայ, որ ե դարում ս. Գիրքը ամբողջապէս թարգմանուեցաւ:Կորիւնը թուելով հայ տառերի գիւտի բարերար հետևանքները՝ խօսքը ս. Գրքի թարգմանութեան վրայ է դարձնում և ասում. «Այն ժամանակ օրէնուսոյց Մովսէսը մարգարէական դասին հետ և յառաջադէմ Պաւղոսը բովանդակ առաքելական գնդի ու աշխարհակեցոյց Աւետարանների հետ... հայաբարբառ ու հայերէնախօս եղան»: Կորիւնի այս թանկագին վկայութիւնը հաստատվում է Եղնիկի, Եղիշէի և ուրիշների բերած վկայութիւններով ու ակնարկներով, որով ս. Գրքի ե դարում ամբողջապէս թարգմանուած լինելուն ամենևին տարակոյս չի մնում—է դարում կատարուել է ս. Գրքի այս հին թարգմանութեան սրբագրութիւնը, իսկ Աւետարանը նորապէս թարգմանուել է. ինչպէս պարզորոշ յիշատակում է Բուզենաւորը, որը և այդ նորաբեր թարգմանութիւնը վերագրում է Մայրագոմեցիներին: Բայց այդ նոր թարգմանութիւնը բնականաբար ընդունած չէ և այժմ էլ չի գտնվում:

3. Աստուածաշնչի թարգմանութեամբ սկիզբ դրուեցաւ մի եռանդուն գործունէութեան, որով քրիստոնէական եկեղեցու նշանաւոր հայրերի գործերը մատչելի դարձան հայ ժողովրդին: Թարգմանութիւններ կատարուեցան նախ՝ ասորերէն լեզուից և ապա՝ յունարէնից, և այս գործի մէջ մեծ արդիւնք ունեցան Յովսէփ, Յովհան, Եղնիկ, Կորիւն և Սահակի ու Մեսրովբի հետևակ աշակերտները, որոնք ընդհանրապէս յայտնի են «Թարգմանիչներ» անունով: Այսպէս ընտիր ոճով այս ժամանակներում թարգմանուեցան Եփրեմ Ասորու, Բարսեղ Կեսարացու, Կիւրեղ Աղեքսանդրացու, Կիւրիղ Երուսաղեմացու, Յովհան Ոսկեբերանի և ուրիշների աշխատութիւնները, որոնցով՝ լրթուեցաւ ու դաստիարակուեցաւ հայ ժողովուրդը և քրիստոնէական դաղափարները առաւել այժ ու հաստատութիւն գտան: Հայ ժողովրդի աշխարհայեցողութեան վրայ խորապէս ազդից ս. Գիրքը և մանաւանդ Սաղմոսը, որ բերանք էր ուսուցվում և դպրոցներում գործածվում: Թարգմանական գրականութիւնը հիմք դարձաւ նաև ինքնուրոյն ազգային գրականութեան, որ մեր ազգի գոյութեան զօրաւոր սիւներից մէկն եղաւ:

Հայոց ինքնուրոյն գրականութեան առաջին հեղինակ հանդիսացաւ Սահակ Պարթևը, որ բացի ս. Գրքի թարգմանութիւնից՝ թողել է մի քանի ուրիշ թղթեր՝ դաւանաբանական և այլ բովանդակութեամբ, և Գիր աւանդութեան ու կանոնք կոչուած ընդհանրական թղթերը, որոնց մէջ մանրամասն խօսում է եկեղեցու ներքին փոխադարձ յարաբերութեան ու պարտականութիւնների մասին:

Մեր հոգևոր բանաստեղծութեան (շարականների) նախկին հեղինակ նոյնպէս Սահակ Պարթևն է համարվում: Բանաստեղծութիւնը կրօնական գաղափարներ տարածելու շատ նպատակայարմար միջոց էր, և մենք տեսնում ենք, որ ուրիշ քրիստոնեայ ազգերի մէջ ևս այդ միջոցն է գործադրվում. Ասորիքում եկեղեցական երգերի հեղինակ է հանդիսանում Եփրեմ Ասորին, յունաց եկեղեցու մէջ—Գրիգոր Աստուածաբանը, իսկ Հռոմէական եկեղեցում—Ամբրոսիոս եպիսկոպոսը՝ ամենքն էլ Դ դարում: Ի նկատի առնելով ընդհանրապէս հայ ժողովրդի ձգտումը դէպի հեթանոսական երգեր, որի մասին Փաւստոսը առանձնապէս շեշտում է, և առհասարակ հայի բարոյական կեանքը, բնականաբար պէտք է ընդունինք, թէ մեր գրականութեան նախահայրերը—Սահակն ու Մաշտոցը—հայ ժողովրդին բարոյապէս վերածնելու համար պէտք է հոգևոր երգեր ևս յօրինած լինին, որ իւր աշխարհային երգերի փոխարէն գործածէ: Աւանդութիւնը Սահակ հայրապետին է վերագրում Ղազարի յարութեան, Աւագ Ուրբաթի և Աւագ շաբաթի շարականները, որոնց մէջ Քրիստոս պատկերացվում է իբրև լոյս, կեանք, անմահութիւն, որ յաղթում է խաւարին, ապականութեան. Նրանից դողում է մահը, դժոխքը սարսում է և մահացեալ Ղազարոսը կենդանութիւն ստանում: Այսպիսի գաղափարներով Սահակ հայրապետը քաջալերում է իւր ժամանակի քաղաքականապէս ալեկոծ Հայերին, որ երբեք չվհատին: Աւագ Ուրբաթի շարականի մէջ նա պատկերացնում է այն ազգուրաց դաւաճաններին, որոնք աշխարհային փառքի համար մատնում են իրանց հայրենիքն ու եկեղեցին, ինչպէս Յուդան իւր մեծ վարդապետին:

Պէտք է սակայն նկատել, որ այս շարականների լեզուն ե դարի լեզուական դրոշմը չի կրում, և եթէ լոկ այս կէտը հիմունք առ-

նենք, այն ժամանակ բնականաբար այդ երգերը կարող չեն Մեծ Պարթևի գործ լինել։

4. Ե դարի երկրորդ մեծ հեղինակ հանդիսանում է Մեսրովը— Մաշտոց վարդապետը, որի անունն անմահացած է հայ տառերի գիւտով։ Թէ նա ինչպէս գլուխ բերից այդ մեծ գործը, այդ՝ հայոց գրականութեան պատմութեան է վերաբերում։ այստեղ կը խօսինք լոկ նրա եկեղեցական-գրական գործերի մասին։ Այս մեծ մարդը, Հայոց աշխարհի անձանձրոյթ Ուսուցողը՝ իւր անընդհատ գործունէութեան մէջ գրական գործերով ևս զբաղուելու ժամանակ ունեցաւ. յատկապէս յիշւում է, որ նա է թարգմանել Սողոմոնի Առակաց գիրքը, իսկ Կորիւնը նրա համար ասում է, թէ «շատ խրատիչ ու զգաստացուցիչ թղթեր էր ուղարկում Հայաստանի բոլոր գաւառները»։ Այս թղթերի ժողովածուն յայտնի է« Ցաճախապատում ճառք» (միշտ կրկնելի ճառեր) անունով, որ վերագրվում է նաև ս. Գրիգոր Լուսաւորչին։ Կարելի է կարծել. թէ վերջինս է իսկական հեղինակը, իսկ առաջինը նոյն գործը թարգմանել է նորանոր յաւելուածներով։ Գիրքը իւր ներքին բովանդակութեամբ ե դարի շրջանակից դուրս չի գալիս. մի տեղ Արշակունեաց տոհմը իբրև օրինակ բերելով՝ պարզ ցոյց է տալիս, թէ նա ե դարի առաջին կիսամեակից առաջ է գրուել։ Ամբողջ գիրքը 23 ճառերից է կազմուած. նրանց մի մասը խօսում է դաւանաբանական, իսկ միւսները՝ բարոյական խնդիրների մասին. ինչ է հաւատքը, ինչ է չարը, ինչ է անձնիշխանութիւնը, որոնք են քրիստոնէական առաքինութիւնները, ինչպէս կարող է մարդս նրանց հասնել. ահա այս և այլ սրանց նման բարոյական խնդիրների լուծման է նուիրուած ամբողջ գործը։ Մաշտոցը աշխատում է վերացական պաղտիարները միշտ թանձրացնել օրինակներով ըմբռնելի դարձնել. այսպէս օրինակ բերում է դարբին, ոսկերիչ, հանդերձարար, խոհարար, հոդագործ, բժիշկ և այլն, որոնք ժողովրդին աւելի ծանօթ էին։ Ճառերից մանաւանդ պէտք է յիշատակել իններորդը՝ «վասն ամենաուսեալ կատարեալ պահաց», ուր մի առ մի թւում է այն բոլոր հոտնանքները, որ պահեցողութիւնից են առաջ գալիս։ Պէտք է նկատել, որ Զգօն Ամրաստ պարսկի ճառերի և Ցաճախապատումի մէջ բաւական ընդհանուր կէտեր կան։ Ցաճախապատումի 23-րդ ճառը վանական կազմակերպութեան է նուիրուած, և ինչպէս արդէն ասել ենք, այդ ճառը Բասեղ Կեսարացու վանական կանոնների ամփոփումն է ներկայացնում։ Ս. Մեսրոբ աշխատանք է համարվում և ս. Գրիգոր Լուսաւորչի վարքը, այժմեան Ագաթանգեղոսի նախատիպը, ինչպէս նաև մեծն Ներսէսի կեանքը։

Ս. Մեսրովբին են վերագրում և ապաշխարութեան շարականնե-

րի մի մասը։ Այս շարականները՝ չնայելով որ իմաստի կողմից միակերպութիւն են ներկայացնում, շատ ազգու և միանգամայն խորապէս զգացուող սրտի հառաչանքներ են։ Եփրեմ Ասորու կրօնական երգերի և մանաւանդ Սաղմոսների խոր ազդեցութիւնը պարզ երևում է Մաշտոցի քնարերգութեան վրայ. նոյնպէս համաոօտ, նոյնպէս կրկնութիւններով։ Իւր ներքին յուզումներն ու ժամանակի կիանքն է պատկերացնում Մաշտոցը, որից նա զզուած անապատ քաշուեցաւ, երբ գոչում է. «Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ, նաւապետ բարի, ինձ օգնեա։ Ծորըք պատրանաց զիս կորուսանեն, այլ դու, նաւապետ բարի, չնորհեա ինձ նաւահանգիստ»։

Վերջապէս Մաշտոցի կամ Ծիսարանի կազմութիւնն ևս Մեսրովբին է վերագրվում. բայց այս խնդրի մասին առ այժմ որոշ կարծիք կարելի չէ յայտնել։

5. Ս. Սահակի ու Մաշտոցի աշակերտներն ևս, որոնք երէց կամ առաջին թարգմանիչ՝ (նախնաբար-մեկնիչ) անունով յայտնի են, աշխատեցին հայ գրականութիւնը ճոխացնել թարգմանական ու ինքնագիր գործերով։ Սրանցից յատկապէս կը յիշատակենք բուն եկեղեցական մատենագիրներին։

ա. Եզնիկ Կողբացին ճակատ գաւառի Կողբ գիւղից էր՝ ծնուած մօտ 375 թուերին։ Նա աշակերտեց ս. Մեսրովբին Գողթն գաւառում և նրան հետևող ու գործակից եղաւ ամէն բանի մէջ։ Տաճրի գիւտի պատճառով երբ Մաշտոցը եդեսիա գնաց, միւսների հետ էր նաև Եզնիկը, որը և քաջ հմտացաւ ասորական ու եբրայական լեզուին։ Տաճրի գիւտից յետոյ՝ հայ նորաբաց դպրոցներում գործեց և ապա 424 թուերին ուղարկուեցաւ եդեսիա՝ ասորական եկեղեցու ս. հայրերի գործերը հայերէն թարգմանելու։ Կատարելով իւր աշակերտակից Յովսէփ Պաղնացու հետ իր ուսուցիչների պատուէրը և թարգմանած գործերը նրանց ուղարկելուց յետոյ՝Եզնիկը իւր ընկերոջ հետ Բիւզանդիոն անցաւ (429 թուերին) և քաջ հմտանալով յոյն լեզուին՝ ձեռնարկեց յոյն եկեղեցու հայրերի գործերը հայերէն թարգմանելուիւր ընկերակիցների (Կորիւն, Ղևոնդ, Յովսէփ) հետ Եզնիկը 432 թուին հայրենիք դարձաւ բերելով Նիկիական և Եփեսոսի ժողովի կանոնները, ս. Գրքի ընտիր օրինակ և ս. հարց գործերի թարգմանութիւնը և ներկայացաւ Սահակ Պարթևին ու Մաշտոցին, և ծերունազարդ հայրապետը Եզնիկի գործակցութեամբ կրկին թարգմանեց ս. Գիրքը։ Այս հանգամանքը ցոյց է տալիս, թէ որքան մեծ յարգանք էր վայելում Եզնիկը իւր հմտութեամբ։ Հաւանօրէն այս ժամանակներում նա Սահակ Պարթևից Բագրեւանդի եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և վերջը 449 թուին մասնակցեց Արտաշատի ժողովին, որ գումարուեցաւ Յազկերտ Բ-ի թղթին

ալատասխանելու համար։ Հաւանօրէն Վարդանանց պատերազմից յետոյ 452 թուերին վախճանեցաւ եղնիկը մեծի բազմաթիւ թարգմանութիւններից (հաւանօրէն կիւրեղ Աղեքսանդրացու և Ոսկիբերանի գործերը), որ կատարեց Բիւզանդիոնում և այդտեղից վերադառնալուց յետոյ՝ նա թողել է և մի փոքրիկ մատեան «Եղծ Աղանդոց» անունով, որ յօրինել է 444—449 թուերին։ Գործը բաժանվում է 4 դրքի՝ 1. Ընդդէմ հեթանոսաց, 2. Ընդդէմ քէշին Պարսից, 3. Ընդդէմ իմաստնոց Յունաց և 4. Ընդդէմ Մարկիոնի։ Եղնիկի գրուածքը իսկ ժամանակի պահանջ էր. մի կողմից հեթանոսական հաւատալիքներ տակաւին ա-ռատ էին հայ ժողովրդի մէջ, միւս կողմից Պարսիկներն էին սպառնում Քրիստոնէութեան, վերջապէս Մարկիոնի վարդապետութիւնը մեծ յուզումներ էր առաջ բերել այս ժամանակներն Ասորիքի մէջ. և եղնիկը իբրև հմուտ եկեղեցական ասպարէզ է իջնում «ի սիրոյ բարեկամաց» պաշտպանելու քրիստոնէական հաւատը՝ աղանդաւորների դէմ «Գրովք սրբովք», իսկ հեթանոսների դէմ՝ «լիրօք ճշմարտութեան»։ Խորին համոզութիւն և զօրաւոր տրամաբանութիւն է ցոյց տալիս եղնիկն իւր այս փոքրիկ մատեանի մէջ, մանաւանդ երբ խօսում է Պարսից կրօնի մասին և այդ փոքր գրուածքը իւր բովանդակութեամբ կարևոր տեղ է բռնում ոչ միայն մեր, այլ և ընդհանուր եկեղեցու հայրաբանական գրականութեան մէջ։

Լեզուական տեսակէտով ևս եղնիկի գրուածքը մեր գրականութեան մէջ առաջին տեղն է բռնում իւր ընտիր ու աննման հայկաբանութեամբ։

բ. Յովհան Մանդակունի կաթուղիկոսը ոչ միայն նշանաւոր եղաւ իբրև գործիչ, այլ և իբրև եկեղեցական մատենագիր։ Նրա անունով պահուած են բազմաթիւ ճառեր, որոնցից սակայն շատերը մերժելի են իբրև յետին ժամանակների գործեր. այդ ճառերի մի մասն էլ է դարում ապրող Յովհան Մայրագոմեցուն է պատկանում (Կար. եպս. Շող.)։ Մանդակունին կատարել է թարգմանութիւններ, ինչպէս օր. Գրիգոր Աստուածաբանի պատարագամատոյցը, որ աւելի յայտնի է Սբ. Թանասի անունով. գրել է դաւանաբանական գրուածներ, որոնց մէջ նշանաւոր է Հակաճառութիւնը Քաղկեդոնի ժողովի դէմ՝ ուղ. Գիրք Թղթոցի մէջ։ Նա կարգաւորել է ժամապիրքը և գրել է Ջատիկ-ցեալք քարոզը և Զքէն գոհանամք աղօթքը, որոնք մինչև այսօր էլ ասւում են. ճոխացրել է մեր ծիսարանը նոր մասերի յաւելմամբ, գրել է մեկնութիւններ, որոնցից հատուածներ են միայն մնացած։ Մեր բոլոր պատմիչներն էլ (Յովհ. Ասող. Վրդն) գրուատիքով խօսում են Մանդակունու գրական ու բարեկարգչական գործունէութեան վրայ։

գ. Իբրև նշանաւոր մատենագիր յիշվում է և դարում Փիլիսո-

փոս Մովսէսը, որ իւր երկրաւոր կեանքում հրեշտակ է եղել և գրել է բազմաթիւ լուսաւորիչ ու տպիտանալած մատեաններ (Փարպ.). բայց և այնպէս ժամանակակիցներից հալածուել է. նրա գրական գործերից մեզ ոչինչ չէ հասել։

Բ. յօդուած

Ա Ղ Ա Ն Դ Ն Ե Ր.

1. Կրօնական ինքնուրոյն մտածողութեան արգասիք են աղանդները, որոնք քրիստոնէութեան սկզբնական շրջաններից ծնունդ առին և մեծամեծ յուզումների ու խռովութիւնների պատճառ դարձան։ Տիեզերական եկեղեցին յուզող աղանդներից ոմանք արձագանգ գտան նաև մեր երկրում, մտքեր յուզեցին, և մեր եկեղեցին մի շղոցներ ձեռք առաւ նրանց ծաւալման առաջն առնելու։ Բայց շատ անորոշ և կըցկտուր են այն տեղեկութիւնները, որ ունինք այս կարևոր խնդրի նըկատմամբ, որոնք չեն էլ բացայայտում, թէ ինչ մանակցութիւն ունեցաւ և ինչ դեր խաղաց հայ միտքը, որ շատ տեսակէտներով շահեկան կըլինէր։

Մեր երկրի մէջ քարոզուող աղանդներից պէտք է յիշատակել.

Ա. Մարկիոնի աղանդը, որ Բ դարի կէսերին նախ Պոնտոսում քարոզուեցաւ և ապա տարածուեցաւ շատ տեղեր և իւր գոյութիւնը շարունակեց մինչև Զ դար։ Ե դարի առաջին կիսում այս աղանդը շատ մեծ յուզումն առաջ բերեց մեր դրացի Ասորւոց երկրում և այտեղից էլ հաւանօրէն արձագանգ գտաւ մեր երկրում։ Այս կարծիքը հաստատող դրական փաստեր արդարև չունինք. բայց ի նկատի առնելով Եղնիկ Կողբացու հերքումը՝ մի այդպիսի մակաբերութիւն կարող ենք անել. այլապէս Եղնիկի հերքումն անխորհուրդ կըլիներ։ Մարկիոնի աղանդը գնոստիկեան էր, այն է՝ խառնուրդ քրիստոնէութեան ու հեթանոսական փիլիսոփայութեան։ Նա մերժում էր ամբողջ Հին կտակարանը, իսկ նորից ընդունում էր միմիայն Ղուկասի Աւետարանն ու Պօղոսի 10 թղթերը։ Աշխարհի ծագման և մարդուս առեղծման նըկատմամբ բոլորովին այլ վարդապետութիւն ունէր. ընդունում էր Փրկչին, բայց ոչ Աւետարանների տեսութեան համեմատ, ուրանում էր Քրիստոսի մարգանալը, չարչարանքները ու յարութիւնը՝ ուսուցանելով թէ նրա մարմինը հոգևոր ու երևութային էր։ Բարոյականի մէջ

Մարկիոնը խիստ էր. նա արգելում էր մսեղէն կերակուր՝ բայլ ձըկից, միրժում էր ամուսնութիւն և մկրտուելու անհրաժեշտ պայման կուսութիւնն էր համարում։ Ինչպէս վերևում ասացինք, Մարկիոնի վարդապետութիւնը մեծ հմտութեամբ հերքում է մեր ընտիր մատենագիր Եղնիկ վարդապետը։

Բ. Քրիստոնէութեան Գ դարում Պարսկաստանի մէջ մի նոր վարդապետութիւն կազմուեցաւ Մանէս Պարսկի ձեռքով. այդ աղանդը պատմութեան մէջ յայտնի է Մանիքէութիւն անունով։ Նրա հիմնական սկզբունքը Զրադաշտի երկու սկզբունքներն են, այն է՝ Բարի և Չար աստուածոյ գաղափարները... Մանէսը չէր ընդունում Հին կտակարանը՝ համարելով թէ հրէութիւնը քրիստոնէութեան ոգուն բոլորովին հակառակ է. բայց Նոր կտակարանից ևս շատ բան մերժում էր։ Նա ընդունում էր Փրկչի գալուստը մարդկային կերպարանքով, բայց որովհետև նիւթը չար Արարչի ստեղծածն էր, ապա Քրիստոսի մարմնաւորութիւնն ու չարչարանքը առաչօք էր համարում։ Մանէսի կարծիքով Քրիստոս եկաւ մարդոց լուսաւորելու, իրանց երկնային ծագումը ցոյց տալու համար և թէ ինչպէս ամէն տեսակ զգայական ցանկութիւններին յաղթելով մարդս կրկին կարող է երկինք վերադառնալ։ Այս իսկ պատճառով Մանէսը իւր հետևողներին պատուիրում էր կատարեալ ողջախոհութիւն ու ժուժկալ կեանք, առաջադրում էր հրաժարուել գինուց, մսից և առ հասարակ ինչքից և կերակրուել միմիայն ընդեղէնով ու հացով։

Այս աղանդը շատ ճիւղաւորութիւններ ունեցաւ ու շատ տարածուեցաւ։ Մեր երկրի ու Պարսկաստանի միջև եղած սերտ յարաբերութեան շնորհիւ՝ մեր մէջ էլ տարածուեցաւ. Ղազար Փարպեցին նոյնը յիշում է, իսկ եղնիկը ընդարձակօրէն նոյնը հերքում։ Երևի մանիքեցւոց մի ճիւղն էր «բորբորիտոն» (աղմային՝ անշուշտ բաբոյականի կողմից), կոչուած աղանդը արևմտեան Հայաստանում, որը սաստիկ հալածուեցաւ Սահակ Պարթևից, և այս եննադրութեան կուսան է տալիս այն պարագան, որ եղնիկը (Բ 117) մեծապէս դատովում է Մանիքեցւոց զեղծ ու վատթար կեանքը։ Այսպէս նաև պէտք է կարծել, որ Կորիւնի յիշատակած «Սատանայական» աղանդը արևելեան Հայաստանում նոյնպէս մանիքէութեան մի ուրիշ ճիւղն էր։ Մաշտոց վարդապետը այս աղանդի դէմ շատ կռուեցաւ, բայց նա իւր գոյութիւնը սակաւին երկար ժամանակ պահպանեց։

Գ. Շահապիւանի ժողովի կանոնների և առ հասարակ մեր եկեղեցական գրականութեան մէջ յաճախ յիշատակվում են մծղնեայ աղանդաւորները։ Մծղնեայ, (Մեսաղեան, Մասալեան), որ նշանակում է աղօթաւոր, կոչվում էին այն սուրբ աղանդաւորները, որոնք ուսուցանում էին, թէ կատարեալ կեանքի հասնելու և սուրբ երկորդութիւնն աչքով տեսնելու միակ միջոցը անդադար աղօթելն է։ Նրանք չէին ընդունում, որ եկեղեցու խորհուրդները մարդուս մեղքը ջնջում են. այդ լինում է միմիայն աղօթելով։ Հաւատում էին, թէ ամէն մարդու մէջ իծնէ մի գև կայ, որ դրդում է նրան մեղանչելու, մերժում էին ամուսնութիւն, աշխատանք և ապրում էին մուրացկանութեամբ ու բացօթեայ։ Այս աղանդը 300 թուերին հրապարակ դուրս եկաւ Ասորիքում և դրացի երկիրներում շատ տարածուեցաւ։ Շահապիւանի ժողովի 19-րդ կանոնը բացարձակ հաստատում է, թէ այդ աղանդը տարածուած էր նաև մեր երկրում։ Ժողովը խիստ պատիժներ սահմանեց աղանդաւորների դէմ ոչ թէ միայն նրա համար, որ եկեղեցու խորհուրդները մերժում էին և իրենց հետևողներին դատարկ ու անարդիւնաբեր կեանքի վարժեցնում, այլ յատկապէս նրանց անառակ, պիղծ կեանքի համար. նրանք սիրում էին յափշտակութեան՝ էքսթազի մէջ ընկնել (կոչուել են նաև էնթուզեանք) և անառակութեան անձնատուր լինել։

Դ. Տիեզերական եկեղեցին յուզող աղանդներից Արիոսականութիւնն ըստ երևութին ունեցել է հետևողներ մեր եկեղեցականների մէջ. այսպէս՝ Երուսաղէմի Մակարիոս եպիսկոպոսի վերծանէսին գրած թղթի մէջ Բասէնի Տուրք եպիսկոպոսի մասին յիշատակվում է, թէ փոքր ինչ արիոսականների կողմն է անցել։ Ինչպէս առաջ յիշեցինք, Մեծն Ներսէսը 354 թ. Աշտիշատի ժողովի մէջ դատանական միութիւն հաստատեց՝ ընդունել տալով Նիկիական հանգանակը և այս պարագան ցոյց է տալիս, թէ տարաձոն մտքեր կային։ Ներսէսին ժամանակակից և աւժամանակեայ յաջորդ Յուսիկ (=Ջունակ—Իոզակ) եպիսկոպոսը 363 թուի Անտիոքի ժողովին մասնակցեց և միւս Ակակիան (Կէսարիոսեան) եպիսկոպոսների հետ Նիկիոյ հանգանակը (ի միասին էական, համազոյակից բառն) ընդունեց։ Վաղէս կայսեր Բասիլեղ կեսարացուն գրած մի թղթի մէջ ևս ակնակութիւն է լինում, թէ Հայաստանի մէջ արիոսականութիւն կայ. թէև այդ ակնարկը Փոքր Հայքի համար է, բայց և այնպէս Փոքր Հայքի հայ ժողովուրդը այս կամ այն կերպով կարող էր ազդեցութիւն ունենալ իւր ցեղակիցների վրայ։ Այդ՝ այս բոլոր տեղեկութիւնները հաւանական են կացուցանում, թէ Արիոսի աղանդը մեր հոգևորականների մէջ ևս իրան հետևնում, թէ Արիոսի աղանդը մեր հոգևորականների մէջ ևս իրան հետևողներ ունեցել է. բայց նրա գործած ազդեցութեան կամ յարուցած վէճերի մասին ոչ մի տեղեկութիւն չունինք, որովհետև ժամանակակից պատմական աղբիւրներ չունինք։

Ե. Վերոյիշեալ աղանդներն օտարերկրեայ էին։ Փարպեցին իւր թղթի մէջ (657. 659 եր.) մի բուն հայ աղանդ է յիշատակում, որի

ոչ. հեղինակն է յայտնի եղել և ոչ էլ գրաւոր բովանդակութիւնը. ինքը Փարպեցին էլ չափազանց աղտեղի է համարում այդ աղանդի անունը պարզ յայտնել։ Ընդհանուր խօսքերով ասում է, թէ այդ աղանդը պոռնկութիւնը մեղք չէր համարում և թէ տգէտ ու անկարգ վարքի տէր հայը միայն կարող էր մի այդպիսի աղանդ բուսցնել։ Ինչպէս երևում է, Ղազարի թշնամիները նրան էլ այս աղանդով վարակուած էին համարում՝ ապացոյց բերելով թէ պոռնկասէր մարդիկ Ղազարի մօտ ապաստանարան են գտնում, և թէ նա չի պատապարտում նրանց, որոնց մեղադրիչներն աղանդաւոր էին ճանաչում։ Այսպէս այս հայ աղանդի բարոյականի մասին փոքր ինչ տեղեկութիւն ունինք. բայց նրա բուն դաւանական վարդապետութիւնը, եթէ ունեցել է, մեզ խոպան անծանօթ է։

Աղանդական կարծիքների հետ հին հեթանոսական հայեացքներ ու հաւատալիքներ հայ ժողովրդի մէջ զարձեալ շարունակվում էին. և չնայելով որ հայ եկեղեցականները ժողովական կանոններով միշտ աշխատեցին կռուել այլ և այլ անապաշտութիւնների ու հաւատալիքների դէմ, բայց նրանք շարունակեցին յամառութեամբ իրանց գոյութիւնը մինչև մեր օրերը պահպանել։ Այդպիսի անապաշտութիւններ մեզ ներկայացնում է Եղնիկի նշած Աղանդոցը։

Գ. յօդուած

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ, ՋԳԵՍՏՆԵՐ ԵՒ ԱՅԼՆ.

1. Մեր պատմիչների խօսքերից պարզ երևում է, որ Դ և Ե դարերում հայոց եկեղեցու մէջ փոքր ի շատէ փոփոխութեամբ իշխում էին ընդհանուր քրիստոնէական եկեղեցու կարգերը։ Ե դարում Աստուածաշունչը թարգմանուեցաւ յունարէնից. հայ եկեղեցու ընթերցուածները որոշուեցան. Սահակ Պարթևի, Գիւտի և առաքելապէս Յովհան Մանդակունու ձեռքով կազմակերպուեցաւ Հասարակաց աղօթքի մատեանը (ժամագիրքը), Մաշտոցը, Պատարագամատոյցը՝ մասամբ ինքնատիպ աղօթքներով, մասամբ էլ յունարէնից կամ ասորերէնից եղած թարգմանութիւններով (Լոյս ղուարթ, Փառք ի բարձունս և այլն)։ Օրհնութիւնաբեր ցուցակը, թէև յետին ժամանակի գործ, մի առ մի յիշատակում է այն թարգմանութիւնները, կանոնները (կարգ մկրտութեան, թաղման և այլն), որոնք կատարուել են Մաշտոցի կամ Ծխա-

բանի համար։ Մեր պատմիչներն էլ այս կամ այն աղօթքը այլ և այլ անձանց են վերագրում։ Եթէ հնագոյն ժամանակներից ժամակարգութեան մասեաններ ձեռագած լինէին, այժմ այդ մասին աւելի պայծառ դաղափար կունենայինք։—Աստուածապաշտութիւնը և դարուն էլ այժմուայ նման հօծն անգամ էր կատարվում՝ երեք պահերի բաժանուած, ըստ այնմ թէ» Յաւուրն հօծն անգամ օրհնեցից զքեզ վասն իրաւանց և արդարութեան քո «(Սաղմ. Ճը)։ Այդ երեք պահերն էին. Ա. Գիշեր, որ ունէր գիշեր ժամ, առաւօտ և արևագալ Բ. Ճաշ—երրորդ, վեցերորդ և իններորդ ժամիր, և Գ. երեկոյ։ Ճաշու ժամին պատարագը էր մատուցվում որոշեալ օրերին։ Դ և Ե դարի առաջին մասում հայոց պատարագը Բասիլեղեան խորհրդատիպով էր կատարվում, ինչպէս այժմ որոշ օրերում յոյն հկեղեցու մէջ. բայց նոյն դարի վերջին մասում մտնում է Գրիգոր Աստուածաբանի պատարագը, որ աւելի յայտնի է Աթանասի անունով, և այն օրուանից մեր մէջ գործադրուել մինչև Ժ դար, երբ յունաց և կաթոլիկաց պատարագների աղդեցութեան տակ կիլիկեցւոց ձեռքով նա աւելի զարգացաւ ու ընդլայնուեցաւ մինչև մեր օրերը հասնելով։ Այդ պատարագի մասին մանրամասն կխօսենք յետոյ։

2. Պատարագի ժամանակ բարձրաձայն կարդացվում էր հաւատոյ հանգանակը, ինչպէս և այժմ։ Հետաքրքրութիւնը ճշտութեամբ պարզել է, թէ մեր այժմեան հանգանակը Զ դարի սկիզբներում է հրապարակ եկել, իսկ Դ և Ե դարերում Հայերը գործ են ածել դուստ Նիկիական հանգանակը, որ մեր այժմեանին համեմատութեամբ աւելի համառօտ է։ Մեր հանգանակի յաւելումները, որ անճշտութեամբ ս. Լուսաւորչին են վերագրւում, ուղղուած են այն հերետիկոսների դէմ, որոնք չին են վերագրում, ուղղուած են այն հերետիկոսների դէմ, որոնք Նիկիոյ ժողովից յետոյ հրապարակ եկան։ Բայց որովհետև մեր արդի հանգանակը ըստ էականին նոյն է Նիկիականին հետ, այդ պատճառով էլ նա «հաւատ Նիկիական» է կոչվում։ Մեր ժամեան հանգանակն առաջին անգամ Զ դարի սկիզբը մասնական կերպով Բաբկէն կաթուղիկոսի թղթի մէջ է երևում և ապա ամբողջապէս Ներսէս, Յովհաննէս, Աբրահամ կաթուղիկոսների թղթերում և Սեբէոս պատմիչի մօտ (է դար)։

Մեր ժամագրքում այժմ մի ուրիշ հանգանակ ևս կայ, որ յայտնի է «Հայաստանեայց» անունով, և որ սովորաբար կարդացվում է առաւօտեան ժամասացութիւնից առաջ։ Լեզուից դատելով այս հանգանակը պէտք է որ յօրինուած լինի ԺԳ կամ ԺԴ դարում, երբ մեր երկրում խիստ զօրիղ մաքառումն կար Ունիթորութեան դէմ։

3. Սովորաբար կարծվում է, թէ հնագոյն ժամանակներում եկեղեցականներն աստուածապաշտութեան ժամանակ առանձին ձևի զգեստ

չէին գործածում, այլ առօրեայ ղեկտով էին կատարում և՛ պատարագ, և՛ աստուածապաշտութեան կարգեր՝ ձգելով իրենց վրան աղաբողոն կամ փիլոն և ունենալով իրրև յաւելուած միմիայն ուրար։ Աղաբողոնը սովորաբար հասարակ բրդից էր լինում՝ սևագոյն, իսկ վերջերը, ինչպէս և ներքին պարեգօտը, թանկագին նիւթից էր պատրաստած լինում՝ պէս պէս գոյնի մետաքսեայ, ոսկեթել, ոսկեկուռ, ընդելուզեալ և այլալիսի զարդարուն նիւթերից։ Թանկագին նիւթերից ըղգեստները բնականաբար գործ էին ածում բարձրաստիճան եկեղեցականները, իսկ կրօնաւոր դասը հասարակ ասուեղէն՝ ունենալով դլխներին կնգուղ (վեղար)։ Ուխտանէս պատմիչը (Ծ դար) գովելով Գրիգոր Թանէս Քերթող վարդապետին (Է դարի առաջին մասում), թուում է այն սրբազան անօթները՝ սկիհ, սեղանի ղգեստ, վարագոյր, խնկանոց, բուրվառ, քշոց, որ նա յանձնեց նորընտիր Աբրահամ կաթուղիկոսին (608—614), ի միջի այլոց յիշում է նաև «կաթուղիկոսական վակաս», որը սակայն ուրիշ բան չէր, բայց միևնոյն ուրարը միայն ուսի վրայ ձգած, ուստի և կոչվում է նաև ուսանոց, իսկ վերջին ժամանակների բառով՝ եմիփորոն՝ որ Լատինաց քով փոքր ինչ այլափոխուելով կոչուել է պալիում։ Թէ արդեօք է դարի կաթուղիկոսական եմիփորոնը բազմախաչ էր, թէ ոչ, ինչպէս վերջերս էր, այդ մասին տեղեկութիւն չունինք։

ԺԱ. դարից սկսած օտար ազգերի հետևողութեամբ կիլիկեցւոց ձեռքով մտնում են մեր եկեղեցու մէջ առանձին աստուածապաշտութեան ղգեստներ՝ շուրջառ, (նափորտ), սաղաւարտ, խոյր, բազպան և այլն, և այս նորաձևութիւնն արևելեան եկեղեցականների մէջ դժգոհութիւն է առաջ բերում, որոնք ըստ հին սովորութեան շարունակում են փիլոնով ու վեղարով պատարագել։ ԺԱ. դարում առաջին անգամ Լիւսիոս պապը Գրիգոր Տղային ուղարկեց խոյր, եմիփորոն և պալիում. և այս ժամանակներից սկսուեցաւ նուիրապետութեան տարբեր աստիճանների համեմատ և տարբեր ղգեստաւորութիւն (Լամբր. և Սամ. Ս.). այսպէս ԺԲ դարում որոշուած էր, որ կաթուղիկոսի նափորտը բազմախաչեան պիտի լինի, քահանան պէտք է սաղաւարտով, իսկ եպիսկոպոսը խոյրով պէտք է պատարագէ և այլն։

Այս տարբերութիւնը մեր եկեղեցում գոյութիւն ունի մինչև յայսօր։

ՀԱԼԱԾԱՆՔԻ ԴՐՋԱՆ

551—1065

Ե. ԳԼՈՒԽ

ՀԱՅ ԵՒ ԱՍՈՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ

1. Դուինի 506 թուի ժողովը սկիզբ դրեց կրօնական վէճերի ու թշնամութեան, որոնք գրգռուեցան Հայոց ու Յունաց միջև և պատճառ դարձան այս երկու եկեղեցիների յարաբերութեան վերջնականապէս խզուելուն։ Բարկէն կաթուղիկոսի անմիջական յաջորդների՝ Սամուէլ Արծկէացու (516—526), Մուշէ Այլաբերցու (526—534), Սահակ Բ. Ուղկեցու (534—539), Քրիստափոր Ա. Տիրառիչցու (538—545) և Գևոնդ Առեստացու (545—548) մասին պատմութիւնը կամ ոչինչ չի յիշատակում, և կամ սակաւ տեղեկութիւն է տալիս. այսպէս Մուշէ Այլաբերցու մասին Ստեփ. Օրբելեանը պատմում է, թէ մեծ հանդէսով Սիւնեաց երկիրն եկաւ Սիւնեաց եպիսկոպոս ձեռնադրելու համար։ Սահակ Բ-ի համար էլ պատմվում է, թէ Կարինի մէջ ժողով գումարեց։ Քրիստափորը վիլիստրայ է կոչուել, բայց մեր պատմիչներն առանձին գործունէութիւն չեն պատմում. Ասորիները միայն նկարագրում են, թէ նա Եվեսոսեան ուղղափառ Ասորիներին նեստորականների դէմ պաշտպանելու համար Թուղթ գրեց և մինչև իսկ Պարսկաստան գնաց, Յոսրով Նուշիրուանին ներկայացաւ և Ասորւոց եկեղեցու համար ձեռնադրութիւններ կատարեց։

Այս կաթուղիկոսների ժամանակ մեր երկրի քաղաքական կացութիւնն էլ այնքան վատթար չէր. ճշմարիտ է՝ Հոնաց արշաւանքի պատճառով, որոնք մինչև Սասուն հասան, կռիւ ծագեցաւ Պարսից ու Յունաց միջև, որ խաղաղուելուց յետոյ մի քանի անգամ նորոգուեցաւ, բայց այդ պատերազմներն աւելի Ասորիքի մէջ էին և Հայաստանի Յունաց բաժնում՝ մանաւորապէս Ծոփայ աշխարհում, ուր Յուստինիանոսը նոր մայրաքաղաքով հայութեան և հայ նախարարութեան մեծ հարուած հասցրեց և խռովութեան պատճառ դարձաւ։ Ինչևիցէ 535 և ապա 545 թուերին մշտական խաղաղութիւն հաստատուեցաւ Յոսրով Նուշիրուանի և Յուստինիանոսի միջև, որ մեր երկրի համար էլ նշանակութիւն ունեցաւ։ Այս ժամանակներում կաթուղիկոս դարձաւ Ներսէս Բ. Աշտարակցին (548—557 թ.), որ գումարեց Դուինի Բ և Գ

ժողովները, որոնց մէջ վերջնականապէս նզովուեցան ու մերժուեցան Բաղկեդոնի ժողովն ու նեստորականութիւնը, և բարեկարգութեան կանոններ սահմանուեցան։

2. Դուինի Բ ժողովը գումարուեցաւ 551 թուին եկեղեցու բարեկարգութեան համար կանոններ սահմանելու։ Ժողովի սահմանած կանոնները թուով 38 հատ են և յայտնի են «Կանոնք Ներսիսի» անունով։ Նոցա բովանդակութիւնը ցոյց է տալիս այն բոլոր դեղծմունքները, որոնք սպրդած էին մեր կլօճական դասի մէջ. վանականներից շատերը սովորութիւն էին արել վանքից դուրս աշխարհականների մօտ քնակել, վաճառականութեամբ պարապել և ողջախոհութեան դէմ մեղանչել. քահանաներն անփոյթ էին եկեղեցու խորհուրդների կատարման նկատմամբ, մինչև իսկ մկրտութեան խորհուրդը կատարելու համար լոկ ջուր էին օրհնում, և մկրտութեան կատարումը ծնողաց կամքին թողնում. ծուլութեամբ ու այլ պատրուակներով շաբաթ ու կիւրակի օրերն իսկ չէին պատարագում. շահի ակնկալութեամբ անչափահասներ ու միմեանց քնաւ չտեսնող չափահասներ էին պսակում, որից, ինչպէս կանոնը (24) նկատում է, շատ վնասներ էին առաջ եկել։ Ապաշխարութիւնը փող շահելու միջոց էին դարձրել. բաժանել էին ժողովուրդը իրենց մէջ և այդ պատճառով միմեանց հետ միշտ կռւում էին։ Առհասարակ սիրում էին վաճառականութեամբ պարապել և մեծ տոկոսներով փողեր բաժանել. անվերջ կռւում էին միմեանց հետ եկեղեցական հասոյթների, ինչպէս և նախագահութեան համար. սիրում էին զինուորականի կամ աշխարհականի տարազով շրջել, որսորդութեան երթալ և այլն և այլն։ Ահա այս անհարթութիւններն աշխատեց ժողովը վերցնել իւր կանոնադրութեամբ։ Մասնաւորապէս ուշադրութեան արժանի են առաջին չորս և ԺԹ կանոնները, ուր ժողովը պատուիրում է քահանաներին արդիւնքի տեսակետով ժողովուրդը իրենց մէջ չբաժանել և իրենց բաժին ծուխը ուրիշին չծախել, այլ եկեղեցու արդիւնքը եկեղեցում հաւաքել և իրենց մէջ բաժնել՝ տալով գլխաւոր քահանային 2½ մաս, միւս քահանաներին 2 մաս, սարկաւագներին 1½ մաս, իսկ դպիրներին և ուրիշներին 1 մաս։ Է-րդ կանոնից երեւում է, թէ մեր եկեղեցու մէջ ևս՝ այժմեան սովորութեան հակառակ, հաղորդութեան երկու տեսակներն առանձին-առանձին էին մատակարարվում հաւատացեալներին։ Ժ կանոնը աշխատում է քահանաների գահասիրական կրքերի առաջն առնել պատուիրելով, թէ նա է նախագահ եկեղեցու մէջ, ով որ առաջ է ձեռնադրուած։ Լ կանոնը պատուիրում է ճրագալուցին ջերեկը ոչ մէկին հաղորդութիւն չտալ, բայց միմիայն ակարներին՝ պայմանով սակայն, որ սրանք էլ մինչև պատարագի վերջը թան ու դինի չճաշակեն։ Վերջապէս այս ժո-

ղովը երևի քառասնորդական պահքի նախընթաց երկարաձիգ պահերը (ԻԹ կանոն) շաբաթականի է վերածում (ԼԸ կանոն) պահքի լուծման առաջն առնելու համար. և այսպէս յառաջացել են այն շաբաթական պահերը, որոնք մինչև այժմ էլ պահվում են և սովորաբար շաբաթ օր ուտուող սրբի անունով են կոչվում. (Եղիական, Լուսաւորչի, Վարդավառի, Աստուածածնի, Ս. Խաչի և այլն)։ Այս ժողովի մէջ խնդիր ծագեցաւ նաև եկեղեցական տոմարի նորոգութեան համար, որին տալիք հետևեալ հանգամանքն եղաւ։

Քրիստոնէական եկեղեցու ամենամեծ տօնը՝ Զատիկը գտնելու վերաբերմամբ Նիկիոյ ժողովը կարգադրած էր, որ այդ մասին հոգայ Աղեքսանդրիոյ եկեղեցին և նոյնը ծանուցանէ միւս եկեղեցիներին։ Այսպէս էլ լինում էր երկար ժամանակ։ Զատկի դիւտը դիւրացնելու համար Մագնոս եպիսկոպոսի եղբայրը Անդրէասը Դ դարի կէսերին յօրինում է իւր երկհարիւրհակի շրջանը, որով այնուհետև առաջնորդվում էին ինչպէս Հայոց, այսպէս նաև միւս արևելեան եկեղեցիները։ Արդ Զ դարի կէսերին՝ երբ այդ երկհարիւրհակը լրացաւ, շփոթութիւն ընկաւ թէ Զատկի և թէ այլ տօների դիւտի մէջ, և այս՝ ոչ միայն Հայոց, այլ և ուրիշ եկեղեցիների մէջ։ Արդ՝ Դուինի 551 թ. ժողովը տօնական այս խնդիրը քննութեան նիւթ դարձրեց և առժամեայ կարգադրութիւն արաւ, մինչև որ վերջնականապէս մի քանի տարի վերջը նոյնը կարգադրեց Մովսէս Եղուարդեցի կաթուղիկոսը՝ էաս Աղեքսանդրացու հինգհարիւրամեակի շրջանն ընդունելով, որ նա կազմել էր 561 թուին և որը Իլիոն տոմարագէտի փոքր փոփոխութեամբ ընդունել էր նաև յունական եկեղեցին։ Այս նոր տոմարի գործադրութիւնը սկսուեցաւ 551 վաղճանից։ Սոյն եկեղեցական տոմարը կոչուեցաւ նաև հայկական թուական և գործադրուեցաւ ընթացիկ կեանքի դէպքերի ժամանակն որոշելու համար (Օրմ. Ազգ. 553 եր.)։

Վերջապէս այս ժողովում միանգամ ևս հայոց եկեղեցին մերժում է Բաղկեդոնի դաւանութիւնն իբրև Նեստորական, ինչ որ Բալգէնի օրով արել էր, ընդունելով Կիւրեղ Աղեքսանդրացու «Մի է բնութիւն Բանին մարմնացելոյ» սկզբունքը. այլ և որոշից ս. Աստուած երգը «Որ խաչեցար վասն մեր» յաւելուածով երգել։

Ասորիները, ինչպէս մի քանի անգամ յիշել ենք, Ե դարի կէսերից սկսած բազմաթիւ դաւանութիւնների էին բաժանուած, որոնք և իրար չարաչար հալածում էին։ Անտիոքի մէջ Բաղկեդոնական դաւանութիւնն էր իշխում, Մծբնի մէջ 498 թուից սկսած նեստորականը, իսկ Եդեսիայում և իւր շրջակայքում՝ ուղղափառ ասորիները, այսինքն՝ մի բնութեան վարդապետութիւն դաւանողները։ Ամէնից զօրաւորը Անտիոքի պատրիարքութիւնն էր, որ յունական կայսրների օգ-

նութեամբ սաստիկնեղում էր հակառակորդներին։ Յուստինիանոսի թագաւորութեան ժամանակ (518—527) Քաղկեդոնի դաւանութեան հակառակորդները չարաչար հալածուեցան. շատ եպիսկոպոսներ աքսորուեցան, շատերը բանտերի մէջ մեռան. այսպէս հալածանքի մէջ մեռան նշանաւոր սուրբ հեղինակները՝ Շմաւոն Բայդ—Արշամի եպիսկոպոսը, որ Բարկէն կաթուղիկոսի օրով Դուինի էր հռչակ, և Փիլոքսին Մաբուղի եպիսկոպոսը (†523), մի հմուտ անձնաւորութիւն, որի գործերը հայերէն ևս թարգմանուեցան Զ դարում։ Յուստինիանոս Ա-ը թէև 535 թուից սկսած մեղմ էր դէպի հակաքաղկեդոնականները, բայց և այնպէս Անտիոքի պատրիարքները դարձեալ շարունակում էին իրանց հալածանքները։ Այս հալածանքների ժամանակ միաբնակ Ասորիներն ևս նոր կրօնական հերձուածներ առաջ բերին, որոնք յայտնի դարձան պատմութեան մէջ Յուլիանեան և Սևերեան անուններով։ Այս երկու հերձուածի ծագման առիթ այն խնդիրն էր, թէ Յիսուսի մարմինն ևթակայ էր արդեօք ապականութեան։ Յուլիանոս Աղիկառնացին ուսուցանում էր, թէ Քրիստոսի մարմինը «ի հարկէ» ևթակայ չէր մարդկային մարմնի կարիքներին—քուն, յոգնածութիւն, քաղց, ծարաւ, քրտինք, արցունք—մի խօսքով՝ ապականութեան (ֆθոռա), այլ նա այդ ամէնը կրում էր «ի կամաց»։ Սորա հակառակ Սևերոսը (†543) պնդում էր, թէ Քրիստոսի մարմինը ի բնէ ևթակայ էր ամէն մարմնական կարիքների և թէ մարդկային փրկութեան համար անհրաժեշտ էր, որ նա ունենար անցաւոր ու ապականացու մարմին։ Ապականութեան և Անապականութեան վէճերը շուտով ընդհանուր ծաւալում սասացան և ունեցան բազմաթիւ հետևողներ միաբնակ Ասորիների մէջ, որոնք և սկսան ծանրացել իրար նեղել։ Այս միաբնակ ուղղափառ Ասորիների մի մասը, որոնք կենդրոնացած էին հիւսիսային Ասորիքում՝ Հայոց երկրին մօտ, լսելով 551 թուի ժողովի վճիռը, առանձին պատգամաւորութեամբ դիմում են (հաւանօրէն 552 թ.) Հայոց Ներսէս կաթուղիկոսին, հայ եպիսկոպոսներին ու իշխաններին և նրանց օգնութիւնը աղերսում. նրանք նկարագրում են իրանց կրած թշուառութիւնները հերձուածողներից և խնդրում, որ նամակաբեր Արդիշոյ երէցին իրենց եպիսկոպոս ձեռնադրէ. ներկայացնում են իրանց դաւանութիւնը թէ ընդունում են 3 սիեղերական ժողովների վարդապետութիւնը, դատապարտում են Քաղկեդոնի, Լևոնի տոմարը, Եւտիքեսին։ Եւ վերջապէս ուխտացնում են. «Գիտենք, որ դուք այս հաւատը ունիք... դրա համար ձեզ ապաւինեցանք» (Գիրք թղ. 53)։ Ասորւոց նամակի մէջ նղովվում է նաև Անտիոքի պատրիարք Սևերոսը, որ, ինչպէս ասացինք, Յուլիանոս Աղիկառնացու հակառակ ուսուցանում

էր, թէ Քրիստոսի մարմինն ապականացու էր ծննդեան օրից մինչև յարութիւնը։

Այս թղթին պատասխանում են Ներսէս կաթուղիկոսը և Ներշապուհ Մամիկոնէից եպս-ը, որոնք ճշմարիտ են գտնում Ասորւոց դաւանութիւնն ըստ ամենայնի, նղովում են բոլոր հերետիկոսներին, ինչպէս և ապականութեան քարոզիչ Սևերոսին՝ յայտնելով թէ Քրիստոս ևթակայ էր մարմնական կրքերին՝ բացի մեղքից՝ բայց միշտ՝ ինչպէս աստուածաբար կամենում էր։ Այս խօսքերը նրանք կրկին շեշտում են, որ Քրիստոսի մէջ երկութեան նեստորեամիտ վարդապետութիւնը Սևերեան տարազով ներս չսպրդի։ Հայոց եկեղեցու այս վարդապետութիւնը նոյնքան ուղղափառ է, որքան և մի բնութեան վարդապետութիւնը և լուռը կարծողները կան, թէ Հայերն այս ժամանակ նղովելով Սևերոսին՝ ի հակառակն ընդունեցին Յուլիանոսի վարդապետութեան ծայրագոյն աստիճանը, որ Քրիստոսի կրքերի ևթարկուելն առաչօք, երևութական էր համարում։ Կարծում ենք որ մի այսպիսի եզրակացութեան յանգել կարելի չէ, եթէ ինկատի առնենք Ներսէսի, ինչպէս և Յովհաննէս Բ-ի թղթերը (Գիրք թղթ. եր. 83)։ Արդարև եղան մեր եկեղեցու մէջ իսկական Յուլիանիաններ—մանաւանդ Է-Ը դարերում, բայց այլ է ապաքէն եկեղեցու լրութեան վարդապետութիւնը և այլ անհատականը, մանաւանդ որ այս կարծիքների դէմ հայ եկեղեցին մաքառեցաւ։

4. Արդիշոյի եպիսկոպոս ձեռնադրուելը Հայոց կաթողիկոսից և Հայ ու Ասորի եկեղեցիների դաւանական միութիւնը մի կողմից խնդութեամբ լցրեց ուղղափառ Ասորիների սիրտը, միւս կողմից էլ քաղկեդոնականների, նեստորականների ու Սևերեանների մէջ ժեծ յուզումն առաջ բերեց, որոնք սակայն չհամարձակեցան յայտնապէս կռուել Արդիշոյի դէմ՝ ի նկատի առնելով մի կողմից Խոսրով Նուշիրվանի հրամանը՝ թէ իւրաքանչիւր ոք ազատօրէն իւր կրօնը թող պաշտէ, միւս կողմից էլ հայ կղերի ու իշխանների ցոյց տուած պաշտպանութիւնը, որոնք կարող էին արքայից արքայի բարկութիւնը գրգռել իրենց դէմ։ Մխիթարեան Սևերեանները՝ իբրև միաբնակներ, պատրաստութիւն յայտնեցին Հայաստան գալ և ցոյց տալ, որ Հայոց ու իրենց վարդապետութիւնը միևնոյն է։ Եկան քարոզեցին արդեօք Սևերեանները՝ որոնց մէջ այս ժամանակները մանաւանդ հռչակաւոր էր Յակոբ Բարատէոսը (Ծանծաղիկոսը†578) յայտնի չէ։ Քանի որ Արդիշոն կենդանի էր (†574), հայ և ասորի եկեղեցիների միութիւնը հաստատուն էր և Արդիշոն հայոց գումարած բոլոր ժողովներին մասնակցում էր։ Նրա մահուանից յետոյ երկու եկեղեցիների մերձումը շարունակուեցաւ նաև յաջորդ դարերում։

Զ. ԳԼՈՒԽ.

ՄԱՀԱՌՈՒՄ ՆԵՍՏՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ. ԿՐՕՆԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԻՒՆ.

1. Ինչպէս առաջ էլ ասացինք, Յուստոս երկրից աքսորուած Նեստորականները ե դարի երկրորդ կիսում Պարսից երկիրը քաշուեցան և այստեղ ոչ միայն կրօնքի ազատութիւն ստացան, այլ և Պարսից թագաւորների հովանաւորութիւնը սկսան վայելել թէ իբրև Յուստոս աէրութեան ընդդիմադիր ոյժ և թէ իբրև զարգացած մարդիկ: Այսպիսի հովանաւորութեան շնորհիւ Նեստորականները բազմացան Պարսկաստանում, զօրացան և վերջնականապէս ընդունեցին իրանց երկու բնութեան ու երկու անձնաւորութեան վարդապետութիւնը 499 թուի Սելևկիոյ ժողովում և այնուհետև նոյնը եռանդով սկսան տարածել դրացի երկիրներում—Միջագետքի ու Հայաստանի մէջ: Զ դարում Նեստորականները աւելի եռանդով են սկսում քարոզել և այս ժամանակ ահա բազմաթիւ հետեւողներ են վաստակում: Այս ժամանակի Նեստորականներից մանաւանդ յայտնի էին Ռուժիկ (Ռուժաստանցի) Նեստորականները, որոնք իբրև վաճառականներ և տեղական լեզուներին հմուտ անձեր ամէն տեղ մտնում էին և իրենց հետևողները շահում. այսպէս Զ դարի սկզբներում նրանք հաստատվում են Դուինի մէջ, շինում են առանձին եկեղեցի, կարգում են առանձին եպիսկոպոս և իրենց կողմն են դրաւում բազմաթիւ մարդիկ, կանայք ու մանուկներ: Այս յաջողութեան առաջն առնելու համար ահա Ներսէս Բ. Աշտարակացին որոշում է Դուինի ժողովը գումարել, որ առաջին անգամ չի կայանում՝ 9 նշանաւոր եպիսկոպոսների բացակայութեան պատճառով. Ներսէս կաթուղիկոսը տիպոսած երկրորդ անգամ է հրաւիրում բացակայ եպիսկոպոսներին, և յայտնելով գործի յոյժ կարևորութիւնը՝ պատուիրում է անյապաղ Դուին հաւաքուել, սպառնալով հեղգացողներին եպիսկոպոսների միաբանութիւնից մերժել: Դուինի այս երրորդ ժողովը գումարվում է 554 թուին 19 հայ եպիսկոպոսների և 35 հայ նախարարների ներկայութեամբ՝ չհաշուելով բազմաթիւ վանականներին, քահանաներին, ևս և շինականներին: Ժողովին մասնակցում էր նաև Աղթիշոյ եպիսկոպոսը իբրև հայոց կաթուղիկոսին ենթակայ վիճակաւոր

եպիսկոպոս: Ժողովը ի նկատի առնելով նեստորականների գործունէութիւնը՝ նրանց վաճառականութեան պատրուակով Հայաստան գալը, կեղծաւորութեամբ հայոց հաւատակից ձևանալը, Մանաճիհր Ռաժիկ Գրիգորի անունով Դուինի մէջ եկեղեցի շինելը (548 թ.) իբրև ժողովատեղի, երեխաները մկրտելը, եկեղեցու հաղորդութիւնից մերժուած ու ապաշխարութեան տակ եղած մարդոց իրենց կողմը գրաւելը և գայթակղութիւն ուղղափառ հաւատացեալներին, որոշեց՝ քանդել նրանց եկեղեցին, պատուիրել հաւատացեալներին նրանց հետ յարաբերութիւն չունենալ, և իբրև Քրիստոսի թշնամիներից խոպան հեռանալ. նզովել նրան, ով որ նեստորականներին կը հետևի՝ կաթուղիկոս լինի թէ եպիսկոպոս, քահանայ, իշխան թէ ժողովրդական: Դուինի ժողովի այս վճիռը յայտնի է, «Ուխտ միաբանութեան Հայոց աշխարհին» անունով:

Եւ ժողովի որոշմունքն անշուշտ իրագործուեցաւ:

Այս որոշմունքն առանձին թղթով Ներսէս կաթուղիկոսը 555 թուին յանձնեց նաև առանձինն Աւծրունեաց ու Մարզպետական եպիսկոպոսներին, որոնք ժողովին ներկայ չէին—յայտնելու նրանց, որոնք ժողովին ներկայ չէլին եղած: Այս եպիսկոպոսների թեմերն Ասորիքին աւելի մօտ էլին, ուր նեստորականութիւնն աւելի հետևողներ ունէր: Ներսէս Բագրեւանդին 557 թուին վախճանեցաւ և նրան յաջորդեց Յովհան Ասպահունեաց եպիսկոպոսը (557—574):

2. Զնայելով որ Դուինի Գ. ժողովը խիստ միջոցներ գործադրեց նեստորականների դէմ, բայց և այնպէս այս աղանդը մեր երկրից չվերացաւ և նոր ներքին երկպառակութեան պատճառ դարձաւ: Հայոց աշխարհի նեստորականութեան դէմ բանած դիրքը հաճոյ չէր Թուեցաւ Աբքայից Աբքայ Խոսրով Նուշիրվանին, որ թէև խաղաղասէր անձն էր, բայց աւելի հակուած դէպի նեստորականները, որոնց պատրիարքն էր ճիշդ այս ժամանակ Խոսրովի սիրելին Յովսէփ եպիսկոպոսը, որ հէնց Աբքայից Աբքայի թժշկելուն համար 552 թուին պատրիարք էր ընտրուել: Աբքայից Աբքայի տրամադրութեան առաջին արձագանգը Միհներսէհ տուին, որոնց վհան իշխանն 557—560 թուերին ապստամբեցաւ ընդհանուր հայութիւնից և Խոսրովից խնդրեց, որ Միհներսէհ աշխարհի դիւանը՝ հարկատուութեան արձանագրութիւնը Դուինից Փայտակարան տարուի և ինքն անմիջապէս Ատրպատականի մարզպանութեան հետ կապ ունենայ: Իշխանի օրինակին հետևեց և Վրթանէս եպիսկոպոսը. և ահա հայոց աշխարհից հալածուած նեստորականներն այդ երկրում ապաստանարան գտան և Վրթանէսի սէյն ու խնամքը վայելեցին, մինչդեռ նրա նախորդ Պետրոս եպիսկոպոսն ամէն խնդրի մէջ հայութեան լրութեան հետ համաձիտ էր:

Սիւնեաց երկրից նեստորականներն ու քաղկեդոնականները մը-
տան նաև Աղուանից երկիրը և սկսան ժողովրդի միտքը պղտորել։

Այս հանգամանքն ի նկատի առնելով՝ Յովհաննէս կաթուղիկոսը 565 թուերին մի ժողով է գումարում Դուինում, որին դարձեալ ներկայ էր Աբդիշոն, և Մատթէոս քահանայի ձեռքով երկու նամակ է ուղարկում, մէկը՝ Սիւնեաց իշխան Միհրարտաշիրին, երևի վերոյիշեալ Վահանի որդուն-և Վրթանէս եպիսկոպոսին, իսկ միւսը՝ Աղուանից Աբաս կաթուղիկոսին (553—577)։ Երկու թղթերի մէջ էլ յորդորում է Յովհաննէս կաթուղիկոսը զգուշանալ նեստորական ու քաղկեդոնիկ քարոզիչներից, որոնք եկել են Սիւնեաց ու Աղուանից երկիրը. յորդորում է հաստատուն մնալ հին դաւանութեան վերայ և չդաժանուել ընդհանուր միութիւնից։ Հայոց կաթուղիկոսի ու եպիսկոպոսների թուղթը ըստ երևութին չազդեցին Սիւնեաց վերայ, որոնց Փիլիպպոս իշխանը մի քանի տարի վերջը Պարսիկ զօրքերով իւր արևնակից եղբայրների դէմ դուրս եկաւ՝ նրանց ապստամբութիւնն ընկճելու համար (Սեբ. 29)։ Իսկ է դարի սկզբում՝ երբ պարսիկները հայ երկրի տէր դարձան, տեսնում ենք Սիւնեաց կրկին ընդհանուր հայութեան հետ միացած։ Բայց Աղուանից Աբաս կաթուղիկոսը այսպէս չվարուեցաւ։ Հայոց կաթուղիկոսի թղթից զգաստացած՝ նա անմիջապէս հալածեց իւր երկրից նեստորականութեան ու քաղկեդոնականութեան քարոզիչներին. սակայն այս էլ առժամանակ միայն։

Աղուանից երկրից հալածուած Թոմմա վանականը դիմում է Երուսաղէմ և Յովհաննէս պատրիարքին (574—577) ներկայացնելով Դուինի ժողովի որոշումները ու հայոց կաթուղիկոսի թուղթը՝ խնդրում է գրել Աղուանից և իրան պաշտպանել։ Պատրիարքը կատարում է այդ խնդիրը. մի կողմից նա ստիպում է Երուսաղէմի վանքերում գտնուած հայ վանականներին քաղկեդոնի դաւանութիւնն ընդունել, միւս կողմից էլ մի ընդարձակ գրութեամբ զգուշացնում է Աբասին հեռու մնալ մոլորուած Հայերից, որոնք որպէս թէ Յուլիանիա Աբղիշոյի ազդեցութեամբ նզովել են Քաղկեդոնի ժողովը։ Նա պարծենալով յիշում է, թէ ինչպէս հերձուածող հայերին հալածել է, նրանց վանքն է այրել Երուսաղէմում և թէ նրանց կայսեր տուած բողոքն անհետևանք մնացել։ Արդեօք այս թղթից թէ մի այլ պատճառից դրդուած Աղուաններն ևս այս միջոցներին բաժանվում են հայութեան միութիւնից ու քաղկեդոնի վարդապետութիւնն ընդունում, ինչպէս բացորոշ յայտնում է Է. դարում Աբրահամ կաթուղիկոսը իւր շրջաբերականի մէջ (Գիրք թղթ. եր. 193)

3. Մինչ դեռ հայ եկեղեցու միութիւնն մի կողմից այսպիսի պատրաստուած էր ներկայացնում, միւս կողմից էլ Հայաստանի քաղաքա-

կան վիճակն օրըստօրէ վատթարանում էր, և երկիրն աւերվում։

Վարդ Մամիկոնեան մարզպանից յետոյ պարսից տէրութիւնը Հայաստանի վրայ այլ ևս հայ մարզպաններ չկարգեց, այլ միմիայն պարսիկները, որոնք աշխատում էին հայ ժողովրդին կեղեքել, կրակապաշտութիւնը բռնութեամբ տարածել, ժողովրդին սարկացնել և նրա վարքն ու բարքն ապականել։ Պարսիկ մարզպաններից աւելի խիստ ու անողոքն այսպիսի գործերում հանդիսացաւ Ճիհր—Վշնասպ Սուրէնը, որ մեհեաններն իր թիւը բազմացրեց, հաւատարիմ հպատակութեան նշան կրակապաշտութիւնը համարեց և հայոց ընտանեկան արգութեան կպաւ։ Նա սպանել տուեց Մամիկոնեան Մանուէլ իշխանին, նոյն իսկ Յովհաննէս կաթուղիկոսին (կամ ըստ այլոց՝ հայ աբեղաները) ծեծել տուեց՝ կրակին արհամարհելուն համար։ Սուրէնի խստութիւնները մեծապէս զայրացրին հոգևորականներին ու հայ նախարարներին, որոնք խմբուելով Վարդան Բ. Մամիկոնեանի մօտ՝ որոշեցին ապստամբել. նրանց հետ միացան նաև Վրացիները։ Վարդանը վստահացած Յուստինոս Բ. կայսեր (565—588) խոստման՝ յարձակվեց Դուինն առաւ. Զոլակ կամսարականը Սուրէնին սպանեց. կոտորուեցան շատ պարսիկ մեծամեծներ ու մոգեր և Վարդանը առժամանակ հայ աշխարհի տէր դարձաւ (572)։ Խոսրով Նուշիրվանը մեծապէս զայրացաւ, երբ այս ամէնը լսեց, և մանաւանդ երբ իմացաւ, որ Յոյները յայտնապէս Հայոց պաշտպանութիւն են ցոյց տալիս։ Այդ պատճառով ահա խզուեցաւ նրանց բարեկամութիւնը և սկսուեցաւ այն երկարամեայ պատերազմը, որ բովանդակ հայ երկիրն այրացաւեր դարձրեց։ Բայց շուտով ապստամբ հայ իշխանների մէջ երկպառակութիւն ընկաւ և Վարդանը տեսնելով՝ որ անկարող է Պարսից դիմադրել, մի քանի հայ իշխանների, Յովհաննէս կաթուղիկոսի ու եպիսկոպոսների հետ Բիւզանդիոն գնաց (572 թուի վերջերը), ուր նրանք Յոյներից մեծ պատուով ընդունուեցան ու բնակութեան տեղ ստացան։ Այս տարագրութեան մէջ 2 տարի ետաց Յովհաննէս կաթուղիկոսը, և նրա մահուանից յետոյ պատերազմների ժամանակ յաջորդեց Մովսէս Եղվարդեցին (574—603)։ Պատերազմը փոփոխական բախտով շարունակուեցաւ Խոսրով Նուշիրվանի և նրա յաջորդ Որմզդի ժամանակ։ Հայոց երկիրն աւերակ դարձաւ, Դուինը քանդուեցաւ, և կաթուղիկոսարանն ու ս. Գրիգորի եկեղեցին այրուեցաւ, որոնց հարստութիւնը վաղօրօք փոխադրած էին Կարին՝ Հայաստանի յունաց բաժինը։ Վերջապէս 589—91 թուերին Պարսից Խոսրով Ապրուէզ թագաւորի ու Յունաց Մօրիկ կայսեր միջև 13-ամեայ խաղաղութեան դաշինք կապուեցաւ, և այդ դաշնադրութեամբ Հայաստանի մեծ մասը Յունաց ձեռքն անցաւ։ Այս պատերազմներում հայ իշխաններից նշանաւոր հանդիսացան Մուշեղ

Մամիկոնեանն ու Ներսէս Իշխանը, որին Յոյները «Զոյլ ոսկի» էին կոչում։

4. Երկարամեայ պատերազմներից յոգնած հայ ժողովրդին դարձեալ վիճակուած չէր հանգստութիւն վայելել։ Միացնելով իւր տէրութեան հետ Հայաստանի մեծ մասը՝ Մօրիկ կայսրը մի սոսկալի ծրագիր կազմեց-Հայաստանը առանց հայի թողնելու, և այս ծրագիրը Յոսրովին էլ առաջարկեց կատարելու, այն է՝ հայ ժողովրդին գաղթեցնել յունաց և պարսից տէրութեան հեռաւոր ծայրերը, որ այնտեղ թշնամիներից կոտորուին և կամ նրանք թշնամիներին կոտորելով տէրութիւնն ապահովին։ Այս նպատակով Մօրիկը ազդեցիկ հայ նախարարներին իւր մօտ էր հրաւիրում և նրանց թոյլ չէր տալիս կըրկին Հայաստան վերադառնալ, գաղթեցնում էր հայ ընտանիքներ օտար երկիրներ։ Այսքանը բաւական չհամարելով՝ նա ձեռք բարձրացրեց նաև հայ եկեղեցու վրայ և ամէն կերպ աշխատեց նրան տկարացնել ու հայ քաղկեդոնիկների թիւը բազմացնել։ Կայսեր գիտութեամբ յոյն զինուորները սոսկալի չարիքներ էին գործում մեր երկրում։ Նրանք հայոց եկեղեցու խաչերն էին տապալում, եկեղեցականներ մերկացնում. կոյսեր պղծում, հարուստ կանանց կողոպտում և մինչև իսկ զինդի ու ապարանջանի համար ականջ ու ձեռք կտրում (Միք. Աս. 274)։ Վերջապէս հայ և յոյն եկեղեցիների միութիւնը նա աշխատեց ժողովով գլուխ բերել։ Արդէն մի քանի տարի առաջ 573—74 թուերին Պոլսում կատարուած էր երկու եկեղեցիների միութիւնը. փախստական Յովհաննէս կաթողիկոսն իւր եպիսկոպոսներով և Վարդան Մամիկոնեանը Յուստինոսից զօրական օգնութիւն ստանալու յուսով ընդունած էին քաղկեդոնի դաւանութիւնը, բայց ապա իմանալով Պարսկահայաստանի հայ եպիսկոպոսների և իշխանների գժգոհութիւնն ու սպառնալիքը՝ կրկին թողել էին միութիւնը. այժմ Մօրիկը կրկին աշխատեց միութիւնը հաստատուն դարձնել քաղաքական տեսակետներով և հայ-բիւզանդական Աթոռը յունաց բաժնի մէջ հաստատել։ Ահա այս նպատակով Պօլիս հրաւիրուեցան ոչ միայն 591 թուի դաշնադրութեամբ Յունաց անցած Հայաստանի դաւառների եպիսկոպոսներն, այլ և Պարսից բաժնի եկեղեցականները և նոյն իսկ Մովսէս կաթողիկոսը։ Սա հրաժարուեցաւ գնալու. պարսից բաժնից գնաց միայն Վրթանէս քերթողը, իսկ յունաց թէ նախկին և թէ նոր բաժնից կային 21 հայ եպիսկոպոսներ։ Ժողովը գումարուեցաւ 592—93 թուերին և Հայոց աոաջարկուեցաւ Քաղկեդոնի դաւանութիւնն ընդունել։ Յունաց բաժնի հայ եկեղեցականները, որոնց պարագլուխն էր կարինի Թէոդորոս եպիսկոպոսը, կատարեցին կայսեր կամքը և յոյն եկեղեցու հետ միացան, իսկ Վրթանէս ու Գրիգոր քերթող վարդապետները հակառակեցան ու Պօլսից հեռացան։ Մօրիկը տեսնելով այս վարդապետների հակառակութիւնը և միւսների համակամութիւնը՝ հրամայեց բացարձակապէս քարոզել հայոց եկեղեցիներում Քաղկեդոնի վարդապետութիւնը և հաղորդութեամբ իւր զօրքի հետ միանալ։ Այս բռնութիւններին չդիմանալով՝ Հայերից շատերն օտար երկիրներ գաղթեցին, շատերը կայսեր հրամանն արհամարհելով իրանց տեղը հաստատուն մնացին և ոմանք էլ փառասիրութիւնից դրդուած՝ Քաղկեդոնի դաւանութիւնն ընդունեցին։ Մովսէս կաթողիկոսն էլ կայսեր հրամանին հակառակ քաջալերեց իւր հօտը հաստատուն մնալ իւր նախնեաց դաւանութեան վրայ, ամենևին ոչ մի յարաբերութիւն չունենալ Յունաց հետ և նրանցից չընդունել ոչ պատկեր, ոչ նշխարք և ոչ գիրք։ Եւ երբ նրան առաջարկուեցաւ կայսեր կողմից յունաց բաժինը գալ ու այնտեղ կաթողիկոս դառնալ, նա պատասխանեց. «Քան լինի ինձ ընդ գեհն Ազատ անցանել, կամ զքխաչն ի փառն ուտել և կամ ի ջերմոյ արբենալ»։ Մովսէս կաթողիկոսի այս հակառակութիւնը տեսնելով՝ Մօրիկը հրամայեց յունաց բաժնի վրայ ուրիշ կաթուղիկոս նշանակել, և եպիսկոպոսների ժողովը կաթուղիկոս ընտրեց Յովհան Բագարանցուն (Սիւնեականին) 594 թ.։ Հակաթոռ Յովհաննը նստաւ Աւան գիւղում Ազատ գետի ափին Դուինից ոչ շատ հեռու. յունաց նպաստով շինեց փառաւոր եկեղեցի և կաթուղիկոսարան, տիրացաւ այն բոլոր եկեղեցական զգեստներին ու անօթներին, որոնք 572 թուի ապստամբութեան տարին կարին էին տարուել իբրև առաւել ապահով տեղ։ Մօրիկը նպատակին հասաւ. հայոց եկեղեցու միութիւնը բաժան-բաժան եղաւ. նա տկարացաւ, մի կողմից Սիւնեցիք ու Աղուանները հեռացան, միւս կողմից էլ ինքն իւր մէջ երկպառակուեցաւ. վերջապէս Վրացիները՝ դարձեալ Մօրիկի դրդմամբ, հայոց եկեղեցուց բաժանուելու շարժման առաջին քայլերն սկսան անել։ Բայց Մովսէս կաթուղիկոսը՝ չնայելով իրենց ծանր կացութեան և Դուինի աւերման, չհրապուրուեցաւ Մօրիկի ցոյց տուած գեղեցանքներից. նա միշտ մաքառեցաւ հակաթոռ Յովհանի դէմ մինչև մահը։

5. 601 թուին Փոկաս զօրավարի ձեռքով սպանուեցաւ Մօրիկը, որ այնքան չարիքներ խորհեց հայ ժողովրդի ու նրա եկեղեցու համար։ Մօրիկի սպանութիւն իսկ պատիժ եղաւ հայ ժողովրդին։ Պարսից Խոսրով Ապրուէզ արքայից արքան իւր բարերար Մօրիկի մահուան վրէժը խնդրելու պատրուակով Յունաց դէմ պատերազմ դուրս եկաւ և 603 թուին Հայաստան մտաւ և հետզհետէ Պարսից ձեռքն անցան այն բոլոր գաւառները (Այրարատ, Բասեն, և այլն) որոնք 591 թուի դաշնագրութեամբ Խոսրովը Մօրիկին էր յանձնել։ Վերջապէս Պարսից ձեռքն անցաւ յունական ուժի գլխաւոր կեդրոնը—կարինը (610 թ.)

որտեղից մեծ բազմութիւն գերի տարուեցաւ Պարսկաստան։ Գերեալների մէջ էր հակաթոռ Յովհան կաթուղիկոսը, որ պատերազմին պատճառով Աւանից կարին էր փախած. նա եկեղեցական բոլոր սպասներով տարուեցաւ Համատան, ուր և 614 թուին վախճանեցաւ։ Պարսիկները Սարիքամ ևս յաջողութիւն ունեցան. 614 թուին յունիս ամսին երուսաղէմն առնուեցաւ և Քրիստոսի ս. Խաչը, Զաքարիա պատրիարքը և 30,000 հոգի Պարսկաստան գերի տարուեցան։ Այս դէպքը քրիստոնեայ աշխարհի վերայ շատ ծանր տպաւորութիւն թողեց։

Պարսից ու Յունաց պատերազմները դեռ նոր էին սկսել, երբ Մովսէս կաթուղիկոսը վախճանեցաւ (603 թ.)։ Սրա անուան հետ է կապուած և հայ եկեղեցու ոսնացոյցի կարգաւորութիւնն ու հայ թուականի հաստատութիւնը։ Ինչպէս ասացինք, ոսմարի խնդիրը սկսուեցաւ Ներսէս Բագրեւանդցու ժամանակ, իսկ Մովսէսի օրով՝ էաս Աղեքսանդրացու մշակած հաշիւը վերջնականապէս ընդունուեցաւ՝ հաւանօրէն 584 թուին. (Օրմ. 574)։ Վերջապէս Մովսէս կաթուղիկոսը վրաց եկեղեցու դէպքին ևս մի ջամեցաւ, որի մասին յետոյ կը խօսինք։ Երևի քաղաքական շփոթութիւների պատճառով Մովսէսի մահուանից յետոյ անհնար եղաւ նոր կաթուղիկոս ընտրել, հայրապետական աթոռը տեղապահութեամբ 3 տարի կառավարեց բազմարդիւն Վրթանէս քերթողը՝ տանելով պատերազմի բոլոր արհաւիրքներին։ Նա չթողեց Դուինի աւերակները՝ ինչպէս որ առաջարկում էր յունաց Սորմէն զօրավարը և չդաւաճանեց իւր հայրենի եկեղեցու դաւանութեան. այլ համբերութեամբ ամէն տեսակ տառապանքներ կրեց։ Օգտուելով այն հանգամանքից, որ Մովսէսը վախճանած էր, Սորմէն Սարատեվատը, որ հայազդի քաղկեդոնիկ է երևում, 604—5 թուերին նամակ գրեց Վրթանէս տեղապահին առաջարկելով միանալ յունահայաստանի հայոց հետ և Յովհաննէս Բագարանցուն կաթուղիկոս ճանաչել «և մի հօտ և մի հովիւ լինել». բայց Վրթանէսը արժանաւոր պատասխան տալով լռեցրեց Սորմէնին՝ ցոյց տալով թէ միութիւն կըլինի այն ժամանակ միայն, երբ դաւթակղութեան արձան Քաղկեդոնի դաւանութիւնը մէջտեղից վերնայ. հերքեց այն ղրպարտութիւնները, որ իբրև թէ Հայերը քաղկեդոնականներն եկեղեցիներն են քանդում։ Թուղթը գրուած է զօրիղ լեզուով ու հեղնանքներով։

Վերջապէս այս ծանր օրերին յաջորդեցին բարեբախտ օրեր. այս ժամանակ ասպարէզ եկան Սմբատ Վրկան մարզպանը և նրա եղբայր Գիւգ (Գագիկ) դաշակերը, որոնք բազմաշխատ Վրթանէս քերթողի հետ միացած՝ բոլոր սրտով նուիրուեցան իրանց աւերակ հայրենիքի ու պատակտեալ եկեղեցու վերաշինութեան գաղափարին. և նրանց ազնիւ նպատակը յաջողութեամբ պսակուեցաւ։

Է. ԳԼՈՒԽ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ. ՎՐԱՑ ԲԱԺԱՆՈՒԵԼԸ.

1. 606 թուերին Հայաստան եկաւ Սմբատ Բագրատունի իշխանը, որ իւր քաջութեամբը մեծապէս սիրելի էր եղած Խոսրով Ապրուէզին և վրկանի մարզպան կարգուած։ Է դարի առաջին մասում աւերակ ու քանդուած էր մեր երկիրը. եկեղեցիները հրձիգ, ժողովուրդը՝ ցիրուցան, կաթուղիկոսը վախճանած, և կրօնապէս հայ ժողովուրդը երկպառակուած։ Ահա այս թշուառութեան օրերում ազնուասիրտ ու հայրենասէր քաջ Սմբատ իշխանը հայ ժողովրդին հայր հանդիսացաւ, կարեկից ամէն կարօտեալներին, օգնական ու զօրավիգ՝ տկարամիտներին. նա մի կողմից հետամուտ եղաւ աւերակները նորոգելու, և ձեռնարկեց յատկապէս Դուինի մայր եկեղեցին կոփածոյ քարից շինելու, միւս կողմից էլ իւր խոհեմ ու խորհրդական մտքով աշխատեց հայ ժողովրդի մէջից կրօնական երկպառակութիւնը վերացնելու և հայրապետական միասիտ իշխանութիւնը վերականգնելու։ Եւ իւր այս ազգաշէն ձեռնարկութեան մէջ նա եռանդուն ու հաւատարիմ աջակից գտաւ Վրթանէս տեղապահ վարդապետին, որ առանց բնաւ ձանձրանալու գործում ու աքնում էր իւր ազգի ու եկեղեցու պահպանութեան համար։

Երբ Խոսրով արքայից արքայի թոյլտուութեամբ Սմբատ մարզպանը Հայաստան եկաւ, նա պատուէր ստացած էր երկիրը խնամել, կաթուղիկոս ընտրել, Դուինի ս. Գրիգորի եկեղեցին շինել և կրօնական երկպառակութիւնը վերացնել։ Պէտք է ասել, որ այս բոլորը կարողացաւ Սմբատ գլուխ բերել։ Ամէն բանից առաջ նա աշխատեց հայութեան երկպառակեալ մասերի մէջ կրօնական միութիւն հաստատել և ապա նոր կաթուղիկոս ընտրել։ Այս ծրագրի իրագործման համար ժամանակն էլ բարեպատեհ էր. յոյները տկարացած էին պարսից ուժի առաջ. Հայաստանի յունաց անցած գաւառները կրկին պարսից անցան և քաղկեդոնութեան յարած հայ եպիսկոպոսներն առանց յունաց քաղաքական իշխանութիւնից ազնուածելու կարող էին իրենց նախկին դաւանութեան անցնել։ Այսպէս և եղաւ։ Նոր կաթուղիկոսի ընտրութեան համար Սմբատ մարզպանը խորհուրդ արաւ միւս հայ նախա-

բարների հետ և Վրթանէս տեղապահի ձեռքով հրաւէր ուղարկեց երկու կողմի հայ եպիսկոպոսներին, որ գան Դուինն ժողովուին։ Հրաւէրըն ընդունուեցաւ. 607 թ. մարտ ամսին գումարուեցաւ Դուինի ժողովը 12 եպիսկոպոսների և բազմաթիւ քահանաների ու վարդապետների մասնակցութեամբ։ Այս ժողովին՝ երկարամեայ անջատումից յետոյ Սիւնեցիք ևս ի դէմս իրանց Բրիստափոր եպիսկոպոսին մասնակցեցան։ Յունաց բաժնից էլ ներկայ էին Բասէնի ու Մարզպետական եպիսկոպոսները։ Ժողովը առժամանակ նոր կաթուղիկոսի ընտրութիւնը յետաձգեց. Սմբատ մարզպանի ու Վրթանէս քերթողի ջանքն էր նախ և առաջ հայ եկեղեցու մէջ դաւանական միութիւն հաստատել, որ յունաց բաժնի քաղկեդոնութեան յարած եկեղեցականները կրկին նախկին դաւանութեան դառնան՝ թուղթ տալով։ Ժողովը մշակեց նաև 7 կանոններ, թէ ինչ կերպով դաւանափոխ հոգևոր ու աշխարհական անձինք կրկին Հայոց եկեղեցին կարող են ընդունուել։ Այս ժողովից առժամանակ յետոյ՝ երբ հայ եպիսկոպոսներն իրենց դաւանութեան ստորագրութիւնը տուին թէ, նախնեաց նման «ընդունում են Նեստորին, Եւտիքէսին, Քաղկեդոնի ժողովը և Լևոնի տումարը», միւս կողմից էլ նոյն բովանդակութեամբ ստորագրութիւն տուին եպիսկոպոսներին նաև Սմբատը, Գիպ դաշտակալը և շարասաղար (քերթող) Վրթանէսը՝ աւելացնելով «այս ուղղափառ հաւատին վրայ հաստատուն կըմնանք ու կը մեռնինք», Դուինի երկրորդ ժողովը գումարուեցաւ, ուր ժողովականներ աւելի բազմաթիւ էին, որովհետև եկել էին նաև յունաց բաժնից. բացակայ էին Աղուանից ու Վրաց կաթուղիկոսները։ Այսպէս դաւանական միութիւն հաստատելուց յետոյ՝ ժողովը ձեռնարկեց կաթուղիկոսի ընտրութեան և միաձայն ընտրուեցաւ Ուշտունեաց Աբրահամ եպիսկոպոսը, որ թէև ի նկատի առնելով ժամանակի ծանր հանգամանքները բացէ ի բաց հրաժարուեցաւ, բայց ապա անսալով ժողովի թախանձանքին՝ յանձն առաւ այդ ծանր պաշտօնը։ Աբրահամի ձեռադրութիւնը կատարուեցաւ 607 թ. ապրիլին. և ժողովական եպիսկոպոսները միանգամ ևս հաստատեցին իրանց դաւանութիւնը։ Հայ ժողովրդի ու հոգևորականութեան ուրախութիւնը կրկնապատիկ եղաւ, երբ յունաց բաժնից դարձեալ հինգ վիճակաւոր եպիսկոպոսներ ու բազմաթիւ վանահայրեր եկան ներկայացան Հայոց կաթուղիկոսին, ժողովականներին ու նախարարներին և իրանց հպատակութիւնն ու դաւանութիւնը յայտնեցին, թէ մերժում են Քաղկեդոնի ժողովը։ Եւ այսպէս ահա Վրթանէս քերթողի ու Սմբատի ջանքերով վերահաստատուեցաւ հայ եկեղեցու և հայրապետութեան միութիւնը, որ Մօրիկի ըբռնութիւնների պատճառով առժամանակ խախտուած էր։—Հաւանօրէն ոչ այս, այլ Դուինի նախընտրական՝ ժողովը, ուր կանոններ սահմա-

նուեցան, մի կարգադրութիւն և՛ ևս արաւ, որ Հայոց, Վրաց և Աղուանից եկեղեցիների յարաբերութեան համար նշանակութիւն ունեցաւ. այդ կարգադրութիւնը եկեղեցու ինը դասին էր վերաբերում։ Յոյները, որ ամէն կերպ աշխատում էին հայոց եկեղեցու նշանակութիւնը նսեմացնել, տակաւին Մովսէս կաթուղիկոսի և հայ եկեղեցու երկպառակման ժամանակ սկսան զրաբանել, թէ հայոց եկեղեցին կաւտարեալ չէ, քանի որ հրեշտակաց ինը դասակագութիւնը չունի, ինչպէս որ Յունաց եկեղեցին ունի. այն է՝ 1. պատրիարքութիւն. 2. արքեպիսկոպոսութիւն.3. մետրապոլիտութիւն.4. եպիսկոպոսութիւն.5. քահանայութիւն. 6. սարկաւագութիւն. 7. կիսասարկաւագութիւն. 8. կղերկոսութիւն. և 9. գրակարդացութիւն։ Յունաց ըմբերանելու համար Դուինի ժողովը կարգադրեց, որ այնուհետև Հայոց կաթուղիկոսը պատրիարք կոչուի՝ իբրև Թադէոս առաքեալի ու Լուսաւորչի յաջորդ. Աղուանիցը՝ արքեպիսկոպոս, իսկ Վրացը՝ մետրապոլիտ իբրև լուսաւորչահաստատ եկեղեցու ճիւղեր։ Բայց այս կարգադրութիւնն էլ նոր դժուարութիւնների պատճառ դարձաւ։ Դահերէց լինելու փառասիրութիւնից դրդուած՝ Աղուանից ու Վրաց կաթուղիկոսները սկսան կռուել. Վրացիք չէին կամենում ստորադաս լինել Աղուաններից այն պատճառով, որ բազմամարդ են և շատ եպիսկոպոսներ ունին. Աղուանք էլ պատճառաբանում էին, որ Վրացիներից աւելի վաղ են քրիստոնեայ դարձել և այն էլ Եղիշէ առաքեալի ձեռքով և նոյն իսկ Հայերից էլ վաղ։ Եւ գահերէցութեան համար յարուցուած այս վէճը ինչպէս Աղուանից, այսպէս և Վրաց եկեղեցու Հայոց եկեղեցուց բաժանուելու պատմութեան մէջ մասամբ վճռող նշանակութիւն ունեցաւ։ Եւ այս է անշուշտ պատճառներից մէկը, որ Աղուանից կաթուղիկոսը Աբրահամի ընտրութեան մասնակից չեղաւ։ Վրաց անջատուելուց յետոյ մետրապոլիտ կոչումը նախ տրուեցաւ Մարզպետական եպիսկոպոսին, որի աթոռը Արտազ գաւառի ս. Թադէոս առաքեալի վանքումն էր, և ապա՝ Սիւնեաց, իբրև քաջուսումն եկեղեցականների, բայց թերևս նրանց փառասիրութիւնը գոհացնելու համար։ Մետրապոլիտը իրաւունք ունէր խաչանիշ դրօշ ունենալու. միայն Հայոց կաթուղիկոսին նամակ գրելիս՝ պէտք է «ի ծառայէ» բառը գործածէր։

Աղուանք էլ, որոնց արքեպիսկոպոսութիւն էր տրուած, դադրեցան այդ ժամանակից հայոց հետ յարաբերութիւն ունենալուց, և այնուհետև (մինչև 705 թ.) նրանց կաթուղիկոսը, իբրև առաքելական աթոռի ժառանգորդ՝ իւր եպիսկոպոսներից էր ստանում ձեռնադրութիւն, և ոչ թէ Հայերից (Մովս. Կաղ. Գ. Ը.)։

2. Աբրահամի կաթուղիկոսութիւնն ամբողջովին կապուած է Աղուանից ու Վրաց եկեղեցական շարժումների հետ։

Զ դարի վերջերը նեստորական ու քաղկեդոնական շարժումն Աղուանից մէջ էլ սկսաւ, ինչպէս տեսանք նախընթաց գլխում, և այդ շարժումը պատակաուեաւ առաջ բերից հայ ու Աղուանից եկեղեցու միջև։ Քաղաքական խառն դրութիւնը և Յունաց զօրացումը այդ շարժումն առաւել ևս հաստատեցին։ Աբրահամի ընտրութեան առթիւ Վրթանէս ու Սմբատ հրաւէր ուղարկեցին նաև Վրաց ու Աղուանից կաթուղիկոսներին, որոնք ի հարկէ չեկան։ Բայց Աղուանները Մխիթար ու Սիմոն եպիսկոպոսների կողմից Գրիգոր Սիւնի իշխանի ձեռքով մի թուղթ ևս ուղարկեցին, ուր բացատրում էին իրենց քաղկեդոնական համոզմունքները, որով բնականաբար պէտք է խորշէին հայ եկեղեցուց։ Երբ Աբրահամը կաթուղիկոս եղաւ, նա անմիջապէս ձեռնարկեց Աղուանից եկեղեցու յարաբերութեան խնդիրը կարգադրելու։ Աղուանից գրած թղթին պատասխան Հայոց կաթուղիկոսը Վրթանէսի ձեռքով մի ընդարձակ դաւանութեան թուղթ ուղարկեց (608 թ.), ուր հերքելով ամէն տեսակ կրօնական տարակուսանքներ և մանաւանդ նեստորական ու քաղկեդոնական համոզմունքներ, յորդորում է նրանց հայոց հետ իրանց նախկին սէրն ու յարաբերութիւնը պահպանել և չբաժանուիլ ամենևին ս. Գրիգորի հիմնած եկեղեցուց. «Թէ որ, ասում է, այն հայրերի զաւակներն ենք, որոնք առաքեալներից չեն ջոկուում, ապա նրանց հաւատը հաստատուն պահենք, և չլինի որ Յուդը կրի հետ խառնելով անարատ կաթի նմանութիւնը ստիզծենք»։ Այս թղթից զատ երևի թէ ուրիշ թղթեր ևս փոխանակուել են Հայոց ու Աղուանից մէջ, բայց ի զուր. Աղուանները, կամ գէթ նրանց մի մասը, հաստատ են մնում իրենց քաղկեդոնական դաւանութեան վրայ և այս պատճառով էլ երբ 610 թուին Աբրահամ կաթուղիկոսը Վրաց համար լուր շրջաբերականը հանեց, ինչ որ որոշած էր Վրաց համար, նոյնը պատուիրեց գործադրել նաև Աղուանից վերաբերմամբ «որոնց մէջ քաղցկեղի նման ճարակում է քաղկեդոնական հերձուածը»։ Բայց և այնպէս Աղուանից դաւանապէս անջատուելը հայ եկեղեցուց երկար չտևեց։

3. Աւելի կնճռոտ եղաւ Հայոց ու Վրաց ՝ եկեղեցու յարաբերութեան խնդիրը և հետևանքներով աւելի ծանր։

Ինչպէս տեսանք, Դ դարում Հայոց հետ գրեթէ միաժամանակ քրիստոնէութիւն ընդունեցին նաև Վրացիք։ Սոցա դարձը կատարուեցաւ ս. Նունէ կոյսի ձեռքով, որ ս. Հռիփսիմէի ընկերներից մէկն էր և Վրաստան էր գնացել քրիստոնէութիւն քարոզելու համար։ Մի հրաշալական դէպքի առիթով՝ Վրաց Միհրան թագաւորը քրիստոնեայ դարձաւ և ս. Նունէին նորադարձներին մկրտելու համար ս. Լուսաւորչից քահանաներ խնդրեց, որը և այդ խնդիրը կատարեց։ Այդ օրուա-

նից ահա Հայոց ու Վրաց եկեղեցիները կապուեցան և նրանց մտերիմ յարաբերութիւնը շարունակուեցաւ մինչև Ե դարի առաջին քառորդը։ Վրացիք իրենց ևս ս. Գրիգորի հօտ էին համարում մինչև այդ ժամանակամիջոցը և իրենց դաւանական ու ծիսական տօներով (Ս. աջաւորաց պաս, մատաղ և այլն) նոյն էին Հայոց հետ։ Նրանց առաջին եպիսկոպոսը Լուսաւորչից ձեռնադրուեցաւ, ապա Լուսաւորչի թոռը՝ Գրիգորիսը դարձաւ նրանց եպիսկոպոս (Փաւստ. Գ. ե. ղ.) և այն օրերից սկսած՝ Վրաց եպիսկոպոսները, ինչպէս և Աղուանիցը, իրանց ձեռնադրութիւնը հայոց կաթուղիկոսներից էին առնում մինչև Ե դարը, բայց միայն իրենց ներքին գործերի մէջ նրանք բոլորովին ազատ էին (Կաղ. Բ. խե.)։ Վրաց եպիսկոպոսը իր եպիսկոպոսներով ներկայ էր լինում Հայոց եկեղեցական ժողովներին։ Երկու ազգի եկեղեցականներ հաւասարապէս ընդունվում էին երկու եկեղեցիների մէջ։ Եկեղեցիների միութեան պատճառով հայ և վրացի ժողովրդի մէջ ևս մտերմութիւն էր տիրում. միմիանց ազգութիւնների ևս թոյլ կուտային՝ շատ սովորական երևոյթներ էին։ Այս մտերմական կապը հաստատել՝ շատ սովորական երևոյթներ էին։ Այս մտերմական երևոյթն առաւել երևում է Ե դարում, երբ հանճարեղ Մաշտոցը Վրաց համար ևս տառեր յօրինեց ու դպրոցներ բացեց. Վրաց Աստուածաշնչի թարգմանութիւնը հայկականի ազդեցութիւնն է կրում, և առհասարակ վրաց գրականութիւնը՝ հայ գրականութեան։ Ե դարում կրօնական հալածանքների ժամանակ հայ նախարարները վրաց, ինչպէս և ընդհ. հայոց օգնեցին։ Երկու ազգի այս մտերմական յարաբերութիւնը թշնամութեան փոխուեցաւ, երբ Ե դարի առաջին մասում վրաց կաթուղիկոս դարձաւ Կիւրիոն եպիսկոպոսը։ Ջ դարի վերջին մասում Վրաց կաթուղիկոսը վախճանում է։ Յաջորդի ընտրութեան պատճառով դժտութիւն է ընկնում վրաց իշխանների մէջ, որոնք վերջապէս առանձին պատգամաւորութեամբ Հայոց Մովսէս կաթուղիկոսից են խնդրում իրանց առաջնորդ։ Մովսէսը ի նկատի առնելով Կիւրիոն եպիսկոպոսի հաւատարմութիւնը, արժանաւորութիւնն ու խնդիրը, նրան կաթուղիկոս է ձեռնադրում (597 թ.) և իր պաշտօնատեղին ուղարկում։ Կիւրիոնը վրացի էր, հմուտ հայ և յոյն լեզուներին։ Նա մանկութեան հասակում գնացել էր Փոքր Հայք և 15 տարի ապրել էր Առաջին Հայոց Նիկոպոլիս քաղաքը։ Յոյներից նեղուած իր դաւանութեան համար (Ուխտ. 10 եր.) Դուին է գալիս Մովսէս կաթուղիկոսի ժամանակ և բնակւում է կաթուղիկոսարանում և այս միջոցին հաւանօրէն եկեղեցական կոչումն է ստանում։ Իր հմտութեամբ ու քաղցր բնաւորութեամբ նա հաճելի է դառնում Մովսէս կաթուղիկոսին, որը նրան Դուինի ս. Կաթուղիկէին վանահայր և Այրարատի բռրեպիսկոպոս է կարգում (592 թ.)։ Հնդամեայ պաշտօնավարութիւ-

նից յետոյ՝ նա վրաց եկեղեցու կաթողիկոսն է կոչվում։ Բայց կաթողիկոս դառնալով նա պատճառ եղաւ վրաց եկեղեցու անջատուելուն Հայոց եկեղեցուց։ Այս խնդրի մէջ եթէ գուցէ մասամբ դեր խաղաց Կիւրիոնի կրօնական համոզմունքը, որի մասին Ուխտանէս պատմիչը շեշտում է, բայց առաւելապէս ազդից յունաց քաղաքականութիւնը, Կիւրիոնի ազգասիրութիւնն ու փառասիրութեան ոգին։ Կիւրիոնը պաշտօնի վրայ էր Հայաստանում այն ժամանակ, երբ Մօրիկի հալածանքերը սկսուեցան հայոց դէմ, որի հետևանքն եղաւ Հայոց Հայրապետութեան բաժանումը. տեսաւ Պարսկահայ կաթողիկոսի խեղճութիւնը և միւս կողմէն այն գգուանքները, որին հակառակ Յովհաննէսը արժանացաւ. Մօրիկի առաջ տկարացած էր պարսից ոյժը և ամբողջ Վրաստանն էլ յունաց ձեռքն էր և ազատ՝ քրիստոնէութեան ուխերիմ թշնամուց։ Այս պարագաները ահա աւելի դրդեցին Կիւրիոնին յունաց յարելու և նրանց միջոցով հայրենիքի վիճակն ապահովելու։ Միևնոյն ոգւով առնաստրակ ձրաց իշխաններն էլ տոգորուած էին և այս է պատճառը, որ բաժանման բովանդակ պատմութեան մէջ սերտ համերաշխութիւն ենք տեսնում իշխանների ու կաթողիկոսի միջև։ Նրանց ազգային պատուին ծանր էր թուում կրօնապէս կախումն ունենալ քաղաքականապէս տկարացած մի ժողովրդից, որի նկատմամբ իրենք աւելի լաւ վիճակի մէջ էին. Թողնենք անձնական բարիքները, որ խոստանում էին նրանց յոյն քարոզիչները՝ քաղկեդոնի վարդապետութիւնն ընդունելու դէպքում (Օրմ. 590)։ Իւր կաթողիկոսութեան հէնց սկզբից Կիւրիոնը բոլոր վրաց իշխանների սիրտն է գրաւում, և ժողովրդի այս սէրը նա իւր բովանդակ գործունէութեան մէջ իրրև հաստատուն կռուան ունեցաւ։

4. Նեստորականութիւնը ինչպէս քարոզիչներ ունեցել էր Հայաստանում, այսպէս նաև ունեցաւ Վրաստանում։ Հայոց Մովսէս կաթողիկոսի և Կիւրիոնի ժամանակ այդ աղանդը, որ պէտք է ասել քաղկեդոնականութեան հետ հաշտ ու հաւան գործում էր, Վրաստանի մէջ բաւական հետևողներ վաստակել էր և նոյն իսկ Կիւրիոն նրան հետ մտերիմ հաղորդակցութեան մէջ էր։ Այս ժամանակի նեստորամիտ անձնաւորութիւններից մէկն էր խուժիկ կիսը, որ Կիւրիոնի կաթողիկոսութեան երրորդ տարին 600 թուին գալիս է նրա մօտ և նրանից եպիսկոպոս է ձեռնադրւում. Տեսնելով Կիւրիոնի այս մերձաւոր յարաբերութիւնը նեստորականների և նոյնպէս քաղկեդոնականների հետ՝ Յուրտաւի (Դաջէնը, Հաղբատ) Մովսէս եպիսկոպոսը, որ Կիւրիոնից 598 թուին ձեռնադրութիւն էր ստացել, անմիջապէս տեղեկութիւն է տալիս Հայոց Մովսէս կաթողիկոսին՝ խնդրելով իրրև հոգևոր հայր չարիքը զարմանել և Կիւրիոնին խրատել։ Սառնալով մի

այսպիսի տեղեկութիւն՝ Մովսէս կաթողիկոսը այս առթիւ մի նամակ է գրում Կիւրիոնին (601 թ.), և յայտնելով իւր զարմանքը, որ նա մի նեստորականի եպիսկոպոսութիւն է տուել և քաղկեդոնականների հետ մերձաւոր յարաբերութիւն ունի, յորդորում է նրան հեռացնել նեստորական եպիսկոպոսին, հեռու փախչել Քաղկեդոնի ժողովից ու Լևոնի տոմարից և հրկու դարերով միաբան ժողովրդի պատկամաւոր չդառնալ։ Այս նամակին Կիւրիոնը ամենայն խոնարհութեամբ պատասխանում է, յայտնելով թէ արդէն իսկ կատարել է կաթողիկոսի կամքը հեռացնելով Նուժիկ եպիսկոպոսին և թէ Հայոց հետ դաւանութեամբ միշտ միաբան է՝ առանց սակայն պարզաբար յայտնելու թէ քաղկեդոնականներից հեռու է։

Մովսէս կաթողիկոսի մահուանից յետոյ անիշխանութեան ժամանակ այս խնդիրը կրկին հրապարակ է գալիս և այն՝ Յուրտաւի Մովսէս եպիսկոպոսի հայածուելուն առթիւ։ Կիւրիոնը տեսնելով որ իրեն հնթակայ Յուրտաւի Մովսէս եպիսկոպոսը հակում է իւր գործունէութեան վրայ՝ օգտուելով հայոց Մովսէս կաթողիկոսի մահուանից՝ հալածում է նրան իւր վիճակից և Յուրտաւ քաղաքի ժամասացութեան լեզուն իսկ, որ հայերէն էր, քանի որ հայերը մեծամասնութիւն էին կազմում, փոխում, վրացերէն է դարձնում։ Այս նոր պարագաների մասին հալածուած Մովսէս եպիսկոպոսը տեղեկութիւն է տալիս Հայոց հայրապետութեան տեղապահ Վրթանէս քերթողին, խնդրում է նամակներ գրել Կիւրիոնին և վրաց իշխաններին, որոնք քաղկեդոնականութեամբ մոլորուել էին, և իւր անձնական տառապանքները թեթևացնել։ Այսպէս խնդիրը նորից արծարծվում է. Վրթանէսը կատարում է Մովսէսի խնդիրը. նա մի ընդարձակ թուղթ է գրում (606 թ.) վրաց իշխաններին և կիւրիոնին և ցոյց տալով՝ թէ ազիտութեամբ ինչպիսի ծանր մոլորութեան մէջ են ընկել՝ յորդորում է նրանց Քաղկեդոնի ժողովից փախչել. յայտնում է իւր պատրաստականութիւնը անձամբ վրաստան գալ, եթէ միայն այդ մասին հայ իշխանների թոյլատուութիւնը խնդրին։ Ճիշդ այսպիսի իմաստով մի թուղթ ևս գրում է վրաց Պետրոս եպիսկոպոսին՝ ի միջի այլոց խնդրելով որ աշխատի Մովսէս եպիսկոպոսին իւր վիճակը դարձնել։ Վրթանէսի այս նամակը ստատկապէս բարկացնում է Կիւրիոնին. նա պատասխան չի տալիս և զայրացմամբ գոչում է. այս նամակը Երուսաղէմի պատրիարքին կը տամ, թող նա պատասխանէ, և սկսում է նզովել ու հայհոյել Հայերին։ Այսպէս զայրանում են նաև վրաց իշխանները, քահանաներն ու հասարակ մարդիկ։

Աբրահամի կաթողիկոսութեան առաջին տարին վրաց խնդիրը կրկին է արծարծվում։ Դուինի ժողովի կարգադրութիւնը՝ որով Վրաց եպիս-

կոպտին մետրապոլիա կոչուած էր շնորհւում և Աղուանից կաթուղիկոսից յետոյ դասւում, մի նոր առիթ է տալիս խռովութեան և վրաց իշխանների ապստամբութիւնն ու կիւրիոնի փառասիրութիւնն է խոցում։ Այս խակ պատճառով կիւրիոնը ոչ անձամբ և ոչ իսկ որև է եպիսկոպոսի ձեռքով Աբրահամի ընտրութիւնն է շնորհաւորում։ Կրկին հրապարակ է գալիս Ծուրտաւի Մովսէս եպիսկոպոսը և ոչ միայն Աբրահամին, այլ և Սմբատ մարզպանին խնդրում է թուղթ գրելու վրայ, յորդորելու որ իրանց մոլորութիւնից դառնան և իրեն էլ նախկին վիճակը տան։ Նրա խնդիրը յարգւում է. առանձին նամակ Աբրահամ կաթուղիկոսն է գրում կիւրիոնին խնդրելով նրան նախկին դաւանանքան միաբանութեան մէջ հաստատուն մնալով հեռանալ Քաղկեդոնի դաւանութիւնից և Լեոնի տոմարից, չօտարացնել երկու աշխարհների բնակիչներին հոգևոր ու մարմնաւոր խնամութիւնից, խնդրում է վերջապէս Ծուրտաւի մէջ նախկին հայերէն ժամասացութիւնը մտցնել և Մովսէսին էլ իւր աթոռը տալ։ Սմբատն էլ նոյն իմաստով է գրում։ Նա յայտնում է, որ ինքը Հայաստան է ուղարկուել արքայից արքայի հրամանով խռովութիւնները վերցնելու, և ուրախ է, որ կրօնական թշնամութիւնը Հայոց միջից վերցուեցաւ, հայրապետ կարգուեցաւ և հայերը մի հօտ դարձան արքայից արքայի իշխանութեան տակ։ Ընդգրում է, որ այդ միութիւնը ըստ նախնոյն հաստատուն մնայ Հայոց և Վրաց մէջ և երկու ազգերը շարունակեն միմեանց սրբութիւններին ուխտ գնալ-գալ։ Երկու նամակներին էլ կիւրիոնը պատասխանում է։ Աբրահամ կաթուղիկոսին յայտնում է, թէ հաւատոյ միութիւնից ամենևին չէ հեռացել, այլ այն դաւանութիւնն ունի, ինչ որ Երուսաղէմի եկեղեցին. յայտնում է նաև որ Ծուրտաւի Մովսէս եպիսկոպոսը իւր վատթար գործերի համար է հալածուած, և թէ այն վիճակի մէջ ժամասացութիւնը կատարւում է միապէս հայերէն և վրացերէնով Սմբատ մարզպանին ևս ամենայն խնդութեամբ պատասխանում է և յայտնում իւր խնդակցութիւնը նրա կատարած գործի առթիւ աւելացնելով. որ Ծուրտաւի մէջ ժամասացութեան լեզուն չէ փոխուած և թէ Մովսէսը իւր չար գործերի համար է հալածուած, այն Մովսէսը՝ որ մինչև իսկ ապստամբ Վահրամ իշխանի հետ միացած՝ Աբեաց տէրութեան մեծ ջանք պէտք է հասցնէր։ Սմբատը ի հարկէ չի հաւատում կիւրիոնի խօսքերին, բայց նա այլ ևս այս գործի մէջ չի խառնւում, որովհետև արքայից արքայի հրամանով 608 թուին մեր երկրից հեռանում է՝ խընդրելով սակայն Մովսէս եպիսկոպոսից սկսուած գործի հլքի մասին իրեն տեղեկութիւն տալ՝ հարկաւոր դէպքում մարմնական ոյժ բանեցնելու համար։

Աբրահամ կաթուղիկոսը դոհ չմնալով կիւրիոնի տուած պատաս-

խանից՝ գրում է իւր երկրորդ թուղթը, ուր նա խնդրում է կիւրիոնից պարզել իւր հայեացքը, թէ Երուսաղէմի որ հաւատքի մասին է խօսքը, արդեօք այն հաւատքի՝ որ Քաղկեդոնի ժողովից առաջ էր, թէ այն հաւատքի մասին՝ որ ժողովից յետոյ ընդունուեցաւ։ Վերջապէս ցանկանում է, որ տեսակցութեան մի տեղ նշանակուի այս խնդիրների մասին բերան ի բերան խօսելու համար։ Աբրահամի այս նամակին պատասխանելով՝ կիւրիոնը աւելացնում է, թէ խռովութեան միակ պատճառ Ծուրտաւի Մովսէս եպիսկոպոսն է. թէ ինքը Երուսաղէմի դաւանութիւնն ունի և թէ կարող չէ այդ դաւանութիւնը թողած Հայոց հետ միաբանել. և թէ վերջապէս ինքը Հայոց հետ գործ չունի և Հայաստանից անցնել պէտք կըլինի, եթէ միայն Երուսաղէմ ուխտի գնալու լինի։ Երբ վերջապէս Աբրահամը իւր երրորդ թուղթն է գրում և պարզելով Հայոց դաւանութիւնը՝ պահանջում է որ կիւրիոնն ևս բացորոշ խօսքերով մերժէ Քաղկեդոնի դաւանութիւնը, նա յիրաւի բացարձակ յայտնում է, որ Քաղկեդոնի դաւանութիւնն է ընդունում և այդ ժողովի պատմութիւնն էլ թարգմանած ուղարկում է։

Այս պատասխանից յետոյ 610 թ. Աբրահամ կաթուղիկոսը իւր շրջաբերական թուղթն է գրում, ուր յայտնելով հայ ժողովրդին, թէ վրացիք Քաղկեդոնի դաւանութիւնն են ընդունել, պատուիրում է բոլորովին հեռանալ վրացիներից և ամենևին նրանց հետ յարաբերութիւն չունենալ ոչ կրօնական և ոչ բարեկամական. չերթալ ուխտ Մծխեթի ս. Խաչին և ոչ իսկ նրանց հայոց եկեղեցիներն ընդունել, մխիթարն թոյլ է տալիս առևտրական գործ ունենալ։ Այս պատուէրի դէմ մեղանչողներին նա սպառնում է նաև մարմնապէս պատժել։

Ահա այսպէս խզուեցաւ երկու ազգերի կրօնական յարաբերութիւնը և մի զօրեղ թշնամութիւն ընկաւ երկուսի մէջ՝ միանգամայն երկու կողմին էլ ձեռնակար։

Այս դէպքից յետոյ Աբրահամ կաթուղիկոսն երկար չապրեցաւ։ Նա կարճատև կաթուղիկոսութիւն ունեցաւ և վախճանեցաւ 614 կամ 615 թուերին։

Ը. ԳԼՈՒԽ

ՀԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԶՕՐԱՑՈՒՄԸ. ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ. ՀԱՅՑ ԵՒ ՅՈՅՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՒԱՋԻՆ ՓՈՐՁԸ. ԵԶՐԱՒ

1. Խոսրով Ապրուէզի բարեհաճութեամբ (Գիրք թղ. 510) ու Մմբատ մարզպանի ջանքերով միացած ու հաստատուած հայ եկեղեցին աւելի ևս զօրացաւ ու կաղդուրուեցաւ Աբրահամի յաջորդ Կոմիտաս կաթուղիկոսի օրով։ Վրացիներուն անջատուելովը արդարև հայոց եկեղեցին իւր ղինակիցներից մէկը կորցրեց, բայց դարձեալ նա բովանդակ Արևելքի մանր եկեղեցիներուն մէջ առաջնակարգ դիրք բռնեց և նրա պաշտպանութիւնը վայելելու համար շատերը նրան դիմեցին։

Աբրահամ կաթուղիկոսի բռնած դիրքը Քաղկեդոնիկ Վրաց եկեղեցու հանդէպ, ինչպէս ասացինք, զօրեղ թշնամութիւն առաջ բերեց. Վրացիք և Յոյնները սկսան բռնութիւններ բանեցնել հայ եկեղեցու և աշխարհի վրայ՝ օգտուելով մանաւանդ հայ ժողովրդի կեանքի անյաջող պայմաններից, երբ Մմբատ Բագրատունին և միւս ազդեցիկ հայ իշխանները դանվում էին Բուշանաց կողմերը, միւս կողմից էլ յունապաբսիկ պատերազմը աւերմունք էր գործում Հայաստանում։ Բայց պայմանները շուտով փոխուեցան. Պարսիկները յաղթանակերով Բիւզանդական տէրութեան խորքերը մտան. 614 թուի յունիսին Երուսաղէմն առին ու Փրկչի խաչափայտը գերի տարին. տիրեցին Աղեքսանդրիային, Հասանլ Պոսփոր և այսպէս Յունաց զինուորական ուժը իսպառ խորտակեցին։ Այն ժամանակներն ահա ծերունի Աբրահամ կաթուղիկոսի կողմից Պարսկաստան ուղարկուեցան Կոմիտաս Մամիկոնէից և Մաանէս Ամատունեաց եպիսկոպոսները՝ բողոքելու վրաց կրօնական բռնութիւնների դէմ և հզօր Խոսրովի պաշտպանութիւնը հայցելու։ Տիզբոնում այս ժամանակ մեծ ազդեցութիւն ունէր Մմբատ Բագրատունի մարզպանը, որ Բուշանաց վրայ տարած յաղթանակներով փառաւորուած՝ ապրում էր Պարսից արքունիքում։ Բնականաբար սա, որ երբեմն Հայոց պառակտեալ հայրապետութիւնը վերակազմել էր, այժմ ևս պէտք է աշխատէր ոչ միայն պաշտպանութիւն տալ

Հայ եկեղեցուն, այլ և նրա դիրքը բարձրացնել և նրանից անջատուած Վրաց և Աղուանից եկեղեցիները կրկին դաւանութեամբ նրա հետ միացնել։ Մի այսպիսի ձգտում ճշդիւ համապատասխան էր և Խոսրովի քաղաքական նպատակներին՝—միացնել իւր իշխանութեան տակ գտնուած բոլոր տարբեր դաւանութեան քրիստոնեաներին քաղկեդոնիկ յոյն եկեղեցու և տէրութեան դէմ, որ արդէն Խոսրովի յաղթանակներով կատարելապէս վճռած վիճակի մէջ էր գտնվում։ Խոսրովի հրամանով Պարսից տէրութեան մէջ գտնուած բոլոր քրիստոնեայ եկեղեցիները հրաւիրվումին քննելու, թէ եղած դաւանութիւններից որն է ճշմարիտը, որ այն էլ ընդունուի։ Այս ժողովը գումարվում է 615 թ. Տիզբոնում Մմբատ Բագրատունու հսկողութեամբ։ Ժողովին ներկայ էին Գաբրիէլ բժշկապետը՝ Խոսրովի սիրելին, Հայոց Կոմիտաս և Մաանէս եպիսկոպոսները, Վրաց Կիւրիոն (Յովհ. Մամ.), Աղուանից Յովհաննէս կաթուղիկոսները, Երուսաղէմի գերուած Զաքարիա պատրիարքը, շատ քաղկեդոնականներ ու միաբնակ ասորի եկեղեցականներ. ժողովից արտաքսուեցան հրէաները ու նեստորականները, որոնց Գաբրիէլ բժշկապետի ազդեցութեամբ Խոսրովը չէր սիրում։ Ժողովը նախ զբաղվում է երեք տիեզերական ժողովների ու Քաղկեդոնի դաւանութեան քննութեամբ և ապա ի նկատի առնելով Հայոց եկեղեցու ընդարձակ դաւանութիւնը, որ Կոմիտաս եպիսկոպոսը ժողովին ներկայացրեց, ճշմարիտ է գտնում նոյնը և ըստ ամենայնի համաձայն նախկին երեք տիեզերական ժողովների դաւանութեան, ուստի և ընդունելի։ Արքայի հրամանով արքունի գանձարանից կատար ու Խոսրովով թագաւորնքի կնքով մի թուղթ ևս հանվում է, որ նոյնպէս հաստատում էր հայոց դաւանութեան ուղղափառութիւնը։ Այս պարագաներն ի նկատի առնելով՝ Խոսրովը հրովարտակ է հանում և պատուիրում, որ իւր տէրութեան բոլոր քրիստոնեաները հայոց դաւանութեան հետևին պատիժ սպառնալով հակառակողներին։ Ինչպէս երևում է, այս ժողովն էլ չնպաստեց Աղուանից ու Վրաց եկեղեցիների միացման հայ եկեղեցու հետ. այս իսկ պատճառով Խոսրովը Աղուանից ու Վրաց կաթուղիկոսներին կալուածատէրերին հալածատու ղարձրեց, որից աղատ էին եկեղեցականները։

2. Արքայից արքայի հզօր պաշտպանութեամբ զօրացած և կաթուղիկոս ընտրուած Կոմիտաս եպիսկոպոսը (Կնիք) Հայաստան է վերադառնում և այնուհետև համարձակօրէն ձեռք է զարնում եկեղեցիների նորոգութեան ու բարեկարգութեան։ Նրա օգնութեանն է դիմում Երուսաղէմի Մոդեստոս եպիսկոպոսը և բաջալերութիւն տանում։ Այս ժամանակ մեռնում է Աղուանից Յովհաննէս կաթուղիկոսը և յաջորդ Ուխտանէսը Կոմիտասից ձեռնադրվում, որով այս երկու աթոռների

միութիւնն է հաստատւում։ Տիզբոնի ժողովից յետոյ 617 թուերին Դուինն են գալիս Մարութա (+ 649) և Պետրոս յակոբիկ սուրբ եկեղեցականները և յայտնում իրանց դառնական միութիւնը հայոց հետ։ Այս բոլոր փաստերը ցոյց են տալիս, թէ ինչ ազդեցիկ դիրք ունեցաւ Հայոց եկեղեցին Կոմիտաս կաթուղիկոսի օրով։

Կոմիտաս կաթուղիկոսը վերջացնում է Դուինի ս. Գրիգոր եկեղեցու շինութիւնը, որ Սմբատն էր հիմնարկել և Աբրահամ կաթուղիկոսը շարունակել։ Հիմնովին նորոգում է ս. Հռիփսիմէի փոքրիկ մատուռը (618 թ.), որի վանահայրն էր եղել Երեմիա։ Այս նորոգութեան ժամանակ գտնվում է ս. Կոյսի գլուխը՝ կնքուած ս. Գրիգորի ու Սահակ Պարթևի կնիքներով։ Կոմիտաս կաթուղիկոսը ինքն էլ կնքում է և այս դիւտի առթիւ գրում իւր «Անձինք նուիրեալք» շրջականը, որ մինչև այսօր էլ երգվում է մեր եկեղեցիներում։ Բարից է շինում ս. կաթուղիկէի (ս. Էջմիածնի) փայտակերտ գմբէթը, ինչպէս նաև մի քանի այլ նորոգութիւններ է կատարում։ Այս շինութիւնների հետ՝ նա ուշադրութիւն է դարձնում նաև հայ եկեղեցականների կրթութեան վրայ։ Այս ժամանակի վարդապետարաններից նշանաւոր էին Երասխաձորինը (Աղշարունեացը), ուր ուսուցիչ էր կարգուած փիլիսոփայ Մաթեւոսաղան, և Սիւնեացը, ուր գործում էր Մովսէս քերթողը։ Մաթեւոսաղային աշակերտից Կոմիտաս կաթուղիկոսի հրաւիրեցին Թէոդորոսը, որ յետոյ բաւական ազդեցիկ դեր խաղաց։ Կոմիտաս կաթուղիկոսը թողել է բաւական թուով ճառեր, թղթեր, ինչպէս նաև մի ընդարձակ գրուած կնիք հաւատոյ կոչուած, ուր պաշտպանվում է հայ եկեղեցու վարդապետութիւնը Քաղկեդոնի դէմ։—Կոմիտաս կաթուղիկոսի մահուան թուականը յայտնի չէ, այս միայն հաստատ է, որ 628 թ. աթոռը պարապ էր և կաթուղիկոսութեան տեղապահ էր Յովհան Մայրագոմեցին։

3. Կոմիտաս կաթուղիկոսի վերջին տարիները մեր երկիրը դարձեալ պատերազմների բեմ էր. Խոսրովի ու Հերակլի մէջ պատերազմ բորբոքուած էր։ Դուին, Նախճաւան և այլ քաղաքներ յոյների ձեռքից առնուեցան ու աւերուեցան։ Երբ 628 թուին խաղաղութիւն հաստատուեցաւ երկու ոսոխ տէրութիւնների մէջ՝ կաւատ Թագաւորի կողմից պարսից բաժնի Հայոց վրայ մարզպան կարգուեցաւ Վարազտիրոց իշխանը, որին հայերը մեծ խնդութեամբ ընդունեցին։ Վարազտիրոցի առաջին գործերից մէկն եղաւ կաթուղիկոս ընտրել և Թէոդորոս Ռշտունու առաջադրութեամբ յարմար գտաւ եցաւ Քրիստափոր անապատականը (628—631), որ Ապահունեաց եպիսկոպոս էր։ Սա գոռոզ բնաւորութեան տէր անձն էր. ամէնքին խստութեամբ յանդիմանում էր, նոյն իսկ Վարազտիրոց իշխանին։ Այս իսկ պատճառով առիւծ դարձաւ մանկանին. գահընկէց անելու համար նրա վերայ պէսպէս բամբասանքներ սկսան կուտել և մերձաւորներից իսկ երկու հոգի եղած չարախօսութիւնները հաստատեցին։ Քրիստափորի գործերը քննելու համար Վարազտիրոց իշխանը 631 թուին եպիսկոպոսներից ու իշխաններից ժողով գումարեց և քննելով Քրիստափորի ուղղութիւնը և ջատագով գտնելով՝ կաթուղիկոսութիւնից զրկեց։ Ժողովը կաթուղիկոս ընտրեց ս. Գրիգորի փակակալ Եղբաս եպիսկոպոսին (631—641), որ մի խոնարհ ու հեզ մարդ էր. ոչ մէկի սիրտը չէր վշտացնում, և ոչ երբէք մի տգեղ խօսք արտասանում։

Գահընկէց Քրիստափորը Մասեացոտն գաւառի Ուղեաց գիւղն առանձնացաւ, ուր վանք շինեց, բազմաթիւ ճգնաւորներ հաւաքեց իւր շուրջը և աղօթքով ու պահեցողութեամբ կնքեց իւր կեանքը։

4. Խոսրով Ապրուէզի հզօր զօրութեան առաջ վհատած ու անճարացած Հերակլ կայսրը՝ «Աստուծոյ տեղապահը», ինչպէս նրան ժամանակակից յոյներն էին կոչում (Սեբ. 102), վերջապէս կենդանութեան նշան ցոյց տուեց. նա վրէժխնդիր հանդիսացաւ այն անարգանքին, որ պարսիկները հասցրել էին Փրկչին ու նրա եկեղեցուն և նորանոր յաղթանակներով հետզհետէ վերադարձրեց այն երկիրները, որ նրանք գրաւել էին։ Հերակլին իւր գործունէութեան մէջ արիութիւն, ոգի ներշնչողը Պօղոս պատրիարք Սերգիոսն էր, որ պատերազմական ծախսերն իսկ հոգաց եկեղեցիների արծաթները գործածելով։ Հերակլ իւր արշաւանքը սկսեց 623 թուին և յաղթութիւն յաղթութեան վրայ տանելով՝ խորտակեց պարսից ոյժը. նրա զօրավարներից մէկն էր Մժէժ Գնունի իշխանը, որ մեծ քաջութիւններ գործեց Հայաստանում, այս պատերազմի ամենանշանաւոր բեմերից մէկի վրայ։ 628 թ. փետրուարին Խոսրով Ապրուէզը իւրայիններից սպանուեցաւ. նոյն թուին կաւատ Բ. արքայից արքան հաշտութեան պայմաններ կապեց յունաց հետ և պատերազմը վերջացաւ։ Այս դաշնադրութեամբ կրկին յունաց անցաւ Հայաստանի մեծ մասը, այն՝ ինչ որ Մօրիկի ժամանակն էր։ Պարսից մասում հայոց մարզպան նշանակուեցաւ Վարազտիրոց իշխանը, իսկ Ցունաց բաժնի վրայ՝ Մժէժ Գնունի քաջ զօրավարը, որ դժբախտաբար թշնամական յարաբերութեան մէջ էր առաջինի հետ և աշխատում էր ամէն կերպ ձեռնհաս նրան։ Հերակլի յաղթանակները ցընծութեամբ լցրին յունաց սրտերը. 628 թուին սեպտեմբերին Հերակլը Պօլիս մտաւ և ժողովուրդը նրան սաղմոսերգութեամբ ընդունեց։ Այս ուրախութիւնը կրկնապատիկ եղաւ, երբ յաջորդ տարին 629 թուին նա ս. Խաչը պարսիկներից յետ ստացաւ և մեծ հանդէսով սեպտեմբեր ամսին Երուսաղէմում Գողգոթայի վրայ հաստատեց՝ խունն բազմութեան ներկայութեամբ. այս առթիւ հաստատուեցաւ քրիստոնէական

եկեղեցու նշանաւոր ծօներից մէկը Աստվերապը, որ մինչև այժմ քրիստոնէական եկեղեցիներում ծօնվում է։

5. Հերակլը՝ որ զէնքի ուժով վերականգնեց յունական կայսերութեան միութիւնը, աշխատեց նաև ներքսապէս միութիւնը հաստատուն դարձնել, և այն՝ յատկապէս կրօնական խնդիրների մէջ, որոնք քայքայում էին յունաց տէրութիւնը և արտաքին թշնամիներին մեծապէս նպաստում. Հայաստանը, Ասորիքը և մանաւանդ Եգիպտոսը կրօնապէս անջատուած լինելով՝ միևնոյն ժամանակ թշնամական յարաբերութեան մէջ էին կեդրոնական իշխանութեան հետ։ Ահա այս կրօնական խարութիւնը կամեցաւ մէջտեղից վերցնել Հերակլը և պետութեան մասերի մէջ միութիւն հաստատել։ Կրօնական թշնամութեան բուն պատճառ Բրիստոսի մի կամ երկու բնութիւն ունենալու խնդիրն էր, կամ Բազկեդոնի ժողովը։ Հերակլը երկու հակառակ կուսակցութիւնները հաշտեցնելու համար հրապարակ հանեց մի նոր վարդապետութիւն, այն է թէ Բրիստոս՝ երկու բնութիւնների միացումից յետոյ ունէր մի կամք և մի ներգործութիւն. դաւանական այս պիսի բանաձևով կարծես անուղղակի մի բնութեան վարդապետութիւնն էր քարոզում։ Այս նոր վարդապետութիւնը, որ առաջին անգամ 626 թուերին, կամ փոքր ինչ առաջ՝ արտայայտուեցաւ, յայտնի է պատմութեան մէջ միակամական (монотелитство) անունով, և նշանաւոր եկեղեցականներից նրան ջատագով հանդիսացան Սերգիոս պատրիարքն ու Աղեքսանդրիայի Կիւրոս եպիսկոպոսը։ Հերակլը յիրաւի իւր ակնկալութեան հասաւ. իւր դաւանական նոր սկզբունքով միութիւն առաջ բերեց ինչպէս Ասորիքում, այսպէս նաև Եգիպտոսում։ Ճիշդ այս դաւանական հիմունքներով, որ պէտք է ասել էապէս Բազկեդոնի վարդապետութեան հակառակ էր, ուստի և յետոյ յունաց եկեղեցու կողմից դատապարտուեցաւ, Հերակլը կամեցաւ Հայոց եկեղեցին ևս միացնել յունականին հետ Կարինի ժողովում, որ գումարուեցաւ 632 թուին։

6. Երբ Հերակլը 630—631 թուերին կրկին Ասորիքումն էր, յարմար առիթ համարեց այս պարագան հայ և յոյն եկեղեցիների միութիւնը դլուխ բերելու համար և այս իսկ նպատակով Դուին ուղարկեց յունաց բաժնի կառավարիչ Մժէժ Գնունի իշխանին։ Սա տեսնուելով Եղբ կաթուղիկոսի հետ՝ յայտնեց կայսեր կամքը, առաջարկեց Ասորիք երթալ կրօնապէս միանալու համար, միանգամայն սպառնալով, որ եթէ այդպէս չվարուի, յունաց բաժնի համար նոր կաթուղիկոս կընտրուի, ինչպէս եղել էր Մօրիկի ժամանակ։

Եղբաս կաթուղիկոսը չնայելով եղած սպառնալիքին՝ չկամեցաւ իսկոյն իշխանի կամքը կատարել, այլ խնդրեց որ կայսրը նախ և առաջ պարզէ այն դաւանութիւնը, որի հիման վրայ պէտք է միութիւնը

գլուխ գայ։ Կաթուղիկոսի խնդիրը յարգուեցաւ. նա ստացաւ կայսեր ինքնաձեռագիր նամակը, որի մէջ նզովուած էին բոլոր հերետիկոսները, միայն Բազկեդոնը չէր նզովուած։ Կայսեր թղթին կաթուղիկոսի յանձնարարութեամբ ժամանակի նշանաւոր եկեղեցական Մաքսիմոս վարդապետը պատասխանեց և յայտնելով հանդերձ, թէ կայսեր դաւանութիւնն ըստ ամենայնի ուղղափառ է, դարմանում էր որ Բազկեդոնի ժողովը չէր նզովուած. ապա ներկայացնելով Հայոց եկեղեցու դաւանութիւնը Բրիստոսի բնութեան նկատմամբ՝ աւելացնում էր. «Այլ եւտիքէսին ու նրա նմաններին, առաջին ու վերջին հերձուածողներին նզովել ենք և նզովում ենք։ Բայց այն ժողովը (Բազկեդոնինը) որ բաժանուած բնութիւններ է խոստովանում և մեզ թոյլ չի տալիս ասելու «Աչեաւ Աստուած»... մենք չենք կարող ընդունել, և ոչ էլ նրանց հետ հաղորդուել, որոնք ակարացնում, փոքրացնում են Բրիստոսի մարմինն ու արիւնը» (Մա. Օրթ. խը)։

Այս թղթակցութիւնից յետոյ Հերակլը 632 թուին Կարինում ժողով գումարեց և ժողովին հրաւիրեց նաև Եղբաս կաթուղիկոսին։ Հզօր կայսեր առաջարկութիւնը մերժել կարելի չէր և Թէոդորոս իշխանն ու միւս նախարարները քաղաքականութեամբ խորհուրդ տուին Եղբասին ժողով երթալ հետը տանելով կամ փակակալ Յովհան Մայրավանեցի եպիսկոպոսին, և կամ Մաքսիմոս վարդապետին, որպէս զի ասում են «ճարպիկ խաբեբաներից չյաղթուես և մենք մեր ճշմարիտ հաւատից չզրկուինք»։ Եղբը Մայրավանեցուն չտարաւ. իսկ Մաքսիմոսին՝ պատճառ բռնելով իւր ծերութիւնն ու դպրոցական գործերը, հրաժարուեցաւ երթալ և առաջարկեց իր աշակերտ Թէոդորոսին տանել։ Եղբասը մի քանի եկեղեցականներով, որոնց մէջ էր և Թէոդորոսը՝ իւր քեռորդին, Կարին գնաց և կայսեր ներկայացաւ։ Ժողովի ժամանակ Հերակլը կաթուղիկոսին ներկայացրեց կրկին իւր դաւանութեան թուղթը, ուր թէև այս անգամ Բազկեդոնի ժողովը յանուանէ չէր յիշատակուած, բայց չէր էլ քարոզվում, թէ Բրիստոս մի բնութիւն ունի, այլ այս էր միայն վարդապետվում թէ Բրիստոս ունի մի կամք և մի ներգործութիւն։

Կայսեր թղթին պատասխանելու համար Եղբասը երեք օր ժամանակ խնդրեց և իւր վարդապետների հետ սկսաւ քննել Թէոդորոս Ռշտունին՝ տեսնելով կաթուղիկոսի դժուար կացութիւնը սկսեց նրան յանդիմանել, որ առանց Մայրավանեցուն ժողով է եկել, որը միայն կարող էր յունաց բոլոր նենգամիտ առաջարկութիւնները տապալել։ Այս տարտամ կացութեան վերջ տուեց Թէոդորոսը, որ պատժաբանելէն ապացուցանելով թէ հայերը քրիստոնէական կրօնն ու բոլոր կարգերը յոյներից են ստացել, առաջարկում էր այս կէտի մէջ ևս նրան-

ցից չբաժանուել իբրև մի ճիւղ արմատից, այլ լաւ նրանց և լինել մի հօտ և մի հովիւ։ Թէոդորոսի պատճառաբանութիւնն ազդեցութիւն ունեցաւ։ Երրորդ օրը եղբաս կաթուղիկոսը յայտնեց Թագաւորին, թէ նրա տուած դաւանութեան մէջ ոչ մի թիւրութիւն չկայ և թէ ըստ ամենայնի նոյն է հայրերի ուղղափառ դաւանութեան հետ։ Այս հանդիսաւոր խոստովանութիւնից յետոյ անմիջապէս պատարագ մատուցեցաւ. երկու կողմերն էլ հաղորդուեցան և երկու եկեղեցիների միութեան թուղթը կնքուեցաւ։ Թէև ճիշդն ասելով Եղբասը Քաղկեդոնի դաւանութիւնը չընդունեց, այլ մի վարդապետութիւն, որի մի մասը մեր եկեղեցու դաւանութիւնն է կազմում մինչև այսօր, բայց ապաքէն միևամենայն վարդապետութեան առաջին մասը զուտ քաղկեդոնական էր, այս իսկ պատճառով Եղբ կաթուղիկոսը ամենայն իրաւամբ մեր պատմութեան մէջ նկատուած է իբրև քաղկեդոնիկ։

Երբ Եղբասը մեծամեծ պարգևներ ստացած՝ կողբ գիւղաքաղաքի երրորդ մասը և ամբողջ աղահանքը, Դուին վերադարձաւ, նրա դէմ հակառակութեան ցոյց եղաւ և հակառակողների պարագլուխն էր Յովհան Մայրավանեցին։ Սովորութեան համեմատ Յովհան Մայրավանեցին ոչ ընդառաջ եկաւ կաթուղիկոսին, և ոչ էլ եկեղեցում երևցաւ։ Բայց մի այսպիսի նշանաւոր անձի բացակայութիւնն աչքի ընկաւ. և երբ նա կաթուղիկոսին ներկայացաւ, բացատրեց համարձակօրէն՝ որ այդպէս է վարուել ոչ թէ ամբարտաւանութեամբ, այլ ճշմարտութիւնը սիրելով։ Ի միջի այլոց նա ասում է կաթուղիղոսին. «Բայց քո անունը յիրաւի Եղբ կոչուեցաւ, որովհետև դու մեզ հայերիս եղբ հանեցիր քակելով մեր ուղղափառ հայրերի հաւատի սահմանը, և մարդադաւան Լեւոնի տոմարը կործանելով» (Յովհ. կաթ.)։ Եղբ և իր համախոհները չկարողացան այս խօսքերը տանել և Յովհաննէսին դանակոծեցին ու հալածեցին։ Նա հեռացաւ գնաց Բջնու Մայր վանքը, բայց այստեղ էլ հանգստութիւն չգտաւ։ Քաշուեցաւ Աղուանից երկիրը և այստեղ իր արդիւնաւէտ կեանքը կնքեց։

Բայց Յովհաննէսի հալածուելովն Եղբի դէմ եղած հակառակութիւնը չվերջացաւ. և անշուշտ այս է ակնարկում Սեբէոս, երբ Եղբի համար ասում է, թէ նա յունաց բանակումն էր ապրում (Սեբ. 101), այն է ոչ Դուինում, այլ յունաց անցած Հայաստանի մասում։ Եղբի ընթացքը դժգոհութիւն առաջ բերեց նաև Ասորւոց մէջ, որոնց Աթանաս պատրիարքը այդ առթիւ թուղթ գրեց կահընկէց Քրիստափոր կաթուղիկոսին և պախարակեց նրա միաբանութիւնը։

Եղբասը վախճանեցաւ 641 թուին տեսնելով այն աւերմունքները՝ որ Հայոց երկրում գործեց քրիստոնէութեան նոր թշնամի մահմեդականութիւնը։ Եղբը հաստատեց մեր ժամասացութեան մէջ Աբեա-

գալի կանոնը, ինչպէս Յովհան Իմաստասէրն է յայտնում։ Նորոգեց ու ընդարձակեց ս. Գայիանէի վանքը և նրա մօտ ժամատուն շինեց, այն է՝ քահանաների բնակութեան խցեր։ Յաջորդ դարերի գրութեանց մէջ Եղբ անուան առաջին տառը միշտ գլխիվայր էր գրվում՝ որ նշան էր ժողովրդի անչափ ատելութեան։

Թ. ԳԼՈՒԽ.

ԱՐԱԲԱՑԻՈՑ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ.

ՆԵՐՍԷՍ ՇԻՆՈՂ.

1. Է դարի առաջին քառորդում Արաբիայի մէջ կրօնական մի նոր շարժումն առաջ եկաւ, որ ապագային տիեզերական պատմութեան մէջ շատ խոշոր դեր խաղաց։ Այդ շարժման նախապատճառ ու սկզբնադիր հանդիսացաւ մի հզօր կամքի տէր անձնաւորութիւն՝ Մահմէտ (փառաւորեալ) անունով, որ իբրև քարոզիչ առաջին անգամ հրապարակ դուրս եկաւ 622 թուին։ Մինչև Մահմէտի երևնալը՝ արաբացւոց կրօնը բնապաշտութիւն, կռապաշտութիւն էր. բայց վաղուց արդէն աշխարհագրական մերձաւորութեան ու այլ հանգամանքներով Արաբիայի մէջ մտել էին հրէական ու քրիստոնէական կրօնական դաղափարներ և տեղական աղանդների զարգացման պատճառ դարձել։ Մահմէտն ևս, որ սաստիկ դժգոհ էր իր հայրենական բիրտ կրօնական ըմբռնումներից և ձգտում էր աւելի բարձր գաղափարներով շաղկապել արաբական բոլոր ցեղերը, նոյնպէս ծանօթ էր քրիստոնէութեան ու հրէութեան հետ, թէև անուղղակի, որովհետև գրել-կարդալ չգիտէր։ Եւ Մահմետի վարդապետութեան մէջ, որ նրա անունով մահմետականութիւն է կոչվում, և որը ինքը «իսլամ», այսինքն՝ Աստուծոյ կամքին հպատակութիւն կոչեց, երևում են Հին ու Նոր կտակարանի մասեր, ինչպէս և այլևայլ անվաւերական ու աղանդաւորական գործերից տեղեկութիւններ։ Մահմետը իբր նպատակին հասաւ, նա թողեց կազմակերպուած հետևողների բազմութիւն, որ նրա մահուանից յետոյ (632 թ.) Արաբիայի սահմաններից դուրս գալով աշխարհի մեծ մասին տիրեց։ Երկու մեծազօր տէրութիւններ՝ Պարսկաստանն ու Բիւզանդականը, որոնք շարունակ իրար հետ արիւնահեղ կռիւներ էին մղում և իրանց բնական ու դրամական ուժերն էին ըս-

պառում, երկուսն էլ սարսափեցան այս թարմ ժողովրդական յորձանքի առաջ. և թէև երկու ոսոխներ միմեանց ձեռք կարկառեցին այս ընդհանուր թշնամուն դիմադրելու համար՝ բայց արդէն ուշ էր. յունական տէրութիւնը հետզհետէ իւր նշանաւոր մասերը—Ասորիքն ու Եգիպտոսը—կորցրից, իսկ նեիքսապէս պառակտուած պարսիկ ժողովուրդը՝ իւր ազգային անկախութիւնը. 652 թուին վերջին Սասանեան թագաւոր Յազկերտը փախստեան ժամանակ սպանուեցաւ, Պարսկաստանը արաբական տէրութեան նահանգ դարձաւ։ Արաբացիները Հաբիբ իբն Մըսլիմի առաջնորդութեամբ մեր դժբաղդ հայրենիքըն ևս մտան, որ նախարարների թշնամութեան ու ապստաքին պատերազմների պատճառով արդէն աւերուած էր. նրանց հրոսակը աւերելով կտրեց անցաւ Տարօնը, Բղնունիքը, Կոգովիտը, Թափուեցաւ Այրարատեան նահանգը, պաշարեց հայոց ոստանը՝ Դուին քաղաքը և հինգօրեայ պաշարումից յետոյ 640 թ. հոկտեմբերի 6-ին առաւ, կոտորեց, աւերեց և 35 հազար գերի էլ հետն առած իր տեղը դարձաւ՝ մի աննշան հակառակութիւն կրելով Թէոդորոս Ռշտունու կողմից։ Այս առաջին աւերածութիւնից յետոյ Եղրատ կաթուղիկոսը վախճանեցաւ (641 թուի սկզբին)։

2. Արաբացի հրոսակների հետանալուց յետոյ Թէոդորոս Ռշտունին, միւս նախարարներն ու եպիսկոպոսները Դուին հաւաքուեցան, որ հայ երկրի ազէտը դարմանեն։ Նրանց առաջին գործն եղաւ կաթուղիկոս ընտրել և այդ պաշտօնին յարմար դատուեցաւ Տայոց Ներսէս եպիսկոպոսը, որը սակայն տեսնելով երկրի աւերմունքը՝ բացէիբաց հրաժարուեցաւ, և միայն զիջանելով իշխաններին թախանձանքին վերջապէս յօժարացաւ (641—662)։ Ներսէսը ընիկ Տայեցի էր. մանկութեան հասակից մեծացել էր Յունաց աշխարհում և յունաց լեզուն ու դպրութիւնը քաջ սովորած էր։ Իբրև յոյն վիճակաւոր՝ նա շրջել էր շատ տեղեր, բայց լինելով պահեցող ու աղօթասէր մարդ՝ նա թողել էր վիճակաւորութիւնն ու կրօնաւոր դարձել և ապա Տայոց եպիսկոպոս կարգուել։ Սիրէոս ժամանակից ու անձամբ ծանօթ պատմիչն ասում է Ներսէսի համար, թէ նա գաղտնապէս քաղկեդոնիկ էր, բայց անշուշտ Եղրասի նման, ինչպէս յետոյ կըտեսնենք։

Ներսէսն անմիջապէս ձեռնարկեց աւերակները նորոգելու։ Բայց կաթուղիկոսութեան երկրորդ տարին 643 թուին Արաբացիք կրկին արշաւեցին մեր երկիրը. և միայն Թէոդորոս Ռշտունու քաջութեան շնորհիւ մեծ աւերմունքներ չգործեցին ու հեռացան։ Այնուհետև մօտ 10 տարի մեր երկիրը խաղաղութիւն վայելից և այս խաղաղութեան ժամանակ Ներսէսը շինեց Դուինի մէջ ս. Սարգսի աւերուած վկայարանը. Աբասաշատի ս. Գրիգոր եկեղեցին, Վաղարշապատի ս.

Աստուածածինը. և վերջապէս Վաղարշապատի առապարում Զուարթնոց (ս. Գրիգորի) եկեղեցին, որ նորա գործերից ամենահոյակապն է, և երկարամեայ աշխատանքի արդիւնք։ Ներսէսը իւր այս շինարարութեան համար ստացել է Շինող մականունը։

Աւերակների նորոգութեամբ զբաղուելով հանդերձ՝ նա հոգ տարաւ նաև հայոց քաղաքական իշխանութեան վրայ։ Նրա խնդրանօք Կոստանդ (Կոստաս) կայսրը Թէոդորոս Ռշտունուն յունաց զօրքի զօրավար կարգից, իսկ Վարազտիրոցի որդուն Սմբատին՝ հայ երկրի կիւրապաղատ։ Նոյն խաղաղութեան տասնամեակում եկեղեցու բարեկարգութեան համար Ներսէսը գումարից Դուինի ե-րդ ժողովը (645թ.), որին բացի կաթուղիկոսից, ներկայ էին 17 վիճակաւոր եպիսկոպոսներ։ Ժողովը սահմանեց 12 կանոններ։ Առաջին կանոնները վերաբերում են այն թերութիւններին, որ եպիսկոպոսների մէջ տարածուած էին, այն է՝ ուրիշի վիճակի համար առանց թոյլտուութեան քահանայ ձեռնադրել. միմեանց ձեռքից բռնութեամբ վիճակ յափշտակել և այլն։ Դ. կանոնը թուում է վիճակաւոր եպիսկոպոսի պարտականութիւնները՝ հակիւ եկեղեցիների ու դպրոցների բարեկարգութեան, անկեալանոցների սնունդի բարւոք մատակարարութեան և այլն։ Ե. Զ. և Ը. կանոնները վերաբերում են քահանաների դատական ապահովութեան խնդրին։ Քահանաների արդիւնքը կրկին էր, անշարժ հողային կալուածքներից՝ ժառանգութիւնից, որ եկեղեցու սեպհականութիւնն էր կազմում՝ արուած Տրդատից ու Լուսաւորչից, և շնորհքից, այն է՝ ժողովրդական կամաւոր տուրքից։ Այս արդիւնքներն ըստ հին սովորութեան ընդհանուր դանձարան էին մտցվում և ապա հաւասարապէս բաժանվում։ Բայց հարուստ ծուխ ունեցող քահանաները տրտնջում էին՝ թէ այսպիսի բաժանմամբ իրանք զրկվում են, ուստի մշտական դժգոհութիւններ էին լինում։ Ժողովը այս բոլորն ի նկատի առնելով հանդերձ՝ կրկին հին կարգն է հաստատում, և պատիժ սահմանում այն քահանաների համար, որոնք վերոյիշեալ պատճառով անվոյթ էին դնվում դէպի իրանց պաշտամունքը և չէին հսկում, որ տղայք զբաղոց յաճախեն։—Սովորութիւն ևս ունեցել են եկեղեցականներից ոմանք պինուողական դառնալ՝ առանց սակայն եկեղեցական կարգից հեռանալու, որպէս զի եկեղեցական արդիւնքներից էլ չզրկուին։ Այսպիսիներին

մէկն անյայտ օտարութեան մէջ է ծնում. կանոնը սպասելու 7 տարի ժամանակ է նշանակում. այնուհետև թոյլ է տալիս թէ կնոջ և թէ մարդուն ամուսնանալ։ Մնացեալ կանոնների մէջ պատուիրվում է, որ աղատներն իրաւունք չունենան եկեղեցական գոյքերի վրայ, որ իրենց կամքով վանահայրերը չհանեն կամ չկարգեն, որ վանքերում չբնակին իրենց ընտանիքներով և այլն, որովհետև վանքերը միմիայն եկեղեցականների ու աղքատների օթևան են։

3. Բայց Դուինի Ե-րդ ժողովը միմիայն բարեկարգութեան խընդրով չէ զբաղուել, այլ և նզովք է կարդացել Քաղկեդոնի ժողովի դէմ և այս այն պատճառով, որ հայ եկկրի մէջ եղած յունական զօրքը կրօնական անհանդուրժողութիւն էր ցոյց տալիս դէպի հայ ժողովուրդը և նրան խռովում։ Իբրև յոյն՝ բառանդական պահքը հայերից այլապէս պահելով, հայ ժողովրդին ու իշխաններին էլ ստիպում էին իրենց նման պահել. իրենց շուայտ ու անառակ կեանքով զզուեցնում էին ամէնքին. նեղում կեղեքում էին հասարակ ժողովրդին։ Ցունաց նման էին վարվում և քաղկեդոնիկ հայերը՝ ծաղրելով իրենց հայրենակիցների դաւանութիւնն ու ծիսական սովորութիւնները։ Այսպիսի տգեղ գործերի համար բնականաբար հայ հոգևորականներն ու ժողովուրդը պէտք է փախչէին նրանցից և խուսափէին որևէ հոգևոր հաղորդութիւն ունենալու նրանց հետ (Սեբ. 119)։

Ցոյն զօրքը տեսնելով հայերի այս խորշումն ուատելութիւնը, դանգատ գրեց Կոստաս Թագաւորին, թէ «Մենք այս երկրում անօրէն ենք համարուած. ժողովուրդը նզովում է Քաղկեդոնի ժողովը ու Լևոնի տոմարը և նրանց Քրիստոսին անարգանք հաշվում»։ Կոստանդ կայսրը և Պիւռոս պատրիարքը՝ երկուսն էլ միակամեայց վարդապետութեան ջերմ պաշտպան, նամակ գրեցին Ներսէսին ու հայ իշխաններին՝ որ կրօնապէս չբաժանուին յոյներից և չմերժեն Քաղկեդոնի ժողովը ու Լևոնի տոմարը՝ սպառնալով անսասան իշխանների դոյքը յարքունիս գրաւել և նրանց էլ պատժել։ Յանձնարարեցին նաև Դաւիթ Բագրեւանդցի փիլիսոփային անձամբ Հայաստան երթալ ու այս հակառակութիւնը վերցնել։ Այս նամակին պատասխանելու համար՝ հայ եպիսկոպոսներն ու իշխանները հաւաքուեցան Ներսէս կաթուղիկոսի ու Թէոդորոս Ռշտունու մօտ և կազմեցին Դուինի Զ-րդ ժողովը (649—650 թ.), որին ներկայ էր և Դաւիթ Բագրեւանդցին, որ ջատագով հանդիսացաւ Քաղկեդոնի կամ ճիշդ ևս միակամեայց դաւանութեան։ Ժողովը այդ ջատագովութիւնը լսելով հանդերձ՝ կայսեր ու պատրիարքի նամակին մի ընդարձակ պատասխան խմբագրեց, ուր պաշտպանելով հայոց եկեղեցու դաւանութիւնը՝ հերքում է երկու բնութեան վարդապետութիւնը, և այն՝ նոյն իսկ յոյն հայրերի վկայութեամբ, և վեր-

ջապէս յայտնում է, թէ ինչու հայերը թոյլ չեն տալիս, որ յոյները հայոց եկեղեցում հաղորդուին։ Այս պատասխան—նամակի մէջ ժողովականները յիշեցնում են, թէ հայերը կրօնքի համար ինչպիսի հալածանքներ են կրած Պարսից տէրութեան մէջ և թէ ինչպէս անսասան մնալով՝ անօրէնութիւնները ամաչել են. իսկ այժմ քրիստոնեայ Թագաւորի իշխանութեան տակ նրանք հալածանք են կրում քրիստոնէական կրօնքի համար։ Նամակի վերջնական որոշումն այս էր, թէ հայերը Լուսաւորչի հաւատքից չեն հեռանալու ո՛չ աջ և ո՛չ ձախ։ Բոլոր ժողովականները իրանց մատանիներով կնքեցին այս նամակի պատճէնը և յանձնեցին կաթուղիկոսին, որ եկեղեցում պահէ։ Այս նամակի բովանդակութիւնը և ժողովի որոշմունքը մի քանի տարի վերջը իմացաւ Կոստանդին կայսրը, որից պարզ երևում է, որ Ներսէս կաթուղիկոսը այս նամակը կայսեր չուղարկեց, և այն՝ հաւանօրէն հետևեալ պատճառով։

Ժողովի տարին հայ իշխանները մի ուրիշ քայլ ևս արին, որ յոյներին նոյնպէս սաստիկ զայրացրեց, և հայ հոգևորականներին ևս իշխաններից հեռացրեց։ Թէոդորոս Ռշտունուն ու միւս իշխաններին յայտնի էր այն երեքամեայ ամօթալի դաշինքը, որ Կոստանդ կայսրը 650 թուին կապեց Պռոկոպիոսի միջոցով արաբացւոց հետ։ Տեսնելով յունաց կրօնական հալածանքները, նրանց ապիկարութիւնը, այլ և նախազգալով այն չարիքները, որ երեք տարուց յետոյ կարող էին Հայաստանի գլխին գալ արաբացւոց կողմից՝ Թէոդորոս Ռշտունին, բոլոր հայ իշխանների համակամութեամբ՝ խոհմութիւն համարեց Արաբացւոց հպատակել (650—651 թ.), այն էլ՝ հայ ժողովրդի համար շատ ձեռնտու պայմաններով. այսպէս՝ Մուաւեան (Մաւիանոսը) խոստացաւ երեք տարի բնաւ հարկ չառնել հայ ժողովրդից, թողնելով այնուհետև հարկի չափն որոշել հայ ժողովրդի կամքին. հայը 15 հազար ձիաւոր պէտք է տար ու նրա մնուկը հոգար, բայց ի հաշիւ արքունի դանձարանին. արաբացի իշխան ու զօրք Հայաստանի մէջ բնաւ լինելու չէին, և արաբացիք պէտք է հայ ժողովրդին պաշտպանէին բոլոր թշնամիների ու Ցունաց դէմ։

Բայց հոգևորականութիւնը դժգոհ էր, որ հայ իշխանները «աստուածային դաշնադրութիւնը թողած մահուան ու դժոխքի հետ դաշինք կապեցին»։ Եւ հաւանօրէն դժգոհ մի այսպիսի քաղաքականութենից, այլ և յունաց թշնամութեան մի նոր առիթ չտալու համար Ներսէս կաթուղիկոսը վերոյիշեալ նամակը կայսեր չուղարկեց, և ինքն էլ Տայոց երկիրը քաշուեցաւ։

4. Հայոց ինքնակամ Արաբացւոց հպատակելը յունաց համար մի մեծ հարուած էր. այս իսկ պատճառով Կոստանդ կայսրը յորդորե՛լ ա

թղթեր դրեց հայ իշխաններին, որ հեռանան Արաբացիներից, խոստացաւ անձամբ գալ և դրամական օգնութիւն հասցնել հայոց, քայց նրա յորդորներն ապարդիւն անցան։

Այս տեսնելով ահագին բանակով՝ և առանց ուշադրութիւն դարձնելու Արաբացւոց ազդարարութեան, կայսրը Հայաստան մտաւ՝ երկիրը նուաճելու և հայ իշխաններին պատժելու համար (652 թ. վերջերը)։ Սարսափած հայ նախարարները սո՛ւ մի մի հեռացան Ռշտունեաց և կայսեր իրենց հպատակութիւնը յայտնեցին՝ բոլոր յանցանքը Թէոդորոսի վրայ ձգելով։ Տայոց երկրից Ներսէս կաթուղիկոսն էլ հետեւ ներկայացաւ կայսեր և միւսների Դուին եկան։ Իսկ Թէոդորոս Ռշտունին Աղթամար կղզում ամրացաւ. հայ իշխաններից ոմանք միայն նրան հաւատարիմ մնացին մինչև վերջը։

Որպէս զի Հայոց հպատակները աւելի հաստատուն լինին, Կոստանդ կայսրը կամեցաւ կրօնական միութիւն ևս հաստատել հայ և յոյն եկեղեցիների մէջ։ Կայսեր հրամանով Դուինի Պաթուղիկէ եկեղեցում մի յոյն քահանայ պատարագ արաւ և կայսրն ու կաթուղիկոսը հաղորդուեցան ի նշան հաշտութեան ու միութեան. Հայ հոգիսկոպոսները էլ կամայ—ակամայ իրանց Հոգևոր տիրոջ օրինակին հետևեցան ու հաղորդուեցան, և Ներսէս կաթուղիկոսն այս քայլն արաւ կամ վախենալով կայսեր ներկայութիւնից և թէ հայ ժողովրդին, որ նրան մի չարիք չլինի, և կամ համակրելով միակամայց վարդապետութեան, որին կայսրը ջերմ պաշտպան էր։ Ինչ և իցէ՝ իրողութիւնը կատարուեցաւ և այս դէպքն արձանագրող Սեբէոս եպիսկոպոսը վշտով ասում է, թէ «կաթուղիկոսը շարժեց ս. Գրիգորի ճշմարիտ հաւատքը, որ մինչև այն օրը բոլոր հայրապետները պահել էին հաստատապէս. նա աւերը, վէրք աղբիւրի ջուրը պղտորեց»։ Պատմվում է, թէ ինչպէս այս ժամանակ մի եպիսկոպոս հաղորդուելուց խոյս է տալիս, թէ ինչպէս լացաւորութիւն տալու համար երբ կայսեր առաջն է ելնում, նա Ներսէս կաթուղիկոսի խարերայ ընթացքն է մերկացնում, որ երկու-երեք տարի առաջ Թադիկեանի պատմութիւնն էր նղովել։ Եւ կայսրը, ասում է Սեբէոսը, յանդիմանեց Ներսէսին։

5. Բայց Արաբացւոց հետ կապած դաշինքի երեքամեայ ժամանակամիջոցն արդէն վերջանում էր և նրանք Պօլսին էին սպառնում. այս իսկ պատճառով կայսրը 8 օր Դուինում մնալուց յետոյ շտապեց իր մայրաքաղաքը պաշտպանելու։ Նրա հետ հեռացաւ նաև Ներսէս կաթուղիկոսը և գնաց Տայոց երկիրը. իսկ երբ յաջորդ տարին (653 թուին) արաբացիք զօրացան Հայաստանի մէջ, նա Պօլիս գնաց և մեծամեծ պատիւներ ստացաւ։ Բաւական երկար ժամանակ (6—7 ամիս) այնտեղ մնալուց յետոյ՝ նա վերադարձաւ հայրենիք, առանց յոյներից

իրական օգնութիւն ստանալու և վախենալով Թէոդորոս Ռշտունուց, որ զայրացած էր նրա յունասէր քաղաքականութեան վրայ, և Արաբացիներից, որոնք Դուինին ու համարեա ամբողջ հայ երկրին տիրած էին, նա կրկին քաշուեցաւ Տայոց երկիրը և այստեղ էլ առանձնութեան մէջ վեց տարի մնաց՝ մինչև Ռշտունու մահը։ Թէոդորոս Ռշտունին վախճանեցաւ 658 թուին։ Արաբացւոց կողմից իշխան կարգուեցաւ Համազասպ Մամիկոնեանը։ Նոյն տարին իւր վեցամեայ արքեպիսկոպոսութեան դուրս եկաւ նաև Ներսէս կաթուղիկոսը, Դուին վերադարձաւ և աշխատեց վերջացնել Առապարի ս. Գրիգոր եկեղեցու շինութիւնը, որ 650 թուերին էր սկսել։

Ներքին դժուարութիւնների պատճառով՝ Մուաւիա խալիֆան ստիպուեցաւ 658 թուին դաշն կապել Կոստանդի հետ խոստանալով բաւական մեծ գումար, ևս և Հայաստանից հեռանալ։ Հայ իշխանները այս առիթով՝ նոյն թուին իրենց հպատակութիւնը յայտնեցին Յունաց և առիթով՝ Համազասպ Մամիկոնեանը կիւրապաղատ կարգուեցաւ։ Բայց նոյն 661 թուին Մուաւիան իւր հակառակորդներին չպիտեցրը և Բիւզանդիոնին սպառնալ սկսեց, Հայերը կրկին իրենց հպատակութիւնը յայտնեցին Արաբացւոց և Գրիգոր Մամիկոնեանը, Համազասպի եղբայրը՝ Ներսէս կաթուղիկոսի ու հայ ժողովրդի միջնորդութեամբ Արաբացիներից Հայաստանի իշխան կարգուեցաւ։ Այս դէպքերից յետոյ Ներսէս Շինողը շատ չապրեցաւ. նա մեռաւ Այս դէպքերից յետոյ Ներսէս Շինողը շատ չապրեցաւ. նա մեռաւ 662 թուի կէսերին։ Նրա օրով դանուեցաւ (660 թ.) Վարդապատ 662 թուի կէսերին։ Նրա օրով դանուեցաւ մեծ ս. Խաչը և այդ տեղիս մօտ առնմանուեցաւ մեր եկեղեցում, որ մինչև այսօր էլ կատարվում է։ Աւանդվում է նաև, որ նա Բարսեղ Ճօն չէ

Ժ. ԳԼՈՒԽ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԱԲԱՑԻՈՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ.

(693—885 Թ.)

ՆԵՐՍԷՍ ՇԻՆՈՂԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ ՄԻՆՉԵՒ ՅՈՎՀԱՆ ՕԶՆԵՑԻ.

1. Մերթ Արաբացւոց և մերթ Յունաց հպատակելուց յետոյ Հայաստանը է. դարի վերջին մասում (693—694 Թուականին) վերջնականապէս ընկաւ Արաբացւոց իշխանութեան տակ, և այսպէս վերջացան մինչև Ժ. դար այն բռնութիւնները, որ անհանդուրժող Յոյնները գործ էին դնում իրենց կարծիքով հերձուածող Հայերին ուղղափառ դարձնելու և երկու եկեղեցիները միացնելու համար։ Որչափ որ Մահմետականութիւնը թշնամի էր կռապաշտութեան, այնքան էլ համբերող դէպի Հրէութիւնը և մանաւանդ դէպի Քրիստոնէութիւնը, որոնք նրա կարծիքով թէպէտ ճշմարիտ՝ բայց ոչ կատարեալ կրօնք էին։ Օմար Ա.-ից սկսած Արաբացիները իրանց քրիստոնեայ հպատակներից պահանջում էին միայն, որ Մահմետին ու նրա հետևողների կրօնական աբարոզութիւնները չծաղրեն, որ չատիպեն մեկին մահմետական կրօնափոխ լինելու, որ բարձրաձայն կռչնակ չզարնեն այնտեղ, ուր խիտ մահմետական բնակչութիւն կայ, որ պետութեան թշնամիներին չօգնեն, որ վերջապէս հողային տուրք (խարաճ=հաս) և գլխահարկ տան և այս պահանջների դէմ մեղանչողներին չարաչար պատժում էին։ Նրբանք բնաւ չէին խառնվում քրիստոնեայ հպատակների ներքին եկեղեցական ու քաղաքային ինքնավարութեան և ընդհանրապէս մեծ յարդանքով էին վերաբերվում դէպի հոգևոր իշխաններն ու միշտ նրանց կողմն էին բռնում, երբ հոգևոր իշխանաւորի ու ժողովրդի մէջ որևէ պժտութիւն ծագէր։ Նրանք խստիւ հետևում էին, որ հարկերը լրիւ հաւաքուին, և հարկերի լրութեան պատասխանատու էին ոչ թէ անհատներ, այլ ամբողջ համայնքը։

Այս ընդհանուր մեղմ քաղաքականութեան դէմ մեղանչող տեղական կառավարիչներ բնականաբար պատահում էին, որոնք ագահութիւնից ու այլ պատճառներից դրդուած երբեմն երբեմն նեղում էին հպատակ ազգերին. բայց այսպիսի դէպքեր բացառութիւն էին կազմում։

Այս միևնոյն ընդհանուր ուղղութեամբ Արաբացիները կառավարում էին նաև Հայոց երկիրը։

Հայաստանի ընդհանուր կառավարիչը ասիական էր կոչվում, որ անպատճառ մահմետական պէտք է լինէր. նա էր զօրքի ընդհանուր հրամանատար, դատաւոր, գլխաւոր տեսուչ և ընդհանուր հսկող։ Հայ ժողովուրդն ու իշխանները վայելում էին ներքին ինքնավարութիւն և կառավարվում էին իրանց հին օրէնքներով ու սովորութիւններով։ Այն իշխանները, որոնք հաւատարիմ հպատակութիւն էին ցոյց տալիս, միշտ պատուի մէջ էին լինում. իսկ եթէ նախարարներից մեկը ապստամբութիւն խորհէր կամ յունաց յարէր, չարաչար պատժվում էր և միայն հաւատուրացութեամբ կարող էր իր կեանքը շահել։ Հայ եկեղեցին ու հոգևորականութիւնը նոյնպէս պաշտութիւն էին վայելում և առանց որ և է պատճառի ոչ ոք չէր բռնադատւում կրօնափոխ լինելու. բայց խստիւ պատժւում էր այն անձը, որ մահմետականութիւն ընդունելուց յետոյ կրկին քրիստոնեայ էր դառնում։ Հայ եկեղեցու ներքին կառավարութեան մէջ ամիրապետները բնաւ չէին խառնվում. և մեծ յարգանք ու պատիւ էին ցոյց տալիս դէպի հոգևոր իշխանաւորը. բայց միանգամայն հսկում էին, որ հայ հոգևորականներն ապստամբութիւն չխորհին և կամ յունաց քաղաքականութեան պաշտպան չհանդիսանան։ Հարկերը սկզբում ծանր չէին, բայց արաբացւոց ֆինանսական յոռի վարչութեան ու հետզհետէ մտնող շռայլութեան պատճառով հարկերը ծանրացան. նրանք հաւաքվում էին ամենայն խստութեամբ և նոյն իսկ եկեղեցական գոյքերը յափշտակվում։ Հարկատուութիւնից ազատ էին միմիայն մահմետականները. այս իսկ պատճառով նեղութեան օրերում շատերը հաւատափոխ էին լինում, մանաւանդ որ այսպիսի անհատներ հարկահաւաք ևս կարգվում էին և կամ մի այլ պաշտօն ստանում։ Եկեղեցին բնականաբար կարող չէր անտարբեր աչքով դիտել այսպիսի հաւատափոխութեան դէպքերը, ուստի և հոգևոր երգերով ու ճառերով միշտ դրուատում էր քրիստոնէական եկեղեցու և ս. Խաչի զօրութիւնը, որ յուսահատ ժողովուրդը հաւատափոխ լինելու փոխարէն՝ նրանց զօրութեան ապաւինի ու փրկուի. եկեղեցին սրբերի կարգն էր դասում նրանց, որոնք հաւատուրաց չլինելու համար նահատակվում էին։

2. Արաբական շրջանի առաջին կաթուղիկոս հանդիսանում է Ա. նաստաս Ակոռեցին (662—666), որ Ներսէս շինողի սենեկապետն էր Ենթա կենդանութեան ժամանակ գործի վրայ ու Զուարթնոց եկեղեցու շինութեան հսկող։ Իր հոգևոր տիրոջ Ներսէս շինութեան հսկող։ Իր հոգևոր տիրոջ Ներսէս շինութեանն հետամուտ էր շինութիւնները անելու։ Նոյն ժամանակ Հայաստանի իշխանն էր Գրիգոր Մամիկոնեանը (662—684 Թ.), որի բազմամեայ կառավարութեան ժա-

մանակ մեր երկիրը խաղաղութիւն վայելեց, և այս խաղաղութեան ժամանակ Անաստաս կաթուղիկոսն իւր հայրենի Ակռի գիւղում շինեց մի վանք ու մօտը հիւրանոց ու ապրատանոց, իսկ Գրիգոր Մամիկոնեանը՝ Ալբուձի փառաւոր եկեղեցին, ինչպէս և Եղուարդի մօտ մի վանք։ Անաստաս կաթուղիկոսը նկատելով հայ տոմարի մէջ թերութիւնները՝ յանձնեց իւր ժամանակի նշանաւոր գիտուն Անանիա Շիրակացուն այդ թերութիւնները վերացնելու։ Անանիան կատարեց այդ յանձնարարութիւնը. բայց կաթուղիկոսը իւր վերահաս մահուան պատճառով չկարողացաւ այդ մասին ժողով գումարել ու մի կարգադրութիւն անել։

Նրան յաջորդեց Իսրայէլ Տայոց եպիսկոպոսը (667—677), որ ժամանակիս էր Ներսէս Շինողի գումարած ժողովներին և սրան էլ Սահակ Գ. Զորափորեցին (677—703), Պարսկահայոց Ռոտակաց գաւառի եպիսկոպոսը, որի կաթուղիկոսութեան ժամանակ նորոգուեցան մեր երկրում քաղաքական շփոթումներ ու աւերմունքներ։

Սահակի կաթուղիկոսութեան առաջին տարինները կրկին սկսուեցաւ մահմեդական յարաբերութիւն Աղուանից ու Հայոց մէջ, որ վաղ ժամանակներից ընդհատուած էր։ Վարազ-Տրդատ իշխանը սէր ու բարեկամութիւն հաստատելու համար Դուին է ուղարկում Իսրայէլ եպիսկոպոսին, որին Սահակ կաթուղիկոսն ու Գրիգոր Մամիկոնեանը սիրով ընդունում են։ Եւ որովհետև այդ ժամանակները Գրիգոր իշխանը Թորգանից ս. Լուսաւորչի մասունքն է բերած լինում, ուստի և Իսրայէլն էլ մեծ թախանձանքով այդ մասունքից է առնում և իւր տեղը դառնում։

Սոյն այս Իսրայէլին Վարազ-Տրդատ իշխանն ուղարկում է նաև այս ժամանակները Հոնաց երկիրը քարոզելու, որ նրանք քրիստոնէութիւն ընդունելով դադարեն Աղուանից երկիրն աւազակելուց։ Իսրայէլը յաջողութեամբ կատարում է իւր առաքելութիւնը և մեծապէս սիրվում է Հոնաց թագաւորից ու իշխաններից, որոնք և ցանկանում են նրան առ միշտ իրանց մօտ պահել։ Ահա այս առիթով նրանք թուղթ են գրում ինչպէս Աղուանից եղիազար կաթուղիկոսին, այնպէս նաև Հայոց Սահակ կաթուղիկոսին ու Գրիգոր իշխանին։ Սրանք այս ուրախառիթ դէպքին համար իրանց խնդութիւնը յայտնելով՝ միանգամայն ծանուցանում են, թէ նոցա քնդիրը կարող չեն կատարել, քանի որ Իսրայէլ եպիսկոպոսը Հայոց կաթուղիկոսի ենթակայութեան տակ չէ, այլ Աղուանից կաթուղիկոսի՝ իրենց աթոռակից իշխանութեան տակ։

Զորափորեցու կաթուղիկոսութեան ժամանակ Պարսում գումարուեցաւ Զ. ընդհանուր ժողով կոչուածը (681 թ.), որին յունական

Եկեղեցին Հայաստանի ներկայ էին Թէոդորոս եկեղեայ և Գէորգ Դաբոնատեայ եպիսկոպոսները։ Այս ժողովը վերջնականապէս դատապարտեց միակամադատականների վարդապետութիւնը և կոստանդին Պոգոնատը (Մօրուեղ) այս պատճառով իւր ժամանակակիցներից մեծամեծ դրուատանքներ ստացաւ, որոնց իսկապէս արժանի չէր։ Մի քանի տարի վերջն էլ՝ 692 թուին գումարուեցաւ յունաց եկեղեցու մէջ տիեզերական ժողովը Տրուղլեան կոչուած՝ եկեղեցական բարեկարգութեան համար կանոններ սահմանելու, որին ներկայ գտնուեցան գարձեալ յունական Հայաստանի Գէորգ Գարանաղեաց և Մարիոն կիթառեցի եպիսկոպոսները, բայց այդ երկու ժողովներն էլ մեզ համար արժէք չունին և գումարուած են առանց իսկական հայ եկեղեցու մասնակցութեան։

Սահակ Գ-ի կաթուղիկոսութեան 7-րդ տարի (684 թ.) Հայաստան արշաւեցին Մաղխները և մեծ աւերմունք գործեցին. Գրիգոր Մամիկոնեան իշխանն էլ պատերազմի մէջ սպանուեցաւ։ Այդ ժամանակից կրկին սկսուեցան մեզ համար դառնութեան օրեր։ Այս ժամանակներում հայ ժողովրդին փոքր ի շատէ պաշտպանութիւն ցոյց տուին Աշոտ Բագրատունին և նրա եղբայր Սմբատը. տակաւին յոյները սաստիկ չարիքներ հասցրին։

683 թ. նոյեմբերի 10-ին Եղիա Ա. ամիրապետի մահուանից յետոյ Արաբացոց մէջ նեղքին արիւնահեղ կռիւներ ծագեցան գահի համար, մինչև որ 685 թ. մայիսին Աբդըլմելիքը ամիրապետ դարձաւ։ Նոյն թուի սեպտեմբերին կայսր դարձաւ Յուստինիանոս Բ-ը, որ գոռոզութեամբ կամեցաւ յունաց տէրութիւնն իւր նախկին փառքին հասցնել և կորցրած նահանգները յետ դարձնել։ Օգտուելով այն դժուար կացութիւնից, որի մէջ գտնվում էր Արաբացոց տէրութիւնը Մարդայիդների յարձակմունքների պատճառով՝ Յուստինիանոսը կամեցաւ Հայաստանը իրեն հպատակեցնել. և իրը բանտարկութեամբ իւր նպատակին չհասաւ, անմիջապէս Ղևոնդիոս զօրավարին ահագին բանակով Հայաստան ուղարկեց (686 թ.), որ եկաւ ամբողջ երկրին մինչև Կասպից ծովը ու Ատրպատականը տիրեց, մեծ բազմութիւն կոտորեց ու գերեց։ Յունաց յաղթութիւնները սոսկալի զայրացրին Արաբացոց, և պատճառ դարձան մի քանի արշաւանքների, որոնցից մէկը երկիրն ասիրուեցաւ, և հայ իշխաններն էլ թշուառութիւններից ազատուելու համար հպատակութիւն խոստացան։

Այս դէպքերից զայրացած՝ կայսրն անձամբ եկաւ Հայաստան 689 թուին ահագին բանակով և իւր մօտ կոչելով վրաց, Աղուանից ու Հայոց իշխաններին՝ սպառնալիքով հպատակութեան խոստումն առաւ։ Իւր մօտ պահեց նաև մի քանի օր Սահակ կաթուղիկոսին ու մի քա-

նի այլ եպիսկոպոսներ. և ապա պատանդներ առած հեռացաւ Պօլիս: Ներքին գժտութիւնների ու մարտայիդների յարձակումների պատճառով Աբդ-ալ-մելիքը անկարող էր Յուստինիանոսի հետ կռուելու. նա ստիպուեցաւ խաղաղութեան դաշն կապել յունաց հետ և խոստացաւ ոչ միայն տարեկան տուրք տալ, այլև Կիպրոսի կէսն ու ամբողջ Հայաստանը յունաց յանձնել:

Բայց Յուստինիանոս ինքն առաջինն եղաւ, որ խաղաղութեան պայմանը քանդեց և Կիլիկիայում արաբացիներից չարաչար յաղթուեցաւ (692 թուին): Այս յաղթութիւնից յետոյ Արաբացիք հետզհետէ առաջ գնացին և յաջորդ տարին (693 թուին) նրանք Հայաստան մտան և առանց որևէ ընդդիմութեան ամբողջ երկիրն տիրեցին:

Աբդլլան Դուինի մէջ հաստատուեցաւ. նա սկզբում ամենքի հետ քաղցրութեամբ էր վարվում, բայց ապա յունասէր իշխաններին կալանաւորից ու Դամասկոս ուղարկեց. նոյնպէս շղթայակապ այնտեղ ուղարկեց Սահակ կաթուղիկոսին. միայն Ներսէհ Կամսարականն ու Սմբատ Բագրատունին փախչելով ազատուեցան: Սրանք դիմեցին կրկին յունաց օգնութեան և Յուստինիանոսը մեծ զօրքով Հայաստան ուղարկեց Ղևոնդիոս զօրավարին, որ Դուինն մտաւ, այրեց Աբդլլայի ու նրա մեծամեծների տները և ապա Վարդանակերտի մօտ 694 թուին Աբդլլային պատահեցաւ: Այստեղ սոսկալի ջարդ կերան արաբացիք յոյներից ու հայ իշխաններից և ստիպուած թողին ու հեռացան Հայաստանից:

Այնուհետև Արաբացիք մի քանի անգամ փորձեցին մեր երկրին տիրել, բայց յաջողութիւն չունեցան. մի կողմից ժանդախտը, միւս կողմից էլ Աբդուլմալեքի ապստամբութիւնը Պարսկաստանում՝ Արաբացիներին տկարացրին. բայց 702 թուերին կրկին փորձեցին մեր երկրին տիրել Մահմետ իբն Մրուանի առաջնորդութեամբ: Այս ժամանակ ահա պատահեցաւ և Վանանդի պատերազմը, ուր Ներսէհ Կամսարականն ու Սմբատ Բագրատունին չարաչար յաղթեցին Մահմուտին, որ մի քանի հնձեալներով հազիւ ազատուեցաւ: Վրէժ առնելու և ապստամբներին պատժելու համար Մահմետը անապին բանակով Հայոց վրայ քաղաց: Զգալով գալիք ծանր չարիքները՝ Սմբատ Բագրատունին Դամասկոս մարդ ուղարկեց և խնդրեց Սահակ կաթուղիկոսից հաշտութեան հնար դանել: Եւ Սահակ կաթուղիկոսը կապանքներից ազատուելով՝ գնաց Մոհմատի մօտ նրա գթութիւնը հայցելու. նա Յառանում հիւանդացաւ և զգալով իւր վերահաս մահը՝ գրաւորապէս խնդրեց խղճալ հայ ժողովրդին, որ պատրաստ է հնազանդութեամբ ու հարկատուութեամբ Արաբացւոց ծառայել: Երբ Մահ-

մատ Յառան եկաւ, հանգուցեալ հայրապետի ձեռքից այդ նամակն առաւ, և խոստացաւ չպատժել հայոց: Նա անարգել 703 թուին մտաւ Հայաստան և բովանդակ երկրին տիրեց: Յունաց ներքին գժտութիւնները մեծապէս նպաստեցին Արաբացւոց յաղթանակներին (մինչև 717 թ.):

3. Ահա այս ժամանակներում Սահակ Զորափորեցուն յաջորդեց Բզնունեաց եպիսկոպոս Եղիան (703—718):

Սրա կաթուղիկոսութեան առաջին տարին պատահեցաւ Աղուանից եկեղեցու խռովութիւնը, որին աշխատեց նա վերջ դնել: 687 թուերին Վարազ-Տրդատ իշխանի Սպառան տիկնոջ աջակցութեամբ կաթուղիկոս է դառնում Ներսէս-Բակուր եպիսկոպոսը՝ առանց Հայոց կաթուղիկոսից ձեռնադրութիւն առնելու, միմիայն Աղուանից եպիսկոպոսներին առաքապրութիւն տալով, թէ մերժում է Քաղկեդոնի ու Լևոնի դաւանութիւնը: Բայց 700 թուերին նա մի հնարքով իւր տուած թուղթն ոչնչացնում է և Սպառան տիկնոջ հետ, որի որդիքը պատանդ էին Բիւզանդիոնում, յայտնապէս անցնում է քաղկեդոնականութեան կողմը և ատելապէս հալածում հակառակ դաւանութեան պատկանողներին ու նրանց եկեղեցիները աւերում: Այս տեսնելով՝ Աղուանից եպիսկոպոսներն ու Շերոյ մեծ իշխանը, որ առանձին թըշնամութիւն ունէր Սպարամ տիկնոջ հետ, ժողով են գումարում, նզովում են Ներսէսին, և իրենց վիշտն Եղիա կաթուղիկոսին յայտնում՝ խնդրելով գալ ու իրենց իրրև նոյն եկեղեցու որդւոց ցաւը դարմանել: Տակաւին կարուկ միջոցների չդիմած՝ Եղիան փորձում է նամակով ու պատգամաւորի միջոցով Ներսէսին ուղղութեան բերել, յորդորելով յետ կենալ իւր խռովարար ու գայթակղիչ ընթացքից: Իսկ երբ տեսնում է, որ իւր խաղաղ միջոցներն անզօր են անցնում, գայթակղութիւնը ճարակել չտալու համար՝ աշխարհական իշխանութեան աջակցութեան է դիմում. նամակ է գրում Աբդ-ալ-մելիք ամիրապահին (+9 հոկտ. 705) յայտնելով թէ Աղուանից Ներսէս կաթուղիկոսը յունաց դաւանութիւնն է ընդունել և նրանց թագաւորին իւր աղօթքներում յիշատակում. խնդրում է պատժել նրան, ինչպէս և նրա զորձակից Սպարան տիկնոջ: Ամիրապետը կատարում է հայոց կաթուղիկոսի խնդիրը, և սա հետն առնելով Խորխոռունեաց Սիմէոն, Ամատունեաց Սարգիս, Ռոտակաց Սարգիս եպիսկոպոսներին, Յովհաննէս տունեաց Սարգիս, Ռոտակաց Սարգիս եպիսկոպոսներին, Յովհաննէս վարդապետին (անշուշտ Օձնեցուն) և ուրիշներին՝ պատրաստ է գնում արաբացի պինուղներով և այստեղ ժողով գումարում: Ներսէսը չկարողանալով արդարանալ՝ դատապարտվում է: Սպարամն ու Ներսէսը կալանաւորվում են աքսորելու համար. միայն Ներսէսը շուտով մեռնում է: Նրա փոխարէն կաթուղիկոս է ընտրվում Սիմէոնը, և Եղիան

Էլ նոյն ժողովից դաւանութեան թուղթ է առնում, որ այնուհետև Հայոց ու Աղուանից միաբանութիւնը հաստատուն լինի։ Այս դաւանութեան թղթի մէջ շեշտւում է, որ երկու եկեղեցիները դաւանութեամբ միշտ մի են եղել, որ այժմ մէյն Նեսթէն է խանգարել. ձեռնադրութեան նկատմամբ էլ ասւում է, որ Աղուանից կաթուղիկոսները թէև բաժանուել են հայերից հակառակ հին սովորութեան և առժամանակ իրանց եպիսկոպոսներից ձեռնադրութիւն ստացել, բայց ժողովն այդ նորաձևութիւնն ևս վերցնում է ու նախկին կարգը վերահաստատում։ Մի այսպիսի դաւանութեան թուղթ առնելուց յետոյ Եղիա կաթուղիկոսը ինքն էլ թուղթ է տալիս և վերադառնում իւր աթոռը։ Այսպէս վերահաստատւում է երկու եկեղեցիների միութիւնը, որը և անխախտ մնում է մինչև Թ դարի վերջերը, մինչև Գէորգ Բ. կաթուղիկոսը։

Հայաստան վերադառնալուց յետոյ Եղիա կաթուղիկոսը հրատարակում է մի ընդարձակ թուղթ, ինչպէս երբեմն Աբրահամ կաթուղիկոսը, ուր ներկայացնում է Աղուանից ու Հայոց մէջ եղած այս ժամանակի կրօնական վէճերը և միանգամայն հերքում է Նեսթէս-Բակուրի դաւանական կարծիքները։

4. Այս կրօնական խնդիրներն ու վէճերը առիթ ունեցան Աբդալ-մելիքի վերջին տարիները։ 705 թ. հոկտ. ամիսպատ դարձաւ Նըրսա որդին Վլիթը, որ ամբողջ արաբական պետութիւնը հզօր ձեռքով կառավարեց ճնշելով ամէն մի ապստամբական շարժուն։ Սա հրամայեց խստութեամբ պատժել նաև հայ իշխանների 702 թուի ապըստամբութիւնը և արաբական զօրքի կոտորածի վրէժն առնել։ Ամիրապետի այս հրամանը Մոհմատը պատուիրեց Կաշմ զօրավարին, որ Նախիջևանի կողմերն էր, ի կատար ածել, և սա ամենայն անգթութեամբ կատարեց։ Նա իրեն մօտ կոչեց հայ նախարարներին իրենց հեծեալներով, որպէս թէ արքունական պարգևներ պէտք է բաշխէ. միայն միա իշխաններն այդ հրաւէրն ընդունեցին։ Հաւատարմութեան երդումն առնելու պատրուակով իշխաններին եկեղեցի մտցրեց, և այստեղ ամէնքին այրեց. իսկ նրանց զինուորներին էլ դուրսը կոտորել տուեց (707 թ.)։ Այսպիսի անգթութիւն Կաշմը գործեց նաև Ջրամ աւանում։ Այնուհետև նա շատ իշխանական տներ կողոպտեց և շատերին կալանաւորելով Դամասկոս ուղարկեց, որոնց մէջ էր նաև մանկահասակ Վահան Գողթնացին, որ մահմէտականութիւն ընդունեց, բայց ապա քրիստոնեայ դարձաւ ու նահատակուեցաւ։ Հայ իշխաններից ոմանք փախան ու ապաստան գտան յունաց տէրութեան Փոյթ (Փոթի) քաղաքում. բայց ապա երբ իրենց հայրենիքը փոքր ինչ խաղաղուեցաւ, յետ դարձան։

Եղիայի կաթուղիկոսութեան ժամանակ շատ աղանդաւորներ հրապարակ եկան—Պաւղիկեանք, պատկերամարտիկներ և ուրիշներ—և աղատ քարոզութեամբ հետևողներ շահեցան հայ ժողովրդի մէջ. մանաւանդ որ այս աղանդաւորներն արաբացի իշխանների կողմից պաշտպանութիւն ևս վայելում էին։

Եղիա կաթուղիկոսը նրանց դէմ թէև մաքառեց, բայց չկարողացաւ նրանց առաջն առնել։ Նրա յաջորդ Յովհան Օձնեցին իւր բովանդակ կաթողիկոսութեան ժամանակ աւելի յաջողութեամբ այդ աղանդաւորների դէմ մաքառեց, ինչպէս այժմ կըտեսնենք։

ԺԱ. ԳԼՈՒԽ

ՅՈՎՀԱՆ ՕԶՆԵՑԻՆ ԵՒ ԻՒՐ ԳՈՐԾԵՐԸ.

1. Հայ եկեղեցու ամենանշանաւոր հայրերից մէկը, որ միանգամայն սրբոց կարգն է դասուել իւր առաքինի ու ճգնակրօն վարքին համար, հանդիսանում է Յովհան Իմաստասէր Օձնեցին, որ երբեմն կոչվում է սոսկ Իմաստասէր կամ Օձնեցի։

Նա հարուստ ծնողաց զաւակ էր։ Մանկութեան հասակից ընտիր կրթութիւն ստացաւ է դարի նշանաւոր վարդապետ Թէոդորոս Բոթենաւորի մօտ, նուիրուեցաւ եկեղեցականութեան և դարձաւ հայ եկեղեցու նշանաւոր վարդապետներից մէկը։ Իւր հոգևորական տաղանդի, քաջ հմտութեան ու սրամտաբան մտածողութեան համար Իմաստասէր կոչումն ստացաւ։ Եղիա կաթուղիկոսը՝ գնահատելով նրա արժանիքները, Աղուանից երկիրը տարաւ Նեսթէս-Բակուր կաթուղիկոսի խնդրի ժամանակ և ապա Արտազծոտն գաւառի եպիսկոպոս ձեռնադրեց. այս վիճակից էլ կոչուեցաւ՝ Եղիայից յետոյ, Հայոց հայրապետական աթոռը բարձրանալու (718—728)։

Թէ ինչ վիճակի մէջ էր հայ եկեղեցին և առհասարակ հայ ժողովուրդը, այդ գեղեցիկ կերպով նկարագրում է Իմաստասէրն իւր առաջնաբանութեան մէջ. «Շատ կարևոր բանների մէջ տեսնում եմ անկարգութիւն բազմացած. և անկարգ են ոչ միայն ժողովրդականը, այլ առաւելապէս եկեղեցականները ու առաջնորդները։ Մենք որ մի աղգ ենք, և մի քարոզչի ձեռքով ճշմարտութեան ճանապարհն ընկանք, այժմ տարբեր ճանապարհներով ենք գնում թէ մեր բարքն ու վարքը, և թէ մեր աստուածպաշտութիւնն այլևայլ դարձնելով։ Մենք որ աշխար-

հային ղբօսանքներուն, առևտրի մէջ խօսակից ու հաշուակից ենք միմեանց, խաղաղութեան Աստուծոյ վերաբերեալ իրերի մէջ փախչում ենք խաղաղութենից և իրրև այլազգիներ միմեանց հետ կըռուում ենք»:

Այս դրութեան պատճառ մի կողմից եղրի ընդունած միութիւնն էր—«եղրի խմորը» և յունադաւան հայերի յարուցած վէճերը, թէ պէտք է ս. բաժակին մէջ ջուր խառնել, խմորուն հացով պատարագել, ս. Աստուածն առանց խաչեցարի երգել, Ծննդեան ու Մկրտութեան տօնները բաժանուած տօնել և այլն, միւս կողմից էլ՝ ապականութեան կամ անապականութեան խնդիրը և վերջապէս՝ Պաւղիկեան աղանդաւորներն ու հայ պատկերամարտիկները: Կրօնական մտածողութեան այս պէսպէս արտայայտութիւններն այս ժամանակ միայն առաջ չեկան, այլ աւելի վաղ էին ծնունդ առել. բայց քաղաքական անյաջող պայմանների պատճառով Յովհաննէսի նախորդներն անկարող եղան կռուելու, իսկ այժմ քաղաքական խաղաղ կացութեան ժամանակ Իմաստասէրը ղբաղուեցաւ այս աղանդներով և աշխատեց նրանց տարածման առաջն առնել: Նախ ծանօթանանք իւրաքանչիւրի վարդապետութեան հետ:

2. *Ա. Պաւղիկեանք.*—Այս աղանդի այսպէս կոչուելուն ու ծագման պատմութիւնը շատ մութ է: Ոմանք համարում են նրան մանիքէութեան մի ճիւղ. բայց առաւել ճշմարիտ կըլինինք, եթէ Մարկիոնութեան ընձիւղ համարինք, որովհետև երկուսի մէջ շատ նմանութիւններ կան, և տեսանք արդէն, որ Մարկիոնի վարդապետութիւնը 449 թուերին Ասորիքում մեծ շփոթութիւններ առաջ բերեց և այստեղից էլ ամենայն հաւանականութեամբ մեր երկիրն անցաւ: Պաւղիկեան կոչումն ոմանք առաջացած են համարում Պօղոս հայկազնի անունից, որ 685 թուերին աղանդապետ դարձաւ. բայց որովհետև այս աղանդաւորները 556 թուին գրուած «Հայոց աշխարհի Ուխտի» մէջ արդէն այդ անունով են յիշվում (Գիրք Թղթ. 73), ապա ուրեմն վերոյիշեալ բացատրութիւնը կարելի չէ ընդունել. հաւանական է մնում այն կարծիքը, թէ աղանդաւորներն այդպէս են կոչուել Պաւղոս առաքեալի անունով, որին շատ էին յարգում: Ի դարում այս աղանդն աւելի է զօրանում և նրա կենդրոն է դառնում Հայաստանի հարաւարևմտեան կողմը գտնուած Մանանաղի գիւղը (Սամոսատի մօտքերը), ուր իրրև քարոզիչ հրապարակ է գալիս ոմն Կոստանդին (665 թուերին), որ ձգտում է քրիստոնէական եկեղեցին իւր նախնական պարզութեան վերածել: Նա ընդունում էր թէ 1. երկու Աստուած կայ. մէկը չար՝ Հին Կտակարանի Աստուած՝ աշխարհի ստեղծողը, իսկ միւսը՝ բարի, հոգևոր աշխարհի Աստուած՝ իւր պաշտածը. 2. Քրիստոսը Կուսից ոչինչ չառաւ, այլ իւր մարմինն երկնքից բերից. ուստի ս. Կուսի յարգանքը մերժում էր. 3. մերժում էին եկեղեցու բոլոր խորհուրդներն ու պաշտամունքը. 4. մկրտութիւնն ու պատարագը կատարում էր ոչ թէ զգալի նիւթով, այլ լոկ խօսքով. 5. մերժում էր սրբոց բարեխօսութիւնը, պատկերների ու ս. Խաչի երկրպագութիւնը. 6. մերժում էր եկեղեցու նուիրապետութիւնը. 7. չէր ընդունում Հին կտակարանը, իսկ Նորից միմիայն Պօղոսի թղթերն ու Ղուկասի Աւետարանը և այլն: Բարոյականութեան տեսակէտով Պաւղիկեաններն շատ ընկած էին և այս կողմից Օձնեցին նրանց մեղնեայ է կոչում. նրանց բարոյական անկումն առաւել զօրեղ եղաւ աղանդապետ Վահանի օրով: Օձնեցին պատմական տեղեկութիւններ ևս տալիս է, թէ այս աղանդը հրբ տարածուեցաւ մեր երկրում: Նա ասում է, թէ Պաւղիկեան աղանդը Ներսէս (Բ-ի) ժամանակ կար, որը նրանց թէև պատուհասեց, բայց չկարատուեցան և թաքուն միացին հայ աշխարհի այս ու այն կողմերը: Ներանց հետ միացան Աղուանից երկրից հալածուած պատկերամարտիկները և ապա պաշտպանութիւն գտնելով Արաբացիներից սկսան ամէն տեղ համարձակաբէս քարոզել:

Բ. Պատկերամարտիկներ:—Հակառակ պատկերների շարժումն սկիզբն առաւ յունաց տէրութեան մէջ, երբ 726 թուին Լևոն Իսաւրացին իւր հրովարտակը հրատարակեց: Այդ օրուանից ներքին կռիւ ծագեցաւ, որ երկար տարիներ շարունակուեցաւ: Պատկերամարտիկ կայսրների քաղաքականութեան ջերմ պաշտպան էին յունաց բաժնի հայերն ու Պաւղիկեան աղանդաւորները: Բայց պատկերների հակառակ շարժումն մեր երկրի մէջ գրեթէ դարուկէս աւելի առաջ էր սկսուած՝ մօտաւորապէս 596 թուերին, չնայելով որ մեր եկեղեցում պատկերների յարգանքն այնպէս զարգացած չէր, ինչպէս յունաց մէջ: Պատկերները մեր եկեղեցում կամ որմնանկար էին և կամ առանձին շարժական: Պատկերներից յայտնի էին Փրկչի անօբէնութիւնները, առաքեալների ու ս. Կոյսի կենդանագրութիւնը, ս. Լուսաւորչի, Հռիփսիմէի և այլ սրբոց կեանքի դէպքերը: Եկեղեցիներում և առհասարակ ժողովրդի մէջ մեծ տեղ էին բռնում քարեայ կամ մետաղեայ խաչեր՝ պէսպէս զարդարանքներով: Պատկերների չափազանց յարգանքը՝ մանաւանդ յունաց կողմից, արդէն վաղուց մտածող մարդոց ուշադրութիւնն էր դրաւել և տակաւին Զ դարի սկիզբներում յայտնի ասորի հեղինակ Փիլոքսէնը († 527) մի գրուածք հրատարակից պատկերների դէմ: Նոյն Զ դարի վերջերը 596 թուերին Մովսէս կաթուղիկոսն առանձին շրջաբերականով արգելից յոյներից մասունք ու պատկերներ ստանալ: Կաթուղիկոսի այս արգելքից գրդուած երեք հայ եկեղեցականներ՝ Եսայի, Թադէոս, Գրիգոր, սկսան քարոզել՝ թէ պատկերապաշտութիւնը կռապաշտութիւն է և ս. Գրքին հակառակ, և թէ նոյնը

հայ եկեղեցու մէջ յոյներից է մտած Պապ Թագաւորի օրով։ Սրանց քարոզութիւնը խռովութիւն առաջ բերից. և երբ Մովսէս կաթուղիկոսը նրանց իւր մօտ կանչից, նրանք Աղուանից երկիրն հեռացան ու այնտեղ սկսան գործել։ Այս առթիւ Մովսէս կաթուղիկոսը պատուիրից որ ոչ ոք սրբոց պատկերները չխոտէ. Վրթանէս քերթողն էլ իւր «Յաղագս պատկերամարտից» դիմքը գրից, ուր ս. Գրքով ու հայրերի վկայութեամբ հաստատում է պատկերների կարևորութիւնը։ Նրանց դէմ գործեց նաև Յովհան Մայրագոմեցին և գայթակղած մարքերն ուղղեց։

Բայց և այնպէս հակապատկերական շարժումը ինչպէս Աղուանից այսպէս նաև մեր երկրից չվերացաւ. այլ աւելի զօրացաւ Արաբացւոց ու Պաւղիկեանց շնորհիւ։ Արաբացիք առհասարակ թշնամի էին պատկերապաշտութեան ու Յաչի երկրպագութեան՝ համարելով այդ սովորութիւնը կռապաշտութիւն։ Նոյնպիսի հայեացք ունէին այս կէտի վերայ և Պաւղիկեանները, որոնք իրենց կրօնական համոզմունքների միակ հիմունք Նոր կտակարանն էին ընդունում։ Ահա սրանց յարեցան հայ պատկերամարտիկները Ը դարում, ինչպէս յայտնում է Օձնեցին։

Գ. *Երևութականք։*—Այսպէս էին կոչւում այն ծայրայեղ միաբնակները, որոնք թէև ընդունում էին, թէ Քրիստոսի մէջ մի բնութիւն կայ, բայց այդպէս ասելով չէին հասկանում Աստուածային ու մարդկային բնութիւնների անշփոթ միաւորութիւնը, այլ Բանի ու մարդկային բնութեան խառնումը և վերջինիս ոչնչացումն Աստուածութեան մէջ, որով Փրկչի մարդանալն իրապէս եղած չէր լինում։ Համարելով թէ Բանը մարդկային անմահ, անապական, անմեղանչակն բնութիւնը միայն առաւ, նրանք քարոզում էին, թէ Քրիստոս մարդկային սովորական կրքերին (քաղց, ծարաւ և այլն) անհաղորդ էր, և եթէ Քրիստոս քաղցենում էր, ծարաւում, քրտնում էր և չարչարվում՝ այդ ամէնը երևութապէս էր կատարվում, առաջօք, և ոչ թէ իրօք։ Այսպիսի վարդապետութեամբ Քրիստոսի մարդեղութեան խոկութիւնը, ինչպէս ասացինք, խախտվում էր։ Երևութականութիւնը Յուլիանոս Աղիկառնացու (Զ Դար) վարդապետութեան ծայրայեղ զարգացումն է կազմում, ուստի նրանք Յուլիանիստներ ևս կոչվում են։

Է. և Ը. դարերում այս աղանդը մեր երկրում հետևողներ ունեցաւ, որոնցից յատկապէս յիշատակվում է Յովհան Մայրագոմեցու աշակերտ Սարգիսը, որ քաղկեդոնականութեան դէմ մաքառելով՝ չկարողացաւ պատշաճ ուղղութեան մէջ մնալ, այլ ծայրահեղութեան մէջ ընկաւ։

Երևութականների վարդապետութիւնը մեծ հակառակութիւն առաջ բերից հայ եկեղեցականների մէջ. Սարգսի ու նրա հետևողների

դէմ առաջին անգամ գրից Թէոդորոս Բոթենաւորը, որ նրանց արատքին ճգնական պատկերը ցոյց տալով հանդերձ ներկայացնում է, թէ նրանք ներքուստ գայլ են ու տգէտներ խողխողող, որովհետև առանց ուսումնասիրելու ջրանում են Քրիստոսի մարմնակրութիւնները, որպէս զի ուրանան մարդկային աղդի փրկութիւնը։

Դ. Վերջապէս մեր կեանքը պղտորում էին նաև Եզրի հետևողները. այսինքն՝ յունաց հետ միացեալ հայերը, որոնք աշխատում էին հետևողներ վաստակել։ Այս բոլորից զատ՝ բուն հայ եկեղեցականներն ևս շատ անհոգ ու անկարգ էին. ժամասացութիւնն ամէն տեղ միակերպ չէր՝ այլ յաջաւուրներով կամ յատկութիւններով. սեղանն ու աւազանը ոչ թէ քարեղէն ու անշարժ էին, այլ փայտեղէն ու շարժուն. մկրտութեան խորհուրդը կատարվում էր առանց հրաժարիմքի ու դաւանական խոստովանութեան. մկրտուածին դրօշմում էին «խաչի» ձեթ կոչուած իղոյ, որ Երուսաղէմից էին բերել տալիս և ամէն անգամ օրհնում էին։ Պահկի խորհուրդն եկեղեցում չէին կատարում, և պահկն էլ ոչ թէ քահանաները, այլ աշխարհականներն էին օրհնում։ Երկրորդ պահկը համարեա չէին օրհնում։ Եկեղեցականներն աւելի յաճախ գինեաներ էին յաճախում, քան թէ եկեղեցի։ Աշխարհականների կեանքն ևս շատ վատթար էր. Արաբացիներին հաճոյանալու համար՝ նրանք հաւատափոխ էին լինում և իրանց արևնակիցների դէմ մաքառում։ Ահա այս էր մեր երկրի վիճակը, երբ Յովհան Իմաստասէրը կաթուղիկոս դարձաւ։

3. Տակաւին իբրև վարդապետ ու եպիսկոպոս նա մաքառել էր կրօնական սխալ ուղղութիւնների դէմ՝ գրելով Պողիկեանց ու Երևութականների դէմ իւր դեղեցիկ ճառերը, որոնց մէջ անշէղ սրտանութեամբ հերքում է այդ մոլորամիտ կարծիքները։ Այժմ երբ կաթուղիկոս դարձաւ, աւելի ազդու կերպով աշխատեց մաքառել բոլոր անկարգութիւնների դէմ և այս նպատակին հասնելու համար գումարից Դուինի Է-րդ ժողովը (719 թ.), երբ մեր հայրենիքը Օմար Բ. (717—720) բարեպաշտ ու բարեսիրտ ամիրապետի շնորհիւ խաղաղութիւն էր վայելում։ Ընդարձակ առենաբանութեամբ ցոյց տալով եկեղեցու վիճակն ու բարեկարգութեան պէտքը՝ նա ժողովի հաճութեամբ սահմանից 32 կանոն, որոնց մէջ ամէն բան պարզ ու մեկին բացատրուած է։ Մի քանի կանոններով նա ճշդում ու որոշում է առաւօտեան, դիշերային ու արևագալի ժամասացութեան կարգերը։ 7-րդ կանոնով իւրաքանչիւր անհատի կամքին է թողնում քառասնորդական պահքի շարաթ ու կիրակի օրերը լուծել կամ չլուծել, որ շատ հին ժամանակներից կար։ Քաղկեդոնականներին ու յունաց հակառակ՝ պատուիրում է ըստ հին սովորութեան Ծնունդն ու Մկրտութիւնը

միասին ժողովել, ինչպէս և անապակ գինիով ու բաղարջ հացով պատարագել (8 կ.). պատուիրում է ս. Առաուածը երեք անգամ «խաչեցարով երդել (20-րդ կ.)։ Հրամայվում է՝ եկեղեցու մէջ միայն պսակի խորհուրդը կատարել, ինչպէս և երկրորդ պսակը օրհնել։ Պողիկեաններին ու պատկերամարտիկներին հակառակ ժողովը սահմանում է (27 և 28 կ.) թէ օծուած Խաչն ու Քրիստոսի պատկերները պէտք է պատուել, պաշտել ու համբուրել, որովհետև նրանք են, որ պահպանում են տեսակ-տեսակ ախտերից ու բժշկութիւն շնորհում. այդ սրբութիւնների համար մեռնողը մարտիրոս է. վերջապէս ժողովը պատուիրում է հայ ժողովրդին (29 և 32-րդ կ.) հեռու կենալ ամեն տեսակ հերձուածողներից, բայց առաւելապէս զգուշանալ Պողիկեաններից, որոնք «որդիք սատանայի են և լուցկիք յաւիտենական հրոյն». ծանրը պատիժ ու եկեղեցուց արտաքսումն է սպառնում նրանց, որոնք այս աղանդաւորներին կը յարին, կամ նրանց հետ սէր ու բարեկամութիւն կունենան։ Այս խիստ միջոցները Յովհան Օձնեցին մի ուրիշ ճառի մէջ արդարացնում է ասելով. «Ոչ ոք մեզ մարգատահաց ու անպէտ չհամարի Քրիստոսի խորհրդին, որ իւր եկեղեցուն սէր ու խաղաղութիւն գանձ թողեց։ Բայց որովհետև ոմանք միղնից հեռանում են և մեզ վայի տակ են ձգում համարելով մեր բարին՝ չար, մեր լոյսը՝ խաւար և միղնից մկրտուածին կրկին են մկրտում... այդպիսիներին իրրև օտար հալածեցինք մենք»։

Յովհան Օձնեցին մի միայն նոր կանոնագրութեամբ չբաւականացաւ, այլ և առաջին անգամ հայ եկեղեցու կանոնագիրքը խմբագրեց՝ ի մի հաւաքելով իրանից առաջ եղած ժողովական կանոնները՝ ինչպէս և ամէն մի ժողովի գումարման պատճառը նշանակելով։

4. Ժողովի յաջորդ տարին Յովհաննէս կաթուղիկոսը Դամասկոս գնաց Օմար Բ-ի մօտ, որ վաղուց էր լսել նրա ճգնազգեցութեան մասին։ Երբ Օմարը նրան շքեղ զարդարուած տեսաւ,—պարթեւահասակ Յովհաննէսը սիրում էր շքեղ հագնուել և մօրուքի վրայ ոսկու փոշի ցանել—մեծապէս զարմացաւ։ Յովհաննէս կաթուղիկոսը նրա գայթակղած միտքը շտկեց ցոյց տալով այն քուրձը, որ սովորաբար մարմնոյ վրայ կրում էր։ Օգտուելով այցելութեան պարագայից՝ Օձնեցին խնդրեց ամիրապետից, որ քրիստոնեաները հաւատափոխութեան չդրդռնադատուին, այլ կրօնի ազատութիւն վայելեն, որ եկեղեցիներից հարկ չառնուի, այլև թոյլ արուի իրեն Պաւղիկեաններին Հայաստանից հալածել։

Շուտով ծանր օրեր հասան մեր երկրին։ Բարեմիտ Օմարին խեղդամահ սպանեցին. նրան յաջորդեց Եզիտ Բ (720—724), որ մի մոլի անձն էր և Քրիստոնէից թշնամի։ Սա հրամայեց Փրկչի ու նրա

աշակերտների պատկերները, ինչպէս և կանգնուած խաչերը խորտակել։ Այս հրամանի մէջ թերևս անմասն չէին և հայ Պողիկեաններն, որով կարծես վրէժ կը լուծէին Յովհան Օձնեցու հանած հալածանքին համար։—Բարեբաստ չէր մեր երկրի վիճակը և Եզիտի յաջորդ Հեշամի ժամանակ (724—743), որ աշխատեց արաբական զէնքի փառքը վերանորոգել՝ աշխատելով Բիւզանդիոնն առնել և ամբողջ դաւանաձարանը հարստացնել, որ Օմարի առատաձեռնութեան ու ներողամտութեան պատճառով դադարել էր։ Այս իսկ պատճառով հարկերը ծանրացրեց, որից հայ ժողովուրդը մեծապէս նեղուեցաւ։

5. Ինչպէս արդէն ասացինք, Յովհան Օձնեցին իւր Ընդդէմ երևութականաց ճառով հերքեց հայ ծայրայեղ Յուլիանիտների վարդապետութիւնը։ Նոյնը կատարեց Օձնեցուն ժամանակակից Յոսրով հրեպատրը՝ ճշտութեամբ պարզելով հայ եկեղեցու դաւանութիւնը Քրիստի մարմնի անապական կամ ապականացու լինելուն նկատմամբ։ Բայց չնայելով մեր հայրերի պարզ բացատրութեան՝ գոնուեցան մոլորիչներ, թէ հայերը Յուլիանիտ են. այսպէս էին ասում յատկապէս Սևներ, թէ հայերը Յուլիանիտ են. այսպէս էին ասում յատկապէս Սևերեան ասորիները, ինչպէս Բարշադբիշաբա (Բարշապուհ) վանականը՝ ծայրայեղ Յուլիանիտ ասորիների կարծիքները հայոց ևս վերապրելով. (Ասորի Յուլիանիտները կոչվում էին նաև Գրիգորիկ՝ իբրև հայոց Լուսաւորչին դաւանակից)։ Յուլիանիտ ասորիներն ևս (Փարրիել վանականը) Սևերեան ասորիներին հայոց առաջ ներկայացնում էին իբրև ապականապաշտ։

Կրօնական այս թիւր կարծիքները փարատելու և երկու եկեղեցիների մէջ խաղաղութիւն հաստատելու համար՝ Յովհան Իմաստասէրը ստիպուեցաւ թղթակցութիւն ունենալ Սևերեան Ասորւոց Աթանաս րը ստիպուեցաւ թղթակցութիւն ունենալ Սևերեան Ասորւոց Աթանաս պատրիարքի հետ (724—740), և յնդիրն աւելի լաւ պարզելու համար որոշուեցաւ ժողով գումարել, որ և եղաւ Մանազկերտում 726 թուին։ Ժողովին ներկայ էին Ասորւոց կողմից՝ Աթանաս ու վից ասորի եպիսկոպոսներ, իսկ Հայոց կողմից՝ Յովհաննէս կաթուղիկոս 31 եպիսկոպոսներով ու քահանաներով։ Ժողովը մանր քննութեան առնելով Յուլիանոսի ու Սևերոսի վարդապետութիւնները՝ երկուսն էլ դատապարտեց, ինչպէս նաև Բաղկեդոնի դաւանութիւնը, որ կապ ունի նրանց հետ։ Ժողովն ընդունեց՝ թէ Քրիստոս կամաւ կրում էր բոլոր բնական կրքերը, բացի այն կրքերից, որ մեղքի հետևանք են. ապա ուրեմն՝ նրա մարմինն ապականացու էր, եթէ բնաւորական կրքեր ունենալն ապականութիւն է համարուում. բայց նա միանգամայն անապական էր (փառքն և այլն չունեցող) յորչափ միացած էր աստուածական բնութեան հետ անբաժանաբար ու մեղքից ազատ։ Այսպիսի վարդապետութեամբ երկու եկեղեցիները միացան և միմեանց դաւա-

նութեան թղթեր տուին։ Ժողովի ընդունած սկզբունքներն ամփոփուած են 10 նղովքների մէջ. հետեւեալների մէջ աւելի պարզ է երեւում ընդունուած դաւանութիւնը. «Եթէ մէկը չասէ, թէ Բանն Աստուած մեր մեղանչական ու մահկանացու բնութիւնից է առել մարմին, այլ այն անմեղ, անմահ ու անապական բնութիւնից, որ նախաստեղծը յանցանքից առաջ ունէր՝ նղովեալ լինի։» Այս նղովքն ուղղուած է Աղիկառնացու դէմ, որի վարդապետութիւնն են ներկայացնում գծուած բառերը։ «Ով որ ասէ, թէ Քրիստոսի մարմինն անփառաւոր, ապականացու եւ անկատար էր մինչեւ յարութիւնը և ապա անապական, փառաւոր ու կատարեալ՝ նղ. լինի»։ Այս նղովքն էլ Սեւերոսի դէմ է։ «Եթէ մէկը չխոստովանի, թէ Քրիստոս անապականաբար կրեց է մարդկային կրքերը՝ կամաւ, այլ ուսուցանէ թէ ապականութեամբ է կրել. և կամ եթէ կրած կրքերն ապականութիւն համարի՝ նղ՝ լինի»։ Ահա հայ եկեղեցու վարդապետութիւնը, որ նա մինչեւ այսօր պահում է։

Ժողովից երկու տարի վերջը վախճանեցաւ Օձնեցին։

ԺԲ. ԳԼՈՒԽ

ՀԱԼԱԾԱՆՔԻ ԵՒ ԸՄԲՈՍՏԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(729—854)

1. Ութերորդ դարի երկրորդ կէսերից մեր եկեղեցու և ազգի համար սկսւում են դառնութեան օրեր, որոնք՝ սակաւ ընդհատումներով, ձգւում են մինչեւ Թ դարի կէսերը՝ գրեթէ 125 տարի։ Մի կողմից՝ փողի կարօտութեան պատճառով Արաբացիների խիստ հարկահարկումը, մեւս կողմից էլ հայ նախարարների երբեմնական ձգտումն օտարի լուծը թօթափելու՝ պատճառ են դառնում հայ երկրի թշուառութեան։ Այս դառնութեան շրջանի առաջին կաթուղիկոս է հանդիսանում Դաւիթ Ա. Արամօնացին (728—741)։ Սրա կաթուղիկոսութեան առաջին տարիները հայոց կեանքը դժուարացաւ մի կողմից Խազիրների յարձակումներից, մեւս կողմից էլ արաբացի ոստիկանների կեղեքումներից. մեր երկիրը փոքր ինչ խաղաղուեցաւ, երբ Մրուանը ոստիկան եղաւ, որ ամեն տեսակ անկարգութիւն մէջտեղից վերցրեց. նրա միջոցով Աշոտ Բագրատունին պատրիկ դարձաւ և հայ նախարարներն ընդհանրապէս արաբական իշխանութեան աչքում հաճելի եղան։ Բայց և այնպէս Դաւիթ կաթուղիկոսը չկարողացաւ Դուինի մէջ մնալ, ուր արաբացիները շատ էին և հեռացաւ Արամօնս գիւղը, ուր նա եկեղեցի շինեց և բնակութեան սենեակներ։ Դաւթի ժամանակ Հայաստան գարձաւ Ստեփանոս Սիւնեցին, որ գրեց իւր թուղթն Անտիոքի պատրիարքին արարողութիւնների մասին, նաև Գերմանոս պատրիարքին (715—730), որ առաջարկում էր հայերին երկու բնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւն դաւանել։ Դաւթի յաջորդ Տրդատ Ա.-ի ժամանակ ևս (741—764) սկզբներում խաղաղ էր մեր երկիրը և Աշոտ Բագրատունի իշխանը, որ Մրուան ոստիկանին, ինչպէս և Հիշամ ամիրապետին (724—743) սիրելի էր, տակաւին իշխան էր։ Բայց սրան նախանձորդ էին Սմբատ Մամիկոնեանի որդիքը՝ Գրիգոր ու Դաւիթ, որոնք երբեմն իրրև Աշոտի թշնամիներ աքսորուած էին, բայց այս ժամանակ Հայաստան գարձած և կրկին Աշոտի դէմ հակառակութիւն սկսած։ Այս հակառակութեան հետեւանքը Դաւթի մահն եղաւ, որով Գրիգորը աւելի ևս զայրացաւ. ենա միտքը դրեց հայրենիքը մահմեդականների լծից ազատել, որոնք ներքին կռիւներով էին զբաղուած։ 749—750 թուերին Ամմայեանց տոհմը ջնջուեցաւ և ամիրապետութիւնն անցաւ Աբբասեանց տոհմին։ Արաբացւոց այս ներքին գժտութիւններից օգտուեցաւ Կոստանդին Կոպրոնիմոսը, որ 751—752 թուերին արաբական զօրքերը չարդելով Կարինին տիրեց։ Յունաց կայսեր դրդմամբ ապստամբութեան շարժուեցին նախարարների մէջ ևս առաջ եկաւ Գրիգոր Մամիկոնեանի առաջնորդութեամբ։ Ապստամբները Աշոտ Բագրատունուն ևս կամեցան իրենց կողմը գրաւել, որ հակառակ էր նոցա մտադրութեան՝ ցոյց տալով թէ կարող չեն երկիրն ազատել. բայց տեսնելով նրանց հաստատամտութիւնն ու սպառնալիքը՝ միաբանեցաւ, և յայտնապէս սկսուեցաւ ապստամբութիւնը։ Ապստամբներն ամրացել էին Տայոց լեռները։ Սակայն հայ ժողովուրդը շատ համակիր չէր շարժման, այս պատճառով էլ հայ ապստամբներն սկսան իրենց ազգակիցներին ու արհնակիցներին տանջել, որ իրենց հետ միանան. ապստամբների մէջ էլ երկպառակութիւն ընկաւ. Աշոտ Բագրատունին իւր համախոհներով միութիւնից բաժնուեցաւ և դնաց արաբացի զօրավարի մօտ իր հպատակութիւնը յայտնելու։ Աշոտի այս վարմունքը սաստիկ զայրացրեց Գրիգոր Մամիկոնեանին, որը և բռնելով նրան՝ կուրացրեց (748 թ.) և Կարին անցաւ։ Ապստամբութիւնը մի տարի իսկ չտևեց, բայց նրա հետեւանքները մեր երկրի համար շատ ծանր եղան։ Աբբասեանց տոհմի առաջին ամիրապետ Աբուլ-Աբբասը (750—754) իւր գրօրն էլմանսուրին մեր երկիրն ուղարկեց, որ հարկապահանջութեամբ սկսեց սաստկապէս նեղել հայ ժողովրդին. հարկ էր պահանջում ոչ միայն կենդանիներից, այլ և մեռ-

ելացաւ։ Բայց և այնպէս Դաւիթ կաթուղիկոսը չկարողացաւ Դուինի մէջ մնալ, ուր արաբացիները շատ էին և հեռացաւ Արամօնս գիւղը, ուր նա եկեղեցի շինեց և բնակութեան սենեակներ։ Դաւթի ժամանակ Հայաստան գարձաւ Ստեփանոս Սիւնեցին, որ գրեց իւր թուղթն Անտիոքի պատրիարքին արարողութիւնների մասին, նաև Գերմանոս պատրիարքին (715—730), որ առաջարկում էր հայերին երկու բնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւն դաւանել։ Դաւթի յաջորդ Տրդատ Ա.-ի ժամանակ ևս (741—764) սկզբներում խաղաղ էր մեր երկիրը և Աշոտ Բագրատունի իշխանը, որ Մրուան ոստիկանին, ինչպէս և Հիշամ ամիրապետին (724—743) սիրելի էր, տակաւին իշխան էր։ Բայց սրան նախանձորդ էին Սմբատ Մամիկոնեանի որդիքը՝ Գրիգոր ու Դաւիթ, որոնք երբեմն իրրև Աշոտի թշնամիներ աքսորուած էին, բայց այս ժամանակ Հայաստան գարձած և կրկին Աշոտի դէմ հակառակութիւն սկսած։ Այս հակառակութեան հետեւանքը Դաւթի մահն եղաւ, որով Գրիգորը աւելի ևս զայրացաւ. ենա միտքը դրեց հայրենիքը մահմեդականների լծից ազատել, որոնք ներքին կռիւներով էին զբաղուած։ 749—750 թուերին Ամմայեանց տոհմը ջնջուեցաւ և ամիրապետութիւնն անցաւ Աբբասեանց տոհմին։ Արաբացւոց այս ներքին գժտութիւններից օգտուեցաւ Կոստանդին Կոպրոնիմոսը, որ 751—752 թուերին արաբական զօրքերը չարդելով Կարինին տիրեց։ Յունաց կայսեր դրդմամբ ապստամբութեան շարժուեցին նախարարների մէջ ևս առաջ եկաւ Գրիգոր Մամիկոնեանի առաջնորդութեամբ։ Ապստամբները Աշոտ Բագրատունուն ևս կամեցան իրենց կողմը գրաւել, որ հակառակ էր նոցա մտադրութեան՝ ցոյց տալով թէ կարող չեն երկիրն ազատել. բայց տեսնելով նրանց հաստատամտութիւնն ու սպառնալիքը՝ միաբանեցաւ, և յայտնապէս սկսուեցաւ ապստամբութիւնը։ Ապստամբներն ամրացել էին Տայոց լեռները։ Սակայն հայ ժողովուրդը շատ համակիր չէր շարժման, այս պատճառով էլ հայ ապստամբներն սկսան իրենց ազգակիցներին ու արհնակիցներին տանջել, որ իրենց հետ միանան. ապստամբների մէջ էլ երկպառակութիւն ընկաւ. Աշոտ Բագրատունին իւր համախոհներով միութիւնից բաժնուեցաւ և դնաց արաբացի զօրավարի մօտ իր հպատակութիւնը յայտնելու։ Աշոտի այս վարմունքը սաստիկ զայրացրեց Գրիգոր Մամիկոնեանին, որը և բռնելով նրան՝ կուրացրեց (748 թ.) և Կարին անցաւ։ Ապստամբութիւնը մի տարի իսկ չտևեց, բայց նրա հետեւանքները մեր երկրի համար շատ ծանր եղան։ Աբբասեանց տոհմի առաջին ամիրապետ Աբուլ-Աբբասը (750—754) իւր գրօրն էլմանսուրին մեր երկիրն ուղարկեց, որ հարկապահանջութեամբ սկսեց սաստկապէս նեղել հայ ժողովրդին. հարկ էր պահանջում ոչ միայն կենդանիներից, այլ և մեռ-

հալեներից. եկեղեցու սպասաւորներին ու քահանաներին հրապարակով ծեծում էր հարկեր ստանալու համար. պատուիրեց որ հայ ժողովուրդը ի նշան սուրբութեան կապարեայ կնիք կրէ իւր պարանոցի վրայ: Հայ նախարարներն ևս սակաւուհետև ձիեր, ջորիներ, հանդերձներ, ոսկի ու արծաթ տալ. կարուհետև այն առձիկը, որ հայ ղօրքն արքունիքից էր ստանում: Այնուհետև նախարարներն իրանք էին պարտական իրանց զօրքի բոլոր պէտքերը հոգալու: Էլմանսուրը մեր երկրի վրայ դատաւոր ու հարկապահանջ կարգելով Եզիտ անունով մէկին՝ հեռացաւ: Երբ 756 թուին յունաց Կոստանդին կայսրն (741—775) երկրորդ անգամ կարինն առաւ, նրա հետ հեռացան բազմաթիւ հայ ընտանիքներ՝ թողնելով իրենց տունն ու տեղը, որոնք արաբացիների ախտականութիւն դարձան:

2. 762 թուին Էլմանսուրն իւր նոր մայրաքաղաքի՝ Բաղդատի հիմքը դրեց և այս տոթիւ եղած մեծամեծ ծախսերը հոգալու համար՝ նա հարկերն աւելի ծանրացրեց. մեր երկրի միջից ոսկին ու արծաթը խպտռ վերացաւ, և ամենքը յետին աղքատութեան հասան: Տրդատ Վանանդեցի կաթուղիկոսն ու Սահակ իշխանը թէև բողոքեցին բայց իզուր: Խստութիւնները կարծես բաւական չէին, երբ նոյն 762 թուին սաստիկ կարկուտ ու մարախ եկաւ, որով հացահատիկներն ոչնչացան: Այս դառնութիւնների ժամանակ վախճանեցաւ Տրդատ կաթուղիկոսը և նրան յաջորդեց Տրդատ Բ (764—767), որի օրով միևնոյն թշուառութիւնները շարունակուեցան և աւելի ևս ծանրացէս. հարկապահանջութեան համար միատէս ծեծվում էին թէ ռամիկները և թէ մեծամեծները, թէ քահանաները և թէ եպիսկոպոսները:

Տրդատ Բ-ին յաջորդեց Աղձնիքի Սիոն եպիսկոպոսը (767—775), որ հռչակուած էր իբրև սուրբ ու հրաշագործ անձն: Սա տեսնելով՝ որ երկրի խառնակ դրութեան պատճառով անկարգութիւնները բազմացել են, իւր կաթուղիկոսութեան երկրորդ տարին (768 թ.) Պարտաւ քաղաքում ժողով գումարեց Աղուանից Դաւիթ կաթուղիկոսի, եկեղեցականների ու Աղուան ու հայ նախարարների (Սահակ պատրիկ, Սմբատ Բագրատունի և այլն) ներկայութեամբ: Դուխնում ժողով անել անկարելի էր արաբացի իշխանների պատճառով: Հայ վիճակաւոր եպիսկոպոսներից միայն 4 հոգի-Գէորգ Ոստան, Սահակ Հարքայ, Սադովկ Սիւնեաց և Եսայի Գողթան եպիսկոպոսները-ներկայ էին, իսկ միւսները ներկայ լինել չկարողանալով մահմետական իշխողների բռնութիւնից՝ գրաւորապէս իրենց յօժարութիւնը յայտնեցին: Ժողովի սահմանած 24 կանոններից աւելի նշանաւոր են 16-րդը, որ սուտ ասելութեան համար 4 տարիճան է ընդունում, ինչպէս Շահապիվանի ժողովը, և 24-րդը՝ ուր որոշակի սահմանուում է Հին Կտակարանի կանոնը:

Այս ժամանակ էլ Արաբացոց խստութիւնները ըստ առաջնոյն շարունակվում էին, և նախարարները յուսահատութեան հասնելով՝ փորձեցին մի անգամ ևս ապստամբել ու թշնամու լուծը թօթափել: Ապստամբութեան պարագլուխ Մամիկոնեան Արտաւազդ ու Մուշեղ իշխաններն եղան. նրանց հետ միացան Սմբատ Բագրատունին և ուրիշ իշխաններ: Այս ապստամբութեան մէջ մեծ դեր խաղաց և հոգևոր դասը: Հռիփսիմեան վանականներից մէկը քարոզում էր, քաջալերում ամենքին, թէ «Ահա ձեր փրկութեան ժամանակը հասել է, և թագաւորութեան պատուանդանը կրկին Թորգոմի տանը պիտի դառնայ.., դուք մի վախենաք Իսմայէլացիներից, որ նուաղ էք. ձեղանից մէկը նրանց հազարը պիտի հալածէ, իսկ երկուսը՝ նրանց բիւրը»: Այս «տեսանող» եկեղեցականի քարոզները մեծ ոգևորութիւն առաջ բերին նախարարների մէջ. բայց երկու արիւնահեղ պատերազմների մէջ (775 թ.) Արճեշի մօտ ու Բագրեւանդում, որին մասնակցում էին նաև եկեղեցականները՝ հայ նախարարները չարաչար յաղթուեցան. պատերազմի մէջ սպանուեցան Սմբատ ու Սահակ Բագրատունիները, Մուշեղ ու Սամուէլ Մամիկոնեաններն և ուրիշները: Հայ նախարարներին յաղթելուց յետոյ՝ արաբացիք սկսան եկեղեցիներ քանդել ու այրել, եկեղեցական սպասները յափշտակել, խաչերը կործանել. առաւել խստութեամբ վարվում էին քահանաների ու վանականների հետ համարելով նրանց ապստամբութեան առաջնորդ ու խրախուսիչ: Այս աւերմունքների ժամանակ վախճանեցաւ Սիոն կաթուղիկոսը և նրան յաջորդեց Գողթան եպիսկոպոս Եսային (775—788), որ մի այրի կնոջ զաւակ էր և հայրապետանոցում սնուած: Սրա առաջին տարիները խաղաղ անցան, որովհետև ամիրապետ էր Սլեմանի Մահմէտը (775 թ.), մի աղնուական ու լաւաբարոյ անձն: Նրա օրով երկրի մէջ կրկին արծաթ երևցաւ. արծաթի հանքերը մշակուեցան, և այս իսկ պատճառով հարկերի ծանրութիւնը հայ ժողովրդի համար նկատելի չէր: Ալմահուին սարսափեցրից նաև յունաց, և նրանց Եռինէ Թագուհին 782 թուին խաղաղութեան դաշն կապեց՝ տարեկան 70,000 ոսկի խոստանալով: Սակայն մեր երկրի խաղաղութիւնը վրդովեցաւ, երբ ամիրապետ դարձաւ Մուսէն (785 թ.) և մեր երկրի կառավարիչ նշանակեց Յազմ անունով մէկին, որի առաջին գործն եղաւ Համատասպ ու Սահակ Արծրունիներին նահատակել (785 թ.): Յազմին փոխանակեցին Սուլէյմանն ու իր փեսայ Հռոմ Իբնդոկէ (787), որոնք ամենայն խստութեամբ հարկեր էին հաւաքում և նոյն իսկ կապարեայ կնիքների համար փող պահանջում: Եսայի կաթուղիկոսի, եկեղեցականների ու նախարարների խնդիրն ոչինչ հետևանք չունեցաւ: Հարկերի այս ծանրութեան չդիմանալով շատերը պաղթեցին յունաց երկիրը. այսպէս Շապուհ Ամատունին և

իւր Համամ որդին 12 հազար հոգով յունաց տէրութեան մէջ իրենց բնակութիւնը հաստատեցին։

Երբ 788 թուին Եսայի կաթուղիկոսը վախճանեցաւ, Սուէյմանը սպառնալիքով ձեռք ձգեց հայրապետանոցի բոլոր թանկագին սպասներն ու զգեստները։ Երեի թէ կաթուղիկոսութիւնն բառնալու սպառնալիքի առաջն առնելու համար ընչաքաղց իշխանին հարկադրեցին կաշառք տալով կաթուղիկոսացաւ Սահակ եպիսկոպոսը երկու տարի (788—791), ապա՝ Յովաբ (791), յետոյ Սողոմոն (792), ապա Գէորգ Ա. (792—795) և վերջապէս Յովսէփ (795—806)։ Սրա օրով մեր երկրի ոստիկանը Խուզիման էր, որ կամեցաւ հայրապետանոցի գիւղերն ու կալուածները գրաւել. նա Յովսէփ կաթուղիկոսին բանտարկեց ու պանակոծեց, բայց և այնպէս սա կալուածները յանձնելու յօժարութիւն ցոյց չտուեց։ Յովսէփ կարիճին յաջորդեց Դաւիթ երկրորդ (806—833). սրա օրով ընդհանրապէս խաղաղութիւն էր։ Հարուն ալ Ռաշիտից յետոյ արաբացոց մէջ երբ խռովութիւններ ծագեցան, մեր իշխանները գործեալ փորձեցին թշնամու լուծը թօթափել. այժմ էլ գործի գլուխ անցաւ Սևադա պարսիկը, որ Բագրատունեաց վերապրել էր։ Հոլ ոստիկանը Դաւիթ կաթուղիկոսի միջոցով աշխատեց խաղաղութեամբ ապստամբական շարժման առաջն առնել, բայց չյաջողեցաւ. մի պատերազմում (826 թ.) նրանց բոլորովին ջարդեց ու ապստամբութիւնը զսպեց։

3. Դաւթին յաջորդեց Յովհաննէս Ովայեցին (833—854), որ մի բարեպաշտ ու երկիւղած անձն էր։ Սրա ժամանակ Տարօնի իշխան Բագարատ Բագրատունին Հայոց իշխան կարգուեցաւ Մութասիմ ամիրապետի (833—842) կողմից։ Բագարատը նոյնպէս բարեպաշտ էր, հմուտ իւր մայրենի եկեղեցու դաւանութեան, հերիւրեկոնների դէմ մաքառող ու միանգամայն գիտուն մարդոց ընկերութիւնը սիրող. սրա խնդրանօք ասորի Նանա կամ Նոննոս սարկաւագն իւր Յովհաննու Աւետարանի մեկնութիւնը գրեց, որ յետոյ հայերէն թարգմանուեցաւ։ Բայց այս բարեպաշտ իշխանը խիստ հակառակորդ էր Յովհաննէս կաթուղիկոսին և աշխատում էր նրան գահընկէց անել. թէ ինչ էր այս թշնամութեան բուն պատճառը, յայտնի չէ։ Իշխանաց իշխան Բագարատը իրեն համախոհներ ևս ունեցաւ նաև կաթուղիկոսարանի մէջ, որոնք նոյնպէս բացարձակ սկսան չարաչար կաթուղիկոսի մասին։ Օգտուելով իր իշխանական դիրքից և ստոյգ համարելով կաթուղիկոսի մասին պատմուածները՝ Բագարատը առանձին թղթով պատուիրեց՝ Յովհաննէսին կաթուղիկոս չճանաչել։ Ովայեցին տեսնելով Բագարատի բռնած դիրքը՝ նզովից նրան ու Այրից վանքը քաշուեցաւ (840 թ.)։

Բագարատի այս ընթացքը մեծ դժգոհութիւն առաջ բերեց. նրա հակառակորդները ժողով գումարեցին (841 թ.) և քննելով կաթուղիկոսի մասին եղած ամբաստանութիւնները՝ նա արդար գտան ու հրաւիրեցին հայրապետական աթոռը նստելու։ Բագարատը տեսնելով՝ որ առանց իւր հաճութեան Յովհաննէս Ովայեցին կրկին կաթուղիկոս հաստատուեցաւ՝ սաստիկ զայրացած ուղում էր իւր կամքն առաջ տանել և ուրիշ կաթուղիկոս կարգել, բայց զարմանալի զուգադիպութեամբ կաթուղիկոսի թշնամիների կրած պատուհասներն երևի թէ զգաստացրին Բագարատ իշխանին։

4. Բագարատ Բագրատունին թէև արաբացւոց կողմից էր իշխան հաստատուած հայոց վրայ, բայց և այնպէս ձգտում էր Հայաստանը նրանց ձեռքից ազատել և գաղտնապէս կապ ունէր Բաբան պարսկի հետ, որ այս ժամանակներից երեք-չորս տարի առաջ ապստամբել էր. ինքը Բագարատն էլ պատրաստվում էր Հայաստանի լուծը նզովուածները (Սասունը) ոտքի հանել։ (Թերևս Բագարատն ուղում էր, որ Յովհաննէս կաթուղիկոսն ևս գործին մասնակցի, և վերջինիս չկամութեան պատճառով հետը թշնամացած)։ Բայց ամէնքը համամիտ չէին Բագարատին, և յատկապէս Սմբատ Սպարապետը։

Բագարատի անհաւատարմութիւնը կարող չէր արաբացիներից ծածուկ մնալ, և ահա Ջաֆր Մութաւաքիլ ամիրապետի կողմից (847—861) Հայաստան ուղարկուեցաւ Աբուսեթ ոստիկանը նրան կալանաւորելու։ Սա Տարօնի մէջ խարէութեամբ բռնեց Բագարատին (851 թ. ու Բաղդատ ուղարկեց, ուր նա մահուանից ազատուեցաւ միմիայն հաւատուրացութեամբ։

Բագարատի կալանաւորումը սաստիկ զայրացրեց լեռնական Սասունցիներին, որոնք 851 թուին յարձակուեցան Ապուսեթին վրայ, նրան սպանեցին ու զօրքն էլ կոտորեցին։ Այս դէպքը սակայն շատ աղետալից եղաւ մեր երկրի համար։

Ջաֆր Մութաւաքիլ ամիրապետն այս պարտութեան վրէժն առնելու համար անագին բանակով Բուղա զօրավարին Հայաստան ուղարկեց՝ պատուիրելով իշխաններին կալանաւորել ու Բաղդատ ուղարկել, ինչպէս և ղէնք կրելու ընդունակ գեղեցիկ ու բաջակազմ մարդոց, իսկ միւսներին անխնայ կոտորել։

Բուղան ամենայն անգթութեամբ կատարեց իւր սիրոյ պատուէրը և բովանդակ Հայաստանն աւերակ դարձրեց. նրա անգութ գործերի առաջնորդն ու խորհրդակիցը Սմբատ Բագրատունի սպարապետն էր։ Չկարողանալով այս խստութիւններին տանել՝ շատերը հաւատափոխ եղան, շատերն էլ նահատակուեցան, ինչպէս Ատոմմանք, որոնց կատարումն եղաւ 852 թուին և որոնց յիշատակը տօնվում է միւս Ատոմմանց յիշատակի հետ։ Բուղայի այս անգթութիւնների ժամանակ Յովհաննէս կաթուղիկոսն էլ ատոնդական շրջում էր. նա

Մաքենեաց վանքում վախճանեցաւ (854 թ.)։ Որովհետև Սմբատ Բագրատունին Բաղդատ պէտք է գնար իւր հաւատարիմ ծառայութեան վարձն առնելու՝ լինչպէս հաւատացնում էր նրան Բուղան, անմիջապէս Շիրակուանում եպիսկոպոսների ժողով գումարեց և կաթուղիկոս ընտրել հրաժարեց Զաքարիա անունով մի սրբակեաց անձն, որ և շատով եկեղեցական աստիճաններ սահանալով՝ կաթուղիկոս օծուեցաւ (854—876 թ.)։ Այս գործը գլուխ բերելուց յետոյ՝ Սմբատը Բուղայի ու դիւրեալ իշխանների հետ Բաղդատ գնաց, ուր նրան առաջարկուեցաւ, ինչպէս և միւսներին, հաւատափոխ լինել. նա յանձն չառաւ, և 855 թուին մեռաւ իբրև խոստովանող։ Նա որդին Աշոտ սպարապետը Բագրատունեաց հարստութեան հիմնադիրը դարձաւ։

ԺԴ. ԴԼՈՒԽ

ՀԱՅ ԵՒ ՅՈՅՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՐՁԸ.

ՓՈՏ, ԶԱՔԱՐԻԱ ԵՒ ԻՒՐ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ.

1. Նշանաւոր նախարարների Բաղդատ գերուելուց յետոյ ապրած պատը Սմբատ Ոստոսվանողի որդին Աշոտը, որ իւր քաջութեամբ ու իմաստութեամբ շուտով սիրելի դարձաւ ոչ միայն հայ իշխաններին, այլ և Հայոց երկրի կառավարիչ Շեխին։ Աշոտի բարեմասնութեանց համբաւը Բաղդատ ևս հասաւ և ամիրապետը նրան վարձատրելու կամ գուցէ և հայ ժողովրդի սիրտը շահելու համար 859 թուին նրան իշխանաց իշխան նշանակեց՝ հաւատալով նաև երկրի կառավարութիւնն ու հարկերի ժողովումը։ Այդ օրուանից Աշոտը ամէն կերպ աշխատեց հայ զօրքը բարեկարգել, երկիրը շէնցնել ու ապահովել թշնամիների յարձակումներից. խաղաղութեան շնորհիւ առևտուրն ու երկրագործութիւնը ծաղկեցաւ, աւերակ քաղաքներ ու գիւղեր վերանորոգուեցան և անտիսականապէս քայքայուած հայ ժողովուրդը այժ ու կենդանութիւն առաց։ Գրեթէ 32 տարի (859—891) մեր երկիրը խաղաղութիւն վայելեց Աշոտի խոհեմութեամբ ու քաղաքականութեամբ։ Ահա այս ժամանակում դարձեալ փորձեր եղան հայ և յոյն եկեղեցիների միութեան։

2. Արդէն վաղուց ընդհատուած էր երկու եկեղեցիների յարաբերութիւնը. Արաբացւոց ամբողջ տէրապետութեան շրջանում միմիայն Գևրմանոս պատրիարքն էր (715—730), որ եկեղեցիների միութեան համար թուղթ գրեց և Սահփանոս Սիւնեցուց էլ պատասխան առաց։ Այժմ՝ երբ Հայերը փոքրիշատէ ազատութեան երես տեսան, յուսաց կողմից կրկին կրօնական հալածանքների ենթարկուեցան և երկու եկեղեցիների միութեան խնդիրը դարձեալ արծարծուեցաւ։

858 թուին Միքայէլ հայկազն կայսեր ու նրա քեռի Վարդանի հաճութեամբ յունաց պատրիարք դարձաւ բազմամեայ Փոտը, որ իւր ժամանակակից Զաքարիա կաթուղիկոսի նման աշխարհական վիճակից ընտրուեցաւ և մի քանի օրուայ մէջ (20—24 դեկտ. 857) պատրիարք ձեռնադրուեցաւ։ Փոտը հաստատուն կամքի տէր անձն էր. իւր իշխանութեան ժամանակ ամէն տեղ աշխատեց յունական եկեղեցու դաւանութիւնը տարածել և Բիւզանդիոնի պատրիարքութեան նշանակութիւնը բարձրացնել. այս իսկ պատճառով երկար տարիներ Հռոմէական եկեղեցու հետ կռուեցաւ։

Յունական եկեղեցու հօտը ստուարացնելու համար՝ Փոտը յունաց տէրութեան մէջ բնակուող հայերին ևս սկսաւ նեղել իբրև թէ Յակովբ Ծանծաղիկոսին են հետևում, և աշխատել, որ նրանք Բաղկեդոնի դաւանութիւնն ընդունին։ Զաքարիա կաթուղիկոսը տեսնելով Փոտի այս հալածանքը՝ իւր հօտը պաշտպանելու համար բաւական թուղթ գրեց բացատրելով, թէ Հայերը ոչ Յակովբ Ծանծաղիկոսին, ոչ Յուլիանոս Աղիկառնացու, ոչ Եւտիքէսի և ոչ էլ մի այլ հերձուածողի աշակերտ են, այլ Գրիգոր Լուսաւորչի, և թէ չեն ընդունում Բաղկեդոնի ժողովը նախկին տիեզերական ժողովներին հակառակ համարելով։ Զաքարիայի այս թուղթն առիթ տուեց երկու եկեղեցիների միութեան խնդրի արծարծուելուն, և Փոտը ընդարձակ թղթով աշխատեց ապացուցանել Բաղկեդոնի ժողովի վարդապետութեան ուղղափառութիւնը և Հայերին յորդորեց նոյն դաւանութիւնն ընդունելու։

Այս թղթերը Հայաստան բերից հայազգի հռոմայացած Վահան եպիսկոպոսը, և այդ առթիւ դումարուեցաւ 862 թ. Շիրակուանի ժողովը բազմաթիւ եպիսկոպոսներով, Աշոտ իշխանի և Նանա ասորի սարկաւագի, որ դիւրի հայ նախարարների հետ նոր էր վերադարձել (862թ.), ներկայութեամբ։ Ժողովի մէջ քննուեցաւ Փոտի առաջարկութիւնը և չնայելով Վահան եպիսկոպոսի չերմ պաշտպանողական ճառին՝ մերժուեցաւ Բաղկեդոնի ժողովը ուղղափառ ճանաչել և Հայ եկեղեցու դաւանութիւնը ժե. նզովքների մէջ ձևակերպելով, որոնք սակայն խառնակուած են, առանձին բացատրութեամբ Փոտին ուղարկեց։

Շիրակուանի ժողովի վճիռն ու մերժումը բնականաբար հաճելի

չեղաւ Փոխին։ Բիւզանդական եկեղեցու ներքին խռովութիւնները ու Փոսի գահընկէցութիւնը (867 թուին) անշուշտ արգելը եղան սկսուած գործի շարունակելուն. բայց երբ նորից պատրիարք գարձաւ (23 հոկտ. 878 թ.), գարձեալ նոյն միութեան գործին ձեռնարկեց, և այժմ համոզուած լինելով՝ որ հայ եկեղեցականների միջոցով անհնար է իր ցանկացած միութիւնը գլուխ բերելու՝ առանձին նամակով դիմեց իշխանաց իշխան Աշոտին՝ իբրև «սիրոյ կապակցութեան ախորժողի» յորդորելով եկեղեցիների միութեան համար աշխատել, որ Աստուծուց և օրթոտոքս թագաւորներից վառքի արժանանայ. ի միջի այլոց Փոսը իւր վիշտն է յայտնում, որ այս նպատակով իւր հայոց կաթուղիկոսին գրած թղթերն ապարդիւն են անցել, և թէ Շիրակուանի ժողովի գրաւոր պատճառաբանութիւնները Քաղկեդոնի դէմ ընդունելի չեն։ Այս թղթի գրութեան ժամանակ Զաքարիա կաթուղիկոսը արդէն կենդանի չէր և նրան յաջորդել էր Գէորգ Գառնեցին։

Իշխանաց իշխան Աշոտի հրամանով այս թղթին պատասխանեց (879 թուերին) Տայոց Սահակ Մոսա (Ապիկուրէշ) եպիսկոպոսը. և ինչպէս որ Փոսի թուղթը խիստ լեզուով էր գրուած, այնպէս եղաւ և նրա պատասխանը։ Մեծ համութեամբ Սահակ եպիսկոպոսը պաշտպանում է Հայոց եկեղեցու գաւանութիւնը և գատապարտում Քաղկեդոնի վարդապետութիւնը։ Սրանով էլ վախուեցաւ առ ժամանակ միութեան խնդիրը։

Բայց երևի թէ Հայոց մէջ կային եկեղեցիների միութեան համամիտ անձնաւորութիւններ. դրանցից մէկն էր ժամանակի նշանաւոր վարդապետ Մաշտոցը, որ սկսաւ յունաց հետ կլօնական յարաբերութիւն ունենալ, բայց յետոյ ապաշխարելով Գէորգ կաթուղիկոսից նեղուեաց սատցաւ։

Զաքարիա կաթուղիկոսը Յիսէ ոսոիկանից հայոց հին սովորութեամբ խաչանիշ գրօշ կրելու իրաւունքը սատցաւ և՝ վախճանեցաւ 876 թուին։ Նա թողել է բազմաթիւ ճառեր, որոնք՝ գրեթէ ամէնքն էլ անտիպ են։

3. Զաքարիային յաջորդեց Գէորգ Բ. Գառնեցին (876—897), որ բախտ ունեցաւ 885 թուին Աշոտին Հայոց թագաւոր օրհնելու. այսպէս վերականգնեցաւ Հայոց թագաւորութիւնը բազմադարեան անկումից յետոյ։

Աշոտի մահուանից յետոյ դահակալութեան համար ծագեցաւ մի ընտանի երկպառակութիւն, որ նորահաստատ թագաւորութեան համար մեծ չարիք էր։ Գէորգ կաթուղիկոսն ամէն կերպ աշխատեց այդ երկպառակութեան առաջն առնել և գահակիցը Աբասի սիրտն ողջել։ Նրա ջանքերն ապարդիւն չանցան. նա 893 թուին Աշոտի որդուն

Սմբատին էլ երազդաւորում մեծ հանդէսով թագաւոր օրհնեց։

Բայց ըմբռստ Աբասը համարելով թէ իւր անյաջողութեան մեղաւորը Գէորգ կաթուղիկոսն է, կամեցաւ նրանից վրէժխնդիր լինել ու նրան գահընկէց անել։ Իւր համախոհներով կաթուղիկոսի վրայ պչապէս յանցանքներ բարդեց ու զրպարտիչ թղթեր գրեց նշանաւոր իշխաններին ու եպիսկոպոսներին։ Այս ժամանակներում իւր սրբութեամբ ու հեղինակութեամբ յայտնի էր Սեւանայ վանահայր Մաշտոց վարդապետը։ Աբասը սրան էլ կամեցաւ իրեն կողմնակից դարձնել՝ կաթուղիկոսութիւն խոստանալով։ Բայց ճգնազգեաց Մաշտոցը չհրապուրուեցաւ այս խոստումից և նամակով յորդորեց Աբասին յետ կենալ իւր չար դիտաւորութիւնից։ Այս նամակը և չարախօսների կըրած պատուհասները իրենց ազդեցութիւնն ունեցան և խռովութիւնը հանդարտուեցաւ։

Բայց Սմբատին վիճակուած չէր խաղաղ թագաւորել. քաջութեան կողմից նա հաւասար էր իւր հօրը, միայն նրա հեռատեսութիւնն ու խոհեմութիւնը չունէր։ Սմբատի դէմ եկան թէ Աբբասեանների թուրք իշխանները և թէ նրան ժառանգաւոր հայ մանր իշխանները՝ թագաւորելու անհանգիստ ոգուց մղուած։ Եւ Գէորգ կաթուղիկոսը այս ներքին ու արտաքին խռովութիւնների մէջ տառապեցաւ. նա գերի իսկ ընկաւ Աբբասեանների ձեռքը և վիրկանքով ազատուեցաւ։ Այս պատերազմական ամիրայի

մէջ, նաև այն տանջանքները, որ ինքը կրեց Իւսուֆ ու Նըբր ոստիկանների ձեռքից։

Հայաստանի տառապանքների լուրը Բիւզանդիոն ևս հասաւ. այս առթիւ թղթակցութիւններ ևս եղան. բայց մեր երկիրը յոյներից ոչ մի իրական օգնութիւն չստացաւ։ Յովհաննէս կաթուղիկոսը աստանդական շրջելուց յետոյ՝ վերջապէս վտակուրական Դագիկ Արծրունու մօտ գնաց. այստեղ վերջացրից իւր պատմութիւնը և այստեղ էլ վախճանեցաւ (925—27 թ.)։

ԺԴ.՝ ԳԼՈՒԽ.

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԱՆԴԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.

ԱՆԱՆԻԱ ՄՈԿԱՑԻ. ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1. Յովհաննէս Ե. Դրասխանակերացու մահուանից յետոյ Աշոտ ու Գագիկ Թագաւորների հաճութեամբ կաթուղիկոս դարձաւ Սահակիանոս Բ. և որովհետև Դուինն ու հայրապետանոցը Նըսրը գրաւած էր, իւր աթոռը Աղթամար կղզում հաստատեց։ Մի տարի միայն իշխանութիւն վարեց. նրան յաջորդից Թէոդորոս Ա. (928—936)։ Զնայելով որ այս միջոցին մեր երկիրը շէնցաւ և Դուինի կաթուղիկոսարանն էլ յետ առնուեցաւ, բայց և այնպէս Թէոդորոսը շարունակեց դարձեալ Աղթամարում մնալ։ Այս ժամանակ Բագրատունեաց Թագաւորն էր աշխարհաշէն Աբասը (928—953), որ իւր քաջութեամբ ու խոհեմութեամբ մեր երկիրը բոլորովին խաղաղացրեց ու նրա վերանորոգութեան պատճառ դարձաւ։ Արհաւիրքներից փախած հայ մարդիկ հայրենիք դարձան և իրենց գործերով զբաղուեցան. շինուեցան վանքեր, որոնք մեր գրականութեան զարգացման և լուսաւորութեան կեդրոն դարձան։ Վանքերից նշանաւոր են. 1) Կամրջաձորոյ վանքը՝ Արշարունեաց գաւառում. 2) Հոռոմոսի վանքը—Շիրակ գաւառում. 3) Նարեկայ վանքը—Ռշտունեաց երկրում. 4) Ալածոյի վանքը—Դերջանում. 5) Հնձուց վանքը—Կարինի գաւառում. 6) Դպրեվանքը—Շիրակ գաւառում։ Այս վանքերի մէջ կրթուեցան ու զարգացան ժ դարի բոլոր հայ գործիչներն ու գրագէտները։ Նոցա մէջ ամենայն խստութեամբ հրեք կանոն էր պահպանվում. ա. անընդհատ աղօթք, բ. օրը մի անգամ միայն ճաշակել. և գ. աղօթքով ու ընթերցուածներով զբաղուել։

Ինքը Աբաս Թագաւորն էլ շինեց Կարսի կաթուղիկէ եկեղեցին (930—934 թ.). որ այժմ ռուսաց Մայր եկեղեցին է և մեծ հանդէսով օծել տուեց նրան։

Պատմութիւնն ասում է, թէ Աբասի շինած այս եկեղեցին քաղկեդոնիկ ձեռով օծելու համար Ափխազների Բէր թագաւորը մեծ բանակով Աբասի վրայ եկաւ, բայց չարաչար յաղթուեցաւ ու աչքից էլ զրկուեց։ Անշուշտ Աբասի այս գործից զայրացած՝ Հոռոմոս Լակապէն կայսրը (919—946) սաստիկ հալածանք հանեց Յունաց երկրի մէջ ապրող հայերի դէմ՝ ստիպելով նրանց քաղկեդոնականութիւն ընդունել. այս հալածանքից ստիպուած շատ կրօնաւորներ իրենց հայրենիքը վերադարձան և ձեռնարկեցին վերոյիշեալ վանքերի (Հոռոմոսի, Կամրջաձորոյ և այլն) շինութեան (934—935 թ.)։ Այս հալածանքի առթիւ ևս Գագիկ Արծրունի Թագաւորը (†942) գրեց իւր Թուղթը Հոռոմոս կայսեր և Թէոփիլակտոս պատրիարքին, և ցոյց տալով Բրխոտոսի բնութեանց միաւորութիւնն ու Յաչէի խորհուրդը Հայոց եկեղեցու և Յունաց հայրերի դաւանութեամբ՝ յորդորում էր երկու ազգերի մէջ բարեկամութիւն հաստատել և հալածելու փոխարէն մի ուրիշ հնարք գտնել միջնորմը յատակելու և երկու ազգերին նոր մարդ դարձնելու (Տիրք Թղթ. 301)։ Մի այսպիսի առաջարկութեան Յոյները դարձեալ հալածանքով շարունակեցին պատասխանել։

2. Թէոդորոսին յաջորդից իւր Եղիշէ եղբայրը (936—941), որ հինգամեայ կաթուղիկոսութիւնից յետոյ գահընկէց եղաւ անյայտ պատճառով։ 941 թուին ազգային ժողով գումարուեցաւ (Թերևս՝ Աղթամարում) և Գագիկ Արծրունու, Աբաս Բագրատունու հաւանութեամբ և բազմաթիւ եպիսկոպոսների, վանականների, առաջնորդների ու ճըգնաւորների միաձայն ցանկութեամբ կաթուղիկոս ընտրուեցաւ Վարագի վանահայր Անանիա Մոկացին (941—965), որ թէև ընաբանական ու քերթողական կրթութիւն ստացած չէր, ինչպէս ինքն է ասում, բայց սնուած լինելով անապատներում՝ յայտնի էր իւր ճգնողական ընութեամբ, ուղիղ դաւանութեամբ ու քարոզչական եռանդով։ Իւր պատմական տեսակէտով նշանաւոր Թղթի մէջ (Ապրա 1897, եր. 129) Անանիան նկարագրում է իւր ժամանակի Հայոց եկեղեցու դրութիւնը. եպիսկոպոսներից ոմանց ապստամբութիւնը, քաղկեդոնականութեան տարածումը հայ ընտանիքների մէջ, աւազակների արիւնահեղութիւնը, Աղուանից կաթուղիկոսի ըմբռստացումը և այլն։

Երբ նոր կաթուղիկոսի ընտրութեան առթիւ 941 թուին ժողով էր գումարվում, Անանիա եպիսկոպոսը Գագիկ Արծրունու խորհրդով հրաւիրական Թուղթ ուղարկեց նաև Աղուանից Սահակ կաթուղիկոսին ու Սիւնեաց Յակովբ եպիսկոպոսին, որ գան ժողովին մասնակցե-

լու. բայց նրանք հրաժարուեցան առայօդ պատճառաբանութեամբ յայտնելով, թէ թագաւորներն ու եպիսկոպոսներն ուժ էլ ընտրեն Լուսաւորչի Աթոռին համար, իրանք պատրաստ են ծառայելու։ Ժողովը, ինչպէս ասացինք, դումարուեցաւ, և միաձայն կաթուղիկոս ընտրուեցաւ Անանիա եպիսկոպոսը։ Հաւանօրէն այս ժողովը տեսնելով քաղկեդոնականութեան ծաւալումը մեր երկրում, միւս կողմից էլ յուսահատ հալածանքները, որոնք ամէն կերպ պատահում էին Հայոց եկեղեցուն և քաղկեդոնականութեուն ընդունողներին կրկին մկրտում կամ ձեռնադրում, ինքն էլ նզովից Քաղկեդոնի ժողովը, և համարելով նրա վարդապետութիւնը չարափառ՝ որոշեց այդ դաւանութեամբ մկրտուածներին կրկին մկրտել (Ա. Գ. է.)։ Հայոց որոշմունքն աւելի ևս զրգռեց Յունաց, որոնք տեղ-տեղ նզովք իսկ սահմանեցին Հայոց համար։

Անանիա կաթուղիկոսն իւր հայրապետութեան ժամանակ զբաղուեցաւ Սիւնեաց, Աղուանից ու Վասրով եպիսկոպոսի խնդրով, որոնց համար և գրեց իւր թղթերը։

3. Յովհաննէս պատմաբան կաթուղիկոսից Սիւնեաց եպիսկոպոս էր կարգուել իւր եղբօրորդին Յակովբը, որը սակայն ճանապարհների դժուարութիւնը պատճառ բռնելով՝ չկամեցաւ Հայոց կաթուղիկոսին հնազանդել, այլ հնազանդեցաւ Աղուանից կաթուղիկոսին։ Նրանից էլ միւոօն ստացաւ։ Բայց նա միւս եպիսկոպոսներին ևս դըրդում էր Հայոց կաթուղիկոսին չլսել, և առ հասարակ կաթուղիկոսներին քաղկեդոնականների ծաղրածութեան ենթարկում։ Յովհաննէս և Թէոդորոս կաթուղիկոսները նրան նզովեցին, բայց ամենևին չըզգաստացաւ և շարունակեց իւր ընթացքը։

Իսկ Աղուանք ժամ 70 տարի արդէն դադարել էին Հայոց կաթուղիկոսներից ձեռնադրութիւն առնել. Յունան եպիսկոպոսը Հայոց Գէորգ Բ. կաթուղիկոսի կենդանութեան ժամանակ գաղտագողի Աղուանից կաթուղիկոս ձեռնադրուեցաւ և Գէորգ կաթուղիկոսը հին կարգը պահպանած լինելու համար՝ եկեղեցու օրէնքին հակառակ, նրան կրկին ձեռնադրեց։ Յունանի յաջորդները՝ Սիմէոն, Դաւիթ, Սահակ, Գագիկ, ամէնքն էլ իրանց կաթուղիկոսական ձեռնադրութիւնը Աղուանից եպիսկոպոսներից ստացան, իսկ Սահակ կաթուղիկոսը մինչև իսկ քաղկեդոնիկ էր դարձել իշխանիկ թագաւորին հաճոյանալու համար։ Անանիա կաթուղիկոսը Գրիգոր Դեղինիկ (որ 943 թուին Գագիկին էր յաջորդել) ու Աբաս թագաւորների յորդորներից քաջալերուած՝ վճռում է. ս. Լուսաւորչի հօտից բաժանուած ու օտարացած ժողովրդին կրկին միացնել Հայոց եկեղեցու հետ և նրա նախնական միութիւնը անխախտ պահպանել։ 943 թուին եպիսկոպոսներով ու վարդապետներով Անա-

նիա կաթուղիկոսը Սիւնիք է գնում, Աղուանից երկիրն ևս մտնելու դիտաւորութեամբ։ Յակովբ եպիսկոպոսը Սիւնեաց իշխաններից կիւղից ղղջում է իւր յանցանքը և կաթուղիկոսին հնազանդութիւն խոստանում։ Կաթուղիկոսը չի կարողանում Սիւնիքի մէջ երկար մնալ. Հայոց թագուհու մահուան լուրն առնելով՝ Աղուանք գնալու փոխարէն Շիրակ է դառնում։ Այս տեսնելով՝ Յակովբ եպիսկոպոսը դրժում է իւր խոստման, և ոչ այսչափ միայն, այլ և միաբանական թղթով ուրիշ եպիսկոպոսներ ևս ապստամբեցնում է կաթուղիկոսի դէմ։ Այս չարիքի առաջն առնելու համար Անանիա կաթուղիկոսը Հայոց քաղաքական իշխանութեան ուժին է ապաւինում՝ նախ քաղկեդոնականութիւնը մեր երկրից ջնջելու և ապա առաջով Յակովբին հնազանդեցնելու համար։ Աբաս թագաւորը կաթուղիկոսի ցանկութիւնը կատարում է. նա առաջիկ հրաման է հանում, որով արգելվում է հայոց երկաբնակների (Վրաց) հետ ամուսնանալ։

Այս ժամանակներում մեռնում է Աղուանից Սահակ կաթուղիկոսը և նրա փոխանակ առանց Հայոց կաթուղիկոսից ձեռնադրութիւն ստանալու կաթուղիկոսանում է Գագիկ եպիսկոպոսը։ Անանիա կաթուղիկոսը մերժում է Գագիկի իշխանութիւնը իբրև ոչ—կանոնական և Աղուանից իշխաններին ևս գրում է Գագիկին իբրև կաթուղիկոս չճանաչել։

Իշխանները երկպառակվում են. մի մասը Գագիկին է ընդունում, իսկ միւս մասը՝ Յունան եպիսկոպոսին Հայոց կաթուղիկոսի մօտ է ուղարկում ձեռնադրուելու համար. և Անանիան նրանց խնդիրն է կատարում, սակայն գժտութիւնը չի վերանում։ Յակովբ եպիսկոպոսը սկսում է ժողովրդին ու եկեղեցականներին գրգռել, որ Յունանին իբրև կաթուղիկոս չընդունին և այսպէս ժողովրդի ու եկեղեցականների մէջ երկպառակութիւն է ընկնում։ Անանիա կաթուղիկոսը գործի ծանրութիւնը տեսնելով հայ գիտնական վարդապետների հետ Աղուանից երկիրն է գնում և այստեղ բազմամարդ ժողով է գումարում խնդիրը յարդարելու համար։ Ժողովն երեք կուսակցութեան է բաժանվում. մէկը Գագիկին է պահանջում, միւսը՝ Յունանին, ոմանք էլ՝ բոլորովին մի ուրիշ մարդ. կաթուղիկոսը տարաձայնութիւնը բառնալու համար իւր ձեռնադրած Յունանին կարգից գրկում է. Գագիկն էլ կամովին է հրաժարվում. նոր թեկնածու ընտրելու համար իշխանները ժամանակ են խնդրում, և կաթուղիկոսը միամտացած՝ Սիւնեաց երկիրն է գնում Յակովբին ևս ուղղութեան բերելու համար։ Սա ապաւինում է իր պաշտպան Զիւանշիր իշխանին և կաթուղիկոսը առանց որևէ գործ կատարելու Շիրակ է դառնում 949 թուին։ Այնուհետև կաթուղիկոսը գրագրութեամբ է աշխատում Աղուանից ու Սիւնեաց խնդիրը յարդա-

ըել։ 958 թուին մնանում են Յակովբն ու Գագիկը։ Անանիան անմիջապէս Սիւնեաց եպիսկոպոսը կ՚դնում. Զիւանշիր իշխանի որդուն Վահանին Սիւնեաց եպիսկոպոս է ձեռնադրում և հաւատարիմ հպատակութեան ու ղաւանութեան թուղթ առնելով՝ Շիրակ է վերադառնում։ Նա թոյլ չի տալիս նաև Վահանին, ինչպէս և նրա յաջորդներին, առաջից խաչ, գաւազան ու բարձ տանելու։ Աղուանից իշխաններն էլ Խոսրովիկ վանքի Դաւիթ վանականին ուղարկում են Շիրակաւան Անանիայի մօտ, որը և ձեռնադրվում է Աղուանից կաթուղիկոս։ Տասնեվեցամեայ կռիւը (942—958 թ.) այսպէս է վերջանում։

4. Նուազ խռովութեան պատճառ չեղաւ նաև մեր յայտնի գրադէտ եկեղեցականներից մէկը՝ Խոսրով Անձևացիաց եպիսկոպոսը, որ իւր ձեռնադրութիւնն ու վիճակը Անանիայից էր ստացել։ Սա Սիւնեաց Յակովբի կուսակից էր. բայց հակառակում էր կաթուղիկոսին բոլորովին ուրիշ տեսակէտով։ 954 թուերին Խոսրով եպիսկոպոսը սկսեց քարոզել, թէ օրհնած ու չօրհնած խաչը միևնոյն է, ապա օրհնելն աւելորդ է. թէ կիւրակէ պէտք չէ ասել, այլ յունականի նման կիւրիակէ, երեսաղէմն էլ—եռուսաղէմ, թէ տղոց գլուխը պէտք է խուզել՝ քանի որ նրանց մօրուքը չէ աճել և այս պատճառով որպէս թէ նրանք կտրիչ են կոչվում, իսկ մօրուքի աճելուց յետոյ պէտք է մաղերն երկայնել ու մանել, որի համար և մանուկ են կոչվում։ Անանիա կաթուղիկոսն այս կարծիքների վրայ ուշադրութիւն չի դարձնում. բայց երբ սկսում է քարոզել, թէ հայրապետն ու եպիսկոպոսը համապատիւ են և թէ հայրապետն առանձին ձեռնադրութիւն, աստիճան չունի, Անանիան սաստիկ զայրանում է և մի քանի թղթեր է գրում այդ թիւր կարծիքները հերքելու համար, միանգամայն այդ գաղափարների շարժառիթ այն պարագան համարելով, որ Խոսրովը չի ուզում ըստ սովորութեան տարին երեք անգամ հայրապետական աթոռին ընծայաբերութիւն անել, տուրք տալ (աթոռառաս)։ Նա ցոյց է տալիս, որ թէև Հայերը կաթուղիկոսի ձեռնադրութեան առանձին կանոն չունին, բայց օտարներն ունին, յայտնելու համար որ եպիսկոպոսի ու հայրապետի աստիճանները տարբեր են և թէ հայերն անփութութեամբ միայն այդ կանոնը չեն թարգմանել։ Խոսրովը չի համոզվում և շարունակում է իւր քարոզները, ուստի Անանիա կաթուղիկոսը ստիպուած բանադրում է նրան և նա առանց ղջալու մեռնում է։

5. Անանիայի կաթուղիկոսութեան ժամանակ 953 թուին Աբասեան յաջորդից իւր որդին Աշոտ Ողորմածը, որ արժանաւոր հօր արդարև արժանաւոր որդի գտնուեց և որին մեծ հանդէսով Անի քաղաքում թագաւոր օծեց Անանիա կաթուղիկոսը։ Նրա թագաւորութեան ժամանակ մեր երկիրը խաղաղեցաւ արտաքին ու ներքին թշնամի-

ները սանձուեցան ու զսպուեցան։ Աշոտ իւր քրիստոնէական քաջութեան հետ միացրած էր աղնիւ ու մարդասէր ոգի. նա շինեց շատ եկեղեցիներ ու վանքեր, ինչպէս և քաղաքներում—անկելանոցներ ու հիւանդանոցներ։

Իւր թագակից որդուց յետ չմնաց Խոսրովանոյշ թագուհին (951—977), որ Հաղբատ ու Սանահին վանքերը շինեց (957—967), ուր երբեմն ապաստանած էին Յունաց երկրից փախած կրօնաւորներ։ Այս վանքերը՝ մանաւանդ Սանահինը, շուտով մեծ նշանակութիւն ստացան մեր ազգային կեանքի մէջ և հայկական աթոռ դարձան։

65 թուին Անանիա կաթուղիկոսը Արքինայում վախճանեցաւ ու այնտեղ էլ թաղուեցաւ։

ԺԵ ԳԼՈՒԽ

ՆԵՐՔԻՆ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՎԱՀԱՆ, ՍՏԵՓԱՆՈՍ ԵՒ ԽԱՉԻԿ Ա.

1. Անանիա կաթուղիկոսի մահուանից յետոյ նոր կաթուղիկոսի ընտրութեան համար ժողով գումարուեցաւ Անի քաղաքում (965 թ.), որին ներկայ էր նաև Աղուանից Յովհաննէս կաթուղիկոսը և ընտրուեցաւ Սիւնեաց վահան եպիսկոպոսը (965—970)։ Սակայն սրա կաթուղիկոսութիւնը ներքին խռովութիւն առաջ բերից, որի պատճառ մի կողմից այն մանրմասն յարաբերութիւնն էր, որ նա ունէր Վրաց ու Միլիտինէի Թէոդորոս եպիսկոպոսի հետ, միւս կողմից էլ եկեղեցիներն իկնասատասով զարդարելու ձգտումը։ Վահանի այս յունասիրական գործերը տեսնելով՝ ժամանակի նշանաւոր հայ եկեղեցականները (Խաչիկ՝ Արշարունեաց եպիսկոպոսը, Պողիկարպոս, Սարգիս, Ստեփանոս և այլ վանականներ ու եպիսկոպոսներ) Անի հաւաքուեցան և Աշոտ թագաւորի հաճութեամբ ժողով կազմեցին (970 թ.)։ Վահան կաթուղիկոսը նախօրօք զգալով իր գլխին գալիքը՝ փախաւ Վասպուրական Աբուսահլ թագաւորի մօտ։ Ժողովը քննելով գտաւ, որ Վահանի ընթացքը և Աշոտի հաճութեամբ կաթուղիկոս ընտրեց Ստեփանոս Սևանեցուն (970—972), որ Մաշտոց կաթուղիկոսի տոհմից էր և նրա նման էլ ճգնաւոր։ Վահանիկն ու Ստեփանոսն այնուհետև սկսան

միմեանց նզովել, որ ընականաբար ժողովրդի ու եկեղեցականութեան վրայ վատ ազդեցութիւն պէտք է գործէր։ Այս դայթակղութիւնը մէջտեղից վերցնելու համար Ստեփանոս կաթուղիկոսը, որը ինչպէս երևում է, տակաւին կաթուղիկոսական ձեռնադրութիւն ստացած չէր (Ա. Գ. ը), բազմաթիւ կրօնաւորներ ու նշանաւոր վարդապետներ հետն առած Վաղարշապատն գնաց՝ Աբուսահլին ու Վահանին յանդիմանելու համար։ Բայց սրանք առանց իսկ նրան տեսնելու և լսելու՝ հրամայեցին կալանաւորել ու Աղթամար աքսորել. ապա Կոտորոց բերդը փակեցին, ուր երկար տարիներ մնալուց յետոյ Վահանիկին հետ միևնոյն 980 թուին վախճանեցաւ։

2. Աշոտ Թագաւորի ու հայ եպիսկոպոսների անտարբերութիւնը Ստեփանոսի բախտի վերաբերմամբ կարծել է տալիս, թէ վանական խիստ կուսակցութիւնը, որի ընտրեալին դարձաւ Ստեփանոսը, շատ հանդամակրութիւն չէր վայելում այս խնդրի մէջ։ Այս իսկ պատճառով նոր կաթուղիկոսի ընտրութեան համար գումարուած ժողովում Աշոտ Թագաւորը, ինչպէս և շատ առաջնորդներ կամենում էին կրկին Վահանին հրաւիրել։ Բայց տեսնելով նրա դէմ եղած հակառակութիւնը, որ անշուշտ աւելի զօրացաւ Ստեփանոս կաթուղիկոսի հետ այնպէս խստութեամբ վարուելուն համար՝ կաթուղիկոս ընտրեցին Արշարունեաց Խաչիկ եպիսկոպոսին, Անանիա կաթուղիկոսի քեռորդուն (972—992)։ Այս ընտրութեան վասպուրականցիք ևս հաճութիւն տուին, և Խաչիկ կաթուղիկոսը հայութեան պառակտեալ մասերը հաշտեցնելով՝ միապետեց (Ասող. Թ.) և խռովութիւնը վերցաւ։ Դահընկէց Վահանը քաշուեցաւ Զորոյ վանքը միշտ բողոքելով որ ապօրինաբար է իր աթոռից զրկուել։ Նա մինչև իսկ Յովհաննէս Զմշկիկ կայսեր բողոքեց (874 թ.), որը սակայն չկամեցաւ Հայոց Ներքին գործերին միջամտելու։

3. Խաչիկ աշխուժ ու գործունեայ կաթուղիկոսն իր քեռու նըման հոգ տարաւ Հայոց եկեղեցու բարեկարգութեան ու պահպանութեան։ Նա Տրդատ ճարտարապետի ձեռքով մի փառաւոր եկեղեցի շինեց ու զարդարեց մեծ ճոխութեամբ, Արգինա գիւղաքաղաքի կաթուղիկոսարանը նորոգեց և մօտը մատենադարան հաստատեց, ուր հաւաքեց բազմաթիւ մատեաններ։ Տեսնելով որ հայ ժողովուրդը հեռացեալ հայրենիքից հեռանալով Արևմուտք է գնում՝ նա ազգային եկեղեցու պահպանութեան համար նոր վիճակներ սահմանեց Ասորւոց Անտիոք, Տարսոն ու Սոլուն քաղաքներում և սրանց գաւառներում։ Խաչիկի ժամանակ Թագաւոր դարձաւ Սմբատ Բ. (977—990), որ մեծապէս հոգ տարաւ իր երկրի խաղաղութեան։ Նա Անին պարսպեց ու շինեց նրա ցոյակապ մայր եկեղեցին. նոյն Տրդատ ճարտարապետի ձեռքով։ Այս

ժամանակներում ապրում էր և կարսի Աբաս Թագաւորը, որ նոյնպէս հետամուտ եղաւ խաղաղութեան ու շինութիւններով զբաղուեցաւ։

Սակայն խաղաղութիւն վայելում էր միմիայն Հայաստանի վերին մասը, այն ինչ նրա հարաւային մասը արաբական մանր ամիրաների ձեռքին չարաչար տանջվում էր. նրանք դարձեալ հայ ժողովրդին կոտորում ու սպանում էին։

Վրդովուած ու խառն վիճակի մէջ էին նաև Հայաստանի արևմտեան գաւառները շնորհիւ հայ Թագաւորների, որոնք Բիւզանդական աթոռը միմեանց ձեռքից աշխատում էին յափշտակել, իսկ մէջ տեղը տուժողը հայ երկիրը, հայ ժողովուրդն էր։ Այսքանը բաւական չէր. Վասիլ Բ-ը իւր իշխանութեան տակ գտնուած հայերից մեծ բազմութիւն գաղթեցրեց Մակեդոնիա Բուլղարների դէմ կռուելու համար, որոնց Թագաւորն էր Սամուէլ՝ նոյնպէս հայ և իւր քաջութեամբ այդ վտանգին հասած։

Պատերազմների արհաւիրքները բաւական չէին. յունաց քահանաները ու Սեբաստիոյ մետրապոլիտն ևս սկսան հայերին ու հայ քահանաներին սաստիկ հալածել և նշանաւորներին ղթայակապ Պոլիս ուղարկեցին, ուր բանտի մէջ ծերունի Գաբրիէլ քահանային էլ սպանեցին (986 թուին)։ Հալածանքներին չդիմանալով՝ շատ քահանաներ, ինչպէս և Սեբաստիայի ու Լաւխայի Յովհաննէս ու Սիոն եպիսկոպոսները Բազկիդոնի դաւանութիւնն ընդունեցին և արգելեցին Հայոց կոչնակահարութեամբ ժամ ասել. այս վիճակը տևեց մինչև 1001 թուականը։ Սեբաստիոյ ու միւս քաղաքների մետրոպոլիտներն այսչափով իսկ չբաւականացան. նրանք անարգական ոճով թղթեր ևս գրեցին Հայոց Խաչիկ կաթուղիկոսին։ Այս հալածանքի առաջ մեր եկեղեցու վարդապետներն էլ անտարբեր չմնացին, այլ այս ու այն մետրապոլիտին գրեցին կծու բայց հիմնաւոր ու ըմբերանիչ պատասխաններ. Մելիտինէի Թէոդորոս մետրապոլիտին պատասխանեց Սամուէլ Կամրջաձորեցին (Գիրք Թղթ, 302), իսկ Սեբաստիոյ մետրապոլիտին՝ մի ուրիշը (Ա. եր. 202)։ Մելիտինէի եպիսկոպոսը զգաստացաւ. բայց Սեբաստիայինը շարունակեց իւր բռնութիւնը, մինչև որ ինքն էլ նոյն տարին Բուլղարների Սամուէլ հայկազն Թագաւորից չարաչար պատժուեցաւ։ Խաչիկ կաթուղիկոսը վախճանեցաւ 991 թուին 16-ամեայ կաթուղիկոսութիւնից յետոյ և թաղուեցաւ Արգինայում։

4. Աթոռի միամեայ պարապութիւնից յետոյ՝ Հայոց Գագիկ Թագաւորը կաթուղիկոս կարգեց Սարգիս Սևանեցուն (992—1019), որի մասին մեծ հրճուանքով է խօսում ժամանակակից պատմիչ Ասողիկը։ Սարգիսը մանուկ հասակից նուիրուած էր եկեղեցու սպասաւորութեան, կրօնաւորուած Սևանի անապատում և ամէնքին սիրելի։ Գա-

գիկ Թագաւորը նրա հետ անձնապէս բարեկամ էր և Սևանի առաջնորդ էր կարգել։ Աչիկ կաթուղիկոսի մահուանից յետոյ ազգային ժողովի համաձայնութեամբ, որի մէջ նշանաւոր էր Արշարունեաց Սահակ եպիսկոպոսը, նրան կաթուղիկոսութեան կոչեց։

Իւր 27-ամեայ կաթուղիկոսութեան ժամանակ Սարգիսը նոյն ճգնաւորը մնաց, ինչպէս որ էր Սևանում, առատաձեռն, մարդասէր, խոնարհ ու պահեցող։

Սարգիս կաթուղիկոսը Անիում կաթուղիկէի մօտ շինել տուեց ս. Հռիփսիմեանց եկեղեցին։ Նա իւր կաթուղիկոսութեան ժամանակ մաքառեցաւ Թոնդրակեան աղանդաւորների դէմ, որոնք Յովհաննէս Պետմաբան կաթուղիկոսի ժամանակներից գործում էին մեր երկրում և շատ հետևողներ ունէին։ (Այս աղանդի մասին յետոյ կը խօսինք)։ Այս աղանդը ջնջելու համար Սարգիս կաթուղիկոսը 1002 թուին Հարքում ժողով գումարեց, որ բանադրից աղանդաւորներին, նրանց կուսակից Յակովը եպիսկոպոսին կարգալոյծ արաւ ու բանդարկեց։

Ծերութեան պատճառով Սարգիս կաթուղիկոսը հրաժարուեցաւ և իրեն փոխանորդ ձեռնադրեց Աչիկ կաթուղիկոսի եղբօրը Պետրոս եպիսկոպոսին, որ Գետադարձ է կոչվում, Գագիկ Ա. Թագաւորի հաւանութեամբ, որ 1020 թուին վախճանեցաւ։ Յաջորդ տարին (1021 թ.) մնաւ և Սարգիս կաթուղիկոսը և թագուեցաւ Հոռոմոսի վանքում։

ԺԶ. ԳԼՈՒԽ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ.

ՊԵՏՐՈՍ ԵՒ ԽԱՉԻԿ Բ.

1. Ծանր ու աղէտալից եղաւ մեր հայրենիքի ու եկեղեցու վիճակը ԺԱ. դարի երկրորդ քառորդից սկսած. քայքայուեցաւ, տարափեր եղաւ հայ ժողովուրդը հայրենի երկրից. երկիրն աւերակներով լցուեցաւ. Թագաւորական իշխանութիւնն ընկաւ, իսկ հայրապետականը—յետին վտանգութեան հասաւ։ Այս թշուառութիւնների պատճառ որչափ և արտաքին հանգամանքներն եղան, նոյնչափ էլ մեր ազ-

գային գործիչները՝ կաթուղիկոսից ու Թագաւորից սկսած, որոնք իրենց արծաթասիրութեամբ, իրենց անձնական շահերի ու անդորրութեան ձգտումով՝ մեծապէս նպաստեցին մեր հայրենիքի թշնամիներին և սուգ ու աւեր բերին։ Մեր հայրենի երկիրը պաշտպանելու փոխանակ՝ մեր իշխանները ս. Գրքի ու մեծն Ներսէսի կեղծ մարգարէութիւններով էին զբաղուած և հասած թշուառութիւններն Աստուածային պատուհաս համարելով՝ կամ անգործ էին նստում և կամ թշնամուն թողնելով իրենց հայրենի բնագաւառը, տունն ու տեղը՝ գաղթում գնում էին օտար երկիրներ։ Այս ազգակործան ուղղութեան առաջին օրինակը յոյց տուեց վասպուրականի Սենեքերիմ Թագաւորը, որ 1016 թուին Սելճուգեան թուրքերի յարձակմունքներից վհատած և եսայի մարգարէի ու մեծն Ներսէսի կանխատեսութեան ընթերցումից այն եզրակացութեան հասած, թէ այդ ազգից իշխանութիւններ պիտի կործանուին, իւր Դաւիթ որդուն Պօլիս վասիլ կայսեր մօտ ուղարկեց և իւր երկիրը նրան յանձնելով՝ փոխարէնը ստացաւ Սեբաստիա քաղաքը իւր շրջականերով։ Եւ ահա չորս հարիւր հազար հոգի հայեր Թողուցին իրենց հողն ու ջուրը և գաղթեցին Փոքր Ասիա, ուր շինեցին նաև Ակն ու Արարկիր քաղաքները (1021 թ.)։

2. Մի այսպիսի ծանր ժամանակ կաթուղիկոս դարձաւ Պետրոս Գետադարձը (1019—1058), որ իւր դիրքով, փառութեամբ ու հեղինակութեամբ կարող էր շատ դժբախտութիւնների առաջն առնել, բայց արծաթասիրութեամբ մոլուած ինքն էլ չարիքների պատճառ դարձաւ։

Նրա հայրապետութեան երկրորդ տարին մի ընտանի պատերազմ ծագեցաւ (1020 թ.). դժբախտութիւնն այն էր, որ անդրանկութեան իրաւունքով Հայոց Թագաւոր դարձաւ տարտամ, հեղգ, թուլամորթ, քաջութիւնից խոպան զուրկ Յովհաննէս—Սմբատը, իսկ նրա քաջ, զօրաւոր, պատերազմների մէջ անպարտելի Աշոտ եղբայրը, ժամանակի պահանջների համապատասխան անձնաւորութիւնը՝ զրկուեցաւ գահից իրրև կրտսեր։

Թագաւորական աթոռը ձեռք ձգելու համար Աշոտը եղբօր դէմ դուրս եկաւ պատերազմով ու յաղթեց. բայց իշխանների ու եկեղեցականութեան համակրութիւնը Սմբատի կողմն էր։ Պետրոս կաթուղիկոսն ու իշխաններն երկու եղբայրներին հաշտեցրին այն պայմանով, որ Սմբատից յետոյ Թագաւոր դառնայ Աշոտը. և սա ակամայ հաշտուեցաւ իւր վիճակի հետ և անձնատուր եղաւ զեղմութեան։ Այս ներքին խռովութիւնից յետոյ մի նոր դէպք պատահեցաւ, որ կարևոր նշանակութիւն ունեցաւ մեր ազգային կեանքի համար։ Վրաց Գէորգի Թագաւորը Յովհաննէս Սմբատի խորհրդակցութեամբ ու գոր-

ծակցութեամբ Յունաց Վասիլ թագաւորից ապստամբեցաւ (1022 թ.)։ Այս ապստամբութիւնը զսպելու համար Վասիլը կարին եկաւ և աւերեց Դէոդիի գաւառներն ու հեռացաւ Տրապիզոն (Խաղտեաց երկիրը)։ Յովհաննէս—Սմբատը վախենալով որ մի գուցէ իւր երկիրն ևս Վասիլի բարկութեան ենթարկուի, 1022 թուին մեծ շքով Պետրոս կաթուղիկոսին Վասիլի մօտ ուղարկեց սիրաշահելու համար. միևնգամայն, ինչպէս ասում են, պատուիրեց՝ իւր կողմից Անին Յունաց յանձնելու խուզէթ տալ, եթէ կայսրը յօժարի պաշտպանել իրեն թշնամիներից։ Պետրոս կաթուղիկոսը մեծ բազմութեամբ, որոնց մէջ էր և Յովհաննէս Կողեոն վարդապետը, ներկայացաւ Վասիլ կայսեր և սիրով ընդունուեցաւ։ Այս տեսակցութեան ժամանակ ահա գրուեցաւ «Հայոց աշխարհի կորստեան պերն ու նամակը» (Լաստ. ը.) և կայսրը խոստացաւ չվնասել Հայոց երկրին, այլ պաշտպանել։ Այս ժամանակ (1023 թ. յունուար.) Պետրոս կաթուղիկոսը կայսեր ներկայութեամբ կատարեց նաև Քրիստոսի մկրտութեան ծոնը Ճորոխ գետի վրայ, որ մանրամասն նկարագրուած է մեր պատմիչներից. աւանդւում է, թէ երբ Հայոց հայրապետը մեռոնը ջուրը կաթեցրեց և ս. Խաչն երեք անգամ ջրի մէջ մտցրեց, սաստիկ լոյս փայլեց և գետն իւր ընթացքը դադարեցրեց. այս իսկ պատճառով Պետրոս կաթուղիկոսը Գետադարձ կոչուեցաւ։

3. Կայսեր ընծաներով վարձատրուած՝ Պետրոսը Հայաստան վերադարձաւ և 1024 թուերին գնաց Սերաստիոյ Սենեքերիմ թագաւորի մօտ և այստեղ մնաց մինչև 1029 թիւը, երբ առժամանակ կարսի Աբաս թագաւորի մահուան առթիւ Անի դարձաւ։ Բայց տեսնելով որ Յովհաննէս թագաւորը, իշխաններն ու քահանաները խէթ աչքով են իր վրայ նայում, թողեց Անին և ծածկաբար վասպուրական գնաց Յոյն կառավարիչների մօտ և այստեղ Ջորոյ վանքում մնաց չորս տարի (1034 թ.)։ Թագաւորի ու իշխանների թշնամանալը Պետրոսի հետ սրա խոստափումը կարծել է տալիս, թէ Պետրոսը Վասիլ կայսեր հետ տեսնուելիս՝ իր իրաւունքից աւելի բարձր գործ էր կատարել։

Սմբատ թագաւորն ու հայ իշխանները շարունակ նամակներ գրեցին Պետրոս կաթուղիկոսին խնդրելով, որ Անի վերադառնայ. նրանք դիմեցին նոյն իսկ յոյն իշխաններին, որ տէր Պետրոսին համոզեն իրանց խնդիրը կատարելու. և կաթուղիկոսը վստահացած 1034 թուին Անի դարձաւ։ Բայց դեռ քաղաք մտած չէր, երբ թագաւորի հրամանով կալանաւորուեցաւ ու Բջնի ամրոցը տարուեցաւ, ուր և մնաց իբր բանտարկեալ մի տարի և 5 ամիս։

4. Պետրոսին այսպէս դահընկէց անելուց յետոյ Յովհաննէս-Սմբատի հաճութեամբ կաթուղիկոս ձեռնադրուեցաւ Սանահնի վանահայր՝

մեծ հռետոր ու գիտնական Դէոսկորոս եպիսկոպոսը (1034—1036), որը սակայն իբրև վանական խիստ մարդ չկարողացաւ եպիսկոպոսներից շատերի սիրտը գրաւել, որոնք արծաթասէր Պետրոսի ժամանակ առաւել ազատ էին իրանց զգում։ Դժբախտաբար Դէոսկորոսը կարծեց, թէ խստութեամբ կարող է դժգոհներին լռեցնել. ուստի և հալածանք հանեց նրանց դէմ, սակայն եկեղեցականները խիստ հակառակութիւն ցոյց տուին և նզովեցին թագաւորին ու իշխաններին, ժողովրդին էլ նրանց դէմ գրգռեցին։ Յովհաննէս-Սմբատը տեսնելով ժողովրդի խռովութիւնը, նամակ գրեց Պետրոս կաթուղիկոսին, որ կրկին իւր աթոռը դառնայ։ Եւ երբ յանձն չառաւ, դիմեցին Աղուանից Ձերունի Յովսէփ կաթուղիկոսի միջնորդութեան, որ Անի եկաւ և 1036 թուին դումարեց մի ժողով, ուր 4000 հոգի էին ներկայ։ Ժողովն ապօրինի ճանաչեց Դիոսկորոսի կաթուղիկոսանալը, որովհետև այդ եղել էր թագաւորի ու մի քանի իշխանների կամքով, զրկեց նրան իւր պատուից. ապօրէն ճանաչեց ձեռնադրածներին, բանադրեց և օրհնաւոր կաթուղիկոս հռչակեց կրկին Պետրոս Գետադարձին՝ հանելով նրան բանդից։

Գահընկէց լինելուց յետոյ Դիոսկորոսը կրկին դարձաւ իւր սիրելի Սանահին վանքը, ուր բազմաթիւ հասուն աշակերտներ ունէր և այնտեղ էլ վախճանեցաւ։

5. Այս դէպքերից երեք տարի յետոյ (1039 թ.) վախճանեցան Աշոտը ու Սմբատը, և մեր երկիրն երկու տարի առանց թագաւորի մնաց։ Դուրս եկան մի քանի դահավնդիր անձինք իրրև Հայոց թագաւորական իշխանութեան ժառանգորդներ. դրանց մէջ առաջինն էր յունաց Միքայէլ կայսրը, որ իւր իրաւունքը հիմնում էր Վասիլ կայսեր 1022 թուին տրուած թղթի վրայ։ Այս նամակի մասին պատմվում է, թէ Վասիլի եղբայր Կոստանդին կայսրը մեռնելիս յանձնում է հայոց հայրապետանոցի հիւրընկալ Կիրակոս քահանային՝ պատուիրելով տանել յանձնել նամակը Հայոց Յովհաննէս թագաւորին. բայց Կիրակոսը անձնական շահի ակնկալութեամբ պահում է նոյնը և Միքայէլ կայսեր յանձնում։ Այս դէպքն արձանագրելով՝ Լաստիվերտցին բացականչում է. «Ո՛վ դառն վաճառ. որքան մարդոց նա իւր անձը պատահական դարձրեց. որքան եկեղեցիներ այն վաճառի պատճառով աւերուեցան. որքան գաւառներ ամայի դարձան»։

Հայոց գահի միւս թեկնածուն էր Վեստ Սարգիսը, որը և արքունի գահակից էր յափշտակել և նոյն իսկ մաքառեցաւ Յունաց դէմ. միմիայն Պահլաւունի իշխանները միապէս երկուսին էլ հակառակ էին և նրանք թագաւորեցրին Աշոտի որդուն Գագիկին, որ դժբախտաբար ա-

ւելի սիրում էր կրօնական խնդիրներով զբաղուիլ, քան թէ քաղուածքներով պարապիլ։ Գագիկին կուսակից դարձաւ Պետրոս կաթուղիկոսն ևս որը և հանդիսաւորապէս նրան թագաւոր օծից (1042 թ.)։ Գետադարձի խիղճն երևի տանջում էր իւր կատարած գործի պատճառով և այժմ Գագիկին թագաւորեցնելով իւր մեղքն ուզում էր քաւել. բայց դժբախտաբար արծաթասիրութիւնը նրան կրկին կուրացրեց և գործել տուեց վերջին եպերելի գործը։ Կոստանդին Թ-րդը խաղաղ ճանապարհով Անիին տիրելու համար 1044 թուին Գագիկին Պօլիս հրաւիրեց։ Երիտասարդ թագաւորը վտանգը ղգալով չէր կամենում գնալ. բայց Վեստ Սարգիսը, ինչպէս և միւս նախարարները յորդորեցին Գագիկին կայսեր կամքը կատարել և Պետրոս Գետադարձի միջնորդութեամբ երդուեցան նրան հաւատարիմ մնալ ու Անին պահպանել։ Երիտասարդ թագաւորը գնաց. բայց հաւատուրացութեան երդում տուողները ղրժեցին իրենց խոստման. Վեստ Սարգիսը, Գրիգոր Մագիստրոսը և յատկապէս կաթուղիկոսը նենգեցին Գագիկին։ Կաթուղիկոսը սակարկութեան մէջ մտաւ Յունաց հետ Անին յանձնելու նկատմամբ և փոխով քաղաքի բանալիները Յունաց տուեցան։ Այսպէս վերջացաւ Բագրատունեաց թագաւորութիւնը, և այս՝ նրէ հայ մեծամեծների սիրտը չմորմոքեց, մորմոքեց հայ ղօրքի ու ժողովրդի սիրտը, որոնք լալիս էին իրանց թագաւորական աթոռն ու իրանց թագաւորին և անիծում նենգաւորներին։ Բայց դաւաճաններն էլ անդորրութիւն չգտան. Պետրոս Գետադարձը թէև կայսրից մեծամեծ ընծաներ առաջաւ, բայց չկարողացաւ երկար վայելել։ Անիի յոյն իշխանը 1048 թուին նրան հեռացրեց Արծն քաղաքը. այստեղ էլ երկար չմնաց. կայսեր հրամանով նրան կալանաւորեցին (1051 թ.) և Պօլիս ուղարկեցին, ուր առերես մեծ պատուով ընդունուեցաւ և իբրև պատուաւոր կալանաւոր 3—4 տարի մնաց մինչև որ Ատոմ Արծրունին յետաշխի առաջ նրան և Սեբաստիա տարաւ, ուր և 1058 թուին վախճանեցաւ։

6. Բագրատունեաց թագաւորութեան անկումից յետոյ մեր ընտանի երկրի վիճակն առաւել ևս վատթարացաւ։ Մի կողմից Յոյները աշխատեցան սպառել հայ ժողովրդին—հայ ղօրքը ցրուեցին, հայ ազնուական դասակարգը ոչնչացրին ու երկիրը կողոպտեցին—միւս կողմից էլ Սելճուգեան թուրքերն ամէն ինչ աւերեցին ու յափշտակեցին։ Այս դառնութեան օրերը սրտի խոր կսկիծով են նկարագրում մեր պատմիչները—Լաստիվերտցին, Ուռհայեցին ու Սմբատը. հայ ժողովրդի մարտիրոսութեան, սպառման ժամն էր հասել. և պատմում, բոլոր դէպքերին ականատես պատմիչ Լաստիվերտցին հառաչում է. «բոլոր աշխարհս խաղաղութեան մէջ է, մինչ միայն պերի, կալանա-

ւոր, սրակոտոր՝ տնաւեր... ուր է թագաւորական աթոռը, ուր զօրքերի բազմութիւնը, ուր հայրապետական մեծ ու հրաշալի Աթոռը, որքան դառը ժամանակի հանդիպեցանք»։

Հայրապետական այդ խրթնացած աթոռի վրայ այս թշուառութեան ժամանակ բազմում էր տէր Յակիկ Բ. (1058—1064), Պետրոս կաթուղիկոսի քեռորդին, որ 1049 թուին տեղապահ էր նշանակուած։

Կոստանդին Ժ-րդ Տուկիծ կայսրը (1059 թ.) լսելով Պետրոս Գետադարձի մահը, անմիջապէս Յակիկ կաթուղիկոսին Պօլիս կոչեց և սկսաւ ամենայն խստութեամբ նրանից Պետրոսի դանձերը պահանջել, որովհետև կարծում էր, թէ Հայոց թագաւորի հարստութեան մեկը մասը նրա մօտ էր։ Յակիկ կաթուղիկոսը ամէն կերպ աշխատեց համոզել, որ ինքը գանձ չունի, բայց կայսրը չհամոզուեցաւ. նա Յակիկի վրայ տարեկան ծանր հարկ դրեց, կաթուղիկոսն այդ ևս մերժեց չնայելով կայսեր սպառնալիքներին։ Այսպիսի պարագաների մէջ նա երեք տարի տատիպուեցաւ Պօլսում մնալ և միայն հայ իշխանների շնորհիւ ազատուեցաւ, որոնք նրա փոխարէն կայսեր մեծ գումար տուին։ Բայց Յակիկը Անի չեկաւ, այլ Փոքր Հայքի Թաւբլուր աւանը դնաց և յիշելով Հայրապետական աթոռի երբեմնի փառաւոր վիճակն ու այժմեան անշքութիւնն ու աղքատութիւնը, ոլորելով Բագրատունեաց թագաւորութեան անկումը՝ իւր առաջարկից կեանքը կնքեց։

Երբ Յակիկ կաթուղիկոսը տակաւին Պօլիս էր, Տուկիծը կամեցաւ դէպքից օգտուել և հայ ու յոյն եկեղեցիների միութիւնը գլուխ բերել, որպէս զի հայ թագաւորական իշխանութեան վերացման հետ միաժամանակ և հոգևոր իշխանութիւնը վերանայ։ Դաւանափոխութեան գործը նա իշխաններից կամեցաւ սկսել, և Պօլիս կոչեց Ատոմ ու Աբուսահլ Արծրունի իշխաններին, որոնք և իրենց հետ տարին Յակովբ Սանահնեցի վարդապետին։ Պօլսում կրօնական վիճաբանութիւն եղաւ և Յակովբ վարդապետը բոլոր հայ եկեղեցու կողմից միութեան թուղթ տուեց։ Գահաղուրկ Գագիկը երբ այս իմացաւ, յայտնեց Տուկիծ կայսեր թէ մի վարդապետի կարծիք այդպիսի խնդրի մէջ նշանակութիւն չունի. և ինքը 1060 թուին մեծ վիճաբանութիւն ունեցաւ յոյն վարդապետների հետ՝ պաշտպանելով հայ եկեղեցու դաւանութիւնը և միութեան առաջարկը մերժելով։ Այս վիճաբանութիւնը մանրամասն նկարագրում է Ուռհայեցին։

Այս կրօնական վիճաբանութիւնն աւելի ևս գրգռեց Յոյներին Հայերի դէմ, և այնուհետև որ յոյն քաղաքի մէջ որ մի հայ էր պատահում, սաստիկ չարչարանքներ էր կրում. Հայը ամենավատ ազգն էր Յոյնի համար և ամէն տեսակ զրկանքների արժանի։

ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ

Ա. յօդուած

ՀԱՅՈՑ ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Զ—ԺԲ դար.

1. Ե-րդ դարի Հայոց գրականութեան կրօնական ուղղութիւնը ժամանակի պահանջի բնական արդասիք էր. տառերի գիւտով Սահակ Պարթեւն ու Մաշտոց վարդապետը կամեցան հայ ժողովրդին կրօնապէս կրթել, քրիստոնէական բարոյական գաղափարները նրա մէջ հաստատել. և նրանք իրենց նպատակին հասան. նրանց դաստիարակած սերունդն էր, որ 451 թուի պատերազմում իւր կեանքը զոհեց հայ եկեղեցու և ազգի փրկութեան համար:

Մեր գրականութեան եկեղեցական բնաւորութիւնը Ե-րդ դարից յետոյ ևս շարունակուեցաւ, բայց ոչ այնքան իբրև հայ ազգի կեանքի ընդհանուր պահանջների հետևանք, որքան հարց եկեղեցին պաշտպանելու համար քաղկեդոնականների, նեստորականների ու պատկիկհանների դէմ, որոնք աշխատում էին իրենց հետևողներ վաստակել մեր երկրում: Մինչդեռ Ե դարի գրականութիւնը մեկնական—բարոյախրատական ուղղութիւն ունի, ուստի և բովանդակում է նաև սրբախօսական ու վարքագրական գրուածներ՝ իբրև մարմնացումն քրիստոնէական առաքինութիւնների, նոր շրջանի եկեղեցական գրականութիւնը վիճական—վերացական բնաւորութիւն ունի:

Բայց ժողովրդին կարելի չէր միմիայն կրօնական գրուածներով գոհացնել. պէտք էր նրա հարցասիրութեան ու հետաքրքրութեան ևս բաւականութիւն տալ, այս իսկ պատճառով մեր գրականութեան շրջանակը Զ դարից սկսած հետզհետէ ընդլայնում է: Ժողովրդի լուսաւորութեան գործն ու գրականութիւնը դարձեալ շարունակվում է կեդրոնացած միայն եկեղեցականների ձեռքը, բայց նոյն եկեղեցականներն աշխատում են բացի թարգմանական ու ինքնագիր կրօնական գրուածներից տալ նաև ժողովրդին վիպական (Անվաւերականք, Գալիլա և Դիմնա. Աղեքս. Մակեդոնացի. Եօթն իմաստ.), փիլիսոփայական (Արիստոտէլ, Սեկունդոս, Ազաբեդոն և այլն) և գիտական աշխատութիւններ՝ միշտ իհարկէ կրօնական գոյնով, ժողովրդի միտքը լուսաւորելու համար: Մեր գրականութեան այս կերպարանափոխութիւնը, որ յայտնի է հելլէնական շրջան անունով, կատարուեցաւ Զ-րդ դարի երկրորդ կէսից: Երկրորդ թարգմանիչների կամ հելլէնաբան մատենագիրների պատճառով արդարև մեր առաջին թարգմանիչների ընտիր լեզուն ազատաղուեցաւ՝ մեծապէս ընկնելով յունականի ազդեցութեան ոտկ, բայց դրա փոխարէն նա հարստացաւ. այդ շրջանում թարգմանուեցան կամ գրուեցան գրքեր, որոնք հայ ժողովրդին ծանօթութիւն էին տալիս ընական երևոյթների, բոյսերի ու կենդանիների մասին, աշխարհիս այլևայլ մասերի լինչպէս և փիլիսոփայութեան, քերականութեան, թուաբանութեան և այլ գիտութիւնների մասին: Մեր միապաղաղ կրօնական գրականութիւնը պէսպէսութիւն ստացաւ, և հայ լեզուն էլ նոր գաղափարներ արտայայտելու համար նորահնար բառերով ճոխութիւն ու ազդմութիւն:

2. Գրականութեան փոփոխութեան հետ հայ դպրոցների ուսման ընթացքն ևս փոխվում է: Հայոց դպրոցներն երկու կարգի էին բաժանւում. տարրական դպրոցները գտնվում էին գիւղերում կամ քաղաքներում քահանաների հսկողութեան տակ, իսկ բարձրագոյն դպրոցները վանքերում (կանոնք Ներ. Դև. Ե.): Տարրական դպրոցներում ուսուցանում էին դրել- կարդալ. նախ կարդում էին Սաղմոսը, որ բերան էին սովորում, ապա Աւետարանն ու Հին կտակարանի գրքերը. ուսուցանում էին նոյնպէս առօրեայ կանոնները, նշանները (հռետորական ու տրամաբանական) և այդ գիտութիւնը կոչվում էր «իմաստութիւն երդողական տառից» (Փարպ.): Այս գիտութիւններն աւանդվում էին Ե-րդ դարում և շարունակուեցան աւանդուել նաև յաջորդ դարերում: Բարձր դպրոցները, ինչպէս ասացինք, վանքերում էին կեդրոնացած, որոնց թիւը ժամանակի ընթացքում բազմացաւ, և նրանցից դուրս եկան մեր գործիչ մատենագիրները: Վանքերից այս շրջանում մանաւանդ նշանաւոր եղան 1. Տաթևի վանքը՝ Սիւնեաց վարդապետարանը, որի մասին Սա. Օրբելեանը գրում է, թէ «նա հայոց բոլոր գիտուններին գլուխն էր. ինչպէս Աթէնքը՝ Յունաց և Հռովմայեցիների մէջ». և ըստ աւանդութեան՝ Սահակ Պարթեւն ու Մաշտոց վարդապետն այս դպրոցին էին յատկացրել ս. Գիրքը մեկնելու իրաւունքը: Այս դպրոցը առաւել նշանաւոր դարձաւ Թ դարում և այդ ժամանակի համար (895 թ.) նոյն Ուռպէլեանն ասում է, թէ մենաստանը լի էր «երաժշտական երգերի փիլիսոփաններով. ճոխ էր վարժարանը վարդապետական կրթութեամբ, նաև նկարիչ ու գրող արուեստաւորներով»: 2. Մաքենաց վանքը Գեղարքունիքում. 3. Աբշարուհաց վարդապետարանը՝ Վարդիկ հայր կոչուած: 4. Սևանայ վանքը՝ ուր էր «բազմութիւն գրոց սրբոց» (Ա.). 5. Ժ դարում՝ Կամրջաձո-

րոյ, Հռոմոսի ու Նարեկայ վանքը. իսկ ԺԱ. դարում Սանահին ու Հաղբատ վանքերը՝ որոնց մատենադարանն ամենափարթամ գանձարան էր և որտեղից դուրս եկան շատ նշանաւոր գրողներ։

Վանական դպրոցներում նախնադար շարունակվում էր ս. Գրքի ուսումը մեկնութեամբ հանդերձ և ս. Հարց գրուածների ընթերցմունքը, թերևս նաև յունարէն լեզուի ուսմունքը. այսպէս էր նաև ուսման ուղղութիւնը Զ դարի սկզբներում Յունաց ու Ասորւոց մէջ, որոնց մատուռական շարժումը միշտ անդրադառնում էր Հայոց երկրում։ Զ դարի երկրորդ կէսից մեր դպրոցներում, ինչպէս և միաբնակ Ասորւոց մօտ, բայց փոքր ինչ առաջ, սկսւում է Արիստոտէլի փիլիսոփայութեան, ինչպէս և նրան կից՝ հռետորութեան ու քերթողութեան (поэтика) ուսուցումը. այս ժամանակներից բազմանում են մեր մէջ հռետորքերթող վարդապետներ։ Հռետորութեան ու քերթողութեան ուսուցումը մեծապէս ազդում է ոսկեդարեան հայ լեզուի վերայ. յունարէնի հետևողութեամբ նոր նոր բառեր են կերտւում. սիրում են բառակոյտ, պատկերաւոր դարձուածների խառացումն, երկար ու բարդ բառերի գործածութիւն և այլն։

Արիստոտէլի փիլիսոփայութեան ուսումնասիրութիւնը կատարվում էր հայ թարգմանութեամբ, որ հաւանօրէն կատարուեցաւ է դարի առաջին մասում. բառացի ու սրբական թարգմանութիւնը ցոյց է տալիս, որ Դաւիթ փիլիսոփայ թարգմանչին ևս Արիստոտէլի մատծողութիւնը տակաւին պարզ ու ընտել չէր, որով և թարգմանութիւնը հայկի չեղաւ։—Հռետորութեան դասագիրք դարձաւ Մովսէս քերթողի Պիտոյից գիրքը, որ իսկապէս յունաց դպրոցներում գործածուող Հերմոգենի աշխատութեան փոխադրութիւնն է, այլևայլ հեղինակներից ևս յաւելուածներ առած։ Հռետորութեան հետ սերտ կապուած էր և Առակախօսութիւնը, և այդ ժամանակներում (է դարում) թարգմանուեցան Ողիմպիանի առակները—Եզովբևանի մշակումը։

Մեծ գիտութիւնը, որ է դարում մեր դպրոցներում մտաւ, այդ Քերականութիւնն է։ Ե դարի մեր առաջին թարգմանիչները քերականութիւն կազմեցին թէ ոչ՝ հաստատապէս չենք կարող ասել, թէև քերականական բացատրութիւններ կան Կիւրեղ Աղեքսանդրացու ոսկեդարեան թարգմանութեան մէջ։ Զ դարի վերջերում այդ գիտութեան առաջին հեղինակ հանդիսանում է նոյն Մովսէս քերթողը, որ դրեց Բան իմաստութեան երդողական տաղից և Մեկնութիւն քերականին։ Վերջին աշխատութիւնը Դիոնեսիոս Թրակացու յոյն լեզուի ձեռականութեան թարգմանութիւնն ու մեկնութիւնն է։ Այս քերականութիւնն իսկապէս հիմք դրեց հայ լեզուի հելլենացման։ Նոյն քերականութիւնը Զ դարի կէսերին առաջնորդ դարձաւ նաև ասորական

լեզուի քերականութեան։

Է դարի երկրորդ կէսից մտնում են նաև մեր դպրոցներում Թուաբանութիւն ու Աստղաբաշխութիւն Անանիա Շիրակացու ձեռքով, որը և գրում է այդ գիտութեանց վերաբերեալ գրուածքներ. նա գրում է նաև հայ լեզուով առաջին Աշխարհագրութիւնը, Խորենացուն վերագրուած։ Վերջապէս կարևոր գիտութիւն էր և Երաժշտութիւնը և քաջ երաժիշտները «փիլիսոփայ» ևս կոչվում էին։

Ահա այս գիտութիւններն երկար դարերի ընթացքում աւանդուեցան մեր դպրոցներում, մանաւանդ՝ քերականութիւնը, հռետորութիւնն ու փիլիսոփայութիւնը, որ Արիստոտէլի վարդապետութեան մեկնութիւնն էր։ Իսկ կենդանաբանական ու բուսաբանական գիտութիւնների տղերքը կազմում էին Բարսեղի Վեցօրեայքը և Բարսեղ Խոսրովացու Ֆիզիոլոգը (Физіологъ), որ թարգմանուած է երևում Զ—է դարերում, որը Առակախօսութեան առատ տղերքը էր կազմում։

Վերոյիշեալ գիտութիւնները միմիայն եկեղեցականների պարապմունք էին։ Բայց Աբրաթայոց ազգեցութեան տակ Թ դարում բժշկութիւնն ևս մեր ըրականութեան մէջ մուտք է գտնում և առաջին աշխարհական բժիշկ հանդիսանում է սուն Յովհաննէս (870—880 թուերին)։ Թողնելով Հայոց գրականութեան պատմութեան խօսել գրականական բոլոր երևոյթների մասին, մենք այստեղ կը խօսինք միմիայն եկեղեցական մատենագիրների մասին, որոնք գործեցին Զ դարից մինչև ԺԲ դարը։

3. Ե դարի թարգմանական գործունէութիւնը Զ դարում ևս շարունակուեցաւ։ Բագրեւանդի ժողովի պատճառով յարուցուած վէճերն ու հայ եկեղեցու բաժանումը կարծես առաւել մեծ դրդիչներ եղան հայ եկեղեցականներին յունաց լեզուն ուսումնասիրելու և յունարէնից եկեղեցու ընծիր հայրերի գործերը թարգմանելու և իրենց միտքը վեցական մատծողութեամբ մարզելու, որ կարող լինին վիճաբանութիւնների ժամանակ Յունաց առարկութիւններին պատասխանել։ Հելլենաբան կամ երկրորդ, կրասեր թարգմանիչների շրջանը, ինչպէս արդէն ասացինք, սկսվում է Զ դարի երկրորդ կիսից, այն է՝ Ներսէս Բ-ի և Յովհան Գաբեղենացու (557—574) ժամանակներից (Փաւս. եր. 181), երբ Յուստինիանոսի քաղաքականութեան շնորհիւ հայ մտքի ու կեանքի հելլենացումն արագ արագ կատարուեցաւ։ Անշուշտ այս ժամանակներում թարգմանուեցան Գրիգոր Նիւսացու, Գրիգոր Սքանչելագործի, Աթանասի մի քանի ճառերը, Փիլոնի, Փիլոքսենի, Տիմոթէոսի և ուրիշների գործերը, որոնք առհասարակ, մանաւանդ Փիլոնը, մեր մատենագիրների վրայ մեծ ազդեցութիւն ունեցան։ Նոյն Զ դարի վերջին մասերում (590 թուին) Սամուէլ Անեցին (եր. 77) դնում

է նաև լազմաթիւ անվաւերական գրքերի թարգմանութիւնը, որոնցից մի քանիսը ցարդ մնացել են մեր գրականութեան մէջ։

Բուն ինքնագիր մատենագիր Զ դարում հանդիսանում է.

1. *Պետրոս Սիւնեաց եպիսկոպոսը* († 556), որ ժամանակագութիւն ունեցաւ իւր ժամանակի բոլոր եկեղեցական գործերին։ Նրա գրական գործերից, որոնք մասամբ կորած են, ինչպէս պատմութիւնը, այժմ յայտնի է. Գովեստ ի ս. Աստուածածինն գեղեցիկ ճառը (տպ. Աբրտ. 1902, եր. 88), ուր ս. Գրքի օրինակներով դրուատում է ս. Կոյսի վեհութիւնը։ Այս ճառը ազդեցութիւն է թողել մեր գրականութեան մէջ. մեր «Մեծացուսցէ» շարականները հետևողութիւն են սոյն գեղեցիկ ճառին։ Նոյն հեղինակ երկրորդ ճառն է Բրիսաոսի Ծննդեան վրայ—Ծնանի՝ Էմմանուէլ Աստուած մարդացեալ—որից սակայն միայն 6 տաուած է մնացել (Աբրտ. 1902)։ Պետրոսի անունով յիշվում են և ուրիշ գրուածներ—Բան հաւատոյ, Հարցմունք վաչագանայ,—բայց քննադատութիւնը ցոյց տուեց, թէ այդ գործերը յետին ժամանակի (Է—Թ դարերի) արդիւնքներ են։

2. *Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոսը*՝ ապա կաթուղիկոս, որ Աղուանից Վաչագան Թագաւորի խնդրով գրել է սրբոց նշխարները պատուելու և ննջեցելոց հոգիների համար աղօթք անելու մասին։ Ունի դաւանաբանական թղթեր, որոնք ամփոփուած են Թղթոց Գրքի մէջ։

3. *Ղազիր վարդապետ*։ Զ դարի առաջին մասում ապրում էր նաև Վարդանանց պատմութեան հեղինակը, որը բացի պատմական գործից գրել է նաև 1. Միանձանց ճառը, Փիլոնի «Հեսեանց» ճառի հետևողութեամբ. 2. Մեկնութիւն Հայրմերի. 3. Մեկնութիւն Աբարածոց և Դատաւորաց. 4. ի Զարէարանս Տեառն. 5. Յայտակերպութիւն Տեառն և այլն։ Այս ճառերը հռետորական ճոխութիւններ չեն ներկայացնում, այլ Աւետարանի մասերի հատուած-հատուած պարզ բնդլայնութիւններ, յարաստութիւններ են։ Այլակերպութեան ճառից երևում է, որ հեղինակն իւր ընկերների հետ եղել է նաև Պաղեստին. նա նկարագրում է Թափոր լեռն ու ճգնաւորների կեանքը։

Բացի այս գործերից ու թարգմանութիւններից՝ Զ դարում գրուեցան բազմաթիւ թղթեր դաւանական այլևայլ խնդիրների մասին (Բաբկէն, Ներսէս, Յովհան, Մովսէս և այլն), որոնք ամփոփուած են Գիրք թղթոցի մէջ, որը մեր ազգային պատմութեան համար մի կարևոր յիշատակարան է։

3. Է դարն անհամեմատ հարուստ է գրական գործերով. այդ դարը Քերթողների ու փիլիսոփաների դար է, որոնք հարստացրին մեր գրականութիւնը նոր բովանդակութեամբ, և նրանց

մատ բուն հելլէնաբան ոճի հեղինակներ ևս դարձան։ Բայց լեզուական այս նորամուծութիւնը, ինչպէս երևում է, հակառակութիւն է առաջ բերել նրանց դէմ բնականաբար գրագէտների մէջ և շատերը շարունակում են հայ բնիկ լեզուով հրապարակ հանել իրենց գործերը՝ մանաւանդ պատմականները։

Այս դարի հելլենաբան դպրոցի մեծաւոր ճոխութիւնն է ներկայացնում Մաշտոց կաթուղիկոսը իւր նամակի մէջ, երբ ասում է. «Նորոգւում էին հայ եկեղեցիները (Աբրահամ Ռշտունու ժամանակ) և պէսպէս գիտութիւնների առատութիւն էր, և գիտուններ շատ, և դպրոցները կանգուն, և յոյն բարբառին տեղեակներ և բազմաթիւ թարգմանիչներ (Աբրտ. 1902, եր. 749)։

Այս դարի առաջին մատենագիր հանդիսանում է *Վրթանէս քերթողը* (=շարսաղաւ), հայոց հայրապետութեան արթուն տեղապահը՝ հմուտ հայ և յոյն մատենագրութեան։ Հաւանօրէն Բագրատունեաց տոհմից էր և նպաստ Սմբատ Վրկան մարզպանին և Գիպ դաշակարին (Ակ. Հնդ. 1910)։ Վրթանէսի անունով դասվում են դաւանաբանական թղթեր, որ գրել նա Վրաց ու Աղուանից բաժանման առթիւ, որոնք տպուած են Գիրք թղթոցի մէջ։ Այդ թղթերի մէջ նա երևում է քաջ հմուտ ս. Գրքին ու եկեղեցու հայրերի վարդապետութեան, որոնց հիման վրայ և աշխատում է հայ եկեղեցու վարդապետութիւնը պաշտպանել։ Գրել է նաև Եփեսոսի ու Քաղկեդոնի ժողովի պատմութիւնը, որ վերագրվում է նոյնպէս Մամիկոնէից Աբրահամ եպիսկոպոսին։

Վրթանէսի անունով դասվում է և մի գիրք «Ընդդէմ Պատկերամարտից» անունով, ուր ս. Գրքի և ս. հայրերի վկայութիւններով հերքում է հայ պատկերամարտիկների վարդապետութիւնը, որոնք ուսուցանում էին, թէ պատկերներ Հայոց եկեղեցու մէջ չեն եղած ամենայն և թէ նրանց գործածութիւնը Պապ թագաւորի օրով Յոյներից է մտել։

Վրթանէսին ժամանակակից ու գործակից էր *Գրիգոր քերթողը*, որի անունով դասվում է մի թուղթ շատ մեծ լեզուով՝ ուղղուած Աբրահամ կաթուղիկոսին (Թղթոց Գիրք)։ Այս թղթի մէջ հեղինակը Աբրահամ կաթուղիկոսի ներողամիտ ընթացքը քաղկեդոնականներից կանգնուած եկեղեցական սեղանների վերաբերմամբ և այն դաղափարն է պաշտպանում, թէ ինչպէս որ պէտք է վախչել քաղկեդոնականների և ուրիշների հետ հոգևոր հաղորդակցութիւն ունենալուց, այնպէս և նրանց սեղանները կործանել և փոխել։ Ուրիշ գործ սրա անունով չի յիշատակվում։

2. *Կոմիտաս կաթուղիկոսը* հանդիսանում է է դարի քերթող մատենագիրներից մէկը։ Նրա անունով դասվում են դաւանական թղթ-

թեր՝ «Վանն հաւատոյ» և «Զրոյցք ընդ պատրիարքին Հոռոմոց». վերջինս անվաւերական է։ Առաւել նշանաւոր է Կնիք Հաւատոյ ընդարձակ գրուածքը, ուր բերուած են մինչև է դար ապրող յոյն և հայ հեղինակների գրուածներից համառօտ կամ ընդարձակ հատուածներ՝ հայ եկեղեցու ուղղափառ դաւանութիւնը պաշտպանելու համար։ Այս գրուածքը շատ կարևոր գործ է. այնտեղ բերուած են հատուածներ Եղնիկից, Յովհան Մանդակունու և Յովհան Մայրագոմեցու այնպիսի գրուածներից, որոնք այժմ կորսուած են։ Կոմիտաս կաթուղիկոսը յայտնի է և «Անձինք նուիրեալք» գեղեցիկ բանաստեղծութեամբ, ուր գրուատում է Հռիփսիմեանց կոյսերի վկայութիւնն ու կատարած գործերը և որը գրել է ս. Հռիփսիմեանց վանքի նորոգութեան առթիւ (615—16 թուերին)։

3. Կոմիտաս կաթուղիկոսի ու նրա յաջորդի ժամանակ նշանաւոր հանդիսացաւ Մաշտոցեան վարդապետը, որին Ստեփանոս Ասողիկը կոչում է «մեծ քերթող և անյաղթ փիլիսոփայ»։ Նա Սիւնեաց վարդապետարանի տեսուչ և ուսուցիչ էր։ Մաշտոցեայի գրաւոր գործերից մեզ է հասել միայն «Հաւատոյ դաւանութեան» թուղթը, որ եղել է կաթուղիկոսի կողմից Հերակլ թագաւորին գրից, և որի մէջ ջերմագին հայ եկեղեցու մի բնութեան վարդապետութիւնն է պաշտպանում։ Դպրոցական բազմազբաղ գործերի պատճառով Մաշտոցեան, երևի, այլ գրաւոր աշխատանքներ հեղինակելու ժամանակ չէ ունեցել։

4. Նշանաւոր հեղինակ է հանդիսանում Յովհան Մայրավանեցին կամ Մայրագոմեցին՝ պատուած ճգնաւոր և խոստովանող կոչումներով։ Նա եղաւ հայոց հայրապետութեան տեղապահը Կոմիտաս կաթուղիկոսի ժամանակ։ Կարնի ժողովի պատճառով եղբի հետ դժտութեան յետոյ՝ Յովհան վարդապետը նախ Մայրից վանքը քաշուեցաւ, և այնտեղից էլ՝ Աղուանից երկիրը, և այս առանձնութեան ժամանակ գրեց պատմիչների (Ասողիկ, Վարդան) ասելով երեք գրքեր—Քրատ վարուց, Հաւատարմատ և Նոյեմակ—որոնց մէջ որպէս թէ մոլորութիւններ են եղել և այդ պատճառով էլ ոչնչացուել են։ Քրատ վարուց գրքի մասերը կազմում են անշուշտ այն մի քանի ճառերը, որոնք այժմ Մանդակունու անունով տպուած են, իսկ ձեռագրերի մէջ՝ Մայրավանեցու անունն են կրում։ Իսկ Հաւատարմատի հատուածներ են անշուշտ այն կտորները, որ Կոմիտաս կաթուղիկոսը բերում է իւր Կնիք Հաւատոյ գրուածում։

5. Հելլենաբան դպրոցի իսկական հիմնադիրը հանդիսանում է Մովսէս Խորխորունեաց եպիսկոպոսը՝ Մաշտոց եպիսկոպոսի յաջորդն

ու աշակերտը, հաւանօրէն ծանօթ Մովսէս Խորենացին*) կամ քերթողահայրը (+639 թ.)։ Է դարի սկզբում 608 թուին յունաբաժին միւս հայ եպիսկոպոսների հետ սա ևս եկաւ Նորընտիր Աբրահամ կաթուղիկոսին իւր հպատակութիւնը յայտնելու։ Անշուշտ այս թուականից յետոյ է գրել նա Հայոց պատմութիւնը Սահակ Բագրատունու խնդրանօք, որ հաւանօրէն այս ժամանակներում յիշատակուած Վարազ-Սահակ իշխանն է՝ միւս Բագրատունների նման Պարսից հակառակ և նրանց ժողովրդական առասպելները սիրող (Խոր. Ա. Գլ.)։ Յայտնի է որ Զ դարի վերջերում Խոսրով Նուշիրվանի հրամանով Պարսից ժողովրդական դիւցազնական վէպերից Պարսից պատմութիւնը հիւսուեցաւ։ Այս հանգամանքն ուներ Սահակ Բագրատունուն ևս դրդեց Մովսէս եպիսկոպոսից իւրև քերթողից խնդրելու՝ հայոց դիւցազնական պատմութիւնը գրելու և նա յանձն առաւ այդ ծանր գործը ու աշխատեց ներկայացնել հայ աշխարհի քաջութեան դէպքերը հիւսելով հայ ժողովրդի վէպերից։ Բայց այդ գործերը նա ներկայացնում է քերթողաբար, այսինքն՝ կռկելով ու զարդարելով՝ ինչպէս որ էր ժամանակի ճաշակը Հայոց ու Յունաց մէջ և ոչ մէկ անպաճոյճ կերպով. այս իսկ պատճառով նա յանդիմանում է Սահակ Բագրատունուն, որ անպաճոյճ ու անսեթևեթ առասպելները էր սիրում և ոչ յունականների նման ողորկ առասպելներ։ Իրողութիւնների այս զարդումը կապ ունի հռետորականութեան հետ և Խորենացին առաջինն եղաւ, որ աշխատեց մեր երկրում հռետորութիւնը մտցնել և գրեց իւր Պէտքը, որ Աբդոնիոսի ու Հերմոգէնի գործերի թարգմանութիւնն է։

Խորենացին ունի և ուրիշ գործեր։ Սահակ Արծրունի իշխանը՝ Սմբատ Բագրատունու ու Վարազ-Սահակի ժամանակակիցը (Սեբ.) առանձին նամակով դիմեց Խորենացուն և կոչելով նրան երկրորդ Սահակ ու Մեսրովը՝ խնդրեց Հոգեաց վանքի Տիրամօր պատկերի պատմութիւնը գրել, և Խորենացին գրեց «Պատմութիւն սրբուհւոյ Աստուածածնի և պատկերի նորա» գործը։ Ունի նաև Հռիփսիմեանց պատմութիւնը, ներբող ի ս. Հռիփսիմէ, ճառ վարդավառի, ի Տապանակ Տեառն, Քրիստոսի մի բնութեան մասին դաւանաբանութիւն (Գիրք Թղթ. եր. 22), այսպէս նաև քերականութիւն։ Խորենացու ճառերը գուտ հռետորական յատկութիւն ունին և տարբերվում են եղիշէի գործերից։ Իբրև քերդող ունի շարականներ, որոնք մինչև այժմ էլ մեր եկեղեցում երգւում են. այսպէս՝ Ճրագալոյցի «Ուրախացիրը», Տեառնընդառաջի շարականը և Խորհուրդ մեծը, որ Գրիգոր Աստուածա-

*) Խորենացի բառը կարծում ենք թէ Խորխորունեաց բառի կրճատուած է։

բանի Քրիստոսի ծննդեան վրայ դրած ճառին նմանութիւն ունի, ևս և Մեծացուսցէների մի մասը։ Խորենացին վախճանած է 639 թուին. նրան յաջորդից Յովհաննէս Գրիգոր եպիսկոպոսը։ (Կանոնք Շինողի։)

Զ և է դարերում միաբնակ ասորիների ձեռքով (Փիլոքսէն, Պաւղէ) կատարուեցաւ Աստուածաշնչի ասորական Փեշիտոյ (=պարզ) թարգմանութեան սրբագրութիւնը, կամ նոր թարգմանութիւնը Եօթանասնից ու Որոգինէսի Վեցիվեանի համեմատութեամբ։ Նոյն դարերում մի այդպիսի ձգտումն եղած է երևում նաև Հայոց մէջ. Թէոդորոս Բաթենաւոր վարդապետը պարզորոշ յիշատակում է, թէ Մայրագոմեցիները անընդունակ համարելով Աւետարանի հին թարգմանութիւնը է դարում նորից թարգմանեցին, որը և կոչած է նորաբեր թարգմանութիւն, և որը այժմ գոյութիւն չունի։ Հաւանօրէն ս. Գրքի հին հայ թարգմանութեան և յունարէն թարգմանութիւնների համեմատական ուսումնասիրութիւնը կատարելու համար Մովսէս Խորենացին իւր վարժապետ Մաշտոցի կողմից ուղարկուել է միաբնակութեան նշանաւոր կեդրոն Աղեքսանդրիա։ Թէ ինչ եղաւ այս ուսումնասիրութեան արդիւնքը, մեզ որոշ յայտնի չէ։

6. Խորենացու կրտսեր եղբայր է համարւում Մամբրէն, որ վերծանող (=ընթերցող) է կոչւում։ Մեր պատմիչները նրան երբորդ փիլիսոփայ են անուանում, թէև նրա անունով փիլիսոփայական գործ մնացած չէ. նա ունի երկու ճառ. «ի Յարութիւնն Ղազարու» և «ի Գալուստ Տեառն յերուսաղէմ»։ Այս ճառերը պարզ են եղիշէի ոճով գրուած. բայց տեղ-տեղ ունին գեղեցիկ հռետորական ձևեր։ Քրիստոսի բնութեան ներգործութեանց մասին արտայայտած գաղափարները ցոյց են տալիս, որ գրուել են է դարի երկրորդ մասում, երբ միակամեայց վարդապետութիւնն էր իշխում։

7. Դաւիթ Անյաղթը՝ Մովսէսի ու Մամբրէի ազգականը, հելլենաբան դպրոցի իսկական ներկայացուցիչն է և միանգամայն առաջին հայ փիլիսոփան։ Իւր ծննդեան տեղով կոչվում է նաև Տարօնեցի կամ Հարքացի։ Անյաղթը մեռած է երևում է դարի վերջին մասում՝ 690 թուերին։ Բացի Արիստոտէլի գործերի թարգմանութիւնից, նրանց մեկնութիւնից ու Սահմանաց գրքից՝ Դաւիթը թողել է և կրօնական գրուածներ, որոնցից պէտք է յիշել Յաչի ներբողը՝ գրուած իւր ժամանակի պատկերամարտիկների ու Պաւղիկեանների դէմ, որոնք ինչպէս յայտնի է, ս. Յաչի երկրպագութիւնն մերժում էին։ Իբրև ներբող ընտիր է. Յաչը պատկերացվում է իբրև մեծ սրբութիւն. Յաչը նըկատվում է իբրև լրումն Հին կտակարանի բոլոր օրինակների. նա մի տապան է, որով կարելի է աշխարհիս մեղքերի ծփական ալիքնե-

րից փրկուել, մի գաւազան՝ որով քարացեալ սրտերն են պատռտվում և արտասուքի գետեր հոսեցնում։ Ս. Յաչին երկրպագողը հոգեկան աչքով պէտք է նկատէ, թէ ահա Միածինը նրա վրայ բաղկատարած քևեռուած է, և նրա կենարար ս. Արիւնը աշխարհիս փրկութեան համար է ցնցղվում։

Դաւիթը ունի նաև «Վասն մարդեղութեան Քրիստոսի և ընդդէմ հերձուածողաց, կամ՝ Բան հաւատոյ ի մարմնաւորութիւնն Քրիստոսի» համառօտ գործերը, որոնց մէջ պաշտպանում է հայոց եկեղեցու դաւանութիւնը։ Նրանն են նաև Հարցումն Դաւթի Իմաստասիրի՝ Քրիստոսի ներգործութեանց վրայ և Գովեստ ներբողական ի ս. Եկեղեցի և այլն և այլն։ Դաւիթ Իմաստասէրն իւր գրուածներով մեծ անուն հանեց մեր գրականութեան մէջ և յաջորդ դարերի մատենագիրները նրա գրուածներից մեծ քաղուածներ են բերում՝ կոչելով նրան Անյաղթ, հռամեծ փիլիսոփայ։ Թէ Մովսէսի և թէ Դաւթի մասին բաւական շատ զրոյցներ են պատմվում, որոնց մէջ գրուատվում է նրանց իմաստութիւնն ու հանճարը, և թէ ինչպէս նրանք յոյն իմաստասէրներին յաղթեցին։

8. Դաւիթ փիլիսոփային ժամանակակից էր է դարի մեւս մատենագիր Անանիա Շիրակացին, որ առաւել նշանաւոր դարձաւ իբրև համարող և որն առաջին անգամ թուաբանական ու նրան յարակից դիտութիւնները—Աստղաբաշխութիւն, Աշխարհագրութիւն և այլն—մացրեց մեր երկիրը։ Իւր ինքնակենսագրութեան մէջ նա գանգատվում է, թէ հայերը թուաբանական դիտութիւններ չեն սիրում. շատերն են նրան աշակերտել, բայց և շուտով հեռացել՝ այդ դիտութիւնն արհամարհելով։ Բացի տոմարական, թուաբանական, պատմական գրութիւններից՝ Անանիա Շիրակացին թողել է նաև կրօնական ճառեր, որոնցից յատկապէս պէտք է յիշել «ի Յայտնութիւն Տեառն» ճառը, ուր պաշտպանում է նա հայոց եկեղեցու Քրիստոսի Ծնունդն ու Մկրտութիւնը միասին տօնելու սովորութիւնը։ Գրել է նաև Յարութեան, Համբարձման և Պենտեկոստէի շարականները, որոնք այժմ չեն գործածվում։ Վերջապէս գրել է ս. Գրքի դասաւորութեան և նորա տերների թուի մասին (Հնդ. 1908 եր. 20), որ կարևոր է ս. Գրքի ուսումնասիրութեան համար։

9. Թէոդորոս Քոթենաւորը Աղթամարայ գրաւոր ս. Աստուածածնին վանքի վանահայր էր՝ Կոմիտաս կաթուղիկոսի եղբօրորդին. ունէր շատ աշակերտներ—Սահակ Զորափորեցի, Յովհան Իմաստասէր և ուրիշներ։ Ունի մի ճառ «Ընդդէմ Մայրագոմեցւոյն, որ պատմութեան ուսանողաբանութեան տեսակէտով կարևոր գործ է։ Այս ճառը ըստ երևութին ուղղուած է Մայրավանեցու աշակերտ Սարգսի դէմ, որ

ծայրայեղ Յուլիանիա դարձաւ, և Փրկչի մարդկային անօրէնութիւնները երևութաբար էր ընդունում։ Զնայելով լիզուի ծանրութեան, նորահնար, խրթին, կանգունաւոր բառերի գործածութեան, այնուամենայնիւ հաճութեամբ է կարդացվում այս ճառը, որովհետև հեղինակի տրամաբանական մտածողութիւնը խիստ հետևական է։ Թէոդորոսին են վերագրվում և այլ ևս երկու ճառեր՝ Ի ս. Աչէն Աստուածընկալ, և Գովեստ ի ս. Աստուածածնին, երկուսն էլ է և Ը դարերում խնդիր եղող նիւթերի վրայ։

10 Թէոդորոսի աշակերտ Սահակ Զորափորեցի կաթուղիկոսը († 703) հանդիսանում է նաև ընաիր քերթող։ Նրան են վերագրւում ս. Եկեղեցու և ս. Աչէի շարականները՝ գրուած լի զգացմամբ ու ոգևորութեամբ։ Մահմետականութեան տիրապետութեան ժամանակ, երբ շատերը նեղութիւններից յուսահատուած՝ կամ այլ հրապոյրներից դրդուած ուրանում էին իրանց հաւատը՝ հարկ էր որ քարոզուէր ժողովրդին եկեղեցու և ս. Աչէի զօրութիւնը, նրանց անսասանութիւնն ու փրկարար ոյժը. և ինչ որ ուրիշ վարդապետներ ճառերով էին յայտնում, Զորափորեցին նոյնը բանաստեղծութեամբ է արտայայտում։

Նոյն Սահակ կաթուղիկոսին է պատկանում և Ծաղկազարդի մասին մի ճառ է դարի հռետորական ոճով գրուած։

11. Է—Ը դարի մատենագիր է Աղշարունաց Գրիգորիս եպիսկոպոսը՝ 684 թուին Սահակ կաթուղիկոսից ձեռնադրուած։ Ժամանակի նշանաւոր իշխան Ներսէհ պատրիկ կամսարականի հրամանով՝ Գրիգորիս եպիսկոպոսը գրեց «Ընթերցուածոց մեկնութիւն դիրքը, որ մի գեղեցիկ աշխատութիւն է թէ բովանդակութեան և թէ լեզուի կողմից։ Ասում է Հայ և Յոյն եկեղեցիների ծիսական տարբերութիւնների վրայ, միշտ պատշաճ լեզուով։ Գրիգորիսը մասնակցեցաւ նաև Մանազկերտի 726 թուի ժողովին և հաւանօրէն այս ժամանակներում էլ վախճանած է։

12. Գրական գործերի առատութեամբ ու պէսպէսութեամբ Ը դարը կարող չէ է դարին հաւասարուել. այս դարի գործերը գուտ կրօնական են՝ հայ եկեղեցու դաւանութեան ու սովորութիւնների պաշտպանութեան նուիրուած։ Այս դարում ևս թարգմանուեցան բաւական շատ գրուածքներ, բայց դժբախտաբար չափազանց մութ և յուշնաբան. այսպէս են օրինակ՝ Նեմեսիոսի Ցաղագս բնութեան մարդոյ գիրքը, որ հին յոյն իմաստասէրների հոգեբանական ու բնախօսական ծանօթութիւնների ամփոփումն է քրիստոնէական տեսակէտով լուսաբանուած։ Գէորգ Պիսիա սարկաւագի «Ցաղագս վեցօրեայ արարչութեան» քերթուածը, մի նորութիւն մեր գրականութեան համար՝ թէ

և ծանր լեզուով թարգմանուած։

Տոհմային մատենագիրներից Ը դարի առաջին մատենագիր է հանդիսանում Մոսրով հռետորը՝ վախճանած 730 թուին, որ թողել է մեր եկեղեցու պատմութեան համար շատ նշանաւոր թղթեր (տպ. Էջմիածին)։ Նրանք վիճական բնաւորութիւն ունին, ուղղուած ինչպէս քաղկեդոնականների, այսպէս նաև Սևերեանց ու Յուլիանիտեանց դէմ։ Իւր գաղափարներով ու արտայայտութեամբ Մոսրովը մեծապէս նմանում է իրեն ժամանակակից ու գործակից Յովհան Իմաստասէրին, որի հետ և մաքառել էր Աղուանից Ներսէս-Բակուր կաթուղիկոսի դէմ։ Մոսրովն էր որ Մանազկերտի 726 թուի ժողովի գումարման պատճառ եղաւ, որին և ինքն էլ մասնակցեց։

13. Մոսրովիկ հռետորին ժամանակակից ու գործակից էր Յովհան Օձնեցի կաթուղիկոսը, որ իւր բովանդակ կեանքում զբաղուեցաւ հայ եկեղեցու բարեկարգութեան խնդրով և այս առթիւ գրեց իւր դաւանաբանական ու բարեկարգչական թղթերը։ Արդէն պատմութեան ընթացքում յիշել ենք նրա աւետարանութիւնն ու կանոնները, ինչպէս և նրա Ընդդէմ Պօղիկեանց ու Երևութականաց ճառերը, որոնց մէջ շատ զօրեղ տրամաբանութեամբ նա հերքում է այդ աղանդաւորների հակաեկեղեցական կարծիքները։ «Ընդդէմ Երևութականաց» ճառը յատկապէս ուղղուած է Յուլիանիտների կամ աւելի ճիշտ՝ ծայրայեղ միաբնակների դէմ, որոնք իրենց վարդապետութեամբ մինչև իսկ ուրանում էին Փրկչի մարդկութիւնը։ Բացի այս գլխաւոր գործից՝ Օձնեցուն են վերագրվում և մի քանի ճառեր եկեղեցու հիմնարկութեան, ժամակարգութեան մասին, որոնք կարևոր տեղեկութիւններ են բովանդակում եկեղեցու նախկին բաժանմունքների ու անօթների մասին։

14. Ը դարի առաջին քառորդի նշանաւոր մատենագիրներից մէկն է և Ստեփանոս Սիւնեցին, որ Հայաստանի դպրոցներում իւր ուսումն առնելուց յետոյ՝ կուսակրօն եկեղեցական դարձաւ։ 701 թուին ունական լեզուին ու գրականութեան քաջ հմտանալու համար՝ նայ Բիւզանդիոն գնաց, և երկար տարիներ մնաց։ Այստեղ նա ծանօթացաւ հայազգի Դաւիթ հուվմայեցու հետ, որ իւր վարած պաշտօնի անունով կեսար էր կոչվում, և նրա հետ միասին թարգմանական գործերով հայոց գրականութիւնն աշխատեց հարստացնել։ Երկուսի աշխատութեան արդիւնք համարում են Արիստագեսի գործերի մի մասի, Աթանասի հինգ ճառերի, կիւրիղի «Պարապմանց» գրքի ու թղթերի, Գրիգոր Նիւսացու «Ցաղագս կազմութեան մարդոյ», Նեմեսիոսի «Ցաղագս բնութեան մարդոյ», թերևս Գէորգ Պիսիայի «Վեցօրեայքի» թարգմանութիւնները՝ կատարուած 712—717 թուերին։ 729 թուին

Սիւնեցին արդէն Դաւիթ կաթուղիկոսից Սիւնեաց եպիսկոպոս է ձեռնադրվում, իսկ 735 թուին սպանվում։ Բացի վերոյիշեալ գործերից՝ Ստեփանոս Սիւնեցին թողել է և մի քանի թղթեր, որոնց մէջ ջերմագէս պաշտպանում է Հայոց եկեղեցու դաւանութիւնն ու ծէսերը յունաց առարկութիւնների դէմ. այսպէս են «Ընդդէմ Անտիոքու եպիսկոպոսի» (Գիրք թղթ. 323) և «առ Գերմանոս» (714—729) թղթերը, որոնց մէջ հայ եկեղեցու դաւանութիւնը պաշտպանելիս՝ նա չարաչար կերպով յարձակվում է յունաց վրայ։ Ի նկատի առնելով այս յարձակողական ու նախատական ոճը՝ կարծողներ եղան, թէ այդ թղթերը խառնակուած են՝ մի կալվածք, որ բնաւ որևէ հիմունք չունի։

Ստեփանոսի գործն է նաև Վասն անապականութեան մարմնոյն (տպ. Արրատ. 1902) ընդարձակ գրութիւնը (գր. 729 թ. յետոյ), ուր նա պաշտպանում է հայոց դաւանութիւնը Փրկչի մարմնի անապական լինելու մասին սևերեանների ու քաղկեդոնականների դէմ։ Հեղինակը եկեղեցական հին մատենագիրների սովորութեան համեմատ ընդարձակ հատուածներ է բերում հայրաբանական գրուածներից և այնպիսի հայ հեղինակներից, որոնց գործերն այժմ կորած են։

Ստեփանոս Սիւնեցին յայտնի է նաև իբրև քերթող և նրան են վերագրվում «Օրհնութեան» շարականները, որոնց մէջ նա գրուատում է Քրիստոսի կատարած գործերը հոգիների փրկութեան համար։ Աւագ օրհնութիւնները քաջութեան գաղափարով են ներշնչուած և շեշտում են հեղինակի լուսնական ոգին։ Փրկիչը ներկայանում է իբրև քաջամարտիկ ձիաւոր, որ գժոխքի պղնձեայ դռներն է խորտակում և գերեալ ոգիներն ազատում։ Աւագ օրհնութիւնները՝ չնայելով իրենց փոքր լինչ խորթ լեզուին, մեր կրօնական բանաստեղծութեան ոգելից ու զեղուն հատուածներն են կազմում։

15. Թ դարը համեմատաբար աղքատ է եկեղեցական գրականութեան կողմից։ Այս դարում չկան ամբողջական կրօնական գործեր, այլ միմիայն թղթեր. նշանաւոր են Տայոց Սահակ եպիսկոպոսի գրածները։ Այս անձը՝ ինչպէս տեսանք, հայոց նշանաւոր եպիսկոպոսներից մէկն էր, և 840 թուերից ի վեր գործում էր։ Նա հաւանօրէն ծանօթ էր այդ ժամանակների նշանաւոր իշխան Բագրատ Բագրատունուն, որ սիրում էր գիտնական մարդոց հետ յարաբերութիւն ունենալ (ինչպէս Նանա Աւսրին) և ինքն էլ շատ հմուտ էր կրօնական խնդիրների և կշտամբում, յանդիմանում էր հերետիկոսներին (Թղթ. նախ. եր. 621)։ Բագրատ Բագրատունին երբ գահից զրկեց Յովհան Ոձայեցուն, հաւանօրէն տեղապահ կարգեց Սահակ եպիսկոպոսին և նա այս ժամանակներում գրեց իւր Ընդդէմ երկաբնակաց

նեստորականացն ընդարձակ թուղթը*) (Գիրք Թղթ. 413), ուր Բագրատ Բագրատունուն կոչում է Ջէն հաւատոյ Հայաստանեայց, և ուր հայ և յոյն եկեղեցիների միջև բոլոր տարբերութիւնները քննութեան ենթարկելով պաշտպանում է մեր եկեղեցու մի բնութեան և սրան հետևորդ դաւանութիւնը։ Գրութեան վերջին մասում յարձակվում է նաև յունաց ծայրայեղ պատկերապաշտութեան դէմ, որը ինչպէս յայտնի է, 842 թուին կրկին վերանորոգուեցաւ, ցոյց տալով, թէ միմիայն ս. Խաչը կարելի է պաշտել։ Այս թղթից զատ՝ Սահակ գրել է նաև Աշոտ իշխանաց իշխանի կողմից յունաց Փոտ պատրիարքին մի ուրիշ թուղթ (879 թուերին), ուր դարձեալ հայ եկեղեցին է պաշտպանում։ Երկու թղթերի մէջ էլ միևնոյն վարդապետութիւնն է տիրում, միայն մէկի մէջ անապականութեան խնդիրն է աւելի յեղյեղուած, իսկ միւսի մէջ՝ մի բնութեան վարդապետութիւնը։

Պատմական նշանակութիւն ունին նաև Մաշտոց կաթուղիկոսի թղթերը, մանաւանդ այն՝ որ կաթուղիկոսութիւնից առաջ է գրել Գէորգ կաթուղիկոսի խնդրով է դարի հայոց հայրապետութեան գործերի առթիւ (Արրատ. 1902 թ. եր. 748)։

Դաւանաբանութեան տեսակէտով նշանաւոր է և Յովհաննէս պատմաբան կաթուղիկոսի «Խոստովանութիւնը» (Արրատ. 1896), իսկ եկեղեցական պատմութեան նկատմամբ՝ նրա «Շարք հայրապետաց հայոց» (Սմ. Ան. եր. 273)։

16. Ժ դարը հարուստ է եկեղեցական գրականութեամբ։ Այդ դարում շինուեցան բազմաթիւ վանքեր, որոնք մատուռական կեանքի կենդրոններ դարձան։ Մի կողմից յունաց կլօնական հալածանքները, միւս կողմից էլ ներքին կլօնական տարբեր մտածումները (Թոնդրակեցիք, Սիւնեաց ապստամբութիւնը, Խոսրովի ըմբոստացումը և այլն) նպաստեցին եկեղեցական գրականութեան ճոխացման։ Այս դարի առաջին մատենագիր հանդիսանում է Խոսրով Անձևացեաց եպիսկոպոսը, (945—965) որ իւր կնոջ մահուանից յետոյ կուսակրօն էր դարձել. իւր առաջնորդութեան ժամանակ գրեց երկու նշանաւոր գործեր, որոնցով միշտ պատուաւոր տեղ պիտի բռնէ մեր գրականութեան մէջ։ Նրա անպրանիկ գործն է Ժամագրոց մեկնութիւնը (տպ. Պոլիս), որի յառաջաբանի մէջ բացատրում է գրութեան շարժառիթը, այն է՝ հասկանալի դարձնել հասարակ ժողովրդին եկեղեցու ժամասացութիւնը։ Միևնոյն նպատակն ունի և Պատարագի մեկնութիւնը։ Այս երկու գործերն էլ կարևոր են մեր ժամասացութեան զարգացման ընթացքը ներկայացնելու տեսակէտով։

*) Թղթի վերնագրի կաթուղիկոս բառը, որ անշուշտ հեղինակի կողմից չէ, և-բևէ հեղինակի տեղապահութիւնն է ակնարկում։

Պատմութեան ընթացքում տեսանք, որ Խոսրովը հայ եկեղեցու հակառակ սկսեց քարոզել, թէ օրհնած ու չօրհնած խաչը միևնոյն է, թէ եպիսկոպոսն էլ կաթուղիկոսին համապատիւ է, ապա ուրեմն չըպէտք է նրան տուրք տալ. նոյն ժամանակի մի ուրիշ անձնաւորութիւն՝ Արամ անունով Պաղի կոչուած տուրքին էր հակառակ: Այս կարծիքների դէմ գրից Անանիա կաթուղիկոսն իւր նշանաւոր թղթերը:

17. Խոսրովին ազգակից ու ժամանակակից էր Անանիա Նարեկացին՝ Նարեկայ վանքի վանահայրը, մեր պատմիչներից մեծապէս գովուած իբրև փիլիսոփայ, իբրև այր անուանի ու գիտնական, իբրև հանճարեղ մեկնիչ: Անանիայի գործերից մեզ շատ բան հասած չէ: Նրա գործերից մէկն է «Դիր խոստովանութեան», ուր նզովում է Թոնդրակեցի աղանդաւորներին հերքելով նաև այն կարծիքը, թէ ինքն էլ նրանց համամիտ է: Նրանն է նայնպէս Շողակաթի վրայ գրած խըրթին ճառը (տպ. Շռաքաղում): Ունենք է և «Հաւատարմատ», համառօտ Հայոց պատմութիւն, որ յիշատակում է Ուխտանէսը. բայց այդ գործերն այժմ յայտնի չենն: Մեռած է երևում 986 թուից առաջ:

18. Ժ դարի ամենանշանաւոր բազմարեղուն գրիչ հանդիսանում է հայ ժողովրդի սիրելին Գրիգոր Նարեկացին, որ ծնուել է մօտաւորապէս 940—945 թուերին և վախճանել 1002-ին: Նա Խոսրով Անձևացեաց եպիսկոպոսի որդին էր: Նա կրթուեցաւ Նարեկայ վանքում իւր քեռի Անանիա Նարեկացու խնամքի տակ և դարձաւ կատարեալ ներանձնական կեանքի նուիրուած մի վանական: Նա ունի բազմաթիւ գործեր, բոլորն էլ կրօնական, որոնց մէջ ամենագիրազանցը հանդիսանում է «Ողբերգութեան» մատեանը, սովորաբար Նարեկ կոչուած, որով իսկապէս նա հռչակուած է: Ողբերգութիւնը բաժանուած է 95 գլուխ, որոնք կոչվում են «ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ»: Գիրքը ծայրէ ի ծայր մեղքի գիտակցութեամբ այրուող սրտի հառաչանք է, որ մերթ այսպէս է պատկերանում և մերթ այնպէս. և Նարեկացու բանաստեղծական թռիչքը միևնոյն դաղափարը այլազան պատկերներով արտայայտելու զարմանալի դիւտեր է ներկայացնում: Նարեկացու զգացմունքների խորութեան ու բանաստեղծական թռիչքի արտայայտիչ են նաև գանձերը, որոնք միանգամայն արուեստի կողմից ժողովրդական դրոշմ ևս կրում են:—Պատմական տեսակէտով շատ կարևոր է կճաւի վանականներին ուղղած թուղթը Թոնդրակեցւոց մասին (Գիրք թղթ. 598 եր.), որ բաւական առատ տեղեկութիւններ է տալիս այդ աղանդի մասին:

19. Ժ.Ա. դարի առաջին մասում իբրև սրբակեաց մարդ նշանաւոր հանդիսացաւ Յովհաննէս Կոզեռն վարդապետը, որին և վերագրւում են

այլ և այլ գործեր՝ բայց բոլորն էլ անյայտ: Առաւել նշանաւոր է Գրիգոր Մագիստրոսը (†1058), որ թողել է բազմաթիւ գործեր պէս-պէս բովանդակութեամբ: Նրա գործերից պէտք է յիշատակել Ասորւոց պատրիարքին գրած թղթերը Թոնդրակեցւոց (Թուլայլեցւոց) մասին, որոնց ինքը չարաչար հալածեց: Իբրև կրօնական քերթուած՝ պէտք է յիշել Հազարտողեան Աստուածաշունչը, որ գրից Մանուէլ անունով Արաբացու համար, որն և այս առթիւ քրիստոնեայ դարձաւ:

Գրիգոր Մագիստրոսին թղթակից էր Պետրոս Գետադարձ կաթուղիկոսը, որ ըստ աւանդութեան՝ Հանգստեան, Ծաղտիրոսաց և Մանկունք կոչուած շարականների մի մասն է յօրինել:

ԺԱ. դարի ամենաընտիր եկեղեցական մատենագիրն է Անանիա Սանահնեցին, որ ունի բազմաթիւ գործեր: Դրանցից ամենանշանաւորն է Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց գրուածքը, որ գրել է Պետրոս Գետադարձի հրամանով և ապա ընծայել նրա յաջորդ Յովհիկ կաթուղիկոսին: Շատ սահուն ու ընտիր լեզուով Սանահնեցին խօսում է այն բոլոր ծիսական ու դաւանական տարբերութիւնների մասին, որոնք կան հայ և յոյն եկեղեցիների միջև: Խօսում է յունաց սովորութիւնների մասին պատշաճ լեզուով և ոչ արհամարհանքով՝ որ ողովրական երևոյթ էր առհասարակ հայ և յոյն հեղինակների մէջ:

Բ. յօդուած.

ԹՈՆԴՐԱԿԵՑԻՈՑ ԱՂԱՆԴՆ ՈՒ ՀԱՐՔԻ ԺՈՂՈՎԸ

1. Թ դարում Յովհաննէս Դրասխանակերտցի կաթուղիկոսի օրով հրապարակ ելաւ մի աղանդ, որ պատմութեան մէջ յայտնի է Թոնդրակեան անունով: Մեր պատմիչների վկայութեամբ (Ասողիկ, Մագիստրոս և այլք) այս աղանդի հիմնադիրը էր ոմն Սմբատ (897—919 թ.), որ Ծաղկոտն գաւառի Զարեհաւան գիւղից էր: Իւր հայրենի գիւղից այս հայ աղանդաւորը գնաց Ապահունեաց Թոնդրակ գիւղը և այստեղ բազմաթիւ հետևողներ գտաւ, որոնք տեղի անունով Թոնդրակեցիք կոչուեցան: Սմբատը՝ որ հաւանօրէն ապստամբեցաւ, մերժում էր եկեղեցու նուիրապետութիւնը, եկեղեցու բոլոր խորհուրդները, հանդերձեալ կեանքը, հոգու անմահութիւնը. ուսուցանում էր թէ ոչ մեղք կայ, և ոչ էլ մեղքի համար պատիժ և այլն (Գ. Նարեկացու

թուղթը՝ 14 կէտ)։ Ըստ էութեան Սմբատի վարդապետութիւնը մօտհնում է Պաւղիկեանների ուսման, այս իսկ պատճառով Թոնդրակեան ուսումը Պաւղիկեանի վերայայտնուումն է համարուում։ Թոնդրակից այս աղանդը մուտ գտաւ նաև Մանանագի գաւառի Թուլայլ գիւղն ու Ինուսլ. մէջ. այս իսկ պատճառով աղանդաւորները Թուլայլիցիք ևս կոչվում են, թէ և սրանք փոքր ի շատէ բուն Թոնդրակեցիներից տարբերվում էին։

Զնայելով որ մեր եկեղեցին այս աղանդի դէմ սկզբից մաքառեց, բայց և այնպէս նա ճարակեցաւ, որովհետև մարդկային բոլոր թոյլ կողմերին ազատութիւն էր տալիս։ Նա առաւել զօրացաւ ժ դարում, և նոյն իսկ եկեղեցականները նրան յարեցան, այսպէս՝ կճաւոյ վանքի վանականները, և Հարք գաւառի սրբութեամբ հռչակուած Յակովբ եպիսկոպոսը, որի ընթացքը մեծ յուզումն առաջ բերեց։ Սրբակըրօն Յակովբը բազմաթիւ հետևողներ ունեցաւ թէ հասարակ և թէ իշխանական դասից, որոնք բոլոր հոգով նրան նուիրուեցան ու հնազանդեցան (Լաստ.)։

Սարգիս կաթուղիկոսը այս գայթակղութիւնը վերցնելու համար 1002 թուին Հարքի ժողովը գումարեց, որ Յակովբին կարգից ղրկեց ու ճակատին էլ աղուհացադրոշմ դարնելով շրջեցրեց ի տես ժողովրդեան՝ բարոզելով թէ, Ով որ լուսաւորչի հաւատից հեռանայ ու Թոնդրակեանց փարախը մտնի, այս պատիժը կըստանայ։

Յակովբը բանդարկուեցաւ, բայց նա միջոց գտաւ բանդից Բիւզանդիոն փախչելու. ապա Թոնդրակ գիւղը դարձաւ և վերջը Մուֆարղին քաղաքում վախճանեցաւ։

2. Զնայելով Հարքի ժողովի դատապարտութեան՝ Թոնդրակեան աղանդն այնուհետև ևս շարունակեց հետևողներ վաստակել այն էլ՝ հոգևոր դաստակարգից. կունծիկ անունով մի աբեղայ ոչ միայն ինքն աղանդաւոր դարձաւ, այլ և դարձրեց աղնուազարմ Հրանոյշ տիկնոջ, որի միջոցով ուրիշ երկու տիկիններ ևս այս աղանդին յարեցան. այսպէս նաև վրվէռ իշխանը՝ որ նշանաւոր էր ոչ միայն իւր հարստութեամբ, այլ և կրօնասիրութեամբ։

Այս նոր խմբակը բազմաթիւ հետևողներ ունեցաւ՝ Սմբատի դաւափարների ջերմ պաշտպան, որոնք սկսան հայ եկեղեցիներն այրել, խաչեր խորտակել, սրբութիւններ ոտնակոխ անել և այլն։ Տեսնելով սրանց ընթացքը՝ եկեղեցականներն ու հաւատացեալները սաստիկ զայրացան և մի օր Սամուէլ եպիսկոպոսի առաջնորդութեամբ նրանք յարձակուեցան վրվէռի կալուածների վրայ և ամեն ինչ այրեցին ու կողոպտեցին, իսկ աղանդի գլխաւորներից ոմանց էլ բռնելով՝ աղուհացադրոշմ խարանով պատժեցին։

3. Այսպիսի խստութիւններով արդարև Թոնդրակեան աղանդը կարծես թուլացաւ, բայց և այնպէս շարունակեց իւր գոյութիւնը։ Նրա դէմ աւելի խստութեամբ վարուեցաւ Գրիգոր Մագիստրոս իշխանը, որ Արարատեան գաւառի հայրենի կալուածները փոխանակել էր Միջագեաքի իշխանութեան հետ։ 1050 թուին երկու Թոնդրակեցի աղանդաւորներ հեռանալով իրենց գաղափարակիցներից՝ կրկին հայոց եկեղեցու ծոցն են դառնում։ Սրանք խնդրում են նաև Մագիստրոսից, որ հոգ տանի այդ աղանդն իսպառ ջնջելու։ Մագիստրոսը սիրով յանձնն է առնում այս առաքելութիւնը, և այս օրուանից սկսում է հալածել նրանց, որոնց վրայ կասկած ունէր. նա գնում է Թոնդրակ գիւղը, քանդում է աղանդաւորների ժողովարանը, և նրա տեղը ս. Գէորգ եկեղեցին է շինում. հալածում է նրանց Ղազար առաջնորդին և շատերին էլ պատժում։ Մագիստրոսի իշխանական սաստից ու երկիւղից զարհուրած՝ հազարից աւելի աղանդաւորներ ցանկութիւն են յայտնում Հայոց եկեղեցու գաւանութիւնն ընդունելու։ Այս առթիւ 1051 թուին գումարվում է Հարքի երկրորդ ժողովը, որ թոյլատրում է Բջնու եպիսկոպոսին նրանց մկրտելով հայոց եկեղեցին ընդունել։ Թոնդրակեցիներից ոմանք փախչում են Աստրւոց պատրիարքին մօտ դանգատելով, թէ Մագիստրոսն ուղղափառ հաւատի համար է իրենց հալածում։ Այս առթիւ Մագիստրոսը մի ընդարձակ թուղթ է գրում, ուր պատմում է Թոնդրակեցիներին, մանաւանդ նրանց առաջնորդ Ղազարի գործերը, և Աստրւոց պատրիարքին ևս յորդորում է չհաւատալ այդ խարեբաների խօսքերից։ Աղանդաւորներից ոմանք հայոց Պետրոս կաթուղիկոսին ևս դիմել էին, խնդրելով հայ եկեղեցու անդամ իրենց համարել. սրանց էլ դարձեալ Մագիստրոսն է պատասխանում՝ յորդորելով իրենց դարձը ճշմարիտ անելու համար ձկրտուել։

Այսպէս ըստ երևութին մեր երկրից Թոնդրակեան աղանդը վերանում է. բայց նոյնը գաղտնապէս շատ երկար դարեր իւր գոյութիւնն է պահպանում. ԺԹ դարի առաջին քառորդում (1836 թ.) Այրարատեան գաւառում նրա հետևողները կրկին են երևան գալիս, թէև արդէն բողոքականութեան հայեացքներով փոքր ի շատէ կերպարանափոխուած։

Գ. յօդուած.

ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԻԻՆ, ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ, ՏՕՆԵՐ.

1. Ժամակարգութիւնը՝ որ Դ և Ե դարերում կազմակերպուեցաւ, յաջորդ դարերում ևս շարունակեցաւ նոյն բաժանմունքներով, միայն թէ բովանդակութեան կողմից փոփոխութիւններ կրեց յաւելումներով ու յապաւումներով: Մենք այժմ անկարող ենք ճշդիւ ո՛րոշել այդ եղած փոփոխութիւնների ժամանակը, ևս և թէ որոնց ձեռքով կատարուեցաւ: Ժամակարգութեան ամենահնագոյն նկարագիրը տալիս է մեզ Յովհան Իմաստասէրը (Ը դար) և Խոսրով Անձևացին (Ժ դար): Ժամակարգութեան զարգացման պատմութեան համար անհրաժեշտ էր ապաքէն, որ մենք հին ձեռագրեր ունենայինք և նրանց համեմատական ուսումնասիրութիւնը կատարէինք՝ հին յունաց ու ասորւոց ժամակարգութեան օգնութեամբ: Դժբախտաբար մենք հին ձեռագրեր չունինք և մի այդպիսի ուսումնասիրութիւն էլ համարեա կատարուած չէ:

Յովհան Իմաստասէրի ու Խոսրովի նկարագիրը ըստ էականին նոյն է այսօրուայ պաշտամանի կարգի հետ. բայց մենք այժմ մասեր ունինք, որ ժԲ դարում Շնորհալու օրով և յետոյ միայն մուտ գտան: Այսպէս՝ հին ժամանակներում «Մեծասգուսցէ» շարականները միմիայն կիւրակի օրերն էին երգվում. բայց անուշադ ժԲ դարերից սովորութիւն եղաւ ամէն առաւօտեան պաշտամունքի ժամանակ երգելու:—Արևագալի կարգը հաստատուց Եղբաս կաթուղիկոսը, իսկ՝ Արևագալի յորդորականներն ու երգերը ԺԶ դարում միայն երևում են և գործածվում:—Օրհնութեան ժամանակ այժմ սովորութիւն է քաղուածքներ անել. բայց այս սովորութիւնը մինչև ժԲ և աւելի ևս ուշ մինչև ԺԵ դար չկար:—Երեկոյեան ժամերգութեան արդի Առնարհեցի և Ապրեցի փոխերը հաստատուեցան Ներսէս Շինողի ձեռքով է դարում: Շաբաթ իրիկուան ծրագաց օրհնութիւնը—Լոյս Զուարթը-շատ հին երգ է և յունարէնից թարգմանուած վոփոխութեամբ:—Հին ժամանակներում շաբաթ գիշերները հակում էր կատարվում սազմոսների ու մարգարէութիւնների ընթերցմամբ. այժմ այդ սովորութիւնը միմիայն մեծամեծ տօներին է կատարվում և այն էլ՝ այլապէս:—Յաղագական ու Հանդըստեան ժամերգութիւնը (Եկեսցէ) մինչև ԺԴ դար չկար և Անձևացին չի յիշում. այդ կարգը մտել է նախ վանքերում ԺԲ դարում յոյներից

Լամբրոնացու ձեռքով (Թղթ. եր. 242) և ապա հետզհետէ ընդհանրացել՝ ընդունելով նաև յաւելուածներ՝ օր. Հաւատով խոստովանիմ և այլն: Տաթևացին այդ կարգի կատարման համար ասում է (քրդ. Զե). «զայն կատարեմք ի վերայ անկողնոց և ննջեմք»: Այժմ իրարկէ ակնդեցու մէջ է կատարվում:

Պատարագի խորհուրդը անապակ գինիով ու բաղարջ հացով էր կատարվում, ինչպէս մինչև այսօր, և այս շեշտում են մեր եկեղեցական բոլոր կանոնները: Մեր եկեղեցական գրականութեան մէջ և ոչ մի տեղ ակնարկ իսկ կարելի է գտնել, թէ հայոց մէջ երբ ևիցէ չորեքաւն պատարագելու սովորութիւն եղած լինի. այստեղ հարկաւ հաշուի առնելու չենք յունական եկեղեցուն յարած հայերի սովորութիւնը եղբի ժամանակներից սկսած: Հաւատացեալները միշտ հաղորդուել են երկու տեսակով և այն հին եկեղեցական սովորութեան համեմատ առանձին-առանձին ընդունելով՝ ինչպէս Դուինի ժողովի կանոնից կարելի է եզրակացնել. բայց ապա ընդունուել է այսօրուայ միանգամից հաղորդուելու սովորութիւնը: Աւագ հինգշաբթի օրը հաղորդուելու սովորութիւնը եղել է հայոց մէջ հին ժամանակներից, բայց և այնպէս այդ սովորութիւնն իրրև քաղկեդոնական մերժում է Յովհան Իմաստասէրը, պատուիրելով Զատկին հաղորդուել, որով և մեծ պահքը չլուծել:—Ժողովական կանոնով արգելուած է ճրագալոյցի ցերեկը կամ եկեղեցուց դուրս հաղորդ տալ, բայց նկատելի է ժամային տարբերին (կան. Դուինի լ.): Նոյն ժողովի Զ և Ը կանոններից պարզ երևում է, որ շաբաթ, կիւրակէ և տօն օրերն անխափան պատարագ էր մատուցւում. Նոյնը հաստատում է Օձնեցին նաև Բառասնորդական պահքի շաբաթ ու կիւրակի օրերի համար: Նախնաբար եղել է սովորութիւն Ուրբաթ և կիւրակէ օրերը պատարագել «(Յուրբաթու և ի կիւրակէի մի զհնուին է և այլն» Մանդ.), բայց երևի թէ, երբ մարտիրոսների տօները շաբաթ օրերը սկսան տօնուել, այն ժամանակ և ուրբաթուան պատարագը շաբաթ օրը փոխադրուեցաւ:

Ամբողջ Յինունքին պատարագելու այժմու սովորութիւնը ե դարերից է: Հետզհետէ սովորութիւն մտաւ նաև շաբաթուայ միւս օրերում ևս պատարագ մատուցանելու հանգուցեալների հոգու փրկութեան համար նուիրատուների խնդրանօք:

Աստուածպաշտութեան կատարումը շաբաթով բաժանուած էր քահանաների մէջ, բայց գլխաւոր քահանայի պարտքն էր՝ մշտապէս եկեղեցում լինել (կանոնք Սկզ.):

2. Եկեղեցու խորհուրդներից վերջին օձուին ընդհանուր քրիստոնէական եկեղեցու սովորութեան համեմատ իւղով էր կատարվում. «ի պաշտամանն անուշահոտ իւղոյն»—Կորիւն, Մանդ. ճառ իւղ. Օձնեցի

կան. ժա)։ Լոկ աղօթքով կատարելու սովորութիւնը հաւանօրէն ծ դարէից է սկիզբն առնում, որովհետև Խոսրով Անձևացին ասում է. թէ երկաքին լինիցին, քարի է (Մեկն. ժմ. քրզ. վասն հիւ.)։ Բայց ԺԲ դարում դարձեալ շեշտվում է օծման կարևորութիւնը (Ս. Շնորհ. եր. 208)։

Պատկի խորհրդի նկատմամբ պէսպէս զեղծմունքներ են կատարուել, որոնց մասին և մանրամասն խօսում է Յովհան Իմաստասէրը։ Արդէն վաղուց օրեր էին սահմանուած (Շաբաթ՝ կէսօրից յետոյ, Ծընունդ, Զատիկ, Յինունք, պահքի օրեր և այլն), երբ արգելվում էր պատկ կատարել. այս կանոնի դէմ մեղանչողները պատժվում էին և պըտսակն էլ անվաւեր համարվում (Գ. Դ. Ե.)։ Թոյլատրվում էր երկրորդ ամուսնութիւնը, որ կատարվում էր եկեղեցական օրհնութեամբ. իսկ երրորդ ամուսնութիւնը մինչև ԺԴ դար արգելվում էր։ Արհնակցութեան աստիճանների նկատմամբ Օձնեցու կանոնների մէջ տեղեկութիւն չկայ. հաւանօրէն Շահապիւանի ժողովի սահմանած աստիճանն էր պահպանվում։

Մկրտութիւնը կատարուում էր եկեղեցում կամ եկեղեցիներին կից առանձին տան մէջ, որ մկրտատուն կամ մկրտարան էր կոչվում։ Մկրտութեան աւազանն անշարժ ու քարիղէն էր։ Ս. Միւռոնից զատ մկրտութեան ժամանակ գործածվում էր «մկրտութեան ձէթը», որ իրանք քահանաներն էին օրհնում պէտքին չափովը։ Այս ձէթի գործածութիւնը մեր մէջ տևել է մինչև ԺԲ դարի վերջերը, երբ Լատինաց սովորութեան համեմատ դադարել է (Թղթ. Լուսիոսի առ Տղայ)։ Մկրտութիւնից առաջ եկեղեցում կամ մկրտարանի դրանը ասվում էր Հրաժարիմքը և դարից սկսած (Մանդ. ԺԵ. Յաճ. Բ. Իմաստ.)։— Ապաշխարութիւնը լինում էր պահքով ու եկեղեցական հրահանգներով։ Այսօրուան Մեղան ԺԲ—ԺԳ դարերում մուտ գտաւ մեր մէջ անշուշտ կաթոլիկ եկեղեցուց, որ սոյն ժամանակներում կազմել էր մի այդպիսի բան յունականին համեմատ։

Պահեցողութիւնը շաբաթական ու քառասնօրեայ էր. միայն Յովհան Իմաստասէրը թոյլ է տալիս կամեցողներին պահքի շաբաթ ու կիրակի օրերը լուծել (Է կան.), ինչպէս սովորութիւն էր նաև երբեմն Երուսաղէմի եկեղեցում։

3. Փրկչի Ծննդեան ու Մկրտութեան տօնն ըստ հին սովորութեան շարունակուեցաւ միասին տօնուել, և Զ դարի Դուինի ժողովը, ինչպէս և Իմաստասէրը խստիւ պատուիրում են այս տօներն անբաժան չկատարել։ Է դարի մատենագիր Անանիա Շիրակացին «ի Յայտնութիւն Տեառն» ճառով ապացուցանում է, որ այդ տօները պէտք է միասին տօնել։ Արդէն Ը դարում (Ղևոնդ Եր.) կամ աւելի ևս վաղ՝ Ծննդեան տօնը 8 օր էր տօնվում, ինչպէս այժմ, առանձին պահեցո-

ղութեամբ։ –Ծաղկազարդի կամ Ողջոյնի տօնը հին տօներից մէկն է և ըստ երևութին Զ դարում հաստատուած։ Մամբրէի Վիրծանողի և Սահակ Զորափորեցու ճառերն այս տօնի կատարման հնագոյն յիշատակարաններ են։ Յովհան Իմաստասէրը նկարագրում է այդ տօնի կատարումն ոսաերով ու արմաւենիներով, ինչպէս այժմ ենք կատարում։

Վարդավառը կամ Քրիստոսի Պայծառակերպութեան տօնն ևս հըրապարակ է գալիս է դարում. գէթ 645 թուերին Ներսէս Շինողի ժամանակ յիշատակվում է։ Մովսէս Խորենացու անունով կայ մի ճառ՝ի Վարդավառն այս ժամանակներից։ Առաջները հայոց եկեղեցին մի օր է միայն տօնել, իսկ Ներսէս Շնորհալու կարգադրութեամբ ԺԲ դարից՝ երեք օր։ Երկու օրուան պատկերն էլ (շարականը) ինքը Շնորհալին է գրել։

Զ դարում Յուստինիանոսի օրով 542 թուի ժանտախտի առթիւ յունաց մէջ սկսուեցաւ Տեառնընդառաջը տօնուել։ Հաւանօրէն նոյն դարում մեր մէջ ևս մտաւ։ Այդ տօնի կանոնը «Մարմնացեալդ ի կուսէն» աւանդութիւնը Մովսէս քերթողին է վերագրում, որը՝ ինչպէս տեսանք, Զ—է դարում էր ապրում։ Այս տօնի ժամանակ եկեղեցում վառած մոմեր բռնելը և նոյնը տուն բերելը շատ հին սովորութիւն է և երևի թէ կապուած է Աւետարանի՝ Հուր եկի արկանել—խօսքերի կամ Լոյս հեթանոսաց բառերի հետ։ Ը դարի առաջին մասում Ստեփանոս Սիւնեցին է յիշում Տեառնընդառաջը (Թղթք. 326)։—Աւետման տօնը յունաց մէջ թէև նոյնպէս տօնուել է Զ դարի վերջերից, բայց Հայոց մէջ մինչև ԺԲ դար անկախ տօնուած չէ, այլ կամ Ծննդեան ու Մկըրտութեան տօնին հետ միասին՝ Յակովբոս առաքեալի կարգադրութեան համեմատ, ինչպէս ասում են մեր վարդապետները, և կամ Քրիստոսի ս. Յարութեան հետ. և ապրիլի 6-ի կամ 7-ի հաշիւն արուել է միայն Քրիստոսի ծննդեան օրն որոշելու համար (Գիրք Թղթ. 326. 253 և այլն)։ Հաւանօրէն ԺԱ. դարի վերջերում յունաց ու լատինաց հետևելով Աւետումն իբրև անկախ տօն ընդունվում է մեր եկեղեցում ապրիլի 7-ին. և Գրիգոր Վկայասէրն էլ գրում է Յորդանանի անճառ շաբաթականը, որ այժմ էլ երգվում է։ Հին շարականը—Ուրախացիր—մինչև այժմ էլ երգվում է Քրիստոսի Ծննդեան Ճրագալոյցին։ Բայց չընայելով այս ընդունելութեան՝ երևում է թէ Աւետումն երկար ժամանակ հայ վանքերում դարձեալ անկախ չէ տօնուած։ Սակ 1201 թուի ժողովից յետոյ Աւետումը ապրիլի 6-ին տօնելու կանոնն ընդհանրացաւ. իսկ 1307 թուի ժողովը որոշում է տօնի կատարման ժամանակը ապրիլի 7-ից մարտի 25-ին տանել։—Նեստորական վէճերի պատճառով Տիրամօր յարդանքն առաւել զօրացաւ Զ—է դարերում և այս ժա-

մանակների հայ ու օտարազգի մատենագիրներից շատերը դրւատական ճառեր յօրինեցին նրա համար (Պետր. Սիւն.)։ Այսպիսի յարգանքի բնական հետևանք պէտք է լինէր և ս. Կուսի տօնախմբութիւն եկեղեցիների մէջ։ Ս. Կուսի տօներից ամենահնագոյնը Վերափոխումն է, և այս աւանդութիւնն ե դարի վերջից է։ Ե դարում այս տօնը բոլոր քրիստոնէական եկեղեցիներում չէր տօնվում. հաւանօրէն մեր եկեղեցին տօնում էր։ Անշուշտ այս տօնն է ակնարկում Յովհաննէսը, երբ գրում է Սահակ Արծրունուն թէ «Այժմ չեմ կարող հզօր իշխանիդ տեսութիան գալ,մինչև որ Իսկուհու տօնը վերջանայ»։ Տիրամօր պատկերի ու Հոգևոց վանքի աւանդութիւնները էլ այս ժամանակներից են։ Վերափոխումը նախնաբար մէկ օր էինք տօնում, բայց լատինաց հետևելով, որոնք Թ դարից սկսած ութ օր էին տօնում, մենք էլ ԺԲ դարում սկսանք ինն օր տօնել։ Իսկ ս. Աստուածածնի միւս տօնները՝ Ծնունդը (8 սեպտ.), Ընծայումը (21 նոյեմ.), Յղութիւնը (9 դեկտ.), որոնք Ը դարից տօնվում էին յունաց ու լատինաց մէջ, մեր մէջ հաստատուեցան միմիայն ԺԳ դարում եկեղեցիների միութեան փորձերի շրջանում և դրանց շարականը՝ Երգեցէք որդիք—յօր ի նեց Յակովը կլայեցին (1268—1286)։

Յաչի տօներն էլ՝ Վերացումն, Գիւտ, Վարագայ, հաստատուեցան Ե դարում։

4. Մարաիրոսեանների յիշատակներն ևս այս շրջանում աւելացան և նրանց տօների առաջին կարգաւորութիւնն եղաւ Ը դարում (746 թ.) Մաքենոցաց ուխտի առաջնորդ Հաբանց հայր Սողոմոնի ձեռքով։ Այս կարգաւորութիւնը կոչուեցաւ Տօնական կամ Ճառընտիր։ Ժ դարում սրբոց վարքի մի ուրիշ հաւաքումն ու դասաւորութիւն եղաւ Անձևացեաց Առոյ եպիսկոպոսի ու ս. Ատոմայ վանքի վանահայր Գագիկ վարդապետի աշխատութեամբ, որը և կոչուեցաւ Ատոմադիր, նաև Տօնացոյց, Տօնանամակ, իսկ վերջերը Ցայսմաւուրք։

Սրբոց տօների բազմանալուն հետ՝ նրանց նշխարներն ևս տեղացան և Զ—Է դարերում բաւական մասունքներ հրապարակ եկան, և այս ընդհանուր երևոյթ էր ինչպէս Հայոց, այնպէս նաև օտարների մէջ։ Է դարում Գրիգոր Մամիկոնեանը Թորգանից բերեց. ս. Գրիգորի մասունքը և մի մասը Աղուանից ևս տուեց, բայց արդէն ասելի վաղ Վահանանց ժամանակ ս. Գրիգորի մասունքը Հայոց Հայրապետանոցում կար։—Այս շրջանում բազմացան այլ և այլ անուններով խաչեր—Հայտնեաց, Ծիծռան և այլն—որոնց ծագման նկատմամբ կան այլ և այլ զրուցախառն պատմութիւններ մեր Ցայսմաւուրքների ու պատմիչների մօտ։

Սրբոց պատկերների գործածութիւնը՝ ինչպէս տեսանք պատմու-

թիան ընթացքում, այնպէս զարգացած չէր հայոց եկեղեցում, ինչպէս յունաց մէջ։ Հայոց մէջ գործածվում էին միմիայն ս. Յաչի, Փրկչի, Տիրամօր և առաքեալների պատկերները։ Ուրիշ պատկեր Հայերը չէին ընդունել։ Պատկերների գործածութեան խնդրի նկատմամբ ի միջի այլոց պէտք է ի նկատի ունենալ Սահակ Մեռուի և Յաչիկ կաթուղիկոսի թղթերը։

Չնայելով պատկերների չափաւոր ընդունելութեան՝ այնուամենայնիւ նրանց հակառակ շարժուեցաւ, ինչպէս պատմութեան ընթացքում տեսանք, մեր եկեղեցու մէջ ևս կար՝ այն էլ մասամբ Պաւղիկեանների ազդուած, որոնք միշտ էին պատկերներ լինչ տեսակ և ներից լինէին։

5. Աստուածպաշտութեան հրաւիրելը կատարվում էր ժամահարի կամ կընճակի միջոցով, որ փայտի շերտերից էր շինուած։ Հին յիշատակութիւն այս մասին գտնվում է Մայրաւանեցու, այսպէս և Իմաստասէրի մօտ, իսկ Գրիգոր Նարեկացին (Ժ դար) ունի կընճակի օրհնութիւն, որից կարելի է եզրակացնել թէ ժամահարը շարունակում էր միայն հրաւիրման գործի մնալ։ Նոյն Ժ դարում Սեբաստիոյ մենաստրոյ վանահայրը արգելում է նոյն տեղի Հայոց ժամահարութեան՝ զանգակ գործածութիւնը սկսում է միայն Թ դարում. ԺԲ դարից սկսուած մեր մէջ ևս սկսվում է և նախնաբար երկուսն էլ թէ ժամահարը և թէ զանգակը գործածվում էին, բայց հետզհետէ ԺԳ դարից սկսած ժամահարի գործածութիւնը վերացաւ և զանգակը տիրող դարձաւ (Բզմ. 1910 եր. 193)։

Ե. ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ՇՐՋԱՆ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ (1065—1441).

Ա. ԳԼՈՒԽ

ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԱԼԵՐ ԵՒ ԻՒՐ ՅԱՋՈՐԴԸ.

1. Բռնի ու նենգամիտ մէջոցներով Հայոց Թագաւորութեան տիրելուց յետոյ՝ Յոյներն անմիտ քաղաքականութեամբ հայ երկիրը բոլորովին անպաշտպան թողին և նա Սելճուգեան Թուրքերի աւերածութեան ենթարկուեցաւ։ Նշանաւոր քաղաքները հետզհետէ առնուեցան և բնակիչները՝ երիտասարդ ու ծեր, տղայ ու աղջիկ անխնայ կոտորուեցան։ Այս բռնութիւնների երեսից զարհուրած հայ ժողովուրդն ու իշխանական դասը հետզհետէ թողին իրենց հայրենի տունն ու տեղը և հեռացան քաշուեցան յունաց տէրութեան առաւել ապահով մասերը, ուր նրանցից ոմանք ապագային իրանց քաջութեամբ նշանաւոր դիրք ստեղծեցին և անկախ իշխանութիւն։

Հայ երկրի այս դառնութիւնն է ողբում Ուռհայեցին դառն կսկիծով. «Գերուեցաւ Հայոց տունը. արիւնով լցուեցաւ բոլոր աշխարհը, ծովի նման նա ծայրէ ի ծայր ծփում էր. մեր հայրենական տունն ապականուեցաւ. Հայաստանի հիմքը խախտուեցաւ. չմնաց յոյսի, ապաւէնի տեղ և մինք մատնուեցանք օտար ազգերի ու զաղանների ծառայութեան» (եր. 151)։

Յոյները միևնոյն մոլեռանդ ու ամբարդի քաղաքականութեամբ, որով անտարբեր աչքով էին նայում Հայաստանի աւերուելուն ու դատարկուելուն Տուղրիլների ու Ալփասլանների ձեռքով, Խաչիկ Բ-ի մահուանից յետոյ (1064 թ.) թոյլ չտուին Հայոց նոր կաթուղիկոս ընտրել, որ միանգամից Հայ ժողովրդի երկու իշխանութիւնն էլ կործանուի, և Հայի ձուլումը Յոյնի հետ աւելի արագ կատարուի։ Այս է հաստատում Ներսէս Շնորհալին, ասելով՝ «զի անտէրունչ ասեն հղեալ լիցին ի կրօնս մեր դարձեալ»։

Հայրապետական աթոռն երեք ամիս պարապ մնաց։ Հայ մեծամեծներն ամէն կերպ աշխատեցան այս վերջին հարուածը բուժելու. մանաւանդ շատ չանաց իւր Մարիամ կնոջ հետ Գագիկ Թագաւորը, որ իւր թագաւորութիւնն էլ նոյնպէս յունաց յանձնելով ստացել էր Ծամընդաւ բերդը և մի քանի այլ քաղաքներ ու գիւղեր։ Վերջապէս Յունաց Թոլտուութեամբ 1065 թուին գումարուեցաւ Ծամիզդաւի ժողովը, ժամանակի քաղաքական հանգամանքներն ի նկատի առնելով՝ ժողովը կաթուղիկոս ընտրեց յունասէր իշխաններից մէկի՝ Գրիգոր Մագիստրոսի որդուն Վահրամ իշխանին, որ յունաց կողմից արդէն դքսութեամբ պատուած էր։

Վահրամ իշխանն իւր զարգացած հոգի խնամքի տակ գեղեցիկ կրթութիւն էր ստացել, յունական փիլիսոփայութեան համացել։ Իբրև հրախտագէտ որդի նա անմոռաց պահում էր իւր հօր պատուէրը, որ իւր բոլոր ջանքերի փոխարէնը մի բան էր միայն խնդրում՝ «մեր աւանդութիւնն երբեք չմոռանալ և մեր նախնի Պարթևի ճրագի լոյսն երբեք չմարել»։ Հօր մահուանից յետոյ Վահրամ իշխանը տէր էր դարձել նրա բոլոր կալուածներին և ամուսնացել էր. բայց երևի թէ կեանքի դառնութիւնների պատճառով աշխարհից զզուած իւր կնոջ մահուանից յետոյ վանք էր առանձնացել՝ իւր հոգու անդորրութիւնն ու խաղաղութիւնն այստեղ միայն գտնելով։ Իբրև վանական հռչակուած էր իւր գիտութեամբն ու սրբութեամբ, և Ծամիզդաւի ժողովն այս հրաշակաւոր վանականին քաղաքական տեսակէտներից առաջնորդուած՝ ընտրեց կաթուղիկոս, որ «յամենայն դիմաց կարող էր օգնել հօտին Քրիստոսի» (Ուռհ. 155)։ Վահրամը իբրև կաթուղիկոս յայտնի է Գրիգորիս Վկայասէր կոչմամբ։ Նրա կաթուղիկոսանալովը Հայոց հայրապետական աթոռը բարձրացաւ Պահլաւունեաց տոհմը, որ 140 տարու չափ եկեղեցական իշխանութիւնն իւր ձեռքը պահեց։

Որչափ էլ անձնական շնորհներով օժտուած էր Գրիգոր Վկայասէրը, այնուամենայնիւ նա այն կաթուղիկոսը չէր, որ ժամանակի կեանքն էր պահանջում։ Նա ներքնձնական կեանքի համար էր կոչուած, և ոչ թէ առաջնորդ լինելու մի ժողովրդի, որ երերուն ու թշուառ վիճակի մէջ էր և կարօտ հզօր կամքի ու այլ նկարագրի տէր գործիչների։

Իւր կաթուղիկոսութեան երկրորդ տարին (1066 թ.), թերևս յունաց սիրտը շահելու ու նրանց հայոց դէմ յարուցած հալածանքները մեղմելու համար, Գրիգոր Վկայասէրը Բիւզանդիոն գնաց և վերադառնալուց յետոյ իւր ընակութիւնը կարմիր վանքի մէջ հաստատեց։ Այս ժամանակներում երկար պատերազմներ ծագեցան Թուրքերի ու յունաց մէջ։ Թուրքաց հրոսակները Հայաստանի դաւառները, մանաւանդ հարաւային մասերը աւերակ դարձրին և մեծ կոտորածներ արին։ Այս արիւնահեղ դէպքերից զարհուրած մեղմաբարոյ Վկայասէրը՝

մխքը զրեց հրաժարուել կաթուղիկոսութիւնից և բոլորովին միանա-
կեցութեան նուիրուել. նրան կամակից ու խորհրդակից եղաւ և իւր
զարթապետ Գէորգ վարդապետ Լօռեցին։ Բայց երբ Վկայասէրը իւր
մտադրութիւնը հայ իշխաններին ևս յայտնեց, նրանք որ կաթուղի-
կոսութեան ընտրութիւնը դժուարութեամբ էին գլուխ բերել, վախեն-
լով յոյներից՝ մերժեցին ցանկութիւնը. իսկ երբ տեսան նրա յամա-
ռութիւնը, այն ժամանակ առաջարկեցին Գէորգ վարդապետին կաթու-
ղիկոս դարձնել։ Տէր Գրիգորը թէև զչարեցաւ Գէորգ վարդապետի
ուխտազանցութեան վրայ, բայց ակամայ կատարեց իշխանների կամ-
քը և Գէորգին կաթուղիկոս ձեռնադրեց 1069 թուին. իսկ ինքը հեռացաւ
Սև լեռը ճգնութեամբ պարապելու՝ բայց միշտ ոխութեամբ Գէորգի ան-
ձի դէմ։

2. Պատմութիւնը Գէորգ Գ-ի անձի մասին ոչինչ չի յիշատա-
կում, բայց ըստ երևութին նա մի գործունեայ, եռանդուն անձն էր։
Սա թղթակցութիւն ունեցաւ Յակովբիկ Աղուանց Յեսու-բար-Շուշան
Յովհաննէս Ժ-րդ պատրիարքի հետ (1058—1073), որ պաշտպանելով
Աղուանց եկեղեցու ձիթապանդ, խմորուն ու աղեալ հացով ու ջուր-
խառն գինիով պատարագելու սովորութիւնը՝ յարձակվում էր հայ ե-
կեղեցու բաղարջով ու անապակ գինիով պատարագելու սովորութեան
վրայ. ի միջի այլոց շօշափում էր և մի քանի այլ սովորութիւններ։
Այս թղթին ահա ընդարձակ, գեղեցիկ արամաբանութեամբ, բայց
խայթիչ ոճով պատասխան տուեց Գէորգ կաթուղիկոսը և հայ եկե-
ղեցու սովորութեանց դէմ եղած առարկութիւնները միառմի հերքեց։ Այս
թուղթը (Գիրք Թղթ. 335) մեր եկեղեցական գրականութեան ընտիր
հատուածներից մէկն է և հեղինակի ոգու լինորոշ վաւերագիր։

Բայց շուտով կերպապէս հակառակութիւն ընկաւ Գէորգ Գ-ի և
Գրիգոր վկայասէրի մէջ, և այս հակառակութեան պատճառը վերջի-
նիս յոռի սովորութիւնն էր, որ թէև կաթուղիկոսութիւնից հրաժա-
րուել էր, բայց և այնպէս նոր—նոր կաթուղիկոսներ էր ձեռնադրում,
որով հայրապետական միապետ իշխանութեան պատակման ու տկա-
րացման պատճառ դառնում։ Այսպէս երբ Վկայասերը Սև լեռան կող-
մերն էր գտնում, հռոմայացած և ապա Թրքացած հայ Փիլատոս իշ-
խանի ցանկութեամբ Պետրոս կաթուղիկոսի քրոջորդուն Սարգիս ե-
պիսկոպոսին կաթուղիկոս ճանաչեց և նրան հայրապետական քող ու
գաւազան ուղարկեց։ Սարգիսը նստաւ Հռնի քաղաքում (1072 թ.) և իր
յաջորդներն ունեցաւ։ Փիլատոսից խոյս տալով՝ Վկայասէրն Անի եկաւ,
և այստեղ էլ 1073 թուին իւր Բարսեղ քեռորդուն եպիսկոպոս ձեռնա-
դրեց և իրեն փոխանորդ կարգեց։

Գէորգ Լօռեցին տեսնելով Վկայասէրի այս թոյլ ու ջլատակար

ուղղութիւնը՝ կամեցաւ ժողովով կարճել նրա իրաւունքները։ Բայց
Վկայասէրն ու Բարսեղ իշխանաղն արքեպիսկոպոսը աւելի ուժով
գտնուեցան. նրանք Գէորգի հայրապետական քողն առին ու իրան էլ
աքսորեցին։ Նա գնաց Տարսոն, ու այնտեղ էլ վախճանեցաւ։

3. Գէորգ Գ-ին գահընկէց անելուց և Բարսեղին փոխանորդ կար-
գելուց յետոյ՝ Գրիգոր Վկայասէրը 1705 թուերին ճանապարհորդու-
թեամբ գնաց Պոլիս, եգիպտոս և Երուսաղէմ, և պանդխտեց մօտ 25
տարի, մինչև 1100 թուերը։ Նա իւր ուղեկիցներով մօտ երիք տարի
մնաց Բիւզանդիոնում և զբաղուեցաւ թարգմանութիւններով (Մմբ.
Գործոց)։ 1078 թուից առաջ նա Երուսաղէմ գնաց, այստեղից էլ Ե-
գիպտոս, ուր և երկար ժամանակ մնաց իբրև կաթուղիկոս և մեծամեծ
պատիւներ գտաւ տեղացի իշխաններից։ Եգիպտոսում այս ժամանակ
բազմաթիւ արաբախօս հայեր կային և ունէին լաւ դիրք ու շատ վան-
քեր։ Վկայասէրն իրեն փոխանակ այստեղի հայոց վրայ էլ կաթուղի-
կոս ձեռնադրեց իւր քեռորդի Գրիգոր եպիսկոպոսին, որով հայ կա-
թուղիկոսների թիւը մէկով էլ աւելացաւ, որ ժամանակի մատածող
մարդոց իրաւամբ ցաւ էր պատճառում (Ուռհ. 229), իսկ ինքը շա-
րունակեց շրջել Աղուանից ու Եգիպտացւոց վանքերը, հետաքրքրուել
սրբոց վկայաբանութիւններով, որոնք և հայերէն թարգմանել տուեց.
և այս իսկ պատճառով նա Վկայասէր կոչուեցաւ։ Եգիպտոսից
նա կրկին Երուսաղէմ գնաց. և երբ խաչակիրները առաջին անգամ
1099 թուի յուլիսի 15-ին Երուսաղէմն առին, Վկայասէրն այնտեղ էր
և պատերազմի մէջ ինքն էլ վիրաւորուեցաւ։

4. Երբ Վկայասէրն Եգիպտոսի ու Պաղեստինի ճգնարաններում
էր կեանք անցընում և սրբոց վկայաբանութիւնների թարգմանութեամբ
զբաղվում, այն ժամանակ մեր երկրի տէր Սելճուկեան թուրքերն
էին, որոնց իշխան Մելիք-Շահի (1072—1092) մարդասէր բնաւորու-
թեան շնորհիւ հայերը խաղաղ կեանք էին վայելում. բայց միևնոյն
ժամանակում յունաց կողմից կրօնական հալածանքներ և նոյն իսկ
սպանութիւններ անպակաս էին. այսպէս յունաց տեսլութեան զոհ գը-
նաց Գրիգոր Վկայասէրի հղբայրը Վասակ իշխանը (1078 թ.). Աչա-
տուր Շիրակացի իշխանին մի յոյն կրօնաւոր սպանեց. Մանտալեան
եղբայրները դաւաճանութեամբ Գագիկ տարագիր հայոց թագաւորին
խեղդեցին և այլն։ Յունաց հալածանքները մանաւանդ սաստկացան,
երբ կայսր դարձաւ Ալէքս Ա. Կոմնին (1081—1118), որ իւր հերետի-
կոսներ ոչնչացնելու ձգտման համար «երեքտասաներորդ առաքեալ»
իսկ կոչուեցաւ։ Այս ժամանակ կազմակերպուեցաւ այն աւազակ յոյն
կրօնաւորների խումբը, որ գիւղից գիւղ էր շրջում և ժողովրդին գըր-
գռում հերձուածողների դէմ։

Տեսնելով յոյների այս հալածանքը, և այն՝ որ Հայոց հայրապետական աթոռը Վկայասէրի երկարամեայ բացակայութեան պատճառով թափուր է՝ Հայերը Մանուէէ իշխանի հաճութեամբ կաթուղիկոս ընտրեցին Անիի Բարսեղ եպիսկոպոսին, որ Հաղբատ գնաց, և Ապուսահլից Սահփանոս կաթուղիկոսից իւր հայրապետական ձեռնադրութիւնն առաց (1081 թուին)։ Բարսեղն առաւել արիական ոգի ցոյց տուեց։ Տեսնելով որ թուրքերը հայերին ծանր հարկերով նեղում էին և տեղ-տեղ նոյն իսկ եկեղեցիներից ու եկեղեցականներից հարկեր պահանջում, Բարսեղը Մելիք-Շահի մօտ գնաց (1090 թ.) ընտիր ընծաներով։ Սուլթանը պատուով ընդունեց նրան, ազատութեան հրովարտակ տուեց և նրա բոլոր խնդրուածքը կատարեց։

Մելիք-Շահի այս պաշտպանութիւնից խրախուսուած՝ Բարսեղը Հոնի գնաց և Թէոդորոս Ալախօսիկ կաթուղիկոսից, որ Փիլատոսի հրամանով Սարպսից յետոյ կաթուղիկոս էր դարձել, խլեց հայրապետական քօղն ու գաւազանը ու աթոռից զրկեց։ Այնուհետև Բարսեղն Անտիոք գնաց և ապա Եգեսիա եկաւ։

Մելիք-Շահի սպանուելը (1092 թ.) մեծ խռովութիւն ձգեց նրա պետութեան մէջ, որ զահակռիւների շահատակութիւնների ասպարէզ դարձաւ։ Խռովութիւններից ու երկիւղից զարհուրած շատ հայեր թողին իրենց հայրենիքը և Տաւրոսի կողմերը գաղթեցին, ուր Ռուբէն մեծ իշխանն իւր տէրութեան հիմքն էր դրել և երկիրը խաղաղութեամբ կառավարում։ Գաղթականների հետ գնացին նաև շատ վանականներ, որոնք հաստատուեցան Սև լեռան վրայ, ուր արդէն իսկ կային Հայոց ու Ասորւոց վանքեր։ Գաղթականների մի մասն էլ հաստատուեցաւ Բիսունի մօտքերը, ուր իշխում էր հայազգի Գող Վասիլ իշխանը։ Այդ գաղթողների մէջ էր և երիտասարդ Սահփանոս վարդապետը, որ ապագայ հայ եկեղեցու համար նշանաւոր գործիչներ պատրաստեց։

Քաղաքական շփոթութիւններից փախչելով՝ Բարսեղ կաթուղիկոսն էս այլ և այլ տեղեր շրջեց և վերջապէս կրկին Անի հաստատուեցաւ, որ աւելի խաղաղ էր. բայց այստեղ էլ սաստիկ սովի պատճառով հայ ժողովուրդը շատ էր տանջվում։

5. Վերջապէս 1100 թուերին Գրիգոր Վկայասէրն իւր բազմամեայ պանդխտութիւնից վերադարձաւ և ճանապարհին կրկին անգամ Բիւզանդիոն հանդիպեց, և տեսնելով որ յոյները կրօնական խնդիրների պատճառով հայերին սաստիկ հալածում էն, Ալեքս Կոմնենոսի ժամանակ հայ ու յոյն եկեղեցիների հաշտութեան համար աշխատեցաւ, թէ և ապարդիւն և նոյն իսկ ինքը Ալեքս Կոմնենոսից հալածուելով 1102 թուերին Սև լեռն ապաստանեցաւ։ Ձիշդ այդ 1102 թուին

ծառայութիւն և պատանեցաւ և յոյներից հայերը կրկնակի ևս հալածուեցան։ Այս նեղութիւններից ազատ մնալու համար ծառայութիւն առաջնորդներից ոմանք թուղթ գրեցին Վկայասէրին՝ խնդրելով իրենց մի հրամանատար. և Վկայասէրն այս միտքն պատասխանեց՝ թէ հայրենի աւանդութեան վրայ հաստատուն պէտք է մնալ, և հալածանքի պատճառով երբեք չտատանուել։ Բայց և այնպէս յունաց հալածանքներից ազատուած՝ շատերը, նոյն իսկ եկեղեցականներ, կրօնափոխ եղան և դժբաղտաբար այս մարդիկը իրենց բնիկ ազգայիններին աւելի ևս թշնամի դարձան։ Սև լեռան առանձնութեան մէջ Վկայասէրը դարձեալ շարունակեց թարգմանական գործերով պարապել և միևնոյն ժամանակ դաստիարակել իւր քրոջ որդու Ապիրատ իշխանի երկու որդոցը՝ Գրիգորին ու Ներսէսին, որոնք իւր մօտ էին գտնվում։ 1105 թուին նա Բիսունի մօտ եղած կարմիր վանքը գնաց՝ տանելով իւր հետ մանկահասակ տանտերին։ Այստեղ իւր վերահաս մահը զգալով՝ նա Անիից Բարսեղ կաթուղիկոսին կանչեց, և Գող Վասիլին ներկայութեամբ իւր տանտերին Բարսեղի խնամքին յանձնելով՝ պատուիրեց որ ապագային նրանց կաթուղիկոսացնեն։ 1105 թուին նա վախճանեցաւ ու թաղուեցաւ կարմիր վանքում։

Բարսեղ կաթուղիկոսը Գրիգորին ու Ներսէսին յանձնեց ժամանակի նշանաւոր վարդապետ Սահփանոսի դաստիարակութեան, որ Շուղր անապատի կարմիրվանքի վանահայր էր։

6. Բարսեղ կաթուղիկոսն իւր կեանքի վերջին օրերը կիլիկիայում անցկացրեց։ 1113 թուին նա պատրաստուեցաւ Երուսաղէմ երթալու, բայց իւր նպատակին չկարողացաւ հասնել։ Այն տանիքը, որի վրայ կանգնած երեկոյեան ժամերգութիւնն էր կատարում, կործանուեցաւ, և ինքն էլ չարաչար վնասուեցաւ։ Զգալով իւր մահը՝ Բարսեղը խնդրեց որ իրեն Շուղր անապատը տանեն, ուր նա Գրիգորին յանձնեց հայրապետական քօղն ու գաւազանը՝ խնդրելով ներկայ եղողներից, որ նրան կաթուղիկոս օծեն։ Այսպէս և կատարուեցաւ։

Բ. ԳԼՈՒԽ

ՀԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ՅՈՑՆ ԵՒ ԼԱՏԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ

ԳՐԻԳՈՐ Գ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ

1. Բարսեղ կաթուղիկոսի մահուանից յետոյ Կարմիր վանքում գումարուած հայ եպիսկոպոսների ու վանականների ժողովը կաթուղիկոս ընտրեց Գրիգոր վարդապետ Պահլաւունուն, Ապլղասդ իշխանի որդուն, ինչպէս որ յանձնարարել էին Գրիգոր Վկայասէր և Բարսեղ կաթուղիկոսները, և միևնոյն օրն եպիսկոպոս ու կաթուղիկոս ձեռնադրեցին (1113 թ.)։ Մօտ քսան տարեկան էր Գրիգոր Գ-ը, երբ կաթուղիկոս եղաւ. բարձրահասակ, գեղեցկատեսիլ էր նա, աղնուաբարոյ, բարեգործ, միանգամային բազմահմուտ։

Գրիգոր Գ-ի կաթուղիկոս ընտրուելը դժգոհութիւնների պատճառ դարձաւ։ Դժգոհներից մէկն էր Աղթամարի Դաւիթ եպիսկոպոսը, որ ի նկատի առնելով Գրիգորի անչափահասութիւնը՝ կամեցաւ ինքը կաթուղիկոսանալ. այս առթիւ նա հինգ եպիսկոպոսներից ժողով գումարեց, և ժողովը պատճառաբանելով, թէ երբեմն վահանիկ կաթուղիկոսը Վասպուրականի Զոլոյ վանքումն է վախճանել, թէ Աղթամարումն է գտնվում ս. Գրիգոր Լուսաւորչի պատարագի սեղանը, գաւազանը, մաշկեղէն զօտին, ս. Հռիփսիմէի հողաթափը, արիւնաներկ թաշկինակը՝ օրինաւոր համարեց Դաւթի ցանկութիւնը և նրան կաթուղիկոս օծեց։ Դաւիթն ամէն կերպ աշխատեց իւր կուսակիցների թիւը բազմացնել և ոսկեչանքով ու ընծաներով նամակներ գրեց հայ եպիսկոպոսներին։ Անոնցից չընդունեցին նրան, բայց Սիւնեաց ու Մարդպետական եպիսկոպոսներն ընդունեցին իբրև կաթուղիկոս գէթ մի տարի։

Հայրապետական Աթոռի այս հերձուածը վերջնելու համար Գրիգոր Պահլաւունին 1114 թուին գումարեց Սև լեռան (Կարմիր վանքում) ժողովը, որին ներկայ էին 2500 հոգի՝ եպիսկոպոսներ, վանականներ, իշխաններ և այլն։ Ժողովը քննելով Դաւիթ Աղթամարցու ընթացքը՝ պատասխանեց նրան, մերժեց նրա կաթուղիկոսութիւնն և օրինաւոր կաթուղիկոս ընդունեց Գրիգոր Գ Պահլաւունուն։ Թէև Դա-

ւիթ Աղթամարցին դատապարտուեցաւ մի այսպիսի բազմամարդ ժողովի կողմից, և նրա կուսակիցները՝ Սիւնեաց ու Արտազի եպիսկոպոսները—արդէն հեռացել էին, բայց և այնպէս նա շարունակից իւր իշխանութիւնը։ Նրա մահուանից յետոյ էլ չվերացաւ այդ բաժանուած կաթողիկոսութիւնը և շարունակւում էր մինչև մեր օրերն անընդհատ յաջորդականութեամբ։

Կարծվում է թէ Սև լեռան սոյն ժողովում իբրև օրէնք որոշուեցաւ, որ ապագային օրինաւոր կաթուղիկոս ճանաչուի այն անձը, որի մասին ներկայ լինելով կամ զրաւոր կերպով իրենց հաճութիւնն յայտնեն արևելեան հետևեալ չորս մեծաթոռ եպիսկոպոսները. 1. Բջնու եպիսկոպոսը՝ հաւանօրէն հին Արարատեանի յաջորդը։ 2. Հաղբատի եպիսկոպոսը, որ 1081 թուին հաստատուեցաւ Բարսեղ ու Աղուանից Ստեփանոս կաթուղիկոսի ձեռքով, և որի առաջին եպիսկոպոսը Սարգիսն էր։ 3. Արտազի ս. Թադէոս վանքի եպիսկոպոսը, որ հին ժամանակներում Մարզպետական եպիսկոպոս էր կոչվում. և 4. Սիւնեաց եպիսկոպոսը։

2. Հայրապետական իշխանութեան միութիւնը վերականգնելուց յետոյ՝ Գրիգոր Պահլաւունին հետամուտ եղաւ նաև հայ եկեղեցու բարեկարգութեան ու հաստատութեան։ Նա շինեց շատ աւերուած վանքեր ու եկեղեցիներ, որոնք սաստիկ վնասուել էին 1114 թ. երկրաշարժից, շատ թշուառներ սփոփեց նիւթական օժանդակութեամբ։ Նա գործակից ընտրեց իւր կրտսեր եղբօրը, որ 18-ամեայ վարդապետ ձեռնադրուեցաւ և Ներսէս կոչուեցաւ։ Զնայելով պատանի հասակին՝ նա գերազանց էր ժամանակակիցների մէջ իւր ընատուր շնորհքով ու դիտութեամբ, որի համար և ստացաւ Շնորհալի կոչումը։

Հայրապետական Աթոռն աստանդականութիւնից ազատելու համար երկու եղբայրները խորհեցան Աթոռը կրկին Անի տեղափոխել, և այս առթիւ Գրիգոր Պահլաւունին արդէն առած էր Անիի իշխան Ապլղասարի յօժարութիւնը։ Բայց այս ժամանակ (1124 թ.) հայերն Անին վրաց յանձնեցին և այնուհետև Շիրակի բնակիչների համար դառնութեան օրեր եկան։

Գրիգոր կաթուղիկոսը մեծապէս վշտացաւ, որ Անեցոց անխոհեմ ընթացքի պատճառով իւր ցանկութիւնը չկարողացաւ կատարել։ Կաթուղիկոսական Աթոռի համար իբրև յարմարաւոր տեղ վերջապէս Ծովք գիւղն ընտրեցին, որ իրենց հայրենի սեպհականութիւնն էր և Աթոռը Կարմիր վանքից 1125 թուին այստեղ փոխեցին։ Այս ժամանակներում Գրիգոր Պահլաւունին իւր եղբօրը Ներսէսին Մամխոխայի եպիսկոպոս ձեռնադրեց. բայց նա մշտապէս հայոց հայրապետանոցումն էր ապրում և եկեղեցու գործերով զբաղվում։

Գրիգոր Գ-ը բնաւորութեամբ ու հակումներով շատ նման էր իւր քեռուն՝ Վկայասէրին. սիրում էր սրբոց վկայաբանութիւններով զբաղուել, որի համար և Փոքր Վկայասէր կոչուեցաւ, և ուխտագնացութիւններով պարապել։ Այս խակ պատճառով անհրաժեշտ էր Շնորհալու նման առաւել վարչական տաղանդով և միանգամայն գիտութեամբ օժտուած մի անձնաւորութիւն օգնական ունենալ. մանաւանդ որ այս ժամանակներում հայոց եկեղեցին շփումներ ունեցաւ Ասորւոց՝ Լատինաց և Յունաց եկեղեցիների հետ և միութեան խնդիրն առանդով նորոգուեցաւ։

3. Արդէն տեսանք, որ Վկայասէրի օրերում ծիսական մի քանի խնդիրների առիթով հակառակութիւն էր ընկած հայ ու ասորի եկեղեցիների մէջ, որոնց նկատմամբ և Գէորգ Գ Լօռեցին գրեց իւր գեղեցիկ թուղթն Ասորւոց Յովհաննէս պատրիարքին։ Թղթակցութիւններով խնդիրը չփակուեցաւ և երկու եկեղեցիների քննամական յարաբերութիւնը շարունակուեցաւ։ Քննամութիւնն աւելի սաստկացաւ մի անանուն գրուածքի պատճառով, որի մէջ ծաղրվում էին Ասորւոց եկեղեցական մի քանի սովորութիւնները և որը ժամանակակից-ները Գրիգոր Պահլաւունուն էին վերագրում։ Այս անանուն գրութեան հակառակ դուրս եկաւ և մի ասորի գրութիւն (Հաննէ Բարանդրէաս եպիսկոպոսի գրուածքը), ուր ծաղրվում էր հայոց լաթոցի հագով պատարագելն և այլն։ Գրիգոր կաթուղիկոսը տեսնելով այս ծաղրող գրութիւնների յարուցած խռովութիւնը՝ հրամայեց այրել նրանց (1136 թ.)։ Խռովութիւնների գլխաւոր վայրերն էին Միջագետքի Ամայք ու Շղղղման գաւառները։ Այս խռովութիւնների մասին Գրիգոր կաթուղիկոսին գրեց Թլկուրան աւանի Աւիւճ իշխանը՝ խնդրելով նրանց առաջն առնել և թիւր կարծիքները փարատել։ Գրիգոր Պահլաւունին յանձնարարեց իւր եղբօր Ներսէս եպիսկոպոսին Աւիւճ իշխանի ցանկութիւնը կատարել. և Շնորհալին գրեց իւր առաջին կրօնական գեղեցիկ նամակը, ուր հանդարտ ոգւով, պարզ բայսարութեամբ լուծում է յարուցուած կրօնական վէճերը և երկու ազգերին էլ յորդորում է սիրով ու խաղաղութեամբ ապրելու։ Բայց և այնպէս քննամական յարաբերութիւնները տակաւին բաւական ժամանակ շարունակուեցան, և ասորի եկեղեցականներից մէկը՝ Յակովբ բար Սալիբի՝ Դիոնիս կոչուած, որ 1156 թ. Մարաշի առման ժամանակ հայոց ձեռքը գերի էր ընկել, «պնդագլուխ ու յամառ» հայոց սովորութիւններն սկսաւ պախարակել։ Մօտիկ յարաբերութիւն սկսուեցաւ Ասորի ու հայ եկեղեցիների մէջև, որը Յունաց կողմից Հայ ու Յոյն եկեղեցիների միութեան խնդիրը մէջտեղ ընկաւ, և Միքայէլ Մեծը Ասորւոց պատրիարք դարձաւ (1166—1199)։

Առաւել նշանաւոր եղաւ Հայ, Յոյն և Լատին եկեղեցիների յարաբերութիւնը, որ այս ժամանակներում սկսուեցաւ։

4. Հայ և լատին եկեղեցու յարաբերութեան սկիզբն առաջին անգամ ԺԲ դարում դրուեցաւ, երբ Արևմուտքի զինուորական ոյժը «խաչակիր» անունով Արևելք թափուեցաւ ս. Գերեզմանն անհաւատների ձեռքից ազատելու համար։ Տաւրոսեան լեռներում ապաստանուած հայ անկախ իշխանները, որոնք լցուած էին աւելութեամբ դէպի յոյները՝ մեծապէս նպաստեցին այս խաչակիրներին՝ յուսալով թէ սրանց օգնութեամբ ոչ միայն կըպաշտպանուին շրջապատող Թուրքերից, այլ և Յոյներից, որոնք Թուրքերից աւելի ընաս էին հասցնում հայ ժողովրդին։ Սոյնպիսի բարեկամական տրամադրութիւն էին ցոյց տալիս խաչակիրներին նաև հայ եկեղեցականները, որոնք ականատես եղան այն բարբարոսութիւններին, որ Յովհաննէս Կրփիճեցին կայսրը 1137 թ. Լևոն առաջնի երկրում գործեց—նորահաստատ հայ իշխանի ամբողջ երկիրն աւերուեցաւ, իշխանն իւր երկու որդոց հետ գերուեցաւ, եկեղեցիներ ու գրչադրեր այրուեցան։ Այսպիսի ամբոխի գործերով բնականաբար Յոյները կարող չէին հայոց հաւակրութիւնը վայելել, և շատ բնական էր այն մտերմութիւնը, որ հայ եկեղեցականութիւնն ու իշխանները ցոյց տուին «աղատաբար» խաչակիրներին։

1139 թուին Անտիոքի մէջ մի ժողով գումարուեցաւ նոյն տեղի Հռատուլփոս (Ռուտուլի) եպիսկոպոսի գործի քննութեան համար։ Այս լատին արքեպիսկոպոսը Հռոմից անկախ լինելու ձգտումն էր ցոյց տալիս՝ պատճառաբանելով թէ Անտիոքն է իսկապէս Պետրոս Առաքեալի աթոռը։ Նոյնպիսի ձգտումն էր ցոյց տալիս և Երուսաղէմի Փուլխեր եպիսկոպոսը։ Արևելքի այս գործերը յարդարելու համար՝ Հռոմը Ալպերիկ (Աղբերիկ) եպիսկոպոսին Արևելք ուղարկեց, որը և 1139 թուին Անտիոքի ժողովը գումարեց։ Ժողովին հրաւիրուեցան Գրիգոր Գ. Պահլաւունին ու Ներսէս Շնորհալին, որոնք և նորկայ գտնուեցան ժողովից յետոյ պապի դեսպանն Երուսաղէմ գնաց, ուր և մնաց մինչև 1140 թուի Զատիկը. այնտեղ գնաց և Գրիգ. Պահլաւունին. մեծ պատուով ընդունուեցաւ, և պապի նուիրակի հետ Սիոնի եկեղեցու նաւակատիքի հանդէսին ներկայ գտնուեցաւ։ Ալպերիկն այստեղ էլ 1140 թուին ժողով գումարեց. ներկայ եղաւ և Պահլաւունին իւր եպիսկոպոսների հետ, և այս ժողովում անա առաջին անգամ խնդիր ծագեցաւ հայ և լատին եկեղեցիների դաւանական ու ծիսական տարբերութիւնների մասին։ Պահլաւունին պատշաճ պատասխաններ տալով՝ պարզեց հայոց եկեղեցու դաւանութիւնը և թիւրիմացութիւնները փարատեց. գալով Ծննդեան տօնի ժամանակին ու Բաժակին մէջ ջուր խառնելուն՝ նա խոստացաւ կարգադրութիւն անել հայրենիք դառնա-

լուց յետոյ։ Ալպերիխը շատ գոհ մնաց այս բացատրութիւններից, և երբ Հռոմի դարձաւ, մեծապէս գովեց Իննովկենտիոս Բ. պապի առաջ թէ Գրիգորին և թէ նրա եղբօրը Ներսէսին։ Ահա այս հանգամանքն առիթ առնելով՝ պապը 1141 թուին մի նամակ գրեց Գրիգոր Պահլաւունի կաթուղիկոսին, և յիշելով Հայոց եկեղեցու ուղղափառութիւնը՝ մեծ ցանկութիւն յայտնեց, երկու եկեղեցիների կատարեալ միութեան համար բաժակին մէջ ջուր խառնուի և Բրիստոսի Ծննդեան ու Մկրտութեան ծոնները առանձին-առանձին ծոնուին. և վերջապէս այդ գործի համար Ներսէսին կամ մէկ ուրիշին իր մօտ ուղարկել։ Այս նամակի հետ Պապն ուղարկեց նաև Պահլաւունուն պալիում ու դասաղան։

Այս թղթակցութիւնից 3—4 տարի վերջը Գրիգոր Պահլաւունու կողմից Եւգենիոս Գ Պապի մօտ մի պատգամաւորութիւն գնաց (1145 թ.), որի իսկական նպատակը մեզ յայտնի չէ. բայց ի նկատի առնելով հայոց և առ հասարակ ամբողջ Արևելքի այդ ժամանակի քաղաքական դրութիւնը՝ կարելի է կարծել, թէ օգնութիւն աղերսել էր «սուտանուն» քրիստոնեանների (ինչպէս կոչում է Շնորհալին՝ Յոյներին) և մահմեդականների դէմ։ Արդարև 1137 թուից հայոց դրութիւնը Կիլիկիայում շատ ծանր էր. երկիրն ամբողջապէս յունաց ձեռքն էր գտնվում, որոնք ամէն տեսակ չարիք էին հասցնում հայ ժողովրդին. միւս կողմից էլ Թուրքերն այնչափ զօրացան, որ շատ քաղաքներ առին, ինչպէս և 1144 թուին Եդեսիան չարաչար աւերեցին, որ այնպէս սրտաշարժ կերպով ողբաց Ներսէս Շնորհալին։ Լևոնի որդին Թորոսն էլ հերոսաբար կռւում էր իւր հայրենի կործանած գահը վերականգնելու համար։ Բայց Եւգենիոս Գ. Պապն այս թշուառութիւնները դարմանելու մի միջոց միայն առաջարկեց հայերին՝ ս. Բաժակին մէջ ջուր խառնել և Ծննդեան ու Մկրտութեան ծոները լսաինաց նման անջատ ծոնել։

Տեսնելով երկրի քաղաքական այս շփոթ կացութիւնը և Արևմտքից որ և է օգնութիւն ստանալուց յուսահատ՝ Գրիգոր Պահլաւունին ու Շնորհալին աշխատեցին Հայրապետական Աթոռի համար մի ապահով տեղ գտնել և կանգ առան Հռոմկլայ բերդի վրայ, որ Եփրատի մօտ էր և Ֆրանսիացի Ճօսլին իշխանի սեփականութիւնը։ Նրանք 1148 թուերին Աթոռը Ծովքից այստեղ փոխադրեցին, իսկ 1151 թուին բերդն էլ գնեցին իրրև Հայրապետանոցի սեպհականութիւն և այստեղ էլ վերջնականապէս հաստատուեցան։ (Աթոռը Հռոմկլայում մնաց մինչև 1292 թուականը)։ Հռոմկլայի ամրութիւններում ապահովուած՝ Պահլաւունին ու Ներսէս Շնորհալին գրական գործերով զբաղուեցան և վերջինս իւր գործերի մեծ մասն այս ժամանակ գրեց։

5. Միաժամանակ սկսուեցաւ նաև Հայ և Յոյն եկեղեցիների միութեան խնդիրը և այն՝ հետևեալ հանգամանքների մէջ։ Կիլիկիայի բարձունքներում երկու նշանաւոր հայ իշխաններ՝ Լամբրոնի տէր յունաց էր Օշինն ու Թորոս Լևոնին գժտուած էին, և վերջինս գժտութեան մէջ էր ձգած առաջինին։ Այս երկու իշխանների գժտութիւնը վերցնելու և խաղաղութիւն հաստատելու համար՝ Գրիգոր Պահլաւունին իւր Ներսէս եղբօրն ուղարկեց (1165 թ. վերջերը) իբրև հաշտարար, որ իւր քաղցր բնաւորութեամբ ու համոզիչ խօսքերով հաշտեցրեց նրանց, այնպէս որ Թորոսն իւր աղջկանն Օշինի որդուն Հեթումին կնութեան տուեց։ Երբ իւր գործը կատարած վերադառնում էր Շնորհալին, ճանապարհին Մամիստիա քաղաքում նա պատահեցաւ Մանուէլ կայսեր (1143—1180) փեսայ Ալէքս դուքային, և խօսակցութիւն ունեցաւ հայ և յոյն եկեղեցիների դաւանական ու ծիսական տարբերութիւնների վրայ՝ մի առ մի հերքելով այն բոլոր թիւր կարծիքները, որ տարածուած էին հայ եկեղեցու նկատմամբ յունաց մէջ։ Ալէքս իշխանը՝ գոհ Շնորհալու տուած բացատրութիւններից, խնդրից, որ նա Հայ եկեղեցու դաւանութիւնը գրաւոր տպէս իրեն յանձնէ. Շնորհալին նրա խնդիրը կատարեց (1166 թ.)։ Ալէքս իշխանն երբ Պոլիս դարձաւ, Մանուէլ կայսեր ու պատրիարքին ներկայացրեց Շնորհալու տուած դաւանութեան թուղթը։

Մանուէլ կայսրն Իտալիայում կրկին անգամ հաստատուելու քաղաքականութեամբ արդէն վաղուց աշխատում էր բրիստոնէական եկեղեցին շահագործել։ Հոհէնշտաուֆեան գերմանական տան հակառակ՝ նա 1161 թուին Ալեքսանդր Գ. պապի (1159—1181) կողմն անցաւ, և մի քանի դաւանական զիջումներ արաւ՝ յոյն և լատին եկեղեցիների միութիւնը գլուխ բերելու և այս միջոցով արևմտեան-հռոմէական կայսերական թագը ստանալու համար։ Առաւել եռանդով Մանուէլն այս խնդրով զբաղուեցաւ 1166 թուերին, և իւր ոսկիներով ոչ միայն պապին շլացրեց, այլ և Վենետիկեցոց և Անկոնացոց, որոնք յունական զօրութեան վրայ վստահացած՝ Փրետերիկոս Բարբարոսային հակառակ դիրք բռնեցին։

Եկեղեցիների միութեամբ քաղաքական յաջողութեան հասնելու երաշխաւորելով վառուած՝ Մանուէլ կայսրը սիրով կարդաց Ներսէս Շնորհալու դաւանութեան թուղթը և կարծեց, թէ այդ միակ ճանապարհն է որով կարող է նա կիլիկեցի հայ կաթոլիկներին վերջնականապէս ընկճել և իրեն հնազանդեցնել։ Նա անմիջապէս իւր հաւատարիմ ծառայ Սմբատի ձեռքով մի նամակ ուղարկեց Գրիգոր Գ-ին, և յայտնելով իւր խնդակցութիւնն եկեղեցիների միութեան առթիւ՝ խնդրում էր իւր եղբօրը Ներսէսին Պոլիս ուղարկել, ուր 1168 թուին Արևելեան

ու Արևմտեան եկեղեցիները միացնելու ժողովը պէտք է դումարուէր։ Պատգամաւորը Գրիգոր Պահլաւունեան վախճանած գտաւ և Ներսէսին յաջորդած, որն և ընդունեց կայսեր հրաւիրական թուղթը։

Պատմութիւնն այսպէս է ներկայացնում Շնորհալու կաթուղիկոսանալը։ 1166 թուին՝ երբ Շնորհալին Հռոմկլայ գաղթաւ, Գրիգոր Պահլաւունին կրկին առաջարկեց նրան կաթուղիկոսութիւնը, և անմիջապէս եպիսկոպոսներ ու վանականներ հրաւիրեց և իւր որոշմունքը նրանց յայտնեց։ Ժողովը մեծապէս ուրախացաւ այս ընտրութեան վրայ. Ներսէսն ակամայ յանձն առաւ իւր եղբօր ձեռքից կաթուղիկոսական ձեռնադրութիւնը և մի գեղեցիկ ատենաբանութեամբ ցոյց տուեց կաթուղիկոսական իշխանութեան բարձրութիւնն ու իւր ապիկարութիւնը։

Այս ընտրութիւնից երեք ամիս վերջը Գրիգոր Պահլաւունին վախճանեցաւ 53 տարի կաթուղիկոսական իշխանութիւնը վարելուց յետոյ և թաղուեցաւ Հռոմկլայի մէջ։

Գ. ԳԼՈՒԽ

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ.

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

1. 64 տարեկան էր, երբ Շնորհալին կաթուղիկոս դարձաւ. թէև մարմնով ակար՝ բայց նա նոյն հոգւով ու եռանդով կառավարեց հայ եկեղեցին, ինչպէս երբեմն իւրև խորհրդական ու գործակից իւր եղբօրը։ Ժամանակի դառնութիւնն ու հայրապետական աթոռի վիճակը նա այսպէս է պատկերացնում. «Շրջել ամէն կողմ, և Աստուծոյ խօսքը քարոզել... անկարելի է ժամանակիս չարութեան ու բաղմիշխանութեան պատճառով. չկայ մեր մէջ մի բազմաժողով թագաւորական քաղաք, որ հայրապետական աթոռը այնտեղ հաստատելով մեր ժողովրդին ուսուցանէինք. այլ այծեամի նման շներից ու որսորդներից փախած՝ այս քարանձաւն ենք ապաւինած՝ զուրկ ամէն տեսակ մարմնական պէտքերից... մեր աղգը ցրուած է ամէն տեղ օտար աղգերի մէջ, հայրապետական աթոռս տարուբեր՝ անպատշաճ տեղեր, և օտար աղգերի բռնութեան ու հրկիզուի տակ, իսկ մեր աղգի կողմից՝ անօգ-

նական ու աննուէր. հնար չկայ համարձակ շրջել և ուսուցանել»։ Բայց այն՝ ինչ որ անձամբ չէր կարող կատարել, Շնորհալին աշխատում է գէթ գրով կատարել. Եւ մինք, ասում է, այս տօթագին քարանձաւի մէջ (Հռոմկլայ) արգելուած գրաւոր կերպով ձեզ հետ ենք խօսում»։ Շնորհալու այս թղթերի ժողովածուն, որով նա ամբողջ հայ ժողովրդի հետ է խօսում, կոչվում է «Թուղթ ընդհանրական առ հայոց աշխարհն հայասեռ ազինս», որ շատ անգամ է տպագրուել։ Թուղթըն ուղղուած է հայ ժողովրդի բոլոր դասակարգերին՝ վանականներին, առաջնորդներին, քահանաներին, գիւղացիներին և կանանց, ուրոնց և տալիս է բարոյական պատշաճ խրատներ՝ շեշտելով այն թերութիւնները, որ նրանց մէջ է նկատել։

2. Ահա երբ այսպէս Շնորհալին հայ ժողովրդի հոգևոր վերաշինութեան խնդրով էր զբաղուած՝ Միրանածին Մանուէլի կողմից Սմբատ իշխանը վերոյիշեալ թուղթը բերեց (1166—1167), որով կայսրը խնդրում էր Գրիգոր Պահլաւունուց՝ հայ և յոյն եկեղեցիների միութեան գլխաւորութեան համար իւր Ներսէս եղբօրը Պոլիս ուղարկել։

Ընդունելով կայսեր թուղթը՝ Շնորհալին պատասխանեց, թէ ցաւում է, որ այդպիսի բարի գործի համար, որ է եկեղեցիների միութիւնը, անկարող է հայրապետական Աթոռն անհաւատների մէջ թողնել ու գալ։ Յայտնելով իւր խնդութիւնն եկեղեցիների լինելիք միութեան առթիւ, որով երկու ազգերի մէջից ատելութիւնը պիտի վերանայ, և դրաւատելով կայսեր ջանքերն այդ մասին՝ Ներսէսը միութեան յաջողութեան համար հետևեալ պայմաններն առաջարկեց. ա. որ այդ խնդրի համար կայսրը անձամբ Արևելք գայ. բ. որ վիճաբանութեան ժամանակ խոնարհ, հեզ ու քաղցր լինի. գ. որ պատուիրէ յոյն եկեղեցականներին ու ժողովրդին՝ չատել, չհայհոյել հայ նժդեհ ու պանդուխտ ժողովրդին. դ. որ դէմառդէմ խօսակցութիւնը չլինի սիրտբար ու ծառայաբար, այլ իրրև հաւասար հաւասարի հետ. ե. որ վիճաբանութեան հիմք միմիայն ս. Գիրքն ու ս. հայրերի գրուածներն ընդունուին, որոնց համեմատութեամբ նկատուած որևէ դաւանական ու ծիսական թերութիւն երկու եկեղեցիներից որի մէջ և լինի, խոյն վերացուի։ Այս պայմանները դնելուց յետոյ՝ Շնորհալին ընդարձակօրէն կրկին ներկայացնում է Հայոց եկեղեցու դաւանութիւնն ու աւանդութիւնները և նոյն Սմբատ պատգամաւորի ձեռքով կայսեր ուղարկում։ Շնորհալու այս թղթին կայսրն երկու տարուց միայն պատասխանեց (1170 թ. մայիս). այս ժամանակներում (1167 թուի վերջերը) նա զբաղուած էր Արևմտեան քաղաքական գործերով և այն ժողովով, որ գումարուեցաւ Արևելեան ու Արևմտեան եկեղեցիների միութեան համար. և միութիւնը գլուխ չեկաւ՝ գլխաւորապէս յոնաց

Միքայէլ Անխիալոս պատրիարքի ու հոգևորականութեան ցոյց տուած հակառակութեան պատճառով։

Զկարողանալով Արևմտքում եկեղեցիների միութիւնը գլխաւորել, որին սակայն Մանուէլը մինչև մահը ձգտեց, կայսրն աշխատեց գէթ նոյնը իրագործել Արևելքում. 1170 թ. մայիսին նամակ գրեց Շնորհալուն, և գովելով Ներսէսի կամքն ու մտածողութիւնն եկեղեցիների միաւորութեան նկատմամբ՝ յորդորեց իրականացնել այդ մտածողութիւնը և պատճառ դառնալ մի ամբողջ ազգի վերկութեան, որով ինքը Շնորհալին էլ թագաւորական շնորհների արժանի կըդառնար։ Յայտնեց նաև, թէ այդ գործի համար իւր կողմից ուղարկում է Թէորիանոս մագիստրոսին ու Յովհաննէս Ութմանին իբրև լիազօրներ։

Դիսպանները ներկայացան Շնորհալուն և մի ամսի չափ վիճաբանութիւն ունեցան՝ գլխաւորապէս Քրիստոսի մի կամ երկու բնութիւն ունենալու խնդրին և հայ ու յոյն եկեղեցիների դաւանական ու ծիսական տարբերութիւնների մասին։ Վիճաբանութեան ներկայ էին լինում Գրիգոր Տղայ, Վարդան վարդապետը, Պետրոս ու Սահակ եպիսկոպոսները, Ստեփանոս վարդապետը և ասորւոց կողմից՝ Քեսունի Յովհաննէս եպիսկոպոսը։

Այս ամսօրեայ վիճաբանութեան մանրամասն արձանագրութիւնը մեզ տալիս է Թէորիանոսը (Պալճ. Պատ. եր. 204) այնպէս ներկայացնելով, թէ Շնորհալին որպէս թէ բոլորովին ընդունել է յունաց եկեղեցու դաւանութիւնը և խոստացել նոյնն ընդունել տալ նաև Հայոց, և որպէս թէ այդ մտքով մի խորհրդական թուղթ ևս գրել է կայսեր։ Սակայն Թէորիանոսի այդ պնդումը զրպարտութիւն կամ չափազանցութիւն պիտի համարինք և արդիւնք այն չափազանց խաղաղասիրական ոգուն, որ ցոյց էր տալիս Շնորհալին։ Վիճաբանութիւնն այն արդիւնքն ունեցաւ միայն, որ Յոյներըհամոզուեցան, թէ Հայոց «մի բնութիւն» վարդապետութիւնը հեռու է բնաւ Եւտիքէսի չիմաստութիւնից, իսկ Հայերն էլ նոյնպէս համոզուեցան, թէ Յոյներն երկու բնութիւն ասելով՝ հեռու են «ի Նեստորի բաժանմանէ». բայց այս չի նշանակում, թէ Շնորհալին ընդունեց Քաղկեդոնի վարդապետութիւնը։ Շնորհալու դաւանութեան ամենաբացայայտ վկայութիւնը այն թուղթն է, որ նա գրեց Մանուէլ կայսեր (1170 թ. հոկտ.) Թէորիանոսի ձեռքով։ Այս թղթի մէջ չկայ բնաւ որևէ քաղկեդոնական բացատրութիւն, այլ ընդհակառակը կրկին ու կրկին շեշտվում է հայոց եկեղեցու մի բնութեան վարդապետութիւնն և նզովվում են նրանք, որոնք Քրիստոսի մէջ երկու բնութիւն են դաւանում ըստ Նեստորի ...և միաւորութեան չեն տալիս չարչարանքն ու անչարչարութիւնը, մահն ու անմահութիւնը։ Ի վերջոյ իւր թղթի մէջ Շնորհալին յայտնում է կայսեր, թէ հաւատքի ու եկեղեցական կարգերի մասին կատարեալ պատասխան միմիայն հայ եպիսկոպոսների ժողովը կարող է տալ և խոստանում է նոյնը շուտով գումարել։

Թէորիանոսի անապատութեամբ լի թուղթը, ինչպէս և Շնորհալու խաղաղասիրական ոգեմտքրութիւնը այնպէս կարծել տուին յոյներին, թէ Հայոց կաթուղիկոսն ընդունել է Քաղկեդոնի ժողովը. և այս իսկ պատճառով ամենուրեք մեծ ուրախութիւն էր տիրում։ Հայոց կաթուղիկոսի յունաց հետ միաբանած լինելուն անհիմն լուրը մեր երկրի մէջ ևս տարածուեցաւ, և գոնուեցան մարդիկ, որոնք Շնորհալուն յանդիմանական թղթեր գրեցին. այս իսկ պատճառով Ներսէսը հարկ է համարում բոլոր եպիսկոպոսներին ու վարդապետներին ծանուցանել յունաց կողմից երեք անգամ եղած առաջարկութիւնն ու իւր տուած պատասխաններն, որ ամենքն էլ գործին տեղեակ լինելով՝ անուղղամիտ մարդոց խօսքերին չհաւատան։

3. Վինեաիկեցոց հետ պատերազմով զբաղուած լինելով, և կամ սպասելով որ Շնորհալին ժողովով իրեն մի վերջնական պատասխան կըտայ՝ Մանուէլ կայսրը դարձեալ երկու տարի լռեց և 1172 թ. դեկտեմբերին Շնորհալու վերջին թղթին պատասխան գրից զարմանք յայտնելով, որ նա եկեղեցու հայրերի խրատն ու վկայութիւնները արհամարհելով դարձեալ մի բնութիւն է վարդապետում (մինչդեռ Թէորիանոսը Շնորհալուն բոլորովին այլ կերպով էր ներկայացրել)։ Բանակցութիւններին վերջ տալու համար կայսրն ինը կէտեր առաջարկեց և պահանջեց որ հայերը բացայայտ ու որոշ պատասխան տան։ 1.Նզովել մեկ բնութիւն խոստովանողներին.2.Դաւանել Քրիստոսի մէջ մի անձն, երկու բնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւն. 3. Սուրբ Աստուածը առանց խաչելեալի ու Եւի հրգել. 4. Գլխաւոր տօները՝ Ծնունդը, Մկրտութիւնը, Աւետումն ու Տեառնընդառաջը յունաց հետ տօնել. 5. ս. Մեռոնը ձեռքից շինել. 6. Ժողովուն հացով ու ջրախառն գինով պատարագել. 7. Պատարագի ժամանակ քահանաներն խառն գինով պատարագել. 8. Ընդունել Դ. Ե. Զ. և Է տիեզերական ժողովները. և 9. Հայոց կաթուղիկոսի հաստատութիւնը յունաց կայսրից ընդունել։ Կայսեր գրութեան իմաստով Միքայէլ պատրիարքն ևս թուղթ գրեց։ Այս նամակները Հռոմկլայ բերին նոյն Թէորիանոսն ու Յովհաննէս Ութմանը, և կայսեր կողմից Ասորւոց Միքայէլ պատրիարքին ևս հրաւիրեցին։ Այս անգամին էլ Միքայէլը հրաժարուեցաւ անձամբ տանուելու կայսեր պատգամաւորների հետ և իրեն փոխանակ ղրկեց Թէոդոր վարդապետին, որ հմուտ էր յունարէն ու հայ լեզուներին։

Թէոդիանոսը դալթեալ մանրամասն նկարագրում է իւր հրկրօրէ տեսակցութիւնն ու վիճաբանութիւնը Ներսէս Շնորհալու հետ և վերջինիս յունաց բոլոր առաջարկութիւնները ընդունած լինելը և միայն հայ եպիսկոպոսների հրկիւղից առժամանակ իւր բացայայտ խոստովանութիւնը թաքցնելը և այլն և այլն։ Թէոդիանոսի առաջին արձանագրութեան նման այս երկրորդն էլ պէտք է մերժենք՝ համարելով այդ գրութիւնը մի չարախօսութիւն։ Շնորհալին կարող չէր բնաւ այն խարդախ բնաւորութիւնն ունենալ, որ մեծամիտ Թէոդիանոսն է ներկայացնում։ Ստոյգ պատմութիւնն այս է ասում, որ երբ Շնորհալին կայսեր առաջարկութիւնները առաց, չհամարձակեցաւ Միջագետքի եկեղեցականներով միայն պատասխանել, այլ բարւոք համարեց ազգային ժողով գումարել՝ մանաւանդ Արևելեան եպիսկոպոսներից, որոնք ազգային եկեղեցու հաստատութեան հիմքն էին կազմում։ Այդ ժողովը պէտք է ամառը գումարուէր, և որովհետև Թէոդիանոսը կարող չէր սպասել, ուստի իւր բերած թղթերին պատասխան առանալով՝ Բիւզանդիոն գնաց։ Այս պատասխան—թղթերի մէջ Շնորհալին յայտնում է, թէ յունաց առաջարկութիւնները հայ ազգային ժողովի առաջ կը-դրուին և նրանցից հնարաւորները կընդունուին, բայց ոչ այն տեսակէտով՝ որ իբրև թէ մինչև այժմ հայերը մոլորուած էին և այժմ միայն հասկացան ճշմարտութիւնը, այլ միմիայն բարեկամութեան սիրուց առիթուած. այս տեսակէտով Շնորհալին առաջարկում է, որ յոյներն էլ իրանց եկեղեցու մէջ եղած սխալներն ուղղեն, որ հայերը չդայթակղին։

1173 թուին Ներսէս Շնորհալին հրաւիրական թղթեր ուղարկեց հայ եպիսկոպոսներին, վարդապետներին և այլոց, որ ժողովուին յունաց պատասխան տալու համար. բայց նա չկարողացաւ ժողով գումարել, որովհետև նոյն 1173 թուի օգոստոսի 13-ին վախճանեցաւ՝ մեծ սուգ պատճառելով հայ ժողովրդին, որ նրան սրբոց կարգը դասեց, և Ծիրանաւոր Մանուէլ կայսեր, որ իւր յոյսերի իրականացումը խորտակուած տեսաւ, որոնք որպէս թէ պիտի իրագործուէին, եթէ Ներսէսը կենդանի մնացած լինէր։

4. Եկեղեցիների միութեան խնդրով զբաղուած՝ Ներսէս Շնորհալին միջոց գտաւ նաև գրական գործերով պարապելու։ Սա ճոխացրից հայոց ժամասացութիւնը բազմաթիւ նոր երգերով ու շարականներով, որոնք մինչև այսօր էլ երգվում են մեր եկեղեցում, և որոնց մեծագոյն մասի սկզբնատառերը Ներսէս են կազմում։ Նա ժամագրքի նոր կարգադրութիւն արաւ՝ հիմնուելով Մաքենաց ու Թղկենաց ճգնակեաց վանքերի ժամակարգութեան վրայ, և այդ ժամակարգութիւնն է, որ մինչև այսօր էլ պահպանում է։

Շնորհալու թղթերը մեր եկեղեցու գաւանական ու դիսակական խնդիրների ամփոփ ու պարզ արտայայտութիւնն են կազմում. և Ներսէս ի Աշտարակեցին առաւել Սիւնեցին ամենայն իրաւամբ այս թղթերը մատնանշից (1860) իբրև հայ եկեղեցու պատմագիրք։

Դ. ԳԼՈՒԽ

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒ ՎԱԽՃԱՆԸ.

ԳՐԻԳՈՐ Դ. ՏՂԱՅ.

1. Շնորհալու վախճանից յետոյ՝ Գրիգոր եպիսկոպոսը՝ Տղայ կոչուածը, բացակայ էր Հռոմկլայից, երբ Շնորհալին հիւանդացաւ։ Յանկուցիչ այս լուրը՝ նա վուեթաց վերադառնալ, բայց նրան միառած գըտաւ, և միւս եպիսկոպոսների հետ մեծ հանդէսով թաղից Հռոմկլայում Գրիգոր Դ-ի մօտ։

Թագաւոր աւելի հաւաքուած ժողովրդի բազմութիւնը Գրիգոր Տղային կաթուղիկոս ընտրից, և եպիսկոպոսների ժողովը էլ՝ ժողովրդի ցանկութիւնը տեսնելով՝ իւր յօժարութիւնը տուից. և այսպէս Գրիգոր Տղան կաթուղիկոս օծուեցաւ (1173—1193)։ Կիւ Մանուէլ կայսրը նորընծաի կաթուղիկոսի թղթից իմանալով Շնորհալու մահը՝ մխիթարական թուղթ ուղարկից Յանօթ Թէոդիանոսի ձեռքով, և միանգամայն յորդորից նորահաստատ կաթուղիկոսին՝ երկու եկեղեցիների միութեան գործը պլուխ բերել։ Գրիգոր Տղան այդ թղթին երկար ժամանակ պատասխան չտուից՝ քանի դիտենալով որ միութեան գործը մեծամեծ շփոթութիւններ առաջ պիտի բերէ հայ ժողովրդի մէջ, մանաւանդ որ Գրիգոր Տուտէորդի նշանաւոր եպիսկոպոսը զգուշացրել էր նրան՝ եկեղեցիների միութեան պատրուակով յունաց կողմից յարուցուած որևէ խնդիր մերժելու։ Բայց տեսնելով յունաց յարուցած սոսկալի հալածանքը հայերի դէմ—բանդ, կապանք, յափշտակութիւն—Գրիգոր Տղան կամեցաւ մի եղք գտնել, և Սահմանոս վարդապետին, որ Թէոդիանոսի ու Շնորհալու վիճաբանութիւններին մասնակից էր եղել, Տուտէորդու մօտ ուղարկից՝ խնդրելով սրան միանգամայն կարգադրել Ազուանից Սահմանոս կաթուղիկոսի գործերը, որի դէմ բոլոր ժողովուրդը բողոքում էր։

Սահմանոս վարդապետի միջոցով իմանալով Աբեղեան վարդապետների տրամադրութիւնը՝ որ հակառակ չեն յունաց հետ յարաբերութիւն ունենալու և միւս կողմից էլ կամենալով յունադաւթին հայոց վիճակը թեթևացնել՝ Գրիգոր Տղան 1175 թուին կայսեր նամակ է գրում, ուր արդարացնելով իւր յապաղումը՝ խնդրում է, որ կայսրը չդնդէ լինը առաջարկութիւնների վրայ, որ երկու եկեղեցիների մէջ խաղաղութիւն հաստատուի. իսկ Հայոց դաւանութիւնն ուղարկել աւելորդ է համարում, քանի որ այդ արդէն կատարել է իւր նախորդ Ներսէսը։

Կայսրը այս նամակը առանալիս՝ պատերազմի մէջ էր Իկոնիոյ Սուլթան Ալիճ-Ասլան Բ-ի հետ (1156—1193)։ Պատերազմը Մանուէլի համար անյաջող անցաւ և նա ստիպուեց դաշնադրութեամբ Պոլիս դարձաւ։ Ահա այս ժամանակ 1177 թուի յունուարին Մանուէլ կայսրը գրեց իւր վերջին նամակը Գրիգոր Տղային, ուր դարձեալ խօսելով եկեղեցիների միութեան կարևորութեան մասին՝ առաջարկում է որ հայերը բացարձակապէս խոստովանին Քրիստոսի մէջ երկու բնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւն. այս ևս աւելացնելով՝ թէ հայերը իրանց շարականների մէջ արդէն իսկ ընդունում են երկու բնութիւն։ Միքայէլ պատրիարքն ևս հաստատելով կայսեր թղթի բովանդակութիւնը՝ մի ժողովական թուղթ է ուղարկում, խնդրելով որ Գրիգորը ինքն էլ ստորագրէ այդ թուղթը՝ խոստանալով որ ինքն էլ հայոց ժողովական թուղթը կըստորագրէ։

2. Գրիգոր Տղան ուրախ՝ որ կարողացաւ Յոյներին վերջապէս համոզել ու բաղդատցնել և խնդիրը դաւանութեան այդ կէտերին վերածել (նամակ եր. 58). կայսեր ու պատրիարքի թղթերին պատասխանելու համար ցանկացաւ ժողով գումարել և այդ երկու թղթերի հետ հրաւիրական թղթեր ուղարկեց Արևելք, Մեծ հայք, Երուսաղէմ, Սև լեռը, որ հայ եպիսկոպոսներն ու վարդապետները գան Հռոմկլայ ժողովին, և եթէ չկարողանան գալ՝ գրով իրանց կարծիքը յայտնեն։ Գրիգոր Տղան առանձնապէս դիմեց Սանահնեցի Գրիգոր Տուտէորդի վարդապետին, կամենալով սրա կարծիքն իմանալ՝ Քրիստոսի երկու բնութեանց միաւորութեան ու նրանց յատկութիւնների մասին, և այս կարծիքը հաստատուած՝ ոչ թէ յունաց եկեղեցու հայրերի վկայութիւններով, որոնք ըստ Տղային այս վէճի մէջ նշանակութիւն կարող չէին ունենալ, այլ հայոց հայրերի խօսքերով։

Հիւսիսային վարդապետները՝ Հաղբատացիք ու Սանահնեցիք, ինչպէս և Աղթամար Հաղարծնեցին ու Մխիթար Գօշը՝ առանալով Գրիգոր Տղայի թուղթը՝ անմիջապէս պատասխանեցին կաթուղիկոսին՝ միաղբիւրով, որ առանց իրենց գիտութեան հաւատոյ թուղթ է

ղրկել յունաց, և քննելով կայսեր ու պատրիարքի նամակները՝ ցոյց են տալիս այն դառնութեան պոյնը, որ նրանց մէջ է ամփոփուած. ուստի զգուշացնում են կաթուղիկոսին հաւատաքի նկատմամբ յարաբերութիւն չունենալ Յոյների հետ՝ քանի համոզուած լինելով թէ հայոց դաւանութեան մէջ ոչ մի թիւր կէտ չկայ, և Յոյներն թող համոզուին, ասում են, որ բոլոր Հայերը դաւանութեան մէջ պատուական Գլխիդ հետ նոյնախոհ ու միաբան են և ոչ թէ երկձայն։

Առանձին պատասխան է գրում նաև Գրիգոր Տուտէորդին, բայց սուր ու խայթիչ, որ մեծապէս զայրացնում է կաթուղիկոսին։ Գրիգորը նախ բացատրում է, թէ ինչու չի կարող Հռոմկլայ գալ և ապա դառնալով բուն խնդրին յայտնում թէ աւելորդ է համարում յունաց հետ որևէ յարաբերութիւն ունենալ։ Մերժում է Տղայի այն սկզբունքը, թէ յունաց հետ պէտք է խօսել միմիայն հայ եկեղեցու հայրերի սկզբունքներով, այն ինչ ուղղափառ օտարներն էլ ընդհակ են հայոց։ Խօսելով ընութեան խնդրի վրայ՝ վշտանում է որ Գրիգոր Տղան դէթ աչքից չէ անցկացրել իր մօտ գտնուած գրքերը, և ապա երկարօրէն պարզում է հայ եկեղեցու դաւանութիւնն այս խնդրի վրայ (Արբտ. 1893. 321)։

Հիւսիսային վարդապետների թուղթը աղդեցութիւն ունեցաւ Տղայ կաթուղիկոսի վրայ և նա գրեց մի ընդարձակ պատասխան, ուր արդարացնում է իւր անձը, ցոյց տալով, որ միաբանութեան խնդիրն աւելի վաղ է սկսուել, ինչպէս յայտնի էր Վարդան վարդապետին, և այժմ էլ յունաց նամակ է գրել Հիւսիսային վարդապետների համաձայնութիւնն առնելով. ապա ցոյց է տալիս յունաց ինն առաջարկութիւնները և թէ ինչպէս ինքը դիւժամարտ գտնուելով նրանց՝ միղմայցրել է և համոզել, որ հայերը ուղղափառ են։ Այնուհետև ցոյց է տալիս, թէ պէտք չէ միշտ յեղեղել, թէ յոյներն ազանդաւորներ են, քանի որ նրանց մէջ եղել են եկեղեցու նշանաւոր հայրեր. պէտք չէ նրանց առել, այլ սիրոյ ու ժաերմական յարաբերութիւն ունենալ նրանց հետ, և եթէ մոլորուած են՝ յանդիմանել շահել, կամ գոնէ ցոյց տալ, թէ մենք առողջ ենք, որով մեծ լաւութիւն կանենք այն հայերին, որոնք կրօնական խնդիրների պատճառով կլինին այն հայերին, որոնք կրօնական խնդիրների պատճառով յոյներից են տանջվում։ Այնուհետև կրկին յորդորում է որ նրբանք ժողովին գալուց չխուսափին, մանաւանդ որ երկիրը խաղաղ է։

Կաթուղիկոսի այս թուղթը նշանակութիւն ունեցաւ և հակառակորդ բանակից Բարսեղ Անեցին և մի քանի Հաղբատեցի վարդապետներ Հռոմկլայ գնացին ժողովին մասնակցելու։

Իսկ Գրիգոր Տուտէորդին տեսնելով իւր կուսակցութեան քայքայումը, և կաթուղիկոսի յամառելն՝ անպատճառ ժողով գումարելու,

սաստիկ բարկացած մի նամակ գրից Գրիգոր Տղային պատուիրելով հրաժարուիլ հայրապետական աթոռից։ Գրիգոր Տղան Տուէորդոս այս վերջին նամակին մի ընդարձակ զայրացկոտ պատասխան գրից յայտնելով, որ ինքը ազգի կամքով է կաթուղիկոս դարձած, և ոչ թէ ձգտելով, և խնդրում է որ այնուհետև նա գրագրութիւն չունենայ իրեն հետ։

3. Այսպէս՝ չնայելով եղած հակառակութիւններին՝ Հռոմկլայի ժողովը գումարուեցաւ 1179 թուի սկզբիլին։ Ժողովին ներկայ էին 33 հոգի, ոչ միայն Մեծ Հայքից, այլ և Կիլիկիայից. ներկայ էին նաև Սգուանից կաթուղիկոսը և Աղուանից պատրիարքի ներկայացուցիչը։ Ժողովականների մէջ նշանաւոր էր Տարսոնի եպիսկոպոս Ներսէս Լամբրոնացին, որ բոլոր քրիստոնէական եկեղեցիների խաղաղութեան ու հաշտութեան ջերմ պաշտպան էր։ Ժողովը խմբագրեց մի պատասխան, որով կարող չէր բնաւ երկու եկեղեցիների միութիւնը դլուխ գալ։ Նա ջատագովում է դարձեալ թէ հայոց եկեղեցու մի բնութեան վարդապետութիւնն ուղղափառական է և հրաժարվում է Քրիստոսի մէջ երկու բնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւն խոստովանելուց, ինչ որ իսկապէս յոյներն էին պահանջում։ Ճիշդ այս իմաստով գրուած է և յունաց պատրիարքի թղթի պատասխանը։ Ապա սխալ է ոմանց ասելն ու պնդելը, թէ Հռոմկլայի ժողովը եկեղեցիների միութիւնն ընդունեց։

Արգելքների հանդիպելով՝ թղթատարները չկարողացան ժողովի թղթերը Պոլիս հասցնել, և երբ Գրիգոր Տղան պատրաստվում էր նորից ուղարկել, պատրիարքի ու Մանուէլ կայսեր մահուան (1180 սեպտ.) լուրը լսեց։ Նոցա մահուամբ միութեան խնդիրն առժամանակ դադարեց։

Ե. ԳԼՈՒԽ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՅՈՅՆ ՈՒ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ.

ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՓՈՐՁԵՐ.

1. Մինչդեռ Հռոմկլայում մեր կաթուղիկոսները զբաղուած էին հայ և յոյն եկեղեցիների միութեան խնդրով, Կիլիկիայում մեր քաջարի իշխաններն իրանց հմուտ եռանդով ու ճարպիկութեամբ ազգային քաղաքական իշխանութեան հիմքն էին կռում ամրացնում, և յունական աէրութիւնից նորանոր նուաճումներ կատարում։ Այս յաջողութիւնների մէջ մեծապէս նպաստեցին նրանց Արևելքում հաստատուած լատին կոմսութիւնները ու յունական աէրութեան ներքին խռովութիւնները։

Չկարողանալով այս կիլիկեցի կռիւճներին ձեռքի ուժով հպատակեցնել՝ յոյները ձգտեցին կրօնական միութեան միջոցով նրանց նուաճել, բայց նրանց այս քաղաքական անհչանքն ևս չիրագործուեցաւ. և այնուհետև միայն կրկին մի ձեռք, այն է՝ կրօնական հպատակութեամբ նեղել հայերին։

Մանուէլի յաջորդներից Իսահակ Անգելոս Փիսիկ կայսրը, որ սպանութիւններով թագաւորից (12 սեպտ. 1185) և որ երբեմն կիլիկեցոց ձեռքը դիրք էր ընկած, սաստիկ հալածանք հանեց հայերի դէմ՝ բռնադատելով նրանց քաղկեդոնականութիւնն ընդունել։ Գրիգոր Տղան այս առթիւ ազիրսական թուղթ գրեց նրան, բայց ապարդիւն։ Չկարողանալով այս ծանր հալածանքներին դիմանալ՝ շատերը յունաց դաւանութիւն ընդունեցին (վարդ. 132)։ Գրիգոր Տղան կամենալով այս հալածանքի առաջն առնել և յոյներին սանձել՝ Ղուկիոս Գ պապի (1181—1185) օգնութեան դիմեց (1185 թ)։ Հայոց Գրիգոր եպիսկոպոսը չդանելով պապին Հռոմում, վկոռնա քաղաքը գնաց և այստեղ մեծ պատուով ընդունուեցաւ։ Ղուկիոս Գ պապը՝ փոխանակ Հայոց սրեէ օգնութիւն հասցնելու՝ առանձին նամակով առաջարկեց Գրիգոր Տղային միացնել Հայոց եկեղեցին Հռոմէականին հետ. և այդ միութեան համար նա չի յուզում այնպիսի ծանրակշիռ խնդիր, ինչպէս էր Աչխատոսի մի կամ երկու բնութեան վարդապետութիւնը, ինչ որ

յոյներն էին յեղյեղում, այլ ըստ երևութին աւելի թեթև խնդիրներ, այն է՝ 1. Հաղորդութեան բաժակին մէջ փոքր ինչ ջուր ախառնել. 2. Ծննդեան տօնը Դեկտեմբերի 25-ին կատարել, 3. ս. Միւռոնը ամէն տարի Աւագ Հինգշաբթի օրը օրհնել և գործածել մկրտութեան, ձեռնադրութեան և այլ ժամանակ. 4. Եպիսկոպոսի ձեռնադրութիւնը կիրակի օրը միայն կատարել և միայն պլուխն օծել, իսկ քահանայի և այլ կղերիկոսների ձեռնադրութիւնը՝ շաբաթ օրերը, և քահանայի միայն ձեռքն օծել։ Այս առաջարկութիւններից զատ՝ ուղարկեց նաև այլևայլ պատուոյ նշաններ, ինչպէս և Լատին եկեղեցու ծէսերի, կարգաց գիրքը։ Լամբրոնացին, որ հայոց պատգամաւոր Գրիգոր Տղայ-Կոպռոսի վերապաքն է պատմում (Մատ. 501), ասում է թէ Գրիգոր Տղան այս բոլորն ընդունից և ինձ հրամայից թղթերը թարգմանել. բայց բնաւ չի յիշատակում որ Լուսիոս պապի առաջարկութիւններին յօժարութիւն տուեց և իւր հնազանդութիւնը յայտնից։

2. Շուտով կատարուեցաւ մի նշանաւոր դէպք, որ բավանդակ Արևմուտքը շարժից և մեր ազգային պատմութեան համար էլ նշանաւոր հետևանքներ ունեցաւ։ 1187 թուին քիւրտ Սալահատինն Երուսաղէմն առաւ, և Լատին թագաւորութիւնը 88-ամեայ գոյութիւնից յետոյ կործանուեցաւ։ Այս ծանր լուրը Արևմուտքի մէջ մեծ շփոթութիւն ձգից, և տնա երեք հզօր կայսրներ Արևելք եկան ս. Երկիրն ազատելու համար։ Նոր խաչակրութեան պարագլուխն էր Փրեդերիկոս Ս. Բաբառոսան։ Կղեմէս Գ պապը (1187—1191) այս առթիւ նամակներ գրից Գրիգոր Տղայ կաթուղիկոսին և Լևոն Բ. իշխանին, որ 1186 թուին յաջորդել էր իւր Ռուբէն Բ եղբօրը Տարսոնում։ Այս նամակների մէջ պապը խնդրում էր՝ նպաստամատոյց լինել խաչակիրներին թէ ինչքով և թէ ղէնքով և նոյն իսկ առաջարկում էր հայոց կաթուղիկոսին անձամբ ս. Երկիրն երթալ. (1189, մայիսի 29)։

Յունաց Իսահակ Փիսիկ կայսրն ամէն կերպ աշխատից այս նոր արշաւանքի դէմ խաչընդոտանկր յարուցանել, բայց Փիսիկից կրօնքի համար հալածուած հայերը մեծապէս օգնեցին Դերմանացւոց։ Երբ կայսրը Իկոնիա քաղաքն առաւ, այստեղից երեք անդամ թուղթ գրեց Լևոն իշխանին ու Գրիգոր Տղային՝ խնդրելով օգնութեան գալ։ Լևոն իշխանը, որ 1186 թուից Տարսոն քաղաքումն էր նստում, իւր բարեկամ Ներսէս Լամբրոնացուն, Սսի Յովհաննէս եպիսկոպոսին և ուրիշներին Հռոմկլայ Գրիգոր Տղայի մօտ ուղարկեց։ Երբ սրանք չկարողացան իրանց յանձնուած գործը կատարել, Լևոնը հիծեալներով Տարսոն բերել տուեց Տղայ կաթուղիկոսին և միասին գնացին Մսիս քաղաքը, որտեղից Բառբառոսային նամակ գրեցին, թէ սպասում են նրա գալստեան։ Միևնոյն ժամանակ առաք պաշար ուղարկեցին, որովհետև խաչակիրը զօրքը սովամահ կորչում էր։ Փրեդերիկոսը մեծապէս ուրախացաւ այս օգնութեան վրայ և նամակ գրից կաթուղիկոսին՝ Լևոնին թագաւորական թագ խոստանալով։ Երբ կայսրը Սելևկիա քաղաքն հկաւ, որ Լևոնի իշխանութեան տակ էր, Լևոնը, Գրիգոր կաթուղիկոսը, Լամբրոնացին ու այլ իշխաններ՝ շատպիցին տեսութեան երթալ. բայց այդ տեսութիւնը չիրականացաւ, որովհետև կայսրը 1190թ. յունիսի 10-ին գետի մէջ խեղդուեցաւ։

Այդ օրուանից Լևոնի ու իւր մերձաւորների համար թագրնկալութիւնը մի կենսական խնդիր դարձաւ և նրան հաստնելու համար հարկ եղաւ ազգային շահերը և հայ եկեղեցու դաւանութիւնն իսկ զոհել։ Այս խնդրի մէջ գլխաւոր գործիչներն էին Գրիգոր Տղան ու Լամբրոնացին։ Գրիգոր Տղան արժանի չեղաւ Լևոնի թագադրութեան հանդէսը տեսնելու. նա 1193 թ. յուլիսին վախճանեցաւ ու Հռոմկլայում թաղուեցաւ։

3. Լևոնի հրամանով կաթուղիկոսացաւ Գրիգոր Գ-ի քրոջ որդին մանկահասակ Գրիգոր Ե-ը (1193—1194), որի թեկնածութիւնը՝ Ներսէս Լամբրոնացուն հակառակ, ջերմապէս պաշտպանում էին Հաղբատցիք, Սանահնեցիք, Գրիգոր Տուտէորդին և միւս Հիւսիսային վարդապետները առանց սակայն ի մօտոյ ճանաչելու նրան, ինչպէս ասում է Լամբրոնացին։

Այս երիտասարդ կաթուղիկոսի մեռնելուց յետոյ իշխանութեան պատմութիւնն ու նրա եղերական մահուան պատճառն ու հանգամանքները շատ պարզ չեն։ Այսքանը ստոյգ է, որ նա Լևոնի հրամանով Սսի Յովհաննէս եպիսկոպոսի ձեռքով Հռոմկլայում բռնուեցաւ ու բանտարկուեցաւ. և այդ տեղից էլ Կոպիտաւի բերդը տարուեցաւ, ուր նրան թունաւորեցին, և մարմինն էլ բերդի պարսպից դուրս ձգեցին ժողովրդին ցոյց տալու համար՝ որ իբրև թէ փորձել է փախչելու և քարավէժ է եղել. (այս պատճառով էլ Քարավէժ կամ Գանձավէժ է կոչուել)։

Մի այսպիսի բռնութեան հաւանական պատճառ այս պէտք է նկատենք, թէ հրիտասարդ կաթուղիկոսը, որին պաշտպանում էին պանպանողական Զորոյգեանցիք, հակառակ էր բոլորովին Լևոնի բռնած քաղաքականութեան հայ եկեղեցու վերաբերմամբ, և ուզում էր ինքնիշխանութեամբ հայրապետութիւնը վարել (Սմբատ)։

Գրիգոր Ե-ի մահը մեծապէս պայթացրից Հիւսիսային վարդապետներին, որոնք այս գործի մէջ միղոգրելով Լամբրոնացուն և Լևոնին՝ նրանց նախատական նամակներ գրեցին և նոյն ժամով ամենուրեք թղթեր ցրուեցին. այնպէս որ Լևոնն ու նրա կամակից եպիսկոպոսներն սաիպուեցան արդարանալ և յուզուած մարքերը խաղաղել։ Լամբ-

րոնացին միայն այդ մեղադրական գրերին չպատասխանեց, և այս պարագան թերևս նրա յանցաւոր լինելու կասկածն աւելի զօրացրեց։ Բայց երբ Հիւսիսային վարդապետները սկսան մեղադրել նաև, որ Լամբրոնացին աւանդապահ հայ եկեղեցական չէ և այս մտքով Լևոնին թղթեր ևս գրեցին, և երբ սա նրանց սիրտը հաճելու համար նամակ ուղարկեց Լամբրոնացուն, յայտնելով թէ անկարգ է նրա ընթացքը և հեռու նախնեաց ճշմարիտ ուղղութիւնից, թէ այսպիսի ուղղութեամբ նա կարող չէ կաթուղիկոսութեան արժանի լինել, թէ նրա պատճառով ինքն էլ Զորոյգետացւոց անէծքին է ենթարկուած, ուստի և յորդորեց չմոցնել հայ եկեղեցու մէջ նորաձևութիւնները՝ հակառակ ղէպքում սպառնալով ստացած պատիւներից զրկել, այն ժամանակ Լամբրոնացին (1194 թ. վերջերը) Լևոնի այս ազդարարութեան ընդարձակօրէն պատասխան գրեց պաշտպանելով իր գործերը և դատապարտելով «տխմար, անկարգ, շաղակրատ, թանձրապորտ, արբեցող, շուն, աղուէս» Տուտէորդու, Բարսեղ Անեցու, Ռոբայրեցու և Հաղբատեցւոց ընթացքը։ Այս յայտնի վարդապետները մեղադրում էին, որ 1. Լամբրոնացին բաց գլխով, առանց վարագուրի, պաշտօնեաների սպառազուրութեամբ ու թանկագին քահանայական զգեստով է պատարագում. 2. որ մերձաւոր յարաբերութիւն ունի օտար քրիստոնեաների հետ. 3. որ Աստուածայայտնութեան տօնը Յունաց և Լատինացւոց հետ է տօնում. 4. որ երրորդ ամուսնութիւնն օրինաւոր է ընդունում։ Լամբրոնացին պարծանքով պատասխանում է, թէ այդպիսի գործերով նա բարեկարգել է Հայոց եկեղեցին և օտարների հիացման արժանացել, որոնք իրեն Պօղոս առաքեալ են կոչում և նրա արժանապատիւ յաջորդ. թէ բանիմաց հայ վարդապետներն ևս իրեն գործունէութեան համամիտ են, և վերջապէս ինքն էլ իւր կողմից մեղադրում է Լևոնին, որ իւր ճշմարտութիւնը գիտենալով հանդերձ՝ աշխատում է Զորոյգետացւոց հաճոյանալ, որոնց ձգտումն է արբեցող Բարսեղ Անեցու կաթուղիկոսութիւնն առաջ քաշել։

4. Լևոն Թադէոսի հրամանով Տարսոն հաւաքուած հայ եպիսկոպոսները կաթուղիկոս ընտրեցին Ծերունի Գրիգոր Ձ. Ապիրատին (1195—1202 թ.) Շնորհալու եղբօրորդուն՝ որ թոյլ և համակերպող անձը էր, ըստ ամենայնի Լևոնի և իւր աւագանիների ուղղութեան հաժամապաշաճ։ Այս ընտրութիւնը հաճոյ չեղաւ Հիւսիսային վարդապետներին, որոնք իրենց գլուխ ճանաչեցին Անու Բարսեղ եպիսկոպոսին, ինչպէս որ գուշակել էր Լամբրոնացին, և որի մասին նա մեծ անարգանքով է խօսում։

1195 թուի ապրիլի 10-ին Բիւզանդական կայսր դարձաւ Ալէքս Գ. Կոմնինոսը (Անգելոսը), որ սկզբում իրրև քաջ և հմուտ զօրավարի

տպաւորութիւն թողեց, թէև ապագային նա ոչ մի ընտիր յատկութիւն ցոյց չտուեց։ Ժամանակի քաղաքական հանգամանքներն նպաստեցին Ալեքս Գ-ի զօրացման. Հենրիկոս Զ կայսրն անկարող էր նոր խաչակրութիւն կազմել և Աբևելք գալ։ Քաղաքագէտ Լևոն Բ-ը, ի նկատի առնելով ժամանակի հանգամանքները՝ լաւ համարեց Ալէքս Գ-ի հետ ևս բարեկամական յարաբերութեան մէջ մտնել և սրանից թագ ստանալ, քան թէ Հենրիկոս Զ-ին սպասել։ Ահա այս նպատակով նա իւր բարեկամ Ներսէս Լամբրոնացուն մի քանի իշխանների հետ Բիւզանդիոն ուղարկեց (հաւանօրէն 1196 թ. ապրիլ), և այս դեսպանութիւնն աւելի առւեց կլսկին հայ ու յոյն եկեղեցիների միութեան խնդրի արծարծման։

Օգտուելով Ներսէսի Բիւզանդիոն լինելուց՝ այնտեղ մի կրօնական վիճաբանութիւն եղաւ Ներսէսի, պատրիարքի ու կայսեր միջև, ինչպէս նկարագրուած է Թօսակցութիւնքի մէջ (տպ. 1861)։ Այս ժամանակ հրապարակ եկան կրկին այն իննը առաջարկութիւնները, որոնց հրեսին հայերը չէին պատասխանել, և որոնք այժմ երկու ազգերի բարեկամութեան հիմունքը պէտք է դառնային։ Հիացած Բիւզանդական կայսերութեան ուժի և ճոխութեան վրայ՝ կայսերական թղթով, որ առաջարկում էր Լևոնին «սիրոյ միաբանութիւն» հաստատել, ևս և իննը առաջարկութիւններն առած՝ Լամբրոնացին կիլիկիա դարձաւ։ Կայսեր պատասխան տալու համար 1196 թուին Տարսոնում ժողով գումարուեցաւ՝ Գրիգոր Ապիրատի նախագահութեամբ։ Ժողովական եպիսկոպոսների թիւն ու ցուցակը մեզ յայտնի չէ. պարզ է, որ Մեծ Հայքի եպիսկոպոսները չէին մասնակցում, այլ միմիայն Կիլիկիայի եպիսկոպոսները։

Այս ժողովի մէջ մի ընդարձակ ու զեղեցիկ առենաբանութիւն արաւ Ներսէս Լամբրոնացին, որ ամբողջապէս նրա ուղղութիւնն ու ոգին է վայելեցնում։ Նա ազգային ինքնասիրութիւնից զուրկ է, հայ եկեղեցու ինքնուրոյն գոյութիւնը նրա համար արժէք չունի։ Տոգորուած բոլոր ազգերի ու եկեղեցիների համերաշխութեան ու սիրոյ գաղափարով՝ Լամբրոնացին ցոյց է տալիս այն սոսկալի չարիքները, որոնք առաջացել են քրիստոնէական մի եկեղեցու բաժանուելուց։ Նա յարձակվում է այն հայրերի վրայ, որոնք քարոզում էին, թէ հայերը ուրիշ քրիստոնեայ ազգերի հետ կրօնային ոչ մի յարաբերութիւն ունենալու չեն։ Յօգելով եկեղեցիների անջատման առիթ եղող բնութեան խնդրի վրայ՝ բացայայտ քարոզում է, թէ ուղղափառ է յունաց երկու բնութիւն դաւանելն և հայոց մի բնութիւն դաւանելն ևս նոյն է. այս առնակէտով պաշտպան է կանգնում Եղբ ու վանան կաթուղիկոսներին, որոնք յոյն եկեղեցու հետ միութիւն հաստատեցին, և սիրոյ հա-

կառակորգ է համարում հայոց եկեղեցու այն հայրերին, որոնք եկեղեցիների միութեան ընդդէմ գարձան։ Նա բարոզում է, թէ եկեղեցիների միութիւնը գլխաւորելու համար պէտք է ծոնական ու ծիսական տարբեր սովորութիւնների վրայ կապուած չմնալ։ Եւ որովհետև գիտութեան մայր յոյներն են, հաւատալ հիմքն ու կարգերը նախ նրանց մէջ են հաստատուած՝ ապա պէտք է որ հայերը նրանց հետևին, և եղած առաջարկութիւններից, ինչ որ հաւանելի է, պէտք է ընդունին։ Վերջապէս ցոյց է տալիս, թէ հայ եկեղեցին ու ազգը որչափ բարիքներ կը վայելեն, եթէ կութնին յունական տէրութեան երկաթի գաւազանին. և առ այս՝ վրայ ժողովրդին է օրինակ բերում։

Տարսոնի ժողովը մասամբ համամիտ գտնուեցաւ Լամբրօնացու բարոզած սկզբունքներին և համապատասխան առաջարկութիւններին պատասխաններ՝ պայմանով միայն (Խօսակցութիւնք 1861) ընդունելով յունաց առաջարկութիւնները. 1. Նա նզովեց Եւտիքէսին ու նրա նման մի քանի խոստովանողներին. 2. գայթակղութեան տեղի չըտալու համար՝ որոշից երկու բնութիւն ասել. 3. Յունաց սէրը շահելու համար՝ ս. Աստուած երգի մէջ աւելացնել «որ մարմնացար և խաչեցար վասն մեր». 4. խոստացաւ սիրոյ համար տէրունական ծոները յունաց հետ կատարել՝ չնայելով հայոց հին աւանդութեան, եթէ միայն յոյներն էլ հայոց առաջարկվիք պայմաններն ընդունին. 5. խոստացաւ ս. Միւռոնը ձիթենու պտղից անել. 6. Բաժակին մէջ ջուր խառնել, եթէ յոյներն էլ հայոց ու լատինացոց նման անխմոր հացով պատարագին. 7. բացատրեց, թէ Հայոց՝ եկեղեցիներից դուրս աղօթելու սովորութիւնն առաջ է եկել եկեղեցիների սակաւութեան ու փոքրութեան պատճառով. ուստի՝ երբ մեծ եկեղեցիներ շինուին, այս սովորութիւնը կըվերանայ. 8. Ընդունեց Քալկեդոնի և հինգերորդ, վեցերորդ ու հօթներորդ ժողովները ևս խոստացաւ ընդունել. 9. կատարեալ համաձայնութիւն տուեց, որ հայոց կաթուղիկոսները յունաց կայսրների հաստատութեամբ լինին, բայց գործի յաջողութեան համար այս ևս խնդրեց, որ Անտիոքի պատրիարքական աթոռը Հայոց կաթուղիկոսութեան հետ միանայ։ Այսպէս ուրեմն՝ Տարսոնի ժողովը պայմանով ընդունեց Հայ և Յոյն եկեղեցիների միութիւնը. միութեան գլխաւորութեան համար ինքն էլ առաջարկեց 8 կէտեր, որոնցից ուշադրութեան արժանի է նախ՝ Դ կէտը, այն է՝ որ յոյները բաղարջ հացով պատարագին, երկրորդ՝ Բ-րդը, որ Անտիոքի աթոռը հայոց կաթուղիկոսութեան հետ միանայ և վերջապէս մալխալը եկեղեցական կոչումն չստանայ։ Բնական է որ յոյները հաճութեամբ չընդունեցին Տարսոնի ժողովի որոշմունքները, քանի որ մի էական խնդիր, այն է՝

անխմոր հացով պատարագել կարող չէին, որ յոյն եկեղեցու ընդհանուր կողմերից մէկն է կազմում։

5. Բիւզանդացիների հետ այսպիսի մերձաւոր յարաբերութիւն ունենալով հանդերձ՝ Լևոն Բ-ը Արևմուտքի հետ ևս շարունակեց իւր թղթակցութիւնը և կեղեստինոս Գ պապին (1191—1198) և Հենրիկոս Զ կայսեր՝ թղթեր ուղարկեց խնդրելով նրանցից խոստացուած թագն ու հովանաւորութիւնը։

Հենրիկոս Զ-ը, որ 1196 թուի աշնանը Սիկիլիայում էր և իւր սովալի անգթութիւններով ամբողջ հարաւային Իտալիան իրան էր հնազանդեցրած՝ հաճութեամբ ընդունեց հայոց դեսպանութիւնը և Մայնցի կոնրադ եպիսկոպոսի ձեռքով Լևոնին թագ ուղարկեց. հանգամանքից օգտուելով կեղեստինոս պապն էլ մէջ տեղ հանեց մի քանի կրօնական պահանջներ։ Հռոմէական կայսերազհեսպանին Լևոն Բ-ի բարեուզար Յովհաննէս եպիսկոպոսը պատուով Տարսոն բերեց։ Կոնրադ եպիսկոպոսը կայսեր ուղարկած թագին փոխարէն՝ հետևեալ պահանջներն արաւ Լևոնից ու հայ եպիսկոպոսներից. 1. Տէրունական ու սրբոց ծոներն անշարժ ծոնել. 2. Թիշերային ու ցերեկուայ ժամերգութիւնը միշտ եկեղեցում կատարել. (այս անկարգութիւնը մահմէտականների ահից էր առաջ եկել). և 3. Ծննդեան ու Յարութեան հրագալոյցը չլուծել կթեղէնով, այլ միայն ձկով ու ձէթով։

Այս պահանջներից առաջինն առաւելապէս դժուարութիւն առաջ բերից. և տեսանք արդէն, որ Տարսոնի ժողովն էլ այս կէտում անհնար համարից յունաց պահանջն իսկոյն կատարել հայ ժողովրդի հնացած սովորութիւնն ի նկատի առնելով։ Ճիշդ այսպիսի փափկանկատութիւն ունեցաւ և այժմ էլ հայ հոգևորականութիւնը։ Սակայն տեսնելով Լևոնի թագով պսակուելու ջերմ փափագը և անշուշտ այլ հանգամանքներ ևս՝ հայ հոգևորականութիւնը, որի մէջ էին Լամբրօնացին, Յովհաննէս եպիսկոպոսը՝ Լևոնի ազգականը, Անանիա Սեբաստացին և ուրիշները, այս անգամ էլ հայ եկեղեցու աւանդութիւններին այլ և այլ քաղաքական պահանջների զոհ բերեց։

1197 թ. յունուարի 6-ին բազմաթիւ իշխաններից, յոյն ու տասըբի եկեղեցականների ներկայութեամբ թագաւոր օծուեցաւ Լևոնը Տարսոնում և այսպէս անա իւր նպատակին հասաւ։

Յունաց Ալէքս Գ. կայսրն էլ, որ 1196 թ. դեկտեմբերին հզօր Հենրիկոսի ուժի առաջ խոնարհել և սարկական պայմաններ էլ յանձն առել, տեսնելով որ Լևոնը Հռոմէական կայսեր պաշտպանութիւնն է վայելում, ինքն էլ փութաց նրա սիրտը շահել և 1197 թուին թագ ուղարկեց, խնդրելով իւր ուղարկածը գործածել, քանի որ զրացի են։

6. Կիլիկիայում կատարուող այս եկեղեցական մեծ զոհողութիւն-

նները՝ սաստիկ ազմուկ բարձրացրին Հիւսիսային վարդապետների մէջ, որոնք երկիւղած ճշդութեամբ պահպանում էին մեր եկեղեցու դաւանութիւնն ու աւանդութիւնները։ Եւ ահա Գրիգոր Տուտէորդու և ուրիշների կողմից կրկին թափուեցան մեղադրական թղթեր յատկապէս Լամբրօնացու դէմ, որովհետև կատարուած բոլոր դեպքերի մէջ մխիթարն նրան էին մեղադրում։

Ձիւղ 1197 թուին Ծառազաթիկ պատահեցաւ, որ 95 տարին մի անգամ է կրկնւում, այն է՝ Հայոց Զատիկը Յունացի համեմատութեամբ մի շաբաթ վերջն է գալիս։ Այս դէպքը կրօնական վէճերով ու խնդիրներով զբաղուողների համար հայոց դէմ հալածանք հանելու կրկին առիթ դարձաւ. Վրաստանումն էլ վրացիք սկսան անդթութեամբ վարուել հայերի հետ, և Բիւզանդացիների նման սպառում էին հայերին կրկին մկրտուել, դրոշմուել, ձեռնադրուել և կամ հալածական փախչել իրենց երկրից (Թուղթ Մ. Գոշի)։

Գրիգոր Ապիրատ կաթուղիկոսն ու Լևոն Թագաւորը կամենալով հայ ժողովրդի վիճակը թեթևացնել՝ Ներսէս Լամբրօնացուն Պօլիս ուղարկեցին (1177 թ.) կայսեր ու պատրիարքի մօտ, որ այս հալածանքներին վերջ դնեն։ Սակայն նրա դեսպանութիւնն ոչ մի արդիւնք չունեցաւ, և ինչպէս ինքը Լամբրօնացին է ասում, սուրջայած ու ամօթով յետ դարձաւ։

7. Քաղաքական հանգամանքներից ստիպուած՝ Լևոն Բ-ը և Գրիգոր Զ կրկին յարաբերութիւն ունեցան Հռոմի Իննովկենտիոս Գ պապի հետ (1198 յունուար—1216)։ Հենրիկոս Զ-ի անակնկալ մահը (1197 աշնանը) մեծ հարուած էր Լևոնի համար, որովհետև նրա թըշնամիքը՝ թէ ներքին և թէ արտաքին, զօրացան։ Այս ստիպեց ահա Լևոնը 1199 թ. Թուղթ գրել Իննովկենտիոս Գ պապին օգնութիւն խնդրելով, քանի որ իրանց անդարմանելի վէրաս չի հասել։ Նամակ գրեց նաև Ապրիատ կաթուղիկոսը, և յայտնելով իւր սէրը դէպի Հռոմէական եկեղեցին՝ օգնութիւն խնդրեց, ցոյց տալով թէ վիշապի բերանումն են, ս. Խաչի թշնամիների մէջ։

Իննովկենտիոսն օգնութիւն հասցնելու փոխարէն՝ Լևոնին ու կաթուղիկոսին առաջարկեց, որ կաթոլիկ եկեղեցուն հաւատարիմ հնազանդութիւն ցոյց տան։

Զատանալով որևէ օգնութիւն՝ Լևոնն իւր հզօր բազուկով խորտակեց իւր բոլոր հակառակորդների հղջւրները, և տաճարականներին՝ որոնք Անտիոքի խնդրի մէջ վատթար դեր խաղացին և դաւաճանութեամբ Լևոնին Իկոնիոյ սուլթանի առաջ մենակ թողին, նա կիլիկիայից բոլորին արտաքսեց։

Այս պատերազմների ժամանակ Գրիգոր Զ. Ապիրատը Սսի մէջ

վախճանեցաւ (1203 թ.) և Արքակաղնի վանքում թաղուեցաւ։ Նրա տեղով վերջացաւ քահանայապետութիւնը Պահլաւունեաց տոհմից, որ 140 տարի անընդհատ հայոց եկեղեցին կառավարեց։

Զ. ԳԼՈՒԽ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԻԼԸ.

ՎՐԱՀԱՅՈՑ ԽՆԴԻՐԸ.

1. Ապիրատ կաթուղիկոսի մահուանից յետոյ Լևոնի հաճութեամբ կաթուղիկոս դարձաւ Սսի արքեպիսկոպոս Յովհաննէսը (1203—1220), որ պատմութեան մէջ յայտնի է «Մեծաբարոյ, վեհանձն» կոչումով։ Սա Լևոնի ազգականն էր, հայոց տէրութեան քարտուղարը, օտարազգի վաճառականների դատաւորը։ Իբրև փառատենչ մարդ՝ նա վաղուց կաթուղիկոսութեան էր ձգտում։ Իբրև հեղեղեցական նա անփոյթ էր հոգևոր գործերի մէջ և պապերի նման առաւելապէս զբաղուած էր իշխանասիրական ձգտումներով։ Սիրում էր ճոխ ու արքայավայել կեանք, և իւր այցելուներին ձեռնունայն յետ չէր դարձնում։ Երևի այս յատկութիւնների համար էլ ստացել է Մեծաբարոյ կոչումը։

Հիւսիսային վարդապետները, որոնք լաւ էին ճանաչում Յովհաննէսի արևմտասէր, համակերպող բնաւորութիւնը, և լաւ յիշում էին նրա տարրդի վարմունքը Գրիգոր Ե-ի հետ, չկամեցան նրա կաթուղիկոսութիւնն ընդունել, քանի որ դեռ կենդանի էր Անիի Բարսեղ եպիսկոպոսը։ Բայց այս ընդդիմադրութիւնն արդիւք չեղաւ Յովհաննէսին իբրև կաթուղիկոս գործելու։

2. Այն սերտ մտերմական յարաբերութիւնն, որ ԺԲ դարում հաստատուել էր պապական աթոռի ու հայոց քաղաքական ու հոգևոր իշխանութիւնների միջև, և որից Հայերը մեծ բաներ էին սպասում, այժմ էլ շարունակուեցաւ։ Իննովկենտիոս Գ պապ—կայսրը Յովհաննէս Է-ին սիրտը շահելու համար իւր Պետրոս կարդինալի ձեռքով պապական պալիում ուղարկեց, այլ և կաթոլիկ եկեղեցու Սահմանադրութիւնը՝ առաջարկելով որ վերջինս հայ եկեղեցու մէջ գործա-

դրուի։ Այս առթիւ Յովհաննէս Է-ը 1205 թուին մի թուղթ գրեց Իննովկենտիոսին, և յայտնելով իւր շնորհակալութիւնն ուղարկուած պալիժումի համար՝ խոստանում էր պապին առաջարկութեան համեմատ հինգ տարին մի անգամ ներկայ լինել կամ անձամբ և կամ պատգամաւորի ձեռքով կաթոլիկ եկեղեցու գումարած ժողովներին. իսկ Սահմանադրութիւնն ընդունելու նկատմամբ ասելացնում էր, թէ պէտք կըլինի ժողով գումարել։

Բայց Անտիոքի ժառանգութեան խնդիրն այս ժամանակներում արդէն սուր կերպարանք էր առացել, և այս հանգամանքը պատճառ դարձաւ ինչպէս Լևոնի դէպի կաթոլիկ եկեղեցին ունեցած բարեկամական յարաբերութեան խզուելուն, այսպէս նաև հայոց Հայրապետական Աթոռի երկպառակման։

3. Պաշտպանելով իւր եղբօրորդու Ռուբէնի իրաւունքը Անտիոքի գահի վրայ՝ Լևոնն այս խնդրի լուծումը Իննովկենտիոսի իմաստութեանն էր թողել։ Սակայն պապի նուիրակներն այս խնդրի մէջ աչառութեամբ յայտնապէս Լատին իշխանների կողմն անցան և մինչև իսկ Լևոնին բանադրեցին։ Զայրացած մի այսպիսի անարդար վճռի վրայ՝ Լևոնը նախ բողոքեց պապին, թէ ոչ ոք իրան բանադրելու իրաւունք չունի և ապա սաստիկ հալածանք հանեց կաթոլիկ եկեղեցականների ու իշխանների դէմ, և շատերին էլ բանտարկեց (1207 թ.). ասոցա մէջ էր և Կոստանց իշխանն իւր երկը որդոց հետ՝ Լևոնի ու Յովհաննէս կաթուղիկոսի ազգականը։ Կաթուղիկոսը շատ աշխատեց Կոստանցին ազատել և ըստ երևութին՝ Լատին կրօնաւորներին ու իշխաններին էլ պաշտպանեց. բայց կաթուղիկոսի վրան ևս բարկանալով՝ Լևոնը գրաւեց նրա գանձերն ու ստացուածները, աթոռից զրկեց և Արքակաղնի վանքի վանահայր Դաւիթ եպիսկոպոսին նրա փոխանակ կաթուղիկոս կարգեց (1207 թ.)։ Այս հանգամանքից սոխրուած՝ Յովհաննէս Է-ը Հռոմկլայ քաշուեցաւ և վախենալով Թէոդոս Լևոնի յարձակմունքից՝ բերդը սաստիկ ամրացրեց, և այս առթիւ հզած ծախսերը ծածկելու համար նա հալեց այն ոսկեայ ու արծաթեայ խաչերն ու սրբութիւնները, որ Պահլաւունեաց օրերից հայրապետական եկեղեցուն էին մնացուած (Սմբ. 115)։

Այս գժտութիւնը մի ուրիշ երկպառակութեան առիթ էլ եղաւ. Սեբաստիայի Անանիա եպիսկոպոսը, որ վաղուց արդէն կաթուղիկոս դառնալ էր կամենում, տեսնելով որ ինքը այժմ էլ, այս նոր ընտրութեան ժամանակ՝ անտես առնուեցաւ, իւր վառասիրութիւնը գոհացնելու համար Իկոնիոյ սուլթանի աջակցութեան դիմից և Սեբաստիայում կաթուղիկոս դարձաւ. այսպէս ահա միաժամանակ չորս կաթուղիկոս եղան։

Փառասէր Յովհաննէսը Հռոմկլայում հանգիստ չմնաց. Լևոնին ջնասելու համար՝ նա մինչև անգամ Իկոնիոսրու թուրք իշխանին Լևոնի դէմ գրգռեց և երկու ազգերի մէջ պատերազմ առաջ բերեց։

Սակայն կաթուղիկոսի ու Լևոնի այս գժտութիւնը հայ մեծամեծներին հաճելի չէր. շատերը նրանց հաշտեցնելու հնարք էին որոնում։ Բարեբախտաբար 1209 թուերին, կարճատև կաթուղիկոսութենից յետոյ՝ Դաւիթը վախճանեցաւ. դէպքից օգտուելով միջնորդներ մէջտեղ ընկան և կաթուղիկոսին ու Լևոնին հաշտեցրին. սա վերադարձից այն բոլոր աւանները ու գանձերը, որ կաթուղիկոսից էր յափշտակել. և այսպէս ահա ներքին խաղաղութիւն հաստատուեցաւ։

Բայց կաթուղիկոսին հետ հաշտուելուց յետոյ էլ Լևոնն անհաշտ մնաց կաթոլիկ եկեղեցականների հետ և չնայելով Ոնորիոս Գ պապի (1216—1227) միջնորդութեան՝ Լևոնը գրեթէ մինչև մահը թոյլ չըտուեց, որ կաթոլիկ եպիսկոպոսներ ու քահանաներ Կիլիկիա գան կոխեն։

4. ԺԲ. դարի վերջերում Վրաց թագաւորական գահը բարձրացաւ Թամարա Թագուհին (1184—1212), որ իւր գործերով մեծապէս սիրելի եղաւ ժողովրդին և նրա երգերի ու ոգևորութեան առարկայ. Թամարայի իշխանութեան ժամանակ Վրաստանն իւր քաղաքական ու մտաւորական գարգացման բարձրագոյն աստիճանին հասաւ։ Նրա վինուորական ոյժի վառքը երկու հայազգի իշխաններ—Զաքարէ և Իւանէ եղբայրներն էին, որոնք սերութեան սահմաններն ընդարձակեցին դէպի արևելք ու հարաւ. Հայաստանի մեծ մասը Վրաց ձեռն անցաւ։ Ամէն տեղ խաղաղութիւն տիրեց, և այս միջոցին վանքեր ու եկեղեցիներ հաստատուեցան և դրականութիւնն էլ ինչպէս Վրաստանում, այսպէս նաև Հայոց երկրում մեծապէս զարգացաւ։

Սակայն յաղթանակներով արբեցած վրացիները սկսան կրօնական թշնամութեամբ վարուել հայերի հետ։ Նրանց եկեղեցականները բացարձակ քարոզում էին թէ «տաճիկն և ջուհուտն լաւ է քան զՀայն»։ Տպէտ ամբոխը Հայոց կանգնած խաչերն էր կործանում, հայ եկեղեցիներ էր աւերում, և նրանց աւելի անարգած լինելու համար այնտեղ շներ էր մորթում։ Ծաղրում էին հայոց մեռոնը, թէ անկատար պատրաստութեամբ է, թէ ս. Խաչը բևեռներով միացնելով՝ հայերը Քրիստոսին կրկին են խաչում. թէ հրեից նման մատաղ են անում, զանգակներով բուրվառ գործածում, թէ հայ կրօնաւորները միս են ուտում, թէ հայերը չեն տօնում Աւետիքն ու Քրիստոսի ծնունդը. գլխով, սարկաւագով ու զգեստներով չեն պատարագում, այն էլ՝ ոչ ամէն տեղ, և թէ պատարագում են միմիայն ննջեցեալների, այլ ոչ նաև կենդանիների համար. թէ արհամարհում են սրբոց պատկերները

և այլն. բնականաբար հաւատափոխ հայերին վրաց եկեղեցականները կրկին էին մկրտում։ Այսպիսի մեղադրանքներ երբեմն յոյներն ևս բարդում էին հայերի վրայ։

Հերձուածող հայերին վրաց եկեղեցու հետ միացնելու համար ժամանակի վրաց կաթուղիկոսն աշխատեց ժողով գումարել, ինչպէս երբեմն Դաւիթ Գ Վերանորոգիչ թագաւորն էր փորձել (1089—1125), բայց պարզ էր որ միութիւնն կարող չէր երբեք գլուխ գալ, և այս հաւանականներին ականատես նշանաւոր հայ վարդապետներից մէկը՝ Մխիթար Գօշը, առանձին գրութեամբ բացատրեց Վրաց կաթուղիկոսին, թէ ժողով գումարել ու երկու եկեղեցիների միութիւնը գլուխ բերել տպարդիւն ջանք է. թէ երկու ազգերի միջև խաղաղութիւն կը հաստատուի, երբ ինքը կաթուղիկոսը և Թամարա ու Դաւիթ թագաւորներն իրանց իշխանութեամբ վրացիների առելութիւնը սանձեն։ Նոյն իմաստով նա մի ընդարձակ թուղթ ևս գրեց Զաքարէ ու Իւանէ իշխաններին (1204 թ.), և յայտնելով իւր սրտի վիշտը, որ սրանք հայ լինելով վրաց ամբաստանութիւններին ևն հաւատում, խնդրում է կարգալ իւր թուղթը, իրենց գայթակղած միտքը բժշկել և երկու ազգերի մէջ յուզուած կրօնական առելութիւնը թագաւորների չնորհիւ վերացնել։

Բայց դժբախտաբար այս հայ իշխաններն ոչ միայն չաշխատեցան Մխիթարի տուած խորհրդին համեմատ երկու ազգերի թշնամութիւնը վերացնելու խաղաղ միջոցներով, այլ և իրենք կրօնական խռովութեան պատճառ դարձան։ Իւանէ իշխանը Թամարա թագուհուն ու Վրաց ժողովրդին աւելի հաճոյանալու համար Վրաց դաւանութիւնն ընդունեց. Զաքարէն հաւատափոխ չեղաւ, բայց հետամտեց հայոց եկեղեցու մէջ այնպիսի փոփոխութիւններ մտցնել, որ վրացիք այլ ևս առիթ չունենան հայերին բամբասելու և հալածելու, և այս հանգամանքն ահաւասիկ ներքին գժտութիւնների պատճառ դարձաւ։

5. Զաքարիան իւր մտադրած փոփոխութիւնները նախ Մխիթար Գօշի ու այլ վարդապետների ձեռքով կամեցաւ կատարել. բայց երբ սրանք այդ փոփոխութիւնները վաւերացնել մերժեցին, այն ժամանակ նա Յովհաննէս կաթուղիկոսին ու Լևոն թագաւորին դիմեց, որ հաճին իւր խնդիրը կատարելու։ Այս խնդիրը կիլիկիա հասաւ այն ժամանակ (1206 թ.), երբ արդէն Լևոնի ու Յովհաննէսի միջև գժտութիւնը սկսուել էր, և Լևոնը 1207 թ. Սսի Բ ժողովն էր գումարել։

Անա այս ժողովում Զաքարիա սպասալարի խնդիրն ևս քննութեան առնուեցաւ։ Իւանէի նման նշանաւոր մարդու դաւանափոխ լինելը ծանր տպաւորութիւն էր թողել, և Սսի ժողովը վախենալով որ մի գուցէ Զաքարիան ևս իւր եղբօր օրինակին հետևի, որոշեց նրա առաջարկութիւնները ընդունել և սահմանեց. 1. Ս. պատարագը դրպիներով ու սարկաւագով մատուցանել՝ նաև բացօթեայ վրանի տակ, ինչպէս վրացիք էին անում. 2. Տօնել Աւետեաց տօնն ապրիլի 6-ին. Վերափոխումը՝ օգոստոսի 15-ին, որ օրն և հանդիպին, իսկ Յայտնութեան—սեպտեմբերի 14-ին վրաց նման. 3. Զատկի ու Ծննդեան ճրագալոյցները միմիայն ձէթով ու ձկով—վրաց ու յունաց նման—լուծել. 4. Ընդունել բոլոր սրբերի և Փրկչի պատկերների յարգանքը. 5. Պատարագ մատուցանել ոչ միայն ննջեցեալների հոգու փրկութեան, այլ և կենդանիների համար, այս էլ Յունաց, Ասորւոց ու Վրաց նման։ 6. Արգիլել հայ կրօնաւորներին մխա ուտել 7. Նախ դպիր կարգել, ապա սարկաւագ ձեռնադրել և յետոյ միայն քահանայ. 8. Պատուիրել հայ կրօնաւորներին վանքերի մէջ ապրել ու սեպհականութիւն չունենալ։

Այս որոշմունքները Լևոն թագաւորն ու Դաւիթ կաթուղիկոսն ուղարկեցին Զաքարէ իշխանին։ Յովհաննէս Մեծաբարձրն ևս իւր առաջնահերթութեան վայել թանկագին վրան, մարմարեայ սեղան ու պատարագի այլ սպասներ ուղարկեց Զաքարիային Մինաս եպիսկոպոսի ձեռքով, հետն էլ դպիրներ, երգիչներ ու սարկաւագներ։

Ընդունելով երկու կաթուղիկոսների թղթերը՝ Զաքարիան մեծապէս ուրախացաւ և Լոռի քաղաքում բոլոր Հիւսիսային վարդապետներին ժողովի կանչեց (1207 թ.), կաթուղիկոսների կարգադրութիւնը լսելու։

Հիւսիսային վարդապետների մէջ այս ժամանակներում նշանաւոր էին Գրիգոր Տաւուշեցին, Սարգիս Անիցին, Մխիթար Գոշը՝ Մեծ վարդապետ կոչուածը, Դաւիթ Բոբայրեցին և ուրիշները։ Ժողովի մէջ վարդապետներն երկու մաս բաժանուեցան. մի մասը համակերպուեցաւ Ասի ժողովի որոշման, իսկ միւսը, որի գլուխն էր Տաւուշեցին, բնաւ չհամեցաւ ժողովի որոշումներն ընդունել այն հիմամբ, թէ այս կէտերն ընդունելուց յետոյ սոխալուած կըլինին ուրիշ մասերի մէջ ևս յունաց ու վրաց հետևել։ Ժողովականները գաղտնապէս Լոռուց հեռացան։

Ժամանակ անցնելուց յետոյ երբ ս. Աստուածածնի վերափոխման ու ս. Յակի տօները մօտեցան, Զաքարիան պատուէր ուղարկեց իւր իշխանութեան տակ գտնուած հայ վանքերը, որ այդ տօներն անպատճառ վրաց հետ տօնեն։ Նրա հրամանով Մինաս եպիսկոպոսն էլ Հաղբատ գնաց՝ վերափոխման տօնը կատարելու. բայց դեռ վանք չէր հասած, երբ Տաւուշեցու թելադրութեամբ նա ետ կոչեց զնացողներին։ Այս դէպքից սաստիկ զայրացած՝ Զաքարիան Գրիգորին բռնել ու պատժել կամեցաւ։ Նա սկզբում Մխիթար Գոշի մօտ ապաստան գտաւ, բայց ապա կալանաւորուեցաւ ու բանտ գրուեցաւ։

Համեմատելով այս խոովութիւններին վերջ դնել և իւր կամքը վերջնականապէս ընդունելի դարձնել՝ Զաքարիան 1209 թ. Անիի ժողովը գումարեց։ Երբ իշխանը ժողովականներից տարաքրութիւն պահանջեց, որ համաձայն են իրեն, ամէնքն էլ պահանջեցին, որ Մխիթար Գոշն էլ ժողով գայ, որը սակայն ակարութիւն պատճառելով Անի չէր եկել։ Նա թէև իշխանին համամիտ չէր, բայց և այնպէս նրա գործունէութեան դէմ այնպիսի զօրեղ բողոքարկու չէր, ինչպէս Տուեէորդին, համոզուած լինելով՝ թէ Զաքարիան բնաւ յետ չէր կինալու իւր մտադրութիւնից։

Ժողովականների պահանջմամբ երբ Մխիթարը վերջապէս Անի եկաւ, զօրավարի հրամանով անմիջապէս պալատ տարուեցաւ, և այս հանգամանքն եկեղեցականներին շատ զայրացրեց։ Մխիթարը մաքերի յուզումը տեսնելով՝ խորհուրդ տուեց ժողովականներին իրենց տեղերը ցրուել և հոգ տանել, որ հայ ժողովուրդը վրաց հետ չխառնուի. ինքն էլ խոստացաւ Զաքարիայի սիրտը մեղմել և հոգալ, որ նա էլ իւանէ եղբօր նման վրացի չդառնայ։ Զաքարիան տեսնելով որ ժողովականները Անիից հեռացան առանց իւր կամքը կատարելու՝ սաստիկ զայրացաւ և շատերին բանդարկեց ու եպիսկոպոսական թեմերից զըրկեց. բանդարկեալները մէմիայն Մխիթարի ու Իւանէի միջնորդութեամբ ազատուեցան։

Ընդունելով եղած հակառակութիւններին՝ Զաքարիան այնուամենայնիւ շարունակեց պնդել իւր կամքի վրայ։ Այս նեղքին դժուարութիւնները վերջացան Զաքարիայի մահուամբ, որ 1211 թուին եղաւ։

Յաջորդ տարին վախճանեցաւ և նրա խոստովանահայր Մխիթար Գոշը։

Է. ԳԼՈՒԽ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՅՈՅՆ ԵՒ ԼԱՏԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ.

ՍՍԻ ԺՈՂՈՎՆԵՐԸ (1243. 1251).

1. Հայոց թագաւորութեան խնամակալ աւագ պարոն Կոստանդինը Յովհաննէս Մեծարաւոյի մահուանից յետոյ՝ ընդհանուրի համաձայնութեամբ կաթուղիկոս նշանակեց Բարձրբերդի եպիսկոպոս Կոստանդինին, որ մի սրբակեաց, անշահասէր, առատաձեռն ու ամենքի համակրութիւնը վայելող անձնաւորութիւն էր։ Ժամանակակից ու գործակից վարդան պատմիչը մեծ գրուատիքով է խօսում նրա վրայ, համարելով նրա ընտրութիւնը մի աստուածային կոչումն։ Բազմամեայ եղաւ այս գրասէր ու առաքինի անձնաւորութեան կաթուղիկոսութիւնը (1220—1267) և նա իւր կարողութեան ու ժամանակի հանգամանքների նեղութեան համեմատ աշխատանց պատուով կատարել իւր բարձր պաշտօնը։

Նրա առաջին գործերից մէկն եղաւ Լևոնի Զաբէլ աղջկանն ամուսնացնել Անտիոքի Փիլիպպոս իշխանի հետ պայմանով սակայն՝ որ հայ ազգային սովորութիւններին, հայ եկեղեցու դաւանութեան համեմատ տպրի, որովհետև Կիլիկիայի բնիկ ազգային կուսակցութիւնն այսպէս էր պահանջում։ Երբ Փիլիպպոսն իւր խոստմանը չըժեց, այն ժամանակ նոյն կոստանդինը Զաբէլին ամուսնացրեց (1226 թ.) հայազգի Հեթում իշխանի հետ, որ Կիլիկիայի նշանաւոր թագաւորներից մէկն դարձաւ։

Մինչդեռ Կիլիկիայում հայ կեանքը խաղաղ ու անդորը վիճակի մէջ էր, ճիշդ այս ժամանակներում Մեծ Հայքի մէջ երևեցան թաթար հրոսակները, որոնք Աղուանից ու Հայոց երկրի մի մասն աւերելուց յետոյ՝ բոլորովին խորտակեցին վրաց թագաւորութեան ոյժը, որը տակաւին նոր Թամարայ թագուհու ժամանակ իւր գերազանցութեան էր հասել։ Նրանք աւելի ևս առաջ գնացին դէպի Փոքր Ասիոյ խորքերը և Իկոնիոյ սուլթանութիւնն իսկ կործանեցին։

Թաթարաց արշաւանքի հարուածներն ու աւերումները զառնապէս նկարագրում են ժամանակակից Կիրակոս ու Վարդան պատմիչնե-

ը. Կոստանդին կաթուղիկոսն էլ նոյնն ողբագին յիշատակում է իւր կոնդակի մէջ, նա որ առաջապահների թեթևութեան համար իւր սիրտն ու հոգին մաշից և առաւօրէն գանձ ծախսից։ Տեսնելով Թաթարների ոյժը, շրջահայեաց Հեթումն լաւ համարեց նրանց հետ բարեկամութիւն հաստատել (1237 թ.), և այս ճանապարհով Կիլիկիան նրանց աւերմունքից ապահովել։ Բայց այդ դաշինքը Միծ Հայքի համար ևս նշանակութիւն ունեցաւ։

2. Օգտուելով Կիլիկիայի քաղաքական խաղաղ կացութիւնից, Կոստանդին կաթուղիկոսը Հեթում Թագաւորի հրամանով, ձեռնտուութեամբ ու ներկայութեամբ 1243 թուին Սսի երկրորդ ժողովը գումարից՝ նպատակ ունենալով հոգևորականների ու աշխարհականների վարք ու բարքի ուղղութեան համար կանոններ սահմանելու։ Ինչպէս կանոններն, այնպէս նաև ժամանակակից Կիլակոս պատմիչը շեշտում են, որ ժամանակի հայ եպիսկոպոսների մէջ սիմոնականութիւնը սաստիկ տարածուած էր, ինչ որ յիշում է նաև Գոշը, և շատ անդրադէտ ու անաչառ մարդիկ նրանք վողով քահանայացնում էին։

Աշխարհականների մէջից օրինաւոր ամուսնութիւնը համարեա վերացել էր և ապօրէն կենակցութիւնները բազմացել, պահեցողութիւն և այլ բարեպաշտական սովորութիւններ անհետացել էին. տարածուել էր սաստկապէս ամէն տեսակ սրբութիւններ՝ երես, բերան, գերեզման հայհոյելու վատ սովորութիւնը և այլն։ Սսի ժողովը, որին ներկայ էին միմիայն Կիլիկիայի եկեղեցականները, 24 կանոններ սահմանից վերոյիշեալ չարիքների դէմ՝ խստիւ պատուիրելով միմիայն 25 տարեկան ուսումնականներին քահանայական կոչումն տալ և 20 տարեկաններին սարկաւագ ձեռնադրել։ Ուսումնականները պէտք է նաև աղայոց կրթութեամբ զբաղուին։ Մկրտութեան աւազանն անշարժ պիտի լինի ինչպէս հին կանոններն ևս պատուիրում են։ Ամպականների մէջ ամուսնութիւն կարող է լինել միայն 6 ծնունդ հեռացած՝ եօթնորդ պորտում, այն էլ՝ փեսան 14 տարեկանից պակաս լինելու չէ, իսկ հարսը—12 տարեկանից. այս վերջին կէտն անգործադրելի է Միացել։ —Հաղորդութիւնը կարելի չէ առանց բուրվառի ու մոմեղէնի հեւանդի մօտ տանել։—Ժողովուրդն իրաւունք չունի իր կամքով այս կամ այն քահանայի ծուխը լինելու, այլ այդ եպիսկոպոսի կամքից է կախուած։—Պէտք է խրատել, յանդիմանել և մինչև իսկ մարմնապէս պատժել չնացողներին, պոռնիկներին՝ ուղղութեան բերելու համար։—Ժողովը բանադրանքով պարտաւորից Հեթում Թագաւորին ու նրա հօրը Կոստանդինին, որ յիշողաւորութեան ախտը վերացնելու համար օգնեն եկեղեցուն և յիշողաւորներ կարգեն այլ և այլ տեղեր, որ յիշողաւորների լեղուները ծակելով լար անցրած շրջեցնեն՝ ուրիշների

ղգուշութեան համար, և տուգանք ևս տանեն աղքատների օգտին։ Վերջին 25-րդ կանոնը ժողովի որշումը չէ, այլ միմիայն կաթուղիկոսի ցանկութիւնը. այդ կանոնը պատուիրում է որ լատինների ցանկութեան համեմատ վերջին օծումը իւղով կատարուի։ Բայց այս ցանկութիւնն էլ միմիայն թղթի վրայ մնաց և իրականութիւն չստացաւ։

Սսի ժողովի այս կանոնները կաթուղիկոսը չկարողացաւ ժամանակին Միծ Հայքի եպիսկոպոսներին ևս յայտնել. երեք տարի վերջը միայն՝ 1246 թուին առանձին շրջաբերական թղթով նա վարդան վարդապետի ձեռքով Արևելք ուղարկեց վերոյիշեալ կանոնները՝ խնդրելով որ նոյնն ընդունողները ստորագրութիւն տան, ինչպէս որ և ուրիշ խմբ։

3. Ներքին բարեկարգութեան հետամուտ լինելով՝ Կոստանդին կաթուղիկոսը հայ եկեղեցու արտաքին բարեզարդութեան ևս հետամուտ եղաւ։ Ինչպէս տեսանք Լամբրոնացու ժամանակներից սկսած՝ Վերին և Կիլիկիայի հայ եկեղեցականների մէջ թանկագին զգեստներով պատարագելու սովորութիւնը մեծ վէճի ու հակառակութեան առարկայ էր, թէև արդէն Շնորհալին պատուիրել էր, որ «հասարակաց զգեստուք և ապուհեալ արեխաք» պատարագ չմատուցանեն (Ընդհ.) այլ քահանայական զգեստով։ Կոնստանդին կաթուղիկոսն Աբեղեանի վանքերի մէջ ևս մտցնում է եկեղեցական թանկագին զգեստներ. նա ընծայ է ուղարկում (1247 թ.) մետաքսեայ ու թանկագին գոյնզգոյն կտորներից կարած պատարագի նախշուններ (շուրջառներ) և միանգամայն ձեռնտու է լինում աւերուած վանքերի ու եկեղեցիների նորոգման՝ օգտուելով թաթարների բարեհաճ վերաբերմունքից։

Կոստանդնի կաթուղիկոսութեան ժամանակ (1250 թուերին) սկիզբն առաւ և Դաւիթ Ծարեցու մոլորութիւնը, որ առ ժամանակ մարքերը պղտորելուց յետոյ խափանուեցաւ։ Այս մասին վերջը։

4. Կոստանդին կաթուղիկոսի ժամանակ կրկին սկսուեցան միութեան փորձեր թէ Յոյն և թէ Լատին եկեղեցիների կողմից։

Յունաց Դիմանոս Բ պատրիարքը (1222—1250) մի թուղթ գրից հայոց կաթուղիկոսին, և յուզելով կրկին մի և երկու բնութեան վարդապետութեան խնդիրը՝ յայտնում էր թէ հայերն խափառ մոլորւում են, երբ մի բնութիւն են խոստովանում. մեւս կողմից էլ պաշտպանում էր յունաց պատանութիւնը Նեստորական ամէն կարծիքներից։ Այս նամակին 1241 թուերին Կոստանդին կաթուղիկոսը Թէոդորոս ու Բարսեղ վանականների ձեռքով պատասխանից՝ բնականաբար պաշտպանելով թէ հայերը մի բնութիւն խոստովանելով բնաւ Եւտիքեան չեն։

Մի քանի տարի վերջը 1254 թուերին, երբ յունաց Յովհաննէս

Դուկաս Վատածից թագաւորը կրկին սկսաց հայերին նեղել՝ Կոստանդին կաթուղիկոսը Յակովբ Կլայեցի վարդապետին նրա մօտ ուղարկեց, որ յունաց եկեղեցական ժողովի առաջ քաջաբար պաշտպանեց հայոց եկեղեցու դաւանութիւնն ու ծէսերը և սիրոյ ու բարեկամութեան տրամադրեց նրանց (կիր. 212)։

Առաւել հրկարամիտ եղաւ Կոստանդին կաթուղիկոսի յարաբերութիւնը Լատին եկեղեցու հետ։ Յարաբերութեան առիթ տուեց Անտիոքի Լատին պատրիարքը, որ վտառասիրութիւնից դրդուած կամենում էր հայոց կաթուղիկոսին իւր իրաւասութեան ենթարկել այն պատճառաբանութեամբ, թէ ամբողջ Կիլիկիան Անտիոքի թեմին է պատկանում։ Տեսնելով որ Կոստանդին կաթուղիկոսն իւր իշխանութիւնը ճանաչել չի ուզում, նա 1238 թուին Գրիգոր Թ պապին գանգատուեց։ Սակայն պապն անիրաւ գտաւ իւր պատրիարքի պահանջը ընդունելով թէ հայոց կաթուղիկոսն անկախ է բոլորովին Անտիոքի պատրիարքի իշխանութիւնից. (ԺԴ դարում պապերի ձգտումն էր՝ իրենց իշխանութիւնը զօրացնելու համար տկարացնել արքեպիսկոպոսների իշխանութիւնը), բայց միանգամայն ցոյց տալու համար, թէ հայոց եկեղեցու բարձրագոյն գլուխը ինքն է, առանձին թղթով հաստատից հայ եկեղեցու բոլոր հին եկեղեցական սովորութիւնները և այս մասին յայտնից Հեթում թագաւորին։ Կոստանդին կաթուղիկոսն էլ շնորհակալութեան թուղթ ուղարկեց և իւր պատիւը բարձրացնելու համար պալիւն խնդրեց, և Գրիգոր Թ-ը ուղարկեց նրան խոյր, պալիւն ու մատանի ի նշան իւր իշխանութեան ու գթութեան։ Այս ընծաների առիթ ևս Կոստանդին կաթուղիկոսը շնորհակալութեան նամակ գրեց, որին սակայն պատասխանեց Ինոկենտիոս Դ-ը (յուն նիս 1243—1254)։

Սա ևս 1244 թուականին Հռոմից նամակ գրեց հայոց կաթուղիկոսին՝ իմիջի այլոց առաջարկելով, որ հիւանդների օծումն իւղով կատարուի կաթոլիկ եկեղեցու սովորութեան համեմատ։ Ահա այս թղթից դրուած Կոստանդին կաթուղիկոսը 1240 թ. Արեւելեան հայոց ուղարկած Սպ կանոնների վրայ 25-րդ կանոնն աւելացրեց հիւանդաց օծման նկատմամբ։ Բայց Ինոկենտիոս Դ-ը այսչափով չգոհացաւ՝ իւր անուանակից Ինոկենտիոս Դ-ի նման նա ձգտում էր Հռոմի աթոռի դիրքը բարձրացնել. նա կարողացաւ գտնել Փրեսերիկոս Բ-ին ընկճել և իւր հմայքը Արեւմտքում տարածել. նոյն առնչանքներով աշխատեց հայոց եկեղեցին ևս աւելի սերտիւ միացնել պապական եկեղեցու հետ։ Ահա մի այսպիսի յանձնարարութեամբ 1248 թուին նրա կողմից Կիլիկիա եկաւ սպանիացի Տիմանդ եպիսկոպոսը և մի թուղթ բերից Հեթում թագաւորին՝ միանգամայն ցոյց տալով այն մեծամեծ

քաղաքական շահերը, որ հայերը կարող էին յուսալ մի այդպիսի հզօր պապից, եթէ երկու եկեղեցիների միութիւնը գլուխ գար։ Հեթում թագաւորը պապի թուղթը Հռոմկլայ Կոստանդին կաթուղիկոսին ուղարկեց՝ խնդրելով անձամբ չգալ, այլ քաղցր ու կակղագոյն պատասխան տալ։ Հայոց կաթուղիկոսը, որքան և մինչև այժմ յարգանքով էր վերաբերուել դէպի ս. Պետրոսի Աթոռը, կարող չէր իւր հարազատ եկեղեցին դաւաճանել, և ընդունել այն միութիւնը, ինչ որ Իննովկենտիոսն էր առաջարկում. ուստի իւր սիրելի վարդան վարդապետ պատմիչի ձեռքով, որը այս ժամանակներում նրա մօտ էր, մի ընդարձակ թուղթ գրեց Հեթում թագաւորին, ուր 15 հատուածների մէջ ընդհանրապէս հերքեց հռոմէական եկեղեցու վարդապետութիւնը, և յորդորեց Հեթումին բնաւ չխաբուել նրանց խօսքերից, որոնք իրանց թագաւորի հետ կռուելով (ակնարկում է պապի ու Փրեսերիկոս Բ-ի կռիւը)՝ մեզ էլ ևս ուզում կռուեցնել. թէ ասում է, մեզ հաւատի մասին բան հարցնեն, ասա թէ իմ առաջնորդների հաւատի մասին բան հարցնեն, ասա թէ իմ առաջնորդների հաւատն ունիմ և նրանց պէտք է հարցու տամ և ոչ թէ ձեզ (Արբտ. 1892, 954)։

5. Այսպիսի պատասխանի վրայ Հռոմէական եկեղեցին թողնելով իւր միւս պահանջները՝ խնդիրը մանաւորեց և կամեցաւ երկու եկեղեցիների դաւանական միութեան մի նոր հիմունք ստեղծել։ 1250 թուին Իննովկենտիոսը Հեթում թագաւորին ու Կոստանդին կաթուղիկոսին դարձեալ թղթեր գրեց յայտնելով՝ թէ պէտք է «ս. Հոգու բխումն ընդունել ոչ միայն Հօրից, այլ և որդուց (Ֆիլիոքուէ)։

Հռոմէական եկեղեցու այս առաջարկութեան պատասխանելու համար 1251 թուին Կոստանդին կաթուղիկոսը Սսի Գ ժողովը գումարեց։ Արդէն այդպիսի առաջարկութիւն եղած էր նաև յունաց, վրաց և ասորւոց։ Յոյները բացէիբաց մերժեցին. Ասորիներից ոմանք համաձայն էին նոր դաւանութեան, ոմանք էլ անհամաձայն։ Հայ եկեղեցականներն ևս վերջնական կարծիք չյայտնելով, նախ ցանկացան Արեւելեան հայ վարդապետների կարծիքն իմանալ։

Արեւելեան վարդապետներից վանականի դաւանութիւնը մութ է, բայց մօտ կաթոլիկ դաւանութեան. իսկ մերանները, ինչպէս և Սսի ժողովի պատասխանը բնաւ չի բովանդակում այն՝ ինչ որ պապական եկեղեցին էր առաջարկում։ Այդ պատասխանի մէջ հայոց եկեղեցին դաւանում է, թէ ս. Հոգին բխում է Հօրից և Որդուց (կամ՝ Որդուց, Որդու միջոցով) հրևում է. այս վարդապետութիւնը նոյնը չէ Ֆիլիոքուէի (և յՈրդւոյ) հետ, հետևաբար ճշմարտութեան դէմ մեղանչում են նրանք, որոնք Սսի ժողովի վրին մի այդպիսի վարդապետութիւն են վերագրում։

Մսի ժողովից յետոյ երկար ժամանակ ոչ մի յարաբերութիւն չեղաւ հայ և կաթոլիկ եկեղեցիների միջև. այդ ժամանակներից ընկլսած միծապէս խախտուած էր պապական իշխանութիւնն Արևմտքում և պապերը տարագիր ընդում էին։ Բայց և այնպէս արևելեան եկեղեցիներում նոցա հմայքը տակաւին զօրեղ էր և կաթոլիկ եկեղեցականները բոլոր զօրութեամբ աշխատում էին այդ հմայքը միշտ վառ պահել։

1262 թուին Աքիա (Պաղեստինում) եկաւ Ուրբանոս Դ պապի նուիրակ Գուլիելմոս եպիսկոպոսը։ Հեթում թագաւորը նուիրակին պատուելու համար իր Օշին եղբօրն ուղարկեց, իսկ Կոստանդին կաթուղիկոսը՝ չնայելով նուիրակի բանաւոր տեղեկութեան՝ իր կողմից ոչ մի անձն, և այս դժգոհութիւն պատճառեց պապի նուիրակին։ Հեթում ու Օշինը տակաւին Արևմտքից օգնութիւն սպասելու, այն էլ պապի միջոցով, յուսով պարարտած՝ յորդորեցին կաթուղիկոսին արքայական դեսպանի հետ իր կողմից ևս մարդ ուղարկելու արժանաւոր ընծաներով, և կաթուղիկոսն էլ թագաւորի կամքը կատարելով՝ ուղարկեց Մխիթար Սկևռացի վարդապետին։ Պապի նուիրակը տօնաճութեամբ ընդունեց Մխիթարին և երբ մի ժողովի մէջ կրօնական վէճ յարուցուեցաւ և նուիրակը Պետրոս առաքեալի գլխաւորութիւնն էր պաշտպանում, հաստատելով միանգամայն պապերի գերագոյն իշխանութիւնը միւս եկեղեցիների նկատմամբ, Մխիթար վարդապետը գեղեցկապէս հերքեց նուիրակի փաստերը ապացուցանելով թէ բոլոր եկեղեցիների գլուխները հաւասար են, ապա ուրեմն և հայոց կաթուղիկոսը պէտք չէ որ հնազանդի Հռոմի Աթոռին։ Վերադառնալով Սիս՝ այս բոլորը Մխիթարը Հեթումին պատմեց և սրա հաճութեամբ իր բոլոր մտքերը գրի առաւ և այսպէս ձեռնարկ այն գեղեցիկ մատեանը, որ կոչվում է «Համապատասխանութիւնն ժԲ առաքելոց» (տպ. Եր. 1865)։

6. Նշանակելի է ԺԳ դարում և Հայ ու Ասորի եկեղեցիների բարեկամական յարաբերութիւնը։ Ռուբինեանց իշխանութեան տակ գըտնվում էին բազմաթիւ ասորի վանքեր, որոնց մեծամեծ կալուածներ էին նուիրում հայ թագաւորները։ Հայ թագաւորներն իրրև հրկրի մեծապետներ միշամտում էին նաև ասորւոց եկեղեցու ներքին գործերի մէջ։ Ասորւոց մի քանի պատրիարքներ—Իգնատիոս Ա (1222—1252), Յովհաննէս (1252—1263) և Իգնատիոս Բ (1264—1282)—հայոց ձեռնտուութեամբ իշխեցին, ապրեցան Սիսում, ուր իրենց համար առանձին եկեղեցի ունէին, և Հռոմկլայում՝ Կոստանդին կաթուղիկոսի ժամ։

7. Հեթում Ա-ի թագաւորութեան ու Կոստանդինի կաթուղիկոսութեան վերջին տարիները կիլիկիան ասպատիկ աւերմունքի ու ապականի հնթարկուեցաւ. 1266 թուին աշնանը Եգիպտոսի սուլթան Փընտաբնատարը մեծ զօրքով կիլիկիա մտաւ, շատ գիւղեր ու քաղաքներ աւերեց ու հրդեհեց, առաւ նոյն իսկ Սիս մայրաքաղաքը, շատ մարդ կոտորեց, շատերին էլ գերի տարաւ։ Այս աւերմունքի ժամանակ Թորոս արքայորդին ապստամբեցաւ, իսկ Լեւոնը գերի ընկաւ։ Երկրի այս աւերմունքը և իր ձեռնասուն արքայորդիների կորուստը ծերունի ու հիւանդ կաթուղիկոսի մահն արագացրին, նա մեռաւ 1267թ. գարնանը։

...

Ը. ԳԼՈՒԽ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԱՆԿՈՒՄՆ ՈՒ ԿՐՕՆԱԿԱՆ ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ.

1. Հեթում Ա-ի հրամանով 1268 թուի սկզբում համազգային ժողով գումարուեցաւ Մսիս քաղաքում և կաթուղիկոս ընտրուեցաւ Յակովբ եպիսկոպոսը, որ իր խոստուութեամբ ու ընտիր վարքով յայտնի էր։ Երկու տարի վերջը Հեթումը մեռաւ (1270 հոկտ. 25) և Յակովբ կաթուղիկոսը թագաւոր օծեց Հեթումի որդուն Լեւոնին, որ Կիլիկիայի մեր նշանաւոր թագաւորներից մէկն եղաւ։ Սա նորոգեց աւերակ եկեղեցիները ու բերդերը. իր առատաձեռնութեամբ հիւանդանոցներ հաստատեց, աղքատներ ու տանկներ խնամեց. սիրեց գրպետոյ ու գրականութիւն. խրախուսեց գրասէր մարդոց և հայ գրականութիւնն արդիւնքներն արտագրել տալով հայոց վանքերը ցրուեց։ Այսպիսի բարեմասնութիւններով օժտուած, Լեւոնը միանգամայն գիտցաւ սուր դրծածել թշնամիների առաջ և իր հայրենի հրկիրը պաշտպանել հնարաւորութեան չափով։ Նա քաջ պաշտպան հանդիսացաւ նաև իր հայրենի եկեղեցուն։ Երբ Անտիոքի Եւթիմէոս պատրիարքը սկսեց հայերին կրօնի համար հալածել և պահանջել, որ հայոց կաթուղիկոսն իրեն հնթարկուի, Լեւոն Գ-ը սպառնական նամակ գրեց նրան. իսկ երբ նամակն ազդեցութիւն չունեցաւ, Լեւոնը նրան բռնեց ու աքսորեց։ Այս կերպով հալածանքը դադարեց։

Այս ժամանակներում հայ և լատին եկեղեցիների յարաբերութիւնն սկսուելուն մի նոր աւիթ եղաւ. Լեւոն Գ-ը և Յակովբ կաթուղիկոսը Գրիգոր Ժ-րդ պապի կողմից հրաւէր ստացան մասնակցելու

Լիոնի Բ ժողովին (յուլիս 1274 թ.), ուր հաստատուեցաւ յոյն և լատին եկեղեցիներուն միութիւնը և պապի գլխաւորութիւնը քաղաքական նպատակներով։ Թէ ինչպէս վերաբերուեցան այս հրաւէրին հայ թագաւորն ու կաթուղիկոսը՝ բոլորովին յայտնի չէ։

Բայց Լևոն Գ-ը չնայելով իր անձնական արիութեան ու իմաստութեան՝ անկարող էր բոլորովին առաջն առնելու այն չարիքներին, որոնք հետզհետէ ղիզուում էին Կիլիկիայի վրայ. մի կողմից հայոց բազմակամ թաթարների ուժի հետզհետէ տկարացումը, միւս կողմից էլ Եգիպտական սուլթանների զօրութեան ահաւորութիւնը ստիպում են Լևոն Գ-ին աննպաստ դաշինքների առաջ գլուխ խոնարհելու (1282)։ Քաղաքական այս հանգամանքները մեծ ազդեցութիւն ունեցան նաև Հայոց եկեղեցական գործերի վրայ և ներքին խռովութիւնների առիթ դարձան։

Լևոն Գ-ի թագաւորութեան ժամանակ 1286 թուին վախճանեցաւ Յակովբ Կլայեցի կաթուղիկոսը, որի համար այս ևս յիշւում է, թէ Շնորհալու Ընդհանրականն օրինակել տալով ամէն կողմ ցրուեց, և նրան յաջորդեց Կոստանդին Պրօնագործը՝ Խորին մինաստանի առաջնորդը (1286 ապրիլ)։ Սրա օրով Լևոն Գ-ին յաջորդեց Հեթում Բ-ը (1289—1307) մի գրասէր, բարեպաշտ, արի, բայց անխոհեմ ու յողդողդ անձնաւորութիւնը. այսպիսի յատկութիւններով կարելի չէր հայ թագաւորութիւնը կառավարելու և այս ժամանակից իսկ սկսւում է նրա քայքայումը։ Ի բնէ կրօնասէր ու բարեպաշտ՝ Հեթում իւր ժամանակը՝ յոյն կայսրների նման, մեծ մասամբ լատին կրօնաւորների շրջանումն էր անցկացնում ս. Գրքի ընթերցմամբ ու կրօնական խնդիրներով զբաղուած։ Բայց ժամանակի քաղաքական կացութիւնը շատ ծանր էր։ Երկու ոսոխ պետութիւններ—Թաթարական իշխանութիւնն ու Եգիպտոսի մահմէտական սուլթանութիւնը—հզօրապէս կըռւում էին, և կռւի այս ու այն ելքից կախումն ունէր նաև հայ թագաւորութեան գոյութիւնը։ Բայց արդէն պարզ էր թաթարական սըկարացումը. և Թաթարներն էլ, որոնք երբեմն թշնամի էին մահմէտական կրօնին և տրամադիր դէպի քրիստոնէութիւն՝ այժմ արդէն հակուել էին դէպի մահմէտականութիւն և խէթ աչքով էին նայում քրիստոնէութեան վրայ։ Իրերի այս վտանգաւոր դրութիւնն ի նկատի առնելով՝ Հեթում Բ-ը կամեցաւ հայ պետութեան ապահովութեան համար կրօնական միութիւն առաջ բերել հայ, յոյն և արևմտեան եկեղեցիների մէջ և լատին եկեղեցականների միջոցով քրիստոնէութիւն տարածել թաթարների մէջ, և այս ճանապարհով ամբարտակ կանգնել մահմէտականութեան աճող զօրութեան դէմ։ Բայց նրա ձգտումը զօրեղ ընդդիմութիւն առաջ բերից հայ ժողովրդի ու հոգևորականութեան մէջ. պապերն էլ Արևմտքի քաղաքական աշխարհում այժմ արդէն այն ոյժն ու հրապոյրը չունէին մի այսպիսի քաղաքական դաշնակցութիւն յաջողեցնելու համար։ Ինչևիցէ՝ այսպիսի ձգտումներով ու քաղաքականութեամբ Հեթում Բ-ը հէնց իւր թագաւորութեան առաջին տարին (1289) Ֆրանչիսկեան Յովհաննէս կրօնաւորի ձեռքով Նիկողայոս Դ պապին մի թուղթ գրեց յայտնելու իր մեծարանքն ու որդիական հնազանդութիւնը։ Նիկողայոս Դ պապը նոյն Յովհաննէս կրօնաւորին և հետն էլ շատ քարոզիչներ Ասիա ուղարկեց (15 յուլ. 1289) մոնղոլ թաթարների մէջ քրիստոնէութիւն քարոզելու. այլ և նամակ գրեց Հեթում թագաւորին, նրա հզօրն և ուրիշ մեծամեծներին և յորդորեց հայ ու լատին եկեղեցիների միութեան համար աշխատելու. բայց Հեթումի այս ընթացքն ու ցանկութիւնը կաստանդին կաթուղիկոսի հակառակութիւնը գրգռեց և թագաւորը տեսնելով կաթուղիկոսի ընդդիմադիր ոգին՝ աշխատեց նրան գահընկէց անել։ Այս առիթ Սսի մէջ ժողով գումարեց, և բարդելով նրա վրայ հերետիկ յանցանքներ՝ կաթուղիկոսութիւնից հրաժարեցրեց (1290). չորս տարի էլ Լամբրօն բերդը պահեց և յետոյ միայն Սկևռայ վանքի վանահայր կարդեց։

2. Գահընկէց Կոստանդնի փոխանակ Հեթումը կամենում էր Անարզաբայի Գրիգոր եպիս. նստեցնել. բայց ժողովի ցանկութեամբ Սսի եպիսկոպոս Ստեփանոսը կաթուղիկոս ընտրուեցաւ (1290—1293)։ Սա Հռոմկլայի վերջին կաթուղիկոսն եղաւ։ 1292 թուին Ծատզատիկ պատահեցաւ. Հեթում թագաւորը Սսի մէջ ժողով գումարեց կաթուղիկոսի մասնակցութեամբ և կարգադրեց Զատիկը յունաց հետ տալբիլի 6-ին (և ոչ թէ 13-ին) տօնել։ Այս հանգամանքը, ինչպէս յիշատակարանները պատմում են, մեծ խռովութիւն առաջ բերեց և ժողովուրդը երկպառակեց. Կիլիկիայի վանքերում և Մեծ Հայքում Զատիկը տօնուեցաւ տալբիլի 13-ին, իսկ Սսում—ապր. 6-ին։ Հեթումը իւր հակառակորդներին բանդարկել տուեց, կարգից ղրկեց և ուրիշ սպառնալիքներով զբաղուեցրեց և այս բոլորն անում էր միմիայն ուրիշ ազգերի հետ սիրով ու միաբան լինելու համար։ Այս ներքին խռովութիւնների ժամանակ՝ 1292 թուին ամառը Մելիք Աշրաֆը յարձակուեցաւ Հռոմկլայի վրայ, այրեց կաթուղիկոսարանը և Ստեփանոս Դ կաթուղիկոսին շատ կըզեայլեց կաթուղիկոսարանը, վանքոյ ս. Նշանը և այլ բիկոնները, ինչպէս և ս. Լուսաւորչի աջը, վանքոյ ս. Նշանը և այլ սրբութիւններ գերի տարաւ։ Եգիպտոս Ստեփանոս կաթուղիկոսը Դամասկոսում պերութեան մէջ մեռաւ (1293), իսկ Աջը մի տարուց յետոյ վերադարձուեցաւ Սիս և տպա այնտեղից ս. Էջմիածին տարուեցաւ։

Հեթումն էլ ճիշդ այս ժամանակ (1293) իշխանութիւնը յանձնե-

լով իւր Թորոս հղբօրը Ֆրանչիսկեան կրօնաւորների կարգը մտաւ։

3. Հեթում Բ-ը կրօնաւոր դառնալուց առաջ իւր հղբօրը Թորոսին և Թումաս եպիսկոպոսին արևելեան եպիսկոպոսների մօտ և յատկապէս Թադէոս առաքեալի վանքն ուղարկեց՝ հրաւիրելով նոր կաթուղիկոս ընտրել։ Ընտրուեցաւ Անարզաբայի Գրիգոր եպիսկոպոսը, որ վաղուց արդէն ցանկանում էր եկեղեցական այդ բարձրագոյն իշխանութիւնն ստանալու։ Նրա առաջին գործն եղաւ հայրապետական աթոռը աւերակ Հռոմկլայից Սիս փոխադրել։

Գրիգոր Է-ը (1292—1307) ժամանակի կրթուած հայ եկեղեցականներից մէկն էր, հմուտ յոյն և լատին լեզուներին, եկեղեցական գրականութեան, ջերմ հայրենասէր, բայց միանգամայն թոյլ բնաւորութեան տէր։ Շփուելով անդադար յոյն ու լատին եկեղեցականների հետ՝ Անաւարզեցին տակաւին եպիսկոպոս ժամանակից համակուած էր ընդհանուր քրիստոնէական եկեղեցիների միութեան գաղափարով (ինչպէս երբեմն Ներսէս Լամբրոնացին), և այդ միութեան գլուխ գալուն համար նոյն իսկ պատրաստ էր ազգային եկեղեցու ինչ-ինչ առանձնաթիւնները զոհ բերել։ Իւր այս ձգտման համար Անաւարզեցին արդէն իսկ հաճելի չէր կիլիկեցի վանականներին և Արևելեան առանձնապահ եկեղեցականներին, որոնք և դժկամակութեամբ ընդունեցին նրա կաթուղիկոսանալը, բայց միւս կողմից էլ նա լիովին համապատասխանում էր Հեթում Բ-ի ու նրա յաջորդների քաղաքականութեան—միանալ Արևմտեան եկեղեցու հետ՝ կիլիկեան խաբխուլ գահն ապահովելու համար իւր գլխուսմից։ Դիւրախտաբար՝ այս քաղաքականութիւնն վոխանակ հայ աթոռի այժն ապահովելու՝ պատճառ դարձաւ ամբողջ ԺԴ դարի ընթացքում հայ ժողովրդի ներքին խըռովութեան ու քայքայման։

Արևելեան վարդապետներն, ինչպէս և կիլիկեցի վանականները դժկամակութեամբ ընդունեցին Գրիգոր Անաւարզեցու կաթուղիկոսանալը, որը յայտնի էր «հռոմ» անունով, իբրև հաւատակից ու դաշնակիր յունաց։ Կաթուղիկոս չեղած՝ նա կարգաւորեց հայոց Յայսմաւուրքը Յունաց ու Լատինաց Յայսմաւուրքի համեմատ և Լատինաց նման նոյեմբերի 1-ին հաստատեց Ամենայն սրբոց տօնը՝ Հեթում թագաւորի խնդրով։ Երբ կաթուղիկոս դարձաւ՝ իւր հայրենիքի քաղաքական հանգամանքներն ի նկատի առնելով՝ նա ձգտեց եկեղեցիների միութեամբ հայրենի անկախութիւնն ամրապնդելու (Օբր. կը.). այս իսկ նպատակով աշխատեց հայ եկեղեցու մէջ փոփոխութիւններ մտցնել և վերացնել այն ծիսական սովորութիւնները, որոնց դէմ միշտ հակառակել էին յոյներն ու լատինները. այսպէս՝ նա պատուիրեց ճրագալոյցներին պահքը չլուծել. նաւակատիք չկատարել. հիւանդ-

ների համար ձէթ օրհնել, Բաժակի մէջ ջուր խառնել և այլն։ Այսպիսի զիջողութիւններ անելով հանդերձ՝ ինքն էլ յոյներից պահանջում էր, որ Անտիոքի պատրիարքական աթոռը հայոց կաթուղիկոսի իրաւասութեան ենթարկուի, ինչպէս առաջ էլ այս մասին խնդիր էր հղած։

Անաւարզեցու այս միարարական գործողութիւնների լուրը երբ Արևելք հասաւ, շատ մեծ յուզումն առաջ բերեց. ոմանք հաւանեցան նորա գործունէութեան. բայց բազմութիւնը դժգոհ էր, որոնց մէջ էր և Սիւնեաց Ստեփանոս եպիսկոպոսը, որ 1286 թ. Պրօնազործից էր ձեռնադրուել։ Սա ինկատի առնելով ժողովրդի մէջ տարածուած շշուկները, թէ հայոց կաթուղիկոսը հռոմացել է, և կամենալով ներքին կրօնական հրկպառակութեան առաջն առնել, 1296 թուերին ժողով գումարեց, և մի խոնարհական, բայց միևնոյն ժամանակ զգուշացուցիչ թուղթ գրեց Գրիգոր Անաւարզեցուն։ Ժողովը խնդրում էր կաթուղիկոսից իրանց կասկածները փարատել դաւանական թղթով. պաշտպանում էր հայ եկեղեցու դաւանութիւնն ու ծիսական սովորութիւնները. բացարձակօրէն յայտնում էր, թէ յօժար է հայրերի հետ դժոխք իջնել, քան թէ Հռոմեների հետ երկինք երթալ. վերջապէս ըզգուշացնում էր կաթուղիկոսին նորաձևութիւն չմտցնել հայ եկեղեցու մէջ։

Այս ժամանակներում Արևելք էր եկել Կոստանդին եպիսկոպոս կեսարացին՝ իբրև Գրիգոր Անաւարզեցու նուիրակ, երևի եկեղեցիների միութեան համար մաքեր պատրաստելու կամ կարծիքներ իմանալու սրա ձեռքով էլ ահա և Սիւնեաց ժողովի թուղթն ուղարկուեցաւ։ Յունաց բարեկամ և նրանց հետ միութեան ձգտող Գրիգոր Է-ըդն էլ այս ժամանակ (1296 թ.) բոլորովին յոյներից հեռացաւ։ Այս վոխոութեան պատճառն երևի մասամբ Արևելցոց ծայրայեղ յունասիրութիւնն էր, և մասամբ յունաց եկեղեցու հալածասիրութիւնն ու ատելութեան ընկած դրութիւնը։

Քաղաքական հաշիւներից դրդուած՝ մի քանի տարի առաջ (1274, Լիոնի ժողովը) Միքայել Պալէոլոգ յունաց կայսրը միացրել էր յունաց եկեղեցին Հռովմէականին հետ ընդունելով պապի գլխաւորութիւնը։ Սակայն նրա այս եկեղեցական քաղաքականութիւնը խռովութեան պատճառ դարձաւ և նրա յաջորդ Անդրոնիկոս Բ-ը (1282—1332) կամենալով յոյն ժողովրդի սիրտը շահել՝ կերպարէս խզեց կապուած միութիւնը և ջերմ պաշտպան հանդիսացաւ յոյն եկեղեցու դաւանութեան։ Կայսեր այս ուղղութիւնը մեծ ոգևորութիւն առաջ բերեց յոյն հոգևորականների մէջ, և սկսուեցաւ մի սաստիկ հալածանք այն եկեղեցականների ու աշխարհականների դէմ, որոնք ընդունում էին երկու եկեղեցիների միութիւնը, պապի գլխաւորութիւնը։

Նոյնպիսի թշնամութիւն առաջացաւ և հայերի դէմ. 1295—96 թուերին յունաց արքայորդուն հարսնացած հայազգի Մարիամ իշխանուհին ու նրա քոյրը յունական եկեղեցւ պահանջմամբ կրկին դրոշմուեցան իբրև հերետիկոսութիւնից դարձողներ։ Այսպիսի պայմանների մէջ կարող չէր հայ և յոյն եկեղեցիների միջև միութիւն հաստատուելու։ Միւս կողմից էլ Անդրոնիկոս Բ-ի ժամանակ յունաց քաղաքական այժն այն աստիճան ակտրացած էր, որ հայ թագաւորութեան բնաւ կարող չէր որևիցէ իրական օգնութիւն հասցնելու։

Այսպիսի պայմանների մէջ հայոց աչքը կրկին Արևմուտք դարձաւ, ուր պապական աթոռի վրայ բարձրացած էր Ռոնիփակիոս Ը (1294—1303), գոռոզ ու իշխանասէր պապերից մէկը, որից և Հայերը յոյս ունէին իրական օգնութիւն ստանալու։

Օգտուելով իւր հղեայլներից—Թորոսի ու Հեթումից—Պօլիս գնալուց՝ Սմբատ իշխանը Գրիգոր կաթուղիկոսի ձեռքով հայոց թագաւոր օծուեցաւ (1296 թ. յունուար)։ Գրիգոր Անաւարզեցու Սմբատի կողմն անցնելն ուրիշ կերպ կարելի չէ բացատրել, բայց միայն անով, որ նա Սմբատի մէջ աւելի ոյժ ու կորով էր տեսնում հայոց թագաւորական խարխուլ գահը զօրացնելու համար (ինչպէս որ իրօք էր), քան թէ կէս-ճգնաւոր Հեթումի մէջ, որ երբեմն գահ էր բարձրանում, երբեմն էլ վանք քաշվում, և դարձեալ այն՝ որ Սմբատը աւելի Հռոմի կողմն էր, քան թէ յունաց։

Թաթարների սիրաը շահելուց յետոյ՝ Սմբատը տեսնելով եպիսկոպոսաց սպառնական դիրքը 1298 թ. յուլիսին Ռոնիփակիոս Ը-ին յայտնելով իւր երկրի տառապանքներն ու վտանգը՝ նրանից օգնութիւն խնդրից։ Նոյն ժամանակ Անաւարզեցին ևս գրից և իրրև եկեղեցու գլխի իւր որպիսական հնազանդութիւնը յայտնից։ Ռոնիփակիոս պապը երկուսին էլ 1298 թուի հոկտեմբերին պատասխանից, որ շուտով օգնութիւն կըսատանան ֆրանսիացիների ու անգլիացիների կողմից. թէ հայոց երկրին օգնելն անհրաժեշտ է նոյն իսկ ս. երկրի ազատութեան համար. բայց մասնաւորապէս յորդորից Անաւարզեցուն հայ եկեղեցին Հռոմէականին հետ միացնելու աշխատել։

4. Այս թղթակցութիւններից յետոյ մեր երկրում քաղաքական շփոթութիւնն ու պատերազմներ տեղի ունեցան, ուստի և եկեղեցիների միութեան խնդիրը կարող չէր բնաւ արծարծուել։ Բայց և այնպէս Հռոմի քահանայապետների զօրութեան վշտանքների ակնկալութեամբ՝ Անաւարզեցին պատրաստուեց մի քանի փոփոխութիւններ մտցնել ժամասացութեան մէջ. 1298—1302 թուերին նա գրից նոր շարականներ առանձին Քրիստոսի ծննդեան և առանձին մկրտութեան համար՝ որոշելով այս երկու միացեալ տօները առանձին տօնել. գրից շարական ի պատիւ

Լևոն պապին, որ այնքան դատապարտուած է մեր գրականութեան մէջ, շարական ի պատիւ և սիեզերական ժողովներին, որ մեր եկեղեցին բնաւ չէր ընդունած։

Երբ 1303—4 թուերին Կիլիկիայի մէջ խաղաղութիւն հաստատուեցաւ, ահա կրկին արծարծուեցաւ եկեղեցիների միութեան խնդիրը, և Անաւարզեցին կամենալով այս նոր միութեան առթիւ Արևելեան վարդապետների կարծիքն իմանալ՝ 1305 թուին դարձեալ ուղարկից Կոստանդին Կեսարացի եպիսկոպոսին Արևելք։ Բայց սոցա ընդդիմութիւնը տեսնելով և համոզուելով որ Հռոմից ոչ մի օգնութիւն կարելի չէ յուսալ, (ճիշդ այս ժամանակ սկսուեցաւ պապերի բաբելոնեան գերութեան շրջանը) նա աւելորդ համարեց այլ ևս եկեղեցիների միութեան խնդրով զբաղուելու և ներքին խռովութիւնների պատճառ դառնալու. սակայն իրրև թոյլ մարդ՝ Հեթում թագաւորհօր կամքը հաճելով յանձն առաւ Բաժակի մէջ ջուր խառնել ուրիշներին ևս օրինակ լինելու համար։ Հեթումն ու Լևոն Դ-ը այսչափով չբաւականացան. նոսանք Արևմտից օգնութիւն ստանալու յուսով պահանջեցին Անաւարզեցուց լիակատար միաբանութիւն և այս առթիւ նրանց մէջ գժտութիւն ընկաւ։ Լևոն Դ-ը տեսնելով կաթուղիկոսի ընդդիմութիւնը՝ գահընկէց արաւ նրան ու աքսորից։ Եւ այս աքսորի մէջ՝ զըղջալով որ թագաւորի կամքը կատարելու համար Բաժակի մէջ ջուր չէր խառնել, Անաւարզեցին վշտագին միտաւ ասելով. Հայ եմ և Հայ մեռանիմ (1306 թ.)։

Թ ԳԼՈՒԽ

ՍՄԻ ՈՒ ԱՏԱՆԱՅԻ ԺՈՂՈՎՆԵՐԸ (1307. 1316).

1. Այն միութիւնը՝ ինչ որ չկամեցաւ կատարել Անաւարզեցին, նրա մահուանից յետոյ կատարից Լևոն Դ թագաւորը։ Սա 1307 թուին մարտի 19-ին՝ Ծաղկազարդի օրը ս. Սոփիա մայր եկեղեցում Սսի Զ-րդ ժողովը գումարից բազմաթիւ եկեղեցականների և աշխարհական մեծամեծների ներկայութեամբ (43 հոգի)։ Ժողովի քննութեան ներկայացրից Լևոն թագաւորը մի նամակ, որը ըստ էնց թէ Գրիգոր Անաւարզեցին էր գրել, և բովանդակում էր հետևեալ դատնական ու ծիւարզեցին էր գրել, և բովանդակում էր հետևեալ դատնական ու ծիսական փոփոխութիւնները, որոնցով հայ եկեղեցին Հռոմի ու միւս եկեղեցիների հետ պիտի միանար. ա. Բաժակի մէջ ջուր խառնել

ը. Հօթը սիեդիրական ժողովներն ընդունել. դ. Խոստովանել Քրիստոսի մէջ երկու բնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւն. դ. Տէրունական տօները յոյն և լատին հկեղեցիներէ նման տօնել. Աւետումը՝ մարտի 15-ին, Ծնունդը՝ դեկտեմբերի 25-ին, Տեառնընդառաջը՝ փետրուարի 2-ին. վերափոխումը, Աչվերացն ու միւս տօներն ևս՝ դարձեալ յունաց ու լատինաց հետ. ե. Ծննդեան ու Յարութեան ձրադալոյցները միմիայն ձկեղով ու ձկնով լուծել. զ. ս. Աստուածը «Քրիստոս» բառի յաւելմամբ—Քրիստոս որ խաչեցար վասն մեր—երգել: Ժողովականները, բացի հինգ եպիսկոպոսներից, ընդունեցին ու ստորագրեցին այս բոլոր բարեփոխումներն իբրև ուղղափառական ու ճըշմարիտ՝ սպառնալով նա հակառակորդներին պատուհասել: Սակ սոյն ժողովը կաթուղիկոս ընտրեց Կոստանդին Կեսարացուն, որ միութեան դէմ եղած չատագովներից մէկն էր այսպէս Լևոն Թագաւորը, Հիմում Թագաւորահայրն ու միւս իշխաններն իրանց նպատակին հասան, բայց և ծանրապէս տուժեցին, որովհետև Պիլարդու Թաթար զօրապետի ձեռքով դաւաճանութեամբ սպանուեցան (1307 թ.):

2. Լևոն Դ-ին յաջորդեց իւր հօրեղբայր Օշինը (1307—1320), որի օրով կրօնական խռովութիւնները զօրեղ բռնկումն ունեցան Կիլիկիայի մէջ: Սակ ժողովի որոշմունքների դէմ բողոքեցին և՛ Կիլիկեցիք, և՛ Արևելեան հայերն, մասնաւորներից մէկն Մովսէս վարդ. Երզնկացին, որ իւր «Ընդդիմադրութիւն» գրուածով աշխատեց հերքել միաամի ժողովի իրաւաբանական ու դաւանական հիմունքները (Լուս. 1901· 302):

Որովհետև Սակ ժողովին ներկայ էին ընդհանրապէս Կիլիկեցի եպիսկոպոսներ ու վանականներ, ուստի Կոստանդին Կեսարացին հարկ համարեց ժողովի որոշմունքն Արևելցոց ևս յայտնել իւր նուիրակ Գրիգոր եպիսկոպոսի ձեռքով, որին և պատուիրեց միւսոն տալ միայն նրանց, որոնք յանձն կառնեն ջրախառն պատարագել և Դեկտեմբերի 25-ին Քրիստոսի Ծննդեան տօնը կատարել:

Արևելեան եպիսկոպոսներից Զաքարիա Ծործորեցին սկզբում համակերպութիւն ցոյց տուեց կաթուղիկոսի առաջարկութեան, բայց տեսնելով Սիւնեաց Ստեփանոս ու Յովհաննէս եպիսկոպոսների ու եսայի Նչեցի նշանաւոր վարդապետի հակառակութիւնը, ինքն էլ մերժեց կաթուղիկոսի առաջարկութիւնը:

Բայց կրօնական խռովութիւնն աւելի զօրեղ էր Կիլիկիայում և յատկապէս՝ Սակ մէջ: Այստեղ հասարակ ժողովուրդն ու վանականները սկսան փողոցները շրջել ու աղաղակել, թէ չեն կամենում ամենևին նոր դաւանութիւն ընդունել: Օշին Թագաւորը կամենալով խռովութիւնները դադարեցնել, հրամայեց որ եպիսկոպոսները նորից Սիս

հաւաքուին ու նախկին որոշմունքը վաւերացնեն. բայց եպիսկոպոսները, որոնց մէջ կային և Սակ նախկին ժողովի անդամներից ոմանք, բոլորովին մերժեցին Թագաւորի հրամանն ու 1307 թ. ժողովը: Ամէն կողմից Սիս Թափուեցան քահանաներ, սարկաւագներ, կրօնաւորներ, մեծ բազմութեամբ կանայք, և հակառակութեան ցոյցեր արին: Այս խռովութիւնները տեսնելով՝ Օշինը սաստիկ զայրացած շատերին բանդարկեց, շատ վարդապետներ ու եպիսկոպոսներ կիլրոս աքսորեց (1309 թ.), ուր և նոքա մեռան, իսկ աշխարհականներից շատերին էլ՝ կանանց ու այլ մարդոց՝ հրամայեց կոտորել: Բայց այս բռնութիւնները կատարող եպիսկոպոսները ժողովրդից հալածուեցան և Կարնոյ Գրիգոր եպիսկոպոսը Բաժակին մէջ ջուր խառնելուն համար քարկոծուեցաւ:

Երուսաղէմի Սարգիս եպիսկոպոսն էլ՝ տեսնելով Օշինի ու Կոստանդնի գործած այս բռնութիւնները՝ մերժեց բոլորովին հայոց կաթուղիկոսի իրաւասութիւնը և Եգիպտոսի սուլթանի հաճութեամբ Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնը մինչև այսօր շարունակվում է:

Զնայելով հայ ժողովրդի ցոյց տուած այսչափ հակառակութեան, Օշին Թագաւորը դարձեալ հաստատ մնաց իւր որոշման վրայ և շարունակեց կաթոլիկ եկեղեցու հետ մերձաւոր յարաբերութեան մէջ լինել՝ այն յուսով միայն, թէ Հռոմը հայոց խարխափող դահին օգնութեան կըհասնի. նա մինչև իսկ 1312 թուին կղեմէս Ե-ը պապի հաճութեամբ կըհատ

սիրա դարձնելու համար 1317 թուին ամուսնացաւ մի լատին իշխանուհու հետ, և տեսնելով Կիլիկիային սպառնացող վտանգը՝ 1318 թուին Եւրոպա ուղարկեց կապանի Յակովբ եպիսկոպոսին օգնութիւն խնդրելու համար։ Եպիսկոպոսը տեսնուեցաւ Յովհաննէս Իբ պապի և Ֆրանսիայի Փիլիպպոս թագաւորի հետ, բայց միմիայն խոստումներ ստացաւ և դրամական քիչ-շատ օժանդակութիւն։ Հանգամանքից օգտուելով Յովհաննէս Իբ պապը հաւատաքննութեան ևս ենթարկեց Յակովբ եպիսկոպոսին և լիովին գոհ մնաց նորա տուած դաւանական թղթից, միայն հայ և լատին եկեղեցիների միութեան ամրողջութեան համար ցանկացաւ, որ ս. Հայ եկեղեցուն էլ Հիւանդաց օծման իւղը եպիսկոպոսն օրհնէ. և ը. որ Դրօշմի խորհուրդը միմիայն եպիսկոպոսը տայ։ Այս իմաստով պապը մի թուղթ ևս գրեց Օշին թագաւորին, որ անհամբեր սպասում էր Արևմտքի իրական օգնութեան, որի փափաքով կնքեց նա իւր կեանքը (1320, յուլիս 20), իւր խաբխուլ տէրութիւնը մանկահասակ Լևոն Դ որդուն (1320—1342) թողնելով։

Ժ. ԳԼՈՒԽ

ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ.

1. Մանկահասակ Լևոն Դ-ի թագաւորութեամբ արհաւիրքների շրջան սկսուեցաւ Կիլիկիայի հայ թագաւորութեան համար. նա ներքին ու արտաքին պատճառներով արագ-արագ քայքայվում էր և դժբախտաբար չգտնուեցաւ մի կարող բազուկ, մի զօրաւոր միտք, որ կարողանար երկրի վերանորոգութիւնն ու կազդուրումն առաջ բերել։ Մի կողմից թուրքերի արշաւանքից քաղաքներ ու գիւղեր ամայացան, միւս կողմից էլ բնական պատահարներից սոխպուած հայ ժողովուրդը հեռըզհետէ թողից Կիլիկիան ու մայր հայրենիքը և գաղթեց դէպի օտար երկիրներ։ Արևմուտքը այս ժամանակ հայոց թշուառութիւնն ամոքելու միայն մի միջոց գտաւ—պաղատական աղօթքներ կատարել բոլոր եկեղեցիներում։ Ահա այս թշուառութեան ու աւերածութեան ժամանակ վախճանեցաւ Կոստանդին Կեսարացին, և նրան յաջորդեց համանուն Կոստանդին Դ Լամբրոնացին (1323—1327)։

Սա տեսնելով Եգիպտացւոց գործած չարիքները անձամբ դիմեց նրանց սուլթանին, քաղցրացրեց նրա սիրտը և տասնհինգամեայ խա-

զաղութեան դաշն կապեց, որով Կիլիկիայի դէպի արտաքին խաղաղութեան պատճառ դարձաւ։ Բայց հայ թագաւորութեան ուսիճը իւր մէջն էր. նա հիւպատակուած էր ազգայնական ու կրօնական տարբեր համոզմունքներով և հետզհետէ դէպի անկումն էր գլորվում։

2. Կիլիկեցի նախորդ թագաւորների արևմտասէր քաղաքականութեան ծանր հետևանքները դժբախտաբար խրատ չեղան մանկահասակ Լևոն Դ-ին համար՝ աւելի շրջահայեաց լինելու, աւելի զգաստ ու խոհեմ ընթացք բռնելու իւր դրացի մահմէտական պետութիւնների և իւր հայ հպատակների նկատմամբ. ընդհակառակը՝ նա իւր լատինամոլութեամբ այնքան առաջ գնաց, որ հայ իշխաններին սկսեց ըմպանել, պաշտօններից զրկել և նրանց փոխանակ լատիններին պաշտօններ տալ նա մինչև իսկ իւր հայազգի կնոջը սպանեց և ամուսնացաւ լատին իշխանուհու հետ. մերժեց թուրք իշխանի խնդիրը՝ մի քանի տեղերի նկատմամբ, և նոյն տեղերն արևմտեան Փռանգ վաճառականներին տուեց. նա Կոստանդինի յաջորդ Յակովբ Բ կաթուղիկոսին էլ՝ (1327—1340), որ Յովհան Փռնեցու և նրա ընկերների քարոզութեան դէմ էր մաքառում, կոնդակ հանել տուեց (1332, մարտի 6), որով յորդորում էր հայոց լատինամիտ, ունիթոռ Փռնեցուն և նրա գործակիցներին չհալածել։ Իւր այսպիսի գործերով Լևոնն արդարև Արևմտցոց հաճելի դարձաւ, և սրանք արդարև պատրաստուեցան Լևոնին օգնութեան գալ, բայց այդ՝ այս անգամ էլ չիրականացաւ. իսկ հայերն Արևմտցոց մօտալուտ օգնութեան ու պատերազմական պատրաստութեան վրայ յոյսերը դրած՝ մի քանի եպիսպատներ ևս սպանեցին։ Ֆրանկների պատրաստութիւններն ու սպառնալիքները և հայոց անմիտ վարմունքը թուրք իշխաններին մեծապէս զայրացրին. 1335—1337 թուականներին նրանք Կիլիկիան աւերակ դարձրին, իսկ Արևմտեան տէրութիւնները՝ չնայելով Փռնների Մխիթար եպիսկոպոսի դեսպանութեան, ոչ մի օգնութիւն հայոց չհասցրին։ Թուրք իշխողների ու հայ թագաւորի միջև խաղաղութիւն հաստատուեցաւ այն պայմանով միայն, որ Լևոնն այնուհետև ոչ մի յարաբերութիւն չունենայ Հռոմի հետ։ Լևոնը երդմամբ խոստացաւ. բայց իւր երդմանը շուտով դրժեց։ 1337 թուին Բենդիկտոս ԺԲ պապական աթոռը բարձրացաւ և Լևոնի սրտի մէջ Արևմուտքի օգնութեան յոյսը նորից արծարծեց, և անուղղայ Լևոնը՝ պապերի ապարդիւն խոստումներից չվերատուած՝ իւր դրած պայմանին հակառակ սկսաւ յարաբերութիւն ունենալ Արևմուտքի հետ, և այս պատճառով էլ Յակովբ կաթուղիկոսից ու հայ իշխաններից յանդիմանուեցաւ։ Բայց Լևոնը սոցա ազդարարութիւններին ըմբիշ յանդիմանուեցաւ։ Բայց Լևոնը սոցա ազդարարութիւններին լըսելու փոխարէն Յակովբ կաթուղիկոսին գահից զրկեց (1340 թ.), և նրա տեղը Փռների Մխիթար եպիսկոպոսին կարգեց (1340 – 1355).

պապի մօտ էլ Դանիէլ մինոր Սսեցի վարդապետին ու Թորոս Մէքայէլեանցին դեսպան ուղարկից այն յուսով, թէ նա իւր խոստումը կըկատարէ։ Պապն օգնութիւն աղերսող չարաչանչ հայ թագաւորին օգնել խոստացաւ, եթէ ժողովով հերքէ այն 117 մեղադրանքները՝ որ հայ եկեղեցու վրայ Ներսէս Պալիենց հայ ունիթոռ եպիսկոպոսն էր բարդել։ Դանիէլ մինորը այդ 117 զրպարտութիւններէն հերքից յատկապէս այն կէտը, թէ դոյակոխութիւնը Յիսուսի խօսքերո՞վ է կատարվուած (Առէք կերէք), ինչպէս լատին եկեղեցին է ընդունում, թէ ս. Հոգու կոչման աղօթքով (Երկիրըպագանեմք և այլն)։ Բայց Բենեդիկտոս ԺԲ-րդը գոհ չմնաց. Լևոնը պատրաստութիւն տեսաւ պապի ցանկութեան համեմատ ժողով գումարելու. բայց իւր նպատակին չհասաւ. 1342 թ. օգոստ. 22-ին մեռաւ կամ սպանուեցաւ՝ թողնելով տըղայ Հեթումին իբրև ժառանգ. սա էլ շուտով վախճանեցաւ, և Ռուբինեան-Հեթումեան թագաւորական տոհմը այսպէս սպառուեցաւ։

2. Հայ թագաւորական տոհմի սպառումը նոր խռովութեան պատճառ դարձաւ։ Հայ պարոնների համաձայնութեամբ թագաւոր դարձաւ կիպրոսի Լուսինեան Ամորի թագաւորի որդին Գուիտոնը (1342—1344), որը թէև անձնապէս քաջ ու կարող անձն էր, բայց իւր կաթոլիկական ձգտումների պատճառով հայ իշխաններին ատելի դարձաւ և սպանուեցաւ։ Վերջապէս գահ բարձրացաւ Կոստանդին Բ Նղրեանց (1344—1363), որ այլևայլ զիջողութիւններով մի կողմից կարողացաւ մահմէտականների սիրտը գրաւել, միւս կողմից էլ աշխատից Արևմըտեցոց գութը շարժել հայ երկրի արգահատելի վիճակի վրայ։ Կռևոէս Զ պապը (1342—1352) իւր կարեկցութիւնն ու օգնութիւնը մի պայմանով էր միայն առաջարկում, որ հայերը ժողովով հերքեն վերոյիշեալ 117 մեղադրական կէտերը։ Օգնութիւն ստանալու ակնկալութեամբ Կոստանդին թագաւորն ու Մխիթար կաթուղիկոսը 1345 թուին գումարեցին Սսի Զ ժողովը, որին 59 հոգի էին ներկայ։ Մեղադրական կէտերից գլխաւորներն հետևեալներն են. ա. Հայոց եկեղեցին Հռոմէականին նման չի խոստովանում ս. Հոգու բխումը եւ յՈրդւոյ. բ. ուսուցանում է թէ մերձիմահ հիւանդը ճաշակութեան փոխանակ կարող է հողի վրայ խաչ նկարել ու այդ հողից ճաշակել. գ. ընդունում են հոգեծնութեան աղանդը. դ. Քրիստոսի մէջ մի բնութիւն են դաւանում. ե. Բաժակի մէջ ջուր չեն խառնում և երկու տեսակով են հաղորդում. զ. Քաւարանի վարդապետութիւնը չեն ընդունում, ինչպէս և կաթոլիկ եկեղեցու գլխաւորութիւնը. է. նզովում են Լևոն պապին ու Քաղկեդոնի ժողովը. ը. Զուտին եկեղեցու հօթը խորհուրդները. թ. պատարագում են փայտեղէն կամ խեցեղէն սկիհով և այլն։

Այս և այլ սրանց նման մեղադրանքները քննութեան առնելով՝

ժողովը օգնութիւն ստանալու ակնկալութեամբ այնպէս ներկայացրեց, թէ Հայոց եկեղեցին էլ Հռոմէականին հետ միևնոյն պատանութիւնն ունի։ Բայց այս ժողովական վկայութեան՝ Աւինիոնի անզօր թիւնն ունի։ Բայց այս ժողովական վկայութեան՝ Աւինիոնի անզօր դերեալը, որից օգնութիւն էին աղերսում հայերը, կասկածանքով վերաբերուեցաւ, այնպէս որ Մխիթար կաթուղիկոսն ստիպուեցաւ Աւինիոնում ուղարկել (1353 թ.) գահընկէց Յակովբ կաթուղիկոսին, որ Ինոկենտիոս Զ-ի (1352—1361) սիրտը շահից՝ առանց սակայն իւր չարաբախտ հայրենիքի համար օգնութիւն ստանալու։ Այսմաքի օգնութեան յուսով Մխիթար կաթուղիկոսը իւր աչքերը փակից, ինչպէս և նրա յաջորդ գահընկէց Յակովբ Բ-ը (1356—1360)։

Հայոց թագաւորութեան ճգնաժամը սկսուեցաւ. ժանտախտով ու կոտորածներով երկիրն աւերուեցաւ ու ամայացաւ. նշանաւոր քաղաքներ առնուեցան, կեանքը ամենուրեք դառնացաւ. բայց այս դառնութեան օրերում իսկ Հռոմը դարձեալ հայ եկեղեցու ուղղափառ ու հերձուածող լինելու խնդիրն էր արծարծում։ Այսպիսի անպատեհ ընթացքից զայրացած և հայ ժողովրդի մէջ եղած կլօնական տարբեր հայեացքները շահելու համար՝ Մխսրովը կաթուղիկոսը (1360 օգոստ.—1372) Սսի Ի ժողովը գումարից (1363 թ.) և պատուիրից ամէն տեսակ նորաձևութիւն հայ եկեղեցու մէջից մերժել և լատինաց հակառակ դպրանալ ս. Բաժակի մէջ ջուր խառնելուց։ Սոյն Մխսրովը կաթուղիկոսն աշխատից ցրուած հայերին հայրապետական Աթոռի հետ կապել. նա 1364 թ. յունուարին Լևոնատանի Իլվով, Լուցկա և Վլադիմիր քաղաքների հայ բնակիչների վրայ առաջնորդ կարգեց Գրիգոր եպիսկոպոսին և ս. միւռոն ուղարկից։ Ահա այդ օրուանից սկսաւ Լեհահայոց արքեպիսկոպոսութիւնը, որ մինչև այսօր շարունակվում է, թէև Նիկոլ Թորոսովիչի ժամանակից սրտէն կաթոլիկացած։

Սսի Է ժողովի տարին՝ 1363 թուին, Կոստանդին թագաւորը վախճանեցաւ, և երկամեայ անիշխանութիւնից յետոյ գահակալեց Կոստանդին Գ (1365—1373)։ Բայց սրտէն հայ թագաւորութեան օրերը հաշուած էին. նա հիւծուած էր և իւր վախճանը գտաւ Լևոն Ե-ի ժամանակ, 1375 թ. ապրիլի 16-ին։ Քաղաքական կեանքի անկումը բնականաբար իւր ազդեցութիւնն ունեցաւ ժողովրդի կեանքի վրայ. հայը ցրուեցաւ, աղքատացաւ, ստրկացաւ օտարի ծանր լուծի տակ։ Ճիշդ այս ժամանակներում՝ երբ Կիլիկիայի հայը իւր ազատութիւնից էր զրկվում, Մեծ Հայքը ևս սոսկալի տառապանքների ենթարկուեցաւ Լենկ-թիմուրի և նրան յաջորդող ուրիշ թուրք իշխողների ձեռքից։ Հայ երկրի ու ժողովրդի այսպիսի աւերածութեան ու քայքայման ժամանակ բնականաբար հայ հոգևոր իշխանութիւնն էլ կարող չէր բարձր դիրքի վրայ լինել. բայց նա այնուամենայնիւ հնարաւորութեան չա-

փով՝ մերթ թուրք իշխողներին աղերսելով, մերթ էլ հայ ժողովրդին մխիթարելով, աշխատեց իւր հօտի տառապանքները մեղմել։

Այս անկածութեան ժամանակ Մեսրովբ կաթուղիկոսին յաջորդեց Կոստանդին Ե (1372—1382), որ բախտ ունեցաւ Սսում վերջին հայ թագաւորին՝ Լևոն Ե-ին օծից՝ լատին եպիսկոպոսի գործակցութեամբ, ինչպէս որ հայ թագաւորն էր ցանկանում։

Կոստանդին Ե-րդն էլ իւր նախորդի նման իւր ցրուած հօտը մայր եկեղեցու հետ ամուր պահելու հոգ տարաւ. 1375 թուին նա մի կոնդակ տուեց Լեհահայոց, որով Գրիգոր եպիսկոպոսին նորից առաջնորդ էր կարգում. և որովհետև սա անարժան գտնուեցաւ, նրա փոխարէն մի ուրիշին ձեռնադրեց։

Կոստանդինին յաջորդեց Թէոդորոս Բ-ը (1382—1392), որ իւր կաթուղիկոսութեան առաջին տարին Եգիպտոս գնաց և սուլթանից մեծ պատուով ընդունուեցաւ։ Սա ևս զբաղուեցաւ Լեհահայոց առաջնորդական խնդրով և 1390 թուի տուած կոնդակով՝ վերջնականապէս առաջնորդ ճանաչեց Յովհաննէս եպիսկոպոսին։ Թէոդորոսը սպանուեցաւ այլազգիների ձեռքով և նրան յաջորդեց Կարապետ Ա. (1392—1404) և Յակովբ Գ (1404—1407), որ Սսի եկեղեցականների կամքին հակառակ՝ այլազգի իշխանի ձեռնտուութեամբ կաթուղիկոսացաւ, և իւր հակառակորդների թշնամութեան զոհ գնաց։

Յակովբի կաթուղիկոսութեան առաջին տարին Աղթամարի կաթուղիկոսութեան մէջ ևս խռովութիւն ընկաւ։ Դժգոհ եկեղեցականներն ու իշխաններ Դաւիթ կաթուղիկոսին (1435թ.) կամեցան գահընկէց անել և նոր անձն ընտրել. ոմանք էլ ցանկացան այդ կաթուղիկոսութիւնը վերջացնել և ընդհանուր հայոց կաթուղիկոսութեան ենթարկել. այս վերջին կուսակցութեան պարագլուխ էին Մեծոթայ վանքի վանականներն ու Գրիգոր Տաթեացին։ Սրանք իրանց մտադրութիւնը յաջողացնելու համար նշանաւոր հայ եկեղեցականներին աշխատեցան իրանց կողմը գրաւել և այդ մտքով էլ նամակներ գրեցին, ինչպէս և Յակովբ կաթուղիկոսին, սա էլ ուրախացած՝ Աղթամարցոց օրհնութեան կոնդակ ուղարկեց։ Սակայն գահընկէց կաթուղիկոսի կուսակցութիւնն աւելի զօրեղ դտնուեցաւ. նա իւր իշխանութիւնը նորից ձեռք ձգեց, որով հայ երկու հոգևոր իշխանութիւնների միութիւնը գլուխ չեկաւ. Յակովբն էլ, ինչպէս ասացինք, դեղամահ եղաւ։

Յակովբ Գ-ին՝ դարձեալ բռնութեամբ, Գրիգոր Ը Մանձղատ կոչուածը յաջորդեց (1407—1418 թ. վեռը.). և շատ հակառակորդներ ունեցաւ։ Իւր բարեկամ Կիլիկեցի այլազգի իշխանի ձեռքով թէև նա իւր հակառակորդներին պատժից, բայց նրանք շարունակեցին դուրս գալ և պատեհ դէպքից օգտուելով՝ բռնեցին նրան ու Սսի բերդը ձերբակալեցին. ինչպէս երևում է՝ նա բանդից ազատուեցաւ և իւր համակրողների կողմից կաթուղիկոս ճանաչուեցաւ (Նշտարք եր. 62)։

Սսում կատարուող այս դէպքերը Արևելեան եկեղեցականներին մեծապէս վշտացրին. նրանք Արտրատցի Պօղոս եպիսկոպոսին և Մատթէոս վարդապետին, որոնք Գր. Որոտնեցու աշակերտ էին, յորդորեցին երուսաղէմից Կիլիկիա երթալ մտքերը խաղաղելու համար։ Նոքա սիրով յանձն առան այս առաջարկութիւնը և Պօղոսը իւր քաղցրը վարմունքով Կիլիկեցի բոլոր եկեղեցականներին սիրելի դարձաւ և կաթուղիկոս ընտրուեցաւ։

Պօղոս Ա-ի ժամանակ (1417—1429) Արևելեան Հայաստանը բըռնակալ Իսկէնտերի երեսից սաստիկ աւերուեցաւ. սոքա էլ նրա գործը լրացրեց, որով շատ հայեր լրիւն տունն ու տեղը թողին ու գաղթեցին օտար երկիրներ։ Պօղոս կաթուղիկոսն իւր կարողութեան չափով աշխատեց իւր ժողովրդի թշուառութիւնն ամոքել։ Նա շինեց ս. Աննայի վանքը Սսում։

5. Պօղոս Ա-ին յաջորդեց Կոստանդին Զ Վահկացին (1429—1439)։ Ժե դարի առաջին կիսամեակն Արևմտքում մեծ ժողովների շրջանն է, որոնք դումարուեցան Հռովմէական եկեղեցին «ի պլովին և յանդամս» նորոգելու, ծագած մոլորութիւնների առաջն առնելու և Արևելեան ու Արևմտեան եկեղեցիների միութեանն աշխատելու համար։ Այս վերջին գաղափարը նոր չէր. ԺԲ դարից այդ գաղափարը կար՝ առանց սակայն որևէ գործական արդիւնք ունենալու։ Նոյնն այժմ աւելի ևս յուզուեցաւ յունաց կողմից, որոնք կարծում էին թէ այս ճանապարհով կարող են Օսմանցոց կողմից իրանց տէրութեան սպառնացող վտանգի առաջն առնելու։ Արևմտեան եկեղեցին օգտուելով դէպքից՝ աշխատեց հայոց եկեղեցին ևս նոյն միութեան մէջ մտցնելու։ Այս մտքով դեռ 1433 թուին Բազէլի ժողովը (1431—1437) թուղթ ուղարկեց Պօղոս Յովհաննէս և եօթն հայ եպիսկոպոսներին, որ յորդորեն հայոց կաթուղիկոսին եկեղեցիների միութեան համար ժողովի գալ, և կամ երեսփոխան ուղարկել։ Բայց յիշեալ եպիսկոպոսները պատասխանեցին, թէ Հայերը միմիայն երիք տիեզերական ժողով են ընդունում, թէ այդ հրաւէրի մասին կըգրեն իրենց կաթուղիկոսին՝ նրա կամքին թողնելով պատասխանել ինչ որ պէտք է։

Շուտով այս խնդրի մէջ մտաւ նաև Եւգինիոս Դ պապը։ Սա իւր դեսպանի ձեռքով վերոյիշեալ Եօթիաս արքեպիսկոպոսին թուղթ ուղարկեց (1434 թ.), որ հայոց կաթուղիկոսին յայտնէ եկեղեցիների միութեան համար դումարուելիք ժողովին մասնակցելու մասին։ Յովհաննէս Ը Պալէոլոգ կայսեր ու Յովսէփ (Յովսափ) պատրիարքի կամքըն էր, որ ժողովը Պոլիս դումարուի. բայց այս ցանկութեան չհա-

մակերպուեցաւ Եւգինիոս պապը և ժողովի տեղ Ֆէրրարա՝ ապա Ֆլորենցիա քաղաքը նշանակուեցաւ։

Չստանալով հայոց կաթուղիկոսից որևէ տեղեկութիւն, բայց միանգամայն նրա մասնակցութիւնն ապահովելու համար՝ Եւգինիոս Դ-ը չորս տարի վերջը դիմից ձիներովական հատարակապետութեան օգնութեան, որ այս ժամանակներս տիրում էր Թէոդոսիա (Քէֆէ) քաղաքին, ուր բազմաթիւ հայ գաղթականութիւն կար առանձին եպիսկոպոսի հովութեան տակ։ Հատարակապետութեան ընդհանուր հիւպատոսը պապի կողմից առանձին նուիրակի ձեռքով մի այսպիսի առաջարկութիւն ընդունելով (1438 թ.), անմիջապէս Թէոդոսիայի հայոց կանչեց ու պապի ցանկութիւնը յայտնեց։ Հայերը լսելով այս առաջարկութիւնը՝ երեք ամիս ժամանակ խնդրեցին՝ իրենց կաթուղիկոսին դիմելու, որ եթէ նա գումարուելիք ժողովին պատգամաւոր ուղարկել չյօժարի, այն ժամանակ իրենք կըմասնակցեն։

Թէոդոսիոյ ժողովուրդը պատգամաւորներ ուղարկեց Սիս Կոստանդին Զ-րդ կաթուղիկոսի մօտ՝ յանձնելով նաև պապի նուիրակի կաթուղիկոսի անունով բերած թուղթը։

Կոստանդին կաթուղիկոսը, որ Եւգինիոս պապի 1434 թուին ուղարկած հրաւիրական թղթին տակաւին չէր պատասխանած՝ աղաչաբարեւելով իւր սիրելի Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոսի ղեկուշացուցիչ թղթից (գր. 1436 թ. մայիսի 16-ին), տեսնելով այժմ Թէոդոսիացիների խնդիրը, ձիներովացի հիւպատոսի սոխպմունքը, ևս և իւր ժամանակի հայոց ծանր վիճակը՝ յուսաց նման օգնութիւն գտնելու յուսով յանձն առաւ ֆլորենտիայի ժողովին մասնակցելու և իւր կողմից եպիսկոպոս կարգեց՝ Բերիայի Յովակիմ եպիսկոպոսին, Քէֆէի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսին (1431 թուից) ինչպէս և Մարկոս ու Թովմաս վարդապետներին. այս մասին նա գրեց նաև երկու թուղթ, մէկը՝ Թէոդոսիոյ ժողովրդին, իսկ միւսը՝ ձիներովացւոց Պօղոս հիւպատոսին (1438. յուլ. 25)։

Հայոց կաթուղիկոսի երեսփոխանները Իտալիա հասան, երբ արդէն ժողովը վերջացած էր, և յոյն ու լատին եկեղեցիների միութիւնը հաստատուած (1439. յուլ. 6)։ Պապը, որ այնպէս անհամբեր սպասում էր հայոց պատգամաւորների գալստեան, մեծ սիրով ընդունեց հայ եկեղեցականներին. և սրանք մի հանդիսաւոր նիստի մէջ կաթոլիկ եկեղեցու դաւանութիւնն ամբողջապէս ընդունեցին։ Այս դէպքի առիթով Եւգինիոս պապը մի ընդարձակ հրովարտակ տուեց (22 նոյեմբ. 1439 թ)., որ սովորաբար «Հրահանգ վասն Հայոց» է կոչվում (Պատմ. կթղ. եր. 94), և որի մէջ մանրամասն խօսում է, թէ եկեղեցական խորհուրդները լատին եկեղեցու նման ինչպէս պէտք է կատարել։ Հայ

երեսփոխանները պապից մեծամեծ պարգևներ ստացած հայրենիք վերադարձան։

Յայտնի է, որ յոյն ժողովուրդը սաստիկ թշնամութեամբ վերաբերուեցաւ ֆլորենցիայի եկեղեցական միութեան և հալածանք հանեց միութիւնն ընդունող յոյն եկեղեցականների դէմ։

Թէ ինչպէս վերաբերուեցաւ հայ ժողովուրդն էլ իւր պատգամաւորների գործին՝ այդ մասին որոշ տեղեկութիւն չունինք. բայց Հայրապետական Աթոռի տեղափոխութեան համար յարուցուած խնդիրը ընդորում է ժամանակի հայ եկեղեցականների ու ժողովրդի հայեացքն եկեղեցիների միութեան վրայ։

Հայ պատգամաւորները Սիս հասան, երբ Կոստանդին Վահկացին մեռել էր. նրան յաջորդել էր Յովսէփ Գ (1439—1439), որի վերայ պէսպէս յանցանքներ էին դրուած։ Նրան յաջորդեց Գրիգոր Թ Մուսաբէկեանց (1439 հոկտ.—1451), երբ Հայրապետական Աթոռի տեղափոխութեան խնդիրը յուզուեցաւ։ Ինչպէս յայտնի է, Մուսաբէկեանցը չընդունեց Վաղարշապատի ժողովի (1441 թ.) առաջարկութիւնը և Սըսում մնաց. իսկ Վաղարշապատում կաթուղիկոս ընտրուեցաւ Կիրակոս Վիրապեցին, որով Հայրապետական Աթոռի մէջ երկութիւն ընկաւ։ Այն օրուանից մինչև այժմ երկու Աթոռներն էլ իրենց ուրոյն կեանքն են շարունակում՝ դաւանական խնդիրների մէջ չունենալով բնաւ որևէ տարբերութիւն։

ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ

Ա յօդուած

ԾԻՍԱԿԱՆ ՎԷՃԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԷՋ.

1. Հայ ժողովրդի իւր հայրերի հրկրից տարագրուելէն ու օտար ազգերի հետ շփուելը բնականաբար ազդեցութիւն պէտք է ունենար նրա նիստ ու կացի, նրա աշխարհահայեցողութեան վրայ. օտար ազդեցութիւնն առաւելապէս նշանակելի եղաւ Կիլիկիայում, ուր հայերը շփուեցան ոչ միայն յոյներին, այլ և ուրիշ Եւրոպական ազգերի հետ։ Հայ եկեղեցին ևս այդ ազդեցութիւններից ազատ չմնաց և այս հանդամանքը, ինչպէս տեսանք, դժուարութիւններ առաջ բերեց հայ եկեղեցականութեան մէջ, յատկապէս աւանդապահ Արևելցոց ու Կիլիկեցոց միջև։ Հետամուտ լինելով եկեղեցիների միութեան գաղափարին՝ Կիլիկեցի հայ հոգևորականները, և յատկապէս Լամբրօնացին, ձգտում էին յոյն և մանաւանդ Հռոմէական եկեղեցու կարգերը հայ եկեղեցու մէջ մտցնել, մի բան՝ որ Արևելցոց դժգոհութիւնն առաջ բերեց։ Հայութեան երկու մասերի վէճը հետևեալ խնդիրների վրայ էր ծանրացած. ա. Լամբրօնացին, ինչպէս իւր Պատարագի մեկնութիւնն իսկ ցոյց է տալիս՝ հետևելով օտարներին՝ փոփոխութիւն մտցրեց հայ Պատարագամատոյցի մէջ և պատարագի համար նոր ղեկտաւորութիւն—մետաքսեայ շուրջառ, քթանեայ շապիկ, սարկաւագ, դպիր և այլն. Կիլիկիայում կրօնաւորները բաց գլխով էին պատարագում, այն ինչ բուն Հայաստանում հին սովորութեան համեմատ նրանք փիլոնով, վեղարով ու խարազնագեստ էին պատարագում և պատարագի ժամանակ քահանաներ էին սպասաւորում։ Այսպիսի զգեստներով պատարագելը Մխիթար Գոշը աղքատութեան հետևանք է համարում, իսկ կրօնաւորների գլուխ չբանալն անով, որ նրանք խուզուած մազ ունին։ ԺԳ դարում Կոստանդին Կաթուղիկոսը Արևելքի վանքերը պատարագի թանկագին նավթրաններ (շուրջառ) ուղարկից և այս ժամանակներից նրանց զգեստաւորութիւնն ընդհանուր դարձաւ։

բ. Լամբրօնացին օտարներին նայելով՝ ինչպէս երևում է, եկեղեցիներից վարագոյրը վերցրել էր. և այս պատճառով Արևելեան վարդապետների բարկութիւնը գրգռել։ Լամբրօնացին էլ իր կողմից

մեղադրում է սոցա, որ պատարագի ժամանակ եկեղեցու դուռն են գոցում։ Բայց այս սովորութիւնն Արևելքում եղել է նրա համար, որ այլազգիք ներս չմտնեն և ս. Խորհուրդը չանարգեն, և այս սովորութիւնը շատ հին ժամանակներից է եղել։

գ. Ի նկատի ունենալով ժամանակի տակաւ աճելութիւնը՝ Լամբրօնացին իւր վիճակում երկարդ ամուսնութիւնը թոյլ էր տալիս. այն ինչ Բուն Հայքում այս կէտը պատապարտուում էր իբրև անժուժկալութեան նշան, ինչպէս նայում է և Պարտաւի 768 թուի ժողովը և յոյն ու լատին եկեղեցիների սովորութիւնը ծաղրվում։

դ. Կիլիկեցիք լատինաց ու յունաց նման ընդունում էին, որ պատարագ կարելի է մատուցանել ոչ միայն հանգուցեալների, այլ և կենդանիմարդոց համար. այն ինչ Հիւսիսային վարդապետների տեսութեամբ պատարագ կարելի էր մատուցանել միմիայն ննջեցեալների հոգու վերկութեան համար (Թղթ. Գոշի)։

ե. Կիլիկիայում սովորութիւն էր մտել հայ եկեղեցիները պատկերներով զարդարել ընդհանուր քրիստոնէական եկեղեցու սովորութեան համեմատ. և Լամբրօնացին Ծաղկազարդի առնին մի անգամ մինչև իսկ ցանկացաւ, որ Տարսոնի եկեղեցում Աւետարանը նախ յունարէն կարդացուի և ապա հայերէն՝ որպէս թէ կաթուղիկէ եկեղեցու կարգն այդպէս էր պահանջում. բայց Արևելցիք ընդունում էին, թէ հայ եկեղեցու մէջ միայն ս. Խաչը, Փրկչի և Տիրամօր պատկերները պէտք է լինին և ուրիշ ոչ մի նորաձևութիւն։

2. Որչափ և Հիւսիսային վարդապետները հակառակ էին Կիլիկեցիների նորաձևութիւններին, իրենք էլ սակայն ազատ չէին պէս-պէս թերութիւններից։ Ինչպէս Լամբրօնացին, այսպէս նաև այս ժամանակի յոյներն ու վրացիները միշտ գործ ունին հայ կրօնաւորների դիակներ, որ գինեսէր են, մսակեր և այլն. և Գոշը աւետեան արդարամտութեամբ հայ կրօնաւորների պակասութիւնները թուելով հանդերձ՝ դարձեալ ցոյց է տալիս, թէ նրանք որչափ վրացի ու յոյն կրօնաւորներից բարձր են։ Մի ախտ՝ որ սաստիկ տարածուած էր հայ բարձր հոգևորականութեան մէջ, այդ սիմոնականութիւնն էր, որի մասին օտարներն, ինչպէս նաև Գոշը, յաճախ շեշտում են։ Սա բնական է գտնում, որ ձեռնադրողն՝ որևէ տուրք առանայ. բայց զարմանալի է, որ հայ եպիսկոպոսներն կանխապէս են տուրք առանում և անարժաններին ձեռնադրում։ Այս չար սովորութեան դէմ Սսի 1243 թուի ժողովն ևս առանձին կանոն սահմանեց։ Եւ յոյները, որ հայ հոգևորականներին խիստ մեղադրում էին սիմոնականութեան մէջ, իրենք էլ սոսկալի կերպով նոյն ախտի մէջ էին թաղուած։

Սիմոնականութեան բնական հետևանքը հոգևորականութեան ան-

կուսն էր. անարժան մարդիկ դիւրապրեցիկ լինելու համար ձգտում էին կաշառքով քահանայական կոչումն առանալ։ Ահա ինչպիսի մռայլ գոյներով կիրակոս Գանձակեցին իւր ժամանակի աշխարհիկ քահանաների ու ժողովրդի կեանքն է նկարագրում. «Ամուսնութեան սուրբ օրէնքը վերցուեցաւ, և ամէն մարդ հեթանոսաբար իւր ազգականի հետ էր խառնվում. հեշտութեամբ թողնում էին իրանց կանանց և նոր առնում... բայց ամենամեծ չարիքն այն էր, որ հալիկոպոսներն արծաթով ձեռնադրութիւն էին տալիս անառականներին, ագէտներին, մանուկներին. Աստուծոյ ու մարդոց միջև միջնորդ էին դարձնում այնպիսիներին, որոնք սովորական մարդոց առաջ ուղիղ խօսել իսկ կարող չէին», (կիր. 162)։ Բայց այս երևոյթը միմիայն Մեծ Հայքին յատուկ չէր։ Կիլիկեցի մի յիշատակագիր ԺԴ դարի վերջերում իւր ժամանակն այսպէս է պատկերացնում. «Ի՞նչ օգուտ մատնաւոր բարեվայելչութիւնից. հալիկոպոսը գլուխնալով հանդերձ այս կամ այն մարդու բարեպաշտ չլինելը՝ իսկոյն աստուածաբան է ձեռնադրում. սիմոնականութեան մասին լաւ է լսել և ոչ թէ յիշել։ Եկեղեցիներում քարոզ ու վարդապետութիւն միմիայն տարեկան տօներին է լինում, և այն էլ՝ ալքունիքում, իսկ ռամիկները բոլորովին զրկուած են ս. Գրքի ուսումից... Գիւղերում երեք-չորս քահանաներ կան, բայց երեք մանուկների օրհնութիւնն իսկ չգիտեն. բացի Տօնից ու Զատկից պատարագ չի լինում... կիրակի օր եկեղեցու դրանը քահանայ չի տեսնվում... եկեղեցիները սարդի ոստայններով են լցուած, զգեստները փոշոտուած։ Ժողովուրդը եկեղեցի չի գնում. որովհետև ծանօթ չէ։ Ես մի տաճկահինդ տարեկան պատանի տեսայ, որ դեռ պատարագ չէր տեսել և այլն։

3. Եկեղեցականութեան այսպիսի անկման ժամանակ բնականաբար ամէն տեսակ մոլորութիւններ կարող էին ժողովրդի մէջ մուտ գործել։ Այսպէս 1280—թուերին դուրս եկաւ Ծարեցի Դաւիթը և իւր քարոզութեամբ բաւական մեծ շփոթութիւն առաջ բերեց։ Սա նախ համբաւեց, թէ ինքը Աբշալուսեանց տոհմից է և թէ իր երկու որդոց մէկը հայոց թագաւոր պիտի լինի, իսկ միւսը՝ կաթուղիկոս։ Այնուհետև յայտարարեց, թէ Քրիստոս պատուիրել է իրեն, որ քարոզէ ու բժշկութիւններ գործէ. նա իւր գիւղի եկեղեցու դրանը մի մեծ փայտեայ խաչ կանգնեց։ Ամէն կողմից դիւրահաւան մարդիկ այս նոր աքանչելագործի մօտ թափուեցան, որ պատուիրում էր չհայհոյել, երկուշաբթի օրերը պաս պահել և իրեն համբուրել։ Դիւահարներին բժշկում էր ծեծելով ու կոկորդի վրայ կոխելով. կարկամածներին՝ ուժով կարկամած անդամը ձգելով և այլն։ Եւ այս խաբեբայի մօտ ոչ միայն դիւրահաւան կանայք կամ մարդիկ եկան, այլ և քահանաներ, որոնք ծա-

ռայում էին նրան ու ոտքի ջուրը ժողովրդի վրայ սրսկում։ Դաւթի դէմ եղած հակառակութիւնը նախանձով էին միկնում, որ չեն կարողանում սուրբի կատարածը գործել։ Ժամանակի նշանաւոր կուսակրօն ակնեցականներն աշխատեցան Դաւթի դէմ մաքառել. բայց ապարդիւն. և երբ մի անգամ Գրիգորիս եպիսկոպոսը Դաւթի կանգնած խաչը կամեցաւ կործանել, հասարակ ժողովուրդը սրերով ու փայտերով յարձակուեցաւ եկեղեցականների վրայ և նրանք փախչելով միայն մահուանից ազատուեցան։ Գրիգորիս եպիսկոպոսը վերջապէս կարողացաւ բռնել Դաւթին և երդուեմն առնելուց յետոյ, որ այլ ևս ժողովրդին չի խաբիլ, արձակեց նրան։

4. Սամուէլ Անեցին էլ յիշատակում է, որ 1302 թուերին առանդաւորների մի խումբ կազմուեցաւ, որ պահեցողութեամբ էր ճգնում, բայց եկեղեցի, քահանայ, խոստովանութիւն ամենևին չէր ընդունում։ Թէ ինչ վախճան ունեցաւ այս նոր քարոզութիւնը՝ պատմութիւնը այդ մասին բան չի ասում։

Բ յօդուած

ՈՒՆԻԹՈՒԹԻՒՆ.

1. ԺԴ դարում հայ եկեղեցու խռովութիւնն մեծ պատճառներից մէկն էլ Ունիթոռւթիւնը հանդիսացաւ, որի մասին պատմութիւնն ընթացքում հարկաւոր խօսել ենք. այստեղ կը ներկայացնենք նրա ամբողջական նկարագիրը։

Կաթոլիկ եկեղեցու վարդապետութիւնն Արևելքում տարածելու համար՝ Յովհաննէս ԻԲ պապը 1316 թուին երկու առաքելութիւն առաքեց. Հայաստանի հիւսիսային կողմերում, Վրաստանում և այլն քարոզելու իրաւունքը նա Ջռանչիսկեան կարգին յանձնեց, իսկ բուն Հայաստանում և Պարսկաստանում—Դոմինիկեան կարգին։ Ուղարկելով այս քարոզիչներին Արևելք՝ պապը միևնոյն ժամանակ նամակ գրեց հայոց Օշին թագաւորին՝ որ պիւրացնէ նրանց ճանապարհը և նրանց իբր ազգայիններին յանձնարարէ։

Արևելք եկող եպիսկոպոսներից մէկն էր Բարթուղիմէոս Պոլոնիացին՝ Թովմաս Ագուինացու աշակերտը, որ եկաւ հաստատուեցաւ Պարսից Մարաղա քաղաքում։ Կարճ ժամանակի մէջ նա սովորից հայ

ու պարսիկ լեզուները և սկսաւ քարոզել։ Նրա ուսումնականութեան ու սրբութեան համբաւը շուտով տարածուեցաւ և ամէն կողմից Մարաղա գիմնին նրա քարոզութիւնը լսելու համար։ Այսպիսինների մէկը էր և ժամանակի նշանաւոր վարդապետ Յովհաննէս Երզնկացին (Ծործորեցին), որ մեկնմանալով Բարթուղիմէոսին՝ սրա օգնութեամբ թարգմանեց Ագաթինացու «Եօթն խորհրդոց» գիրքը։ Նոյն համբաւը դրգից նաև ժամանակի նշանաւոր վարդապետ Եսայի Նչեցուն (+1339) Բարթուղիմէոսի մօտ ուղարկելու իւր աշակերտներից մէկին՝ Յովհաննէս Քռնեցուն, որ սոյգ տեղեկութիւններ բերէ նրա անձի ու քարոզութեան մասին։ 1328 թուին Յովհաննէս Քռնեցի վարդապետը Մարաղա գնաց, բայց բոլորովին յափշտակուելով Բարթուղիմէոսի անձից ու քարոզութիւնից՝ այլ ևս չդարձաւ իւր նախկին վարժապետի մօտ, և Հռոմէական եկեղեցու ջերմ պաշտպաններից մէկը դարձաւ։ Մարաղայի Լատին վանքում իւր ընկերոջ Յակովբ վարդապետի հետ Քռնեցին մէկ ու կէս տարի մնաց, մի կողմից ինքը հմտացաւ կաթոլիկ եկեղեցու դաւանութեան ու լատին լեզուին, մէւս կողմից էլ Բարթուղիմէոսի գործակիցներին՝ Պետրոս Արագոնացուն և ուրիշներին՝ հայկերէն սովորեցրեց։

1330 թուին Քռնեցին Բարթուղիմէոս եպիսկոպոսին իւր հայրենի Քռնա գիւղը բերեց և այստեղից թղթեր ուղարկեց իւր աշակերտակից վարդապետներին, որ կրօնական վիճաբանութեան համար դէն ժողովուրդն և կաթոլիկ եկեղեցու հետ միաբանելու մասին խորհին։ Ժողովը գումարուեցաւ Քռնա գիւղում և Յովհաննէսի աշակերտակից 12 վարդապետները, ինչպէս և աշխարհականները, որոշեցին հեռանալ իրենց հին մոլորութիւնից՝ այսինքն մայրենի եկեղեցուց, և ընդունել կաթոլիկ եկեղեցու դաւանութիւնը, և հնազանդել պապին, իբրև քրիստոնէական եկեղեցու գլխին։

Այսպէս ահա կազմուեցաւ ունիթոռների (Հայ-լատիններ) մի խմբակ, որ իւր գործունէութեամբ մեծամեծ խռովութիւնների պատճառ դարձաւ։ Նա սկսեց այն գաղափարը տարածել հայ ժողովրդի մէջ, թէ միմիայն կաթոլիկ եկեղեցու վարդապետութեամբ կարելի է հոգու փրկութիւն ստանալ, ուստի և փոխոխութիւն մացրեց Հռոմէական եկեղեցու ծէսերի ու պաշտամունքների մէջ. թարգմանեց (1333 թ) ու գործադրեց Դոմինիկեան Պատարագամատոյցը (միսալը), ինչպէս և նոյն կարգի ժամագիրքը (պրեվիար), հայ եկեղեցու պաշտաման նոյն գրքերի փոխանակ։

Բայց Ունիթոռական խմբակի այս գործունէութիւնը մեծ դժգոհութիւն առաջ բերեց։

Եսայի Նչեցին իւր երբեմնի աշակերտին յանդիմանական թուղթ

գրեց, յորդորելով իւր խռովարկու ընթացքից յետ կենալ. մինչև իսկ Բարթուղիմէոս եպիսկոպոսը դժկամակեցաւ, տեսնելով այս նորահաւանների ծայրայեղ նախանձայուզութիւնը։ Բայց ունիթոռների համար այսպիսի զգուշութիւններ ու յորդորներ բնաւ նշանակութիւն չունէին և նրանք կատաղի մոլեռանդութեամբ շարունակում էին իրենց գայթակղեցուցիչ ընթացքը։ Հայ հոգևորականութիւնն ու ժողովուրդը տեսնելով նրանց գործունէութիւնը՝ սաստիկ հալածանք հանեցին նրանց դէմ և Լևոն Թագաւորի հրամանով շատերը բանտարկուեցան։ Սակայն խոստութիւնները նրանց հոգին չմիղմեցին։

Երբ 1333 թուին Բարթուղիմէոս եպիսկոպոսը վախճանուեցաւ, Յովհաննէս Քռնեցին չնայելով կրած հալածանքներին՝ շտապեց Յովհաննէս ԻԲ պապի մօտ և հաստատել տուեց Հայ-Դոմինիկեան կարգը, որ ասելի յայտնի եղաւ Միաբանող եղբայրներ (fratres unitores) կամ Ունիթոռներ անունով։ Այս ժամանակից սկսած՝ նրանք աւելի հոգով սկսան քարոզել, թէ Հայոց եկեղեցին հերձուածող է, քանի որ պապի գլխաւորութիւնը, ս. Հոգու բխումը և յՈրդւոյ, քաւարանը և այլն չի ընդունում։ Նրանց քարոզութիւնն ապարդիւն չանցաւ. հայերից շատերը բաժանուելով իրենց մայրենի եկեղեցուց՝ կաթոլիկ եկեղեցու փարախը մտան և կազմեցին կրօնական համայնքներ։

Ունիթոռութեան բազմամարդ կենդրոններն էին Երնջակ, Նախիջևան, Քռնա և մանաւանդ Ապարաներ գիւղաքաղաքը, ուր կային շատ վանքեր ու կրօնաւորներ, ինչպէս և եպիսկոպոս։ Քռնեցու ժամանակ հետևողների մէջ առանձնապէս պէտք է յիշատակել Ներսէս Պալենց, Սիմէոն ըէկ եպիսկոպոսներին և Մխիթար Ապարանեցի վարդապետին, որոնք ծայրագոյն մոլեռանդութեամբ համարելով՝ թէ հայոց եկեղեցու խորհուրդները փրկարար չեն, իրենց վարդապետութիւնն ընդունող աշխարհականներին կրկին մկրտում էին, իսկ եկեղեցականներին՝ կրկին ձեռնադրում. և այս ամէնը կատարում էին ուր և հանդիպէին։ Սոցա այս վարմունքը սաստիկ դժգոհութիւն առաջ բերից հայ եկեղեցականների մէջ. յիշեալ անձինք հալածուեցան։ Ներսէս և Սիմէոն եպիսկոպոսները նոյն իսկ կալանաւորուեցան ու կիլիկիա տարուեցան և բանտարկութիւնից ազատուեցան միայն՝ երբ խօսք տուին Յակովբ կաթուղիկոսին թէ քարոզութեամբ այլևս խռովութիւն առաջ չեն բերիլ։ Բայց երբ բանդից ազատուեցան՝ Ներսէս Պաղոնը Աւինիոն շտապեց և ծանրապէս ամբաստանեց թէ հայոց թագաւորին և թէ կաթուղիկոսին, որ նրանք արգելք են հանդիսանում հայոց մէջ կաթոլիկ եկեղեցու տարածման, այլ և Բենեդիկտոս ԺԲ պապին ներկայացրեց (1342 թ.) մի գրքուկ, ուր 117 կէտի մէջ ամփո-

ված էր այն բոլոր մոլորութիւնները, որոնց մէջ որպէս թէ ընկած էր հայ եկեղեցին։

Ներսէս Պալենցի այս չարախօսութիւնները հաստատեցին նաև Սիմէոն բէկ եպիսկոպոսը, որ կիպրոս էր վախած, և այն հայ ունիթոռները, որոնք արդէն Արևմուտք էին հաստատուած։ Արդէն պատմել ենք, թէ քաղաքական ծանր հանգամանքներից ստիպուած հայերը ինչպէս Արևմուտքի և յատկապէս Հռոմի պապերի օգնութիան էին սպասում. և մինչդեռ նրանք իրական օգնութիւն ստանալու յոյս ունէին, ահա գալիս է պատասխան Բինդիկիտոսից, թէ որովհետև դուք Հայերդ այդչափ ծանր մոլորութիւնների մէջ էք ընկած, ապա կարող չենք ձեզ օգնել։ Պապը նոյն ամբաստանութիւնները Մխիթար կաթուղիկոսին ևս ուղարկեց՝ խնդրելով այդ բոլորից արդարանալ և ապա թէ օգնութիան ակնկալութիւն ունենալ։ 1345 թուի Մայ 2-րդ ժողովի մէջ տեսանք, որ այն մեղադրական կէտերը հերքուեցան, սակայն Ներսէս Պալենցը մինչև իւր մահը չդադարեց մաքուր պղտորել ու համոզել Հռոմի պապերին՝ թէ հայոց կաթուղիկոսի հերքումը լոկ կեղծիք է։

1348 թուի սկզբում Յովհաննէս Քոնեցին վախճանեցաւ և ունիթոռներն իրանց կարգի հաստատութիւնն ու իրանց հօտն ապահովելու համար իրանց միջից ընտրեցին Թովմաս ու Մամուէլ վանականներին և ուղարկեցին Ինոսէնտիոս Զ պապի մօտ։ Սա առանձին կոնդակով 1356 թուին որոշեց, որ հայ ունիթոռները Դոմինիկեանց ընդհանուր կարգապետի իշխանութեան տակ լինին, բայց իրենց համար առանձին կառավարիչ ունենան, և նոյն Մամուէլին ընդհանուր կառավարիչ կամ գաւառահայր կարգեց, իսկ Թովմասին՝ Նախիջևանի եպիսկոպոս։ Ահա այդ ժամանակից՝ մինչև ունիթոռների սպառելը, միմեանց յաջորդեցին գաւառահայրիք, որոնց իշխանութեան էին ենթարկվում բոլոր վանքերը, ու եպիսկոպոսներ՝ ամէնքն էլ, սակաւ բացառութեամբ, հայ։ Կապուած լինելով Արևմտեան կաթոլիկ իշխաններին ու եկեղեցու հետ՝ հայ ունիթոռ եպիսկոպոսներն աշխատում էին իրենց հօտի համար այլևայլ արտօնութիւններ ու հարկերի թեթևացումն ձեռք բերել պարսիկ իշխաններից, ճնացեալ հերձուածող հայերին ևս իրենց կողմը գրաւելու համար. նրանցից ոմանք արևմտեան կայսրների յանձնարարութիւններն իսկ կատարեցին պարսից շահերի մօտ։

Հայ ունիթոռ եպիսկոպոսներից մանուանդ պէտք է յիշատակել Օգոստինոս Բաջեցին († 1653), որ երկար ճանապարհորդութիւն կատարեց բոլոր Եւրոպայում և եպիսկոպոս ձեռնադրուելուց յետոյ՝ հոգ տարաւ հայ Ունիթոռների մասւոր զարգացման վրայ. նա Ապարաներ

դիւղում, որ Ունիթոռների կեդրոնն էր, դպրոց հաստատեց, և այդտեղ իրրև ուսուցիչ գործեցին Պիրոմալի Պօղոս և Կղեմէս Գալանոս՝ երկու Իտալացի հայադէտներ, որոնք հայերէն գրաւոր վաստակներ ևս թողուցին։

Ունիթոռների գլխաւոր գործիչներն իրենց տարապայման եռանդով ու հայ եկեղեցու վրայ յարձակուելով իրենց դէմ մեծ հալածանքներ յարուցին հայ եկեղեցականների կողմից, որոնցից յատկապէս պէտք է յիշատակել Յովհան Որոտնեցուն և Գրիգոր Տաթեւացուն, և այս երկու կուսակցութիւնների մէջ մաքառումը լինում էր ոչ միայն խօսքով, այլև իրապէս։ Ունիթոռները ժամանակի ընթացքում հետզհետէ հայութիւնից իսկ օտարացան և սկսան իրանց ֆրանկ անուանել, որով և աւելի ատելի դարձան։

Զգալով որ Ունիթոռները պապերի ու արևմտեան իշխանների պաշտպանութիւնն էին վայելում, այնուամենայնիւ պարսիկ իշխանների կողմից նրանք էլ հետապնդվում էին հալածանքների ու նեղութիւների։ Այդ նեղութիւնները առաւելապէս սաստկացան, երբ ԺԸ դարի առաջին մասում Պարսկաստանի մէջ նորից մեծ խռովութիւններ ու պատերազմներ առաջ եկան, և մի ս կողմից էլ Օսմանցիք երկիրն աւերեցին։ Այս հանգամանքը տեսնելով՝ ԺԸ դարի յայտնի ունիթոռ պատառահայրերից մէկը՝ Թովմա Իտավերտինցը հազար հոգի (Ունիթոռների ընդհանուր թիւը 15000-ի մօտ է եղել) Նախիջևանից Զմիւռնիա փոխադրեց (1750 թուերին), որոնք ապա ցրուեցան Իտալիոյ այլևայլ կողմերը և շատերն օտար վանքերի մէջ կենքերին իրանց կեանքը։ Այսպէս ահա բուն Հայաստանից վերացաւ Ունիթոռութիւնը։

Գ յօդուած

ՀԱՅՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԺԲ—ԺԴ ԴԱՐԻ

Ա. ԿԷՍԸ.

1. Այս ընդարձակ շրջանի առաջին մասը, որչափ բարեյաջող էր հայ գրականութեան համար, նոյնքան էլ աննպաստ նրա վերջին մասը: Հայ քաղաքական կեանքի վերածնունդը Կիլիկիայում մեծապէս նպաստեց գրականութեան զարգացման. Ռուբինեան ու Հեթումեան գրասէր, ուսումնասէր թագաւորները մի կողմից խրախուսեցին դպրագէտներին՝ հեղինակել կամ թարգմանել տալով, միւս կողմից էլ ձեռագրերի թիւը բազմացրին արտագրել տալով. մեր այժմեան ունեցած ձեռագրերի մեծ մասն այս ժամանակներից է: Անշուշտ Կիլիկեցւոց ուսումնասէր ոգու վրայ ազդեցութիւն ունեցան և Եւրոպացիք, որոնց հետ նրանք շարունակ յարաբերութեան մէջ էին: Այս, ամբողջ շրջանի գրականութիւնն էլ զարձեալ գուտ կրօնական է՝ կամ մեկնութիւններ, և կամ վիճական գործեր, և այս շատ բնական է, որովհետև այս ժամանակներում յուզուեցաւ հայ, յոյն, լատին եկեղեցիների միութեան խնդիրը, որին բնականաբար պիտի նուիրէին իրենց ոյժը հայ եկեղեցականները: Բուն Հայաստանի գրականութիւնը կիլիկեցւոց հանդէպ զէթ այն առաւելութիւնն ունի, որ պատմական գործեր ևս ներկայացնում է, և հրապարակ են գալիս Վարդան, Կիրակոս և ուրիշները, որոնք հայ պատմութեան ընդհատուած թելն են շարունակում, այն ինչ Կիլիկիանը մեզ՝ բացի Սմբատից, ուրիշ պատմիչ չի ներկայացնում:

2. ԺԲ դարում հայոց լուսաւորութեան կենդրոն հանդիսանում են բուն Հայաստանում Հաղբատ ու Սանահինը և Գետիկայ վանքը, իսկ Կիլիկիայում—Շուղր անապատի Կարմիր վանքն ու Սկևռայ վանքը՝ չհաշուելով միւս վանքերը: Հաղբատի անունը փառաւորեց ու հռչակեց Յովհաննէս սարկաւագ վարդապետը իւր բազմաթիւ գործերով, որոնցից կը յիշենք գուտ կրօնականները, այն է՝ Աղօթամատեան, Յաղագս քահանայութեան, Ընդդէմ երկաբնակաց և այլն:

Յովհաննէսը քահանայի որդի էր: Մանկութեան հասակում նա կրթուել էր Հաղբատի մէջ, ուր յետոյ վանահայր ևս կարգուեցաւ: Նա մեռաւ 1129 թուին և թաղուեցաւ նոյն Հաղբատում:

Սարկաւագ վարդապետը ժամանակակիցներից, մինչև իսկ վրացիներից, մեծ յարգանք էր վայելում իւր խոր գիտութեան ու սրբակեցութեան համար: Աղօթամատեանը սարկաւագ վարդապետի վերջին գրուածներից մէկն է, ուր տիրում է խոր զգացմունք ու թախիծ դէպի Գերագոյն էակն, որ միայն կարող է բոլոր տառապեալներին սփոփել ու վերկել:—Նրա Յաղագս քահանայութեան ճառը պարզաբանում է, թէ ինչ է իսկապէս քահանայութիւնը, և ինչ պարտականութիւններ ունի. այս գրուածքով ծանօթանում ենք մի կրթուած եկեղեցականի հայեացքների հետ: Նրանն է նաև Պայծառացոյն շարականը, ուր քերթող վարդապետը գրուատում է Ղևոնդեանց նահատակութիւնը և քահանայական կոչման վեհութիւնը:

Յովհաննէս սարկաւագ վարդապետը, որ առանձին խնամք էր տանում մանուկների կրթութեան վրայ, ունեցել է բաւական թուով աշակերտներ, որոնք նոյնպէս նուիրուել են հոգևոր կեանքի ու գրականութեամբ զբաղուել:

Հաղբատի դպրոցի միւս նշանաւոր ներկայացուցիչն է վարդան վարդապետը՝ († 1195), որ հայ ու յոյն եկեղեցիների միութեան խնդրի մէջ ևս մասնակցութիւն ունեցաւ Շնորհալու և նրա յաջորդի ժամանակ: Վարդանը ժամանակակիցներից մեծապէս գովուած է իբրև սրբասէր ու գիտուն անձնաւորութիւն. նրա գրաւոր գործերը մեկնութիւններ են, որոնք կրում են արդէն իսկ եկեղեցու մէջ ընդունուած ընդհանուր բնաւորութիւնը, և ծաղկաքաղ են յայտնի մեկնութիւններից:

Վարդանը ունեցել է և աշակերտներ, որոնցից նշանաւոր հանդիսացաւ Դաւիթ Բոթայրիցին իբրև մեկնիչ, ուսուցիչ ու հռետոր: Դաւիթը իբրև հմուտ եկեղեցական՝ միջամտեցաւ իւր ժամանակի կրօնական խնդիրների մէջ և Գրիգոր Տղայի ու Լամբրոնացու հակառակ կուսակցութեան մէջ էր. այս իսկ պատճառով Լամբրոնացին արհամարհանքով է յիշում նրա անունը: Նա Գրիգոր Տուտէորդու հետ հակառակ էր նաև Զաքարէ իշխանին: Մեռած է 1205 թուից յետոյ:

Դաւթի գլխաւոր գործն է Գրիգոր Աստուածաբանի ճառերի մեկնութիւնն ու պատճառքը, մի աշխատութիւն՝ որ ինքնուրոյն է, առանց որևէ նախընթացի, և ապացոյց՝ հեղինակի ունեցած խոր հմտութեան ս. հայց գրուածների ու ս. Գրքի: Դաւիթը յօրինած է նաև ուրիշ շատ պատճառներ, ինչպէս նաև Նորաշէնցի Յովսէփ պատանու ներբողը, որ նահատակուեցաւ Դուինի մէջ 1170 թ. հոկտ. 24-ին:

Դաւթի նման գրել է նաև Պատճառաց գիրքը նրան ժամանակակից Աբասի որդի Գրիգոր վարդապետը, որ յետոյ դարձաւ Սանահնի առաջնորդ: Գրիգորի Պատճառաց գիրքը, որ իսկապէս ասելով մատե-

նագրութեան պատմութեան առաջին նախափորձն է մեր գրականութեան մէջ, աւելի ընդարձակ ծրագրով է, որովհետև խօսում է նաև ս. Գրքի մասին։

Վերջապէս պէտք է յիշել ԺԲ դարի միւս նշանաւոր գործիչ ու մատենագիր Մխիթար Գոշին († 1213 թ.), որ իւր Դատաստանագրքով միշտ անմոռաց պէտք է մնայ մեր գրականութեան մէջ, Մխիթար Գոշը իւր հմտութեամբ պատկառելի էր ժամանակակիցների մէջ, և առանց նրա խորհրդին ու մասնակցութեան համարեա ոչ մի նշանաւոր եկեղեցական դէպք չէր կատարվում։ Մխիթարը իւր շինած Գետիկ վանքում հաստատուն բնակութիւն և այստեղ էլ ունեցաւ բազմաթիւ աշակերտներ, մինչև իսկ վարդապետներ, որ ամօթ չէին համարում նրան աշակերտել։ Մխիթարի անունով պահուած են երեք միայն մեկնութիւն, ազօթքներ և մի ընդարձակ թուղթ՝ ուղղուած վրաց, ուր նկարագրում է եկեղեցիների ունեցած տարբերութիւնները և այն գաղափարն է պաշտպանում, թէ դրանց համար պէտք չէ իրար հալածել։

Թողնելով յիշատակել միւս արևելեան մատենագրերին՝ դաւանք կիլիկիա, ուր յունաց և ասորւոց լեզուների դիտութիւնն աւելի ընդհանրացաւ և մեկնողական գրականութիւնն էլ աւելի զարգացաւ, այնտեղ էին գնում և արևելեան վարդապետները (ինչպէս՝ Վարդան, Դաւիթ, Գոշ և այլք) իրանց դիտութիւնը կատարելագործելու համար։

3. Կիլիկիայում ԺԲ դարում կային բազմաթիւ հայ վանքեր՝ որոնց մէջ ժամանակի գիտութիւնն ու գիտարուեստն էր զարգանում։ Այդ վանքերից մանաւանդ նշանաւոր եղան Կարմիրն ու Սկևռան։ Առաջինը գտնվում էր Սև լեռան վրայ, ուր կային նաև բազմաթիւ ասորի ու յոյն վանքեր։ Կարմիր վանքի մէջ ԺԲ դարում նշանաւոր հանդիսացաւ Սահիանոս Մանուկ վարդապետը, որը թէև գրուածքներ չունի, բայց թողել կրթուած աշակերտներ, որոնք նշանաւոր եղան և իբրև գործիչ և՛ իբրև մատենագիր։ Նրա աշակերտներն են՝ Գրիգոր Պահլաւունի, Ներսէս Շնորհալի, Սարգիս և Իգնատիոս վարդապետներն և ուրիշները, որոնք մեր գրականութեան ոսկեթի դարը կազմեցին։

Գրիգոր Պահլաւունին սակաւ գրաւոր վաստակներ ունի—Ով զարմանալի տաղը, Մեծահրաշ շարականը և ողբ՝ վասն Երուսաղէմի և հալածոց քրիստոնէից—բայց նա խրախուսիչ հանդիսացաւ հայ գրականութեան ծաղկման՝ յանձնարարելով իւր ժամանակի նշանաւոր վարդապետներին այս կամ այն գործը հեղինակել. այսպէս նրա հրամանով Սամուէլ Երէցը իւր ժամանակագրութիւնը գրեց, Իգնատիոս վարդապետը՝ Ղուկասի մեկնութիւնը, Շնորհալին՝ իւր երկերից շատերը և այլն։

Իւր ժամանակակիցների մէջ թէ հոգու մաքրութեամբ և թէ բազմատեսակ գրաւոր գործերով հռչակուած է Ներսէս Շնորհալին, որին շատերն էին դիմում իրենց տարակուսանքների լուծումն ստանալու համար։

Շնորհալին թէև յունական կրթութիւն չէր ստացած, ինչպէս ինքն էլ դանգատվում է, բայց խոր հմտութիւն է ցոյց տալիս եկեղեցու հարց գրուածների մէջ՝ ուսումնասիրելով այդ գործերը հայերէն թարգմանութեամբ։

Բազմաթիւ են Շնորհալու երկասիրութիւնները ու բազմազան։ Նորա դաւանաբանական ու աստուածաբանական հմտութիւնը ցոյց են տալիս այն թղթերը, որ նա միութեան խնդրի առթիւ յունաց գրեց։ Այս տեսակէտով շատ նշանաւոր են նաև Ամայք և ասորւոց Յակովբ հպիսկոպոսին գրածները։ Այս թղթերի մէջ նա առանց մանուածապատ բառերի ու սխոլաստիկ դատողութիւնների պարզում է հայ եկեղեցու դաւանութիւնն ու ծէսերը նրանց դէմ, որոնք հայոց հերետիկոս էին համարում։ Իւր բոլոր սկզբունքների հիմունք ս. Գիրքն է ընդունում և վերին աստիճանի խաղաղասէր ու հանդուրժող՝ ուրիշ եկեղեցիների դաւանութեանց նկատմամբ։ Պէտք է յիշատակել նաև Հրեշտակաց ներբողը, ուր Աբիսպազացու հետևողութեամբ զգայուն հոգուով երկնային զօրութիւնները է դրւատում. վերջապէս ունի մեկնութիւններ՝ Մատթէի և կաթուղիկեայ թղթերի, բայց համառօտ ու հետևողութեամբ։

Շնորհալու հայեացքները վիճանքի ու հոգևորականութեան մասին պարզում է այն գիրքը, որ ուղղուած է բոլոր հայոց, և որը յայտնի է Թուղթ ընդհանրական անունով։ Այստեղ նա ամէն դասակարգի՝ սկսած պիսկոպոսից մինչև շինականի, կեանքի բոլոր թերի կողմերն է շօշափում և ուղիղ կեանքի կանոնները է պարզում։

Իսկ Շնորհալու անձնական ներքին աշխարհի յայտարար կազմում են այն բազմաթիւ բանաստեղծական գործերը, որոնցից շատերը մինչև այժմ հայ եկեղեցու մէջ երգվում են. այսպէս են՝ Այսօր անճառ, Նորոգող, Նորաստեղծական, Նայեաց սիրով, Ի քէն հայցիմք, Զարթիք, Առաւօտ լուսոյ և այլն. իսկ շարականներից՝ Ով զիտորհուրդ, Ով յաներից, Նորահրաշ, Հոգեգալստեան պատկերը և այլն։

Հաւատով խոստովանիմ գիղեցիկ աղօթքը հանրածանօթ է։ Բայց Շնորհալու կրօնական քերթուածներից ամենաւսեմն ու խորագրածը այդ՝ Ցիսուս որդի վիպասանութիւնն է, որ կոչուել է՝ Մատեան արդարև աստուածային։ Ընայելով արուեստի միակերպութեան՝ քերթուածս այնպիսի խոր ղգացումներ ու մտքեր է ամփոփում, այնպիսի գեղեցիկ պատկերներ է ներկայացնում (Ցորժամ տարերքս սասանին), որ տաղաչափութեան միակերպութիւնն աննկատելի է մնում։ Շնորհա-

լին իբր խոր կրօնական զգացումներով, իբր կեանքով ժամանակակից Բեռնարդոս Կլէռուոսցուն՝ Արևմտեան մեծ միստիկին է յիշեցնում:

4. Ներսէս Շնորհալու ուսումնակից և Սահմանոս վարդապետի աշակերտ են նաև Սարգիս Շնորհալի և Իգնատիոս վարդապետները, որոնցից էլ յայտնի մեր գրականութեան մէջ իրրև լաւ մեկնիչներ: Այս գործի հասարակաց սովորութեան համեմատ՝ թէ հայոց, թէ յունաց և թէ լատինաց մէջ, այս հեղինակները ինքնուրոյն ուղղութիւն կամ բացատրութիւն չեն մտցնում իրանց մեկնութեան մէջ, այլ ընթանում են եկեղեցու հայրերի՝ Եփրեմի, Կիւրեղի, Ոսկեբերանի, զգուշաւոր ճանապարհով, ուստի և սրանց աշխատութիւնը մի քաղուածաքան գործ է: Իգնատիոսը գրել է Ղուկասի Աւետարանի մեկնութիւնը, իսկ Սարգիս վարդապետը—Եօթը կաթուղիկեայ թղթերինը: Երկուսն էլ ցոյց են տալիս խոր հմտութիւն իրենց ընտրած գործին մէջ և իրենց տեսակի մէջ ընտիր են: Իգնատիոսն աւելի համառօտախօս է և այդ պատճառով էլ աւելի պարզ մեկնիչ, մինչդեռ Սարգիսը՝ երկարաբան, այդ պատճառով էլ իմաստն է շփոթվում: Վերջինս աւելի է հետեւում իր աղբիւրներին՝ մանաւանդ Ոսկեբերանին, և նրա նման յորդորակներ ևս ունի:

5. Իբր քեռու Շնորհալու նման սրբակրօնութեամբ ու գրական գործերով հռչակուհացաւ Ժբ դարի մէջ նշանաւոր եկեղեցական Ներսէս Լամբրոնացին (1154—1199): Ներսէսը տակաւին չծնուած՝ Աստուծոյ ազասաւորութեան նուիրուհացաւ իւր մօր ու հօր կողմից. նրանք իրանց խոստումը կատարեցին, և Սմբատը (այս էր Ներսէսի մանկութեան անունը) մանուկ հասակից այդ հոգւով և ուղղութեամբ անուհացաւ ու կրթուհացաւ. և նա մանկական հասակին յատուկ խաղերով զբօսնելու փոխարէն՝ իբր ժամանակը ս. Գրքի ընթերցմամբ և ուսմամբ էր անցնում, և սովորից յուսնարէն, լատիներէն և պատերէն

Տասնուերք տարիկան էր, երբ Սմբատն իւր կամքին հակառակ Շնորհալուց կուսակրօն քահանայ ձեռնադրուհացաւ՝ Ներսէս անունով, և իւր հօր Օշինի ցանկութեան համեմատ Սկեսայ վանքի վանահայր պէտք է կարգուէր: Բայց նա առանձնութիւն սիրելով՝ Սաղրու վանքը քաշուհացաւ և երբեմն երբեմն միայն գնում էր Հռոմկլայ Շնորհալու մօտ:

Քահանայութեան տարիկան հասակում Լամբրոնացին Տարսոնի ու Լամբրոնի համար եպիսկոպոս ձեռնադրուհացաւ և Սկեսայ վանքի վանահայրութիւնն ևս ստացաւ: Զնայելով առաջնորդական բազմապան գործերին՝ Լամբրոնացին գործել սիրում էր առանձնանալ և իբր իդէալ Գրիգոր Նարեկացու նման, որին հրեշտակ ի մարմնի է կոչում, առանձնախօսութեամբ պարապել Աստուծոյ հետ և գրաւոր գործեր

յօրինել: Իբրև Տարսոնի եպիսկոպոս՝ նա աշխատեց բարեզարդել իւր թեմի եկեղեցիները նոր կարգերով, որի համար և Արևելեան հայ եկեղեցականներից շատ յանդիմանուհացաւ: Եկեղեցիների բարեզարդութեան ու աղքատներ խնամելու համար նա ստանց խնայելու ծախսում էր իր մեծ հարստութիւնը, որ իւր իշխան հօրից էր ստացել:

Լամբրոնացին շատ աշխատութիւններ ունի՝ թէ ինքնագիր և թէ թարգմանական: Այդ գործերից պէտք է յիշատակել 1. Աստնաբանութիւնը, որ Տարսոնի ժողովում խօսեց եկեղեցիների միութեան համար, և որը վայելիցնում է նրա ուղղութիւնն ու հեռատեսական տադնդը: Նոյնպիսի հեռատեսական տաղանդով ու ջերմ կրօնական ոգեւորութեամբ գրուած են ի Համբարձումն Քրիստոսի, ի Գալուստ Հոգւոյն սրբոյ, ի Փոխումն Կուսին և այլ ճառերը:

Ունի բազմաթիւ մեկնողական գործեր, որոնցից յատկապէս յիշատակելի է Պատարագի մեկնութիւնը՝ 24 տարիկան հասակում յօրինած: Մեկնութիւնը մեծ հմտութեամբ է գրուած և արտափայլում է հեղինակի կրօնաշէն ոգին: Այս գրուածքը կարևոր է հայոց պատարագի զարգացման պատմութիւնն ուսումնասիրելու կողմից, ևս և այն տեղեկութիւնների համար, որ հեղինակը վերջաբանի մէջ հաղորդում է իւր ժամանակի հայ կեանքի մասին:

Նրա միւս մեկնութիւններն են՝ Աւետարանց, Առակաց, Ժողովողի, Իմաստութեան, Երգոց Երգոյն, Սաղմոսաց և այլն, որոնք բոլորն էլ ցոյց են տալիս հեղինակի ջերմ կրօնասիրութիւնը: Մեկնութեան մէջ Լամբրոնացին աւելի աշխատում է ամէն բան խորհրդաբար, այլաբանօրէն բացատրել, քան թէ իրական, տրամաբանական իմաստով: Բնականաբար նախկին մեկնիչներից ևս՝ ինչպէս առ հասարակ ողորմութիւն էր, նա քաղուածներ է անում իւր գրուածքների մէջ, և յատկապէս Եփրեմից, Կիւրեղից ու Ոսկեբերանից:

Լամբրոնացին գրել է նաև Շնորհալու կեանքը ոտանաւորով և մի քանի շարականներ՝ Այսօր յարեաւ, Նորոգեալ Կղզիք, Համբարձաւ, Որդւոց և Թոռանց Երիսդոսի Լուսաւորչի—որոնք մինչև այսօր էլ երգւում են, և առանձին բանաստեղծական արժէք չունին:

Լամբրոնացին կատարել է և շատ թարգմանութիւններ. նա առաջին հայն է, որ լատիներէնից թարգմանում է Կաթոլիկ եկեղեցու կարգաց գիրքը, Թագաւորօրհնէք, Նաւօրհնէք, Բենեդիկտոսի կանոնը և այլն:

6. Գրականութեան միևնոյն ուղղութիւնը շարունակուհացաւ նաև ԺԳ դարում. Կիլիկիան գարձել գուա կրօնական գործեր է ներկայացնում, մինչդեռ Արևելքը կրօնական և պատմական:

Կիլիկեան հոգինականներից նշանաւոր է Լամբրոնացու մատենին ու Սիսոյ վանքի միաբաններից Գրիգոր Սկեւռացին, որ մասնակցեց նաև ժամանակի քաղաքական գործերին։ Սորա երկասիրութիւններից յայտնի են. «Բան գովեստի պատմագրաբար յաղագս ծննդեան, աննդեան և քաղաքավարութեան և վերափոխման ամենասուրբ կուսին»։ Ունի նաև ճառ Քրիստոսի յարութեան վրայ, ինչպէս և Յովհաննու կաթողիկոսի Արեգականն արդարութեան շարականը, որ մինչև այսօր երգվում է։

Աւելի նշանաւոր է Գէորգ Սկեւռացին, որ թողել է շատ գործեր և յատկապէս եռայի մարգարէութեան մեկնութիւնը՝ Ոսկեբերանի, Եփրեմի և Կիւրեղի հետևողութեամբ։ Աւելի նշանաւոր է նրա աշխատութիւնը Աստուածաշնչի վրայ. ս. Գրքի այսօրուան ցանկերը, համարներն ու նախադրութիւնները Գէորգ Սկեւռացին է յօրինել՝ լրնամքով ու հմտութեամբ. նախադրութիւնները մատենագրական, պատմական տեղեկութիւններ են բովանդակում, որոնց նման տեղեկութիւններ այլաբեղու Աստուածաշնչների մէջ պակասում են։ Սկեւռացու աշակերտն էր Մովսէս Երզնկացի վարդապետը († 1326 թ.)։

7. Մեծ Հայքի նշանաւոր հոգինական է հանդիսանում Յովհաննէս վարդապետ Տաւուշեցին՝ առաւելապէս Վանական անունով յայտնի։ Սա Մխիթար Գոշի աշակերտն էր և հռչակաւոր թէ իւր վարքով և թէ գիտութեամբ։ Նրա համբաւը ամէն տեղ տարածուեցաւ և ամէն կողմից նրա մօտ էին գալիս վարք ու բարքի սրբութիւն և աստուածային Գրքի գիտութիւնն սովորելու։ Վանականը թողել է Յովբի գրքի մեկնութիւնը՝ ըստ սովորութեան քաղելով նախընթաց գրողներից. գրուածքը թէև համառօտ, բայց ամփոփ ու հմտութեամբ յօրինուած աշխատութիւն է՝ ընթերցողներով։ Ունի նաև Հին և Նոր կտակարանի համեմատութիւն, այլևայլ նիւթերի վրայ հարցմունք և պատասխանիք — Պատճառք վասն առաջաւորաց պահոց.— Յաղագս անբուն որդանց։ Վանականի գործն է նաև Խրատ դաւանութեան՝ ս. Հոգու բնման մասին տեսութիւն, մութ ու անորոշ լեզուով գրուած։ Վանականի աշակերտներն են Յովսէփ, Կիրակոս և Մաղաքիա։ Նոյն Վանականի աշակերտն էր և Վարդան վարդապետ բազմարդիւն հոգինականը († 1271), որ բացի իւր պատմական նշանաւոր գործից՝ թողել է շատ կրօնական երկեր՝ Դանիէլի, Սաղմոսի, Հնգամատեանի, երգոց երգոյն մեկնութիւններ՝ միշտ նախընթաց հոգինականների հետևողութեամբ։ Նրա յօրինած շարականները ի պատիւ Յովակիմայ և Աննայի, Երկոտասան առաքելոց և Թարգմանչաց մինչև այժմ երգվում են։

Վարդանի աշակերտներն են Ներսէս Մշեցին († 1284) և Յովհան Երզնկացին († 1326)։ Առաջինը Տարօնի ս. Դաւթի վանքից էր՝

հմուտ յոյն լեզուին և ժամակարգութեան։ Բաւական չմնալով իւր ունեցած գիտութիւնից և լսելով Վարդան վարդապետի համբաւը, սրա մօտ եկաւ և ս. Գրքի մեկնութեան հմտացաւ։ Ուսուցչի մահուանից յետոյ՝ վանահայր և ուսուցիչ դարձաւ Գլաձորի Աղբերց վանք կոչուած մենաստանում, որ ժբ դարում հռչակուած էր իբրև երկրորդ Աթէնք, Համալսարան ամենայն իմաստից։ Սորա աշակերտները ժդ դարի նշանաւոր գործիչներ եղան։ Ներսէսը գրաւոր գործ չէ թողած այդ կողմից աւելի հարուստ է աշակերտակից Յովհաննէս Երզնկացին թէ իբրև մեկնող, թէ իբրև քերթող և թէ իբրև քերականագէտ։ Նրա մեկնական գործերից նշանաւոր է Մատթէոսի Աւետարանի մեկնութիւնը, որ դեռ Շնորհալին էր սկսել, բայց կիսատ թողել։ Նրա կրօնական բանաստեղծութիւնները—Լերինք, Որ ղէպս անճառ, Յաւուրս վերջին, Յամենայն ժամ օրհնեմք, Այսօր ձայն հայրական—մինչև այսօր էլ պատշաճ օրերում մեր եկեղեցում երգվում են։ Յովհաննէս Երզնկացին թարգմանից նաև ժդ դարի կաթոլիկ եկեղեցու ամենամեծ հոգինական՝ Թովմա Աքուինացու Յաղագս հօքն խորհրդոց գիրքը, Արտաքի ս. Թո

որ այս գլքերից ոչ մէկը մասնաւորական անունդ չի տալիս հայ ժողովրդին. նրանց օգուտը թերևս այն էր միայն, որ հայ կղերին ևս վարժեցրին արամաբանական մտածողութեան և փիլիսոփայական խընդիրներով զբաղուելու։

9. Աղգային եկեղեցու պահպանութեան և ունիթորութեան դէմ մաքառելու համար ԺԴ դարում հայ գրողներ ևս կազմակերպուեցան, որոնց մէջ մանաւանդ նշանաւոր դարձան Գլաձորն ու Տաթևը։ Մաքառման յաջողութիւնն ապահովելու համար անհրաժեշտ էր, որ հայ եկեղեցականներն նոյն մասնաւորական պաշարն ունենային, մի և նոյն զէնքերը, ինչ որ արևմտեան քարոզիչներն ունէին. և ահա հայոց վանական գրոցների մէջ ևս մտցվում են նոյն հռետորութիւնն ու տրամաբանական փիլիսոփայութեան ուսումը, մեկնութիւնը, և յատկապէս՝ սեռի, տեսակի, էութեան, դոյացութեան և այլ խնդիրները, որոնք այս ժամանակներում Արևմտքի մաքերն էին զբաղեցնում։

ԺԴ դարի վերջին մասում, ինչպէս ասացինք, Ներսէս Մշեցու ձեռքով Գայլհձորի դպրոցը հաստատուեցաւ, որ նշանաւոր անձինք տուեց հայ եկեղեցուն։ Ինքը Ներսէս վարդապետը գրաւոր գործ չէ թողած, բայց թողեց երեք նշանաւոր աշակերտներ. 1. Յովհաննէս Արճիշեցի՝ Ոսկնակոր կոչուածը, որ Պատարագի մեկնութիւն է գրել Անձևացու և Լամբրոնացու հետևողութեամբ. 2. Եսայի Նչեցի և 3. Մխիթար Սասնեցի։

Գլաձորի անունը առաւել փառաւորեց Եսայի վարդապետ Սասնեցին († 1339), որ իբր ուսուցչի՝ Ներսէս Մշեցու մահուանից յետոյ ուսուցիչ դարձաւ։ Նա 55 տարի վարդապետեց և ունեցաւ 360-ից աւելի աշակերտներ, որոնք այլ և այլ մենաստաններ գրուեցան՝ իրանց ընտացած գիտութիւնը տարածելու համար։ Եսային թողել է՝ եզեկիէլի մեկնութիւն, քերականութիւն, ճառեր, կրօնական թղթեր. բայց նա առաւելապէս հռչակուած էր իբրև մեկնիչ ս. Գրքի խրթին ու դժուարիմաց մասերի։ Իր գիտութեան համար Եսային ժամանակակիցներից կոչուեցաւ Եոամեծ փիլիսոփայ, Անյաղթ հռետոր, իսկ մենաստանը— երկրորդ Աթէնք, մայրաքաղաք ամենայն իմաստից։ Եսայի վարդապետի աշակերտներից նշանաւոր հանդիսացան. 1. Յակոբ Կեչառուեցին՝ իբրև տաղասաց. 2. Գէորգ Երզնկացին՝ իբրև մի քանի գործերի մեկնիչ. 3. Յովհաննէս Որոտնեցին՝ իբրև նոր դպրոցի հաստատիչ և 4. Ներսէս Տարոնեցին։

Եսայի Նչեցուն աշակերտակից էր և Մխիթար վարդապետ Սասնեցին († 1330), որ Ներսէս Մշեցու համբաւը լսելով՝ նախ ս. Էջմիածին եկաւ, և ապա Գլաձոր գնաց։ Նրա մահուանից յետոյ՝ Մխիթարը

Նչեցուն աշակերտեց և ապա Մեծոփայ վանքը հաստատուեցաւ և շատ աշակերտներ ժողովեց։ Նա թողել է 15 հատ ճառեր, որոնց մէջ խոստում է այլ և այլ կրօնական խնդիրների և մասնաւորապէս (բ. ճառը) ունիթորների դէմ։ Նրա նշանաւոր գործն է նաև ընդդէմ տումարին Լևոնի, և Յովհաննէսի կաթուղիկոսի թղթերի ու Յայտնութեան մեկնութիւնը։

10. ԺԴ դարի երկրորդ մասում նշանաւոր հանդիսացաւ իր գործունէութեամբ ու գրական գործերով Յովհաննէս Որոտնեցին՝ խիկ կոչուածը, որը իբր հայ եկեղեցուն մատուցած ծառայութեան համար արքոց կարգն է դասուել (ԺԷ դարում) և այժմ էլ պատարագի ժամանակ յիշատակվում է։ Յովհաննէսը իշխանական տոհմից էր։ Մանուկ հասակից նա աշակերտեց Եսայի Նչեցուն և ապա Տաթևի վանքում հաստատուելով (1376 թ.) իբր շուրջն աշակերտներ խմբեց, որոնցից նշանաւոր դարձան Մաղաքիա Որմանեցին, Գրիգոր Աղթեցին՝ Ծերենց կոչուածը և Գրիգոր Տաթևացին։

Ունիթորների յանդուգն գործունէութեան պատճառով սաստիկ հերկպատակութիւն էր ընկած հայ կղերի ուժժողովրդի մէջև. լաւինացած հայ եկեղեցականներ՝ ինչպէս Մխիթար Սպարապետցին, ծաղրում ու այպանում էին հայ եկեղեցու խորհուրդները և դարձողներին կրկին մկրտում կամ ձեռնադրում։ Մաղաքիա Որմանեցին անձինք ձգտում էին խաղաղ միջոցներով այս կրօնական հերկպատակութեան առաջն առնել, բայց ապարդիւն. Մաղաքիա Որմանեցին այս նպատակով շատ աշխատեց, և հերն տեսաւ, որ իբր խաղաղասիրական ջանքերն ապարդիւն են անցնում, կամեցաւ միևնոյն ժամանակ և բռնական միջոցներով ու հալածանքով ունիթորութեան առաջն առնել։ Կամենալով աւելի ի մօտոյ մաքառել ունիթորների դէմ՝ նա իբր ուսուցչին՝ Յովհաննէս Որոտնեցուն երերից հաստատեց Ապրակունեաց վանքը՝ երկրակ գաւառում, որովհետև այտեղ էր հայ-լատինների կեդրոնը։ Մաղաքիա վարդապետը ունիթորների վրէժխնդրութեան դոհ գնաց. նրան Թունաւորեցին (1384 թ.)։

Ապրակունեաց վանքում շատ աշակերտներ հաւաքեց Որոտնեցին և գրից շատ քարոզներ ու գրուածներ, որոնց մէջ նա յարձակվում է Ունիթորների դէմ։ Նրա գործերից նշանաւոր են. 1. Յովհաննու Աւետարանի մեկնութիւնը. 2. Պօղոսի 14 թղթերի մեկնութիւնը. Պօղոսի վերլուծութիւնք և 4. Արիստոտէլի Պերիարմենիասի—յաղագս Մեկնութեան—և Սոփոդութեանց լուծմունքը։

Որոտնեցին վախճանեցաւ 1388 թուին։ Նրա գործը շարունակեց Գրիգոր վարդապետը՝ ընդհանրապէս յայտնի Տաթևացի անունով, որ իր գրուածների և հայ եկեղեցին պաշտպանելուն համար իբր վար-

ժապաւի նման որքոց կարգն է դասուիլ (ծէ գարուց) և յիշատակվում է պատարագի ժամանակ։

Գրիգոր վարդապետը՝ ընդիկ Արճիշեցի, ծնուիլ է 1340 թ. Վայոց Ձորում և աշակերտել է Յովհան Որոտնեցուն։ Իւր ճոռոմ լեզուովը ու համարձակախօսութեամբը նա ամէնքի ուշադրութիւն գրաւեց և Որոտնեցու մահուանից յետոյ ուսուցիչ ու քարոզիչ դարձաւ։ Իւր բոլոր ուժովը ու գիտութեամբ նա կռուեցաւ Ունիթորների դէմ և այս հոգուով ևս քաջամարտիկ վարդապետներ պատրաստեց։ Ունիթորների դէմ մարտնչելիս՝ նա օգտվում է գիտութեան այն զէնքերով, որ յատուկ էին արևմտեան քարոզիչներին, այն է՝ Արիստոտէլի փիլիսոփայութիւնն ու Պորփիւրի վերլուծութիւնները։ Նա օգտվում է նաև այնքան հռչակ ստացած Առաքինութեանց ու Մոլութեանց գրքերից, ինչպէս նաև Ալբերտի Աստուածաբանութիւնից։

Գրիգոր Տաթևացին սկզբում ուսուցիչ էր Ապրակունեաց վանքում, բայց ապա Տաթևում հաստատուեցաւ։ Այս տեղափոխութիւնն երևի կապ ունէր ժամանակի քաղաքական կացութեան հետ, զի Լենկթիմուր 1387 թուականից սկսած իւր ասպատակները և այդ թուին Երընջակի գաւառն էլ ասպատակեցաւ։—Տաթևացին ունի բաւական շատ գրական գործեր թէ կրօնական և թէ իմաստասիրական։ Նրա գրական գործերի մէջ նշանաւոր տեղ է բռնում Հարցմանց գիրքը՝ մեծ և փոքր հատոր. վերջինս յօրինել է 1389 թուին Գէորգ վ. Երզնկացու խնդրանօք։—Հարցմանց գիրքը ցոյց է տալիս Տաթևացու ընդարձակ հմտութիւնն եկեղեցական գրականութեան ու փիլիսոփայական խնդիրների մէջ։ Մի քանի գլուխների մէջ խօսում է նա Մանիքեցիների, Հրէից, հերետիկոսների դէմ. մարդուս կազմութեան ու արարածների մասին, իսկ վերջին մասում քննում է այն բոլոր առարկութիւնները, որ Ունիթորներն անում էին հայ եկեղեցու դաւանութեան ու ծէսերի մասին։ Բնականաբար շատ բանի մասին ժամանակի գիտութեան տեսակէտով է խօսում, թերևս այժմեան հայեացակէտով այլապէս բացատրելի։

Տաթևացու մեծ նշանաւոր գործն է Քարոզգիրքը՝ երկու հատորի բաժանուած—Ամրան և Ձմրան, մօտ 200 քարոզներ այլևայլ նիւթերի մասին։ Այս քարոզների մէջ պարզ երևում է ժամանակի ընթացքի ուղղութիւնը. խորհրդական քաշքշուկ մեկնութիւններ ու համեմատութիւններ, գաղափարների աւելորդ ու մանր բաժանումներ, վկայութիւններ և այլն. այսպիսի հիւծ դասողութիւնների պատճառով քարոզների մէջ չի երևում զգացմունք, ոգևորութիւն, որ նրանց բնական յատկանիշը պէտք է լինէր։ Բայց և այնպէս Տաթևացու Քարոզգիրքը ժամանակի հայ կեանքի ուսումնասիրութեան համար կարող է

մեզ նիւթ տալ։—Տաթևացին ունի նաև երգ երգոցի, Յովհաննու Աւետարանի, Ղուկասի, Սաղմոսների, Առակաց, Իմաստութեան քաղուածներ։ Այլ և՝ լուծմունք արտաքնոց, այն է՝ Պորփիւրի, Արիստոտէլի, Դաւիթ Անյաղթի գրուածների համառօտ բացատրութիւն։—Այս եօթնալոյս կոչուած վարդապետը 1411 թուին վախճանեցաւ և թաղուեցաւ Ապրակունեաց վանքը Որոտնեցու մօտ։

Գրիգոր Տաթևացուն ժամանակակից ու գաղընկեր էր Գրիգոր վ. Ծերենց Թլթեցին, որ Յովհան Որոտնեցու մահուանից յետոյ գնաց Արճէշի մօտ գտնուած ս. Աստուածածնի վանքը՝ Սուխարայ կոչուած, և այստեղ Սարգիս վարդապետից՝ Ապրակունեաց վանքի հրեշտեի առաջնորդից, վարդապետութեան աստիճան ստացաւ։ Այնուհետև նա վանահայր դարձաւ Արծկէ քաղաքի մօտ գտնուած Ճիպնայ վանքում և այստեղ էլ վախճանեցաւ 1425 թ.։ Ժամանակակիցները մեծապէս գովում են նրա ողբմածասիրութիւնը, արբութիւնն ու գրքասիրութիւնը։ Բայց սա այնքան յայտնի չէր իւր կրօնական գրուածքներով, որքան բերթողութեամբ, պուէտիկոսութեամբ, ինչպէս նաև ժե դարի շատ հեղինակներ։ Նա ունի շատ տաղեր ու գանձեր և մի ընդարձակ Ցիշատակարան Ադիսից, ուր տաղաչափութեամբ պատկերացնում է Լենկթիմուրի ասպատակութիւնները ու կոտորածները (1386—1422) Հայաստանի մէջ։—Այս պատմական գրուածքի հետ (Արբատ. 1897) պէտք է կապել նրա մեծ աշխատութիւնը—Յայտնութիւքը, ուր ներկայացնում է նա իւր ժամանակի հոգևորականների կեանքը, և այս պատճառով Վկայասէր ևս կոչուել է։

Ժե դարում իւր գրական գործերով յայտնի է Առաքել Սիւնեցին՝ Տաթևացու քեռորդին և միանգամայն յաջորդը։ Նա թողել է Դաւիթ Անյաղթի Սահմանաց գրքի մեկնութիւնը, բայց առաւելապէս յայտնի է իւր քերթուածներով, որոնց մէջ նշանաւոր է Ադամգիրք կամ Կողզիրք կոչուածը։

Վերջապէս Գէորգ վ. Երզնկացուց զատ՝ որ բաւական թուով աշակերտներ ունեցաւ, իբրև ժե դարի նշանաւոր գործիչ պէտք է յիշատակել Թովմա վ. Մեծոփեցուն, որ իւր վարդապետական աստիճանը Գրիգոր Տաթևացուց ստացաւ և 1402 թուին Արճէշի մօտ շինուած Մեծոփայ վանքի առաջնորդ դարձաւ։ Մեծոփեցին կրօնական գրուածներ չունի, բայց թողել է մի պատմական գրուածք և Ցիշատակարան, որոնց մէջ ներկայացնում է իւր ժամանակի անցքերը։ Թովմա վարդապետը այն եռանդուն գործիչներից մէկն էր, որոնք Հայրապետական Աթոռը ս. Էջմիածին փոխադրելու աշխատեցան։ Նա մեռաւ 1446 թուին։

ՅԱՆԿ

Նախագիտելիք
Հայոց առաջին դարձը . . . . . 7— 14
Հայոց երկրորդ դարձը . . . . . 14— 19
Արիստակէս . . . . . 18— 24
Վրթանէս և իւր ժամանակը . . . . . 25— 30
Մեծն Ներսէս . . . . . 30— 36
Պապ և Ներսէս . . . . . 36— 41
Անդրադարձումներ . . . . . 42 — 63
Սահակ Պարթև . . . . . 64— 69
Շահապուհի ժողովը . . . . . 69— 76
Յովսէփի յաջորդները . . . . . 76— 80
Հայ և յոյն եկեղեցիներուն յարաբերութիւնն ընդհատումը 80— 84
Անդրադարձումներ . . . . . 85— 97
Հայ և Ասորի եկեղեցիներ . . . . . 97—102
Կրօնական ու քաղաքական յուզումներ . . . 102—109
Վրաց բաժանումը . . . . . 109—118
Կոմիտաս և Եղբաս . . . . . 118—125
Ներսէս Շինող . . . . . 125—132
Ներսէս Շինողի յաջորդները . . . . . 132—139
Յովհան Օձնեցի . . . . . 139—146
Հալածանք . . . . . 146—152
Զաքարիա և Փառ . . . . . 152—156
Անանիա Մոկացի . . . . . 156—161
Վահան և Թաչիկ . . . . . 161—164
Պետրոս Գետադարձ . . . . . 164—170
Անդրադարձումներ . . . . . 170—194
Գրիգոր Վկայասէր . . . . . 194—200
Գրիգոր Պահլաւունի . . . . . 200—206
Ներսէս Շնորհալի . . . . . 206—211
Գրիգոր Տղայ . . . . . 211—215
Միութեան նոր փորձեր . . . . . 215—223
Վրահայոց խնդիրը . . . . . 223—229
Սսի ժողովները . . . . . 229—235
Քաղաքական կեանքի անկումը . . . . . 235—241
Աստանայի ժողովը . . . . . 241—244
Հայ Թագաւորութեան անկումը . . . . . 244—252
Անդրադարձումներ . . . . . 252—272

NL0167891
ԳՄԺՄՆՄՄԲ ՅՎՐՈՒՆՂ >>